412

150

[illegible]
[illegible]

II

002
L-38

1902

06 JUN 2009

002(91.542)
Լ - 38

ԼԷՕ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Առաջին մաս

ԹԻՖԼԻՍ
Տպարան Վրաց Հրատ. Ընկ. || Типографія Груз. Изд. Т—ва
1902

002
Լ-38 Կ/
16 MAY 2005
Ko99

Լէօ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

[illegible] ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ [illegible]

XVIII ԴԱՐ

Առաջին մաս

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Վրաց Հրատ. Ընկ. || Типографія Груз. Изд. Т—ва
1901

412

Дозволено цензурою. Тифлисъ, 4 декабря 1901 года.

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

երկուհարիւր ամեայ յոբելեանին

Ն Ո Ւ Է Ր

Հեղինակից

15 MAY 2013

«Հայկական Տպագրութեան» ներկայ հատորը տասնութերորդ դարի պատմութիւնն է պարունակում իր մէջ։ Ամբողջ այդ պատմութիւնը անկարելի եղաւ ամփոփել մի գրքում, ուստի ստիպւած եղանք բաժանել նրան երկու մասի։

Երկրորդ մասը բաղկացած կը լինի հետեւեալ գլուխներից. 1) ԿՈՂՈՏԻ ԵՒ ՄԽԻԹԱՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ—արեւմտեան հայութեան մտաւոր գործունէութիւնը մինչեւ դարի վերջը և 2) ՌՈՒՍԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ. այս գլխի մէջ գրւած կը լինի ոչ միայն Ռուսաստանում ապրող հայերի պատմութիւնը, այլ և Էջմիածնի բարեկարգութեան (Սիմէօն կաթողիկոս), Անդրկովկասի անցքերի և Ղարաբաղի մելիքների պատմութիւնը։

Մնում է աւելացնել որ «Մուրճ» ամսագրից ներկայ գիրքը արտատպելիս հարկաւոր եղաւ մի քանի մասնաւոր փոփոխութիւններ մտցնել «Հնդկաստանի հայերը» գլխի մէջ։

1901, Նոյեմբեր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Զ. Դ.

ԳԼ. Ա.—ՄԽԻԹԱՐ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐ, 1—105.

I

Հայերը Արեւմուտքում. կրօնական յուզմունքներ Կ. Պօլսում, 1—4։—Դեսպան Ֆէրիօլ և Աւետիք պատրիարք. Մխիթար վարդապետի փախուստը, 4—9։

II

Մխիթար Սեբաստացու կենսագրութեան աղբիւրները. ինչ արժէք ունեն դրանք, 9—11։—Մխիթարի մանկութիւնը և կրթութիւնը. կրօնամոլութիւն, Մանասէ և Մարիամ կոյսերը. երազներ, պահեցողութիւն, 11—18։—Կրթութեան ծարաւ. Մխիթարը Էջմիածնում և Սեւանում. ինչ կարող էր տալ նրան հայ վանականութիւնը, 18—23։—Բաղէշի վանքում. առաջին ծանօթութիւն կաթոլիկութեան հետ. փորձութիւն կնոջ կողմից, 23—25։ Նորից Սեբաստիայում. կուրութիւն, առողջանալուց յետոյ դարձեալ գիտութիւն է որոնում. եղուխտ Անտօն և նրա խրատները, 25—28։—Կիպրոս կղզի. հիւանդութիւն, տանջանքներ, վերադարձ հայրենիք, 28—33։—Մխիթարը վարդապետ է ձեռնադրւում. ճանապարհորդութիւն Կ. Պօլիս, Խաչատուր վարդապետ Կարնեցի, Երզրումի Կարմիր վանքը, 33—37։—Նորից Կ. Պօլիս. աշակերտներ, գրքերի հրատարակութիւն, դարձեալ հալածանքներ, 37—39։—Հիմնվում է Մխիթարեան միաբանութիւնը. վճռվում է Մօրէա տեղափոխվել. հալածանքների նշանակութիւնը. միաբանութիւնը քարոզչական—գրական է, 39—42։—Կաթոլիկների աջակցութիւնը. Մեթոն, Հռոմից ստացված կանոնադրութիւն. Մեթոնը դրա-

կան գործունէութեան համար անպէտք է. Օսմանեան պատերազմը փախցնում է Մխիթարին Վենետիկ, 42—45։—Այդ փախուստի նշանակութիւնը. Ս. Ղազարի կղզում հաստատվելը, 45—47։

III

Կարծիքներ Մխիթարեան միաբանութեան մասին. Մխիթարը գիտակցաբար լատինասիրական չէր. Մխիթարը—իսկական հայ-կաթօլիկ. կրօնական պրօպագանդա գրականութեան միջոցով, 47—55։—Մխիթարը—կոմպրոմիսների մարդ. «Փօլիթիքա». Հռոմի աչքում լաւ երևալու ձգտում. ինչպէս էր Մխիթարը վերաբերվում հայոց եկեղեցուն. նրա մի գրութիւնը, 55—64։—Կոմպրոմիսի մի ուրիշ օրինակ. Մխիթարի վերաբերմունքը դէպի լատինացրած հայերէնը. Հռոմը—Դամօկլեան սուր, կախված Ս. Ղազարի վանքի վրա, 64—68։

IV

Ի՞նչ նշանակութիւն ունէր Եւրոպայում մի գրական ընկերութիւն հիմնելը. Եւրոպայի մտաւոր դրութիւնը XVIII դարի սկզբում. «Լուսաւորութեան Դարը», 68—71։—Թռուցիկ ակնարկ. Անգլիա, Նոր փիլիսոփայական դպրոց, գրականութիւն, մամուլ, 71—74։—Ֆրանսիա. ժողովրդական գրականութիւն. Մօնտեսքիէ, „Պարսկական նամակներ“, անխնայ քննադատութիւն, ազատամտութիւն. Վօլտէր, „ազատութիւն և հաւասարութիւն“, Ժան-Ժակ Ռուսսօ, կրթական նոր իդէալներ, 74—84։—Գերմանիա, Իտալիա. „Լուսաւորութեան դարը“ Իտալիայում, 84—87։—Եւրոպական առաջադիմութեան տեսակէտից Մխիթարեան միաբանութիւնը յետադիմական քայլ էր. այդ միաբանութիւնը պիտի միշտ յետ մնար ժամանակից. Նա փոքրականութեան յաղթանակն է, 87—91։—Միաբանութեան կազմակերպութիւնը. դպրոց, կրթութիւնը խիստ կրօնական, սոսկալի կարգապահութիւն. փակված, կղզիացած կեանք, 91—99։—Մխիթարեան գրականութեան գլխաւոր յատկութիւնը—գրաբար լեզու. ժողովրդական գրականութիւն չէ դա. սխօլաստիկա և պահպանողականութիւն. մի համեմատութիւն յոյների հետ, 99—104։

ԳԼ. Բ.—Կ. ՊՕԼԻՍ ԵՒ ՎԵՆԵՏԻԿ, 105—222.

I

Տասնութերորդ դարը հայոց գրականութեան տեսակէտից. կենտրոններ. Վենետիկ և Կ. Պօլիս. վերջինիս կատարած դերը. կրօնական գրքերի տպագրութիւն, 104—109։—Կրօնական վիճաբանութիւնների առաջացրած հետևանքը. Ագաթանգեղոս, Զենոբ, Մեսրոպ երէց. հրատարակչական ընկերութիւն, ձրի հրատարակութիւններ, Կ. Պօլիսը—դիմադրող կաթօլիկ պրօպագանդային, 109—111։—Գրական ազատութիւն. Գալուստ վարդապետի „Լուսաշաւիղ“, 111—114։—„Պատմութիւն Պղնձէ քաղաքին“ իբրև ժողովրդական գիրք. նրա պատմական-կուլտուրական նշանակութիւնը. արտաքին ազդեցութիւն. ի՞նչ է տալիս „Պղնձէ քաղաքը“, 114—124։

II

Կ. Պօլսի մթնոլորտը խաւար է և գրականութիւն զարգացնել չէ կարող. Աւետիք պատրիարքի անհետացումը. շփոթութիւններ. կրօնական երկպառակութիւնները աւելի սաստկանում են. Յովհաննէս Զմիւռնացի. Կոմիտաս քահանայի նահատակութիւնը. քաղաքի տեսարաններ, 124—131։—Սահակ Ապուչեխցի. մտածութիւններ. Յովհաննէս Գանձակեցի. կատաղի կրօնական հալածանքներ, 134—139։—Վանական դպրոցներ, 139—140։

III

Բաղէշ. Ամրդոլու վանքը և դպրոցը. Գրիգոր, Յովհաննէս Կոլոտ. բարեկարգութեան ոգի, 140—141։—Յովհաննէս Կոլոտը Երուսաղէմում. թշնամութիւնների նկարագրութիւնը Կ. Պօլսում. Կոլոտը—պատրիարք. Գրիգորը—շղթայակիր, 144—146։—Կոլոտի պատրիարքական գործունէութիւնը. դպրոց Կ. Պօլսում, Ղուկաս վարդապետ թարգմանիչ, 146—148։—Տպագրութիւններ. Պետրոս Լաստիկացի, Գրիգոր Մարզուանցի, Աստուածատուր դպիր. համեմատութիւն թիւրքերի հետ, 148—152։—«Փաւստոս Բիւզանդ», 152—155։—„Սահմանաց գիրք“, „Ազատ գիրք“, «Արարածք», 155—157։—Ժամանակակից գրողներ. Բաղդասար դպիր և նրա „Քերականութիւնը“, Յովհաննէս Հանեա վարդապետ և նրա «Պատմութիւն Երուսաղէմի», 157—159։—Կոլոտի վերաբերմունքը դէպի կաթօլիկները. „Վէմ Հաւատոյ“, „Վիճաբանութիւնք“, „Դրախտ ցանկալի“, աշխարհաբար «Քրիստոնէական», 159—161։—Հաշտութեան փորձ կաթօլիկների հետ, Կոլոտի մահը, 161—164։

IV

Համեմատութիւն Կ. Պօլսի և Վենետիկի գրական հրապարակների մէջ. Վենետիկը—թարգմանական հրատարակութիւնների կենտրոն. ամեն ինչ կրօնական, 164—

167։—Մխիթարի առաջին հրատարակութիւնը, Այբբենարան „Աստուածաբանութիւն", „Գիրք Առաքինութեանց", «Գիրք Մոլութեանց», „Աղբիւր բարի", „Յարացոյց ապաշխարողաց", 167—173։—Խաչատուր Երզրումցի. „Քաղաքավարութիւն ամենայն ուսմանց", „Ճարտասանութիւն", „Ընդարձակ Աստուածաբանութիւն". XVIII դարը—Թովմա Ակուինացու դար. տեղեկութիւններ Ակուինացու մասին, նրա սխօլաստիկան. առասպելներ և աւանդութիւններ, 173—188։—Մարիամ Բարաքաշեանի թարգմանութիւնը. Պետրոս վարդապետ Թիֆլիսեցի, 188—190։—Մխիթարի հրատարակութիւնները և գրուածքները. „Քրիստոնէական", „Մեկնութիւն Ժողովողին", „Մեկնութիւն Մատթէի Աւետարանին", „Քերականութիւն", 190—192։—Եղիա Յակոբ Վիլլոտի հայերէն աշխատութիւնները, 211 *)—212։—Մխիթարի „Աստուածաշունչը". „Պատմութիւն վարուց Գրիգոր Լուսաւորչին" իբրև նոր մատենագրութեան նմոյշ. „Բառգիրք Հայկազեան Լեզուի" իբրև Մխիթարեանների աշխատասիրութեան կոթող, 212—219։—Մխիթարի մահը և թողած ժառանգութիւնը, 219—221։

Գլ. Գ.—ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, 222—415։

I

Համեմատութիւն արևմուտքի և արևելքի մէջ. Արևելեան Հայաստանը—քաղաքական շարժման տեղ, 222—224։—Իսրայէլ Օրին Եւրոպայում. քաղաքական հանգամանքներ, պատերազմ սպանիական ժառանգութեան համար. Օրին ուղարկվում է Ռուսաստան, 224—228։—Դրութիւնը Ռուսաստանում. հիւսիսային պատերազմ, Պետրոս Մեծը առանձին ուշադրութիւն է դարձնում հայ պատգամաւորութեան վրա, 228—231։—Աղերսագիր, բանակցութիւններ, հայերի ապստամբութեան ծրագիրը. զինուորական արշաւանքի մանրամասնութիւններ, 231—239։—Պետրոս Մեծը խոստումներ է անում. դեսպանութիւն դէպի Հայաստան. Օրին ուղեւորվում է արտասահման՝ պատրաստվելու համար, 239—248։

*) 192 երեսին յաջորդող երեսի վրա սխալմամբ տպված է 211, փոխանակ 193-ի. Այստեղից էլ երեսահամարները նոյն սխալով շարունակվում են մինչև վերջը։

II

Պարսկաստանի քայքայումը. Հիւսէյն-Շահ. հարստահարութիւններ. Ղարաբաղի դրութիւնը, 248—253։—Միրօն Վասիլիեվ Օրիի նամակներով գալիս է Անդրկովկաս. Նահապետ կաթողիկոս, 253—257։—Գանձասար. Եսայի կաթողիկոս. ժողով 1703-ի մայիսին. մելիքների պատասխանը, 257—260։—Օրին Եւրոպայում. պատրաստութիւններ, դեսպանութիւն Հռոմի պապի կողմից. վերադարձ Ռուսաստան, ուղեւորութիւն դէպի Պարսկաստան, 260—264։—Օրին Շամախում. արգելքներ, Օրիից վախենում են. Օրին Սպահանում. նամակ Հիւսէյն-Շահից. վերադարձ Շամախի, 264 269։—Դժուարութիւններ Աստրախան վերադառնալու դէմ. Օրիի բողոքները. Նա Եսայի կաթողիկոսի հետ հասնում է Աստրախան. վախճանվում է այնտեղ 1711 թ. ամառը, 269—274։

III

Մինաս վարդապետը—Օրիի տեղ. Օրիի դեսպանութեան հետեւանքները. Միր-Վէյս, աւղանների զօրեղանալը, արշաւանքը. պարսկական գործերը խառնվում են, 274—282։—Պետրոս Մեծը վճռում է օգուտ քաղել Պարսկաստանի դրութիւնից. Վօլինսկու դեսպանութիւնը. նրան տուած հրահանգները. Մինաս վարդապետի գործունէութիւնը, 282—286։—Մինաս վարդապետը Էջմիածնում և Գանձասարում. Վօլինսկու վերաբերմունքը, 286—288։—Վօլինսկու զեկուցումը պարսկական գործերի մասին, միայն Վախտանգ թագաւորը դիմում է ռուսների օգնութեան. Վախտանգը միանում է հայերի հետ, Օրիի ծրագրի մի մասը իրագործված է, 288—292։

IV

Սեֆեւի մահմեդականութեան հալածանքները. Միր-Մահմուդ. Եսայի կաթողիկոսի բռնած դիրքը. Գանձասար և Էջմիածին. Երից Մանկանց հակաթոռ կաթողիկոսութիւնը, 292—298։—1720-ի դէպքերը. Շամախու առումը. լեզգիների արշաւանքը դէպի Ղարաբաղ. կազմվում է հայ զինուորութիւն. Վախտանգի աջակցութիւնը, 298—303։—Սպահանի պաշարումը. Հիւսէյն-Շահը Միր-Մահմուդի ձեռքում, նրա որդի Թահմազի փախուստը. Պետրոս Մեծը այլ ևս աւելորդ է համարում անգործ մնալը. պարսկական արշաւանքի պատրաստութիւններ. Դերբենդի գրաւումը, 303—306։—Պարսկական արշաւանքի գործած տպաւորութիւնը. Եսայի կաթողիկոսը հայ զօրքը տանում է Գանձակ. հայվրացական եղբայրակցութիւն. վառվռուն յոյսեր, 306—

309։—Պետրոսը անակնկալ կերպով վերադառնում է Աստրախան. պատճառները. հայերի և վրացիների կռիվը, Վախտանգի անելանելի դրութիւնը. Օսմանեան զօրքերը Վրաստանում. հայերի դրութիւնը համեմատաբար լաւ է. հայոց Սղնախները, Մելիք-Աւան, 309—317։

V

Հայ զօրքի գործողութիւնները Ղարաբաղում. զինուորներ առատ կային. Պետրոսի կասպեան ծրագիրները. Նա ջանքեր է անում քրիստոնեաներին ազատելու համար. Իվան Կարապետի դեսպանութիւնը և Պետրոսի յուսադրական հրովարտակը, 317-324։—Երկու Սղնախների ներքին հանգամանքները. դաւաճան Մելիք-Եսայի. օսմանցիների արշաւանքը և հայ զօրքի կատարած դերը, 324—326։—Ռուս-պարսկական դաշնագիր. Նա հայերի և վրացիների ազատութիւնը անկարելի է դարձնում. Պետրոսի յարաբերութիւնները ուրիշ կերպարանք են ընդունում. Նա աշխատում է գաղթեցնել հայերին Կասպեան երկիրները, 326—329։—Պետրոս դի-Սարգիս Գիլանենց և նրա յիշատակարանը, 329—331։—Հայկական պատերազմութիւն. ռուս-թիւրքական դաշնադրութիւն, որով Վրաստանն ու Հայաստանը անցնում էին Թիւրքիային. Վախտանգը հեռանում է Վրաստանից. հայերը մենակ. Բէօխա—Չէլէբիի բերած պատասխանը, 331—335։—Օսմանցիները թափվում են Ղարաբաղ. հայերի յաղթութիւնները, 335—337։—Զարմանք և վհատութիւն ռուսաց պատասխանից. մելիքների ժողով Մելիք-Աւանի նախագահութեամբ. վճռում են չը գաղթել. Պետրոսի մահը, 337—339։

VI

Ղափան. Նրա անցեալը. ղափանցիները աւերական հրապարակում. Շահումեաններ, 339—344։—Ստեփանոս Շահումեան. Նրա գրել տուած „Դաւիթ-բէկի Պատմութիւնը“. այդ գործի նշանակութիւնը, 344—346։—Դաւիթ-բէկի երևան գալը Սիւնիքում. ո՞վ էր նա. ինչպէս նա կազմակերպեց լեռնային պատերազմը. դա նախ և առաջ ներքին պատերազմ էր. նուաճումներ, 346—356։—Դաւիթ-բէկի կազմակերպող տարրերը. Մելիք-Փարսադան և Տէր Աւետիք, զօրքերի դասաւորութիւն. կարգապահութիւն և խստութիւններ. „ակն ընդ ական“, 356—361։—Ժողովրդական պատերազմի հերոսներ. Մխիթար սպարապետ, Թորոս իշխան, Մելիք-Փարսադան, Տէր Աւետիք, Բայի, Շահումեան. ընտանեկան անհամաձայնութիւններ. Դաւիթ-բէկի ընկճող կարգադրութիւնը. հայ մատնիչներ. Նրանց

հասցրած վնասները, 361—368։—Դաւիթ-բէկը ընդհանուր օգնութիւն և համակրանք չէ գտնում. դրա պատճառները, 368—372։—Թիւրքական արշաւանքներ. Նրանց գործած սարսափելի աւարառութիւնը. Դաւիթ-բէկը—մենակ. Նա չէ վհատում, 372—375։—Հալիձորի պաշարումը. հերոսական դիմադրութիւն և վերջը—յաղթութիւն, 375—378։—Դաւիթ-բէկի բանակցութիւնները պարսիկների հետ. Շահ-Թահմազը ընդունում է պայմանները. Դաւիթ-բէկը—[illegible]ուի տէր, 378—380։—Կռիւներ Ագուլիսի մօտ. ագուլեցիների դաւաճանութիւնը. Դաւիթ-բէկի մահը, 380—383։—Նրա մահը մահ է և գործի համար. Մխիթար սպարապետ. Տէր-Աւետիքի թշնամութիւնը նրա դէմ. Հալիձորը նրա ձեռքով մատնվում է օսմանցիներին. Մխիթարի փախուստը, քաջութիւնները. Նա սպանվում է Խնձորէսքի հայերի ձեռքով. հայկական անկախութեան վերջին ներկայացուցչի գերեզմանը Խնձորէսքում, 383—388։

VII

Եսայի կաթողիկոսի մահը. անհամաձայնութիւններ հայ զօրքի մէջ. Մելիք-Աւանի դիմումները ռուսներին. Նրա եղբայր Թարխան յուզբաշին Պետերբուրգում, 388—395։—Դարձեալ գաղթականութեան հարց. Մելիք-Աւանը հեռանում է Ղարաբաղից. „Հայկական Եսկադրօն“. Պետրոս դի-Սարգիս Գիլանենց, Ղազար Խրիստոֆորով. ո՞վ էր Մելիք-Աւանը, 395—399։—1730 թուականը իբրև սահմանակէտ հայկական շարժման պատմութեան մէջ. հայերի տուած զոհերը. արդիւնք չը կայ, ազատութեան գաղափարը յետաձգվում է, 399—402։—Նադիր-Շահ և Պարսկաստանի քաղաքական վերածնութիւնը, 402—405։—Պատերազմ Թիւրքիայի դէմ. ռուսները վերադարձնում են պարսկական նահանգները, 405—407։—Նադիրի թագաւորութիւնը Մուղանի դաշտում. Աբրահամ կաթողիկոս Կրետացի. Նրա կատարած գործերը. Նրա „Պատմագրութիւնը“. այդ գործի արժէքը, 407—411։—Նադիրի բռնութիւնները. նա սպանվում է, 411—413։—Հայկական շարժման պարագլուխների վերջը. Մելիք-Աւան, Ղզլար քաղաքի հիմնարկութիւնը. Մինաս վարդապետ, 413—415։

ԳԼ. Դ.—ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ, 416—610։

I

Հնդկաստանի հայերի նշանակութիւնը. ո՞րտեղից էին այդ հայերը. Նոր-Ջուղա. Նրա ճակատագիրը. բարե-

կեցութիւնը, 415—421։—Հիւսէին-Շահի ժամանակները. բռնութիւններ և հարստահարութիւններ. գաղթականութիւն. Ջուղայեցիների վերաբերմունքը դէպի հայկական ազատութիւնը, 421—426։—Ջուղան աֆղանական արշաւանքի ժամանակ. 70 հազար թումանի տուգանք. Ջուղան դատապարտուած է քայքայման. առասպել Ջուղայեցի և ուրիշ հայերի անհաւատարմութեան մասին. աւերումներ և բռնի կրօնափոխութիւն, 426—432։ Ջուղան Նադիրի ժամանակ. հայերի փախուստը. մի ժամանակակից նամակ. Ջուղայի դատարկվելու նշանակութիւնը ընդհանուր ազգային տեսակէտից. Լազարեանները, 432—439։

II

Հայերի ծանօթութիւնը Հնդկաստանի հետ հին ժամանակներից, 439—441։—Եւրոպացիների մուտքը Հնդկաստան. պորտուգալացիներ, հոլլանդացիներ. առեւտուր. անգլիական և ֆրանսիական ընկերութիւնները, 444—449։—Հայերի դերը Հնդկաստանի առեւտրական գործերում. արտօնութիւններ մոնղոլ թագաւորներից. առեւտրական մեծ շահեր, 449—453։—Հայերը միանում են անգլիացիների հետ. 1688-ի արտօնութիւնները. անգլիական ազդեցութեան հետեւանքները. հասարակական գործունէութիւն. մի օրինակ չլսուած վաճառականութեան կեանքից, 453—459։—Հայերը տեղացի իշխանների մօտ. Նրանք օգնել են անգլիացիներին և ֆրանսիացիներին, 459—463։—Եւրոպացիների անհաջողութիւնները. Սուրէնդ—Ջէր. մրցութիւն անգլիացիների և ֆրանսիացիների մէջ. Դիւպլէ. անգլօ-ֆրանսիական պատերազմներ. ֆրանսիացիները դուրս են մղվում, 463—469։—Անգլիացիների պատերազմները տեղացիների դէմ. հայերի մասնակցութիւնը այդ պատերազմների մէջ. Պետրոս աղա Յարութիւնեան. Նրա եղբայր Գրիգոր կամ Գօրգին խան. հայ զօրագունդ և ութ հազարապետներ. դրանց տարած յաղթութիւնները անգլիացիների դէմ. բնորոշ հանգամանք այդ զօրականների կեանքից, 469—473։

III

Հնդկաստանցի բարեգործ վաճառականը. Պետրոս Ոսկանեան. հայրենասիրութիւն. հնդկական առաջին կտակը, 473—474։—Անգլիական ազդեցութիւնը. ինչ էր հայը տեսնում Հնդկաստանում. անգլիացին քաղաքակիրթ, ազատ գաղափարների պաշտպան. Հիւսիսային Ամերիկայի ազատագրական պայքարը. Նրա ազդեցութիւնը հնդկահայերի վրա, 474—477։—Էմին Յովսէփեան Ռուսաստանում և Ղարաբաղում. Շամիր Սուլթանում Շահամիրեան. Նրա գործունէութիւնը. առաջին հայ տպարան Հնդկաստանում. Շահամիրեանի գրական պատրաստութիւնը, 477—481։

IV

„Նոր Տետրակ". դա առաջին հրապարակախօսութիւնն է մեզանում. քաղաքական ազատութեան պրոպագանդա. գրական խեղճութիւն, բայց մտքի կատարեալ նորութիւն. համեմատութիւն անցեալի և ներկայի մէջ. ազգի դժբաղդութեան պատճառները. հայոց պատմութիւն. ինչպէս է բացատրում Շահամիրեանը քաղաքական անկախութեան անկման պատճառները. Նրա անփորձութիւնը. Հայաստանի տեղագրութիւն և վիճակագրութիւն. ինչպէս պիտի ազատվի հայ ազգը և ո՞վ պիտի լինի նրան ազատողը, 481—507։—„Որոգայթ Փառաց". Օրէնք և Հանրապետութիւն, իբրև այդ գրքի հիմնական գաղափարներ. ազդեցութիւններ—Անգլիա, Ամերիկա, հին Հռոմ. բռնակալական միապետութեան վնասները. պահանջվում է ժողովրդական ներկայացչութիւն. ազատութեան հիմքերը 507—525։—„Որոգայթ Փառացը" տալիս է օրէնքներ և կանոններ 1) պետական կազմակերպութեան, 525—534. 2) հասարակական կարգերի, 534—540 և 3) դատաստանական օրէնքների, 542—544.

V

Շահամիրեանի նամակագրութիւնները. „Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց". „Պատմութիւն Նադիր Շահի", 544—548։—Շահամիրեանը և Հերակլ թագաւորը. քրիստոնեաների յոյսը Հերակլի վրա է. Հերակլի արշաւանքները դէպի Երևան և Սիմէօն կաթողիկոս, 548—554։—Շահամիրեանը շատ մեծ կարծիք ունի Հերակլի ուժի և կարողութեան մասին. Վրաստանի ներքին դրութիւնը. 1779-ի արշաւանքը և Արարատեան երկրի աւերումը, հայերի գերեվարութիւնը, 554—559։—Շահամիրեանը ստանում է Հերակլից վրաց իշխանի տիտղոս. ինչպէս պիտի Հերակլը ազատէր հայերին. Շահամիրեանցի դիմումները Ղուկաս կաթողիկոսին և նրա պատասխանը, 559—566։—Շահամիրեանին ընծայվում է Լօռին. քաղաքական նպատակներ. ծրագիր Ղարաբաղի մելիքներին տեղաւորելու մասին, 566—569։—Միամիտ հասկացողութիւններ. Շահամիրեանի մահը. Նրա ժառանգները, 569—571։

VI

Հնդկական հայ գաղթականութեան աննշան չափերը. բայց այդ վաճառականները նուիրուած են հայրենիքի շահերին. Նշանաւոր բարեգործներ և կտակներ, 571—576։—Եդուարդ Ռաֆայէլ Ղարամեան. Մխիթարեանների յարաբերութիւնները Հնդկահայերի հետ. Եդուարդի հայրենասիրութիւնը և լայն, ազատ գաղափարները ազգութեան մասին. Նրա խրատները իր որդիներին, առաջարկութիւնը Տրիեստի Մխիթարեաններին. Նրա կտակը Ռօլլէնի գրքերը թարգմանելու և դպրոց բաց անելու մասին. Նրա մահը, 576—589։—Սամուէլ Մուրադ, Եդուարդի փեսան. Նրա բաղձանքները, նշանաւոր կտակը, 589—593։—Եզրակացութիւն, 593—596։

VII

Տպագրական գործը Հնդկահայերի մէջ. Յարութիւն քահանայ Շմաւոնեան. Նրա տպագրած գրքերը, 596—599։—„Ազդարար“. լրագրութեան գործը Եւրոպայում. անգլիական հայ լրագիրը մտցնում է հայերին քաղաքակիրթ ազգերի մէջ. կանոնաւոր խմբագրութիւն, աշխատակիցներ. մեր Հարեանները. „Ազդարարի“ կեանքը. Նրա կատարած դերը մեր լրագրութեան մէջ. բովանդակութիւնը. տեղեկութիւններ Շմաւոնեանի դժբախտ վերջի մասին, 599—608։—Տպարան Կալկաթայում. Յարութիւն Գալուստեանի դպրոցը, 608—610։

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅ

ԳԼ. Ա.

ՄԽԻԹԱՐ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐ

I

Ցիր ու ցան ավրող, ընդհանուր շահերի հասկացողութիւնը կորցրած հայ ազգը XVIII *դարի սկզբին ներկայացնում էր մի դրութիւն, որ որքան ժպտուն ու յուսատու հանգամանքներ ունէր իր մէջ, նոյնքան էլ ցաւալի ու ողբերգական էր։*

Այդ միջոցին Արևելեան Հայաստանի ծայրը կազմող մի լեռնաստան ապստամբութեան մէջ էր։ Ղարաբաղի մի քանի մելիքների լիազօրութեամբ Իսրայէլ Օրին ճանապարհորդում էր Եւրոպայում և իր բոլոր ընդունակութիւնները գործ էր դնում, որպէս զի կարողանայ ազատութեան դուռ բաց անել հայութեան համար։ Օրին մեծամեծ խոստումներ էր անում, հաւատացնում էր թէ հայերը պատրաստ սպասում են և հէնց որ եւրոպական մի զօրաբաժին կանցնէ նրանց երկիրը, իսկոյն կը բարձրացնի ապստամբութեան դրօշակը, որի տակ

կը հաւաքվին տասնեակ հազարաւոր զինված հայեր։ Հայ պատգամաւորի ծրագիրները բարեհաճ ուշադրութեան արժանացան նախ Պֆալցի կուրֆիւրստի մօտ, ապա Պետրոս Մեծի արքունիքում։ 1701 թուականին Օրին Մօսկվայումն էր և այստեղ թէ գաղտնի խօսակցութիւնների միջոցով, թէ գրաւոր բացատրութիւններով մշակվում էր ռուսական արշաւանքի ծրագիրը. ինչ ճանապարհներով պէտք է գնալ, ինչպէս պիտի կերակրվի զօրաբաժինը, յարձակողական ինչ գիծեր կարելի է գրաւել և հայերը ինչպէս պիտի օգնեն արշաւող բանակին։

Սա պատկերի ժպտուն, յուսատու կողմն էր։ Միւս կողմը, ողբերգականը, ցաւալին, ներկայացնում էր արեւմտեան հայութիւնը, որ հէնց մի և նոյն միջոցին ալեկոծվում էր կրօնական երկպառակութիւնների մէջ։

Իրարանցումների գլխաւոր բեմը Կ. Պոլիսն էր, բայց նրանք հաւասար չափով յուզում էին Թիւրքիայի այն բոլոր տեղերը, ուր կային հայլուսաւորչականներ և հայ-կաթօլիկներ։ Դեռ երբեք այդ երկու դաւանութիւնների մէջ ընդհարումը այն աստիճան կատաղութեան չէր հասել. դեռ երբեք կրօնով բաժանված ազգակիցները այնքան մոլեռանդութեամբ միմեանց չէին ծաւատել։ Եռում էր կղերական կրքերի ծովը։ Թիւրքաց բանտերը, թիարանները լցված էին այնպիսի հայերով, որոնք մեղադրվում էին լինել ֆրանկներ,

այստեղ էին ուղարկվում և այն պատրիարքները, քահանաները, աշխարհականները, որոնք անխելքութիւն ունէին խօսելու խաղաղութեան, եղբայրութեան մասին։

Մրցող երկու կողմերն էլ կատաղի էին, ֆանատիկոս, անխիղճ։ Բայց և այնպէս, մենք պիտի զանազանութիւն որոնենք դրանց մէջ։ Տիրապետող մեծ ոյժ և իրաւունքներ ունեցող կողմը հայլուսաւորչականներն էին. բայց նրանք անհամեմատ շատ համբերող էին, քան կաթօլիկ փոքրամասնութիւնը—սա պատմական փաստ է։ Թիւրքիան չէր ճանաչում հայ-կաթօլիկ եկեղեցի. բոլոր հայերը ենթարկված էին Կ. Պօլսի հայ պատրիարքի իրաւասութեան։ Չը նայած այս հանգամանքներին, լուսաւորչական կղերը այնքան համբերող էր, որ թոյլ էր տալիս կաթօլիկ քահանաներին ազատ մտնել հայոց եկեղեցիները, քարոզել այնտեղ։ Այդ ազատութիւնը վայելում էին նոյն իսկ եզուիտները, որոնք քարոզ խօսում էին Թիւրքերէն լեզուով *)։

Շատ կարելի է որ դաւանական խտրութիւնները այն աստիճան չը թշնամացնէին մի և նոյն ազգի անդամներին, եթէ չը լինէին Լօյօլայի աշակերտները։ Եղբայրասպան խառնակութիւնների այս տխուր հերոսները չէին ուզում խաղաղութիւն, և չը կար խաղաղութիւն։ Նրանք կամենում էին խլել

---

*) Թօրէն—«Երկաթէ դիմակով մարդը», Կ. Պօլիս, 1870, եր. 64—65.

հայոց եկեղեցիները, միանգամայն անջատել կաթոլիկ հայերին և արգելել սրանց, որ չը գնան լուսաւորչականների եկեղեցին։ Կաթոլիկ համայնքի ազդեցիկ անդամները, հարուստ սեղանաւորները, եզուիտական գործիքներ դարձան։ Լուսաւորչական եկեղեցուն պատկանող ամիրաներն էլ, ի հարկէ, քնած չը մնացին, և բացի սև, զզուելի գործողութիւնների մի երկար շարք, որ հազարաւոր տառապանքներ բերեց առանց այդ էլ խեղճ ու տանջվող ազգի գլխին։

Կռիւը սաստիկ սուր կերպարանք ընդունեց, երբ երկու կողմերն էլ ձեռք բերին ուժեղ, կամակոր ներկայացուցիչներ։ 1700 թուականին Կ. Պոլիս հասաւ ֆրանսիական նոր դեսպան Ֆերիոլ, իսկ 1701 թուականին Կ. Պոլսի հայերը իրանց համար պատրիարք հրաւիրեցին Երուսաղէմի առաջնորդ Աւետիք վարդապետին։ Ահա այս երկուսը ախոյեան հանդիսացան միմեանց դէմ կրօնական հողի վրա և նրանց մաքառումները նոյն իսկ քաղաքական մեծ կարևորութիւն ստացան։

Ֆերիոլի նման դեսպան Կ. Պոլիսը դեռ չէր տեսել։ Լուդովիկոս XIV-ի ներկայացուցիչը ցոյց տուեց Թիւրքաց մայրաքաղաքում մի անօրինակ զօռողութիւն և կամակորութիւն. Ֆրանսիան Եւրոպայի առաջին պետութիւնն էր և նրա դեսպանը հարկաւոր էր համարում ոտի տակ տալ ամեն վայելչութիւն և կարգ։ Երբ նա առաջին անգամ գնում էր ներկայանալու սուլթանին, պալատական-

ները նկատեցին որ նա ունէր իր հետ մի մեծ սուր և պահանջեցին վերցնել սուրը, որովհետև այդպէս էր կարգը։ Ֆերիոլ չը կամեցաւ հպատակվել կարգին և այն իսկ սենեակում, ուր սուլթանը պիտի ընդունէր նրան, տեղի ունեցաւ ընդհարում նրա և մի պալատականի մէջ։ Մեծ վեզիրը պահանջեց Ֆերիոլից կամ կատարել այն, ինչ պահանջում են Թիւրքաց արքունիքի կանոնները, կամ հեռանալ։ Եւ դեսպանը ընտրեց վերջինը. չը կամենալով բաժանվել իր սրից, նա դուրս գնաց ունկնդրութեան սենեակից, չը տեսնելով սուլթանին։ Այնուհետև նա տասը տարի դեսպան մնաց Կ. Պոլսում և ոչ մի անգամ չարժանացաւ սուլթանի ունկնդրութեան։ Մի ուրիշ անգամ Ֆերիոլ սկսեց զբօսնել Բօսֆօրի վրա մի նաւակում, որ բոլորովին նման էր սուլթանի նաւակին և վերջինիս պէս ունէր ծիրանի վարագոյրներ։ Մեծ վեզիրը ստիպված եղաւ իմաց տալ դեսպանին, որ եթէ նա զբօսանքի դուրս կը գայ այդպիսի նաւակով, ինքը հրաման կարձակէ որ ռմբակոծեն նաւակը։

Այս տեսակ գործողութիւնների համար Ֆերիոլ Թիւրքերից ստացաւ «գիժ դեսպան» (դէլի էլչի) անունը։ Գիժ դեսպանը սկզբում չափաւորում էր Կ. Պոլսում բոյն դրած եզուիտների յարձակողական ձգտումները, բայց յետոյ բոլորովին ենթարկվեց նրանց ազդեցութեան և դարձաւ նրանց կոյր գործիքը։

Իսկ Աւետիք պատրիարքը յայտնի էր նրա-

նով, որ Էրզրումի մէջ սաստիկ հալածանք էր հանել «ախթարմաների» (հայ կաթոլիկների) դէմ։ Խռովութիւնները այդ քաղաքում վերջացել էին նրանով, որ հայոց առաջնորդը դուրս էր վռնդել բոլոր փոքր ի շատէ աչքի ընկնող հայ-կաթոլիկներին։ Այդպիսի քաջագործութիւնների համար էլ նա հրաւիրվել էր Կ. Պոլիս։ Եւ իրաւ, Կ. Պոլիս համնելուն պէս նա բաւականաչափ խիստ չը համարեց վաղուց սկսված հալածանքները կաթոլիկների դէմ։ Նախկին պատրիարք Եփրեմին, որի հրամանով բանտարկվել և չարչարանքների էին ենթարկվել բազմաթիւ հայ-կաթոլիկներ, Աւետիքը քշեց Էջմիածին, ուր նա պիտի ապաշխարէր իբրև փրանկ։ Սրանից կարելի է իմանալ թէ որպիսի հրէշաւոր կատաղութեամբ էր բորբոքված նոր պատրիարքը այլադաւան հայերի դէմ։

Աւետիքը շատ ուժեղ էր. նրա կողմն էր ինքը, թիւրք կառավարութիւնը։ Այդ ժամանակ շէյխ-իւլ-իսլամի պաշտօնը վարում էր Ֆէյզուլլահը, որ համարեա իր ձեռքն էր առել պետութեան ղեկը։ Հասկանալի է թէ այսքան հզօր մի աջակից ունենալը ինչ ահագին նշանակութիւն ունէր Աւետիք պատրիարքի համար։ Նա իսկոյն և եթ պաշտօնից զրկեց Երուսաղէմի Մինաս պատրիարքին, որին բերել տուեց Կ. Պոլիս և այնտեղ շղթայակապ բանտարկեց։ Նոյն վիճակին ենթարկվեցան և ուրիշ հոգևորականներ։ Աւետիքը բանտարկում էր, տուգանքների էր ենթարկում, իր ձեռքով ծեծում էր

այն բոլոր մարդկանց, որոնց նա անհաւատարիմ, կասկածելի էր համարում և որոնք յանդգնում էին նոյն իսկ թեթև կերպով բողոքել նրա գործերի դէմ։

Եզուիտները լարեցին իրանց ամբողջ կարողութիւնը՝ այդպիսի մի հակառակորդին տապալելու համար։ Բայց տապալել Աւետիքին այնքան հեշտ չէր. դրդվել էին ամբոխի ստոր կրքերը. հալածանքները, բռնութիւնները փրկութեան միջոց էին համարվում և ժողովուրդը իր պատրիարքի կողմն էր։ Եւ գիջողները, խաղաղութեան ու հաշտութեան ճանապարհ որոնողները, ի հարկէ, եզուիտները չը պիտի լինէին։ Երբ դեսպան Ֆէրիօլ փորձեց համոզել եզուիտների մեծաւոր Բրաքոնիէին, թէ կաթոլիկների դէմ սկսված հալածանքը կարող է ընդհանրանալ ամբողջ Թիւրքիայի մէջ, թէ սուլթանը կարող է սաստիկ հրամաններ հանել, որոնք մահացու հարուած կը տային պապականութեան, Լօյօլայի աշակերտը պատասխանեց. «Եկեղեցին մի ժամանակ աւելի բուռն հալածանքներ է կրել. հայերը պիտի չարչարվել սովորեն. ինքը չէ կարող ընդունել, որ կաթոլիկները ամենափոքր հաղորդակցութիւն անգամ ունենային իրանց հերձուածող եղբայրների հետ և պիտի աչքի առաջ ունենան ամենադաժան չարչարանքներ» *)։ Եւ ահաբեկումը սաստկանում էր, կուռների կրքերը գնալով աւելի և աւելի բռնկվում էին, տա-

*) Թօբէն, եր. 47.

բանելով մի հրդեհ, որի մէջ կաում-կոխվում էր եղբայրասպան սուրը։ Մարդիկ բանտերն էին թափվում, զրկվում էին իրանց ստացուածքներից, թշուառանում էին մի քանի ժամում։ Եղան նոյն իսկ նահատակութիւններ։ Շատերը սարսափահար փախչում էին Կ. Պօլսից։

1702 թուականի աշնանը Կ. Պօլսից մի նաւ էր գնում դէպի Զմիւռնիա։ Ճանապարհորդների թւում կար մի մարդ, որ հագել էր վաճառականի զգեստ, բայց վաճառական չէր, այլ կրօնաւոր։ Այդպէս ծպտած փախչելը թիւրքաց մայրաքաղաքից այն միակ միջոցն էր, որ ազատում էր նրան Աւետիք պատրիարքի բարբարոսութիւններից։ Նրա հետ էին երեք նոյնպիսի կեղծ վաճառականներ, որոնք նրա աշակերտներն էին։

Հասնելով Զմիւռնիա, կեղծ վաճառականները իջան ընդհանուր վաճառականական մի պանդոկում և սպասում էին նաւի, որ պիտի տանէր նրանց դէպի արեւմուտք։ Բայց մի քանի բարեկամ մարդիկ իմացան թէ ով են փախստականները։ Եւ ահա այդ բարեկամներից մէկը մի օր վազեց կրօնաւորի մօտ, յայտնեց, թէ քաղաքի դատաւորը ստացել է Կ. Պօլսից արքունի հրաման, որի մէջ ասուած է թէ փախել է մի Ֆրանկացած հայ վարդապետ. պէտք է նրան որոնել, գտնել և կալանաւորել։ Կեղծ վաճառականների գլխաւորը իսկոյն հասկացաւ, որ հրամանը իրան է վերաբերում և շտապեց թագնվել եզուիտների վանքում։ Այսպէս,

երբ հոկտեմբերին Զմիւռնիա եկաւ մի նաւ, որ պիտի գնար դէպի Եւրոպա, փախստականը մեծամեծ զգուշութիւններ գործ դնելով որ իրան չը նկատեն, դուրս եկաւ թաքստի տեղից և մտաւ այդ նաւը իր աշակերտների հետ։ Նաւը խարիսխը հանեց և Ֆրանկացած վարդապետը ընդ միշտ հեռացաւ Թիւրքիայի ափերից։

Աւետիք պատրիարքի հալածանքների այս մի մասը, որ ուղղած էր փախստական վարդապետի դէմ, շատ հարկաւոր էր հայերի մտաւոր վերածնութեան համար։—Զմիւռնիայից Եւրոպա փախչողը Մխիթար վարդապետ Սեբաստացին էր, Մխիթարեան հռչակաւոր միաբանութեան հիմնադիրը։

II

Հայոց մտաւոր զարգացման պատմութիւնը շատ էլ հարուստ չէ խոշոր դէմքերով. բայց եղածներն էլ մեզ լաւ ծանօթ չեն, այնքան չնչին են տեղեկութիւնները, որ պահել է ժամանակը նրանց մասին։ Հեռաւոր հնութիւնից մենք մեծ պահանջներ անել չենք էլ կարող։ Բայց ահա տասնութերորդ դարի սկզբին հայկական հորիզոնի վրա դուրս է գալիս մի խոշոր, նշանաւոր դէմք—Մխիթարը։ Արդեօք կարօղ ենք ասել, թէ գոնէ նրան լաւ ճանաչելու համար մենք ունենք բազմակողմանի տեղեկութիւններ։ — Դժբախտաբար, ո՛չ։

Մխիթարը եղել է կրօնաւորական ուխտի հիմնադիր և նրա կենսագրութիւնը գրել ու հրատարակել է այդ իսկ ուխտը *)—ահա պատճառը, որ իմանալ նրա մասին զուտ ճշմարտութիւն շատ դժուար է։ Մի վանք, մանաւանդ կաթօլիկ վանք, չէր կարող իր հիմնադրին չը բարձրացնել մինչև հրեշտակների դասը. և զարմանալի չը պիտի լինի այդ վանական տեսակէտից, որ XVIII դարի մարդու մասին մենք ունենք այնպիսի տեղեկութիւններ, որոնք աւելի մի հին սուրբի վկայագրութիւն են կազմում, քան մի ճշմարիտ պատմութիւն։

Բարեպաշտական առասպելները, զանազան տեսիլները, սքանչացման ամենաբարձր արտայայտութիւնները այնքան մթնացրել են Մխիթարի կեանքի նկարագրութիւնը, որ շատ դժուար է քայլ

*) Մխիթարի կենսագրութիւնը ամենից առաջ համառօտ կերպով պատմել է Հ. Չամչեանը իր «Հայոց Պատմութեան» մէջ (Գ., գլ. խե.)։ Կայ, ասում են, մի մանրամասն կենսագրութիւն, որ գրել է նրա աշակերտ և քարտուղար Մատթէոս վարդապետ Եւդոկիացին, բայց այդ գործը մինչև այսօր էլ չէ հրատարակուած։ 1810 թւին Վենետիկում տպագրվեց «Պատմութիւն կենաց և վարուց Տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ», հեղինակութիւն Ստեփանոս Գիւվէր Ագոնց Արքայի։ Դա միակ փոքր ի շատէ ընդարձակ կենսագրութիւնն է, որի վրա Մխիթարեանները մինչև այժմ ոչինչ չեն աւելացրել։ 1899 թւին «Բազմավէպի» մէջ տպվեց Մխիթարի ոտանաւոր կենսագրութիւնը, բայց դա նոյն ներբողն է, ինչ ներկայացնում է Ագոնցի գրուածքը։

առ քայլ հետևել, թէ ինչպէս Փոքր-Ասիայի մի այնպիսի կորած ու խաւար անկիւնում, ինչպիսին է Սեբաստիա քաղաքը, զարգացաւ մի զարմանալի ուժեղ բնաւորութիւն, որ սեփական ջանքերով ճանապարհ հարթեց կատարեալ անյայտութիւնից դէպի մեծ և յաւիտենական հռչակ, կապեց իր անունը մեր մտաւոր վերածնութեան հետ, դառնալով մի ամբողջ դարագլխի սկզբնապատճառ։ Կենսագրական այդ պակասութիւնները հազիւ թէ այսուհետև էլ լրացվեն Մխիթարի հիմնած միաբանութեան ձեռքով։ Իսկ մենք չունենք ուրիշ աղբիւրներ. չունենք նրա նամակների և բոլոր գրութիւնների ժողովածուն, որովհետև կաթօլիկ վանքը առհասարակ չէ սիրում տան գաղտնիքներ դուրս հանել։ Այս պատճառով պիտի բաւականանանք այն ջատագովական գրուածքներով, որոնք մինչև այժմ լոյս են տեսել Մխիթարի մասին և պիտի փորձենք այդ կղերական սքանչացումների միջից դուրս բերել գործիչի բնական, մարդկային գծերը, ուշադրութիւն չը դարձնելով կրօնաւորական այն չափազանցութիւնների վրա, որոնք աշխատում են իւրաքանչիւր տողի ետևից Աստուծու մատ, Նախախնամութեան անօթ հռչակել Մխիթարին։

Մխիթարը ծնվել է Սեբաստիա քաղաքում 1676 թւականի փետրվարի 7-ին։ Նրա հայրը Մանուկի որդի Պետրոսն էր, մի վաճառական մարդ, իսկ մօր անունն էր Շահրիստան։ Երևան մկըր-

ութեան ժամանակ ստացաւ իր պապի անունը — Մանուկ, բայց մենք կանուանենք նրան Մխիթար անունով, որ տրվեց նրան հոգևոր կոչման հետ։

Յայտնի չէ թէ ինչ տեսակ մարդիկ էին Մխիթարի ծնողները, այսինքն ինչ տեսակ ազդեցութիւնների տակ էր նա աճում։ Կարելի է ենթադրել որ Պետրոսը ունևոր վաճառականներից չէր,—գոնէ Մխիթարը հարուստ չէր։ Կարևորը ի հարկէ այդ չէր, այլ այն՝ թէ ինչ կրթութիւն ստացաւ երեխան։ Այդ կողմից էլ Մխիթարը շատ բախտաւոր չէր. նրան տուին մի ողորմելի ուսում, որ հնարաւոր էր այն խաւար ժամանակներում, թիւրքական մի քաղաքի մէջ։ Ասում են թէ նա հինգ տարեկան էր, երբ սկսեց կարդալ-գրել սովորել տեղական քահանայի մօտ։ Բայց դա չափազանցութիւն է։ Ինչ էլ լինի, քահանայ ուսուցչի գիտութեան պաշարը այնքան աղքատիկ էր, որ Մխիթարը տասն տարեկան հասակում վերջացրեց ուսումը։ Աւելի ճիշտ կը լինէր քահանայից նրա ստացածը անուանել մի հասարակ գրագիտութիւն։

Նա աշխոյժ, մտացի երեխայ էր, մանաւանդ խիստ տպաւորվող։ Քահանայի ուսումը, ծնողների եկեղեցասիրութիւնը ժամանակից շատ առաջ հաղորդեցին նրան մի սաստիկ կրօնամոլութիւն։ Մանուկ խելքի մէջ գաղափարական ձեւակերպութիւն է ստանում կրօնաւոր դառնալու միտքը։ Այնքան յափշտակւում է նրան այս միտքը, որ մի օր իր հասակակից երեխայի հետ նա ծածուկ հեռանում

է տանից՝ մի քարայրում ճգնելու համար, համոզուած լինելով որ ինչպէս մի ժամանակ Յովհաննէս Մկրտիչը անապատում կերակրվում էր երկնքի խնամքով, այնպէս էլ այժմ Աստուծու հրեշտակները կերակուր կը բերեն իր և ընկերի համար։ Բայց Հրէաստանի հրաշքը չը կրկնվեց Սեբաստիայում. հրեշտակներ չեկան, թէև երկու երեխաները ամբողջ օրը ծնկաչոք աղօթքներ էին կարդում։ Օրը մթնեց, քաղցածութիւնն սկսեց տանջել և խեղճ ճգնաւորները ուրիշ մի ճար չը գտնելով, սկսեցին լաց լինել, օգնութեան կանչել։ Բարեբախտաբար, ծնողները մարդիկ էին ուղարկել նրանց որոնելու. սրանք լսեցին լացն ու աղաղակները և ազատեցին անչափահաս կրօնամոլներին վտանգից...

Բաւական չէր, որ միստիքական չափազանց յափշտակութիւնը այսպէս գերել էր տասը տարեկան երեխայի խելքը, ծնողներն ուղարկեցին նրան դաստիարակվելու մի այնպիսի տեղ, ուր կարելի էր աւելի թաղվել ճգնաւորական խոհերի մէջ։ Սեբաստիայում ապրում էին երկու քոյրեր, Մանանէ և Մարիամ անունով։ Դրանց երկու եղբայրները ճգնաւոր էին Լիմ անապատում. Մանանէն արդէն նշանված աղջիկ էր, երբ նոյն ճգնաւորական տենդը նրան էլ բռնեց. նա հրաժարվեց ամուսնութիւնից, և երկու քոյրերը նստեցին իրանց հօր տանը՝ պասով և աղօթքներով հոգի գտնելու համար։ Հազիւ-հազ կարդալ սովորելով,

այդ կոյսերը դարձան ֆանատիկոս միանձնուհիներ։

Ի՞նչ էր սովորում Մխիթարը նրանց մօտ։— Միայն կրօնական նախապաշարմունքներ, զանազան պատմութիւններ սրբերի, դժոխքի, արքայութեան մասին և ճգնաւորական ինքնակեղեքումների նորանոր փաստեր։ Նոյն իսկ այն ժամանակվայ վանական գիտութիւն էլ չէին կարող աւանդել այդ կոյսերը իրանց աշակերտին, այնքան տգէտ ու անպատրաստ էին։ Նրանք միայն երազներ էին տեսնում, ի հարկէ, միայն բարեպաշտական բովանդակութիւն ունեցող երազներ, որոնք մի-մի մարգարէական գուշակութիւն էին. զարմանալի է, որ այդ մարգարէութիւնները երկու քոյրերին մի և նոյն ձևով էր ուղարկում երկինքը. Նրանք քնում էին առանձին, բայց տեսնում էին մի և նոյն երազը։ Անկասկած, պատանի Մխիթարի գլուխը աւելի ևս շշմում էր այդ տեսիլքներից։ Նա նրանց տարեց իր հետ Իտալիա և XIX դարի ըսկզբում, երբ նրա հիմնած միաբանութիւնը հայերի մէջ ամենաբարձր գիտնականութեան ներկայացուցիչ էր համարվում, անգրագէտ կոյսերի երազները կատարեալ հաւատով գրի առնվեցան իբրև աստուածային յայտնութիւններ *)։ Այսպէս, Մխիթարը մտքում պահել էր, որ կոյսերը մի տարի երազ տեսան, որի մէջ զքանչելի տեսքով մի մարդ

*) Ագոնց, «Պատմութիւն կենաց և վարուց Մխիթարայ», եր. 21—22.

յայտնեց նրանց, թէ այդ օրը Հռոմում մի սուրբ մարդ է վախճանվում։ Կոյսերը, հաւատացնում է բարեպաշտական լեգենդան, մինչև այդ չէին էլ լսել Հռոմի անունը։ Եւ, ի հարկէ, կարելի է և պէտք է ենթադրել, թէ այդ յայտնութիւնը նշանակված էր Մխիթարի համար, որ Հռոմի հպատակը պիտի դառնար։ Նոյն աւանդը շարունակում է պատմել, որ տարիներ յետոյ, Իտալիայում, Մխիթարը տեղեկութիւններ հաւաքեց և իմացաւ, որ երազը ճիշտ էր. այն օրը վախճանվել էր Իննօկենտիոս XI պապը։

Երազները վերաբերում էին և իրան, Մխիթարին։ Կոյսերը երկու անգամ երազ էին տեսել. մէկի մէջ Մխիթարը ապառաժոտ ճանապարհ էր հարթում, և աստուածային շնորհքը յայտնում էր, թէ դա դէպի արքայութեան դուռը տանող ճանապարհն է, որ հարթում է Մխիթարը։ Իսկ միւս երազի մէջ Մխիթարը մի խումբ լուսազգեստ մարդկանցից ընդունում էր տեսակ-տեսակ անուշահոտ խնկեր։ Եւ ով, կարդալով ու լսելով այսպիսի մարգարէական գուշակութիւններ, չը պիտի հաւատար թէ Նախախնամութիւնը Մխիթարին ընտրել էր լուսաւորելու հայերին Հռոմի լուսով և թէ Մխիթարը դեռ մանուկ հասակում վերին տեսչութիւնից ներշնչված էր հասկանալու՝ թէ ուղիղ և ուղղափառ դաւանութիւնը միայն հռոմէականն է։

Եթէ մենք յիշատակում ենք այս երազները, պատճառն այն չէ, որ մի աւելորդ անգամ ցոյց

տանք թէ ինչպէս կղերը, մարդկանց միտքը նուաճելու համար, չահագործում է նախապաշարմունքները, առասպելները։ Ո՛չ, դա չափազանց լաւ յայտնի մի իրողութիւն է. բայց մենք կանգ առանք այդ առասպելների առաջ այն պատճառով, որ դրանք լաւ բնորոշում են այն մթնոլորտը, որի մէջ մեծացաւ Մխիթարեան միաբանութեան հիմնադիրը։ Այդ մթնոլորտի ազդեցութիւնն էր, որ Մխիթարը, դեռ տասը տարեկան մի երեխայ, սկսեց ճգնաւորական պահեցողութիւն. նա հրաժարվեց մսից, գինուց, եօթ տեսակ պտուղներից, կամենում էր հրաժարվել և կաթնեղէնից ու առհասարակ ամեն տեսակ մրգերից, բայց կոյսերը չափաւորեցին նրա այդ ճգնաւորական եռանդը, յայտնելով երկնքի կողմից, թէ նա պիտի դառնայ եկեղեցու վաստակաւոր մշակ, ուստի պարտաւոր է պահպանել իր առողջութիւնը։

Բայց կարելի՞ էր չափաւորել կրօնամոլութիւնը մի այնպիսի միջնավայրում, ուր պատանին միայն չափազանցութիւն էր տեսնում և նրա իդէալը դառնում էր կատարեալ անձնասպանութիւնը։ Երկու կոյսերը կենդանի օրինակ էին նրա համար, իսկ ի՞նչ էին ցոյց տալիս նրանք։ Բաւական չը համարելով տան մէջ աղօթելը, նրանք գիշերներն էլ դուրս էին գալիս՝ բաց երկնքի տակ աղօթելու։ Եւ այդ պարտաւորութիւնը նրանք չէին մոռանում նոյն իսկ ձմեռվայ ցրտերին։ Ֆանատիկոսութիւնը կուրացնող է. նա չէր թոյլ տալիս քոյրերին հա-

կանալ, որ ցրտի մէջ գետնատարած աղօթելը պիտի վնասէ նրանց առողջութեանը։ Ճգնաւորական գերագոյն իդէալը սկզբից և եթ եղել է մի մաշված, կեղտոտ, այլանդակ մարմին ունենալ երկնքի սիրոյ համար։ Կոյսերն էլ հասան այդ երանաւէտ դրութեան։ Ձմեռնային գիշերները, վերջապէս, սոսկալի անդամալուծութիւն առաջ բերին երկուսի մէջ. նրանք կ[illegible], քարքարված՝ անկողին ընկան կոճղերի պէս, անկարող լինելով շարժվել։ Նրանց փտող, շարաւոտ, որդնած մարմինները արդէն վկայում էին, թէ երկուսն էլ Քրիստոսի հարսներն են դարձել։ Եւ ամբոխի համար նրանք մեծարանքի, պաշտամունքի առարկայ դարձան։ Իսկ երբ սոսկալի հիւանդութիւնը, տարիներ տանջելուց յետոյ, վերջ դրեց անդամալոյծների կեանքին, նրանք դարձան սուրբեր, այն էլ հրաշագործ սուրբեր։

Ահա թէ ինչպէս դաստիարակվեց Մխիթարը։ Պարզ է, որ նրա համար կեանքում չէր կարող լինել մի ուրիշ ասպարէզ, բացի կրօնաւորականից։ Տասն և հինգ տարեկան հասակում, չը նայելով մօր դիմադրութեան, նա սարկաւագ է ձեռնադրվում, հագնում է ճգնաւորական մազէ շապիկ, զրկում է իր անձը, աչքի առաջ ունենալով հասնել այն իդէալին, որ ներկայացնում էին նրա հոգու և մտքի վրա այնքան խոր տպաւորութիւն թողած կոյսերը։ Բայց մի սովորական ճգնաւոր չը դարձաւ նա։ Մի ուրիշը կը բաւականանար իր ստացածով,

կը հեռանար կեանքից և կը սկսէր ինքն իրան կեղեքել ու մաշել մի որ և է ամայի տեղ, քարայրում: Իսկ Մխիթարը հէնց նրանով էլ զանազանվում էր հասարակ մարդկանցից, որ ունէր հարցասէր, խուզարկու ոգի: Բաւականանալ իր ստացած կըրթութեամբ նա չը կարողացաւ, ուստի սկսեց որոնել աւելի կատարելագործվելու, աւելի բարձրանալու միջոցներ, մնալով, ի հարկէ, ճգնաւորական իդէալի շրջանում: Այդ որոնումները նրան հանեցին Սեբաստիայից, ման ածեցին զանազան տեղեր: Դա մի աշխարհատեսութիւն էր, որ պիտի հաղորդէր նրա բնաւորութեան աւելի փորձառութիւն:

Ի՞նչպէս էին այն ժամանակներում կատարելագործվելու, կրթվելու հնար գտնում: Մխիթարը հարիւրաւորներից մէկն էր: Դպրոց չը կար. բան սովորել ցանկացող պատանին պիտի գտնէր մի հոգևորական և նրա տների մօտ որոնէր ուսում և գիտութիւն: Ահա ինչպէս էր կատարվում այդ բանը: Էջմիածնից Սեբաստիա գնաց մի նուիրակ եպիսկոպոս. նա համարվում էր գիտնական և լաւ ճգնաւոր: Մխիթարը դառնում է նրա փոքրաւորը: Պէտք է ծառայել եպիսկոպոսին հլու հաւատարմութեամբ, որպէս զի փոխարէնը մի կտոր բան ստանայ նրա գիտութիւնից:

Այդ եպիսկոպոսի հետ Մխիթարը գնում է Էջմիածին: Հայոց ամենագլխաւոր վանքը, ուր նստում էր հայերի հոգևոր գլուխը, անշուշտ

ներկայացնում էր իւրաքանչիւր ուսումնածարաւ պատանուն իբրև աւետեաց երկիր: Բայց այնտեղ Մխիթարին սպասում էր հիասթափումն: Եթէ գրագիտութիւն իմացող մարդկանց այն ժամանակներում պէտք էր մատներով համրել, դրա գլխաւոր պատճառներից մէկն էլ այն էր, որ հայ հոգևորականները իբրև ուսուցիչ այնպիսի բռնակալներ էին, որ շատ քչերը կարող էին դիմանալ նրանց տների մօտ: Մխիթարի ուսուցիչ եպիսկոպոսը այդ մանկավարժական բռնակալութեան մի շատ տիպիկական ներկայացուցիչն էր: Ոչինչ մարդասիրական զգացմունք դէպի աշակերտը. ծեծը, հայհոյանքները սովորական միջոցներ են և կազմում են մանկավարժական գերագոյն իմաստութիւններ: Տարիների մի երկար թիւ է հարկաւոր, որպէս զի ուսուցիչը կամաց-կամաց, փոքրիկ կտորներով բան սովորեցնէ իր ծառայ աշակերտին: Մխիթարի ուսուցիչը վճռել է տասներկու տարի պահել նրան իր տների մօտ, ուստի չէ թողլ տալիս նրան շատ բան սովորել. և երբ աբեղաները գալիս էին նրա խուցը՝ ուսում առնելու, նա նախ և առաջ դուրս էր անում Մխիթարին, որպէս զի սա լսելով շատ բան չը սովորէ: Աւելացնենք այդ բոլորի վրայ ծառայական տանջանքները: Վաղ առաւօտեան զանգակը միաբաններին վանք էր հրաւիրում. Մխիթարը, միւս աշակերտների նման, պիտի շատ շուտ գնար՝ սաղմոս քաղելու: Ժամասացութիւնից յետոյ եպիսկոպոսները գնում էին

նորից քննելու, իսկ թշուառ աշակերտը պիտի ոտի վրա մնար, պատրաստ ամէն րոպէ կատարելու այն, ինչ կարող էր յանկարծ հրամայել նրա տէրը։ Այսքանը բաւական չէր. աշակերտներին այգիներում բանեցնում էին մշակի նման։ Անքուն գիշերները, այգու մէջ օրերով աշխատելը յոգնեցրին Մխիթարին. նա ստացաւ աչքերի հիւանդութիւն և եպիսկոպոսը ոչինչ ուշադրութիւն չը դարձրեց դրա վրա։

Ահա ինչ դաժան տանջանքներով էր հայ պատանին ձեռք բերում կրթութիւն։ Այն էլ ինչ կրթութիւն։ Ժամանակի կաթողիկոսներն ու պատրիարքները չէին կարողանում կանոնաւոր, անսխալ հայերէնով գրել. փոքր ի շատէ լեզուագէտ մարդը մի երևոյթ էր, որ մատով էին ցոյց տալիս և նա հռչակվում էր աշխարհից աշխարհ։ Գիտութիւնը սուրբ գրքերի մեկնութիւնն էր, քերականութիւն սովորելը շատ և շատ բախտաւոր անհատին էր միայն աջողվում. ահագին մեծամասնութեան համար դա մի անհասանելի բան էր։

Հայրենի իրականութիւնը այդ էր։ Մխիթարը դժգոհ էր այդ իրականութիւնից—ահա ինչն է այդ մարդու ամենամեծ արժանաւորութիւնը։ Նա որոնում էր ուսում և գիտութիւն. այդ բանը չը կար նոյն իսկ Էջմիածնում, իսկ Էջմիածնից բարձր տեղ չէր կարելի գտնել հայոց աշխարհում։ Որոնում էր ճգնաւորական մաքուր, անարատ կեանք, բայց դրա փոխարէն գտնում էր քուրձ

հագած, ապաշխարող կղերականներ, որոնք, սակայն, կոպիտ ու տգէտ էին, արատաւոր, ու նրանց գործերը չէին համապատասխանում խօսքերին։ Այդ անբաւականութիւնը դրդում է նրան որոնել իր ցանկացածը ուրիշ տեղերում։ Եւ նա գիշերով փախչում է Էջմիածնից, ազատվում է իր դաժան ուսուցչից։ Լսել է թէ Սևանի ծովում մի մենաւոր կղզի կայ և այդ կղզու վրա մի վանք, ուր ճգնում են հայ վարդապետներ։ Ու գնում է այնտեղ։ Բայց Սևանն էլ հայկական իրականութեան մի բեկորն է։ Այնտեղ էլ խաւար տգիտութիւնն է տիրում. վանական քարացած կեանքի մէջ կայ ձևական բարեպաշտութիւն, կան ճգնողների արտաքին երևոյթները, բայց չը կայ հոգի, չը կայ այն բարձրութիւնը, որին ձգտում էր Մխիթարը իր ճգնաւորական խոհերի մէջ։ Սևանն էլ չը կարողացաւ և չէր կարող բաւարարութիւն և անդորրութիւն պարգևել մի մարդու, որ իր ժամանակից պահանջում էր աւելի բան, քան նա կարող էր տալ։ Եւ Մխիթարին Սևանի ցուրտ կամարների տակ բռնեց յուսահատական մի տագնապ։ Այնքան քաշքշվել էր, այնքան չարչարվել էր, այժմ ինչ անել, ում դիմել՝ ճանապարհ, ուղղութիւն գտնելու համար։ Այս հարցերը տանջում են նրան։

Մխիթարի պէս միստիքական բնաւորութիւնները չեն կարող որ և է վճռի հասնել առանց երկնքի օգնութեան, և իւրաքանչիւր վճիռ նրանց մէջ ձևակերպվում է երկնային հրաշքի կերպա-

րանքով։ Մենակ, անօգնական, ոչ ոքից չը հասկացված մարդու այդ հարցերը ուղղված էին Աստուծուն, թէև նրա համար պարզ էր, որ դարձեալ պէտք է որոնել գտնելու համար, պէտք է աշխարհը չափչփել՝ առանց յուսահատվելու։ Բարեպաշտական լեգենդան ասում է, թէ նրան երևաց Աստուածածինը սեբաստացի երկու քոյր կոյսերի հետ և խոստացաւ կատարել նրա ցանկութիւնը։ Այդ խոստումը անում էր կամքի ոյժը, առաջանալու, կատարելագործվելու անյողդողդ ցանկութիւնը։ Բայց պէտք էր քաջալերութիւն, պէտք էր հաւատալ սեփական ոյժերին և գնալ անծանօթ, դժուար ճանապարհով։ Ահա այդ անհրաժեշտութիւնը վանքի խորհրդաւոր կիսամթութեան, աղօթ, հրաշքների ու վերացականութեան ոգով տոգորված մթնոլորտի մէջ ձևակերպվում է և տալիս նրա երևակայութեան այն տեսիլը, որ դառնում է նրա համար առաջնորդող աստղ։ Մարդիկ կան, որոնք ունեն այդպիսի աստղ իրանց սրտի և հոգու մէջ, բայց նրան հետևում են միայն այն ժամանակ, երբ տեսնում են նրան որ և է տեսիլքի, որ և է երազի մէջ։ Հոգու այդ տեսակ ազդումը սովորական է մանաւանդ կրօնական և կրօնամոլ մարդկանց շրջաններում, ուր մարդկային բնաւորութիւնը տարրացրած է, կամքը յանցաւոր և կորստական է համարվում և ուր ամեն ինչ վերագրվում է Նախախնամութեան, որ բոլոր անցքերի ու ձգտումների միակ տէրն ու տնօրէնն է…

Հեռանալով Սևանից, Մխիթարը ճանապարհ է ընկնում դէպի իր հայրենիքը։ Բայց ճանապարհին մնում է [illegible]նի վանքում, որի վանահայրը գոնէ այն արժանաւորութիւնն ունէր, որ զգում էր թէ ինքը տգէտ է, ուրեմն և պարտաւոր է յարգել աւելի գիտուններին։ Վանահայրը լաւ ընդունում է երիտասարդին և յանձնում է նրան աշակերտներ՝ ուսուցանելու համար։ Այդ նոր պաշտօնում Մխիթարը մնում է մօտ տարի ու կէս։ Երկու հանգամանք նրա այդ ժամանակվայ կեանքում ուշադրութեան արժանի են։ Առաջինն այն էր, որ այդ միջոցին Էրզրումի մէջ Աւետիք վարդապետը հալածանքներ էր յարուցել հայ-կաթօլիկների դէմ. այդ առիթով ծագած եղբայրասպան խռովութիւնները գրաւեցին և Մխիթարի ուշադրութիւնը, բաց անելով նրա առաջ այն դաւանական խտրութիւնները, որոնք տասնեակ դարերից ի վեր քարուքանդ էին արել աշխարհը, բայց դեռ չէին կշտացել արիւնոտ զոհերից։ Հալածել—տարածել, սա հին ասացուածք է։ Աւետիքը և նրա նմանները չէին հասկանում այդ. բայց ահա հալածվողների մեղքը ուսումնասիրել է սկսում և Բասէնի վանական դպրոցի ուսուցիչը։ Վանքի մէջ նա գտնում է ձեռագրեր, դրանցից իմանում է Քաղկեդոնի ժողովի հանգամանքներն ու ընդունած դաւանական սկզբունքները։ Դա առաջին ծանօթութիւնն է կաթօլիկութեան հետ, դեռ աղօտ ու անկատար։ Մխիթարը ծանօթանում է և Պօղոս ա-

նունով մի հայ-կաթօլիկի հետ, որ եղել էր Հռօմում։ Պօղոսը պատմում է պապերի մայրաքաղաքի մասին, նկարագրում է այնտեղի պալատները, կրօնաւորական հաստատութիւնները, գրադարանները։ Հասկանալի է, թէ ինչ յափշտակող տպաւորութիւն պիտի գործած լինի հեռաւոր մայրաքաղաքը՝ որտեղ, մեր դժբախտ իրականութեան մէջ տանջւող երիտասարդի մտքի վրա։ Այդ ժամանակից նա հասկանում է որ իր որոնածը Հռօմում կարելի է գտնել։

Երկրորդ հետաքրքրական հանգամանքն այն է, որ Բաւէնի վանքում Մխիթարին յանկարծ յափշտակում է աշխարհային կեանքը։ Չը նայած, որ նա պահեցողութիւններով, զրկանքներով ամեն կերպ ճնշում էր իր մարմինը, եկաւ մի ժամանակ, երբ երիտասարդական արիւնը խօսեց նրա մէջ։ Երկու կանայք քիչ էր մնում որ հրապուրէին նրան և, ով գիտէ, գուցէ նոյն իսկ դուրս բերէին վանական մթնոլորտից։ Մենք չը գիտենք այս դէպքի մանրամասնութիւնները. վանքում յօրինված կենսագրութիւնը մեզ ուզում է հաւատացնել, թէ դա սատանայի գործն էր և մի քանի անորոշ ու անկապ խօսքեր ասելով, շտապում է փակել կղերական-ճգնաւորական տեսակէտից անախորժ դէպքի յիշատակութիւնը։ Կարելի է, սակայն, ենթադրել որ աշխարհի սէրը այնքան էլ հեշտութեամբ չէ խեղդել ու սպանել Մխիթարը։ Բաւէնի վանքից հեռանալու մի պատճառ էլ

եղել է կինը, որ քիչ էր մնում տակն ու վրա անէր երիտասարդ [illegible]ւորի բոլոր բարեպաշտական ջանքերը...

Հայրենի քաղաքում Մխիթարը ենթարկվեց մի ծանր դժբախտութեան։ Այդտեղ սաստկացաւ աչքացաւը, որ դեռ էջմիածնում էր սկսվել։ Հիւանդութիւնը այնքան սաստկացաւ, որ երիտասարդ սարկաւագը կուրացաւ, ոչինչ չէր տեսնում ամբողջ ձմեռվայ ընթացքում։ Բայց այդ դաժան փորձութիւնը միայն ժամանակաւոր անգործութեան դատապարտեց Մխիթարին։ Մի ուրիշը նրա հասակում գուցէ և յուսահատվէր, թողնէր ամեն ինչ. բայց Մխիթարը ճգնաւորական տոկունութեամբ տարաւ ճակատագրի հարուածը և կուրութեան ժամանակ էլ մտածում էր գրքերի, կրթութեան մասին։ Այդ տոկունութիւնը նրա մի հրաշալի յատկութիւնն էր, որ վերջ ի վերջոյ այնքան բարձրացրեց նրան։ Գարնանը աչքի ցաւերն սկսեցին մեղմանալ, իսկ մի հմուտ գեղագործի բժշկական միջոցները վերադարձրին մթնած աչքերի լոյսը։ Եւ նա իսկոյն սկսեց շարունակել իր պարապմունքները, ինքնակրթութիւնը։

Սակայն նա երբէք չէր մոռանում որ տնային միջոցներով, ձեռքի տակ եղած գրքերով չէ կարելի բաւականանալ։ Իրականութեան աղքատ դըժգոհութիւնը գնալով աւելի սաստկանում էր. հարուստ ու քաղաքակրթված Հռօմը չէր հեռանում նրա մտքից։ Ուստի նա դարձեալ ճանապարհ

ընկաւ Սեբաստիայից, այս անգամ հաստատ մտնելով լոյս և գիտութիւն որոնել այլ ևս ոչ թէ Հայաստանի վանքերում, այլ հեռաւոր տեղեր, օտար երկնքի տակ։ Դա մի տխուր անհրաժեշտութիւն էր ամէն մի հասկացող հայի համար։ Մխիթարը, հէքեաթների անմահական խնձոր որոնողի նման, գնաց թափառելու դէպի արևմուտք։ Նրա առջև կանգնած էին դժուարութիւններ, որոնք խնձոր որոնողների առջև կանգնած խոչընդոտներից պակաս չէին։ Մի անյայտ, անօգնական ու աղքատ երիտասարդ, նա պիտի ճանապարհորդէր մեծ մասամբ ոտով։ Քիչ էր մնում որ Մխիթարը խեղդվի մի մեծ, յորդացած գետում...

Հասնելով Բերիա քաղաքը, Մխիթարը այդտեղ պատեհութիւն ունեցաւ ծանօթանալու կաթոլիկ կրօնաւորների հետ, որոնց մէջ առանձնապէս յիշատակվում է եզուիտ Անտօնը։ Սրա մօտ Մխիթարը մնաց երեք ամիս։ Անշուշտ, ուշադիր երիտասարդը ահագին տարբերութիւն պիտի գտնէր հայ տգէտ և հացկատակ վանականութեան և ճարպիկ, գիտուն կաթոլիկ աբեղաների մէջ։ Եզուիտ Անտօնը քարոզիչ էր Արևելեան Հնդկաստանում. Նա խօսում էր Մխիթարի հետ թիւրքերէն լեզուով, և, երևի, ծանօթացրեց նրան Լօյօլայի հիմնած կարգի կազմակերպութեան հետ։ Այստեղ էլ, անշուշտ, Մխիթարի մէջ միտք ծագեց հիմնել կաթոլիկ միաբանութիւնների նման մի հաստատութիւն Հայաստանի վանքերում։ Բայց բաւական չը համարելով իր

ստացած կրթութիւնը, նա եզուիտ քարոզչին էլ յայտնեց թէ վառ ցանկութիւն ունի Հռոմ գնալու։ Մի այդպիսի միտք աջողութեամբ գլուխ բերելու համար պէտք էր, ի հարկէ, որ Մխիթարը կաթոլիկ լինէր։ Եւ եզուիտ Անտօնի տուած մի վկայագրից մենք իմանում ենք, որ հայ սարկաւագը այդ ժամանակ արդէն իւրացրել էր հռոմէական դաւանութիւնը։

Տեսնելով թէ որքան օգտակար գործիք կարող է դառնալ այդ ընդունակ երիտասարդը Հայաստանի մէջ գործող եզուիտների ձեռքում, հայր Անտօնը աշխատում էր համոզել Մխիթարին, որ սա թողնէ գնալու միտքը։ Գնալ օտարութիւն—այսպէս էր ասում եզուիտը—նշանակում է կորչել մի օտար ազգի մէջ, փոխել լեզուն ու ազգային տարազը. մինչդեռ Մխիթարի ունեցած գիտութիւնը միանգամայն բաւարար է՝ Հայաստանի մէջ օգտաւէտ գործունէութիւն ցոյց տալու համար։ Սակայն այդ խրատներն ու յորդորները չօգնեցին. Մխիթարը հաստատ էր իր վճռի մէջ։ Եւ հ. Անտօնին մնում էր տալ նրան յանձնարարականներ, որոնցից մէկը ուղղված էր եզուիտական կարգի գեներալին։

Այդ թղթերը ծոցում՝ Մխիթարը մի ֆրանսիական նաւ մտաւ։ Կասկած չը կայ, որ եթէ նա հասնէր Հռոմ և ներկայացնէր Անտօնի յանձնարարականները, եզուիտների կարգը նրան կընդունէր իր շրջանը, և Մխիթարը, եզուիտ դառնալով, կը կորչէր հայութեան համար։ Բայց այսպէս

չեղաւ։ Մի սաստիկ տենդ բռնեց Մխիթարին, սկսեց տանջել նրան։ Եւ նա հարկադրված եղաւ կանգ առնել Կիպրոս կղզում, ուր նրան սպասում էին դառն տանջանքներ։

Մեծ մարդկանց տանջանքները նրանց փառքի սուրբ յաղթութիւններն են. և ապագայ սերունդները, եթէ միայն նրանք զրկված չեն երախտագիտութեան կենսատու զգացմունքից, պիտի երբեք չը մոռանան այդ տանջանքները։ Ուստի մենք պիտի հետևենք օտարութեան մէջ ծանր հիւանդութեան ենթարկված Մխիթարին։

Կիպրոս կղզու գլխաւոր քաղաքն էր Սալամինա. այնտեղ կար և հայոց եկեղեցի։ Մխիթարը այնտեղ ուղևորվեց, որպէս զի օթեւան գտնէ եկեղեցու խուցերից մէկում։ Երեք օր պառկած էր այնտեղ, բայց չը գտնվեց և մի հատ կարեկից մարդ, որ գոնէ ջուր տար ջերմի մէջ տապակվող օտարականին։ Իսկ հիւանդութիւնը գնալով սաստկանում էր։ Այդ դրութիւնը միայն այն ազդեցութիւնն արաւ եկեղեցու ժողովրդի վրա, որ վճռեցին հեռացնել հիւանդին եկեղեցուց. նա մի կրօնաւոր էր, ուրեմն կրօնաւորներն էլ պիտի պահպանէին նրան։ Մի անգութ և տմարդի վճիռ, որին ընդունակ էր ասիական եսամոլ համայնքը։ Սալամինայից մի օրվայ ճանապարհ հեռու գտնվում էր ճգնաւոր հայ վարդապետների մի վանք։ Մխիթարին բարձեցին գրաստի վրա և տարան գցեցին այդ վանքը։ Բայց անմարդասիրութիւնը ուր պէտք

է որոնել, եթէ ոչ կրօնաւորների մօտ, վանքում։ Մխիթարին այդտեղ ճանաչում էին, գիտէին որ նա հակված է դէպի կաթօլիկութիւն։ Այդքանն էլ բաւական էր, որ անօգնական հիւանդը մատնվի մի գազանային անտարբերութեան...

Մի կտոր կապերտ էլ չը տուին, որ հիւանդը պառկէ։ Մխիթարի անկողինը սեփական վերարկուն էր, որի մէջ փաթաթվում էր նա։ Մի կտոր հաց, մի աման ջուր բերող, ի հարկէ, չը կար. հիւանդը ինքը պիտի գնար խոհանոց և խնդրէր ուտելու բան։ Տենդը սաստկացած ժամանակը Մխիթարը, համարեա խելակորոյս, ինքն էլ չիմանալով թէ ինչ է անում, իջնում էր իր խուցից, որ շինված էր տանիքի վրա, ցած էր գնում զառիվայրով և մտնում էր քիչ հեռու գտնվող պարտէզը, ուր մի քարայրից աղբիւր էր բղխում և ջուրը հաւաքվում էր մի արհեստական աւազանում։ Իրան այրող տաքութիւնից գոնէ մի քիչ ազատվելու համար, Մխիթարը հանում էր շորերը և մտնում աւազանը, ուր մնում էր, մինչև որ զգում էր ջրի ցրտութիւնը. ուշքը գլուխն էր գալիս և, հասկանալով թէ որքան վտանգաւոր գործ է կատարում, շտապում էր դուրս գալ աւազանից, հագնում էր շորերը։ Բայց այնքան նուաղած ու թոյլ էր, որ չէր կարողանում շարժվել և ընկնում էր կանաչ խոտերի վրա։ Այդ ուղևորութիւնը դէպի ջրի աւազանը սովորաբար տեղի էր ունենում կէսօրին, երբ դողը կատաղութեան բարձր աստիճանին

էր հասնում։ Յուլիս ամիսն էր, արևը այրում էր։ Կիպրոսը հարուստ է օձերով, որոնք անդադար սողում էին դժբախտ հիւանդի շուրջը։ Բայց թունաւոր կենդանիների ահն էլ չէր կարողանում շարժել տալ հիւանդին, այն աստիճան ուժասպառ էր նա։ Մօտ մի ժամ խոտերի վրա պառկած մնալուց յետոյ նա վեր էր կենում, մտնում քարայրը, ուր նստում էր քարերի վրա և ոտները դնելով ջրի մէջ, այդպէս մնում էր մինչև երեկոյ։

Արևը մայր մտնելու վրա ջերմը թուլանում էր։ Այդ ժամանակ Մխիթարը դուրս էր գալիս այրից՝ վանք գնալու համար։ Բայց այստեղ սկսվում էին նոր տանջանքներ։ Ոտով բարձրանալ զառիվայրը անհնարին էր կիսամեռ մարդու համար, և նա ընկնում էր երեսի վրա, փորսող տալով էր անցնում այդ ճանապարհը, իսկ շունչ քաշելու համար յաճախ նստում էր և տալիս էր տասներկու առաքեալներից մէկի անունը։ Այս բոլորը կատարվում էր վանքի աչքի առաջ. Նրան տեսնում էին, բայց չը կար մէկը, որ բռնէր նրա ձեռքից, էլ չենք ասում թոյլ չը տար, որ հիւանդը ուշակորոյս դրութեան մէջ գնայ իր վտանգաւոր թափառումները կատարելու։ Մխիթարը, բացի այդ բոլորից, արհամարհված էր վանքի մեծի ու փոքրի մօտ։ Երեկոները, երբ քաղցը յագեցնելու համար մտնում էր խոհանոց, ամեն տեսակ կշտամբանքներ էր լսում խոհարարից, մինչև որ կարողանում էր ստանալ նրանից մի քիչ աղի ձիթա-

պտուղ և մի կտոր գարեխառն հաց։ Այդ բարբարոսական միջավայրում միայն մի հատ մարդ գտնըվեց, մի անցորդ եպիսկոպոս, որ ուշադրութիւն դարձրեց Մխիթարի սրտաշարժ պաղատանքների վրա և եփեց նրա համար մի քիչ խաշիլ։ Թշուառ հիւանդը կերաւ իր սրտի ուզածը մի այնպիսի ախորժակով, որ թւում էր նրան թէ կեանքում այնպիսի համեղ կերակուր չէ ճաշակել։

Ճգնաւորների այն վանքը, ուր մի կիսամեռ օտարական այդ տեսակ ամարդի ընդունելութիւն էր գտնում, երևակայեցէք, դեռ ուխտատեղի էլ էր։ Վարդավառին քաղաքից ուխտաւորներ եկան և Մխիթարը աղաչեց, որ իրան քաղաք տեղափոխեն։ Խնդիրքը կատարվեց և հիւանդ երիտասարդը նորից Սալամինայի հայոց եկեղեցու խուցը մտաւ, վանքում երկու ամիս տանջվելուց յետոյ։ Այս անգամ Մխիթարը դիմեց լատին կրօնաւորներին, որոնց մէջ կար և բժիշկ։ Նայելով ոսկորացած մարդուն, բժիշկը հրաժարվեց դեղ տալ նրան, հաւատացած լինելով, թէ նա պիտի մեռնէ, հետևաբար անօգուտ է դեղը, մանաւանդ որ կարող է կասկած ծագել, թէ նա մեռաւ հէնց այդ դեղից։ Սարսափելի վճիռը Մխիթարը իմացաւ թարգմանից, որի միջոցով խօսում էր կրօնաւոր բժշկի հետ։ Բայց չը յուսահատվեց։ Մի հայ դեղ տուեց նրան, բայց դեղը չափազանց փորլուծութիւն առաջ բերեց, հասցնելով Մխիթարին մահվան դուռը. Նա ցամաքել էր, դարձել տերև։ Եւ միայն

այդ սոսկալի դրութեան մէջ նա հնարաւոր համարեց լուծել իր ճգնաւորական պահեցողութիւնը ու միս ուտել...

Օր օրի վրայ հալվելով, Մխիթարը, վերջապէս, վճռեց վերադառնալ տուն.—ահա ինչը ազատեց նրան Լօյօլայի աշակերտներից մէկը դառնալու դժբախտութիւնից: Բայց վերադառնալու համար պէտք էին միջոցներ, իսկ ինչպէս կարող էր այդ մահամերձ կմախքը շարժել իր ազգականների քարացած սիրտը և օգնութիւն գտնել: Բարեբախտաբար, օտարները ուշադրութիւն դարձրին դժբախտ մարդու վրայ: Երկրի օրէնքով պէտք էր հարկ տալ, բայց հարկահանը, տեսնելով նրա դրութիւնը և տեղեկանալով նրա կրած տանջանքներին, խղճաց և ազատեց հարկից: Մնում էր ներկայացնել մի երաշխաւոր՝ անցաթուղթ ստանալու համար: Տեղացի հայերի մէջ չեղաւ մէկը, որ յանձն առնէր երաշխաւորութիւն. և անտանելի դրութիւնից Մխիթարին հանողը մի բարեսիրտ յոյն էր, որ թէև չէր ճանաչում նրան, բայց երաշխաւոր դարձաւ:

Այսպէս Մխիթարը ազատվեց Կիպրոսի դժոխային չարչարանքներից և նաւ նստելով, հասաւ Սելեւկիա: Այդտեղից մի դաժան ճանապարհորդութիւն արեց մինչև Բերիա: Դեռ սաստիկ հիւանդ ու թոյլ, նա աղքատ էր՝ բառիս բուն նշանակութեամբ, միջոց չունէր գրաստ վարձելու, ուստի հարկադրված եղաւ ոտով գնալ: Ճանապարհին

պատառվեց նրա մի կօշիկը, նա դէն գցեց և միւսը ու ոտաբոբիկ էր գնում. մի-մի կարողանում էր էշ վարձել և նստել նրա վրայ. իսկ սովամահ չը դառնալու համար ճանապարհին մուրացկանութիւն էր անում...

Միայն Բերիայում խեղճ մարդը հանգստացաւ: Կային ծանօթներ, օգնեցին, դեղեր տուին. և մի քիչ առողջանալով, նա ճանապարհ ընկաւ դէպի տուն: Հայրը և ընտանիքի միւս անդամները գրկաբաց ընդունեցին տարագիր որդուն, որին այդքան տանջել էր տալիս առաջանալու, կատարելագործվելու սաստիկ տենչը: Ծնողական յարկը խնամեց նրան, առողջացրեց իր քնքշութիւններով: Բայց և այդպէս, չը կարողացաւ Մխիթարին պահել իր տակ, հեռացնել այն փշոտ ճանապարհից, որ ընտրել էր նա ճգնաւորի հաստատակամութեամբ: Կիպրոսի տանջանքները չը յուսահատեցրին նրան, չը կարողացան զզուանք յարուցանել նրա մէջ, դուրս հրել նրան մի ազգի միջից, որ այդպիսի ողբալի իրականութիւն էր ներկայացնում: Մխիթարը, այդ իրականութեան նահատակ դառնալով, կարծես աւելի ես համոզվեց, թէ չը պէտք է ձեռքերը ծալել և նստել մի մոռացված անկիւնում: Կորցնելով Հռոմ գնալու յոյսը, նա, ինչպէս երևում է, վճռեց մնալ հայոց եկեղեցու մէջ և գործել հայրենիքում: 1696 թւին, քսան տարեկան հասակում, Սեբաստիայի ս. Նշանվանքի մէջ նա ձեռնադրվեց աբեղայ:

Այդ կոչումն ընդունելուց յետոյ անմիջապէս նա ջանք է գործ դնում իր միտքը իրագործելու, այն է մի կրօնաւորական միաբանութիւն հաստատելու։ Նրան տուած էր մարդ գրաւելու, իր հետ տանելու ընդունակութիւնը։ Առաջին մարդիկ, որոնք ընդունեցին նրա հրաւէրը և համաձայնութիւն տուին կուսակրօն հոգևորականների կարգը մտնելու, Յովհաննէս և Յովսէփ անունով սեբաստացիներն էին։ Բայց սրանց ծնողները աղմուկ բարձրացրին. կազմվեց Մխիթարի դէմ մի թշնամական կուսակցութիւն, որի յարուցած դժգոհութիւններից ազատվելու համար հարկաւոր եղաւ որ նորընծայ աբեղան առժամանակ հեռանայ քաղաքից։

Եթէ կեանքի մէջ կրած այնքան տանջանքները չը կարողացան յետ կանգնեցնել Մխիթարին իր փայփայած մտքից, Սեբաստիայի թեթև աղմուկները, ի հարկէ, աւելի ևս անզօր պիտի լինէին այդ ուժեղ կամքը կոտրելու համար։ Շարունակ որոնելով գիտութիւն, Մխիթարը յանկարծ մի գիւտ արաւ. Կ. Պոլսում հռչակվել էր Խաչատուր վարդապետ Կարնեցին *). ահա այդ գիտուն կաթօլիկ կրօնաւորին կարելի էր ծրագրվող միաբանութեան գլուխ կանգնեցնել։ Եւ առանց երկար մտածելու նա ուղևորվեց Կ. Պոլիս։ Բայց Պրոպագանդայի աշակերտի սրտին շատ մօտ չէին այն

*) «Հայկական Տպագրութիւն», հատ. I, եր. 304—306։

չարչարութիւնները, որոնք ստիպում էին սեբաստացի երիտասարդին այս ու այն կողմ ընկնել և որոնել յոյս ու գիտութիւն։ Կարնեցին, երևի, իր գիտնականութեան և փայլած հեղինականութեան համար ստորացուցիչ բան համարեց միանալ գաւառից եկած երիտասարդ և անյայտ վանականի հետ ու մերժեց նրա առաջարկութիւնը։

Հինգ ամիս Կ. Պոլսում մնալուց յետոյ, Մխիթարը չը կարողացաւ հաշտվել մի քարոզիչ աբեղայի դրութեան հետ և նորից փորձեց գործ սկսել Հայաստանում։ Ընտրեց Երզրումի նահանգի արևելեան մասը (Օլթիի մօտերքը), ուր մի վանքի մէջ, հեռու աշխարհից, պիտի հաւաքէր աշակերտներ և միաբանութիւն հաստատէր։ Բայց 1698-ին հասնելով Երզրում, այդտեղ փոխեց իր միտքը և գնաց Կարմիր վանքը, որի վանահայր Մարգար եպիսկոպոսը յայտնի էր նրան իբրև բարի և համակրելի մարդ։ Եւ իրաւ, Կարմիր վանքում էլ, ինչպէս մի ժամանակ Բասէնի վանքում, նա գտաւ լաւ ընդունելութիւն. վանական դպրոցի ուսուցիչը դարձաւ, ստացաւ վարդապետական գաւազան, շրջում էր գիւղերը և եպիսկոպոսի թոյլտւութեամբ քարոզում էր։ Չը նայած այդ բոլոր յարմարութիւններին, Կարմիր վանքը նոյնպէս բաւարարութիւն չը տուեց նրան։ Միաբանութիւն հաստատելու միտքը չէր թողնում նրան, իսկ այդպիսի մի միտք իրագործել չէր կարելի Հայաստանի հողի վրա։ Ի զուր Մխիթարը երկար համոզում

էր Մարգար եպիսկոպոսին, ցոյց տալով այն բոլոր օգուտները, որ պէտք էր սպասել միաբանութիւնից։ Բարի վանահայրը կտրական կերպով հրաժարուեց այդ մտքից, գլխաւորապէս վախենալով իր դասակիցների անբաւականութիւնից և հակառակութիւնից։

Այնուհետև Կարմիր վանքն էլ ոչինչ հրապոյր չունէր Մխիթարի համար։ Եւ նա իր երկու աշակերտների հետ 1700 թուին վերադարձաւ Կ. Պօլիս, հաստատ վճռելով աշխատել այդտեղ՝ մի բան գլուխ բերելու համար։ Թիւրքաց մայրաքաղաքում քսան և հինգ տարեկան վարդապետը սկսեց աշխատել մեծ աշխոյժով։ Նա դեռ պաշտօնապէս չէր բաժանուել լուսաւորչական եկեղեցուց, իսկ այդ ժամանակվայ Մելքիսէթ պատրիարքը ոչ միայն չէր հետևում իր նախորդների անհամբերող և հալածասիրական ոգուն, այլ նոյն իսկ իր բարեկամ էր համարում այնպիսի թունդ կաթոլիկ վարդապետին, որպիսին էր Խաչատուր Կարնեցին։ Կրօնական մրրիկները առժամանակ դադար էին առել և տիրող խաղաղութեան մէջ Մխիթարը, կաթոլիկ վարդապետների աջակցութեամբ, հրատարակեց չորս գիրք։

XVII դարի վերջին տարում մենք տեսնում ենք Լիվօրնօի տպարանը Կ. Պօլիս փոխադրուած *), ուր նա չարունակում էր գործել Էջմիածնի և ս.

*) «Հայկական Տպագր.», եր. 319.

Սարգսի անունով։ Մխիթարը այդ տպարանին դիմեց, սակայն իր հրատարակած գրքերի մէջ չը յիշատակեց իր անունը. փառքից փախչող, համեստութիւնը առաջին պայման ընդունած գործիչը «չնչին բանասէր» էր անուանում իրան այդ գրքերի յիշատակարանների մէջ։ Մենք, որ գիտենք Մխիթարի ճգնաւորական անզուսպ եռանդը, առանց բացատրութեան էլ կը հասկանանք, որ նրա հրատարակած գրքերը կարող էին լինել միմիայն զուտ կրօնական։ Եւ իրաւ, այդ գրքերը ոչինչ նորութիւն չէին ներկայացնում մեր գրականութեան մէջ։ Առաջին գործն էր Թովմա Կեմպացու աշխատութիւնը *), ապա Թիֆլիսեցի կամ Մծխեթացի Պետրոս վարդապետի թարգմանութիւնները լատիներէնից՝ «Գիրք մտածողական աղօթից» և «Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննու աւետարանչին», իսկ չորրորդ գիրքը Խաչատուր Կարնեցու աշխատութիւնն էր—«Մեկնութիւն երգոց Սողոմոնի»։ Այդ բոլոր գործերը տպագրուեցին Մելքիսէթ պատրիարքի թոյլտւութեամբ։

Գրական գործն էլ հաւաքում է Մխիթարի մօտ աշակերտներ, որոնցից շուտով պիտի կազմուէր միաբանութիւնը։ Պահպանելով ամեն տեսակ զգուշութիւն, նա չը թողեց իր մօտ այն աշակերտներին, որոնք արդէն վարդապետական կոչում էին ստացել, այլ ուղարկեց նրանց դաւա-

*) Ibid., եր. 195.

ները՝ քարոզչութեան համար։ 1701 թուականի ապրիլին Մխիթարը Բէյօղլու թաղում վարձեց բնակարան, ուր բաց արեց կազմատուն։ Բայց դա մի վարագուրած դպրոց էր։ Վարդապետական աստիճան չունեցող աշակերտները գալիս էին այստեղ և Մխիթարը սկսում էր դասեր տալ նրանց. բայց հէնց որ գալիս էր մի օտար մարդ, աշակերտներն իսկոյն ընդհատում էին ուսումը և սկսում էին տպագրած գրքերի թերթերը ծալել, իբր թէ կազմարարներ են։

Սակայն Կ. Պոլսի հայերի խաղաղութիւնը երկարատև չէր։ Ադրիանուպոլսի առաջնորդ Եփրեմ եպիսկոպոսը, թիւրք կառավարութիւնից հրաման ստանալով, յափշտակեց պատրիարքութիւնը և հալածանք սկսեց կաթօլիկների դէմ։ Մելքիսէթ պատրիարքը ուղարկվեց թիարան, իսկ չորս վարդապետներ, որոնց մէջ էր և Մխիթարը, պիտի ձերբակալվէին։ Մխիթարը իր ընկերներից աւելի բախտաւոր էր. մինչդեռ երեք հոգին ընկան Եփրեմի ձեռքը, Մխիթարին աջողվեց փախուստ տալ, թաքնվել կամ եզուիտների, կամ կապուչին վարդապետների, կամ թէ Ֆրանսիական դեսպանի մօտ։ Աւելորդ է նկարագրել այդ հալածանքները, որովհետև դրանք անօրինակ բաներ չէին այն ժամանակները և կային շատ մարդիկ, որոնք աւելի վատ տանջանքներ կրեցին։ Նշանակենք միայն հալածանքների հետևանքը։ Մխիթարը շտապեց նախ գլուխ բերել իր ծրագրած միաբանութիւնը և

երկրորդ՝ որոնել մի տեղ, ուր այդ միաբանութիւնը կարող կը լինէր ազատ շունչ քաշել։

1701 թուականի սեպտեմբերի 8-ին, Աստուածածնի ծննդեան տօնին, Մխիթարը հաւաքեց իր համախոհներին կապուչինեան վանքի այն սենեակը, ուր ինքը թաքնված էր հայոց պատրիարքի հալածանքներից։ Այստեղ նա բացատրեց, թէ ինչպիսի կազմակերպութիւն պիտի ունենայ այն միաբանութիւնը, որի մասին նա մտածում է այսքան տարի։ Ընդունվեցին Անտոն Աբբայի կրօնաւորական կարգերը։ Բայց գլխաւորը այդ չէր։ Մխիթարը բաց արեց իր ունկնդիրների առջև իրերի դրութիւնը և ասաց որ այդպիսի հանգամանքների մէջ չէ կարելի միաբանութիւնը հաստատել ոչ Կ. Պոլսում, ոչ էլ Հայաստանի որ և է կողմում. ուստի պէտք է ընտրել մի այնպիսի երկիր, ուր յարմարութիւն կը լինի վանք և միաբանութիւն հաստատելու։ Սկզբում դիտաւորութիւն կար ընտրել Լիբանանը, ուր կաթօլիկ մարօնիտները ունէին առանձին պատրիարքութիւն։ Բայց, վաճառականների միջոցով տեղեկութիւններ հաւաքելով, Մխիթարը հասաւ այն եզրակացութեան, որ ամենայարմար տեղը Յունաստանի Մօրէա երկիրն է, որ գտնվում է Վենետիկի իշխանութեան տակ։ Ժողովը ընդունեց Մօրէա գնալը։ Աղօթքներ կարդացվեցին, խնդրուածքներ եղան և Մխիթարը յայտարարեց, որ միաբանութիւնը հաստատված է

այդ օրվանից և նուիրում է իրան Աստուածածնին *)։

Այսպէս սկիզբ առաւ Մխիթարեան հռչակաւոր միաբանութիւնը։ Սկզբում նա կազմված էր տասն միաբաններից։ Նրան հաւաքողն ու կազմողը Մխիթարն էր, բայց նրան առաջնակարգ նշանակութիւն տուողը աւելի հանգամանքներն էին, որոնք միացան Մխիթարի անխոնջ ջանքերի և կազմակերպող ընդունակութիւնների հետ։

Այդ հանգամանքների մէջ առաջին տեղն են բռնում հալածանքները։ Հալածանքներն էին, որ դուրս նետեցին այս նորակազմ կաթօլիկ միաբանութիւնը ոչ միայն հայութեան միջից, այլ և Օսմանեան պետութեան սահմաններից. հալածանքները ստիպեցին որոնել մի քրիստոնեայ պետութիւն, ուր կարելի էր հանգստութիւն վայելել։ Առանց այս հանգամանքների Մխիթարեան միաբանութիւնը չէր լինի այն, ինչ եղաւ։ Նա կարող էր հաստատվել Լիբանանում, Կ. Պօլսում, Հայաստանի մի վանքում, նոյն իսկ Յունաստանում. բայց այդ դէպքում նա կը լինէր լոկ մի կրօնական հաստատութիւն, լոկ վանականների մի համրակեցութիւն։ 1705 թւականին մի քանի կաթօլիկ հայեր, հետևելով Մխիթարի օրինակին,

*) Միաբանութիւնը ընդունեց կնիք, որ բաղկացած էր չորս տառերից—Ո. Կ. Վ. Ա. (Որդեգիր Կուսին Վարդապետ Ապաշխարութեան)։

հիմնեցին Անտօնեան միաբանութիւնը Լիբանանում. բայց այդ միաբանութիւնը ոչինչ գրական վաստակ չարտադրեց, և նրա անունը միայն կաթօլիկ արեղայական հիմնարկութիւնների ցուցակում է տեղ գրաւում։

Մխիթարը հիմնեց իր միաբանութիւնը գրական գործով. ինքն ըստ ինքեան հասկանալի էր, որ եթէ գրական գործունէութիւնը պիտի լինէր այդ միաբանութեան հիմնաքարը, պէտք էր, ուրեմն, առանց հալածանքների էլ թողնել ու հեռանալ հայկական խաւար իրականութիւնից, ապաստան որոնել աւելի լուսաւոր և առաջադէմ մի երկրում։

Զգում էր Մխիթարը այդ անհրաժեշտութիւնը։ Գործի սկզբում—ոչ։ Նրան աւելի գրաւում էր ճգնաւորական կենցաղը և, ով գիտէ, եթէ նա հնարաւորութիւն ունենար մնալ իր երկրում, գուցէ և բաւականանար այնպիսի գրական գործերով, որոնց նա հրատարակեց Կ. Պօլսում և որոնց չարունակելու համար պէտք էլ չը կար լուսաւոր երկիրներ որոնելու։ Սկզբում Մխիթարը լուսաւոր երկիր չէր էլ որոնում։ Մօրէան, նոր միաբանութեան այդ աւետեաց երկիրը, Եւրոպա էր լոկ իր աշխարհագրական դիրքով, բայց ոչ իր կեանքով ու առաջադիմութեամբ։ Դա մէկն էր այն թշուառ երկիրներից, որոնք տանջվել էին Օսմանեան լծի տակ. մի քանի տարի առաջ էր Մօրէան անցել Վենետիկին, բայց այդ կարճ մի-

ջացում նա, ի հարկէ, չէր կարող ազատվել Թիւրքական իրականութիւնից, մանաւանդ որ Թիւրքիան բոլորովին մոռացել էլ չէր իր այդ վաղեմի սեփականութիւնը վենետիկցիների ձեռքում թողնել: Հալածանքները մղեցին Մխիթարին դէպի արեւմուտք, իբրև դէպի մի խաղաղ նաւահանգիստ. և նա ցամաք իջաւ առաջին պատահած տեղում, առանց մտածելու թէ որքան դա յարմար է մտաւոր գործունէութեան համար: Նոյն իսկ միաբանութիւնը հաստատելուց յետոյ էլ Մխիթարը մի ամբողջ տարի մնաց Կ. Պօլսում, կարծես դեռ տատանվում էր, դեռ սպասում էր, թէ գուցէ կաջողվի մի անկիւն գտնել հայրենի երկրում: Եկաւ Աւետիք պատրիարքը, խռովութիւնները սաստկացան և Մխիթարը, անկարող լինելով մնալ Կ. Պօլսում, փախաւ, ինչպէս տեսանք, վաճառականի շորերով դէպի Եւրոպա:

Այդ ժամանակից մի բարեհաճ ճակատագիր գալիս է հովանաւորելու Մխիթարին—ահա այն երկրորդ մեծ հանգամանքը, որ նպաստեց Մխիթարեան միաբանութեան և դարձրեց նրան մի կենսունակ, յարատև հիմնարկութիւն: Հայրենի հալածանքների զոհին իր հովանու տակ է առնում կաթօլիկութիւնը, որ և մատակարարում է նրան նիւթական առատ միջոցներ: Թէև վանական կենսագրութիւնը ամէն տեղ և ամէն դէպքում աշխատում է Մխիթարին նախախնամութեան գործիք ցոյց տալ և այդ պատճառով խուսափում է

այն տեսակ պատմուածքներից, որոնց մէջ մենք պիտի տեսնէինք թէ ինչպէս էին սարքվում միաբանութեան գործերը,—բայց և այնպէս, շատ փաստեր կան, որոնք կասկած չեն թողնում թէ Մխիթարը լաւ գիտէր գործել ոչ միայն իբրև կրօնաւոր, այլ և իբրև քաղաքագէտ, իբրև «փօլիթիկք»: Նրան իր հովանաւորութեան տակ է առնում նախ և առաջ Վենետիկի դեսպանը Կ. Պօլսում, որ մի և նոյն ժամանակ և Մօրէայի կառավարիչն էր. դրա յանձնարարականներով էր, երևի, որ հանրապետութեան պաշտօնեաները տուին Մխիթարին Մեթօն բերդաքաղաքում տեղ՝ վանք կառուցանելու համար և յատկացրին միաբանութեան մի գիւղ, որի արդիւնքով պիտի ապրէր նա: Այսպիսի յանկարծակի աջողութիւնը, անշուշտ, պատրաստված էր բանակցութիւնների միջոցով, որոնց էութիւնը, սակայն, մեզ յայտնի չէ:

Սկսվեց միաբանութեան կազմակերպութիւնը: Հասնելով իր վաղեմի տենչանքին, Մխիթարը, ի հարկէ, չը պիտի խնայէր ոչ մի ջանք՝ բարեկարգութիւն հաստատելու համար: Աշակերտների թիւը բաւական մեծացել էր, պէտք էր այժմ մտածել կանօնագրութիւն ունենալու մասին: Այս նպատակով նա 1705 թուին Հռոմ ուղարկեց իր միաբանակիցներից երկուսին, որոնք պիտի ստանային Կլեմէս XI-ի հաւանութիւնը: Բայց այդ գործը այնքան էլ հեշտ չէր. նա ձգձգվեց ամբողջ եօթը տարի: Պատճառը, մեծ մասամբ, Մխիթարի թշնա-

մըներն էին։ Դրանք այլ ևս լուսաւորչական հայեր չէին, այլ խակական, ուղղափառ կաթօլիկ հայեր, այն զզուելի ֆանատիկոսները, որոնք Պրօպագանդայի աշակերտներն էին և Հռոմի չնորհները մուրում էին իրանց սարսափելի հայատեացութեամբ։ Այդ լատինամոլ հայերը նախանձից և չկամութիւնից կուրացած, ամեն տեսակ ամբաստանութիւններ էին անում Պրօպագանդայի ժողովների մէջ Մխիթարի և նրա սկսած գործի դէմ։ Եւ Հռոմը տարուբերվում էր մինչև 1712 թւականը, երբ, վերջապէս, հաստատեց Մխիթարեան միաբանութեան կանօնադրութիւնը։

Մինչդեռ Հռոմը ձգձգում էր միաբանութեան հարցը, Մխիթարը Մեթօնում կառուցեց վանք և եկեղեցի, ահագին ծախսեր արաւ, պարտքերի տակ ընկաւ։ Բայց բախտը չէր հեռանում նրանից. բարեպաշտ կաթօլիկները օգնում էին իրանց առատ նուէրներով, Վէնետիկի կառավարութիւնը մի գիւղ էլ նուիրեց վանքին, և այդպիսով միաբանութեան դրամական միջոցները լաւացան։ Ի՞նչ էին անում միաբանները։ — Աղօթում էին, գիտնականութեամբ պարապում, աշակերտներ կրթում։ Մի հասարակ վանական միաբանութիւն էր դա։ Տասներկու տարի նա մնաց Մեթօնում, բայց ոչինչ գրաւոր վաստակ չարտադրեց։

Եւ դա բնական էր։ Միաբանութիւնը երկար կարող էր մնալ Յունաստանի այդ խուլ անկիւնում, կարող էր շատ լաւ մշակել վանքի ձիթենի-

ները և, այնուամենայնիւ, մի առանձին բարիք չէր լինի ազգի համար, թէև նրա հոգու փրկութիւնը իր ամենօրեայ աղօթքների առարկան դարձնէր։ Բայց ահա գալիս է մի նոր յորձանք՝ Մխիթարեաններին այդ աննշան և անօգուտ տեղից էլ դուրս վռնտելու։ Օսմանեան պետութիւնը պատերազմ է հրատարակում Վէնետիկի դէմ, նրա զօրքերը արշաւում են դէպի Մօրէա։ Մխիթարը, նայելով վէնետիկցիների ուժերին, հասկանում է թէ ինչ ելք պիտի ունենայ պատերազմը և 1715-ին, թողնելով իր վանքը և բոլոր կալուածները չորս միաբանների հսկողութեան, ինքը մնացածների հետ փախչում է Վէնետիկ։ Անխուսափելի վտանգը յաղթել չէր կարելի. պէտք էր միայն փախչել նրանից։ Ակամայ էր այդ փախուստը, և Մխիթարը, սրտի կսկիծով հրաժեշտ տալով իր ձեռակերտին ու մտնելով հին նաւը, որ պիտի տանէր նրան մի նոր, անծանօթ տեղ, — երևի չէր զգում թէ հէնց այդ կսկծալի փախուստն է, որ պիտի հռչակաւոր դարձնէ թէ նրան և թէ նրա միաբանութիւնը…

Հայ փախստականները Վէնետիկում են։ Ադրիական ծովի այս չքնաղ թագուհին հայերի հին բարեկամն էր. Մեթօնի փախստականները նրանից միայն բարիք պիտի տեսնէին։ Գիտութեան և գեղարուեստների վաճառաշահ հայրենիքը, նա էր որ առաջին անգամ տուեց հայերին տպագրութիւն. նրա մէջ էր, որ հայ գրականութիւնը մի երկարատև ապաստան գտաւ։ Հէնց այն միջոցին,

երբ Մխիթարը դեռ տուն ու կայան չէր գտել իր համար, այդտեղ պատրաստ կար հայ տպարան, հրատարակւում էին հայերէն գրքեր։ Մի պատրաստ, արդիւնաւոր հող էր դա, և Մխիթարին ու նրա գործակիցներին մնում էր որքան կարելի է շատ մշակել, շահագործել այդ հողը։

Մեթօնը գրաւեցին օսմանցիները, քանդեցին, այրեցին։ Մխիթարը այլ ևս վերադարձի ճանապարհ չունի, նա ստիպված է իր միաբանութեան համար տեղ որոնել Վենետիկում։ Բայց նոր դժուարութիւն։ Վենետիկի կառավարութիւնը որոշել է այլևս թոյլ չը տալ որ կրօնական միաբանութիւններ աւելանան եղածների վրա։ Մխիթարը դիմում է ազդեցիկ մարդկանց, որոնցից շատերը ծանօթ էին դեռ Մօրէայից։ Երկար պէտք էր խնդրել, շատ դռներ պէտք էր ծեծել։ Նոյն բախտը, որ հալածում էր սեբաստացի կրօնաւորին Մօրէայում, օգնեց նրան և այստեղ։ Վենետիկի Սենատը համաձայն էր խախտել իր դրած օրէնքը և բացառութիւն համարել արևելցի կրօնաւորներին, եթէ նրանք կը հաստատվեն քաղաքից հեռու։

Վենետիկից դուրս, ցամաքի վրա, դժուար էր յարմար տեղ գտնել։ Մխիթարը աչք դրեց քաղաքը շրջապատող փոքրիկ կղզիների վրա և ընտրեց դրանցից մէկը, որ շատ յարմարութիւններ էր ներկայացնում թէ՛ դիրքի և թէ օդի կողմից։ Կղզում բնակիչներ չը կային. միայն մի պար-

տիզպան էր ապրում, որ մշակում էր այդտեղ եղած պարտէզը։ Կար և մի հին եկեղեցի ս. Ղազար անունով։ Նա ունէր հին, խարխուլ բնակարաններ, մի մեծ պարտէզ և երկու ջրհոր։ Մխիթարը նորից սկսեց դիմումներ անել մեծաւորներին, խնդրել որ իրան շնորհվի այդ կղզին։ Սենատն ընդունեց այդ աղերսանքը, և 1717 թուականի սեպտեմբերի 8-ին, միաբանութեան հիմնարկութեան տարեդարձին, Մխիթարը իր միաբանակիցների հետ հաստատվեց ս. Ղազարի կղզում։

Այդ օրվանից է, որ Մխիթարեան միաբանութիւնը ստանում է իր հռչակն ու պատկառելի անունը։

III

Յայտնի է թէ ինչ ահագին դեր է կատարել Մխիթարեան միաբանութիւնը հայ ազգի մէջ։ Վստահ կարելի է ասել որ մի ամբողջ դար, մինչև XIX դարի կէսը, դա միակ հիմնարկութիւնն էր, որ լոյս և գիտութիւն էր մատակարարում հայերին։ Մի անօրինակ բեղմնաւոր գրական գործունէութեամբ ս. Ղազարի վանքը դարձաւ մի երևոյթ, որի նմանը չէ տեսել մեր պատմութիւնը։ Հայերը շատ տեղեր էին աշխատում ծաղկեցնել մայրենի գրականութիւնը, բայց ոչ մի տեղ չը կարողացան հաւասարվել Վենետիկի հայ կրօնաւորներին, որոնք երկար ժամանակ անյաղթելի

և աննկուն տիտանների նման էին երևում ազգի աչքին։

Իբրև այսքան խոշոր մի երևոյթ, Մխիթարեան միաբանութիւնը, բնականաբար, շատ վէճերի ու պայքարների առարկայ պիտի դառնար։ Մենք արդէն տեսանք որ Հռոմի ստրուկ հայ կաթոլիկութիւնը համարում էր մխիթարեաններին ոչ բաւականաչափ ջերմեռանդ հաւատացեալ. այդ վերաբերմունքը շարունակվեց երկար, յարուցեց փոթորիկներ, որոնք մեծ ազդեցութիւն ունեցան Մխիթարեան ուխտի վրա։ Նշանաւոր է, որ մինչդեռ մխիթարեանները ֆանատիկոս լատինամոլութեան աչքում դաւաճաններ էին, հայ-լուսաւորչականներն էլ չէին ընդունում նրանց իբրև իրանց շահերին նուիրվածների։ Երկու կողմի համար էլ ս. Ղազարի կրօնաւորները դաւաճաններ էին։ Ինչու էր այսպէս։ Թողնելով առ այժմ պրօպագանդայի նեղսիրտ աշակերտներին, տեսնենք թէ ինչ էր Մխիթարը լուսաւորչականների կարծիքով։

XIX դարի կէսում Մխիթարեան միաբանութիւնից հեռացած մի քանի հայ վարդապետներ տարածեցին մեզանում այն կարծիքը, թէ Մխիթար Սեբաստացին բոլորովին նուիրված չէր կաթոլիկութեան, թէ այդ կաթոլիկութիւնը միայն մի դիմակ էր նրա համար, որովհետև գործելով Իտալիայում, վայելելով կաթոլիկ աշխարհի նիւթական և բարոյական աջակցութիւնը, նա արտաքուստ, այդ բարիքների համար, իրան ձև-

ւացնում էր հարազատ կաթոլիկ, մինչդեռ հոգով կպած էր իր մայրենի եկեղեցուն։ Մխիթարի յաջորդներն էին—ասում են շատերը մեզանում—որ դաւաճանեցին իրանց առաջին աբբայի սկըզբունքներին, չը կարողացան թագնվել նրա դիմակի տակ, չը կարողացան կեղծել և խաբել, ինչպէս անում էր Մխիթարը, այլ խրվեցին թունդ կաթոլիկութեան մէջ, դարձան Հռոմի կոյր արբանեակներ *)։

Որքան ճիշտ է այս վկայութիւնը։ Որքան ճիշտ է թէ Մխիթարը ճարպիկ ձեռնածուի նման խաբում ու մոլորեցնում էր պապական աթոռը այնքան ժամանակ։

Մեզ թւում է որ հարցը ճիշտ կերպով չէ լուսաբանված մինչև այժմ։ Պէտք է, ամենից առաջ, թողնել Մխիթարի դիմակի մասին կազմված առասպելը։ Ամենից շատ առողջ դատողութիւնն է այսպէս պահանջում։ Մխիթարի պէս մի անձնաւորութիւն, որի համար այնքան ահագին, առաջնակարգ նշանակութիւն ունէր կրօնական ջեր-

*) Որքան մեզ յայտնի է, առաջին անգամ Մխիթարի մասին այսպիսի կարծիք յայտնել է մեզանում Գաբրիէլ վարդապետ Այվազովսկին իր «Ուրուագիծ ոգւոյ և ընթացից Մխիթարեան Միաբանութեան» բրօշիւրում (Պարիզ, 1857)։ Այնուհետև նա իբրև լուսաւորեալ առաջնորդ հանդիսացաւ ուրիշների համար, որոնք կրկնեցին մի և նոյն բանը (օր. Միքայէլ Նալբանդեան—«Հիւսիսափայլ», 1858, Ա. Երիցեան—«Վենետիկի Մխիթարեանք», Թիֆլիս, 1883)։

մեռանդութիւնը, չէր կարող կեղծել մօտ կէս դար, երբ նա վարում էր իր միաբանութեան գլխաւորի պաշտօնը և ստիպված էր պայքար մղել իր հակառակորդների դէմ։ Խաղել, ուրիշի աչքին թոզ փչել, երկդիմի ու կեղծաւոր արարքներով մարդկանց բարեսրտութիւնը շահագործել—այսպիսի յատկութիւններ չը պիտի որոնենք մենք մի ճգնաւորի մէջ, որ հագնում էր կաշեայ շապիկ և այդ շապիկի վրա խիտ ու խիտ շարուած էին սուր երկաթէ խայթոցներ *)։ Նրա գործերից ոչ մէկը չէ վկայում թէ ճիշտ որ նա խաղում էր, իսկ կաթօլիկ կղերը, Հռոմի քթի տակ, այնքան միամիտ էր, որ խաբվում էր այդ մարդու ձեռքին...

Ո՛չ, Մխիթարը կաթօլիկ էր.—ոչինչ յանցանք չը կայ այս հանգամանքի մէջ։ Իր տպագրած Աստուածաշունչի վերջում Մխիթարը պարզ ասում է. «Թէպէտ սիրում եմ իմ ազգը և նրա օգտի համար աշխատելը, բայց դրանով իմ սիրտը Հռոմի սուրբ եկեղեցու ուղղափառ հաւատի դաւանութիւնից չէ թուլանում։ Եւ հակառակը. թէև ամեն կողմով ինձ միշտ ենթարկել եմ և ենթարկում եմ Հռոմի գահի հնազանդութեան, որովհետև մեր հայր սուրբ Լուսաւորիչն էլ օրինակ է ինձ համար, բայց դրանով իմ սէրը և իմ ազգի օգտի համար աշխատելու ջանքը (թէև ազգը ինձ

*) Ազոնց, եր. 82։

այսպիսի հնազանդութեան համար արհամարհէ, երբէք չի թուլանայ»։ Իրաւունք ունի՞նք չը հաւատալու այդքան հաստատ ու որոշ դաւանութեան։—Երբէք։ Եւ սակայն մեզանում եղել են մարդիկ, որոնք հէնց այս խօսքերի վրա են հիմնել իրանց կարծիքը թէ Մխիթարը դիմակ ունէր։

Թիւրիմացութիւնը ամբողջապէս առաջ է գալիս այն հանգամանքից, որ Մխիթարը առաջինն էր, որ հայերի մէջ այսպիսի սկզբունք էր քարոզում։ Որոնելով դիմակ Մխիթարի դէմքի վրա, մենք նկատի չենք առնում թէ ազգ և Հռոմ տարբեր բաներ են, թէ կարելի է լինել հաւատացող կաթօլիկ և միաժամանակ նաև լաւ հայ։ Մինչև Մխիթարը մեզանում չը կար այսպիսի հասկացողութիւն։ Կաթօլիկութիւն—նշանակում էր կատաղի, կոյր, անհաշտ թշնամութիւն հայութեան, հայոց լեզուի, հայ աւանդութիւնների դէմ։ Մխիթարը առաջին հայ-կաթօլիկն էր,—հասկանալով այս բառը իր ճշմարիտ, արդար մտքով,—ազգով հայ, կրօնով կաթօլիկ, ինչպէս կայ կաթօլիկ ֆրանսիացի, սպանիացի, գերմանացի։ Ս. Ղազարի վանքը մեզանում վաղուց սկսված կաթօլիկական հոսանքի առջև կանգնեց իբրև գրանիտեայ անկիւնաքար, որ դարձնում էր այդ հոսանքը անմիտ լատինամոլութիւնից և ազգատեացութիւնից դէպի հայասիրութիւն։ Դեռ ունիթօրների ժամանակից Հայաստանում մի ողբալի խռովութիւն էր դարձել

թէ Հռոմի ետեւից գնալը նշանակում է հայութեան դէմ գնալ։ Մխիթարեան միաբանութիւնը եկաւ ջախջախելու այդ հին վիշապի գլուխը։ Նրա հիմնադրի մեծութիւնը ամենից շատ այս հանգամանքի մէջ է երեւում. Նա հասկացաւ և գործադրեց այն ճշմարտութիւնը թէ կարելի է Հռոմինը Հռոմին տալ, ազգինը—ազգին։

Բազմաթիւ իրողութիւններ և վկայութիւններ կան, որոնք հաստատում են Մխիթարի ուղղամիտ կաթոլիկութիւնը։ Իբրև կրօնաւոր, նա կաթոլիկ էր և Հռոմի եկեղեցու շահերին նուիրված։ Կեղծաւորութիւն և խաբերայութիւն չենք կարող գտնել այն յարաբերութիւնների մէջ, որ նա ունէր Հռոմի հետ. Նրա աշակերտները, քարոզիչի զաւազան վերցրած, Հայաստան էին գնում ոչ թէ դիմակաւորված միաբանութեան գործերը սպասարկելու, այլ պարզապէս պապականութիւն տարածելու համար։ Բայց եթէ նա մի և նոյն ժամանակ այնքան լայն ու ազատամիտ հայեացքների տէր էր, որ միւս ֆանատիկոսների նման չէր ընդունում թէ ոչ-կաթոլիկի հայութիւնը մի ժանտախտ է, որից պէտք է փախչել, այդ, ի հարկէ, չէ նշանակում թէ նա դիմակաւորված լուսաւորչական էր։

Մխիթարը երեւան եկաւ մի այնպիսի ժամանակ, երբ կաթոլիկութիւնն ու լուսաւորչականութիւնը միմիայն անողորմ կռիւ էին ճանաչում իրար դէմ, կռիւ՝ ինչպէս հնարաւոր էր—ճիրան-

ներով, ժանիքներով, մահմեդական բանտերով, մատնութիւններով և այլ այսպիսի ստորութիւններով։ Սեբաստացի կրօնաւորը ընկաւ հալածանքների մէջ, բայց այդտեղ նա ճիրաններ սրել չը սովորեց, վրիժառու կրքեր չը վառեց իր մէջ։ Նա բացեց հաշտութեան, համբերողութեան ճանապարհը. կրօնական վէճերը նա անցկացրեց մտքի, գրականութեան շրջանը։ Մխիթարը հիանալի կերպով ըմբռնեց այն ժամանակվայ դրութիւնը։ Տեսնում էր հայ ազգի տգիտութիւնը և հասկանում էր որ այդ տգիտութեան յաղթողը ոչ Կ. Պոլսում կամ Էջմիածնի մօտ բոյն դրած եզուիտների ճարպիկութիւնն ու անբարոյական մեքենայութիւնները կարող են լինել, ոչ խաների ու փաշաների կոկորդը խրած կաշառքները, այլ մի բան միայն—գիտութիւնը։ Դա միանգամայն անսխալ միջոց էր և անխորտակելի զէնք։ Հարիւր տարիների ընթացքում ս. Ղազարի վանքը լոյս էր հանում կաթոլիկութեան ջատագովութիւններ, քարոզում էր պապական գաղափարներ, բայց հայ ազգը, նոյն իսկ նրա ամենաամոլեռանդ մասը, չէր այրում այդ գրքերը, այլ նրանցով զարդարում էր իր տները, կարդում էր և շարունակում էր համարել այդպիսի գրքեր հրատարակողներին յարգանքի ու պատուի արժանի հայեր։ Համաձայնել կամ հակառակվել այդ գրքերին կարող էր ամեն մէկը. բայց ինչ էլ լինէր, Մխիթարեան միաբանութիւնը յաղթահարեց ամբողջ ազգը, հպատակեցրեց իր հեղինա-

կութեան, դարձաւ մաքերի տէրն ու հրամանատարը։ Նա գիտուն էր, լաւ պատրաստված, և մեր հայրենի տգիտութեանը մնում էր գետնաքարշ ընկնել նրա առաջ, գալարվել անկարողութիւնից։

Բացի գրականութիւնից, Մխիթարը իր գործունէութեան համար մի ուրիշ միջոց էլ ընդունեց —քարոզչութիւնը։ Սա նրա ամենամեծ սխալն էր, որ շարունակեցին և նրա յաջորդները։ Միսիոնարական եռանդ և ընդունակութիւն Մխիթարեանները երբէք չեն ցոյց տուել։ Ամբողջովին գրքերի նուիրված մի վանական միաբանութիւն, որ մի ակադեմիա էր հայ ազգի համար, չէր կարող իր սահմանափակ միջոցներով մի առանձին արդիւնք աւելացնել կաթոլիկ պրօպագանդայի վրայ, բայց այդ պաշտօնը, որ Թիւրիմացութեամբ Թէ հանգամանքների ստիպմամբ նա յանձն էր առել, միշտ ջլատել է նրա ոյժերը, հեռացրել է նրան իսկական կոչումից—գրական գործունէութիւնից, և բաւական գցել է Մխիթարեանների հեղինակութիւնն ու պատիւը։ Անհամեմատ արդիւնաւոր կը լինէր ս. Ղազարի մտաւոր գործունէութիւնը, եթէ նրան աջողվէր հեռու մնալ այն պայքարներից, որ մղում էին հայերի դէմ լատինամոլ կաթոլիկները։ Բայց այդպիսի բախտ չունեցաւ նա, և առաջինը Մխիթարն էր, որ իր վանքի մէջ մտցրեց մի այդպիսի սխալ և անօգուտ ուղղութիւն։ Այստեղ արդէն մեդալի հակառակ կողմն է երևում։

Մխիթար Սեբաստացին այն տեսակ գործիչ-

ներից չէր, որոնք երևան են գալիս իբրև վերանորոգիչներ և, կռիւ յայտարարելով անհամակրելի սկզբունքների, պակասութիւնների դէմ, յաղթանակ են խլում երկար ու յամառ մաքառումների միջոցով։ Դա կոմպրոմիսի, զիջողութիւնների մարդ էր, որի համար մեծ նշանակութիւն ունէր «փոլիթիքան». իսկ յայտնի է որ «փոլիթիքա» ասած բանը աջողութիւն հնձում է միայն այն դէպքում, երբ արհամարհում է նոյն իսկ բարոյական սկզբունքները։

Իր միաբանութեան դիրքը ապահովելու համար, նրա գոյութիւնը կաթոլիկ աշխարհի աչքում անհրաժեշտ դարձնելու համար, նա առաջ քաշեց քարոզչական, միսիոնարական գործը։ Մենք չենք ասում Թէ հայերին կաթոլիկացնելու միտքը անկեղծ չէր Մխիթարի մէջ։ Ոչ. մենք հաւատացած ենք որ նա կարող էր շատ համոզված լինել Թէ այդպէս հարկաւոր է, մանաւանդ որ սկզբում, մինչև Վենետիկ փոխադրվելը, միաբանութեան առաջ գլխաւորապէս քարոզչական գործունէութիւնն էր դրած։ Բայց ինչու էր այդ հանգամանքը առանձնապէս շեշտվում այն բազմաթիւ վկայագրերի մէջ, որ տուել են Մխիթարին զանազան կաթոլիկ կղերականներ. Մխիթարը, առհասարակ, համեստ մարդ էր, փախչում էր պատիւներից, մինչև կեանքի վերջը վարդապետ մնաց, իսկ «Աբբայ» պատուանունը, որ տուած էր Հռոմից, այնքան վիրաւորում էր նրա հոգու խոնարհութիւնը, որ

նա այդ բառից առաջ միշտ դնում էր «կոչեցեալ»։ Եւ սակայն Մխիթարը անպատեհութիւն չէր համարում ընդունել այնպիսի գովասանական թղթեր, որոնց մէջ չեշտվում էր նրա ուղղափառ ու հարազատ կաթօլիկութիւնը և մանաւանդ այն՝ թէ նա իր ազգակիցների մէջ քարոզում է հռոմէական դաւանութիւնը։ Կղերականների տուած վկայաթղթերի վրա աւելանում են Հայաստանի գաւառներից եկած հանրագրերը. Եւդոկիայից 1710 թւականին գրում են թէ Մխիթարի աշակերտները այնտեղ փայլում են արեգակի պէս և եթէ միշտ միայն այնտեղ, ամբողջ քաղաքը կաթօլիկութիւն կընդունէր։ Անկիւրիայից ուղարկված հանրագիրը վկայում է որ Մխիթարի միաբանութիւնը հնազանդեցնում է հայերին կաթօլիկ եկեղեցուն։ Նոյն տեսակ վկայութիւններ գալիս են Կ. Պօլսից, Զմիւռնիայից, Սեբաստիայից *)։ Այդ թղթերը առանց Մխիթարի կամ նրա աշակերտների գիտութեան չէին կազմւում. դրանք հարկաւոր էին ոչ այնքան ընտանեկան ախորժելի ընթերցանութեան համար, որքան Հռոմին ներկայացնելու և նրանից աջակցութիւն գտնելու համար։

Պակասը լրացրին Մխիթարի թշնամիները։ Դրանց պապանձեցնելու համար Մխիթարը պիտի հաւատացնէր Վատիկանի իշխաններին որ ինքը ոչ միայն ջերմեռանդ կաթօլիկ է, այլ և նպատակ է

*) Ադոնց, եր. 242—233.

ընտրել առաքելական քարոզչութիւնը հերձուածող հայերի մէջ։ Եւ Հռոմը այդպէս էլ նայում էր հայ վարդապետների միաբանութեան, այսինքն տեսնում էր նրա մէջ մի գործիք, որի միջոցով աւելի հեշտ պիտի լինէր պրօպագանդան առաջ տանել հայերի մէջ. գոնէ այսպէս է արձանագրել պատմութիւնը *)։

1718 թւականին Մխիթարը գնաց Հռոմ՝ անձամբ բացատրութիւններ տալու և իր վրա բարդած ամբաստանութիւնները հերքելու համար։ Կլեմէս XI պապը նրան շատ սիրով ընդունեց և փայփայեց։ Եթէ հաւատանք Մխիթարի կենսագրութեան, այդ ընդունելութեան մէջ էլ գործում էր նոյն աստուածային մատը, որ բերել հասցրել էր սեբաստացի վաճառականի որդուն այստեղ։ Բայց աւելի բնական է ընդունել որ ս. Պետրոսի աթոռակալը բազմաթիւ վկայութիւններ ունէր իր առջև Մխիթարի օգտակարութեան մասին և հէնց այդ պատճառով էլ այնպէս սիրալիր էր նրա հետ, յօժարութեամբ հաւատաց նրա անմեղութեան և ի նշան իր բարեհաճութեան՝ շնորհեց հազար հատ ինդուլգենցիա, որպէս զի Մխիթարեան քարոզիչները տարածեն Հայաստանի հաւատացեալների մէջ։

Մեզ յայտնի չէ թէ ինչպէս Մխիթարը ար-

*) Лависсъ и Рамбо—„Всеобщая Истроія“, т. VI, М. 1899, եր. 231.

դարացրեց իրան պապական հաւատարմութեան առաջ. Նրա ներկայացրած թղթերի բովանդակութեան ծանօթ չենք, որովհետև կենսագրութիւնը ամենայն խնամքով թագցրել է այդ բոլորը, բաւականանալով միայն անորոշ խօսքերով թէ Աստուծու օգնութեամբ Մխիթարը յաղթող դուրս եկաւ, լռեցրեց իր թշնամիներին։ Եւ Մխիթարի՝ դէպի Հռոմն ունեցած յարաբերութիւնները թաղված կը մնային մթութեան մէջ, եթէ 1879 թուին Զմիւռնիայում մի կաթօլիկ վարդապետի ձեռքով չը հրատարակվէր մի բրօշիւր *), որ գոնէ աղօտ լոյս է գցում այդ խնդրի վրա։ Այդտեղ արված վաւերաթղթերից մենք նախ և առաջ իմանում ենք հետևեալը. «Սրբազան Պապն և Ս. ժողովն առ Բրօբականտա ֆիտէ կացուցեալ են զՄխիթար Աբբայ հայրն վերակացու և հովիւ ամենայն ազգին Հայոց, զի կառավարեսցէ զնոսա ըստ խոհեմութեան իւրում և ոչ այլ ոք իշխեսցէ ի վերայ նոցա»։ Սա արդէն մի ապացոյց է որ Մխիթարին այնքան էլ խորթ չէին իշխանապետական տենչերը, ինչպէս ձգնում են ցոյց տալ նրա աշակերտները։ Անշուշտ բոլոր հայերի կառավարիչ և հովիւ դառնալը նոյնպէս մի միջոց էր միաբա-

*) «Սրբոյ Մխիթարայ վարդապետի արարեալ պատճառք որք առբերին ընդդէմ նոցին, որք ասեն թէ ոչ երբէք պարտ է գնալ ուղղափառաց ի ժամն հայոց», հրատարակեց Ղուկաս վարդապետ Տէրաէրեան, կարևոր ծանօթութիւններով։

նութեան գիրքը ամբաստանելու և հակառակորդներին լռեցնելու համար։ Եւ իրաւ Հռոմը, տալով նրան այդպիսի իշխանութիւն, այնքան հաւատ ունէր նրա վրա, որ պատրիարքական փոխանորդութիւնից արձակեց մի կաթօլիկ եպիսկոպոսի *) այն պատճառով, որ նա Մխիթարի և նրա աշակերտների դէմ խօսել էր։ «Փօլիթիքայի» միջոցով այսպէս հաշիւներ տեսնել հակառակորդների հետ —ահա ինչ սխալների մէջ էր ընկնում սեբաստացի նախկին ճգնաւորը։ Կաթօլիկ կղերականութեան մէջ գուցէ առանց այսպիսի միջոցների չէր էլ կարելի աջողութիւն գտնել։ Բայց իրողութիւնը մընում է։ Ահա նոյն «փօլիթիքայի» մի այլ աւելի անհրապոյր կողմը։

Սպահանի և Նոր-Ջուղայի մէջ սկսված կրօնական կատաղի խռովութիւնները **) հարց արծարծեցին կաթօլիկների մէջ թէ չը պէտք է յաճախել հայ-լուսաւորչականների եկեղեցիները։ Հռոմի պապը վճիռ արձակեց այդ մասին։ Իսկ երբ կրօնական խառնակութիւնները Պարսկաստանից անցան Թիւրքաց Հայաստան, այդտեղ գործող քարոզիչներն ու վարդապետները պահանջում էին որ պապական այդ վճիռը գործադրվի նաև Թիւրքիայում գտնվող հայ եկեղեցիների վերաբերմամբ։ Այդ ծայրայեղ անհամբերողութիւնը Մխիթարին չա-

*) Եր. 19—20.

**) «Հայկական Տպագր.», I, եր. 251—254.

փաղանցութիւն էր երեւում։ Լատինացման գաղափարը դրանով կատարեալ յաղթանակ պիտի տանէր․ հայ-կաթոլիկները մի կողմից հեռացրած պիտի լինէին հայ եկեղեցուց, իսկ միւս կողմից՝ բոլորովին զրկուած սեփական եկեղեցի ունենալու հնարաւորութիւնից, որովհետեւ Թիւրքիայում նրանք ենթարկված էին Կ. Պօլսի հայոց պատրիարքի իրաւասութեան և իրաւունք չունէին առանձին եկեղեցիներ կառուցանելու։

Այդ պատճառով Մխիթարը 1733 թուի ապրիլի 14-ին Հռոմին ներկայացրած մի մանրամասն գրութեան մէջ ապացուցանում էր թէ կաթոլիկները կարող են գնալ լուսաւորչականների եկեղեցիները։ Անկասկած, նա մի շատ արդար դատ էր պաշտպանում։ Մխիթարը, հայութեան գաղափարի նախանձախնդիր, շատ լաւ գիտէր որ հայ-կաթոլիկութիւնը այն չը պիտի լինի, ինչ ուզում են դարձնել լատինական կղերականները․ դա նոյն ազգի մի մասն էր, բաժանված կրօնով, և եկեղեցական մերձաւորութիւնը կը լինէր երկու մասերի համար փոխադարձ յարգանքի և համերաշխութեան կապ։ Ճշմարիտ հայ-կաթոլիկութիւնը, որի ներկայացուցիչը Մխիթարն էր, միայն վրդովվել կարող էր այն խրատից, որ կազմել էին պապականութեան կոյր ստրուկները և որ ասում էր․ «Հայոց ժամուն առջեւէն անգամ մի անցնիր․ իսկ եթէ անցնել պէտք եղաւ ու գդակդ գլխէդ հան ձգեցիր,

ներս մի մտներ առնելու, ձգէ փախիր» *)։ Նոյն իսկ բոլոր հայերին կաթոլիկ դարձնելու տեսակէտից էլ շատ վնասակար էր այս աստիճան արհամարհանքը դէպի լուսաւորչական եկեղեցին։ Մխիթարը գնաց այդ հոսանքի դէմ։ Բայց ինչպէս էր նա պաշտպանում այդ դատը։

Նա ասում էր թէ հայոց եկեղեցին Հռոմի կողմից պաշտօնապէս չէ ճանաչված հերձուածող, բայց հայերը իրապէս հերձուածող են։ Թէև այսպէս, բայց պէտք է թոյլ տալ որ ուղղափառները գնան հերձուածողների եկեղեցին, որովհետեւ ուրիշ ճար չը կայ․ եթէ ճար լինէր, եթէ կաթոլիկութիւնն էլ իր եկեղեցիներն ունենար, այն ժամանակ, ինչ խօսք, չը պէտք էր թոյլ տալ ուղղափառին մտնել չարափառի եկեղեցին։ Բացի ճար չը լինելուց, ուղղափառներին չը պէտք է արգելել և այն պատճառով, որ ոչինչ վնաս չի լինի, եթէ նրանք ազատ մտնեն հերձուածող եկեղեցին, որովհետեւ կաթոլիկները զարգացած են, իսկ հերձուածող հայերը՝ ագէտ․ կաթոլիկը հեշտութեամբ կարողանում է յաղթել հերձուածող քահանաներին և որսում է հերձուածողներին, մինչդեռ վերջինները չեն կարողանում նոյն իսկ մի հատ ուղղափառ որսալ։

Բայց այսքանը դեռ ոչինչ։ Լատինամոլները եկեղեցիների բաժանումն էին պահանջում մանա-

---

*) Այվազովսկի, «Ուրուագիծ», եր. 41.

ւանք այն նպատակով, որ կաթօլիկները և լուսաւորչականները միմեանց հետ սիրով չը կապվեն, կամ ուրիշ խօսքերով—թշնամի մնան միմեանց, որպէս զի կաթօլիկները նորից չը վերադառնան լուսաւորչական եկեղեցին։ Այդ կասկածները ցրելու համար Մխիթարը գրում էր հետևեալը.

Առաջացաւ այն կասկածելի միտքը թէ ուղղափառները, ժամ գնալով կը կապուեն հերձուածողների հետ սիրով ու այդպիսով կը մօտուեն, երբէք տեղի ունենալ չէ կարող։ Եւ դրա պատճառը հետևեալն է. ուղղափառները այնքան զզուած են հերձուածողներից, որ եթէ սրանցից իւրաքանչիւրը հարիւր տարի ապրէ և հարիւր քարոզիչներ յորդորեն ուղղափառներին պակասեցնել իրանց զզուանքի հարիւր աստիճաններից մէկը, չեն կարող պակասեցնել։ Եւ այս բանի նշանը յայտնի է նրանով, որ հայ անունից էլ, որ ազգի անուն է և ոչ թէ աղանդի, ուղղափառները նոյնպէս զզուած են. և եթէ հնար լինէր, նրանք հայ անունն էլ կը ջնջէին իրանցից։ Եւ քանի որ այս այսպէս է, ինչպէս կարելի է որ կապվեն նրանց հետ սիրով։ Կայ և այլ պատճառ. հերձուածողները իրանց տգիտութեան և կոպտութիւնների պատճառով այնքան յիմարութեամբ են վարվում միշտ, որ եթէ ուղղափառները նոյն իսկ աշխատէին էլ սիրել նրանց և կամ ախորժելի դառնալ նրանց մէջ, դարձեալ չէր լինի սէր և կապակցութիւն։—Սրանից մնում է այն, որ չը կայ մի պատճառ, որից դրդված՝ զրկենք ուղղափառներին իրանց եկեղեցիներից։ Որովհետև այն եկեղեցիները աւելի շատ ուղղափառների եկեղեցիներ են, քան հերձուածողների։ Նրանք հիմնվել են մեր սուրբ և ուղղափառ հայրերի ձեռքով։ Եւ հերձուածողները համարեա թիւրքաց բռնութեան օգնութեամբ են գալիս մտնում մեր եկեղեցիները և ոչ թէ մենք ենք գնում նրանց եկեղեցիները։ Եւ մեր այնտեղ մտնելովը

ուղղափառների թիւը օրէցօր բազմանում է և ամէնքը շահվում են։ Դրանով էլ մեր եկեղեցիները ազատվում են հերձուածողների ձեռքից. մենք գտնվում ենք թիւրքերի իշխանութեան տակ և չենք կարող հերձուածողներին արտաքսել մեր եկեղեցուց ու մաքրել մեր եկեղեցին։ Ուստի մեզ մնում է միայն այն, որ նրանց դէպի մեզ դարձնելով մաքրենք եկեղեցին։ Բայց եթէ մենք դուրս գնանք ու թողնենք եկեղեցին նրանց, այն ժամանակ եկեղեցին յաւիտեան կը մնայ անմաքուր, իսկ մենք առանց եկեղեցու թափառական ու անկրօն կը լինենք դուր տեղից։ —Դարձեալ այս էլ յայտնի է, որ ամեն տեղ մեծատունները և խոհեմ մարդիկ ուղղափառ են և նրանք են եկեղեցիների մէջ և իշխանաւորների դռներին իշխող ու խօսող։ Իսկ երբ այսպիսի իշխողները իրանք իրանց արտաքսեն եկեղեցիներից, այն ժամանակ այս եկեղեցիներում իշխող կը մնան աղքատները և յիմարները։ Եւ եթէ պատահում է երբեմն, որ մի որ և է պատճառով ուղղափառները կամենում են խօսել, խաժամուժ և տգէտ ամբոխը, յուզված չար քահանաների ձեռքով, սկսում է աղաղակել. թէ դուք որ չէք հաւանում և չէք գալիս մեր եկեղեցիները, ի՞նչպէս կարող էք այժմ մեծարանութեամբ իշխել մեր եկեղեցիների և քահանաների վրա։ Այս պատճառով եթէ մեծատուն և խոհեմ ուղղափառները միշտ գտնվեն եկեղեցիների մէջ, ոչ ոք չէ կարող ընդդիմանալ նրանց, և ինչ էլ հրամայեն, կարող են կատարել տալ Տիրոջ օգնութեամբ։ Եւ այսպէս փոքր առ փոքր կարելի կը լինի սրբել և մաքրել մեր եկեղեցիները *)։

Ահա ինչ լեզուով խօսել գիտէր Հռոմի հետ այն մարդը, որին մեզանում համարում են կա-

---

*) «Աբբայ Մխիթարայ վարդապետի Պատճառք», եր. 46—47.

թօլիկական դիմակի տակ գործող հայ-լուսաւորչական։ Բայց եթէ մենք Մխիթարի այս խօսքերը համարենք նրա անկեղծ ու խորին դաւանանք, այն ժամանակ շատ տարբերութիւն չենք գտնի նրա և Պրօպագանդայի մի մոլի աշակերտի մէջ. մինչդեռ թէ Մխիթարի և թէ նրա միաբանութեան գործերը երաշխաւոր են, որ նրանց մէջ չը կար այն աստիճանի ֆանատիկոսութիւն, որ հայոց եկեղեցիները պիղծ և անմաքուր համարէին։ Նրանց վերաբերմունքը դէպի հայ «հերձուածողները» աւելի մեղմ էր, աւելի բարեկամական, քան այս գրութեան մէջ։ Եւ եթէ Մխիթարի անունը կրող մի այս տեսակ անպատիւ թուղթ է մնացել, պատճառը Հռոմին հաճոյանալու քաղաքականութիւնն էր, մի բան, որ մինչև մեր օրերը Մխիթարեան միաբանութեան անհամակրելի կողմն է կազմում և շատ փաստերով է երևան եկել։

Մեզ կարող են ասել թէ ուրիշ կերպ չէր էլ կարող վարվել Մխիթարը։ Մի անյայտ հայ վարդապետ չէր կարող Հռոմին դասեր տալ, ջնջել այն դարաւոր նախապաշարմունքը, որ ասում էր թէ ով Հռոմի հետ չէ, նա պիղծ և անմաքուր հերետիկոս է։ Այո, միանգամայն ճիշտ է այս առարկութիւնը։ Բայց մենք արձանագրում ենք փաստը, որպէս զի պատկերացնենք Մխիթարեանների ոգին, այն մթնոլորտը, որ ստեղծվեց ս. Ղազարի վանքում սկզբից և եթ։ Դա շատ կարևոր

է՝ միաբանութեան գրական գործունէութիւնը բնորոշելու համար։ Թէև մեզ համար աւելի հաճելի և պատուաբեր կը լինէր որ Մխիթարի պէս խոշոր անձնաւորութիւնը ճշմարտութեան անվեհեր զինուոր հանդիսանար, չը քաշվէր խոկութիւնը յայտնելուց ուր և երբ էլ հարկաւոր լինէր դա, բայց չեղածը եղած դարձնել մենք չենք կարող. և պատմութիւնը, որ լոյսերի հետ գծագրում է նաև ստուերները, չէ կարող անաչառ չը լինել և՛ մեծ մարդկանց վերաբերմամբ։ Կոմպրօմիսների քաղաքականութիւնը միշտ այսպիսի հետևանքներ է առաջացնում։ Եւ մենք կը տեսնենք թէ որպիսի ազդեցութիւն է թողել այդ քաղաքականութիւնը ս. Ղազարի երկարատև, զարմանալի գործունէութեան վրա…

Մի ուրիշ հարցի մէջ էլ Մխիթարը ցոյց տուեց թէ որքան մեծ առաքինութիւն է համարում յարմարվելը, կռւի մէջ չը մտնելը։ Մենք շատ անգամ առիթ ունեցանք խօսելու լատինացրած հայերէնի մասին, տեսանք որ հայոց լեզուի մէջ հրէշաւոր աղաւաղութիւններ մտցնողները գլխաւորապէս լատինամոլ կաթօլիկներն էին։ Այդ ֆանատիկոսները հայերէնը լատինացնելու մէջ չէին ղեկավարվում լեզուն հարստացնելու, կենդանացնելու մտքով, այլ ունէին նոյն դաւանափոխական տենդը, որ նրանց ամբողջ էութիւնն էր վարակել։ Նրանք համոզված էին որ հայ ազգը կազատվի

հերձուածողական և հերետիկոսական կարծիքներից միայն այն ժամանակ, «երբ լատիներէնի ճիշտ թարգմանութեամբ գրվեն և բացատրվեն հռոմէական դաւանանքի խօսքերը» *)։ Ունիթօրների սկսած այս բարբարոսութիւնները գնալով ողողեցին հայոց լեզուն. լուսաւորչականներն էլ ենթարկվեցին լատինացման ոգուն և այնպիսի գրագէտներ, ինչպէս էին Ոսկան վարդապետը, Ղուկաս Վանանդեցին, պաշտում էին այն խորթ արհեստականութիւնները, որոնց ծնողը կաթօլիկութիւնն էր։ Առանց այդ էլ մեր գրաբար լեզուն վաղուց կորցրել էր իր կենսունակութիւնը, անհասկանալի, արհեստական էր. կաթօլիկական ազաւաղումները աւելի ևս դժուար, անմատչելի դարձրին նրան։ Եւ այդ դրութեան հասցրած լեզուն տիրապետող էր մեզանում մանաւանդ XVII դարի ընթացքում։

Մխիթարը զգում էր լեզուն այդ բարբարոսութիւններից ազատելու անհրաժեշտութիւնը. նա գիտէր որ պէտք է վերանորոգել գրաբարի հին ձևերը, վերադարձնել նրան նախկին հարստութիւնը ու այդպէս գործածութեան մէջ մտցնել։ Բայց դրա համար պէտք էր հակառակվել լատինամոլների կուսակցութեան, որ այդ ժամանակները լատինացրած հայերէնի քերականութիւններ էր հրատարակել։ Երկար մտածեց Մխիթարը, բայց չը կարողացաւ լատինամոլներին հակառակվելու

*) «Ուրուագիծ Մխիթարեանց», եր. 35.

համարձակութիւն ստանալ. նրանց զայրոյթը չը գրգռելու համար նա ստիպված եղաւ, հակառակ իր համոզմունքի, ընդունել բարբարոսական ազաւաղումներից շատերը և միայն մի քանի մասերում համարձակութիւն ունեցաւ վերականգնել գրաբարի կանոններն ու ձևերը։ Չը կարողանալով յայտնապէս հակառակութիւն և թշնամութիւն հանել լեզու խանգարողների դէմ, Մխիթարը ընտրեց կոմպրոմիսի ճանապարհը, յոյս ունենալով որ ազաւաղումները հետզհետէ կը վերանան. և այդպիսի միջին ճանապարհ, հակառակորդներին չը գրգռելու, ամէնքին շահելու միջոց ներկայացնում է նրա «Քերականութիւնը», որ տպագրվեց 1730 թուականին *)։ Նոյն այդ նպատակով էլ Մխիթարը չը կարողացաւ ազատել իր տպագրած գեղեցիկ, պատկերազարդ Աստուածաշունչը այն նորմուծութիւններից, որոնք կային Ոսկանի Աստուածաշունչի մէջ։ Յայտնի էր, որ Ոսկանը սրբագրում էր մեր հին գրքերը լատինացրած հայերէնի ձևերի համաձայն։ Բայց Մխիթարը շատ քիչ բան ուղղեց Ոսկանի նորութիւններից. աւելին անել չը կարողացաւ **)։

Այս բոլորից պարզ է թէ կաթօլիկական ձըգտումները որքան մեծ ազդեցութիւն ունէին Մխի-

*) Հ. Չամչեան, «Քերականութիւն հայկազեան լեզուի», Վենետիկ, 1779, առաջաբան։

**) Հ. Զօհրաբեան, «Աստուածաշունչ», Վենետիկ, 1805, առաջաբան։

թարի և նրա միաբանութեան վրա։ Միանգամայն անկախ ու ինքնագլուխ դիրք գրաւել ս. Ղազարի կղզու վրա, Հռոմի աչքի առջև, անկարելի էր. և հայ ազգի գրական անխոնջ մշակները միշտ պէտք է գտնվէին դամօկլեան սրի տակ, որ չափաւորում է եռանդը, զրկում է ինքնուրոյնութիւնից ու համարձակութիւնից։ «Ի՞նչ կասէ Հռոմը»—ահա այն սուրը, որ միշտ կախված էր Մխիթարեան վանքի վրա…

IV

Դիմենք այժմ այն հարցին թէ ինչ նշանակութիւն ունէր Մխիթարեան միաբանութեան հաստատութիւնը՝ հայ ազգի լուսաւորութեան տեսակէտից։

Մտնենք XVIII դարի առաջին կէսում տիրող մեր իրականութեան մէջ և մենք մի առանձին հրաշալի երևոյթ, մի մեծ խորհուրդ կը տեսնենք այն հանգամանքի մէջ, որ մի խումբ հայեր անցնում են Եւրոպա՝ այնտեղ մի երկարատև, հարուստ գրական գործունէութիւն սկսելու համար։ Հինգերորդ դարից յետոյ ճակատագիրը դեռ այսքան ողորմած ու բարերար չէր եղել դէպի հայերը։ Այն հին նաւը, որ Մէթօնից Իտալիա էր տանում Մխիթարին և նրա աշակերտներին, Հայաստանի բարի հրեշտակն էր, որ, կարծես, տեսնում էր թէ ինչեր են կատարվում Արևմտեան Եւրոպա-

յում և իր փոքրիկ ու համեստ ուժերը հաւաքել էր, տանում էր տգէտ ու թշուառ հայութիւնը դէպի այն հրաշալի լոյսերը, որոնք վառվել էին արևմուտքում։

Որքան և հեռու մնանք նախապաշարմունքներից, բայց և այնպէս, չենք կարող մի սքանչելի զուգադիպութիւն, ճակատագրական մի տնօրինութիւն չը տեսնել այն հանգամանքի մէջ, որ մինչդեռ մի կողմում կազմակերպվում էր նորագոյն Եւրոպան, միւս կողմից ասիական բարբարոսութիւնների մէջ ոսկոր մաշած մի ազգ, ինչպիսին էր հայութիւնը, պատրաստութիւն էր տեսնում հաղորդակից լինելու նրա բարիքներին գրականութեան միջոցով։ Շատ անգամ էր Հայաստանը մարդ ուղարկել Եւրոպա, որ այնտեղից ճրագներ բերեն հայրենի տունը լուսաւորելու համար։ Մենք շատ անհատներ տեսանք այդ ճանապարհի վրա. տեսանք Ոսկանին, Թովմաս և Ղուկաս Վանանդեցիներին և ողջունեցինք նրանց ուղևորութիւնները. երախտագիտութեամբ ընդունեցինք նրանց ուղարկածները, օրհնեցինք նրանց բազմաչարչար ոսկորները, որոնք հող մտան օտար երկնքի տակ։ Բայց նրանք այնքան բախտաւոր չէին։ Մենակ էին ու անյայտ, և այն ժամանակվայ Եւրոպայի մեծ մասն էլ կաթօլիկական ռէակցիայի գրկում լուռ ու անգործունեայ էր։ Այժմ, երբ Մխիթարն էր գրական գաղթականութիւն հիմնում Եւրոպայի երկնքի

տակ, փոխված էին հանգամանքները, ժամանակը բերել էր նոր, հրաշագործ ոգի։

Եւրոպան գտնվում էր այն փուլում շրջանի մէջ, որ յայտնի է Լուսաւորութեան Դար անունով։ Դա նորագոյն ժամանակների ոգին է. զարթնում է Անգլիայում, անցնում է Ֆրանսիա, ապա Գերմանիա և Իտալիա։ Նա գրականութիւն է, միտք է, գիտութիւն է, գեղարուեստ է. բայց փակված չէ մնում գրքի մէջ, այլ ազդում է կեանքի վրա, առաջացնում է հասկացողութիւնների ու դաւանանքների մի ահագին յեղափոխութիւն։ Կազմվում են նոր աշխարհայեցողութիւններ, խորտակվում են շատ հին կուռքեր։ Նոր, թարմ, ուժեղ հոսանքները ցնցում են հասարակական և պետական հիմքերը։ Քաղաքական յեղափոխութիւնները արիւնով և բռնութեամբ յաղթահարում են հին աշխարհը, բարձրացնում են ազատ մարդուն։ Այդ ազատ մարդը, քանի դեռ միայն գրականութեան մէջ էր, կտրեց անցաւ ովկիանոսը և Հիւսիսային Ամերիկայում պատրաստեց այն արիւնահեղ ապստամբութիւնը, որի նպատակն էր քաղաքական անկախութիւնը, և որի հետևանքը դարձաւ ռամկապետական, բոլորովին ազատ հանրապետութիւնը, հիմնված Վաշինգտոնի ձեռքով։ Աշխարհը դեռ չէր տեսել այնպիսի հրաշալի կարգ։ Ամերիկական այդ յեղափոխութեան ոգին նորից անցաւ ովկիանոսը, դուրս եկաւ Ֆրանսիա. Նրա պատրաստած զինուորները ծառայեցին ֆրանսիական մեծ յեղա-

փոխութեան, որ պսակեց XVIII դարը, ոչնչացնելով դասակարգային խտրութիւնները, եկեղեցականների տարածած նախապաշարմունքները և հրատարակելով ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն։

Մենք գոնէ մի թռուցիկ ակնարկ պիտի գցենք այսպիսի գործեր կատարած Լուսաւորութեան Դարի վրա, որպէս զի հասկանանք թէ որպիսի մտաւոր լոյսերի մէջ ընկաւ Մխիթարեան միաբանութիւնը, տեղափոխվելով Իտալիա։

XVII դարի երկրորդ կէսից Անգլիայում միջնադարեան վերացականութիւնը տեղի է տալիս բնական գիտութիւններին։ Ուսումնասիրվում են աշխարհները կառավարող օրէնքները, Իսահակ Նիւտոն իր անմահ գիւտն է անում, որ մի ամբողջ յայտնութիւն էր մարդկութեան համար։ Դատողութիւնների տեղը բռնում է փորձը. մարդը այլ ևս կուրօրէն չէ հետևում հեղինակութիւններին, այլ ձգտում է փորձի, իրականութեան վերլուծման միջոցով հասնել ճշմարտութեան։ Կոյր հաւատը սկսում է վերանալ, նրա տեղը այժմ կանգնած է բանականութիւնը։ Սա բաց է անում մարդու աչքերը, քննադատական կարողութիւն է դնում նրա ձեռքում և սովորեցնում է լինել ազատ՝ մտածմունքների մէջ։ Այդ ազատ մտածողները այնքան համարձակութիւն են ստանում, որ սկսում են ոչնչացնել մարդկութեան վրա տիրող նախապաշարմունքները։

Նոր հոսանքը ամենից առաջ ընդհարվում է եկեղեցու հետ։ Եւ դա շատ բնական էր։ Եկեղեցին էր որ պահվում էր հեղինակութիւնների վրա, պահանջում էր անպայման հաւատ։ Բանականութիւնը, հրատարակվելով միակ անսխալ առաջնորդ մարդու համար, քննադատում էր և ընդունում միայն այն, ինչ հակառակ չէր իրան. նա մերժում էր կրօնական աւելորդապաշտութիւնները, որոնց մտցրել են եկեղեցու պաշտօնեաները իրանց օգտի համար. մերժում էր և հրաշագործութիւնները, որոնք անբնական էին։ Ազատ մտածողներից մէկը, Զիլլինգվօրտ, գրում էր. «Ես համոզված եմ որ Աստուած տուել է մեզ բանականութիւն, որպէս զի զանազանենք ճշմարտութիւնը անճշմարտութիւնից և նա, ով բանականութիւնը այս կերպով չէ գործ ածում, այլ հաւատում է իրերին չիմանալով թէ ինչու, նա հաւատում է ճշմարտութեանը պատահաբար և առանց ընտրութեան. և ես երկիւղ եմ կրում որ Աստուած չընդունէ այսպիսի յիմար զոհ»։ Իսկ Ջարլզ Բլօնտ գրում էր. «Ո՛չ, ես չեմ ուզում յոյս դնել հրաշքների վրա, որպէս զի Սիմօն մոգը, փարաւոնի մոգերը, Ապօլլօնիոսը և ուրիշները նոյնպէս չը պահանջեն ինձանից հաւատ և հնազանդութիւն. իմ առաջնորդը պիտի լինի միայն բանականութիւնը և նա, ի հարկէ, չի թուլացնի իմ քրիստոնէութիւնը» *)։

*) Г. Геттнеръ, „Исторія Всеобщей Литературы XVIII вѣка", Спб. 1897, т. I, եր. 29 և 35.

Ազատ մտածողները նոյն իսկ փորձում են նոր կրօն ստեղծել, բանականութեան վրա հիմնած։ Մտածող մարդկութեան առջև բացվում են լայն, անեզր հօրիզօններ։ Փիլիսոփայութիւնը, որ աստուածաբանութեան ստրուկն էր դարերի ընթացքում, ձեռք է բերում անկախութիւն։ Լօկկ հիմնում է փիլիսոփայական նոր դպրոց, ուր արդէն ամեն ինչ հիմնված է փորձի, բանականութեան վրա. այդ փիլիսոփայութիւնը այլ ևս ոչ թէ չէ ծառայում եկեղեցուն, այլ գնում է նրա դէմ։ Քաղաքական հասկացողութիւնները կերպարանափոխվում են և ազատ մտածողութիւնը նոյն իսկ ոչնչացնում է կղերականների հաստատած այն միտքը, թէ թագաւորները իրանց իշխանութիւնը Աստուծուց են ստանում և միայն Աստուծուն էլ պիտի հաշիւ տան իրանց գործերի համար. դրա փոխարէն հաստատվում է այն դրութիւնը, որ իշխանութիւնը ժողովրդից է բղխում և թագաւորը նրա ընտրեալն է։ Գրականութիւնը կատարեալ ազատութիւն է ստանում. XVII դարի վերջում գրաքննութիւնը բոլորովին ջնջվում է։ Զարգանում են գրականութեան բոլոր ճիւղերը. թատերագրութիւնը, բանաստեղծութիւնը նորից վերակենդանանում են, հիմնվում իրական կեանքի երևոյթների վրա. ծաղկում է մանաւանդ երգիծաբանութիւնը, իսկ պարբերական հրատարակութիւնները ամբողջ յեղափոխութիւն են մտցնում հասարակական հասկացողութիւնների մէջ։ Այս

ազատ հոսանքները, ի հարկէ, պիտի վերացնէին կրօնական խտրութիւնների պատճառով ծագող բռնութիւններն ու անարդարութիւնները. և Անգլիան, կրօնական ներքին երկարատև պատերազմներից ու իրարանցումներից յետոյ, մտաւոր այս նոր շարժման ազդեցութեան տակ, դառնում է այն առաջին երջանիկ երկիրը, ուր յանցանք չէր համարվում տարբեր համոզմունքներ ունենալը թէ կրօնի և թէ այլ գործերի վերաբերմամբ։ Սերունդների առաջնորդ են հանդիսանում խոշոր տաղանդաւոր հեղինակները, որոնք, բնականաբար, բազմաթիւ էին հէնց վերակենդանութեան այսպիսի եռանդուն, թարմ, ոգևորիչ ժամանակներում։ Ֆրանկլինը, Ամերիկայի Միացեալ-Նահանգների ստեղծողներից մէկը և ամենամեծը, իր ազատասիրական գաղափարները քաղում էր Դանիէլ Դէֆօի, «Ռօբինզօնի» հռչակաւոր հեղինակի, գրուածքներից. Ջօնաթան Սվիֆտ մինչև այժմ էլ կենդանի է իբրև անզուգական երգիծաբան, ժամանակի բարքերը ծաղրող։ Ամբողջ XVIII դարը գրական մի հսկայ առաջադիմութիւն է, որի առաջ խոչընդոտներ չը կան և որ իր հետ տանում է և հասարակական զարգացած գիտակցութիւնը։

Անցնենք Ֆրանսիա։ Այստեղ էլ դեռ XVII դարի վերջերում ենք տեսնում Լուսաւորութեան Դարի պատրաստութիւնները։

Չը նայելով որ Լուդովիկոս XIV-ի թագաւորութիւնը ծայրայեղ աստիճաններին էր հասցրել

միապետական անսահման իշխանութիւնը և ամեն կենդանի բան ճնշվում էր եզուիտների մահացնող լուծի տակ,—ազատ միտքը, այնուամենայնիւ, զարթնում էր, համարձակ քայլերով առաջ գնում և լուսաբանում էր ժողովրդի աննախանձելի դրութիւնը, կրօնամոլ բռնապետութեան առաջացրած մտաւոր և բարոյական անկումը։ Գրականութիւնը կլասիկական ուղղութեան էր հետևում, ապրում էր հների կեանքով, կտրված իրականութիւնից, ժողովրդի կեանքից. դա պալատական գրականութիւն էր, ուր տիրում էին արքունիքի վայելուչ, չափած ձևերը։ Իրականութիւնը—դաշտերը, գիւղերը, անտառները — այդ ժամանակի գրական մարդկանց համար համանիշ էր կոպտութեան, վայրենութեան. ամեն ինչ այնտեղ ստոր ու բարբարոսական է, վիրաւորում է գեղագիտութեան զգացմունքը։ «Այդ անձոռնի, անտաշ գիւղացիները, կեղտոտ կենդանիները, գոմանոցների հոտը, անձև ժայռերը, անտառների ամայութիւնը, ծառերի անկանոն խմբերը, որոնք թողված են բնութեան կամքին, կաղամբի բանջարանոցները— որոնց վրա կանգ առնէր բարեկիրթ մարդու ուշադրութիւնը» *)։ Ամեն ինչ միայն արիստոկրատիայի և արքունիքի համար էր։ Մնացած ժողովուրդը գոյութիւն ունէր միայն հարկեր տալու համար։

---

*) Ж. Пелисье, „Литературное движеніе въ XIX столѣтіи“, М. 1895, եր. 13.

Կլասիկական այդ արուեստականութեան և քաղաքական հիմքերը փորել է սկսում նոր, ժողովրդական գաղափարը։ Դեռ այն ժամանակ, երբ «Թագաւոր-արեգակ» անունը ստացած Լուդովիկոսը ասում էր՝ «պետութիւնը—այդ ես ինքս եմ», երեւան է գալիս ընդդիմադիր գրականութիւնը, որ մի կողմից թագաւորի իշխանութիւնը ժողովրդի և միմիայն ժողովրդի բարօրութեան համար սահմանված լինելն է հրատարակում, միւս կողմից կրօնի և մանաւանդ պապականութեան դէմ է գնում։ Պահանջում են թեթեւացնել ժողովրդի հարկերը, կանոնաւորել նրանց, ջնջել արտօնութիւնները, հաւասարութեան սկզբունքներ մտցնել ազգաբնակութեան զանազան խաւերի մէջ։ Ֆրանսիայից փախած բողոքականները արտասահմանում հրատարակում են բազմաթիւ գրուածքներ, որոնց մէջ անխնայ քննադատութեան են ենթարկվում Ֆրանսիայի կարգերը, Լուդովիկոսի եզուիտական քաղաքականութիւնը։ Դրանց մէջ յայտնի է մանաւանդ Բէյլ. նա ժողովրդական պահանջ է դարձնում հանրամատչելի ամսագիրը, որի միջոցով ահագին ազդեցութիւն է գործում ընթերցող հասարակութեան վրա։ Բայց աւելի նշանաւոր էր նրա փիլիսոփայական բառարանը. շատ չեն այն տեսակ գրքեր, որոնք սրա պէս մեծ ներգործութիւն ունեցած լինէին մտքերի վրա։ Ի՞նչ էր քարոզում Բէյլ։ Դեռ 1682 թւականին հրատարակած իր մի աշխատութեան մէջ նա ասում էր թէ ան-

հաւատութիւնը, նոյն իսկ բացարձակ կերպով աստուածութիւն մերժելը աւելի լաւ է, քան նախապաշարմունքը. ուստի պետութիւնը պարտաւոր է համբերող լինել ոչ միայն բոլոր կրօնների, այլ և անհաւատների վերաբերմամբ։ Բողոքականներին Ֆրանսիայից արտաքսելու առիթով Բէյլ գրում էր. «Այս բռնութիւնները տեսնելով, ինչ պէտք է մտածել քրիստոնէութեան մասին. չը պէտք է կարծել թէ դա արիւնարբու մի կրօն է, որ խղճի ազատութիւնը կատարելապէս ճնշելու համար չէ վախում նոյն իսկ ստութիւնից և խաբէութիւնից, երդմնազանցութիւնից, բռնութիւններից, դահիճներից և ինքվիզիցիայից» *)։

Մի և նոյն ժամանակ գեղարուեստական գրականութեան մէջ է խուժում ժողովրդի ոգին. կլասիկական չոր ու ցամաք թխուածքները տեղի են տալիս հէքեաթներին, որոնք վերցնվում են ժողովրդի միջից, թարմութիւն են բերում իրանց հետ։ Հէքեաթը փոխվում է վէպի, որի հիմքը նոյն ժողովրդական իրականութիւնն է։ Զարգանում է երգիծաբանական վէպը, գրականութիւնը վերացական, անմարմին երևոյթներից երես է դարձնում և գնում է ժամանակակից կեանքի, նրա երևոյթների, նրա դրական և բացասական կողմերի հետ։

1715 թւականին մեռաւ Լուդովիկոս XIV։

*) Геттнеръ, т. II, եր. 39.

Ծայրայեղ բռնապետութեան սանձած կեղծաւորութեան և փարիսեցիութեան քօղը, որի տակ ծածկված էին հասարակութեան արատներն ու խոցերը, պատռվեց: Եկեղեցին ու հաւատալիքները արդէն հիմքից ցնցված էին: Ժողովուրդը, լսելով իր Թագաւորի մահը, ուրախութեան ցոյցեր էր անում. Նրան միայն ուրախացնել կարող էր այն մահը, որ վերջ էր դնում այնքան երկարատև և այնքան անխիղճ թագաւորութեան: Պատերազմներից, ներքին հալածանքներից քանդված և աղքատութեան դուռը հասած Ֆրանսիան բաց է անում աչքերը, նայում է իր բազմաթիւ վէրքերին և սկսում է նրանց բժշկութեան մասին մտածել: Այդ բժշկութիւնը տեսնում է նրան վերանորոգութեան ճանապարհով, որ վերջը պիտի հասցնէր մեծ յեղափոխութեան: Մի Լուդովիկոս աւելի քան բաւական էր, որ բռնակալութիւնը ատելի և զզուելի դառնայ ֆրանսիացու աչքում և որոնել տայ ազատութիւն: Լուսաւորութիւնը առաջնորդում է նրան այդ ճանապարհին: Գրականութիւնը մեծամեծ քայլեր է անում, պատրաստում է մի ժողովուրդ, որ հրաբղխային ժայթքումներով պիտի ցնցէր Եւրոպան:

Դա առանձին նշանակութիւն ունէր ամբողջ մարդկութեան համար: Ֆրանսիական լեզուն տարածված էր ամեն տեղ, ուրեմն և մի շատ գեղեցիկ գործիք էր՝ նոր գաղափարները ընդհանրացնելու համար: Գեղեցիկ գործիքը տաղանդաւոր

գործադրողներ էլ ունեցաւ. երևան եկան ժողովրդականացնելու, հասարակութեան հետ մի դիւթիչ, կրակոտ լեզուով խօսելու փայլուն ընդունակութիւն ունեցող ֆրանսիացի գրողներ, որոնք XVIII դարի փառքն ու հռչակն են կազմում: 1726 թուականին Անգլիա ուղևորվեց և այնտեղ երեք տարի ապրեց հռչակաւոր Վօլտէր. Նրանից յետոյ նոյն տեղը գնաց Մօնտեսքիէ, միւս հռչակաւոր ֆրանսիացին: Մինչև այդ ճանապարհորդութիւնը Վօլտէր արդէն մի քանի անգամ բանտ էր նստել իր համարձակ, կծու ոտանաւորների համար, իսկ նրա գրուածքները, որոնց մէջ ժամանակի նոր մարդը մտրակում էր ֆանատիկոսութիւնը, կրօնական համբերողութիւն և ազատութիւն էր պահանջում, արգելվել էին: Իսկ Մօնտեսքիէ հրատարակել էր իր հռչակաւոր «Պարսկական Նամակները», մի վէպ, որի մէջ, երկու պարսիկների անունից գրուած նամակների ձևով, անխնայ ծաղրի և քննադատութեան էին ենթարկվում Ֆրանսիայի հասարակական, պետական կարգերը, կրօնական ուղղափառութիւնը, պապականութիւնը, վանքերը, կուսակրօնութիւնը: Չէր խնայված նոյն իսկ քրիստոնէական վարդապետութիւնը: Արտօնված դասակարգերը, Լուդովիկոսի վարչական իշխանները, բարքերի վայրենացումը, նրբացած կրթութեան և շռայլութեան անհեթեթութիւնները, ժամանակակից գիտնականութիւնը—ոչինչ, ոչինչ չազատվեց Մօնտեսքիէի անողորմ մտրակից: Դա մի կատա-

բնալ պատկերում էր, որ յայտարարվում էր նախապաշարմունքների, հնութեան, անբարոյականութեան, բռնակալութեան դէմ, մի պատկերում, որի մէջ ժողովրդական ոգին մի ապշեցուցիչ ոյժով էր հանդէս գալիս։ Եւ հասկանալի է թէ ինչ ընդունելութիւն պիտի գտնէր գիրքը։ Յարձակումները անօրինակ և անլուր էին իրանց խստութեամբ։ Նրանք կարդացվում էին յափշտակութեամբ. «Պարսկական նամակների» շատ նախադասութիւններ առածների ձև ստացան։

Անգլիայում երկու մեծ հեղինակները շատ բան սովորեցին. նրանք տեսան թէ ինչ է ազատութիւնը, ինչ է սահմանադրական կառավարութիւնը. ծանօթացան անգլիական գիտութեան և գրականութեան և վերադառնալով հայրենիք, մշակեցին, զարգացրին, ժողովրդականացրին այն ամենը, ինչ սովորել էին Անգլիայում։ Մօնտեսքիէ անձնատուր եղաւ գիտնական հետազօտութիւնների, որոնց մէջ, սակայն, մնաց ժամանակի մարդ, առաջաւոր գաղափարների քարոզիչ։ Նա գրում է «Խորհրդածութիւններ հռոմայեցիների և նրանց պետութեան մեծութեան և անկման մասին» ու դրանով դառնում է նորագոյն պատմագրութեան հայր։ Մինչև այդ պատմագրութիւնը գտնվում էր աստուածաբանների, իրաւաբանների, չոր ու ցամաք գիտնականների ձեռքին. Մօնտեսքիէ մըտցնում է նրա մէջ հոգի, ապացուցանում է որ ազգերի ճակատագիրը այս ու այն պատահարից,

այս ու այն հզօր անձնաւորութեան կամայականութիւններից չէ կախված, այլ կազմվում է հասարակական և պետական կարգերից և բարոյական, բնական պայմաններն են, որոնց պէտք է որոնէ պատմագիրը ու ամբողջացնէ մի ազգի պատմական շրջանները։ Բացի այս գիտնական նոր, քննադատական ձևի, որ Վօլտէրի ձեռքով մըտցրվեց ու հաստատվեց պատմագրութեան մէջ, Մօնտեսքիէ հռոմայեցիների օրինակով դաս էր տալիս իր հայրենակիցներին, սովորեցնում էր թէ ինչ է ճշմարիտ հայրենասիրութիւնը, թէ ինչպէս մի ազգ բարձրանում է, երբ ազատ է, և ընկնում է, երբ բարբարոս բռնակալութիւնն է տիրում։ «Օրէնքների ոգին» աշխատութեան մէջ Մօնտեսքիէ հանդիսացաւ անգլիական վարչական կարգերի երկրպագու, պարզեց օրինականութեան, ճշմարիտ ազատութեան, մարդկային իրաւունքների վրա հաստատված պետութեան իդէալները։ Դրանով էլ նա դարձաւ ազատամտութեան հայր, իսկ պետական գործիչների համար «Օրէնքների ոգին» մի դպրոց դարձաւ, որին դիմում են մինչև այժմ։

Վօլտէրի գրական և գիտնական գործունէութիւնը չէ կարելի ամփոփել մի թռուցիկ տեսութեան մէջ։ Այդ հսկայ խելքը բեղմնաւոր ու անխոնջ էր մինչև խորին ծերութիւնը։ Հասնելով գրական փառքի գագաթնակէտին, նա տիրապե-

տում էր իր ժամանակակիցների խելքի ու սրտի վրա. Նրա երկրպագուների թւում կային նոյն իսկ թագակիր անձինք (պրուսական թագաւոր Ֆրիդրիխ, ռուսաց կայսրուհի Եկատերինա Մեծ), որոնք երկար տարիներ նամակագրութիւն ունէին նրա հետ, իրանց հիացմունքն էին յայտնում այդ գրական թագաւորին: Անկեղծ հիացմունքների, ընդհանուր համակրանքների ու յարգանքների հետ լսվում էին, ի հարկէ, և անէծքներ, ատամների կրճտոց: Ո՞ւր ասէք որ չը գործէր այդ միշտ եռանդոտ, կռւող, անխնայ ծաղրող մեծ մարդու գրիչը: Բանաստեղծութիւն, փիլիսոփայութիւն, վիպագրութիւն, երգիծաբանութիւն, թատերագրութիւն, պատմագրութիւն—ամեն տեղ էր Վօլտէրը և միշտ մի և նոյնը—ազատութեան երգիչ, արդարութիւն և իրաւունք պահանջող, նախապաշարմունքների, մոլորութիւնների, տգիտութեան անհաշտ թշնամի: Վօլտէրն էր, որ ձևակերպեց նոր մարդկութեան իդէալը—«ազատութիւն և հաւասարութիւն», բառեր, որոնք գծագրվեցին ֆրանսիական մեծ յեղափոխութեան դրօշակների վրա և որոնք այժմ էլ լուսաւոր մարդկութեան քաղաքական դաւանանքն են կազմում: Անողոք, տաք ու երկար էր նրա կռիւը մանաւանդ եկեղեցու դէմ. ապշեցող համարձակութեամբ նա մերժում էր քրիստոնէութիւնը և դրա համար էլ անաստուած հռչակվեց եկեղեցականների կողմից: Բայց նա անաստուած չէր. նրա աստուածը անգլիական

փիլիսոփաների աստուածն էր—բանականութիւն, խելք, առողջ դատողութիւն:

Մինչդեռ հանճարեղ ֆրանսիացին ամեն ինչ քանդում, աւերակ էր դարձնում և այդ աւերակների վրա իր անողորմ, ոչնչացնող ծաղրն էր հնչեցնում, դուրս եկաւ մի ուրիշ մարդ, որ միայն քանդել չը գիտէր, այլ և նոր, գեղեցիկ աշխարհայեցողութիւններ կառուցանել: Ժան Ժակ Ռուսօն էր դա, այն հանճարեղ միտքը, որ թովում էր իր ժամանակակիցներին սրտի խորքից բղխող խօսքով: Սա ինքնուրոյն, նոր ուղղութիւն էր, որ գալիս էր դիմադրելու XVIII դարի փիլիսոփաներին և նրանց քարոզների տեղ մաքուր ժողովրդասիրութիւն, ռամկավարական-հանրապետական կարգեր հրատարակելու: Ռուսսօն մարդկային թշուառութիւնների պատճառը որոնում էր քաղաքակրթութեան, գիտութեան մէջ. քարոզում էր վերադառնալ «բնական դրութեան», այն ժամանակներին, երբ մարդը ազատ էր, երբ չը կային իշխող և ստրուկ դասակարգեր և ամենքը հաւասար էին: Ժողովուրդը պիտի լինի իր վիճակի տնօրէնը, միայն նա իրաւունք ունի հրատարակել օրէնքներ: Հողը ոչ ոքին չէ պատկանում, իսկ պտուղները պատկանում են ամենքին: Նոր սերունդի կրթութիւնը հիմնված պիտի լինի բնութեան դասերի վրա. ազնուացնում, խելական բարոյութեան է հասցնում այն կրթութիւնը, որի մէջ դրված է բնութեան աւետարանը, որ հաղոր-

գում է աշխարհին սրտի կրօնը։ Քննադատելով ժամանակակից գիտութիւնը, բարոյական հասկացողութիւնները, կրօնը, Ռուսսօն ապացուցանում էր այդ բոլորի սնանկութիւնը։ Իր գաղափարներին հաւատարիմ մնալով, նա փառքի ետեւից չընկաւ. մերժեց իրան առաջարկված պալատական շնորհները, ապրում էր իբրեւ բնութեան մարդ եւ մեռաւ աղքատութեան մէջ։ Բայց նրա փիլիսոփայական գրուածքները, վէպերը նոր հօրիզոններ էին մարդկութեան աչքի առաջ, ստեղծեցին պետական եւ հասարակական իդէալներ, որոնք անմիջապէս մտան կեանքի մէջ։ Յեղափոխութեան գործիչները նրա գրքերն ունէին իրանց ձեռքում. փողոցներում կռուողների մէջ Ռուսսօի անունն էր հընչում։

Թողնենք ֆրանսիական ուրիշ գրողներին, թողնենք քաղաքատնտեսական եւ այլ գրական գիտութիւնների ասպարէզում գործողներին, մի հայեացք ուղղենք դէպի Եւրոպայի միւս կողմերը։

Ֆրանսիական ազատարար լուսաւորութեան ազդեցութիւնը ահագին էր։ Հետտնէր իր «Պատմութիւն XVIII դարի ընդհանուր գրականութեան» անունով գեղեցիկ աշխատութեան մէջ այսպէս է բնորոշում այդ ազդեցութիւնը. «Ամէն տեղ զգացվում է գարնան թարմ շունչը։ Նոր նպատակներ եւ նոր յոյսեր։ Ամէն տեղ անխոնջ մրցութիւն եւ ձգտում դէպի առաջ, դէպի մաքուր եւ կատարեալ

մարդկայնութեան նպատակը» *)։ Սկսվում են վերանորոգումներ պետական կեանքի մէջ եւ սկսողները թագաւորներն ու մինիստրներն են. ժողովուրդների պահանջները չեն, որ հարկադրում են նրանց մտածել բարենորոգումների մասին, այլ դարի լուսաւորութիւնը, գրականութիւնը։ Գերմանիան մտաւոր ինքնուրոյն վերածնութեան հանդիսարան է դառնում։ Կանտը քննական փիլիսոփայութեան հիմքն է դնում. Լեսսինգ գեղարուեստական կրիտիկայի հայր է դառնում. ծաղկում է ազգային գրականութիւնը, ծնվում են Գէօթէի եւ Շիլլերի նման հսկայ ստեղծագործողներ։ Սպանիան անգամ, չը նայած իր խեղճութեան, վերածնուելու նշաններ է ցոյց տալիս։ Բայց ֆրանսիական լուսաւորութիւնը ազդու եւ կենդանարար է մանաւանդ Իտալիայում։

Այդտեղ Վօլտէրը, Մօնտեսքիէն նոր դարագլուխ են բաց անում։ Վերածնութեան հայրենիք Իտալիան մի ժամանակ ինքն էր լոյս տարածում Եւրոպայի մէջ, օրինակ եւ ուսուցիչ էր հանդիսանում ազգերի համար։ Բայց վերածնութիւնից առաջացաւ Լիւթէրի Րէֆօրմացիան, կաթօլիկութիւնը սկսեց խաւար յետադիմութիւն, ճնշեց ոչնչացրեց Իտալիայի մտաւոր առաջադիմութիւնը, եւ Դանտէի ու Պետրարկայի հայրենիքը երկար նստած էր խաւարի մէջ։ Այժմ, երբ Հռոմի բռնա-

*) T. II, եր. 498.

պետութիւնը այնպիսի ահեղ հարուածներ էր ընդունում, երբ լայն հոսանքներով բանականութիւնն ու քննադատութիւնն էին տիրում մարդկանց մտքերի վրա, Իտալիան աչակերտում է Ֆրանսիային և մտնում է նոր օրերի մէջ։ «Ամեն տեղ—ասում է նոյն Հետտնէր—ասպարէզ են գալիս ազնիւ և լուսաւորված մարդիկ, որոնք դէպի մարդիկ ունեցած իրանց խորին սիրուց դրդված՝ ձգտում են հասցնել ժողովուրդը ազատութեան և բարօրութեան. մարդիկ են դրանք, որոնք ոգեւորված են յարգանքի արժանի եռանդով, աշխատում են նոր գաղափարների մեծամեծ նուաճումները դարձնել հիմք և ղեկավար՝ կեանքին սաստիկ անհրաժեշտ բարեփոխութիւնների համար»։

Միլան և Նէապոլ քաղաքները այդ նոր հոսանքների կենտրոններն են դառնում։ Զարգանում է քաղաքատնտեսական գիտութիւնը, նշանաւոր գրուածքներ են նուիրվում իրաւաբանական հարցերին և դրանց մէջ արդարութեան, իրաւունքի, ազատութեան պահանջներն են դրված։ Բարեկարգված կեանքն է այն իդէալը, որով վառված են այդ ազնիւ գործիչները. Նրանց ամբողջ ձգտումն է դառնալ ժողովրդի ուսուցիչ, այս բառի ամենալայն մտքով, դառնալ նրա բախտի պատճառ։ Նրանք ուզում են գիտութեան լուսով լուսաւորել մի օրէնսդրութիւն և վարչական ձև, որոնք վայել

են ազատ և իր արժանաւորութիւնը հասկացող մարդկութեան *)։

Գիտութեան հետ ձեռք ձեռքի տուած՝ առաջ է գնում բանաստեղծութիւնը, որ գլխաւորապէս ֆրանսիական ազդեցութեան տակ է, բայց իտալական վերածնութիւնն է երգում։ Թէ հանրապետական գաղափարներով տոգորված Ալֆիերին և թէ նրանից պակաս նշանաւոր բանաստեղծները գործ են դնում իրանց տաղանդի ամբողջ ույժը, որ զարթեցնեն իտալացիներին, հասկացնեն նրանց թէ որքան ցած են ընկել նրանք, որքան ամօթալի է նրանց դրութիւնը։ Եւ զուր չէին նրանց ազնիւ ջանքերը. Իտալիայում ծնվում է ազատութեան գաղափարը, որ իրագործվում է XIX դարում «Երիտասարդ Իտալիա» կուսակցութեան ձեռքով։ Այս կուսակցութեան նախահայրը Ալֆիերին է, մի բանաստեղծ, որ վարդի ու սոխակների երգերով չէր կերակրում իր հայրենակիցներին, այլ քարոզում էր քաղաքական ազատութեան և վերածնութեան մտքեր...

—

Ահա այսպէս էր Եւրոպան XVIII դարի ընթացքում։ Այսպէս էր ժամանակը, երբ մի հայ ընկերակցութիւն, դիմելով Եւրոպա, յանձն է առնում միջնորդի դեր կատարել նրա և հայերի մէջ։ Դա մի շատ ծանր, պատասխանատու պաշտօն

*) Геттнеръ, т. II, եր. 499.

էր, մանաւանդ եթէ ի նկատի առնենք որ երկար ժամանակ, համարեա մի ամբողջ դար, Մխիթարեան միաբանութիւնն էր հայ ազգի գլխաւոր դաստիարակիչը, միակ հեղինակաւոր մարմինը, որի միջոցով եւրոպական լոյսը անցնում էր դէպի մեզ։

Ի՞նչպէս է միաբանութիւնը կատարել միջնորդի դերը։ Սա մի շատ կարեւոր հարց է, որի լուծումը ցոյց կը տայ մեզ, թէ ինչ էր հայ ազգը վերջին երկու դարերի ընթացքում և ինչ կարող էր լինել։ Դիմենք երկու կողմերին էլ, որոնց մէջ միջնորդ էր միաբանութիւնը, և հարց տանք՝ ինչ էր այդ միջնորդը նրանց համար։

Վերցնենք նախ մի կողմը—Եւրոպան։ Դա լուսաւոր կողմն է, գիտութեան և առաջադիմութեան այն շտեմարանը, որից շատ կամ քիչ բան վերցնելու մէջ էր մեր ամբողջ երջանկութիւնը։ Ի՞նչ կասէ Եւրոպան այդ միջնորդի մասին։

Մենք արդէն ճանաչում ենք նրա ոգին, նրա ձգտումները։ Ուստի առանց տատանվելու կարող ենք ասել, որ առաջադէմ, մտքերի և հասկացողութիւնների մէջ այնքան խոր և լայնատարած յեղափոխութիւններ մտցրած եւրոպականութեան համար Մխիթարեան միաբանութիւնը մի կատարեալ յետադիմութիւն էր, մի մեծ խոչընդոտ, որի երեան գալը ոչ միայն չէր կարող բախտ համարվել մի ազգի համար, այլ ուղղակի պիտի նկատվէր իբրև դժբախտութիւն։

Եւ իրաւ, Հռոմի քթի տակ ապրող և Հռոմի

հրամաններին ու բարկքներին աչք տնկած մի վանական միաբանութիւն, որի ընտրած մի ճիւղն էլ միսիոնարական գործունէութիւնն էր հայերին պապական դարձնելու համար, չէր կարող համապատասխանել Վօլտէրի դարի պահանջներին,—մի իրողութիւն է սա, որ ապացոյցների կարօտ չէ։ Այստեղից առաջանում է Մխիթարեան միաբանութեան վրա ծանրացած ճակատագիրը.—որքան էլ շնորհալի և տաղանդաւոր անդամներ ունենար նա, բայց իբրև զուտ կղերական մի հիմնարկութիւն, պիտի միշտ յետ մնար ժամանակից, միշտ ներկայացնէր յետադէմ, հնադարեան պահպանողականութիւն և այդպիսով առաջադիմութեան խոչընդոտ հանդիսանար։ Միաբանութիւնը, ճիշտ է, եւրոպական գրականութիւն մտցրեց մեր մէջ։ Բայց ինչ տեսակ գրականութիւն։ XVIII դարում մենք աւելի եռանդով ենք սկսում կերակրվել միջնադարեան գրքերով, որովհետև ս. Ղազարի վանքը միայն այնպիսի գրքեր կարող էր թարգմանել, որոնք Հռոմի «Ինդէքսի» մէջ բազմելու պատիւը չունէին, այսինքն գրքեր, որոնք նոր, ազատ մտածողութեան հոտն անգամ չունէին։

Մի վանքի համար դա շատ բնական էր։ Բայց մենք վանքի տեսակէտից չը պիտի նայենք Մխիթարեաններին, այլ այն ծանր դերի տեսակէտից, որ նրանք յանձն էին առել կատարելու—մի խաւար, կրօնամոլ և ստրուկ ժողովրդի տեսակէտից։ Լօկկ, Մօնտեսքիէ, Դիդրօ, Րուսսօ և նրանց բազ-

մաթիւ հետեւողները այնպէս էին ներգործում ժամանակակից մարդկութեան խելքի վրա, որ, ինչպէս գեղեցիկ կերպով բնորոշեց Հետտներ, ամեն տեղ գարնան թարմ շունչն էր զգացվում, ամեն տեղ ծաւալվում էին նոր նպատակներ և նոր յոյսեր։ Մեզ համար այդ գարունը չէր բացվել. մենք, ճիշտ է, Մխիթարեանների առաջնորդութեամբ մտնում էինք մի նոր շրջան, բայց դա ազատ, ինքնաճանաչ եւրօպականութեան նոր նպատակների և նոր յոյսերի շրջանը չէր։ Նոր մարգարէներից ոչ մէկին էլ չը թարգմանվեց հայերէն. խոր, վերլուծող քննադատութեան և բանականութեան ձայնը չը հասաւ մեր ականջներին. դրա փոխարէն մենք Վենետիկից առատութեամբ ընդունում էինք միջնադարեան սխօլաստիկ աստուածաբանների փիլիսոփայութիւնները։

Ո՛րքան անհրապոյր բախտ։ Ազատարար Լուսաւորութեան Դարում Մխիթարը մեզ մատակարարում է XIII դարի հեղինակ Ալբերտ Մեծի աստուածաբանութիւնը, և մատակարարում է իբրև մեղր ու կարագ, իբրև մի հոգևոր կերակուր, որից կշտանալ չէ կարելի։ Թերթում ենք մինչև XVIII դարի վերջերը Վենետիկում լոյս տեսած լուրջ, թարգմանական գործերը, որոնց վրա կրթվել են սկսում սերունդներ։ Մխիթարեանները մեզ փիլիսոփայական գրքեր են տալիս, սովորեցնում են մեզ վերացական մտքերին։ Բայց դա նոր ժամանակների փիլիսոփայութիւնը չէ, այլ այն, որ

IV դարից դարձաւ աստուածաբանութեան ստրուկ։ Թոմա Ակուինացին, Ալբէրտ Մեծի աշակերտը, որ կաթօլիկ սուրբերի թւումն է դասված՝ ինկվիզիցիան և պապական միապետութիւնը պաշտպանող իր վարդապետութեան պատճառով, — գիտութեան և լուսաւորութեան միակ աղբիւրն է Մխիթարի և նրա յաջորդների համար։ Թարգմանվում են Ակուինացու գրուածքների զանազան չափի և մեծութեան բացատրութիւնները, թարգմանվում են եզուիտ աստուածաբանների և այլ կաթօլիկ կրօնաւորների մտածողութիւնները, խրատները, որոնք և ամենայն եռանդով առաջարկվում են մեզ՝ հոգի փրկելու համար. իսկ այն ձայները, որոնք որոտում էին Եւրօպայի բոլոր կողմերում կրօնական և քաղաքական բռնապետութեան դէմ, որոնք ծաղրում էին քարացած ծիսապաշտութիւնը, սխօլաստիկական զառանցանքները, մեզանից շատ և շատ հեռու մնացին։

Ուրիշ կերպ, ի հարկէ, չէր էլ կարող լինել։ Մխիթարեան միաբանութիւնը—դա վանականութեան կատարեալ յաղթանակն էր հայերի մէջ։ Մենք ունէինք բազմաթիւ վանքեր, որոնց մէջ ծոյլ ու հացկատակ մի դասակարգ էր ապրում։ Նա տգէտ էր, թաղված նախապաշարմունքների և անշարժութեան մէջ. նա ոչնչով չէր զանազանվում հասարակ ամբոխից։ Գտնվում է այդ դասակարգի մէջ անբաւական տարր, որ աշխատում է նախ տեղն ու տեղը, հայրենի հողի վրա, բա-

բեկարգել վանականութիւնը, դարձնել նրան գիտուն ու պատրաստ. և երբ այդ չէ աջողվում, երբ տենչերը և փորձերը խեղդվում են երկաթի ծանրութեամբ նստած իրականութեան մէջ, այդ անբաւական տարրը պոկ է գալիս հայրենիքից, անցնում է Եւրոպա, այդտեղ գտնում է զարգանալու նպաստաւոր հող և սկսում է մի զարմանալի բեղմնաւոր գրական գործունէութիւն, մնալով, սակայն, այն, ինչ էր—վանականութիւն։ Այսպէս էր Մխիթարեան միաբանութիւնը—հայ վանականութեան գերագոյն զարգացումը։ Նա կարող էր շատ ծաղկեցնել աստուածաբանութիւնը, կարող էր կրօնական գրքերի մի անսպառ հարստութիւն ստեղծել։ Եւ եթէ ամբողջ հայ ազգը պատկառանքով գլուխ իջեցրեց նրա առջև, սկսեց աշակերտել նրան, պատճառն այն չէր, որ նա ներկայացնում էր ժամանակակից գիտութիւնը, դարի լուսաւորութիւնը, այլ այն, որ չը կար նրա նման մի ուրիշ զարգացած ու գիտուն կրթական և գրական մարմին։ Վանականութիւնը, հասնելով մտաւոր առաջադիմութեան մի աստիճանի, որի նմանը մեր մէջ դեռ չէր եղել, երկար ժամանակով իր ձեռքն էր առնում ամբողջ ազգի կրթութեան մենաշնորհը։ Իսկ սա յետադիմութիւն և դժբախտութիւն էր աշխարհական այն լուսաւոր գիտութեան տեսակէտից, որ ողողել էր ամբողջ արեւմտեան աշխարհը։

Այս դրութիւնը աւելի պարզ կը լինի մեզ

համար, եթէ հետևենք Մխիթարի ներքին քաղաքականութեան, եթէ տեսնենք թէ ինչպէս նա կազմակերպեց իր միաբանութիւնը, ինչ հոգի դրեց նրա մէջ։

Մխիթարեան միաբանութեան անդամները պատրաստվում են հէնց միաբանութեան մէջ. դրսից ոչ ոք չէ ընդունվում։ Անդամներ պատրաստողը դպրոցն է, որից էլ սկսեց Մխիթարը։ Օտարներից դպրոցը աշակերտ չէր ընդունում. ամեն ինչ զուտ հայկական էր։ Ի՞նչ էր այդ դպրոցը։— Մխիթարը նրան հաղորդեց մի թունդ կրօնական ոգի։ Առաջին և ամենագլխաւոր նպատակը եկեղեցու պաշտօնեայ պատրաստելն է, ուստի իւրաքանչիւր աշակերտ նախ և առաջ պիտի կրօնական հիմնաւոր կրթութիւն ստանայ։ Հիմնաքարը, սկիզբը և վերջը աստուածաբանութիւնն է։ Իսկ մնացած գիտութիւնները։ Մեր վանականութիւնը շատ հնուց էր յատկացրել նրանց արտաքին անունը, այսինքն դրսի, հեռուից եկուոր, երկրորդական։ Մխիթարն էլ—իզուր չէր նա ճգնաւորական գաղափարներով սնվել—այդպէս նայեց այդ գիտութիւններին, տուեց նրանց կողմնակի նշանակութիւն, աստուածաբանութեան ստրուկ դարձրեց։ Նա մեղք չէր համարում, որ աշակերտները սովորեն և այդ գիտութիւններից, բայց հարկաւոր էր պատշաճաւոր զգուշութիւն, այսինքն որ գիտութիւնները կղերական հսկողութեամբ աւանդվեն, այն չափով, ինչ չափով հնարաւոր էր

համարում եկեղեցականութիւնը։ Մխիթարի կենսագրութիւնը պատմում է մի շատ բնորոշ դէպք։ Տեսնում է նա որ իր աշակերտներից մի քանիսը չափից դուրս ուշադրութեամբ և աշխուժով են ուսումնասիրում գիտութիւնները։ Նա վախենում է թէ մի գուցէ այդպիսով թուլանայ նրանց մէջ աստուածպաշտութեան եռանդը և հաւաքում է ամենքին, սկսում է ցոյց տալ ուղիղ ճանապարհը։ Ասում է որ ամեն մէկը պիտի իր ձախակողմում ունենայ Աստուածաշունչը և Թովմա Կեմպացու գիրքը, իսկ աջակողմում—աստուածաբանութիւն և փիլիսոփայութիւն (խօսքը, ի հարկէ, եկեղեցական փիլիսոփայութեան մասին է)։ Ապա յանդիմանում է աշակերտներին, որ նրանք այդքան սիրով նուիրվում են գիտութիւնների ուսմունքին և պարզ ցոյց է տալիս թէ այդ «մոլեկան իղձերից» որքան անկարգութիւններ են առաջ գալիս և որքան նուազում է աստուածպաշտութիւնը *)։

Երիտասարդական աշխոյժը սանձահարելու համար Մխիթարը խիստ հսկողութիւն էր հաստատել վանքում։ Նա գիտէր որ ժամանակը շատ վտանգաւոր է վանականութեան տեսակէտից և չէր քաշվում նոյն իսկ անձամբ լրտեսելու պաշտօնից։ Հէնց որ իմանում էր թէ երկու-երեք հոգի հաւաքվել են միասին, յանկարծակի գնում էր նրանց մօտ, որպէս զի իմանայ թէ ինչի մասին

*) Ադոնց, եր. 199։

են խօսում հաւաքվածները։ Պարզ է, որ այդպիսի խիստ հսկողութեան տակ ամեն մէկից պիտի պահանջվէր անպայման, կոյր հնազանդութիւն։ Եւ Մխիթարը այդ կողմից էլ միանգամայն անողոք էր, նոյն իսկ անգութ։ Մի անգամ նրա աշակերտները պատրաստում են մի շատ գեղեցիկ գործ. դա մի մեքենայ էր, որ ձևացնում էր երկրագունդը, երկնային մարմինները, լուսնի և արեգակի շրջանները. ժամացոյցի անիւներով այդ զարմանալի գործիքի զանազան մասերը իրանք իրանց շարժվում էին, ցոյց տալով այն, ինչ գիտութիւնն էր հաստատել։ Աշակերտները խնդրում են Մխիթարին գալ դպրոցը և տեսնել իրանց ձեռքի գործը։ Գալիս է Մխիթարը, գովում է նրանց, բայց վերադառնալով իր սենեակը, ուսուցչի միջոցով յայտնում է աշակերտներին որ եթէ նրանք կամենում են իրանց աբբահօր համար մի հաճելի բան անել, թող իրանց ձեռքով խորտակեն և կրակի մէջ գցեն այդ մեքենան։ Հասկանալի է թէ ինչ պիտի լինէր խեղճ աշակերտների դրութիւնը. այնքան երկար աշխատել էին, այնքան լաւ գործ էին պատրաստել և յանկարծ, մի ակնթարթում, պիտի ոչնչացնեն իրանց ձեռքի և խելքի պտուղը։ Բայց և այդպէս, նրանք կատարում են աբբահօր ցանկութիւնը։ Մխիթարը, սաստիկ ուրախացած, գնում է նրանց մօտ, օրհնում է, հասկացնում որ այդ հնազանդութեան վրա Աստուած էլ է ուրա-

խացած։ Այս վարմունքով Մխիթարը անպայման, հլու հնազանդութեան դաս էր տալիս։

Ինչպէս երեւում է, նա շատ լաւ իւրացրել էր կաթօլիկական վանքերի ներքին պայմանները, և մենք պիտի զարմանանք թէ ինչպէս նա կարողացաւ այդ վանքերի հոգին կազմող հնազանդութիւնը պատուաստել և աճեցնել հայերի մէջ, որոնք այնքան էլ սովոր չեն դիսցիպլինային, հնազանդութեան։ Մի հնազանդութիւն էր դա, որ մանաւանդ պիտի չափաւորէր աշակերտների սէրն ու ձգտումը դէպի գիտութիւն։ Կենսագրութիւնը պատմում է որ զարմանալի մեքենան պատրաստողները այն աշակերտներն էին, որոնք «դեռ ևս փիլիսոփայութեան վարժմունքների մէջ էին»։ Շատ բնական էր, որ Մխիթարը, խորտակել տալով այդ ձեռագործը, կամենում էր դրանով ցոյց տալ թէ որքան անախորժ բան է իր համար, որ իր աշակերտները, փոխանակ Թօմա Ակուինացու վարդապետութեան մէջ քաջ և հասկացող հանդիսանալու, աշխարհային գիտութիւնների մէջ են առաջադիմութիւն ցոյց տալիս։ Ցամենայն դէպս, եթէ աշակերտների ձեռագործը լինէր մի եկեղեցական անօթ, պատկեր կամ զգեստ, Մխիթարը նրան կրակի չէր դատապարտի...

Անհնազանդութիւնը միայն խրատներով չէր սանձահարվում, սահմանված էին և պատիժներ։ Ս. Ղազարի կղզու առանձնութիւնը գեղեցիկ միջոց էր՝ վանականներին կեանքից և աշխարհից

միանգամայն կտրելու համար։ Կենսագրութիւնը պարծանքով յիշատակում է թէ երբէք տեսնուած չէ որ վանքի միաբանութեան անդամները դատարկ տեղից շրջեն Վենետիկի փողոցներում, կամ նոյնն այնտեղ եղած «քաղաքական խաղերին»։ Այսպիսի առանձնացումը, անշուշտ, ունէր իր կարևորութիւնը վանական հաստատութեան յարատեւութեան տեսակէտից։ Բայց նա ունէր և բազմաթիւ բացասական կողմեր։ Վանքը դառնում էր մի միջավայր, ուր ոչնչացած էր անհատական կամքը, ազատութիւնը, ուր ամեն ինչ պիտի հպատակէր սահմանված կարգերին և աւանդութիւններին։ Այդ է պատճառը, որ Մխիթարեանների դարաւոր գործունէութեան մէջ աչքի է զարկում նեղ միակողմանիութիւնը, ազատ ու անկախ մտքի բացակայութիւնը։

Հարկաւոր է աւելացնել, որ Մխիթարի աբբայութեան ժամանակամիջոցը դեռ լաւագոյնը և օրինակելին է համարվում միաբանութեան պատմութեան մէջ։ Այդ ժամանակամիջոցում վանքի կանօնադրութիւնը պարզ էր, այն աստիճան չէր տոգորված կաթօլիկ վանքերի ոգով։ Սա հասկանալի է։ Եթէ իւրաքանչիւր երկարակեաց մարմին իր կեանքի մէջ ունենում է նահապետական շրջան, Մխիթարեան միաբանութեան համար այդ շրջանը Մխիթարի աբբայութեան ժամանակն էր։ Ինքը, Մխիթարը, կրթվել ու մեծացել էր կաթօլիկ

վանքի պատերից դուրս, հայրենի հողի վրա. Նա ճանապարհորդել էր հայոց աշխարհի շատ կողմերը, մի խօսքով կրում էր իր վրա հայրենի հողի, օդի, իրականութեան ազդեցութիւնները։ Բայց ահա ս. Ղազարի վանքում ստրուկների յաջորդութիւն է սկսվում. առաջ է գալիս միջավայրի հետ կապված դրութիւնը, բաղկացած աւանդութիւններից, նախապաշարմունքներից, կրթութեան պակասութիւններից և, վերջապէս, արտաքին հանգամանքների ազդեցութիւններից։ Խտանում է կաթօլիկական աւանդապահութիւնը, լուսավախութիւնը այդ մենաւոր կղզու վրա, սեղմելով ազատ մաքի ու գործունէութեան առանց այն էլ անձուկ ասպարէզը։ Մխիթարի մահից յետոյ Հռոմը այլ ևս աւելորդ է համարում Նորակազմ միաբանութիւնը արտօնութիւններով և քնքշութիւններով փայփայելը և ուղղակի հրամայում է նրան ընդունել Լատինական կարգի դաւանադրութիւնը։ Մխիթարեանները ընդունում են։ Սա արդէն բաւական է ամէն ինչ բացատրելու համար։ Այնուհետև այլ ևս սկզբունք է դառնում կոյր հնազանդութիւնը. միաբանութիւնը կազմված է կամազուրկ և գլխազուրկ անդամներից, որոնցից իւրաքանչիւրի առաջին պարտականութիւնն է ծառայել միաբանութեան շահերին։ Եւ որովհետև կրօնաւորութեան այդ կարգերը անկարելի է հաշտեցնել մարդկային բնաւորութեան հետ, ուստի բնականաբար զարգանում է փարիսեցիութիւնը, որի տակ պատըս-

սպարվում են բացասական շատ յատկութիւններ *)։

Դրէք այս դրութիւնը XVIII և XIX դարերի առաջադիմական պահանջների առաջ—և ձեզ համար անհասկանալի կը լինի, որ Մխիթարեան միաբանութիւնը, իբրև մի կղզիացած կղերանոց, չէ կարող առաջադիմութեան, կատարելագործման գործիք համարվել։

Յետադէմ պահպանողականութեան մի մեծ նշան էլ էր կրում Մխիթարեան միաբանութիւնը իր հիմնարկութեան օրից։ Իր գրական գործունէութեան համար նա գործիք ընտրեց ոչ թէ ժողովրդի լեզուն, այլ անհասկանալի, մեռած գրաբարը։

XVIII դարի գրական շարժման ամենամեծ գործը այն էր, որ նա ժողովրդականացնում էր գիտութիւնն ու գեղարուեստը, ամենքին հասկանալի խօսքի միջոցով տարածվում էր ժողովրդական խաւերի մէջ, զարթեցնում էր, աչք բաց անում։ Ճակատագիրը մեզ էլ շնորհել էր այդ դարում գրական վերածնութիւն, բայց դա մեռած ծնունդ էր նախ և առաջ այն պատճառով, որ

---

*) Մխիթարեանների այս պակասութիւնները մերկացրել են Գաբրիէլ վարդապետ Այվազօվսկին իր «Ուրուագիծ Մխիթարեանց» բրօշիւրի մէջ և Սարգիս վարդապետ Թէոդորեանը իր «Պատմութիւն Մուրադեան վարժարանին» մեծ աշխատութեան մէջ (երեք հատոր, Փարիզ, 1866).

ընդհանրութեան մատչելի լեզու չունէր: Այսպէս խօսելով՝ մենք չենք ուրանում Մխիթարեանների ահագին ծառայութիւնը. նրանց հետ ծնվեց ոսկե-դարի գրաբարը, նրանք մաքրեցին, ճոխացրին մի աղաւաղված, սպանված, վայրենացրած լեզու: Բայց այդ հսկայական ջանքերը բոլորովին չը փոխեցին գրականութեան դրութիւնը մեզանում. մեր գրականութիւնը դարձեալ մնաց «ընտրեալների» նեղ շրջանի սեփականութիւն, և ժողովրդի բազմութիւնը դարձեալ հեռու էր մնում նրանից: Գրքի ու դպրոցի մէջ այնքան էլ դժուար չէր վերանորոգել հինգերորդ դարը. դրա համար բաւական էր որ ս. Ղազարի վարդապետները դարմանալի ջանասիրութեամբ թաղվէին հնութեան մէջ, քրքրէին ձեռագիրները, մեղուների պէս պատրաստէին այն նիւթերը, որոնցից պիտի կազմվէր Մխիթարեան հարուստ ու ճոխ գրաբարը: Իսկ ժողովուրդը: Նա մնում էր նոյնը. դարերի ընթացքում նա հեռու էր մնացել գրաբարից, չէր հասկացել նրան: Ժողովուրդը չէր կարող վերադառնալ հնութեան դարերին, եթէ, ի հարկէ, ենթադրելու լինենք, թէ եղել է մի ժամանակ, երբ գրաբարը հայ ժողովրդի ամբողջութեան համար հասկանալի, գործածական լեզու էր,—մի բան, որ ապացուցված չէ և շատ վիճելի է: Ժողովուրդը ունէր իր պահանջները, իր լեզուն:

Եւ այդ բանը շատ լաւ էր զգում Մխիթարը: Նա կազմեց աշխարհաբարի քերականութիւն, աշխարհաբար լեզուով «Քրիստոնէական» գրեց: Սա մի հանգամանք է, որ ապացուցանում է թէ գրաբարը Մխիթարի ժամանակներում կարևորութիւն ներկայացնում էր լոկ գիտնական տեսակէտից, իսկ աշխարհաբարը—օրվայ լեզուն էր, ժողովրդի հետ խօսելու միակ յարմարաւոր և ցանկալի գործիքը: Դժբախտաբար, ինչպէս ասացինք, Մխիթարը մի համարձակ վերանորոգիչ չէր, այլ կոմպրոմիսների մարդ: Նա շատ լաւ ըմբռնում էր ժամանակի պահանջները, բայց հնութեան, անշարժութեան, կոյր աւանդապահութեան դէմ հսկայական կռիւ սկսելու և առաջ տանելու ընդունակութիւնը չունէր. ուստի այս հարցում էլ համակերպվեց տիրող հասկացողութիւններին և սովորութիւններին: Եւ այդպիսով գրաբարը դարձաւ Մխիթարեանների կուռքը: Երկար ժամանակ այդ նորոգած, ոսկեզօծած հնութիւնը տիրում էր մեզ վրա, որովհետև այդպէս էր կամենում ս. Ղազարի վանքը. երկար ժամանակ նա չէր թոյլ տալիս, որ մեր մէջ էլ, վերջապէս, ծնվի մի ժողովրդական գրականութիւն, որ լինի կեանքի զաւակ: Եւ մենք ի զուր զոհեր էինք տալիս այդ կուռքին, ի զուր անշարժացած սպասում էինք, որ նա աւելի շատ զարդարվի ոսկով ու ակներով…

Մեր այս դրութիւնից, ի հարկէ, չէ բղխում մի այնպիսի միտք, թէ գրաբարի ուսումնասիրութիւնը միանգամայն ապարդիւն ժամավաճառու-

թիւն էր։ Ո՛չ, հին լեզուի մշակումը կարևոր էր, որպէս զի մենք չը կորցնենք մեր հին մատենագրութիւնից։ Եւ եթէ մեզանում բացի Մխիթարեան վանքից գոյութիւն ունենար մի այլ հաստատուն և կարող գրական ընկերակցութիւն, որի նպատակը լինէր միայն աշխարհաբարի զարգացումը, այն ժամանակ մենք Մխիթարեաններին կը տայինք գրաբարը մշակողների, հարստացնողների պատիւը։ Ցաւը հէնց այն է, որ մենք այդպիսի բախտ չունեցանք. բացի Մխիթարեան ուխտից չը կար մի այլ ուսուցիչ, ղեկավար։ Զգալով ժամանակի և ժողովրդի պահանջները, Վիեննայի հայ վարդապետները պիտի գրաբարը պահէին իրանց գիտնական ուսումնասիրութիւնների համար, իսկ ժողովրդին պիտի տային գրքեր նրա լեզուով, մի և նոյն ժամանակ ջանք պիտի գործ դնէին այդ լեզուն մշակելու, հարստացնելու համար։ Բայց Մխիթարեանները սխօլաստիկ և հին պահպանողական մնացին ոչ միայն մատենագրութեան, այլ և լեզուի մէջ։ Նրանք խրվեցին այն մոլորութեան մէջ, թէ գրաբարը պիտի դառնայ գրականութեան լեզու, թէ միայն այդ լեզուն կարող է զարգացնել հայի միտքը, կրթել նրա սիրտը։ Դա մի ահագին յետադիմական փորձ էր, որի վրա այնքան մեծ աշխատանք վատնեցին Մխիթարեանները։ Եթէ նրանք աւելի շատ ունենային հսկայ տաղանդներ, քան որքան ունեցան, եթէ նրանց աջողուէր աւելի երկար ժամանակով

արգելք հանդիսանալ ժողովրդական գրականութեան դէմ՝ այնու ամենայնիւ, վերջ ի վերջոյ յաղթողները նրանք պիտի լինէին, որովհետև ժամանակի դէմ գնալը մարդկային ուժերից միանգամայն վեր է։

Այսպէս էլ եղաւ. կործանուեց Մխիթարեանների ոսկեզօծ կուռքը, իր բեկորների տակ թաղելով նաև նրանց ահագին հեղինակութիւնը, նրանց ղեկավարող դերը։

Վերածնութիւնը ազգերի մարմնի և արեան մէջ մտնում է գրականութեան և դպրոցների միջոցով։ Նոյնը Յունաստանին։ XVIII դարում այստեղ էլ վերածնութիւն է սկսուած։ Բացւում են բարեկարգ դպրոցները, գրական գործիչները. ժողովրդական հասկանալի լեզուի պահանջը այնքան պարզ է զգացւում, որ սկսում են թարգմանել հին յոյն հեղինակներին. օրվայ հարց է դառնում գրական ժամանակակից, նոր լեզու ստեղծելը։ Աշխարհական տարրը այնքան գերակշռող դեր է կատարում գրականութեան մէջ, որ յունարէնի են թարգմանվում անգլիական և ֆրանսիական նոր փիլիսոփաները. տարածւում են ազատ մտքերը, քննադատութիւնը սկսում է փորփորել իրականութեան հիմքերը։ Այդ շարժումը այնպիսի կերպարանք է ընդունում, որ յունաց եկեղեցին նոյն իսկ սկսում վախել և դիմադրողի դեր է ստանձնում*)։

*) Ч. Файфъ, „Исторія Европы XIX вѣка“, т. II, М. 1889, եր. 176—177.

Մեզանում գրական և գիտական վերածնութիւնը միմիայն Մխիթարեան միաբանութեան էր վերապահուած։ Իսկ այդ միաբանութիւնը իր կազմակերպութեամբ, գործելու եղանակով, իր ձեռքում ունեցած միջոցներով չէր կարող բաւարարութիւն տալ ժամանակի պահանջներին։ Հայաստանում, գոնէ նրա արեւելեան մասում, արդէն գործում էր քաղաքական ազատութեան գաղափարը. և սակայն նա ուժեղ արձագանգներ չէ գտնում Մխիթարեան վանքում, չէ արծարծւում այնտեղ, ժողովրդականացած իդէալի կերպարանք չէ առնում այնտեղ հրատարակուող գրքերի մէջ։

Այս բոլորը XVIII դարի եւրոպականութեան համար կատարեալ յետադիմութիւն էր, դաւաճանութիւն նոր մտքերի, առաջադիմութեան դէմ։

—

Այսպէս է Մխիթարեան միաբանութեան նշանակութիւնը՝ եթէ նայենք Եւրոպայի կողմից։ Այժմ դիմենք միւս կողմին, նայենք Մխիթարեաններին հայկական իրականութեան աչքով։ Տեսնենք ինչ ունէինք մենք և ինչ աւելացրեց մեր ունեցածի վրայ Մխիթարի ստեղծած հիմնարկութիւնը։

ԳԼ. Բ.

Կ. ՊՕԼԻՍ ԵՒ ՎԵՆԵՏԻԿ

I

Հայոց գրականութեան համար տասնութերորդ դարը ընդհանրապէս զարգացման և առաջադիմութեան շրջան է, համեմատած նախկին դարերի հետ։ Նա նշանաւոր կենտրոններ է նուաճում չորս երկիրներում, այն է՝ Թիւրքիայում, Իտալիայում, Հնդկաստանում և Ռուսաստանում։ Հրատարակված գրքերի քանակութիւնը բազմաթիւ է, այնպէս որ պատմագիրը այլ ևս չէ կարող կանգ առնել իւրաքանչիւր հայերէն տպագրութեան առաջ և պիտի խօսէ միայն այն տեսա՛կ գրքերի մասին, որ հետաքրքրութիւն են ներկայացնում։ Բազմացել են, ի հարկէ, և գրական գործիչները. տպարան հաստատողը, գրքեր հրատարակողը այլ ևս մեծագործութեան, հերոսութեան նման մի բան չէ երևում։ Գրքերի տէրը դարձել

հոգևորականութիւնն է, բայց արդէն սկսում են ասպարէզ գալ և աշխարհական մարդիկ։

Գրական ամենագլխաւոր կենտրոնները, ուր լոյս են տեսնում բազմաթիւ գրքեր, երկու մեծ քաղաքներ են—Կ. Պոլիս և Վենետիկ։ Ամբողջ դարի ընթացքում այդ քաղաքները մրցում են միմեանց հետ առաջնութեան համար, և առաջնութիւնը խլում է Թիւրքաց մայրաքաղաքը՝ իր հրատարակած գրքերի քանակութեամբ։ Բայց միայն քանակութեամբ։ XVIII դարի հայերէն տպագրութիւնների ցուցակը ներկայացնում է մեզ այսպիսի հաշիւ. մինչդեռ Կ. Պոլիսը տուել է մօտ 210 տպագրած գրքեր, Վենետիկի հրատարակութիւնների ընդհանուր թիւը 180-ի էլ չէ հասնում։ Իսկ գրքերի բովանդակութեան կողմից Կ. Պոլիսը Վենետիկից շատ է յետ մնում։

Սա բնական է։ Կ. Պոլիսը ներկայացնում է նոյն Ասիան, որի մի բազմաչարչար անկիւնն էր Հայաստանը։ Ասիան ոչ թէ աշխարհագրական, այլ մտաւոր—կուլտուրական մտքով։ Ինքնուրոյն միտք այդտեղ ազատ զարգանալ չէր կարող. պալատական յեղափոխութիւններից ցնցված ենիչերիական վայրենութիւններին ենթարկված Կ. Պոլիսը, մի մշտապէս պատերազմող զինուորական բռնապետութեան մայրաքաղաք, որ մերթ յաղթողի հպարտութիւնից էր յղփանում, բայց յաճախ դառն պարտութիւնների յուսահատութիւն ու լքումն էր ներկայացնում,—անկարող էր նմանվել անգամ

առաջադիմող Եւրոպայի։ Կ. Պոլսում գործող հայերը նոյն տխուր իրականութեան ծնունդներն էին, որ ծանրացած էր մահմեդական ամբողջ Արևելքի վրա։ Բազմաթիւ հանգամանքներ հարկադրում էին հայերին, չը նայած XVIII դարի լուսաւորութեան, իրանց երկրում, իրանց ունեցածի մէջ որոնել մտաւոր պաշար։ Նրանք դրսի, այսինքն արևմտեան աշխարհից բաժանված էին չինական պատերով։

Միայն տպագրական մասն է, որ հաստատ հող է նուաճում Կ. Պոլսի հայութեան մէջ։ Բայց նա ինչ կարող էր տպագրել այն նեխված մթնոլորտում։ Ընթացիկ գրականութիւնը, որ լոյս է հանվում այդ մամուլի միջոցով, մեծ մասամբ ողորմելի բան է։ Եւ Կ. Պոլսի կատարած դերը այդ ընթացիկ, ինքնուրոյն գրականութեան մէջ չէ։ Դրանից աւելի մեծ նշանակութիւն ունէր այն հանգամանքը, որ Կ. Պոլիսը սկսեց հրատարակել եկեղեցական գրքեր և հին մատենագրութիւնը։

Մինչև XVIII դարի սկիզբը լուսաւորչական եկեղեցին շատ անօգնական դրութեան մէջ էր. նրան հարկաւոր էին գրքեր, իսկ դրանք հրատարակվում էին համարեա միայն արևմտեան Եւրոպայում։ Բայց այդտեղ կանգնած էր կաթոլիկ ամենակարող կղերը, որ պահանջում էր նախ հիմնաւորապէս սրբագրել եկեղեցական գրքերը, ապա միայն տպագրել։ Այն դառն տանջանքները, որ կրեցին Ոսկանը և նրա յաջորդները Մարսէլում, ցոյց են տալիս, թէ որքան ծանր, յաճախ

կատարելապէս անկարելի բան էր ունենալ եկեղե-
ցական հարազատ, չաղճատուած գրքեր։ Եթէ չը
լինէր ազատ Հօլլանդիան, եթէ հայ տպարան
չը բացուէր Ամստերդամում՝ հայերը իրանց կրօնա-
կան պէտքերի համար կամ պիտի բոլորովին հրա-
ժարուէին տպարանի օժանդակութիւնից, կամ պի-
տի բաւականանային այն եկեղեցական գրքերով,
որոնք լոյս էին տեսնում Հռոմի կամ Վենետիկի
կաթօլիկ գրաքննութեան հաւանութեամբ։ Դարը
այնպէս չէր, որ կարելի լինէր հաշտուել այս երկու-
մաքի հետ։ Կաթօլիկ պրօպագանդան մտել էր
Հայաստանի սիրտը, առատ հունձեր էր հաւա-
քում։ Կռուել այդ արշաւանքի դէմ լոկ հալածանք-
ներով, մատնութիւններով բաւական չէր։ Կարևոր
էր և գործ, կարևոր էր և քարոզութիւն, գրքերի
օգնութիւն։

Մենք տեսանք*), թէ դիմադրելու անհրաժեշ-
տութիւնը ինչպէս հարկադրեց հայ հոգևորական-
ներին բանակռուել գրքերի միջոցով։ XVIII
դարի վերջին քառորդում բացվում է Նոր-Ջուղայի
վաղուց փակված տպարանը՝ յատկապէս կաթօլիկ-
ների դէմ ուղղած մի քանի վիճաբանական գրքեր
տպագրելու համար։ Պայքարը գնալով սաստկանում
է. Թիւրքիայի համարեա բոլոր կողմերում ժողո-
վուրդը կռուածաղիկ է դառնում կաթօլիկ և ազ-
գային եկեղեցիների մէջ։ Իւրաքանչիւր կողմը աշ-

*) Հայկ. Տպ., I. եր. 243 և յաջ.

խօսում է յարձակողական և պաշտպանողական
դիրք գրաւել։

Եւ ահա այդ ազդեցութիւնների տակ Կ. Պօլ-
սում կենտրօնանում է հայ եկեղեցու պաշտպա-
նութեան գործը։ Ամստերդամի դերը յանձն է առ-
նում Կ. Պօլիսը, տպագրելով եկեղեցական հարա-
զատ գրքեր. այդ կողմից նա համարձակ մրցում է
նոյն իսկ Վենետիկի հետ, զարգացնելով տպարա-
նական գործը և հեղինակութիւն է ստանում։ Ինչ
որ կար հայերի ձեռքում իրանց եկեղեցու ուղղա-
փառութիւնը հաստատելու համար՝ մամուլին էր
յանձնվում Կ. Պօլսում։ Ժամանակակից հեղինակ-
ների հերքումները, յարձակումները կաթօլիկների
դէմ բաւական չէին. կարիքը հարկադրում էր դուրս
բերել հին ձեռագիրներ, յանձնել տպագրութեան։
1709 թւականին տպագրվում է Ագաթանգեղոսը։
Մովսէս Խորենացու պատմութեան տպագրութիւ-
նից յետոյ դա երկրորդ փորձն է, որ մամուլին է
յանձնվում հայ հին գրականութեան մի յիշատակա-
րանը։ Եւ ինչ պատճառով։—Որպէս զի հայերը կար-
դան, հասկանան, որ իրանք դաւանում են Գրիգոր
Լուսաւորչի դրած հաւատը ու կարողանան պա-
տասխաններ տալ հաւատափոխներին*)։ Նոյն նը-
պատակով է որ 1719 հրատարակվում է Զենոբ
Գլակը, 1837-ին Մեսրոպ Երէցը։ Բացի պատմա-
կան նշանակութիւն ունեցող այս գրքերից հրա-

*) Ագաթանգեղոս, 1709 թ. տպ., առաջաբան։

տարածվում են և հին զուտ կրօնական չարադրութիւններ։ Տպվում են, չը նայած ահագին ծախսերին և դժուարութիւններին, «Յայսմ աւուրքի», Գրիգոր Տաթևացու հատորների պէս ահագին գըրքեր։

Միանալու, փոխադարձ աջակցութեամբ գործելու անհրաժեշտութիւնը պարզ զգացւում է, իրականութիւն դառնում։ Մենք նոյն իսկ տեսնում ենք այսպիսի երևոյթ։ Հաւաքվում են մի քանի մարդիկ, գանձանակ են հաստատում գրքեր հրատարակելու համար։ Նրանք դիմում են մարդկանց բարեսիրութեան, չեն արհամարհում նոյն իսկ աղքատների սև փողերը։ Այսպիսի հաւաքական ուժերով հրատարակվեց 1717 թուականին Կիւրեղ Աղէքսանդրացու «Պարապմանց գիրքը», որ դարձեալ պիտի հաստատէր, թէ հայերը հերձուածող ու հերետիկոս չեն։ Դա առաջին հրատարակչական ընկերութիւնն է հայերիս մէջ. Նա խոստանում էր ուրիշ գրքեր էլ հրատարակել հետզհետէ *)։ Աւելի ևս առաջ գնալով, տեսնում ենք փոքրիկ գիրքով տպագրած գիրք, ծոցում կամ գրպանում պահելու յարմարեցրած, «Ճշմարիտ նշանակութիւն կաթողիկէութեան» վերնագրով, երկրորդ տպագրութիւն (1750). դա վիճաբանութիւն է կաթօլիկների դէմ և տարածւում է ձրի **)։

*) «Պարապմանց գիրք», եր. 795։

**) Եր. 269։

Եւ այսպէս Կ. Պօլսի մէջ կենտրոնացած էր դիմադրութիւն կաթօլիկ պրօպագանդայի դէմ ոչ միայն քաղաքական իշխանութեան, ոյժի միջոցով, այլ և գրականութեան միջոցով։ Հէնց այդ պատճառով էլ այդ գրականութիւնը միանման ու միագոյն է—կրօնական. և Կ. Պօլիսը կարևորութիւն ունի աւելի տպարանական, աւելի հրատարակչական տեսակէտից։ Նա դիմադրում էր արևմտեան տպարաններին, բայց ազգային լուսաւորութիւն ստեղծելու և առաջ տանելու համար ոչինչ չունէր և չէր էլ կարող ունենալ. այդ բանի մէջ նա ոչընչով չէր տարբերվում մնացած հայութիւնից և ինքն էլ կարօտ էր արևմտեան հրատարակութիւններին։ Թէ ինչ կարող էր արտադրել Կ. Պօլսի աշխարհը կրօնական հարցերից դուրս, այդ կարելի է իմանալ մի գրքից, որ տպագրվել է Կ. Պօլսում 1704 թուականին։ Դրա հեղինակն է Գալուստ վարդապետ Ամասիացին, որ Կայծակ էլ էր կոչվում։ Նոյն այդ միջոցին Կայծակը Կ. Պօլսի պատրիարք էր և համարվում էր «մեծիմաստ վարդապետ»*)։ Այդ մեծիմաստի գիրքն էլ ունի մեծահնչիւն վերնագիր—«Լուսաչաւիղ»։ Երեսուն գլուխների մէջ Կայծակը մարդուն նմանեցնում է բազմատեսակ առարկաների (աշխարհ, քաղաք, մեղու, գազան, աղբիւր, ծով, նաւ, գետ, թռչուն և այլն) և զարմանալի նմանութիւններ է գտնում։

*) Չամչեան, Գ. եր. 745։

Ահա օրինակներ. 1) Մարդը նման է աշխարհին։ Ի՞նչպէս։—«Սարինք և բարձրանք ոսկերաց համեմատ. ծառ և տունկ՝ մազ և մօրուաց համեմատ. հող և ջուր օդ և հուր սաֆրայ և պալղամ արիւն և սև մաղձ։ Եւ դ. ջուր գոյ աշխարհի և մարդոյս դ. են ջուրք. աղին աչաց. լեղին ականջաց. քաղցր բերանոյն, և անօրինակն երիկամանց։ Աշխարհիս բաղում գետ գոյ. և մարդս բաղում երակօք է»։ 2) Մարդը ժամացոյցի նման։ «Զի մարդըս նմանի սահէթին։ Նախ. ունի թանձր արծաթ. և ոսկի կամ պղինձ. և մարդս ունի մարմին։ Երկու. զգեցուցանեն աման զիպակ և կամաշ. և մարդս ունի հանդերձ ոսկէթել. և սամար. և սև կտաւ. կամ շալ։ Երեք. ոսկեզօծ սանեն. և մարդս օծեալ է մեռոնիւ սրբոյ։ Չորս. զժամն ցուցանէ, որ է ժամացոյց. և մարդս գիտէ զժամն և զժամանակն։ Հինգ. ոմանք ձայն արձակեն, որպէս նոյեան կոչնակն. ըստ այնմ փող հարեք զօր և սաաքեալքն փող եղեն. և նարոննիս ժամահարքն. և աքաղաղն»։ 3) Մարդը նման է քաղաքի։ «Քաղաքի բանդ կա և մարդոյս հիանդութիւն և ցաւ»*)։

Այսպիսի գոհարների հետ «Լուսաշաւիղը» տալիս է և զանազան տաղեր, աղօթքներ, խրատներ, որոնք լի են նոյն խելօքութեամբ։ Կայծակը համոզուած է, որ այդ երգերը սխալ երգեն և աղաչում է երգողներից ու նուագողներից, որ իր անունը յիշատակեն և ի լրումն ամենայնի խոստանում է երկու այդպիսի լուսաթաթախ գրքեր էլ հրատարակել, մի խոստում, որ բարեբախտաբար անկատար է մնացել։

Մի նմուշ Գալուստ վարդապետի բանաստեղծութիւններից։ Խօսքը արբեցողի մասին է։ «ժամ աղօթքն ուրացեր է. ձունում և մարմնապաշտ է. որպէս եգիպտի քուրթ է. ծբ օր աղօթէ։ Թէ ժամ գնա՝ աղաչէ. յԱստուծոյ գինի խնդրէ. այգի եարան և մէջ է. խելքն և միտքն կարասն է։ Քրիստոնէից առէթ է. հաւատ. յոյս. սէր միշտ ուզէ. ձունունն երեք բան խնդրէ. թութու ըրախի գինի նէ։ Որքան հարբած կան յերկրի ժողովեալ դիմեն տեղի մի. շատ կարասներ և գինի, ցուցանեն ի մատանի։ Ենաւ չտա գաւաթ մի, կարօտ հասրէդ մեռանի. աւուրն անհեղ սանենի. ի դժոխոց զերծանի։ Բու սօզում օ տաէմէ. շէրապ կօթուրմէ յենէ. քօզուսնոտան մէյտն խոէ. հէր կուն մէհթատ էտինէ»։

*) Անփոփոխ ենք պահում ուղղագրութիւնը։

Եւ Գալուստ վարդապետը զուր չէր կոչվում «Մեծիմաստ»։ Գոնէ նրա ժամանակակիցները դրանից աւելի լաւ չէին գրում։ Կանոնաւոր չափագրելու ընդունակութիւնը, լեզուին մի քիչ բաւարար կերպով տիրապետելը շատ հազուագիւտ բաներ էին այն ժամանակներում։ Աւետիք պատրիարքը, որ այնքան եռանդոտ էր հալածանքների, ծեծի ու բռնութիւնների մէջ, Կայծակից մի աստիճան բարձր գրագէտ չէր, ինչպէս ցոյց են տալիս նրա մի քանի գրութիւնները *)։ Տիրող տըխուր գրութիւնն է ներկայացնում և այն հաւաքական խնդրագիրը, որ 1706 թուականին Կ. Պոլսի հայ հոգևորականները ուղարկել են Էջմիածնի Աղեքսանդր կաթողիկոսին և որի մէջ մի խառն ու չփոթ շատախօսութեամբ պատմված են ժամանակակից կրօնական խռովութիւնները **)։

*) «Բանասէր» հանդէս, 1900, № եր. 2, 141—144։

**) «Կռունկ» ամսագիր, 1863, № 9, եր. 662—683։

Գրական ճաշակի, մտաւոր պահանջների մի բնորոշ արտայայտութիւնն էլ «Պատմութիւն Պղնձէ քաղաքին» գիրքն է, որ առաջին անգամ տպագրուեց Կ. Պօլսում 1708 թուականին։ Ժողովրդի մէջ վայելած համբաւին և հեղինակութեան նայելով, այս պատմութիւնը, որքան էլ վիրաւորական լինի խոստովանելը, հռչակաւոր գիրք է։ Նոր չէր յօրինվում նա. մի ձեռագիր էր, որ դառնում էր տպագրած գիրք։ Բայց այնքան մեծ պահանջ առաջացրեց, որ բազմաթիւ հրատարակութիւններ ունեցաւ ոչ միայն XVIII, այլ և XIX դարում, ոչ միայն Կ. Պօլսում, այլ և շատ ուրիշ տեղերում։ Հազիւ մի երկու տասնեակ տարի լինի, որ հայ ժողովուրդը, կամ գոնէ նրա ստուար մեծամասնութիւնը, բաժանվել է այդ պատմութիւնից. այժմ էլ անշուշտ քիչ չեն այնպիսի անկիւններ, ուր «Պղնձէ քաղաքը» իր նախկին փառքի մէջ է, հայ գրագէտի ընկերն ու խորհրդատուն է։ Այդ երկարատեւ և ընդարձակ ժողովրդականութիւնը պարտաւորեցնում է մեզ մի քիչ մանրամասն խօսել հռչակված գրքի մասին։ Ի՞նչ գաղտնիք ունէր նրա աջողութիւնը։

«Պատմութիւն Պղնձէ քաղաքին» կոչվող գիրքը զանազան հոգեշահ պատմուածքների մի ժողովածու է, որի մէջ այն պատմուածքը, որից գիրքը ստացել է իր անունը, մի փոքրիկ տեղ է գրաւում։ Նրան հետեւում են Փահլուի, Խիկարի, աղքատ Ալէքսիանոսի և այլ պատմութիւններ, որոնք, լինելով բոլորովին անջատ ու անկախ գործեր՝ միացած են իրար հետ ներքին կապով. ամենքն էլ հոգի փրկելու, խրատելու, ուղիղ ճանապարհներ ցոյց տալու ձգտումն ունեն։ «Պղնձէ քաղաքը» թարգմանուած է արաբերէնից դեռ XIII դարի առաջին քառորդում մի հայ վարդապետի ձեռքով։ Պատմական-կուլտուրական տեսակէտից այդ թարգմանութիւնը ներկայացնում է մեծ հետաքրքրութիւն, իբրև արաբական տիրապետութեան յիշատակարաններից մէկը։

Մինչև VII դարի կէսը Հայաստանը ենթարկված էր Պարսկաստանի քաղաքական և կուլտուրական ազդեցութեան։ Բայց ահա գլուխ բարձրացրեց մի նոր մեծ ոյժ, որ վերջ դրեց Պարսկաստանի ինքնուրոյն գոյութեան և նրա ժառանգը հանդիսացաւ Առաջաւոր Ասիայում։ Դա արաբական իսլամն էր։ Նրա տիրապետութեան տակ մնում է և Հայաստանը, որ մօտ չորս դար ուղղակի կամ անուղղակի կազմում էր մի արաբական երկիր։ Փոքր, սեփական ինքնատիպ կուլտուրայից զուրկ ազգերի ճակատագիրն է ենթարկվել ուժեղների, մեծերի ազդեցութեան։ Հայերը թէև քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ հանդիսանում էին ոչ-քրիստոնեայ ազգերի ազդեցութեան դիմադրող մի տարր, բայց և այնպէս այնքան ոյժ և ինքնուրոյնութիւն չունէին, որ միանգամայն ազատ մնային այդ ազդեցութիւնից։ Որքան էլ նրանց մէջ կենդանի մնար դիմադրող

ոյժը, բայց ուժեղ էր և արաբական ազգը, որ համաշխարհային պատմութեան ասպարէզն իջաւ ոչ միայն իբրև նուաճող, այլ և իբրև կուլտուրական-մտաւոր ընդունակութիւններով հարուստ մի թարմ ցեղ։

Պատմութեան տուած փաստերը շատ ցանցառ ու թոյլ են, բայց և այնպէս ամէն ինչ ցոյց է տալիս, որ արաբական ազդեցութիւնը հայերի վրա՝ շատ զօրաւոր էր։ Նուաճողները նուաճուածների հետ շփւում էին անդադար, որքան էլ խալիֆը խտրութիւնների և արտօնութիւնների միջոցով աշխատում էր նուաճողներին անջատել, հեռու պահել նուաճուածներից։ Հայերի մէջ շատ գործածական են դառնում արաբական յատուկ անունները, ճարտարապետութիւնը Հայաստանում ենթարկւում է արաբական ոճին։ Նոյն խիստ ազդեցութիւնը մնում է գրականութեան մէջ. հայ գրողների ոճը, արտայայտութեան ձևը արաբական են։ Զօրեղ է մանաւանդ բանաստեղծութեան ազդեցութիւնը. մեր բանաստեղծութիւնների մէջ մտնում է արաբական չափը, այսինքն ոտները, արաբականի նման, վերջանում են միանման վանկերով, որոնք շատ ձանձրալի են դարձնում ոտանաւորը։ Սա արդէն մի անսխալ նշան է, որ արաբական գրականութիւնը շատ տարածուած էր հայերի մէջ, շատ ընթերցողներ ունէր։ Չէ կարելի ասել, թէ արաբները արհամարհում էին հայոց գրականութիւնը։ Թէ որքան

սերտ էին նրանց յարաբերութիւնները հայերի հետ գրական գործերում, երևում է նրանից, որ Գրիգոր Մագիստրոսը, վէճի բռնուելով մի գիտուն արաբի հետ՝ չորս օրում գրեց հազար տողից բաղկացած մի հայերէն ոտանաւոր, որ, ինչպէս պատմում է ինքը, Մագիստրոսը, մեծ տպաւորութիւն գործեց արաբի վրա *)։ Բացի դրանից, այժմ ապացուցուած է, որ արաբական առակների մի ամբողջ ժողովածու հայերէն «Աղուէսագրքից» է թարգմանուած**)։

Այս հանգամանքները ի նկատի առած, մենք պիտի սպասէինք, որ արաբական շրջանի հայոց գրականութիւնը մեծ հարստութիւններ փոխ առած լինէր արաբական գրականութիւնից։ Արաբները հայերին տալու շատ գանձեր ունէին։ Գիտական և գեղարուեստական գրականութիւնը նրանց մէջ զարգացման բարձր աստիճանին էին հասել. կային մեծ բանաստեղծներ, գիտութեան զանազան ճիւղերի մէջ (պատմութիւն, աշխարհագրութիւն, մաթեմատիկա) նրանք աշխարհին անհագին ծառայութիւններ մատուցին։ Եթէ հեռաւոր Եւրոպայից մարդիկ գնում էին Սպանիա և Բաղդադ, եթէ իրանք, արաբները, ճանապարհորդում

---

*) «Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի», Վենետիկ, 1868.

**) Профес. Н. Марръ, „Сборникъ притчъ Вардана", Спб., 1899, т. I, եր. 11—58.

էին զանազան երկիրներ, տանելով իրանց հետ գիտութեան պաշար՝ հայերի համար ոչինչ դժուարութիւն չը պիտի լինէր աւելի մօտիկուց իւրացնել այն մտաւոր գանձերը, որ պատրաստում էին արաբ գիտնականները և մատենագիրները։ Բայց մենք տեսնում ենք, որ հայոց գրականութիւնը համարեա բոլորովին չէ օգտվել արաբականից։ Եղել է արտաքին ազդեցութիւն ձևի վրա, բայց ազդեցութիւն ներքինի, բովանդակութեան վրա չէ եղել։ Արաբական շրջանը հայոց գրականութեան մէջ ոչինչ նոր փոփոխութիւն չը մտցրեց։

Դրա պատճառը, ի հարկէ, այն էր, որ հայոց գրականութիւնը միայն կրօնական էր, ծառայում էր կրօնքին և գտնվում էր նրա պաշտօնեաների ձեռքում։ Նկատի առնենք, որ իսլամը և քրիստոնէութիւնը կատաղի, անհաշտ թշնամիներ էին, միմեանց ոչնչացնելու մասին էին մտածում դարերի ընթացքում, և ոչ թէ միմեանց ձեռք մեկնելու, հաշտ ու համերաշխ ապրելու մասին։ Որ և է բան փոխ առնել արաբական ճոխ գրականութիւնից՝ հայ կղերի համար պիտի նշանակէր ընդունել իսլամի գերազանցութիւնը, մանաւանդ որ Մուհամմէդի ժամանակից արաբական բանաստեղծութիւնը տոգորվում է կրօնական ոգով, դառնում է ազգային-իսլամական։ Արաբական վէպերը, բանաստեղծութիւնները, մանաւանդ զարգարուն, ֆանտաստիկական հէքեաթները, գրական մի հարուստ պաշար կարող էին տալ հային. բայց նրանք

չեն թարգմանվում, որովհետև կրօնական դասակարգը չէր կարող տանել նրանց, քրիստոնէութեան անհաշտ թշնամիների այդ գործերը։ Հայ կղերը, բացի դրանից, լուկ իր եկեղեցու մասին էր մտածում. ազատ գիտութիւնը, որի մէջ այնքան առաջացել էին արաբները, ինքն ըստ ինքեան թշնամի էր կրօնական հաւատալիքներին. արաբների մէջ գիտութիւնը զարգանում էր այն ժամանակներում, երբ թուլանում էր իսլամի ոյժը, երբ համարեա անհաւատութիւն էր տիրում խալիֆների պալատում։ Այդ տեսակ գիտութիւնը չէր կարող մտցնվել Հայաստան՝ հայ կղերի ձեռքով։

Չը նայած այս արգելքներին, արաբական գրականութիւնից թարգմանութիւններ և փոխառութիւններ երևում են մեր գրականութեան մէջ։ Հետաքրքրական է, որ դրանք տեղի են ունենում այն ժամանակ, երբ վերջացել էր արաբական տիրապետութիւնը, երբ արաբ ազգը այլ ևս քաղաքական դեր չէր կատարում Ասիայում։ Արաբական գիտութեան մի շատ զարգացած ճիւղը բժշկականութիւնն էր. կեանքի համար այնքան մեծ նշանակութիւն ունեցող բժշկականութիւնը չէր կարող ենթարկվել կրօնական կամ ցեղային խտրութիւններին և շատ տարածվեց Հայաստանում։ Հայ բժիշկները ոչ միայն գործադրում են այդ գիտութիւնը հիւանդների վրա, այլ և գրում են գրքեր, բժշկական գիտելիքները ժողովրդականացնելու համար։ Առաջին և ամենից շատ յայտնի բժիշկ հեղի-

նակը Մխիթար Հերացին է. սրա օրինակին հետևել են և ուրիշները։ Կարելի է ասել, որ մենք միջին դարերում ունեցել ենք բժշկական մի ամբողջ գրականութիւն, հիմնված, ի հարկէ, արաբական հեղինակութիւնների վրա։ Բայց աչքից չը գցենք մի բնորոշ հանգամանք. այդ գրականութիւնը աշխարհական մարդկանց գործ է և նշանակված է ժողովրդի համար, ուստի և ունի ժողովրդին հասկանալի լեզու։

Ժողովրդի համար է և «Պղնձէ քաղաքը», որ արդէն արաբական բանաստեղծութիւնների շրջանից է վերցրած. թէև հոգևորականի ձեռքով է նա թարգմանված, բայց աշխարհաբար լեզու ունի։ Եւ հայ հոգևորականը ոչինչ մեղք էլ չէր գործում, թարգմանելով այդ պատմուածքը։ Դա արաբական երգիծաբանութիւններից մէկը չէր, որոնք յաճախ այնպիսի համարձակութեան էին հասնում, որ չէին խնայում նոյն իսկ իսլամի հիմնադրին, ոչ էլ առհասարակ մի այնպիսի գրուածք, որ իր բովանդակութեամբ գայթակղութեան քար դառնար հաւատացող հայ քրիստոնեայի համար։ Ընդհակառակն. «Պղնձէ քաղաքը», երևի, մէկն է այն բազմաթիւ հէքեաթներից, որոնցով այնքան հարուստ է արաբական գրականութիւնը և որոնցից կազմվեցին հռչակաւոր «Հազար ու մի գիշերները»։ Նրա մէջ փայլում է արևելեան այն վառ երևակայութիւնը, որ այդ տեսակ հէքեաթների ամբողջ գրաւիչ ոյժն է կազմում։ Այստեղ են հը-

րաչքները, Սողոմոնի գները, մի ամբողջ մեռած քաղաք, որ խորհրդաւոր է իր հարստութիւններով, իր գիրքով։ Բայց ամեն տեղ ամեն ինչ հաստատում է միայն աշխարհի ունայնութիւնը, կատարեալ ոչնչութիւնը. գերեզմանների, ապարանքների արձանագրութիւնները միաբերան քարոզում են, թէ չարժէ աշխարհային գործերին նուիրվել. սուտ է աշխարհը, իրականութիւնը միայն գերեզմանն է, որից չէ ազատում ոչ հարստութիւնը, ոչ իշխանութիւնը, որի մէջ երևելեայ թագաւորները, բռնակալները որդերի կերակուր են դառնում։ Աշխատել երկնքի համար, աշխատել յաւիտենական կեանք ժառանգել—ահա թէ ինչ է պահանջում պատմուածքի իւրաքանչիւր մասնիկը։

Այս միստիկական խոհերը միջին դարերում ընդհանուր էին ամեն տեղ, հաւասարապէս մեծարելի էին թէ քրիստոնեայի և թէ մուսլիմանի համար։ Ուրեմն և թարգմանող վարդապետը, կրօնական հասկացողութիւնների տեսակէտից, ոչինչ մեղք գործած չէր լինում, տալով ժողովրդի ձեռքը մի այնպիսի գիրք, որ ազդու օրինակներով ցոյց է տալիս, թէ սուտ է աշխարհը, թէ մարդը ոչինչ չը պիտի ունենայ, թէ միակ մխիթարութիւնն է բաժանել ունեցած-չունեցածը աղքատներին, հեռանալ աշխարհից և ճգնաւորի կեանք վարել որ և է այրի մէջ։

Նոյն այդ միտքն են արծարծում Փահլուլի

պատմութիւնը, կամաւոր աքսոր Ալէքսիանոսի ճգնութիւնները, մի խօսքով այն ամենը, ինչ կայ «Պղնձէ քաղաքի» մէջ, բացի միայն Խիկարի պատմութիւնից: Խիկարը, իբրև խելքի և իմաստութեան ներկայացուցիչ, առաջին հեղինակութիւն է վայելել հայերի մէջ: Դա Արևելքի հանճարն է, որի խրատները իբրև սուրբ ճշմարտութիւններ կազմվել են Քրիստոսից շատ առաջ և տարածվել են ամեն տեղ, թարգմանվել շատ լեզուներով: Հինգերորդ դարի հայ հեղինակներն էլ ծանօթ էին Խիկարի իմաստութիւնների հետ *): Այդ Խիկարը ունի մի պատմութիւն, որ ներկայացնում է մարդկային ապերախտութիւնը և որի մէջ ցոյց է տուած, թէ ինչպէս խելքը յաղթահարում է աշխարհի անմիտ բռնակալներին: Խիկարի խրատների մէջ երևան է եկած հին աշխարհը իր եսամոլ հասկացողութիւններով. մարդը պէտք է իր սեփական օգուտները պաշտէ, իսկ հոգի չը կորցնելու համար պիտի ողորմութիւն տայ աղքատներին. այդտեղ մեծարվում է իմաստութիւնը, խոնարհութիւնը, քարոզվում է զգուշութիւն, խոհեմութիւն: Կինը, ի հարկէ, ներկայանում է մի արարած, որին չէ կարելի ոչինչ խորհուրդ յայտնել. համարձակ խօսելը վատութիւն է համարվում. եթէ մէկը տեսնում է որ երկու մարդիկ

*) Հ. Յ. Տաշեան, «Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք», Վիեննա, 1901, եր. 123—125:

խօսում են՝ չը պիտի մօտենայ նրանց ու հեռացնէ, որպէս զի ինքն էլ չը ծեծվի: Կան, ի հարկէ, և խելօք խրատներ:

Այս է այն ժողովրդական գիրքը, որ հռչակված է «Պղնձէ քաղաքի պատմութիւն» անունով: Ընդհանուր առմամբ դա էլ կրօնական-խրատական ժողովածու է, այն զանազանութեամբ, որ հետաքրքրաշարժ պատմուածքների, վիպական ձևի միջոցով է ժողովրդականացնում այն՝ ինչ եկեղեցական մասյլ սխօլաստիկան քարոզում էր իբրև բարձր գիտութիւն, իբրև փիլիսոփայութիւն: Հազիւ թէ մի ուրիշ գիրք այդքան բացառական տպաւորութիւն թողնէ անպատրաստ ընթերցողի վրա. նա խլում է ամեն մի աշխոյժ, հոգեկան կորով. բթացնում է միտքը, ոչնչացնում է ամեն մի հարցասիրութիւն, դնելով մարդու մէջ մի սառն անտարբերութիւն դէպի շրջապատը: Ի՞նչ հարկաւոր է գործունէութիւնը, երբ աշխարհը մի ստութիւն է, երբ մարդուն միայն մի քանի կանգուն կտաւ է հարկաւոր: Ասիական խաւարի և անշարժութեան մէջ նստած մի ժողովրդի հէնց այսպիսի քարոզներ էին պակասում: Աւելացրէք այդ բոլորի վրա նախապաշարմունքները, առասպելները դևերի, հրաշքների մասին, որոնցով լի է գիրքը, և դուք կիմանաք, թէ ինչպիսի դաստիարակ էր «Պղնձէ քաղաքը»: Դա մերկ ու խաւար հնութիւնն էր, որ տպագրական մամուլի միջոցով նոր լոյս էր գալիս ոչ իբրև գիտական-

ների ուսումնասիրութեան նիւթ, այլ իբրև ժողովրդական գիրք։ Նա դեռ նոր պիտի լայն շըրջանառութիւն գտներ ժողովրդի մէջ, դեռ նոր պիտի նուաճէր կարդացողների և, որ ամենից ցաւալին է, հաւատացողների բազմութիւններ։

Եւ «Պղնձէ քաղաքը» չէր կարող չը հրատարակվել, չէր կարող գրական գանձ չը համարվել մեր մէջ, քանի որ մեր գրագէտ դասակարգի հասկացողութիւնները բարձր չէին այդ գրքի իմաստութիւններից։ «Մեծիմաստ» Գալուստ վարդապետի «Լուսաշաւիղը» ցոյց է տալիս, որ մենք «Պղնձէ քաղաքներին» էինք արժանի, որ մենք մեր զարգացողութեամբ դեռ պատկանում էինք այն հին ժամանակներին, երբ գրականութիւնը սուրբերի վարքագրութիւններից և դեւերի պատմութիւններից էր կազմված...

II

Եւ կարելի՞ է զարմանալ, որ այսպէս էինք XVIII դարում։ Կ. Պօլսի հայութիւնը, ինչպէս տեսանք, մտաւ այդ դարը մի ողբալի դրութեան մէջ։ Թերթում ենք նրա պատմութիւնը մինչև այդ դարի վերջը, և բացի կրօնական վէճերից ու երկպառակութիւններից՝ ուրիշ բան համարեա չենք տեսնում։ Մի զարհուրելի աղէտ է դա, որ տևում է ոչ թէ մի հինգ, տասը տարի, այլ մի ամբողջ դար։ Երևակայեցէք մի այդպիսի ժողովուրդ.

երևակայեցէք նրան՝ կրօնական նուրբ հարցերը ծեծի, բռնութիւնների, մատնութիւնների միջոցով վճռելիս, այն էլ մի այնպիսի պետութեան մէջ, ուր բացակայ է արդարադատութիւնը, ուր չը կան հաստատուն օրէնքներ, ուր այսօրվայ արածը կարելի է վաղը ոչնչացնել կաշառքի միջոցով։ Այդ ժողովուրդը կարող էր միայն ընկնել, կարող էր միայն խաւար ֆանատիկոսութեան մէջ խրվել։ Էլ որտեղից պիտի հաստատվէր նրա մէջ մի լուսաւոր երևոյթ։ Ինչե՞ր էր տեսնում նա և մանաւանդ ինչե՞ր էր կատարում։

1706 թուականին Աւետիք պատրիարքը անյայտացաւ գործունէութեան ասպարէզից։ Ֆրանսիական դեսպան Ֆէրիօլ կարողացաւ մի անլուր և զզուելի բռնութեան զոհ դարձնել այդ մարդուն։ Աւետիքի ասպարէզը առհասարակ փշոտ էր. հեշտ չէր եզուիտների նման թշնամիներ ունենալը։ Հազիւ էր նա մի տարի պատրիարքութիւն արել՝ երբ նրան աքսորեցին Կ. Պօլսից (1703)։ Շէյխուլ-իսլամ Ֆէյզուլլահը այլ ևս չը կար, և Աւետիքի պաշտպանութիւնը միայն ժողովուրդն էր. յաջորդ տարին ժողովուրդը կարողացաւ վերադարձնել տալ նրան Կ. Պօլիս։ Աւետիքը նորից հագաւ պատրիարքական կապան, բայց այս անգամ էլ երկար չէր նրա իշխանութիւնը։ 1706-ի սկզբում նա նորից դատապարտվում է աքսորի։ Հասնելով Քիոս կղզին, նա այդտեղից կամենում էր ճանապարհվել Երուսաղէմ, որի պատրիարքութիւնն էլ իր ձեռքն

էր գնել, բայց ընկաւ թակարդի մէջ։ Նաւը դէպի Գալլիպօլին չը գնաց, այլ դէպի Ֆրանսիա. այդպէս էր կարգադրել դեսպան Ֆէրիօլը, որ վաղօրօք ծրագրել էր պատրիարքի յափշտակութիւնը և այդ նպատակի համար էլ վարձել էր այն իսկ նաւը, որի մէջ մտաւ Աւետիքը։ Հայոց պատրիարքը ափ իջաւ Մարսէլում. այդտեղ նա կալանաւորվեց իբրև յանցաւոր և պահվում էր ամենախիստ հսկողութեան տակ։ Մեծ զգուշութիւններով նա հեռացըն-վում է մի ամայի տեղ, ուր նրան փակում են մի կաթօլիկ վանքի մէջ. ապա փոխադրում են Պարիզի Բաստիլ բանտը, ուր Աւետիքը վերջապէս կաթօլիկութիւն է ընդունում, բայց այլ ևս չէ կարողանում վերադառնալ Թիւրքիա։

«Գիժ դեսպան» անուն ստացած Ֆէրիօլից *) դժուար չէր սպասել այսպիսի մի գործ, որ բացի զզուելի, բարբարոսական բռնութիւն լինելուց՝ քաղաքական մեծ անհեռատեսութիւն էլ էր։ Խենթ հասկացողութեան արդիւնք էր Աւետիքին անհետացնելը։ Դեսպանը և նրա գործակից եզուիտները կարծում էին, թէ ամեն ինչ կարգի կը գայ, երբ մէջ տեղից կը վերանայ անխնայ հալածող պատրիարքը։ Բայց դա մի մեծ մոլորութիւն էր. այդ բռնութիւնը միայն առատ իւղ էր ածում կրակի

*) Ֆէրիօլ, Կ. Պօլսի դեսպանութիւնից հրաժարվելուց յետոյ, խելագարվեց։ Երբ այդ բանը յայտնեցին մեծ վէզիրին՝ սա ասաց. «Նա գիժ էր, երբ այստեղ եկաւ։

վրա։ Լուսաւորչական հայերը աւելի ևս կատաղեցին, աւելի ևս անհաշտ ու անխնայ դարձան։ Եւ Կ. Պօլսում բացուեցին տեսարաններ, որոնք քստմնելի տպաւորութիւն են թողնում այժմ էլ, դարեր անցնելուց յետոյ...

Ճիշտ է, Ֆէրիօլին աջողվեց Աւետիքի տեղ պատրիարք նստեցնել կեսարացի Սարը-Մատթէոս վարդապետին, որ համարեա կաթօլիկ էր. բայց հայերը երկու ամսից աւելի չը պահեցին այդ պատրիարքին։ Աւետիքը ունէր զօրեղ կուսակցութիւն, որ դիմումներ արեց. թիւրք կառավարութեան, խնդրելով վերադարձնել տալ բռնութեան զոհին իր անյայտ աքսորատեղից, ինչպէս նաև խնդրեց Էջմիածնի Աղէքսանդր կաթողիկոսից՝ յատուկ պատգամաւորութիւն ուղարկել Հռօմ և հասկացնել պապին, թէ չէ կարելի հայ եպիսկոպոսին կապել ու բանտարկել և թէ պէտք է վերջ դնել «ախթարմաներին» (հայ կաթօլիկների) արարքներին. մի և նոյն ժամանակ, նկատի առնելով համարձակ ու անխնայ կռուի անհրաժեշտութիւնը, Կ. Պօլսի հայերը խնդրում էին մի քանի ժիր վարդապետներ ուղարկել Կ. Պօլիս, յատկապէս Յովհաննէս վարդապետ Զմիւռնացուն։ Կաթողիկոսը կատարեց խնդիրքի այս վերջին կէտը։

Պատրիարքները այժմ ամիսների համար էին պաշտօնի կանչվում։ Մարտիրոս Բիւլհանճին, որ Աւետիքի փոքրաւորն էր, չորս ամիս պատրիարքութիւն արեց և տապալվեց Աւետիքի հակառա-

կորգների ձեռքով. Նրան յաջորդեց Միքայէլ Խարբերդցին, բայց նոյն պաշտօնում միայն ութ ամիս ու ստիպուած եղաւ տեղի տալ Սահակ վարդապետ Աբուչեխցուն: Սրան էլ ութ ամսուայ պատրիարքութիւն էր վիճակուած: Այդ միջոցին էջմիածնից Կ. Պոլիս հասան երկու հոգևորականներ: Մէկը Աւետիքի կուսակցութեան խնդրած Յովհաննէս Զմիւռնացին էր, որ և իսկոյն պատրիարք դարձաւ ու բաց արեց կռւի ասպարէզ, գերադասելով նոյն իսկ Աւետիքին: Ուրիշ տեսակի մարդ էր միւս հոգևորականը, որ էջմիածնի նուիրակի պաշտօն ունէր և կոչւում էր Աստուածատուր Աղաւնի: Սա Ջուղայի վանքիցն էր, Կ. Պոլիս ուղարկվել էր իբրև գիտուն ու հմուտ մարդ: Եւ իրաւ, ինչպէս երևում է, նա Ջուղայի դպրոցի վերջին աշակերտներից մէկն էր.—փոխանակ եղբայրասպան կռիւների մէջ նետուելու, նա աւելի կրթական գործով զբաղվեց: Աստուածատուր Աղաւնին էր, որ իր հետ տարաւ Ագաթանգեղոսի պատմութիւնը և տպագրել տուեց Կ. Պոլսում: Այդտեղ էլ նրան աշակերտից Բաղդասար դպիրը, որ Կ. Պոլսի յայտնի գրագէտներից մէկը դարձաւ:

Յովհաննէս Զմիւռնացու հետ իշխանութեան գլուխը բարձրացաւ Աւետիք պատրիարքի կուսակցութիւնը, որ սկսեց սոսկալի կերպով վրէժ հանել իր հակառակորդներից: Նորից հալածանքը կաթոլիկ հայերի դէմ կատաղի կերպարանք ընդունեց: Այդ դժբախտ ժամանակներում կոպիտ, վայրենի

կղերն էին միայն զարգանում. պակասում էին խաղաղութիւն, եղբայրութիւն քարոզողները: Պակասում էին ոչ թէ այն պատճառով, որ չը կային խաղաղութեան և եղբայրութեան օգուտները հասկացող անհատներ, այլ այն պատճառով, որ այդպիսի մարդիկ ամենից շատ դժբախտ էին. խօսել հաշտութեան խօսք՝ նշանակում էր ենթարկվել մեծ վտանգի: Ահա վայրենի իրարանցումների այդ ժխորի մէջ մի քահանայ, Կոմիտաս Քէօմիւրճեան, Երեմիա Չէլէպիի *) եղբայրը, ձայն է բարձրացնում և սկսում է քարոզել սէր և խաղաղութիւն: Կոմիտաս քահանան իր նշանաւոր եղբօր նման գրասէր էր և 1705 թւականին հրատարակել էր ոտանաւորի վերածած «Գործք առաքելոցը». Ժողովուրդը յօժարութեամբ ականջ է դնում նրա քարոզներին. այդքանը բաւական էր, որ Կոմիտաս քահանայի չորս կարգակիցները նախանձով և ատելութեամբ վառվէին նրա դէմ: Կղերի բորբոքումը ծայրայեղութեան այն աստիճանին հասաւ, երբ հարկաւոր էր արիւն՝ ամբոխային բարբարոս հակումները յագեցնելու համար: Այդ արիւնոտ զոհերը պիտի պատրաստէր Յովհաննէս պատրիարքը: Եւ այս հոգևորականը չը քաշվեց այդ դերից, սկսեց պատրաստութիւններ տեսնել:

Հաւաքում են շատ փող: Աջողութեան տա-

*) «Հայկակ. Տպագր.», I, եր. 266—279:

ջին պայմանն է դա. հարկաւոր է կաշառել Թիւրք պաշտօնեաններին։ Ժողովուրդը տալիս է արիւնոտ գանձանակը, և ոսկիներով լի քսակներին յենված՝ Յովհաննէս Զմիւռնացին դիմում է մեծ վէզիրին, մատնում է քառասուն մարդկանց, որոնք բոլորը կաթօլիկներ չէին, առնում է հրաման այդ ցուցակագրած մարդկանց կալանաւորելու մասին։ Բռնվում են մօտ քառասուն հոգի, մնացածները փախչում են։ Այս բոլորը անսովոր բաներ չեն Կ. Պօլսում. առաջին անգամը չէ, որ կրօնական վէճերի պատճառով հայերը փակվում են Թիւրքաց բանտերում, ուղարկվում են Թիարանները, կորցնում են ամեն ինչ։ Բայց Յովհաննէս պատրիարքը վճռում է սովորականից շատ առաջ գնալ. պատրիարքարանը կազմել է ինն մարդկանց ցուցակ և վճռել է գլխատել տալ դրանց։ Դա մի կատարեալ ինկվիզիցիա է հայոց եկեղեցու մէջ։ Մի քանի մանրամասնութիւններ այդ դէպքի ոճրագործութեան պատմութիւնից մենք չենք կարող բաց չանել մեր ընթերցողի առաջ, որպէս զի ցոյց տանք, թէ ինչ չափերի էր հասնում հայ կղերի կատաղութիւնը և որքան դժբախտ էր հայ ազգի դրութիւնը։

1707 Թւականի նոյեմբերի 22-ին, երեքշաբթի գիշերը լոյս չորեքշաբթի, վերև յիշած չորս քահանաները և մի քանի աշխարհականներ խումբ կազմած մօտեցան Կոմիտաս քահանայի տանը։ Խմբի մէջ էր և ինքը, Յովհաննէս պատրիարքը,

որ սակայն չէր համարձակվել կրօնաւորական զգեստով կատարել այդ գիշերային արշաւանքը և հագել էր սպասաւորի զգեստ*)։ Հայերը, որքան էլ շատաւոր լինէին, չէին կարող մենակ գլուխ բերել իրանց մտադրութիւնը, ուստի վերցրել էին իրանց հետ Թիւրք դատաւորի ծառաներին։ Նրանք ուզում էին խորտակել տան դուռը, բայց Կոմիտաս քահանան դուրս եկաւ և իրան յանձնեց հայ ինկվիզիտորների ձեռքը։ Նրան կապեցին և տարան։ Միւս օրը պատրիարքը ներկայացաւ մեծ վէզիրին և բացէ ի բաց մատնեց Կոմիտասին, ասելով թէ նա է այն խմբի պարագլուխը, որ պատրաստում է ապստամբութիւն Թիւրքերի դէմ և հէնց այդ պատճառով էլ միացել է ֆրանկների հետ, լրտեսում է ամեն ինչ։ Իբրև ապացոյց առաջ է բերվում Աւետիք պատրիարքի անհետացումը և նրա փոխարէն Սարը-Մաթէոս եպիսկոպոսի պատրիարքանալը։ Սկսվում է հարց ու փորձ. մեղադրվողները արդարանում են, բայց պատրիարքարանի պատրաստած սուտ վկաները հաստատում են մեղադրանքը։ Վճռվում է գլխատել ինն մարդկանց. դրանց հետ է և նախկին պատ-

*) Չամչեան, Գ., եր. 752։ Այս բոլոր մանրամասնութիւնները մենք վերցնում ենք Չամչեանից, որ միակ աղբիւրն է՝ այդ ժամանակների գործերի հետ ծանօթանալու համար և որի պատմուածքները չեն հերքված մինչև այժմ։

րիարք Սարը-Մաթէոսը, որ առաջ Սիսի կաթուղիկոս էր եղել։

Իսկոյն զահիճներ են ուղարկվում մահապարտների ետեւից և բացվում է աղէտալի տեսարան։ Հաւաքվել է մեծ բազմութիւն, գլխաւորապէս օտարներից—յոյներից, հրէաներից, Թիւրքերից։ Բարձրացել է սուգ ու շիւան. լաց են լինում մահապարտները, ընկնում են զահիճների ոտները և աղաչում են խնայել իրանց. լաց են լինում նրանց ազգականները, վերջապէս անտարբեր չեն նոյն իսկ օտարները, նրանք էլ լաց են լինում։ Բայց ազատութեան մի պայման կայ միայն—ընդունել մահմեդականութիւն։ Այս ու այն կողմից համոզում են մահապարտներին կատարել այդ պայմանը, կատարել գոնէ առերես, ազատվել մահից. իսկ շուարած Թշուառները միայն բարձրաձայն լաց էին լինում և չը գիտէին Թէ ինչ անեն։ Շուարած չէր, լաց չէր լինում միայն Յովհաննէս պատրիարքը, որ իր խորհրդակիցներով եկել էր տեսնելու, Թէ ինչպէս են սպանում իր հակառակորդներին։ Պատահաբար գլխատման տեղով անցնում էր վէզիր-քեհեասին (մեծ վէզիրի փոխանորդը). նայելով այդ տեսարանին, նա չը կարողացաւ պահել իրան, մօտեցաւ պատրիարքին, նախատեց նրան և նոյն իսկ լաց էլ եղաւ։ Այդ նախատինքն էր շրջում և հաւաքված օտարների բազմութեան մէջ. նախատում էին ամբողջ ազգը,

որի անդամները այսպիսի ստոր մատնութիւններով են կռւում միմեանց դէմ։

Դահիճները կապում են մահապարտների ձեռքերը և մերկացնում են իրանց սրերը։ Օրհասական րոպէին Սարը-Մաթէոս եպիսկոպոսը, Սիսի կաթողիկոս և Կ. Պօլսի հայոց պատրիարք, բարձրացնում է ձեռքը և ընդունում է մահմեդականութիւն. նրա օրինակին հետեւում են և միւսները։ Ամենքը ազատված են մահից։ Բայց ինչ օգուտ ստացաւ Յովհաննէս պատրիարքը։ Նա դեռ ունի զոհ. դեռ մնում է Կոմիտաս քահանան։ Սրա և սրա երկու ծանօթների վրա է նա թափում իր ամբողջ կատաղութիւնը։ Պէտք է Թիւրքերի ձեռքից կորզել այս մարդու մահվան դատավճիռը։ Դատաստան է կազմվում նախ մեծ վէզիրի մօտ, և պատրիարքը մահ է պահանջում. բայց քահանան արիաբար հերքում է իր վրա բարդած մեղադրանքները։ Մեծ վէզիրը մահվան արժանի յանցաւորութիւն չէ գտնում քահանայի մէջ և ուղարկում է նրան դատաւորի մօտ. սա էլ նոյնպէս դատեց։ Տեսնելով որ ուրիշ ճար չը կայ՝ պատրիարքարանը սուտ վկաներ առաջ քաշեց, որոնք մեղադրեցին քահանային և նրա երկու ծանօթներին քրէական ծանր յանցանքների մէջ։ Երեքն էլ մահվան դատապարտվեցին։ Նոյեմբերի 25-ին գլխատման տեղում նորից հաւաքվեց բազմութիւնը։ Այս անգամ զոհը չազատվեց. նրան շատ համոզեցին կեանք գնել մահմեդականութիւն ընդունելով, բայց

խլում։ Բարձրացաւ դահճի սուրը և Կոմիտաս քահանայի գլուխը կտրվեց։ Անմեղ արիւնը թափվեց եղբայրասպան կռիւը պսակելու համար. հայոց ազգի ամբողջ դժբախտութիւնն էր պարունակված այդ արիւնի մէջ։

Քահանայի արիւնը սարսափեցրեց նրա երկու ընկերակիցներին, որոնք ուշաթափվեցան և վայր ընկան. այդ դրութեան մէջ էլ նրանց հագցրին թիւրքի շորեր. նրանք մահմեդականութիւն ընդունած համարվեցան և ազատութիւն ստացան։ Այնուհետև գլխատված քահանայի մարմինը մատնվեց բարբարոսական անարգանքի։ Դիակը երեք օր ընկած էր անթաղ։ Պատրիարքի մարդիկ խնդրեցին մեծ վէզիրից, որ չը թաղվի այդ դիակը, այլ գցվի ծովի մէջ. բայց վէզիրը մերժեց այդ խնդիրքը և թոյլ տուեց բարեկամներին թաղել դիակը։ Սակայն Յովհաննէս Զմիւռնացին թոյլ չը տուեց որ հայ քահանաները կատարեն թաղման արարողութիւնը։ Այն ժամանակ յունաց պատրիարքը բազմաթիւ հոգևորականներ ուղարկեց, որոնք մեծ հանդէսով թաղումը կատարեցին։ Նահատակ քահանան սուրբ հռչակվեց։ Եւ ֆրանսիական դեսպանը մեծ փող ծախսելով, հանել տուեց նրա մարմինը գերեզմանից և ուղարկեց Ֆրանսիա։

Յովհաննէս Զմիւռնացին միայն այդ դահճութիւնը կատարելու և պատմութեան մէջ սևանալու համար էր պատրիարքութեան կանչվել։ Կոմիտաս քահանայի արիւնը յագեցրեց մարդկանց գազանային հակումները և Զմիւռնացին, տասն և չորս ու կէս ամիս պատրիարքութիւն անելուց յետոյ, տապալվեց, իսկ նրա տեղը նորից բազմեց Սահակ Աբուչեխցին։ Այս անգամ այս մարդուն վիճակվեց մի համարեա արտակարգ բախտ. նա պատրիարքութիւն արաւ ամբողջ հինգ տարի և երեք ամիս։ Մօտ չորս տարի խաղաղութիւն տիրեց Կ. Պօլսում։ Բայց Աբուչեխցին չը կարողացաւ դիմադրել յուզվող կրքերին և վերջ ի վերջոյ նա էլ, իր նախորդի նման, դուրս եկաւ իր ազգակիցներին հալածելու և տանջելու։ Պատճառաբանութիւնը միշտ մի և նոյն էր. կաթօլիկ հայերը ֆրանկներ էին դառել, չէին յաճախում հայոց եկեղեցիները, հետևաբար նրանք թիւրքերի հաւատարիմ հպատակներ չեն, պետութեան թշնամիներ են։ Դարձեալ բացվեցան թիւրքաց բանտերի դըռները մատնված հայերի առաջ, դարձեալ թիարանները լցվեցան այդ «յանցաւորներով»։ Շատերը փախան Կ. Պօլսից։ Բայց գտնվեցան և այնպիսիները, որոնք մի յուսահատական փորձ արին՝ հայոց պատրիարքարանի ահաւոր զէնքը ջախջախելու համար։ Այդ զէնքը մատնութիւնն էր, որի միջոցով գրգռվում էր թիւրք կառավարութեան կասկածոտութիւնը կաթօլիկ հայերի հաւատարիմ հպատակութեան վերաբերմամբ։ Եւ ահա մի խումբ մարդիկ ներկայանում են մեծ վէզիրին. ամեն մէկը վզից կախել է իր հարկաթուղթը և մի հատ էլ չղթայ։ Եւ ասում են այդ խեղճերը.—Նայեցէք,

ինչ փրանկներ ենք մենք. ահա մեր հարկերի թուղթը, չէ՞ որ մենք միշտ վճարում ենք մեր հարկերը, չէ՞ որ մենք տէրութեան տուրքերն ենք։ Մեծ վէզիրը համոզվում է որ ճիշտ, այդ մարդիկ նոյն օսմանեան հպատակներն են, ինչպէս և ուրիշները. արձակում է բողոքաւորներին և այնուհետև ուշադրութիւն չէ դարձնում պատրիարքարանի մատնութիւնների վրա։ Ինքը, Սահակ պատրիարքն էլ, չուտով փորձեց իր վրա, թէ ինչ բան է այն խակ մատնութիւնը, որին ինքն էր դիմում։ Թէքիր-դաղի հայոց առաջնորդը հակառակվեց նրա դէմ և սկսեց մեղադրել, թէ նա ինքը փրանկացել է. այդ մեղադրանքի մէջ սա այնքան առաջ է գնում, որ Սարգիսը հեռացնվում է պատրիարքութիւնից։

Սարգսի յաջորդ Յովհաննէս Գանձակեցին, որ մինչև պատրիարք դառնալը Կ. Պոլսի հայթուխների խանութներում ապրող մի վարդապետ էր, չարունակեց հալածանքները նոյն մատնութիւնների միջոցով։ Բայց, ինչպէս տեսանք, այդ զէնքը բթացել էր, և հայոց պատրիարքարանը այն աստիճան անկման էր հասել, որ Թիւրք կառավարութիւնը ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում, երբ նա մատնացոյց էր անում հայ-կաթօլիկների վրա, իբրև պետութեան սպառնացող մի ապստամբ ոյժի վրա։ Եւ Յովհաննէս Գանձակեցին գուցէ ոչ մի աջողութիւն չունենար, եթէ այս անգամ իրանք, կաթօլիկ հայերը, չը բարձրացնէին խռովութիւն։

Նրանք կամեցան առանձին պատրիարքութիւն հաստատել, բոլորովին անջատվել հայ-լուսաւորչականներից։ Գործի գլուխ էր անցել Կ. Պոլսի լատին եպիսկոպոսը. խոստովանահայրերը ժողովրդից փող հաւաքեցին Թիւրք պաշտօնեաներին կաշառելու համար։ Յովհաննէս պատրիարքը այդ պատրաստութիւնների մասին իմաց տուեց մեծ վէզիրին, որ այս անգամ չէր կարող անտարբեր մնալ. առանձին հայ-կաթօլիկ պատրիարքութիւն ստեղծելը հակառակ էր Թիւրքաց հայեացքներին։ Մեծ վէզիրի հրամանով կալանաւորվեցան հայ-կաթօլիկների պարագլուխ եպիսկոպոսները։ Սկսվեց դատաստան. հայ-կաթօլիկ եպիսկոպոսներից մի քանիսը ահից մահմեդականութիւն ընդունեցին, իսկ որոնք չը կամեցան այդ գնով ազատութիւն ձեռք բերել՝ ուղարկվեցան Թիարանները։ Հայ ժողովուրդը փողոցում սպասում էր մեծ վէզիրի դատավճռին. երբ երեք հայ-կաթօլիկ եպիսկոպոսներ դուրս բերվեցան իբրև դատապարտուածներ և տարվեցան դէպի Թիարանները, լուսաւորչական ամբոխը ընկաւ նրանց ետևից, թքում էր նրանց վրա, հայհոյում էր նրանց. իսկ կաթօլիկ հայերը կորագլուխ, ամօթահար տուն վերադարձան։

Կարծես քիչ էր այն ամենը, ինչ կատարվում էր Կ. Պոլսում, Յովհաննէս պատրիարքը հրաման ստացաւ մեծ վէզիրից, որ գաւառներում էլ հալածանքներ սկսվէն կաթօլիկ հայերի դէմ։ Թիւրքիայում ապրող այն բոլոր հայերը, որոնց մասին

կասկած կար թէ կաթօլիկ են, պիտի ձերբակալվէին։ Տրապիզոնում, Թօխաթում, Էրզրումում և ուրիշ շատ տեղերում բանտարկվեցան հայ-կաթօլիկ հոգևորականներ և բազմաթիւ աշխարհականներ։

Այսպէս ահա մի շարք խաւար ու զզուելի գործերի միջոցով, տարիների ընթացքում, աւելի և աւելի ամրապնդվում, արիւնոտ կերպարանք է ստանում այն կատաղի թշնամութիւնը, որ կար մի և նոյն ազգի երկու կրօնական հատուածների մէջ։ Աւելորդ է ասել, որ այսպիսի երևոյթների վրա ուրախանալ կարող էին միայն հայութեան թշնամիները։ Եւ եթէ իրանք, հայերն էին ամենից սոսկալի թշնամիները իրանց ազգութեան դէմ՝ դրա պատճառը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ տգիտութիւնը։ Մի կողմ թողնելով նոյն իսկ ազգային միութեան պատակտումը, որ կրօնական վէճերի հետևանքն էր, մենք չենք կարող չընդունել, որ երկու կողմերի, այսինքն լուսաւորչական և կաթօլիկ հայերի համար այդ խռովութիւնները ահեղ աղէտներ էին հանրամարդկային բարօրութեան և առաջադիմութեան տեսակէտից։ Այսպիսի վայրենութիւնների սովորած մի ժողովուրդ չէր կարող զարգանալ, առաջ գնալ. նա կը մնար կոյր ֆանատիկոս մի համայնք, որի համար աշխարհում չը կայ ոչ մի բարձր իդէալ։ Պէտք էր որ երկու կրօնների ընդհարումը ընդունէր աւելի մեղմ, մար-

դավայել կերպարանք։ Իսկ սրա համար հարկաւոր էր կրթութեան լոյս։

Հայոց պատմութեան մէջ քիչ չեն դէպքեր, երբ ընդհանուր դժբախտութեան միջոցին, դուրս են գալիս մարդիկ, որոնք կրթութեան սպեղանիով սկսում են բժշկել ազգային վէրքերը։ Մենք տեսանք, թէ XVII դարի սկզբում թանձրացած խաւարի մէջ ինչեր արեց Սիւնեաց դպրոցը *)։ Տեսանք որ այդ դպրոցից դուրս եկաւ բարեկարգութիւնը, որ Արևելեան Հայաստանի հոգևորականութեան դաստիարակը դարձաւ և պատրաստեց այդ ողբալի ժամանակների համար նշանաւոր գործիչներ։ Սիւնեաց դպրոցը առաջացրեց Նոր-Ջուղայի դպրոցը. սրա առանձնայատկութիւններից մէկն այն էր, որ այդտեղ Սիւնեաց դպրոցի հետ միացաւ մի ուրիշ, նոյնպէս նշանաւոր դպրոց, որ գտնվում էր Թիւրքաց Հայաստանում, Բաղէշի վանքերից մէկում։ Մենք տեսանք այս վերջին դպրոցի ներկայացուցիչներից մէկին, ճգնաւոր Մելքիսէթ վարդապետին **)։ Այս միացումից առաջ եկաւ Էջմիածնի դպրոցը։ Կրթական այս հաստատութիւնների ազդեցութիւնը շատ աչքի է ընկնում XVII դարի պատմութեան մէջ. դրանց շնորհիւ է որ Արևելեան Հայաստանը ունի բարեխիղճ, իրանց պարտականութիւնները լաւ հաս-

*) Հայկ. Տպագր., 1, 80—82.

**) Ibid., եր. 110.

կացող հոգևորականների մի շարք։ Միայն Կ. Պոլսի հայութիւնը ամբողջ դարի ընթացքում զուրկ էր այդ բարերար ազդեցութիւնից։ Բայց ահա XVIII դարի առաջին քառորդում, այդ, ինչպէս տեսանք, տխուր ու թշուառ ժամանակներում, Բաղէշի դպրոցը գալիս է իր ազդեցութիւնը մտցնելու և Կ. Պոլսի մէջ. նա տալիս է պարտաճանաչ առաջնորդներ, սկսում է կրթական շարժում։

IV

Բաղէշը մեր յիշած ժամանակներում ներկայացնում էր մի ընդարձակ քրդական պետութիւն, որ տարածվում էր Վանից մինչև Դիարբէքիր և համարեա անկախ էր։ Բաղէշի քուրդ խանը ոչ միայն ունէր իր սեփական մեծ զօրքը (մօտ 75,000), այլ և նոյն իսկ պղնձի դրամ էլ էր կտրում. Նրան հպատակվում էին տեղական բոլոր քուրդ ցեղապետները կամ բէյերը։

Հասկանալի է, թէ ո՛րքան դաժան, ո՛րքան դըժոխային պիտի լինէր իշխանութիւնը մի քրդական պետութեան մէջ։ Վայրենութեան մէջ մնացած մի հին ցեղ, որ մինչև այժմ էլ չէ կարողացել գիր ու դպրութիւն ունեցող ազգերի թիւը մտնել, որի պաշտամունքը յափշտակութիւնն ու կողոպուտն է, ունի իշխանութիւն, մի լայնարձակ երկրի տէրն է, նրա ճակատագիրը տնօրինողը։ Կեղեքումները, հարստահարութիւնները չը պէտք

է էլ յիշատակել, ա՛յնքան դրանք հասկանալի են ինքն ըստ ինքեան, ա՛յնքան առօրեայ, սովորական երևոյթ էին կազմում։ Խանութիւնը մի կուածաղիկ էր քուրդ իշխողների մէջ. Թիւրք կառավարութեան ձեռնտու չէր մի մշտական կարգ հաստատել Բաղէշի երկրում և նա ամենայն հաճութեամբ թոյլ էր տալիս, որ խանական իշխանութեան թեկնածուները կրծեն միմեանց, որքան կամենում են։ Այդ նպատակով էլ նա խանութեան թուղթ էր տալիս ամեն մէկին, որ կարողանում էր լաւ կաշառքներ բերել իրան։ Եւ քրդերը խլում էին խանութիւնը իրար ձեռքից. ներքին խռովութիւնները, պատերազմները անպակաս էին լինում։ Իւրաքանչիւր ուժեղ քուրդ, խլելով խանութիւնը իր հակառակորդից, պիտի հաստատէր նրա տեղը արիւնահեղութիւնների միջոցով, և իսկոյն նոր հարկեր էր դնում հպատակների վրա, որպէս զի յետ առնայ թիւրք կառավարութեան տուած իր կաշառքը *)։ Երկիրը աւերվում էր աւազակների ձեռքով, թէպէտ պարսից և թիւրքաց կառավարութիւնները աշխատում էին փոքր ի շատէ ապահովութիւն ստեղծել գոնէ այն առևտրական ճանապարհների վրա, որոնք անցնում էին այդ երկրի միջով և տանում էին դէպի Բաղդադ, Հալէպ, Թաւրիզ և ուրիշ տեղեր. բայց մի քրդական

*) Ինճիճեան—«Աշխարհագրութեան չորից մասանց աշխարհի», Վենետիկ, 1806, հատ. Ա., եր. 170.

պետութեան մէջ ոչինչ են ամէն տեսակ բարի մտքեր։

Ահա հէնց այս դաժան միջավայրում է գոյութիւն առնում հայկական այն դպրոցը, որ արժանաւոր հոգևորականներ է հանում իր միջից և ուղարկում է Կ. Պօլիս, այնտեղի բարբարոսական կարգերը փոքր ինչ մեղմացնելու համար։

Հայերը բուն Բաղէշի գաւառում մեծ թիւ էին կազմում։ Բայց քրդական դժոխքը հարկադրեց նրանց սակաւ առ սակաւ հեռանալ այդ գեղեցիկ, լեռնոտ երկրից, որ հին ժամանակներում Հայաստանի Աղձնեաց նահանգի մի մասն էր կազմում։ Հայաշատ էր մանաւանդ Բաղէշ քաղաքը. նա բաժանված էր չորս թաղերի, որոնցից իւրաքանչիւրը ունէր մի վանք և այդ վանքի թեմն էր կազմում։ Դրանց մէջ նշանաւոր հանդիսացաւ Ամլորդւոյ կամ Ամրդօլու վանքը։ Նշանաւոր նրանով, որ այդտեղ XVII դարում Բարսեղ վարդապետը երկար ջանքերի և աշխատութիւնների միջոցով կարողացաւ նորից հասկանալի դարձնել հին հայկական թարգմանութիւնները յունական փիլիսոփաներից, քերականութիւնը, տրամաբանութիւնը, մի խօսքով այն ամէնը, ինչ կոչվում է մեր հոգևոր գրականութեան մէջ «արտաքին գիտութիւններ» *)։ Բարսեղ վարդապետը դարձաւ Ամրդօլուի դպրոցի լաւագոյն ժամանակների հիմնա-

*) Առաքել պատմագիր, գլ. ԻԹ.

դիրը։ Նա ունեցաւ շատ հետևողներ, որոնցից մէկն էր վերև յիշած Մելքիսէթ վարդապետը, որ Ջուղայի դպրոցի ուսուցիչ հանդիսացաւ։

Քրդական իշխանութեան սաստիկ ճնշման տակ Ամրդօլուի դպրոցը շարունակեց գրագիտութեան, վանական բարձր ուսման կայծերը պահպանել մինչև XVII դարի վերջերը։ Այդ ժամանակներում վանահայր եւ ուսուցիչ էր Վարդան վարդապետը, մի, ինչպէս երևում է, աշխատասէր, զարգացած վանական։ Նրա աշակերտներն էին Գրիգոր և Յովհաննէս վարդապետները. յիշենք և սրանց ընկերակից Սարգիս վարդապետին, որ ծաղկարարութեան (նկարչութեան) արուեստին հմուտ էր և որի աշակերտն էր Գրիգոր Մարզուանցի դպիրը, Կ. Պօլսում XVIII դարի սկզբում տպարաններ հիմնողներից մէկը, որ բաւական առաջ է տարել տպագրական գործը և նշանաւոր է հանդիսացել մանաւանդ «Ցայսմաւուրք» ահագին գրքի տպագրութեամբ։

Իրանց վարդապետի մահից յետոյ, Գրիգորը և Յովհաննէսը, որ կոչվում էր Կոլոտ, Մուշի ս. Կարապետ վանքն են տեղափոխվում։ Բարենորոգութիւնների, գործի մարդիկ էին դրանք, ուստի և շատ էին հալածվում հայ հացկատակ վանականների կողմից, ինչպէս նաև այն աշխարհականների կողմից, որոնք վանքերին պարտք էին տալիս, որպէս զի տոկոսների փոխարէն կլանեն նրանց եկամուտները։ Բայց աւելի մեծ չարիք էլ կար։ Մուշը

Բաղէշի խանութեան մի մասն էր կազմում։ Քըրդերի անգթութիւնները անկարելի է նկարագրել, ասում է Յովհաննէս Կոլոտը *).—«Նրանք ծծում էին մեր արիւնը. գիշատում էին մեզ, փախցնում էին ծմակները և ժայռերի ծերպերը և այդտեղ մաշում էին մեր կեանքը»։ Այս սոսկալի հանգամանքների մէջ երկու ընկերակից վարդապետները, մաքառելով, որքան հնարաւոր է, ընտանի և դրսի գայլերի դէմ, վանքը բարեկարգելու, վերաշինելու հոգսերով էին զբաղված։ Գրիգորը ս. Կարապետի վանահայր դարձաւ, իսկ Յովհաննէս Կոլոտը ժողովարարութիւններ էր անում՝ վանքի պարտատէրերից ազատվելու և պակասութիւնները վերացնելու համար։ Այդ ժողովարարութիւնները վերջ ի վերջոյ տարան Կոլոտին Թիւրքաց մայրաքաղաքը։

Այստեղ նա քարոզում էր, Մուշի տառապանքներն էր պատմում և օգնութիւն խնդրում։ Նրա ընդունակութիւնները աննկատելի չը մնացին և նրան ուղարկեցին Երուսաղէմ, ուր մի բարեխիղճ և ազնիւ մարդու ներկայութիւնը շատ հարկաւոր էր։ Մենք արդէն նկարագրել ենք այն խայտառակ դրութիւնը, որի մէջ գտնվում էր Երուսաղէմի հայոց վանքը **). գիտենք արդէն, որ այդ կողոպտված, աւերված հիմնարկութիւնը,

*) «Ջեռնոց», տպ. Կ. Պօլսի, 1719, յիշատակարան։

**) «Հայկ. Տպ.», I, եր. 226—233.

բազմաթիւ անողոք պարտատէրերի պահանջով, պիտի ծախվէր։ Յովհաննէս Կոլոտը վրա է հասնում այդ օրհասական ժամին. Նա կարողանում է մի քանի բաներ ազատել պարտատէրերից, բայց տեսնում է, որ աւելին անել անկարելի է և Փրկչի վանքը պիտի ծախվի։ Ուրիշ ճար չը գտնելով, միաբանները սկսում են արտասուք թափելով աղաչել պարտատէրերին, որ ժամանակ տան։ Կոլոտը երաշխաւոր է դառնում, չորս տարվայ յետաձգումն է ստանում և շտապում է Կ. Պօլիս, ուր Պետրոս Անապատականի նման ողբում է Երուսաղէմի հայոց վանքի դրութիւնը և օգնութիւն է հայցում։ Նա համոզում է Կ. Պօլսի ազդեցիկ հայերին, որ Երուսաղէմի միակ փրկութիւնն է՝ ունենալ առանձին, անկախ պատրիարքութիւն, ինչպէս եղել է առաջ։ Բայց Կ. Պօլսի որ պատրիարքը յանձն կառնէր մի այդպիսի բան անել, քանի որ Երուսաղէմը եկամուտների հարուստ աղբիւր էր։ Եւ այն հայերը, որոնք համաձայն էին Կոլոտի հետ, հարցը հեշտ վճռեցին, հրաւիրելով նրան Կ. Պօլսի պատրիարք դառնալ և անձամբ բաժանել Երուսաղէմի պատրիարքութիւնը Կ. Պօլսից։ Յովհաննէս Կոլոտ պատրիարք է դառնում 1715 թուականին և իսկոյն յայտարարում է իր ընկերակից Գրիգոր վարդապետին Երուսաղէմի պատրիարք։

Գրիգորը Կ. Պօլիս է գնում 1717-ին և

մնում է այդտեղ չորս տարի։ Երուսաղէմի «լեռնացած» պարտքերի վճարումը հնարաւոր դարձնելու համար նա դիմում է մի այսպիսի միջոցի։ Իր վզին երկաթէ շղթայ անցկացնելով, նա կանգնում է եկեղեցիների դռների առջև և ողորմութիւն է խնդրում։ Այդ պատճառով էլ նա ստացել է Շղթայակիր անունը։ Տպաւորութիւնը ահագին էր· շղթայակիր վարդապետին առատ նուէրներ են տալիս, կանայք իրանց թանկագին իրերը ու գոհարներն էին բերում. Կոլոտը աջակցում էր Գրիգորին և չորս տարուայ ընթացքում այնքան դրամ հաւաքվեց, որ կարելի էր Երուսաղէմի պարտքերը եթէ ոչ լիովին վճարել, գոնէ շատ թեթեւացնել։ Գրիգորը գնաց Երուսաղէմ և այնտեղ մեծ եռանդով ձեռք զարկեց բարեկարգութեան գործին· մի կերպ կարգադրելով պարտքերի հարցը, նա սկսեց մաքրել այն աւազականոցը, որ կազմվել էր Քրիստոսի գերեզմանի կողքին և ամօթ ու խայտառակութիւն էր բերում հայոց ազգին։

Պակաս չէին և Յովհաննէս Կոլոտի բարեկարգութիւնները Կ. Պոլսում։ Ամենից շատ Կոլոտի պատրիարքութիւնը նշանաւոր էր այն կողմից, որ երկարատև էր։ Մինչդեռ պատրիարքները, ինչպէս տեսանք, այս կամ այն ազդեցիկ խմբի խաղալիքներն էին, շատ անգամ նոյն իսկ մի տարի էլ չէին կարողանում պահվել իրանց պաշտօնում և պատրիարք տապալելն ու նորը նստեցնելը մի բաժակ ջուր խմելու չափ հեշտացել էր,—Յով-

հաննէսը պատրիարք մնաց մինչև իր մահը, մօտ 26 տարի։ Վաղուց անօրինակ դարձած այդ հանգամանքը նախ և առաջ մի վկայութիւն է Յովհաննէսի վարչական ընդունակութիւնների մասին, և երկրորդ՝ Կ. Պոլսի հայերի համար խաղաղացման և առաջադիմութեան մի համեմատաբար զգալի նշան կարող է համարվել։ Իբրև ուսումնասէր մարդ՝ Կոլոտը սկզբից և եթ կրթական գործի մասին հոգ տարաւ և բաց արեց Կ. Պոլսում առաջին հայ բարեկարգ դպրոցը։ Զանազան կողմերից աշակերտներ հաւաքվեցան. ինքը, պատրիարքն էլ, ուսուցչութիւն էր անում. բացի նրանից, ուսուցիչ էր և Ղուկաս վարդապետ Խարբերդցին, որ ժամանակակից հայ վանականների մէջ մի զարմանալի բացառութիւն էր կազմում. նա եղել էր Վենետիկում, ուր լաւ ուսումնասիրել էր լատինական և իտալական լեզուները և սաստիկ գրասէր մարդ էր։

Այսպէս ահա Ամրդոլուի վանքի հին դպրոցը, Կոլոտի միջոցով, շարունակվում է Կ. Պոլսում, բայց աւելի բարեկարգ դրութեամբ։ Ղուկաս վարդապետը թարգմանութիւնների մի երկար շարք է սկսում լատիներէնից և իտալերէնից. նշանաւոր է, որ այդ գործի մէջ նրա աշխատակիցներն են Կոլոտի դպրոցի աշակերտները։ Թէև այդ բոլոր թարգմանութիւնները կրօնական բովանդակութիւն ունէին և անտիպ մնացին, բայց և այնպէս, այն հանգամանքը, որ թարգմանութիւններ են

կատարվում եւրոպական լեզուներից, առաջադի-մական մի նշանաւոր քայլ է Կ. Պոլսում. նա ցոյց է տալիս որ նոյն, սահմանափակ հորիզոնը փոքր ինչ ընդարձակվել է սկսում Կ. Պոլսի հայ գրա-գէտների առաջ։ Այդ գրագէտները տրտնջում էին Ղուկաս վարդապետի ձեռնարկութեան դէմ. նը-րանք սրբապղծութիւն էին համարում եւրոպական գրքեր թարգմանելը, քանի որ եւրոպացիները պատ-կանում էին մի եկեղեցու, որը հերձուածող է հա-մարում հայոց եկեղեցին։ Բայց Կոլոտը եւ նրա կողմնակիցները հակառակ էին այդ տեսակ դա-տողութեան։ Եթէ լատինական գրուածքների մէջ կան մի քանիսը, որոնց չէ ընդունում հայոց եկե-ղեցին, դա չէ նշանակում, թէ պէտք է արհամար-հել եւ անտես անել ամբողջ լատինական գրականու-թիւնը, ասում էին նրանք *)։

Շնորհիւ այսպիսի, համեմատաբար, լայն հայեացքների, բայց մանաւանդ այն հոգացողու-թիւնների, որոնց մէջ դրված էր Կ. Պոլսի դըպ-րոցը, Կոլոտի հիմնած կրթական հաստատութիւնը բաւական նշանաւոր դեր կատարեց իր ժամա-նակին, պատրաստելով շատ հոգեւորականներ, ո-րոնք համեմատաբար հմուտ ու զարգացած էին, ունէին նոյն իսկ մատենագրելու շնորհք։ Այնպէս որ Կոլոտի պատրիարքութիւնը համարվում է մի

*) Հաննա վարդապետ—«Գիրք պատմութեան Երու-սաղէմի», Կ. Պոլիս, 1734, եր. 175—179։

շրջան, երբ սկսվում է Կ. Պոլսի հայերի կրթա-կան եւ գրական զարգացումը։ Եւ դա միանգամայն ճիշտ է. բացի այսպիսի մի դպրոցի յառաջու-թիւնից, Կոլոտի կառավարութեան շրջան է կազ-մում եւ այն ծաղկած դրութիւնը, որին հասաւ տպագրութիւնը Կ. Պոլսում։

Մինչեւ Կոլոտի պատրիարքութիւնը եղած տպարաններից մենք յիշել ենք Լիվօրնօից փոխա-դրած Էջմիածնի տպարանը։ Դարի սկզբից, որքան թոյլ էին տալիս ժամանակի տխուր հանգամանք-ները, լոյս էին տեսնում տպագրութիւններ, որոնք ցոյց էին տալիս, թէ Ամստերդամի, Մարսէլի եւ Վենետիկի մէջ անցած դարում գործ դրած ջան-քերը զուր չեն կորել։ Դրա փայլուն ապացոյցներից մէկը կարող է համարվել 1705 թուին Կ. Պոլսի Բէկօղլի թաղում տպագրված Աստուածաշունչը։ Տպագրողն է ոմն Պետրոս Լաղինացի, որ իրան անուանում է Ոսկան վարդապետի աշակերտ։ Այդ Պետրոսը, ինչպէս երեւում է, տեսած է եղել Ոսկանի տպարանի մասը. նրա Աստուածաշունչը պատկերազարդ է, տպված Ոսկանեան մանր տա-ռերով եւ ներկայացնում է Ոսկանի Աստուածաշնչի պատճէնը, այն զանազանութեամբ միայն, որ Ոսկանի տպագրութիւնը գեղեցիկ ու մաքուր է, խոշոր տառերով, մինչդեռ Կ. Պոլսի տպագրութիւնը շատ ստոր է արուեստի կողմից։ Թէեւ այդպէս, Պետրոսի տպագրութիւնը արդէն մեծ առաջադի-մութեան նշան է Կ. Պոլսի համար։

Ոսկանի ազգականը միայն այդ տպագրութիւնն է արել Կ. Պօլսում։ Նրանից յետոյ նշանաւոր տպագրիչներ են հանդիսանում Գրիգոր Մարզուանցին, որ առանց ուսուցչի և ղեկավարի նոր տեսակ տառեր է փորագրում և տպարան հիմնում, ապա Աստուածատուր դպիրը։ Գրիգորը, ինչպէս ասացինք, Ամրդօլուի դպրոցի պտուղներից էր. տասն և մէկ տարի չարչարվելով, նա կարողացաւ տպագրել առաջին «Ցայսմաւուրքը» (1706 թ.), ընկերանալով մի քանի մարդկանց հետ։ Բայց այդ ընկերները խաբեցին նրան, խլեցին բոլոր տպագրած օրինակները. թէև այդքան զրկված ու կողոպտված, Գրիգորը չը յուսահատվեց և պահպանեց իր գործարանը։ Ցովհաննէս Կոլոտի ժամանակ աւելացան նաև Սարգսի, Բարսեղի և Աբրահամի տպարանները։ Անկասկած, ինքը, պատրիարքը, խրախուսողի, նպաստողի դեր էր կատարում. մի քանի գրքերի մէջ տեսնում ենք նրա գրած յիշատակարանները, որոնցից իմանում ենք, թէ նա շատ մօտ էր տպագրական գործին։ Այդ լուսաւոր հովանաւորութեան ենք պարտական, որ Կոլոտի պատրիարքութեան ժամանակ, ուրեմն մօտ 26 տարվայ ընթացքում, Կ. Պօլսի հայ տպարանները լոյս հանեցին աւելի քան 70 հատ գիրք։

Տպագրական այդ հարստութեան նշանակութիւնը հասկանալու համար պէտք է մի թեթև համեմատութիւն դնել հարկատու ստրուկների

դիրքում գտնվող հայերի և նրանց գոռոզ տէր թիւրքերի մէջ։ Միայն 1726 թուականին էր, երբ Կ. Պօլսում բացվեց առաջին թիւրք տպարանը, այն էլ ինչ դժուարութիւններով։ Թիւրքաց մի դեսպանութիւն, որ ուղարկված էր ֆրանսիական թագաւորի մօտ, Պարիզում տեսնում է թէ ինչպէս են գրքեր տպվում. դեսպանը և նրա որդին սաստիկ զարմանում են և տուն վերադառնալով, «ֆրէնկների» երկրում տեսած հրաշքի մասին պատմում են մահմեդականութիւն ընդունած մի ունգարացու, որ շատ գրասէր մարդ էր։ Ունգարացին մի ամբողջ չարադրութիւն է գրում տպագրութեան մեծ օգուտների մասին և ներկայացնում է մեծ վէզիրին։ Երկար ժամանակ այդ չարադրութիւնը ձեռքից ձեռք է անցնում թիւրքական բարձր շրջաններում, երկար ժամանակ խօսում, վիճում են, թէ ինչ անեն և վերջապէս չէյխ-իւլ-իսլամը տալիս է ֆէթվա, թէ կարելի է գրքերը տպագրել, միայն թէ դրանք կրօնական գրքեր չը լինեն։ Բացված տպարանը գոյութիւն է պահպանում 28 տարի, տպագրում է 18 գիրք, յետոյ փակվում է, որովհետև վարպետներ չը կային։ Քսան տարվայ ընդմիջումից յետոյ նորից բացվում է տպարան 1784 թւին, բայց տպագրած գրքերի թիւը դարձեալ շատ աննշան էր *)։ Ֆանատիկոս, աւանդապահ

*) Коршъ—„Всеобщая Исторія Литературы“, հատ. IV եր. 517.

թիւրքերը լուսաւորութեան, կուլտուրական զարգացման գործում միշտ յետ էին մնում իրանց հպատակ քրիստոնեաներից. և աչքառու, առաջադիմող ռայեան հէնց այդ պատճառով ահեղ ցընցումներ էր պատրաստում այդ անշարժ և փտող պետութեան համար...

Կ. Պօլսի հայերէն տպագրութիւնների ընդհանուր բնաւորութեան մասին մենք արդէն խօսել ենք. դրանք ամենամեծ մասով կրօնական—եկեղեցական գրքեր են։ Նշանաւոր է այն հանգամանքը, որ Կ. Պօլիսը հետզհետէ տպագրութեամբ լոյս է հանում հայոց հին մատենագրութեան յիշատակարանները։ Բայցի Ագաթանգեղոսի պատմութիւնից, տպագրվեցան՝ Զենոբ Գլակը 1719-ին Կոլոտի հրատարակութեամբ, տասներորդ դարի հեղինակ Մեսրոպ Երէց 1737-ին, ինչպէս նաև Գրիգոր Լուսաւորչին վերագրվող «Յաճախապատումը», Ներսէս Շնորհալու «Հանելուկները»։ Կ. Պօլսի տպագրութիւն է համարվում և 1730 թուականին լոյս տեսած Փաւստոս Բիւզանդը, չորրորդ դարի հայոց պատմութեան այս նշանաւոր աղբիւրը, որ մի և նոյն ժամանակ մեր գրականութեան պատմութեան մէջ մի շատ խոշոր, շատ ինքնուրոյն, համարեա նմանը չունեցող գործ է։

Չորրորդ դարը մի շատ նշանաւոր ժամանակամիջոց է ընդհանուր պատմութեան մէջ, իբրև մի շրջան, երբ վերջնական կազմակերպութիւն է ստանում քրիստոնէական եկեղեցին։ Հայաստանի

համար այդ դարը աւելի ևս նշանաւոր է։ Այստեղ տեղի ունէին երկու առաջնակարգ մեծ երևոյթներ. մի կողմից հետզհետէ հաստատվում էր քրիստոնէութիւնը, ինչպէս միւս տեղերում, զարգանում, պատրաստվում էր եկեղեցական դասակարգը, իսկ միւս կողմից գնալով հալվում, մաշվում էր Արշակունեաց թագաւորութիւնը և Հայաստանը քաղաքական անկախութեան կողմից ոչնչութեան էր հասնում, դառնալով պարսկական և յունական ազդեցութիւնների, փոխադարձ մրցութիւնների ասպարէզ։ Փաւստոսի պատմութիւնը մեզ ներկայացնում է այդ վերին աստիճանի հետաքրքրական ժամանակների բաւական մանրամասն նկարագիրը։ Մեր աչքի առջև անցնում է պատմական մի աղմկալի կեանք. մենք տեսնում ենք թէ ինչպէս է եկեղեցական իշխանութիւնը ահագին ոյժ ձեռք բերում, տիրապետող նշանակութիւն ստանում, հետզհետէ յետ մղելով թագաւորական իշխանութիւնը, երկրորդական դիրք յատկացնելով նրան. Գրիգոր Լուսաւորչի եռանդոտ, ընդունակ յաջորդները հաստատում են մի կղերական ժառանգական միապետութիւն. քաջ ու աներկիւղ են նրանք, չեն քաշվում նոյն իսկ հայոց թագաւորների հետ ընդհարվելուց, մինչդեռ Արշակունիները թուլամորթ են, անբարոյական, գահի իրաւունքները պաշտպանել չը գիտեն։ Եւ քաղաքական անկախութեան գաղափարը անդադար տանուլ է լինում, կորցնում իր ժողովրդականութիւնը, խա-

ղակք գտնում ուժեղների ձեռքին։ Թէև Փաւստոսը իբրև պատմագիր չափազանց միակողմանի է, չափազանց տենդենցիօզ, որովհետև պաշտպանում է կղերական կուսակցութեան և ամբողջապէս նուիրված Լուսաւորչի տոհմի շահերին, թէև նա ոչինչ ջանք չէ խնայում մի կողմը փառաբանելու եւ միւս կողմը վատաբանելու համար, բայց և այնպէս, նրա նկարագրութիւնների մէջ շատ հեշտ է պարզել, մերկացնել պատմական ճիշտ իրողութիւնները։ Այստեղ մենք գտնում ենք այն մաքառումների արձագանքները, որոնք գոյութիւն ունէին եկեղեցական և աշխարհական իշխանութիւնների մէջ. այստեղ մենք տեսնում ենք թէ ինչպէս նոյն իսկ փոքր ի շատէ բարեխիղճ Արշակունի թագաւորը անկարող է լինում սանձահարել կղերականների անչափ ձգտումները, ազատվել կղերական խնամակալութիւնից և կարգաւորել երկրի գործերը այնպէս, ինչպէս պահանջում էին պետութեան շահերը։ Մի խօսքով, այդ պատմագրութեան մէջ հանդէս է հանված Արշակունեաց հարստութեան երկարատև, ցաւալի հոգեվարքը։ Եւ որովհետև Արշակունիներից յետոյ հայերը երբեք չը կարողացան մի համազգային, Հայաստանի բոլոր կողմերի համար ընդհանուր թագաւորութիւն հիմնել և պահպանել, ուստի հասկանալի է, թէ որքան մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Փաւստոս Բիւզանդը։

Բացի այս բոլորից, Փաւստոսը շատ նշանա-

ւոր է և իբրև մի ազգային վիպասանութիւն, հիւսված աւանդութիւններից, դիւցազնական երգերից։ Հայոց ոչ մի ուրիշ պատմագիր այնքան հետաքրքրական մանրամասնութիւններ չէ հաղորդել մեր հին ներքին կեանքից, նիստ ու կացից, ինչպէս Փաւստոսը. ոչ ոք նրա պէս օգտակար չատախօսութիւնների մէջ չէ ընկել, չատախօսութիւններ, որոնք թէև անպաճոյճ են և անմշակ, բայց հիւթալից և իրական փաստեր են պարունակում իրանց մէջ։ Մի և նոյն ժամանակ չը կայ և մի այնպիսի հայ մատենագիր, որ Փաւստոսի ճակատագիրն ունեցած լինի։ Հինգերորդ դարից նա հայոց գրականութեան խորթ զաւակ էր նկատված և հեղինակութիւն չէր վայելում. մի տեսակ ատելութիւն էր զգացվում դէպի այդ հեղինակը, իբրև դէպի մի անհարազատ, օտար, չարամիտ հեղինակ։ Այդ տեսակ վերաբերմունքը գոյութիւն ունէր և XVIII դարում. միայն նոր ժամանակներում, XIX դարի երկրորդ կէսում, փոխվեց այդ վերաբերմունքը և Փաւստոսը մեծ նշանակութիւն ստացաւ պատմագրութեան մէջ։

Յովհաննէս Կոլոտը, հին գրականութեան մնացորդների տպագրութեան հովանաւոր հանդիսանալով, իր ծախսով տպել տուեց և Դաւիթ Անյաղթի «Սահմանաց գիրք» աշխատութիւնը։ Յայտնի է որ հինգերորդ դարի հայ գրական գործիչների թւում համարվում է և Դաւիթ Անյաղթը, որ, եթէ հաւատալու լինինք ազգային աւանդութիւն-

ներին, հայոց միակ և ամենագիտուն փիլիսոփան էր, Թարգմանեց յունաց փիլիսոփաների (Արիստոտէլ, Պորփիւր) գրուածքները, փիլիսոփայական լեզու ստեղծեց մեզանում: Նոյն աւանդութիւնները պատմում են, որ Դաւիթը, Յունաստանից վերադառնալուց յետոյ, ոչինչ յարգանք ու պատիւ չը գտաւ Հայաստանում, թէև Աթէնքում և Բիւզանդիայում բաւական յայտնի անուն ունէր. հայերը այն աստիճան վատ, ամարդի ընդունելութիւն ցոյց տուին այդ զարգացած, փիլիսոփայ մարդուն, որ նա հարկադրված եղաւ մինչև Վրաստան և այնտեղ սպասել իր մահվան: Այսպէս է եղել հայերի ազգութեան դէմ գնացող ամէն մի հայ գիտնականի ճակատագիրը... «Սահմանաց գիրքը» համարվում է Դաւթի ինքնուրոյն գրուածքը. դա մի գիտնական վիճաբանութիւն էր, ուղղած յունաց փիլիսոփաների սկեպտիկ դպրոցի դէմ, որի հիմնադիրն էր Պիրրոն և որ մերժում էր փիլիսոփայական խոհերի և մտածումների օգուտը, քանի որ դրանցով մի դրական, անուրանալի ճշմարտութեան հասնել չէ կարելի: Դաւիթը հերքում է տարակուսանքների, բացասութիւնների այդ վարդապետութիւնը և ապացուցանում է փիլիսոփայութեան ճշմարտութիւնն ու կարևորութիւնը: Բայց XVIII դարի հայ ընթերցողը հազիւ թէ կարողանար հասկանալ Դաւիթ Անյաղթի դժուար, յունաբանութիւններով լի լեզուն, որ աղճատված էլ էր դարերի ընթացքում, արտագրողների ձեռ-

քով: Եւ, երևի, Կոլոտը այդ գիրքը տպագրել տուեց աւելի իր աշակերտների համար, որոնց աւանդվում էր և հին փիլիսոփայութիւնը:

Առանց ուշադրութեան չը մնացին և կրօնական բանաստեղծութիւնները: 1721 թւին տըպվեց Առաքել Սիւնեցու «Ադամգիրքը», իսկ 1714-ին—Յովհաննէս Թլկուրանցու «Արարածքը»: Երկուսն էլ մի և նոյն բիբլիական նիւթի մասին են ճառում—Ադամի և աշխարհի ստեղծագործութեան: Բայց այդ հայ վարդապետներից ոչ մէկն էլ Միլտոնի տաղանդի հեռաւոր նմանութիւնն անգամ չունէր և նրանց պօէմաները միայն տեղ են գրաւում մեր անցեալի գրականութեան մէջ...

Դիմելով այժմ Կոլոտի ժամանակակից գրողներին, մենք այստեղ տեսնում ենք աղքատ, տափակ ու նեղլիկ իրականութիւնը: Յիշենք ամենից առաջ այն տաղերը, որոնք տպագրվեցան 1734 թւին. յիշում ենք լոկ այն պատճառով, որ այդ տաղերը յօրինել են Կոլոտի աշակերտները: Տաղեր է գրել ու մի քանի անգամ հրատարակել և Բաղդասար դպիրը, որի ով լինելը յայտնեցինք վերևում: Բայց Բաղդասարը գոնէ միայն տափակ ոտանաւորներ չէ գրել, նա յօրինել է և «Քերականութիւն», բաղկացած երկու հատորից, որոնցից առաջինը լոյս է տեսել 1738 թւին և որի առաջին երեսներում հանդիպում ենք այս խրատին.

Ո՛վ դու մանուկ, եթէ զայս արհեստ ուսանիս,
Եկեղեցւոյ իբր զծաղիկ բուսանիս:

Աւելի ուշադրաւ հեղինակ է Յովհաննէս Հաննա վարդապետը, որ գրել է Երուսաղէմի ս. տեղերի նկարագրութիւնը և իր ժամանակի եղելութիւնները ու գրել է այդ բոլորը «Գիրք պատմութեան սրբոյ և մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս» վերնագրի տակ։ Այս գրքից մենք մի քանի անգամ առիթ ունեցանք վկայութիւններ բերելու։ Հաննա վարդապետը առանձին աչքի ընկնող մատենագրական ընդունակութիւն չունի. լինելով Երուսաղէմի միաբան, նա շատ սրտառուչ կերպով, իբրև հարստահարված, տանջված մարդ, նկարագրել է Կ. Պոլսի փչացած հոգևորականութեան այն զզուելի արարքները, որոնց զոհ էր դարձել Երուսաղէմի հայոց վանքը XVII դարի վերջերում և XVIII-ի սկզբում, ինչպէս նաև այն բարեկարգութիւնները, որոնք սկսվեցին այնտեղ Յովհաննէս Կոլոտի և Գրիգոր Շղթայակրի ձեռքով։ Երուսաղէմի ահռելի պարտքերի վճարումը հնարաւոր էր միայն առատ նուիրատուութիւնների միջոցով և, ինչպէս տեսանք, Գրիգոր պատրիարքը, մարդկանց սիրտը շարժելու համար, շղթայ անցկացրեց իր վզին։ Նոյն այդ նպատակով էլ Հաննա վարդապետը գրել է իր պատմութիւնը։ Երուսաղէմի նուիրական վայրերի նկարագրութեամբ բարեպաշտական եռանդ վառելով ընթերցողների մէջ, նա խորհուրդ է տալիս հոգու փրկութիւն որոնել ուխտագնացութեան կամ գոնէ պարզ նուէրներ ուղարկելու մէջ։ Թէև գրուածքը

այդքան մասնաւոր նպատակ ունի և անչափ ջատագովութիւններ է պարունակում իր մէջ, բայց հետաքրքրական է իբրև անկեղծ սրտի թելադրած մի յիշատակարան, որի մէջ արձանագրած են հայ անարժան հոգևորականութեան աւազակային քաջագործութիւնները։ Հաննայի այս աշխատութիւնը լաւ ընդունելութեան արժանացաւ. նա երեք տպագրութիւն ունեցաւ՝ 1727-ին, 1763-ին և 1782-ին։

Նախ քան միւս հեղինակների մասին խօսելը, պէտք է իմանալ, թէ Յովհաննէս Կոլոտը ինչպէս էր վերաբերվում դէպի իր ժամանակի առաջնակարգ, դժուար ու ցաւալի խռովութիւնը, այն է կաթոլիկ և լուսաւորչական հայերի վէճերն ու ընդհարումները։ Կոլոտը իր երկար պաշտօնավարութեան միջոցին, ի հարկէ, չը հետևեց Աւետիք պատրիարքի և Յովհաննէս Զմիւռնացու քայլերին։ Իբրև ուսումնասէր, հասկացող մարդ, նա գիտէր, որ կրօնական հարցերի մէջ ծեծից ու վայրենութիւնից աւելի զօրաւոր է համոզումը. և այդ պատճառով էլ նրա ժամանակ լոյս են տեսնում մի շարք վիճաբանական գրուածքներ, որոնց նպատակն է ապացուցանել հայոց եկեղեցու ուղղափառութիւնը։ Կաթոլիկ կղերի դէմ մարտնչող հեղինակների շարքում մենք ամենից առաջ պիտի յիշատակենք Կոլոտի աշակերտ Յակոբ վարդապետ Նալեանին, որ նրա մահից յետոյ դարձաւ Երուսաղէմի և Կ. Պոլսի պատրիարք։ Նալեան 1733 թուականին հրատարակեց իր «Վէմ Հաւատոյ»

չարաչարութիւնը։ Նոյն տարին տպուեց Ստամբոլցի Գէորգ Մխլէիմ վարդապետի «Վիճաբանութիւնք» գիրքը։ Փակագծի մէջ նկատենք, որ այս վարդապետը վեց տարի ուսում էր առել Պարիզի մէջ, լաւ տեղեակ էր յունարէն, լատիներէն և ֆրանսերէն լեզուներին, բայց միայն կրօնական վիճաբանութիւններ հեղինակելու ախորժակն ու յօժարութիւնն ունէր։ Վերջապէս Ղազար Ջահկեցի վարդապետը (յետոյ կաթողիկոս) 1735-ին էջմիածնի ծախսով Կ. Պօլսում տպագրել տուեց իր «Դրախտ ցանկալի» մեծ աշխատութիւնը։ Աւելի մանրամասն խօսել այդ հեղինակութիւնների մասին միանգամայն անօգուտ ենք համարում։ Հայոց գրականութիւնը չատ և չատ այդպիսի գրուածքներ ունէր սկսած այն ժամանակներից, երբ փառամոլ, ինտրիգան եկեղեցականները բաժան-բաժան արին Քրիստոսի եկեղեցին «տիեզերական» կոչված այն ժողովների միջոցով, ուր երկրի գործերը, աչքով տեսանելի երևոյթներն անգամ հասկանալու պատրաստութիւն և զարգացում չունեցող մարդիկ հաւաքվում էին որոշելու երկնքի գործերը, Աստուծու յատկութիւնները։ Ո՛րքան եռանդ, ո՛րքան աշխատանք է թափվել այդպիսի գրքեր յօրինելու համար. կասենք աւելին—արեան և արտասուքի քանի-քանի գետեր են թափվել այդ վէճերը լուծելու համար։ Եւ սակայն, ապարդիւն...

Նկատենք այստեղ դաւանական բանակռւի մի արդիւնքը։ Ժողովրդին քրիստոնէական հաւա-

տի սկզբունքները մատչելի դարձնելու համար Մխիթար Սեբաստացին 1727 թւին տպագրել էր Վենետիկում մի աշխարհաբար «Քրիստոնէական»։ Հակառակորդից օրինակ վերցնելով, Յովհաննէս Կոլոտը պատուիրեց Նալեանին գրել աշխարհաբար լեզուով այդպիսի մի գիրք։ Եւ Նալեանի աշխարհաբար «Քրիստոնէականը» լոյս տեսաւ Կ. Պօլսում 1737-ին։ Այդ երկու աշխատութիւնները մենք նշանակում ենք յատկապէս իբրև աշխարհաբար գրքեր, որովհետև երբէք չենք մոռանում, որ ունենալով գրականութիւն, հարուստ տպագրութիւն, մենք չունենք ժողովրդական, այսինքն հանրամատչելի գրականութիւն...

Սակայն կարողացա՞ւ Կոլոտ պատրիարքը փակել կաթոլիկ և լուսաւորչական հայերի թշնամութիւններն ու հակառակութիւնները այդ վիճաբանական գրքերի մէջ. կարողացա՞ւ հանդարտեցնել կրքերը, վերջ տալ եղբայրասպան պատերազմին։—Ո՛չ։ Նրա ժամանակ էլ հալածանքներ յարուցվեցան թէ Կ. Պօլսում և թէ գաւառներում. մարդիկ բանտերը նետվեցին, ահագին տուգանքների ենթարկվեցին։ Բայց կարելի է գոնէ այս անգամ հանդիստ խղճով խոստովանել, որ հայոց պատրիարքը չէր այդ դժբախտութիւնների պատճառը։ Յովհաննէս Կոլոտը սկզբից և եթ խաղաղասիրութեան և հաշտութեան ճանապարհը բռնեց. նա սիրով համոզում էր կաթոլիկ հայերին

գնալ հայոց եկեղեցիները, բարեկամական բանակցութիւններ էր վարում լատին եպիսկոպոսի հետ և կարողանում էր զսպել իրան շրջապատող մարդկանց, որոնք ստիպում էին նրան խիստ, կտրուկ միջոցների դիմել։ Բայց լատին եպիսկոպոսը չունէր հայոց պատրիարքի անկեղծութիւնն ու ուղղամտութիւնը։ Յենվելով ֆրանսիական և լեհական դեսպանների վրա, նա աշխատում էր խույս տալ խաղաղացնող միջոցներից և կաթօլիկ հայերի համար առանձին եկեղեցի և առանձին պատրիարքութիւն հիմնել։ Այդ պատճառով խռովութիւնները չարունակվեցան և Կոլոտը մի անգամ ստիպված եղաւ դիմել Թիւրք կառավարութեան, խնդրելով նրա օգնութիւնը։

Բայց այդ միջոցին նա այլ ևս չը դիմեց, երբ կաթօլիկների հակառակութիւնը մի քանի ժամանակից յետոյ դարձեալ գրգռեց հայերին իրար դէմ։ Կոլոտը ամեն միջոց գործ էր դնում՝ խաղաղութիւն հաստատելու համար։ Նա կատարեց լատին եպիսկոպոսի և ֆրանսիական դեսպան Վիլնէօվի բոլոր առաջարկութիւնները։ Շատ էր աշխատում մանաւանդ դեսպանը, և հայոց պատրիարքը անդադար դիմումներ էր անում նրան։ 1726 թւին Կ. Պօլսում ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց և օծուեց Կարապետ Ուլնեցին, որ նախ քան էջմիածին ուղևորվելը՝ իր ջանքերը միացրեց Կոլոտի ջանքերին խաղաղութիւն և սէր հաստատելու համար։ Սակայն մեռած չէին ե-

զուիտները, և լատին եպիսկոպոսը այնքան լայն սրտի տէր չէր, որ թոյլ տար կաթօլիկ հայերին մտնել լուսաւորչականների եկեղեցիները։ Բանը նոյն իսկ այն տեղին հասաւ, որ Կոլոտը դաւանութեան թուղթ ուղարկեց լատին եպիսկոպոսին. լրացրեց այդ թուղթը այնպէս, ինչպէս ուզում էր եպիսկոպոսը և ասաց, թէ հայերի դաւանութիւնը նոյնն է, ինչ և լատինականը և տարբերութիւնը միայն բառերի մէջ է։ Դարձեալ անօգուտ։ Դեսպան Վիլնէօվը ոչինչ չը կարողացաւ անել՝ հաշտութեան համար. լատին կղերը, հայոց պատրիարքի այդ պատրաստակամութիւնը տեսնելով, ինչպէս միշտ, իր կողմից զիջողութիւն անելու պարտք չը զգաց, այլ, ի հարկէ, պահանջեց, որ Կոլոտը ուղղակի պապին հպատակութիւն յայտնէ։ Այդքան հեռու պատրիարքը չէր կարող գնալ. ժողովուրդն արդէն տրտնջում էր, թէ նա կաթօլիկանում է։ Ինքը, ֆրանսիական դեսպանն էլ, տեսնում էր թէ անհաշտութեան գլխաւոր պատճառն ով է, ուստի և այնքան բարեկամութիւն էր պահպանում Կոլոտի հետ, որ նրա թախանձանքին զիջանելով, միջնորդեց Բ. Դրան առջև և կարողացաւ Երուսաղէմի ս. Յակոբի վանքը, որ խլել էին յոյները, նորից հայերի վրա հաստատել։ Այդ առիթով Կ. Պօլիս եկաւ Գրիգոր Շղթայակիրը, որ նոյնպէս ամեն ջանք գործ էր դնում կրօնական երկպառակութիւնները վերացնելու համար։ Բայց այս պատկառելի հոգևորականի ջանքերն էլ իզուր

անցան։ Լատին կղերը ոչ մի զիջողութիւն չարաւ։

1741 թուականի փետրվարի 13-ին վախճանվեց Յովհաննէս Կոլոտը։ Նրա երկարատև պատրիարքութիւնը խոր հետքեր թողեց. բարեկարգութեան, գիտութեան սիրահար մարդ, նա թողեց բարեկարգած պատրիարքարան և մի խումբ աշակերտներ, որոնք պատրաստ էին շարունակել նրա քաղաքականութիւնը։ Եւ շարունակեցին էլ։ Բայց մենք առայժմ թողնենք Կ. Պոլիսը և տեղափոխվենք միւս գրական խոշոր կենտրոնը—Վենետիկ։

IV

Կ. Պոլսի գրական հրապարակում մենք տեսանք գլխաւորապէս հայկական հին գրականութիւնը, որ վերակենդանանում է տպագրական մամուլի միջոցով։ Անցեալից մնացած երկերի հետ մի-մի լոյս են գալիս ժամանակակից հեղինակներ, որոնք, սակայն, թոյլ մտքի տէր են, ինքնուրոյնութիւն, ստեղծագործական ընդունակութիւն չունին. նրանք պտոյտ են գալիս անցեալի թողած ժառանգութեան սահմաններում. արծարծում են կրօնական մտածողութիւնները, աստուածաբանական դատողութիւնները։ Կ. Պոլիսը հայկական իրականութիւնն է նեղ, սահմանափակ, որ կերակրվում է սեփական աղքատիկ հիւթերով և չունի իր առջև հանրամարդկային հորիզոններ։

Ուրիշ աշխարհ է ներկայացնում Վենետիկի գրական հրապարակը (մենք, ի հարկէ, միայն հայոց գրականութիւնն ունինք ի նկատի)։ XVII դարի վերջից այդտեղ մնացել է Անտոն Բորտոլիի տպարանը, որ շարունակում է հայերէն գրքեր տպագրել։ Եթէ ի նկատի ունենանք, որ մինչև XVIII դարի կէսը Վենետիկում լոյս են տեսել մօտ 85 հայերէն գրքեր և այդ քանակութիւնից միայն մի 7—10 գրքեր են տպված ուրիշ իտալացիների տպարաններում, այն ժամանակ պարզ կը լինի այն դերը, որ կատարել է մեզ համար Բորտոլիի տպարանը։ Վենետիկը, շնորհիւ այդ տպարանի, տալիս էր հայերին ոչ միայն մեծ գրքերի, այլ և մաքուր ու գեղեցիկ տպագրութիւնների հասկացողութիւնը։ Եթէ վենետիկեան հրատարակութիւնները աւելի ընթերցողներ էին գըտնում, քան ուրիշ տեղերինը, պատճառներից մէկը, անշուշտ, պէտք է համարել գեղեցիկ արտաքինը. այդ ժամանակներից են սկսվում և վենետիկեան ոսկեզօծ կազմերը, որոնք գնալով աւելի և աւելի գեղեցկանում են։

Հայկական մամուլին Վենետիկում նիւթ տուողը գլխաւորապէս թարգմանական գրականութիւնն է։ Թարգմանվում են գրքեր, ի հարկէ, եւրոպական լեզուներից. լատիներէնից, իտալերէնից, ֆրանսերէնից. նոյն իսկ սպանիական լեզունից էլ պաշար է տալիս հայերէն գրականութեանը XVIII դապարապողներին։ Եւ Վենետիկը, գոնէ XVIII դա-

րում, Կ. Պոլսի հակակշիռն է ներկայացնում իբրև թարգմանչական կենտրոն։ Մինչդեռ Կ. Պոլսում հայ ինքնուրոյն, հին թէ նոր, միտքն է պահպանվում, Վենետիկը արևմտեան աշխարհի գրքերն է հայացնում։ Բայց ինչն է թարգմանչական եռանդի ամենագլխաւոր դրդիչը։—Կրօնը, միայն նա։ Աշխարհական որ և է գիտութեան հոգս այնքան չէ նեղացնում Ադրիական ծովի ափին գործող մարդկանց, որքան հոգևոր կատարելագործութեան հոգսը։ Ուրեմն, հիմնական յատկութիւններով, ընդհանուր գծերով պոլիս-վենետիկեան գրականութիւնը մի է. թէ այստեղ և թէ այնտեղ—կրօնը, թէ այստեղ և թէ այնտեղ շռայլութիւն չէ համարվում կրօնական գրքերի նոյն իսկ անչափ հարստութիւնը. երկու տեղերում էլ մի և նոյն միամիտ հաւատն է տիրում—իբր թէ հայոց ազգը կրօնական գրքերի մեծ կարօտութիւն ունի, թէ նրան միշտ պակասում են այդ տեսակ գրքեր և ոչ մի կրօնական գրուածք, որ տրվում է նրա ձեռքը, աւելորդ չէ—սկսած ամենապարզ դասագրքից մինչև ամենախրթին, հաստափոր և բազմահատոր հեղինակութիւնները։

Թարգմանութիւնները հետզհետէ նոր, դեռ չը տեսնված գրքեր են աւելացնում, նոր-նոր անուններ են մտցնում հայոց գրականութեան մէջ։ Երևան են գալիս «Ժամագիրք Աստուածածնի», «Ժամագիրք Լուսաւորչի», «Վարդարան» և այլ այդպիսի կաթօլիկ ծիսարաններ և տօնացոյցներ։

Դրանք, ի հարկէ, նշանակված են հայ կաթօլիկների համար. բայց առատ են ընդհանրապէս ամբողջ ազգի ընթերցանութեան համար նշանակված թարգմանական գրքերն էլ։ Դրանց մէջ առաջին տեղը յատկացրած է աստուածաբանութեան։ Եւ որովհետև կաթօլիկ աշխարհի համար թէ ճրագ, թէ աստղ և թէ հրեշտակային վարդապետ աստուածաբանական հարցերում Թօմա Աքուինացին է, ուստի և հայ թարգմանիչներն ու համառօտողները նրան և նրա հետևողներին են դիմում։ Եւ մենք, առանց չափազանցութիւնների մէջ ընկնելու, կարող ենք ասել, որ տասնութերորդ դարը մեզանում—Թօմա Աքուինացու դարն է։

Դարի սկզբում Վենետիկում գործ են տեսնում զանազան պատահական հրատարակիչներ ու թարգմանիչներ։ Շուտով անուն է հանում Մխիթար Սեբաստացին։ Նրա հետ իրանց գրական աշխատութիւնների քանակութեամբ կանգնած են երկու ուրիշ վարդապետներ—Պետրոս Թիֆլիսեցի և Խաչատուր Էրզրումցի։

Կ. Պոլսից հեռանալուց յետոյ Մխիթարի առաջին հրատարակութիւնը եղաւ Վենետիկում 1715 թուականին, այսինքն ճիշտ այն տարին, երբ նա փախաւ Մեթօնից և աշխատում էր հաստատվել Վենետիկում։ Մխիթարեան միաբանութեան այն շրջանը, որ անցաւ Մեթօնի վանքում, ինչպէս ասացինք, անպտուղ էր գրական գործունէութեան տեսակէտից. և Մխիթարը Վենետիկում

հաստատվելուց յետոյ առաջին ժամանակներում հանդիսանում է աւելի իբրև ուրիշների գործերը հրատարակող, քան հեղինակ կամ թարգմանիչ։ Բայց թէ իբրև հրատարակիչ, թէ իբրև հեղինակ և թէ իբրև թարգմանիչ նա մի և նոյնն էր— վանական ոգով տոգորված մի կղերական։ 1715 թւին նրա հրատարակած գիրքը Թօմա Ակուինացու ուսուցիչ Ալբերտ Մեծի «Աստուածաբանութիւնն» էր։ Այդ գիրքը Մխիթարը հանել էր հնութեան փոշիների տակից. նա թարգմանված էր Նախիջևանի գաւառում դեռ XIV դարի առաջին կէսում, ունիթօրների ձեռքով։ Արտագրողները աղաւաղել, աղճատել էին այդ թարգմանութիւնը, որ առանց այդ էլ ունիթօրների աղաւաղ ու անճոռնի հայերէնով էր կատարված։ Մխիթարը, որքան կարողանում է, ուղղում, կարգի է բերում այդ թարգմանութիւնը, աւելացնում է Ալբերտի կենսագրութիւնը և դժուար իմանալի ու տարակուսական բաների բացատրութիւնը, առաջնորդ ունենալով Թօմա Ակուինացուն, տպագրութեան է տալիս իբրև «մեղրածորան և ամենագով» գիրք, որի վրա ինքն էլ մանկութեան ժամանակ վարժվել է և որը այդ պատճառով էլ շատ սիրում է։ Աւելի հրատարակչին, քան թէ հրատարակութիւնը, բնորոշելու համար, աւելորդ չենք համարում մի քանի մանրամասնութիւններ բերել այս գրքի մասին։

Ալբերտ Մեծի «Համառօտ Աստուածաբանութիւնը» մի ստուար հատոր է, 680 միջադիր երես,

մանր տառերով։ Նա երկար ու բարակ դատողութիւններ է տալիս միջնադարեան սխօլաստիկներին զբաղեցնող դատարկ հարցերի մասին։ Թէ ինչ է նա ասում և մանաւանդ ինչպէս է ասում, այդ մասին մենք բաւականաչափ հասկացողութիւն կարող ենք կազմել, նայելով նրա երեսներից պատահաբար մէկին։ Ահա.

«Յիրաւի համեմատի նեռն սերաստէս օձին։ Որպէս սա ի ծննդոցն, տան՝ օձ դարանակալ. քանզի սերաստէսն՝ է օձ եղջերաւոր, որ նշանակէ զնեռն՝ որ զինեսցի չորիւք եղջերօք, այսինքն խորամանկ յորդորմամբ. սքանչելագործութեամբ. առաւելութեամբ պարգևաց. և խոստութեամբ տանջանացն։ «Ի յարութեան համահաւաքեսցին չորք պատճառք, այսինքն, առնողական, որ է աստուած. նիւթական, որ է հողն. տեսական՝ որ է միաւորութիւն հոգւոյ և մարմնոյ. կատարունական, այսինքն՝ զի ընդունեսցի իւրաքանչիւր ոք զոր ինչ արար մարմնով, եթէ չար և թէ բարի։ «Որպէս ի դատապարտեցեալս է զանազանութիւն մեղաց, այսպէս և զանազանութիւն պատժոց. ուստի մինչ ի մեղքն է յետս դարձումն ի ստեղծողէն, և դարձումն առ փոփոխական բարին, և անկարգութիւն կամաց, որ է ընդդէմ ենթադրութեան բանականին, յիրաւի և պատիժն վասն սոցին զանազանեսցի։ Ուստի վասն յետս դարձման՝ լինիցի զրկումն յաստուածային տեսութենէ, այլ վասն դարձման՝ լինիցի պատիժ նիւթական տոչորման. իսկ վասն անկարգութեան բանին. և կամացն լինիցի պատիժ ընդհանրական՝ որ կայանայ ի պէսպէս նեղութիւնս դժնդակս և յաւիտենականս։ Հուր դժոխոցն՝ ոչ միապէս չարչարեսցէ զամենեսեան. քանզի ի միոյ հրոյ՝ ոմանք առաւել. և ոմանք նուազ չարչարեսցին. ըստ այնմ որ առաւել կամ նուազ մեղանչեցեն»։

Եւ այս բոլորը հալած իւղի տեղ ընդունվում և «մեղրածորան» ճշմարտութիւնների պէս առաջարկվում է՝ Երբ:—Տասնութերորդ դարում… Ակամայ պէտք է բացականչել. «Խեղճ հայ ընթերցող»… Այդ սխօլաստիքական զառանցանքները վաղուց էին լուսաւոր մարդկութեան ձեռքով թաղվել ագիտութեան, նախապաշարմունքների գերեզմանոցում, իսկ մեզ մօտ նոր-նոր էին յարութիւն առնում, տարածվում, մեզ համար Եւրոպայից եկող ձայներ էին: Մխիթարը պատմում է ահագին հրաշքներ՝ դժոխքի կրակների յատկութիւնը այդքան մանրամասն կերպով նկարագրող Ալբերտի մասին: Դա սուրբ է, հրաշագործ է. արքայութիւնից եկած մի կին պատմել է մի վարդապետի՝ թէ Ալբերտը արքայութեան ամենաբարձր տեղումն է գտնվում: Հայ ընթերցողը ինչպէս չը հաւատար, որ ամեն իմաստութիւն ծրարված է այդ սուրբ մարդու գրած աստուածաբանութեան մէջ, ինչպէս հասկանար որ այդ առասպելները յօրինվել են Եւրոպայում դեռ XIII դարում, ագիտութեան և նախապաշարմունքների այն խաւար ժամանակներում: Մխիթարի կենսագրութեան մէջ մենք շատ անգամ հանդիպեցանք հրաշքների և ասացինք, որ դրանց հաւատում էր ոչ միայն նա, այլ և նրա աշակերտները, Եւրոպայում կրթված հոգևորականները: Այդ յատկութիւնը մենք դեռ շատ կը հանդիպենք Մխիթարից

աւելի շատ զարգացած, շատ ընդունակ Մխիթարեանների մօտ…

Նոյն հայ ունիթօրների ձեռքով թարգմանվել էին և «Գիրք Առաքինութեանց» և «Գիրք Մոլութեանց» անունով գրքերը: Մխիթարը դրանց էլ թոյլ չէ տալիս հանգստանալ դարերի փոշուտակ և հրատարակում է 1720—1721 թւականներին: Այն էլ որպիսի հրճուանքով: Ընթերցողներին ուղղած իր խօսքի մէջ նա ասում է. «Ինչպէս որ մէկը իր վաղուց տենչացածը գտնելու համար երկար թափառում է և գտնելուն պէս իսկոյն հրաւիրում է իր սիրելիներին և բարեկամներին, որ իր հրճուանքին կից լինեն, այնպէս էլ ես, գտնելով այս գիրքը և Աստուծու աջողութեամբ լոյս հանելով տպագրութեամբ, հրաւիրում եմ ուսման ծարաւ և առաքինութիւն սիրողների բոլոր դասերը հրճուակից լինել իմ նուաստութեան»: Իսկ թէ որպիսի հրճուանք էին այդ գիւտերը ընթերցողի համար, բաւական է բերել նրանց վերնագիրները. 1) «Առաքինութեանց գիրք…Նորում նախ ընձեռին զեօթանց առաքինութեանց. զհաւատոյ, զյուսոյ և զսիրոյ. զխոհեմութենէ, զողջախոհութենէ, զարիութենէ և զարդարութենէ: Ապա զեօթանց պարգեւաց Ոգւոյ սրբոյ. և վերջապէս զերանութեանց աւետարանականաց»: 2) «Գիրք Մոլութեանց». այսինքն համառօտ համահաւաքումն վարդապետութեանց, զիւրաքանչիւրոյ տեսակաց մոլութեանց. և մանաւանդ զեօթանց գլխաւորաց մեղաց, թէ

վինչ իցեն և որքան խորշելիք։ Ընդ որում և առաւելին ոմանք վարդապետութիւնք զգահգամանէ հնգից արտաքնոց զգայութեանց, և պարզաբանութիւնք զտասանց պատգամաց»։

Բերենք մի երկու օրինակ էլ Մխիթարի «մեղրածորան» հրատարակութիւններից։ 1722 թուականին նա լոյս է հանում «Աղբիւր Բարի» անունով գիրքը, որ լատիներէնից թարգմանել է Պետրոս վարդապետ Թիֆլիսեցի։ Այս վարդապետը, ինչպէս երեւում է, ունեցել է թարգմանչական մեծ ջանասիրութիւն և հմուտ է եղել լատիներէն և իտալերէն լեզուներին։ Բայց երկու հանգամանք համարեա բոլորովին ապարդիւն են դարձրել նրա ջանքերը. նախ՝ որ իբրև Հռոմի դպրոցի աշակերտ, նա ի չարն էր գործ դնում լատինացրած հայերէնը, և երկրորդ՝ թարգմանում էր բացառապէս ամենաթունդ կրօնական գրուածքներ։ Մենք տեսանք, որ դեռ Կ. Պոլսում Մխիթարը հրատարակեց Պետրոս վարդապետի երկու թարգմանութիւնը լատիներէնից։ Վերսկսելով հրատարակչական գործունէութիւնը Վենետիկում, նա դարձեալ դիմեց այդ վարդապետին. 1722 թուականին տպագրեց նրա «Աղբիւր Բարի», իսկ 1731-ին—«Ցարացոյց ապաշխարողաց» թարգմանութիւնները։ Վերջին գրքին Մխիթարը կցեց իր մի ոտանաւորը, որի մէջ համոզում էր ընթերցողին շատ և միշտ կարդալ այդ գրուածքը, որ ցոյց էր տալիս, թէ ինչպէս պէտք է ապաշխարել մեղքերը և թողութիւն գտնել։

Բայց դրանցից՝ Պետրոս վարդապետը ունի և ուրիշ թարգմանութիւններ, որոնցից մի երկուսը յիշատակելու առիթ կունենանք։ Այժմ դիմենք Խաչատուր Երզրումցուն։

Դա նոյն վարդապետն էր, որ չը կամեցաւ Մխիթարի հետ միասին գործել և միաբանութիւն հիմնել։ Մենք գիտենք որ Խաչատուրը ժամանակի ամենազարգացած, գիտուն մարդն էր համարվում։ Կ. Պոլսում իր քարոզչական գործունէութիւնը վերջացնելուց յետոյ, Հռոմի գիտութիւններով բեռնաւորված այդ կղերականը տեղափոխվեց Վենետիկ՝ իր աշխատութիւնները տպագրելու համար։ Իսկ տպագրելու բան նա շատ ունէր։ Օգտվելով Ջուղայեցի Շէհրիմանեանների առատ նիւթական օժանդակութեամբ, նա սկսեց միմեանց ետեւից հատորներ լոյս հանել։

1710 թուականին տպագրվեց նրա «Քարոզգիրքը», երկու հատոր. իսկ 1711-ին «Բովանդակութիւն ամենայն ուսմանց» աշխատութիւնը, նոյնպէս երկու հատոր։ Այն ժամանակվայ մեր կրօնամոլ գրականութեան մէջ այս աշխատութիւնը պէտք է մի փայլուն բացառութիւն համարվի։ Ինքը հեղինակը, այսպէս է դասաւորում իր այդ գործի բովանդակութիւնը.

«Համառօտական իմաստասիրութիւն, յորում պարունակին որք հետևին. այսինքն արուեստք, քերթողութիւն, ճարտասանութիւն, բանաստեղծութիւն և տրամաբանութիւն. բնականաբանութիւն ըստ ամենից իւրոց մասանց.

այսինքն յաղագս մարմնոյ, յաղագս աշխարհի և երկնի, յաղագս ծննդեան և ապականութեան. յաղագս տարերաց, յաղագս անկատար խառնեցելոց, յաղագս տնկոց, յաղագս կենդանեաց, յաղագս մարդոյ, բժշկականութիւն, բարոյականութիւն և քաղաքականութիւն. մաթէմաթիքա, ըստ ամենից իւրոց մասանց. այսինքն թուաբանութիւն, երկրաչափութիւն, աստեղաբաշխութիւն, երաժշտութիւն, ընդհայեցողութիւն, և կշորդաբանութիւն և մեթաֆիզիքայն։

Մենք մի քանի անգամ առիթ ենք ունեցել ցոյց տալու, որ եթէ հայ կաթօլիկ վարդապետները, ուսում ստանալով Եւրոպայում, լեզուներ սովորելով և տարիներ անցկացնելով արեւմտեան մտաւոր կենտրոններում, տալիս էին իրանց ազգին միայն կրօնական վիճաբանութիւններ և եկեղեցական գրքերի թարգմանութիւններ, դրա պատճառը այդ կրօնաւորների անհուն ֆանատիկոսութիւնն էր, խաւար, անզարգացած հոգին, որ միայն մի նեղ սահման էր ճանաչում իր գործունէութեան համար։ Եւ իրաւ կաթօլիկ եկեղեցին, որքան էլ իր շահերի, տիրապետական ձգտումների համար օգտակար համարէր պահել մարդկութիւնը հնութեան խաւարի մէջ, բայց և այնպէս չէր կարող միանգամայն արհամարհել ժամանակի գիտութիւնը, և քիչ չեն այնպիսի կաթօլիկ կրօնաւորներ, որոնք իրանց աքեմին անյարմար զբաղմունք չեն համարել գիտութեամբ պարապելը։ Նոյն իսկ եզուիտական կարգը, որի գլխաւոր նպատակն էր պահպանել և տարածել պապականութեան թագաւորութիւնը աշխարհի վրա, պարտք էր համարում գիտութիւնը

մշակել, և տուել է մի շարք գիտնականներ։ Կաթօլիկ հայ վարդապետներին մնում էր մի քիչ բարեխղճութիւն ունենալ, հասկանալ որ վերջապէս մեղք է խեղճ հայերի ուղեղը աստուածաբանական և վարդապետական անչափ ու անսահման շատախօսութիւններով սպանելը, և նրանք կարող էին, առանց իրանց պապական ուղղափառութեան վրա մազի չափ անգամ ստուեր գցելու, մի քիչ էլ թարգմանել կամ պատմել գիտնական գրքերի բովանդակութիւնը։ Այդ բանը հասկացաւ միայն Խաչատուր Էրզրումցին. և հաղորդելով գիտութեան զանազան ճիւղերից տեղեկութիւններ, նա ոչինչ մեղք չէր գործում իր սխօլաստիկ կրթութեան, իր կրօնաւորական հասկացողութիւնների և նախապաշարմունքների դէմ։ Անշուշտ, հայեացքի լայնութեան և պարտաճանաչութեան մի պատուաբեր նշան էր դա, որի համար հայ ընթերցողը չէր կարող շնորհակալ չը լինել։ Ոսկան վարդապետը և Ղուկաս Վանանդեցին պատուել էին հայ վանականութեան այն կախարդական շրջանը, որի մէջ գրիչն ու միտքը միայն երկնքին և հոգուն ծառայելու պաշտօնն ունէին. նրանք կաթիլներ տուին և «արտաքին գիտութիւններից»։ Խաչատուր վարդապետը աւելացրեց այդ կաթիլները. եթէ մենք ունենայինք կրօնական նախապաշարմունքներից ազատ միտք, որ կարողութիւն ունենար ծառայելու գիտութեան, աւելի շնորհակալ կը լինէինք, որովհետև այդպիսի միտքը ազատ գիտութիւն կը բե-

բէր մեր մէջ, մի բան, որ չէ կարելի սպասել հոգևորական մարդուց։ Բայց քանի որ չենք ունեցել այդպիսի մարդիկ, շնորհակալ պիտի լինենք, որ գոնէ կրօնական հասկացողութիւնների խիտ ցանցի միջով գիտութեան կաթիլներ էին անցնում դէպի ժողովուրդը։

Այդ հրատարակութիւնից երկու տարի անցած, 1713-ին, Խաչատուր վարդապետը տպագրում է իր «Ճարտասանութիւնը», և ապա լռում է ամբողջ 16 տարի։ 1723-ին նա լոյս է հանում իր «Ընդարձակ Աստուածաբանութեան» առաջին հատորը։ Դա մի մեծ գործ էր. յիշատակարանի մէջ Խաչատուր վարդապետն ասում է, թէ դրա վրա աշխատել է համարեա քսան և հինգ տարի, օր ու գիշեր։ Եւ զարմանալի էլ չէ, որ այդպէս եղած լինի. «Աստուածաբանութիւնը» քաղված է Թօմա Ակուինացու ընդարձակ աշխատութիւնից. իսկ Ակուինացու սխօլաստիկան այնքան նրբութիւնների է հասցրած, այնքան դժուարամարս է, որ նրան ուսումնասիրելը հեշտ գործերից չէ։ Բացի դրանից, Խաչատուր վարդապետը, երևի իր ահագին գիտնականութիւնը ցոյց տալու համար, աստուածաբանական փիլիսոփայութիւնը պատմել է իր ընթերցողին... ոտանաւորով,—մի բան, որ ցոյց է տալիս, թէ որքան ողորմելի էր այն ժամանակվայ հասկացողութիւնը ոտանաւորի, բանաստեղծութեան մասին։ Ոտանաւորը աւելի ևս պիտի դժուար հասկանալի դարձնէր սխօլաստիկ չոր ու ցամաք

փիլիսոփայութիւնը և շատ հասկանալի է, որ խեղճ Երզրումցին պիտի ամբողջ քառորդ դար գլուխ կոտրէր այդ՝ աւելի քան անհարկաւոր գործի վրա։ Գրքի երկրորդ հատորը տպագրվեց հինգ տարուց յետոյ։

Մենք ասացինք որ XVIII դարը մեզանում կարելի է անուանել Թօմա Ակուինացու դար. Խաչատուր Կարնեցին էր, որ բաց արեց այդ դարը. նա առաջինն էր, որ Ակուինացու ամբողջ փիլիսոփայութիւնը մտցրեց մեր գրականութեան մէջ։ Առջևներումս ունենք այդ փիլիսոփայութեան ընդարձակ թէ համառօտ հրատարակութիւնների մի շարք։ Մեր կաթօլիկ վարդապետների համար դա իմաստութեան մի անսպառ աղբիւր է. նրանք չեն կարողանում կշտանալ այդ աղբիւրից և շնորհիւ նրանց եռանդի՝ Ակուինացին հայերի մէջ դառնում է մի բարձր հեղինակութիւն, գիտնականութեան մի շտեմարան, որից պաշար վերցնողները համարվում են մեր մէջ բարձր զարգացում ստացածներ։ Ի նկատի ունենալով այդքան նշանաւոր ազդեցութիւնը, այստեղ, քանի որ դեռ Ակուինացու դարի սկզբումն ենք, բնական պիտի լինի իմանալ, թէ ինչ ունէր այդ փիլիսոփայ աստուածաբանը, որ նրա վրա այնքան սիրահարված էին Եւրոպայում աշխատող հայ վարդապետները։

Թօմա Ակուինացին ապրում էր XIII դարում (1227—1274)։ Դա մի նշանաւոր դար էր կաթօլիկ

եկեղեցու համար։ Դեռ երբեք հերձուածներն ու աղանդները այնքան չէին բազմացել Եւրոպայում, ինչպէս այդ դարի սկզբներում և նախընթացի վերջերում։ Հռոմի պապը շատ ուժեղ էր, տիրապետութեան գագաթնակէտին էր հասել. բայց և այնպէս, նա հիմք ունէր վախենալու ազատ մտքից, որ չը նայած կաթօլիկութեան ձեռք առած միջոցներին, տարածվում էր մարդկանց մէջ և եկեղեցին պառակտող հերձուածներ էլ ծնեցնում։ Նոր աղանդների մէջ ամենաշատ տարածվածը և ամենից վտանգաւորը այն աղանդն էր, որին հետևողները անուանվում էին ալբիգեցիներ։ Իր դաւանած սկըզբունքներով, իր բռնած դիրքով, այդ աղանդը մի անհանդիստ, եռուն յեղափոխական տարր էր ներկայացնում կաթօլիկ ուղղափառութեան դէմ *)։

*) Հայերիս համար շատ հետաքրքրական է ալբիգեցիների աղանդը այն պատճառով, որ նա դուրս էր եկել Հայաստանից։ Երրորդ դարում (Ք. Յ.) պարսիկ Մանի փորձեց միացնել պարսկական մազդեզականութիւնը քրիստոնէութեան հետ և կազմեց մի աղանդ, որ կոչվեց մանիքէական աղանդ։ Հալածանքները խեղդեցին մանիքէականութիւնը, բայց ոչ ընդմիշտ։ Նրանից ծնվեց «պաւլիկեան» աղանդը, որ VII դարի կէսում երևաց Հայաստանում։ Պաւլիկեանները ընդունում էին զրադաշտականութեան հիմնական գաղափարը—բարի և չար սկզբունքների գոյութիւնը, մերժում էին ծիսական քրիստոնեայ եկեղեցին—պատկերները, քահանայութիւնը, խորհուրդները և այլն։ Յայտնի է որ պաւլիկեանները Հայաստանում անխնայ հալածանքների ենթարկվեցան, բայց աղանդը մնաց մինչև

Հռոմը, նկատելով որ աղանդը գնալով մեծ չափեր է ընդունում և գցում է պապականութեան ամբողջ նշանակութիւնը, XIII դարի սկզբում արիւնալից միջոցներ ձեռք առաւ։ Իննոկենտիոս III պապը խաչակրաց արշաւանք հանեց աղանդաւորների դէմ, որ տևեց մօտ 20 տարի։ Անգութ աւերածութիւնների մի շրջան էր դա. հարաւային Ֆրանսիան, ալբիգեցիների երկիրը, քարուքանդ եղաւ, տասնեակ հազարներով մարդիկ կոտորվեցան ի մեծ ուրախութիւն Հռոմի։ «Եկեղեցին, ասում է Դրեպէր, չը ճնշեց ալբիգեցիների աղանդը—դա մի գթասրտութիւն կը լինէր չափազանց չափերով,—այլ բոլորովին ոչնչացրեց նրան»։ Խաչակիրները ոչ հասակ էին խնայում, ոչ սեռ։

XIX դարի սկիզբը և կոչվում էր «թոնդրակեցիների» աղանդ։ Աղանդաւորները շատ անհանդիստ մարդիկ էին. VIII դարում բիւզանդական կայսր Կոնստանդին V, տեսնելով որ պաւլիկեանները յաճախ անցնում են արաբացիների կողմը, անյարմար համարեց պահել այդ աղանդաւորներին սահմանագլուխ Հայաստանում և գաղթեցրեց նրանց Բալկանեան թերակղզին։ Այդտեղ հայ աղանդաւորները սկսեցին տարածել իրանց կրօնը. բուլղարները ընդունեցին այդ կրօնը և նրանց մէջ առաջ եկաւ «բոգոմիլների» աղանդը։ Խաչակրաց արշաւանքների ժամանակ եւրոպացիները ծանօթացան այդ աղանդի հետ և տարան նրան Արեւմտեան Եւրոպա, ուր նա սկսեց տարածվել զանազան կողմերում։ Հարաւային Ֆրանսիայում նա անուանվեց ալբիգեցիների աղանդ՝ Ալբի քաղաքի անունով։ Այդ աղանդը կարելի է նկատել իբրև բողոքականութեան նախնական ձև։

Ալբիգեցիների կոտորածը կաթոլիկ կղերին մեծ բաւականութիւն պատճառեց. այդ կոտորածից ծնվեց հերետիկոսներին և հերձուածողներին պատժելու միտքը։ Ծնվեց Ինքվիզիցիան։ Դա կղերական մի դատաստան էր, որի առջև հանվում էին հերետիկոսութեան մէջ կասկածվողներն անգամ։ Յայտնի է թէ ինչ սարսափներ առաջացրեց նա, յայտնի է թէ ինչքան խայտառակ մի հիմարկութիւն էր նա և յաւիտենական ինչ անջնջելի արատով ծածկեց Հռոմի եկեղեցին...

Բայց սուրն ու խարոյկները բաւական չէին. Նրանք չէին կարող ոչնչացնել մարդկային մտքի ազատութիւնը, որ մանաւանդ այդ ժամանակներում սկսել էր շարժվել և վախեցնել Քրիստոսի այն փոխանորդներին, որոնք իրանց իշխանապետական շահերի համար ուզում էին որ ամեն տեղ թագաւորէ խաւարը, անշարժութիւնը, ծէսը միայն։ Սպանիայում մավրերը հալածանք հանեցին հրէաների դէմ, որոնք մեծ թւով անցան Ֆրանսիա, բերելով իրանց հետ արաբական գիտութեան հարըստութիւնները։ Դրանց մէջ էին և Արիստոտէլի գործերը։ Մինչև այդ Եւրոպան ծանօթ էր Արիստոտէլի հետ այն մի քանի հատուածներով, որոնք մնացել էին քրիստոնէական գրականութեան մէջ։ Այժմ Ալէքսանդր Մակեդոնացու հռչակաւոր ուսուցչի բոլոր գործերը, թարգմանվելով արաբերէնից, մատչելի էին դարձել եւրոպացիներին և, ի հարկէ, պիտի գրաւէին մտքերը։ Հռոմը վախեց

այս նոր, անկոչ հիւրից, որ իբրև հեթանոս մտքի ներկայացուցիչ և մահմեդականների մօտ մեծարված հեղինակ, կարող էր վտանգաւոր ազատութիւն առաջ բերել մարդկանց մէջ և հարուածել կաթոլիկութիւնը։ Այդպէս էլ եղաւ. հերետիկոսները Արիստոտէլի փիլիսոփայութեան վրա էին հիմնվում. պարզվում էր սարսափելի ճշմարտութիւն—կային բաներ, որոնք ճշմարիտ էին փիլիսոփայութեան տեսակէտից, բայց սուտ էին հաւատի տեսակէտից։ Այդ հակասութիւնը գիտութեան և կրօնի մէջ սպառնալից հետանկարներ էր բերում։ Իննոկենտիոս պապը հրամայեց Պարիզի համալսարանին, ուր աւանդվում էր աստուածաբանութիւն, ընդունել Արիստոտէլից միայն անմեղ բաները, իսկ մնացած գործերը նկատել վնասակար և արգելված։

Բայց եկեղեցականների վախերը շուտով փարատվեցան։ Գտնվեց մի մարդ, որին աջողվեց դարձնել Արիստոտէլին կաթոլիկ եկեղեցու ամենահաւատարիմ պաշտպան։ Դա Թովմա Ակուինացին էր։ Այս դոմինիկեան աբեղան խլեց հերետիկոսների ձեռքից նրանց զէնքը—Արիստոտէլը և տուեց նրան եկեղեցու ձեռքը։ Արիստոտէլի վրա նա հիմնեց կաթոլիկական աստուածաբանութիւնը. բայց դրա համար պէտք էր որ Արիստոտէլը այս նոր փիլիսոփայութեան մէջ հին Արիստոտէլը չը մնար։ Եւ այդպէս էլ եղաւ. նա շատ տեղերում աղճատվեց, շատ տեղերում հպատակեցրվեց Ս. Գրքին։ Ակուի-

նացու համար հեղինակութիւն էր ոչ միայն Արիստոտէլը, այլ և եկեղեցական հայրերը։ Այսպիսով ահա քրիստոնէացրուեց հին աշխարհի հսկայ միտքը։ Ակուինացին դարձաւ սխոլաստիկ աստուածաբանութեան հայր և անասելի հրճուանք պատճառեց Հռոմին։ Եկեղեցին բարձրագլուխ կանգնած էր այդ աստուածաբանութեան մէջ և փիլիսոփայական գիտութիւնը նրա ստրուկը դարձաւ։ Ակուինացին օգտակար հրատարակեց մարդկային բանականութիւնը, սրբագործեց ինկվիզիցիան, ասելով թէ հերետիկոսներին կեանքից զրկելը եկեղեցական իշխանութեան իրաւունքն է և նոյնքան օրինական է ու արդար, որքան դրամ կեղծողներին պատժելը։ Պապական իշխանութեան համար նա ստեղծեց մի ամուր հիմնաքար. մարմնաւոր իշխանները պիտի հպատակվեն հոգևոր իշխաններին այն բոլոր գործերում, որոնք հոգուն են վերաբերում. պապը իրաւունք ունի գահընկէց անել այդ իշխաններին, որովհետև նա թէ հոգևոր և թէ մարմնաւոր իշխանութիւնների գլխին է կանգնած։ Մարմնաւոր իշխանութեան հպատակված մարդու հոգին ազատ է. բայց եկեղեցու իշխանութեան տակ նոյն այդ հոգին ոչինչ ազատութիւն չը պիտի իմանայ, այլ պարտաւոր է անպայման հնազանդվել եկեղեցու օրէնքներին։

Շատ երկար կը լինէր խօսել այստեղ հռչակաւոր սխոլաստիկի ամբողջ վարդապետութեան մասին։ Բայց որպէս զի ցոյց տանք, թէ ինչ չա-

ղախից էր կազմված նրա իմաստութիւնը, բերենք մի օրինակ էլ։ Խօսելով առաքինութիւնների մասին, Թոման դրանց թւում գնում է և յարգանքն ու խոնարհութիւնը, որ ամէն մէկը պիտի ունենայ դէպի Աստուած և դէպի մարդիկ։ Յարգանքի հետ է և հնազանդութիւնը, որ բոլոր բարոյական առաքինութիւններից բարձր է։ Բոլոր առաքինութիւնների նպատակն է արհամարհել երկրայինը և կապվել երկնայինին։ Առաքինութիւնները լինում են. աստուածաբանական, որոնց միջոցով մարդը հասնում է գերբնական երջանկութեան, և բարոյական, որոնց միջոցով նոյն մարդը ցոյց է տալիս իր արհամարհանքը դէպի երկրայինը. և, ի հարկէ, աստուածաբանական առաքինութիւնները բարձր են բարոյականներից։ Ամենաբարձր բարոյական առաքինութիւնը այն է, որով արհամարհանք է յայտնվում դէպի բարձր բարիքը. հոգու մէջ ամենաբարձր բարիքը կամքն է, որովհետև նրա միջոցով մարդը հասնում է ուրիշ բարիքների։ Ապա ուրեմն, ամենաբարձր բարոյական առաքինութիւնն է արհամարհել սեփական կամքը և հնազանդվել Աստուծուն։

Սխոլաստիկան գործ չունէր փորձի, իրական ուսումնասիրութեան հետ. նա հիմնվում էր դատողութիւնների վրա. հաստատել այդ դատողութիւնները իրական փորձերով աւելորդ էր համարվում. բաւական է որ կան հեղինակութիւններ, բաւական է որ Արիստոտէլը այսպէս է ասում, և

Գիրքը այս ինչ վկայութիւնն է տալիս, իսկ եկեղեցու այս ինչ հայրը այս կերպով է հասկացել և բացատրել այս ինչ տեղը։ Ահա սխօլաստիկայի ապացոյցները։ Ի՞նչ արժանաւորութիւններ կարող է ունենալ այդ տեսակ փիլիսոփայութիւնը։ Ամենալաւ քննադատութիւնը մենք գտնում ենք Ակուինացու ժամանակակից Ռօջէր Բէկօն անունով անգլիացի կրօնաւորի գրուածքներում։ Սա մի փայլուն միտք էր, որ նախատեսում էր, թէ մարդկութիւնը ինչ ճանապարհով պիտի առաջ տանէ գիտութիւնը. նա բոլորովին հերքում էր սխօլաստիկան, պահանջում էր որ գիտութիւնը հիմնուի փորձերի վրա, որ մարդիկ, փոխանակ հեղինակութիւնների վրա իրանց ամբողջ յոյսը դնելու, քննեն բնութեան գաղտնիքները և այդպիսով միայն ապացոյցներ ձեռք բերեն։ Նա ասում էր. «Անկասկած, պէտք է յարգել հներին և շնորհապարտ լինել դէպի այնպիսիները, որոնք մեզ համար ճանապարհ բացին. բայց չը պէտք է մոռանալ, որ նրանք էլ մեզ նման մարդիկ էին և յաճախ են մոլորվել։ Ինքը Արիստոտէլը ամեն ինչ չը գիտէր. նա արել է այն, ինչ կարելի էր անել նրա ժամանակ, բայց նա չը հասաւ իմաստութեան ծայրին։ Սուրբերն էլ անսխալական չէին։ Վկայ կանչել աւանդութիւնները—մի ողորմելի ապացոյց է։ Հեղինակութիւնը ոյժ չունի, եթէ նրան չեն հաստատում. հեղինակութիւնը ոչինչ չէ բացատրում, նա միայն ստիպում է հաւատալ. նա

հպատակեցնում է միտքը, բայց չէ լուսաւորում նրան։ Գոնէ մենք իմանայինք այն մարդկանց իսկական խօսքերը, որոնց հեղինակութիւն ենք համարում։ Բայց աւելի լաւ կը լինէր, եթէ Արիստոտէլի փիլիսոփայութիւնը երբէք թարգմանուած չը լինէր, քան թարգմանուէր այնպէս, ինչպէս այժմ է թարգմանուած» *)։

Ահա ինչ բան էր սխօլաստիկան։ Թոմա Ակուինացու մեթօդը Բէկօնն անուանում էր «երեխայական»։ Բայց այդ հռչակաւոր մարդը ժամանակից շատ վաղ էր ծնվել. մարդկութիւնը դեռ երկար պիտի խարխափէր սխօլաստիկայի դատարկաբանութիւնների մէջ մինչև որ նոր ժամանակի մարդը թօթափէր իրանից կղերականութեան գերի դարձած գիտութեան մոլորութիւնները և գործէր այնպէս, ինչպէս Բէկօնն էր պահանջում։ XIII դարում Բէկօնին չը հասկացան։ Փորձի վրա հիմնված գիտնականը մի քանի գիւտեր արաւ, բայց դրանք վարդապետների համար դժոխքի գործեր էին և խեղճ Բէկօնին բանտ նստեցրին։

Իսկ Ակուինացին։ Կաթօլիկ եկեղեցականները ջուխտ ձեռքով սեղմեցին նրա փիլիսոփայութիւնը իրանց կրծքին։ Արիստոտէլը հրատարակվեց «Քրիստոսի նախակարապետ»։ Կային այնպիսիները, որոնք մտածում էին Արիստոտէլին սուրբերի դա-

*) Лависсъ и Рамбо—„Всеобщая Ист.“, т. II, եր. 513։

ը մտցնելու մասին։ Ինքը, Ակուինացին, հօ շուտ դասվեց սրբերի թւում. նրան անուանեցին «հրեշտակային և տիեզերական վարդապետ». Տրիդենտեան ժողովը Թօմայի աստուածաբանութիւնը դրեց եկեղեցու սեղանի վրա, Ս. Գրքի կողքին։ Առատութեամբ ստեղծվեցին բարեպաշտական լեգենդաներ՝ այդ վարդապետի հեղինակութիւնը բարձրացնելու համար։ Պատմում էին այսպիսի բան. Թօման, վերջացնելով իր «Բովանդակութիւն Աստուածութեան» աշխատութիւնը, ահ ու դողով, արտասվելով դիմեց Աստուծուն, կամենալով իմանալ, թէ արդեօք սխալներ գործել է իր գրուածքների մէջ. այդ միջոցին խաչելութեան պատկերի վրայից Քրիստոս պատասխանեց նրան. «Լաւ գրեցիր իմ մասին, Թօմաս. այժմ ինչ վարձ կընդունես քո վաստակների փոխարէն»։ Պատմելով այս հրաշքը, կաթօլիկ կղերը աւելացնում է. «Յայտնի է որ Թագաւորները իրանց ստորագրութեամբ հաստատում են այն վճիռները, որոնց կամենում են պահել Թագաւորութեան մէջ. այսպէս էլ երկնաւոր վարդապետը իր ծառայի վարդապետութիւնը այսպիսի նշանաւոր պատգամով կամեցաւ հաստատել, որպէս զի ամենքը ջերմապէս պահպանեն նրան» *)։ Այդքան ահագին նշանակութիւն էր տրուել Թօման կաթօլիկ ուղղափառութեան համար **)։

*) «Փիլիսոփայութիւն Կոմանի», Վենետիկ, 1751, հատոր Ա,. եր. ԼԲ.

**) Մեր ժամանակներում էլ Ակուինացին շարունա-

Թօմա Ակուինացին, ի հարկէ, ունի իր տեղը փիլիսոփայութեան պատմութեան մէջ. նա ունեցել է իր նշանակութիւնը իր ժամանակի համար։ Սխօլաստիկան, ինչ էլ լինէր, այն ծառայութիւնը մատուցեց մարդկանց, որ վարժում էր նրանց միտքը, սովորեցնում էր մտածել. առաջ եկան հակառակ դպրոցներ, Թօմայականները վէճեր էին վարում ուրիշ դպրոցների դէմ։ Այս բոլորը շատ լաւ էր այն հին, խաւար ժամանակի համար։ Բայց XVIII դարում, նորագոյն փիլիսոփաների այդ փայլուն դարում, ինչն էր ստիպում մեր վարդապետներին ամեն ջանք գործ դնելու, որ միջնադարեան սխօլաստիկը յարութիւն առնէ հայերի մէջ։ — Միայն այն, որ նրանք կաթօլիկ էին և իբրև կղերականներ, միայն ուղղափառութեան հիմք կազմող փիլիսոփայութիւնը կարող էին ներկայացնել հայ ընթերցողին, ասելով թէ դրա մէջ են բոլոր իմաստութիւնները։ «Ընդարձակ Աստուածաբանութիւնը» բաւարարութիւն չը

կում է մնալ կաթօլիկ եկեղեցու յոյսն ու ապաւէնը։ 1879 թւին պապը առաջարկում էր համալսարանների մէջ մտցնել Թօմային, իսկ բոլոր հաւատարիմ կաթօլիկներին յանձնարարում էր ուսումնասիրել նրա գրուածքները։ Լեոն XIII իր հաշւով սկսեց այդ գրուածքների փառահեղ հրատարակութիւնը։ Այժմ էլ Եւրօպայի կաթօլիկ երկիրներում հրատարակվում են ամսագրեր և գրքեր, որոնց նպատակն է համաձայնեցնել ժամանակակից գիտութիւնը Թօմայի վարդապետութեան հետ։

տուեց Խաչատուր վարդապետին. 1739 թւին նա հրատարակեց «Համառօտութիւն Բարոյականի Աստուածաբանութեան», հիմնած, ի հարկէ, դարձեալ Ակուինացու վրայ։ Եւ չենք կարող ասել թէ այդ աստուածաբանութիւնները հրատարակւում էին կաթօլիկ հայերի համար։ Կաթօլիկ վարդապետները իրանց հրատարակութիւնների վրա, նրանց ընդհանուր ազգային դարձնելու համար, տպագրում էին էջմածնի կաթողիկոսի անունը *)։ Բացի այդ երկու գրքից, հայերէնի է թարգմանվել մի և նոյն Խաչատուրի «Բովանդակութիւն Աստուածաբանութեան» լատիներէն գրուածքը և տպագրվել է 1736 թւին։

Հարկաւոր է այստեղ ուշադրութիւն դարձնել այդ գրքը թարգմանողի վրայ։ Դա մի հայու-

*) Մխիթար Սեբաստացուն դիմակաւորված հայ-լուսաւորչական համարողները իբրև ապացոյց բերում են այն, որ նրա և նրա յաջորդի ժամանակ տպագրված բոլոր գրքերի վրա նշանակված է ժամանակի կաթողիկոսի անունը։ Բայց սա փաստ չէ։ Եթէ այդպէս դատելու լինենք, դուրս պիտի գայ, որ Խաչատուր Երզրումցին էլ կաթօլիկ չէ, քանի որ նրա «Համառօտութիւն Աստուածաբանութեան» գրքի վրա էլ տպված է. «Ի Հայրապետութեան հին Ջուղայեցի Աղէքսանդրի ամենից հայոց կաթողիկոսի»։ Ուրիշ օրինակ. Եզուիտ Յակոբ Վիլլօտը իր «Մեկնութիւն դաւանութեան» գրքի մէջ (Հռօմ, 1711) գործ է ածում «Տ. Աղէքսանդր հայոց կաթողիկոս», «Սուրբ Էջմիածին» և այլ այդպիսի հաճոյական և շողոքորթական բառեր. բայց ո՞վ կասէ թէ Վիլլօտ եզուիտը հայ-լուսաւորչական էր։

հի է, Մարիամ Քարաքաշեան։ Նա թարգմանել է նոյն Խաչատուրի մի ուրիշ լատիներէն գրուածքն էլ—«Ներածումն առ քրիստոնէական կատարելութիւն» (տպված 1733-ին)։ Նախ քան այդ թարգմանութիւնները, Մարիամ Քարաքաշեան տպագրել էր տուել և իր հեղինակած «Ակն հոգւոյ» գիրքը (1728)։ Մեր գրականութեան պատմութեան մէջ սա կարծեմ առաջին հայ կինն է, որի գրական գործերը յայտնի են մեզ։ Կը կամենայինք աւելի մանրամասն տեղեկութիւններ տալ այդ առաջին հայ գրագիտուհու մասին, բայց, դժբախտաբար, միայն այն գիտենք, որ Մարիամ Քարաքաշեան պօլսեցի էր և կոչվում է «կուսանունդ», ուրեմն կոյս էր։ Բայց որտեղ է նա սովորել այդքան լատիներէն և ուր է թարգմանել այդ գրքերը։ Կարծում ենք պէտք է ենթադրել որ այդ կոյսը ապրում էր Վենետիկում, ուր XVIII դարում, իրաւ, հանդիպում ենք պօլսեցի Գարագաշեան հայ ընտանիքի։ Վենետիկի կաթօլիկ կուսանոցներում քիչ չեն եղել և հայուհիներ, որոնց մէջ նոյն այդ դարում յիշվում է Լաւրա Գարագաշեան կոյսը *)։ Եւ իսկապէս, միայն Իտալիայում, կաթօլիկ կուսանոցում կրթված կոյսը կարող էր լատիներէն աստուածաբանութիւնը թարգմանել հայերէնի։

Աստուածաբանական գրուածքների ցանկում յիշատակենք Պետրոս վարդապետ Թիֆլիսեցու

*) Հ. Ալիշան—«Հայ—Վենետ», 1896, եր. 500, 515.

թարգմանած «Ուղղ և ծուծ Աստուածաբանութեան» (տպ. 1748 թ.), դարձեալ մի հաստ հատոր, դարձեալ Ակուինացու վկայութիւններով զարդարած։ Նոյն Պետրոս վարդապետի թարգմանութիւնն է նաև Ռօդրիգվէզ վարդապետի «Կրթութիւն կատարելութեան և կրօնաւորական առաքինութեան», երկու հատոր (1741—1742), որ հրատարակեց Մխիթար Սեբաստացին։

Առհասարակ Մխիթարը ամէն ջանք գործ է դրել կրօնական կրթութիւնը ժողովրդականացնելու համար։ Մենք ասացինք որ այդ նպատակով նա հրատարակեց աշխարհաբար «Քրիստոնէական»։ Բայց հետաքրքրական է մանաւանդ նրա մի այլ գործը։ Կրօն սովորեցնել խաղի միջոցով—այս նպատակն ունի 1737-ին հրատարակված գրքոյկը՝ հետևեալ վերնագրով. «Քրիստոնէական վարդապետութիւն որ ի գործ ունի ի մեկնելն զպատկերս ի ժամանակի խաղալոյ»։ Գրքոյկի մէջ կան 46 պատկերներ՝ կրօնական բովանդակութեամբ. ցոյց է տուած խաղալու եղանակը. տանուլ տուողը պիտի ցոյց տուած աղօթքները կարդայ։ Իսկ տանողը։—«Եթէ ոք հասանիցի ի 46, երթայ յարքայութիւն, և զինչ որ կայ ի գանձանակն, առցէ ինքն», այսպէս է ասում գրքոյկը։ Պատկերների մասին մի հասկացողութիւն տալու համար դնենք այստեղ այն, ինչ գրված է, օրինակ, 22-րորդ պատկերի տակ.

Որպէս մարմին զբաղում անդամս ունի, բայց զմի

միայն գլուխ, որ ի վերայ այլոց բնաւից անդամոցն ունի զբացարձակ իշխանութիւն, գոլով ինքն ի բարձրագոյն տեղւոջ քան զնոսա. նոյնպէս և եկեղեցին է մարմին խիստ խորհրդական, որոյ անդամքն են ամենայն հաւատացեալք, բայց ի վերայ նոցա է մի աներևոյթ գլուխ, որ է Յիսուս Քրիստոս. և ի տեղւոջ նորին այլ մի երևելի գլուխ, որ է սրբազան պապն Հռոմայ, փոխանորդն Յիսուսի Քրիստոսի, որ ունի ի վերայ ընդհանուր եկեղեցւոյն ըզգլխաւոր իշխանութիւն պարգևեալ ինքեան ի տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ։

Աւելի հեռուն կղերական եռանդը չէր կարող գնալ. աստուածաբանութիւն—խաղի միջոցով. այդ խաղը, զուարճութիւն պատճառելով խաղացողներին, թէ պիտի փրկէ նրանց հոգին և թէ անցողակի կերպով յիշեցնէ որ պապը Քրիստոսի փոխանորդն է, իշխանապետ ամբողջ եկեղեցու վրա։ Մենք չը գիտենք՝ այս խաղը Մխիթարի հեղինակութիւնն է, թէ փոխադրութիւն մի օտար լեզուից։ Բայց հեղինակութիւններ էլ ունի նա և, ի հարկէ, այնպիսի հեղինակութիւններ, որոնք Մխիթարի ամբողջ գործունէութեան, ամբողջ աշխարհայեցողութիւններին են համապատասխանում։ Նա հրատարակեց իր «Մեկնութիւն Ժողովողին» և «Մեկնութիւն Մատթէի Աւետարանին» (1736—1737). և եթէ այդ մեկնութիւնների վրա աւելացնենք նաև Մխիթարի «Քերականութիւնը», որ լոյս տեսաւ 1730 թուականին, մենք շատ քիչ բան թողած կը լինենք նրա գրական գործունէութիւնից։ Քերականութեան մասին արդէն խօսել

նէք։ Այդ ստուար աշխատութիւնը ոչ միայն մի չը տեսնված նորութիւն չէր ներկայացնում, այլ և գիջողութիւններ էր անում հայոց լեզուն աղճատող լատինամոլներին։

—

Եւ այսպէս ահա, սարերի ու ձորերի տարբերութիւն չը կար Կ. Պօլսի և Վենետիկի մէջ. Եւրոպան և Ասիան միացած են՝ հայերին միանման տաղտուկ, անմարս մտաւոր կերակուր տալու համար։ Մխիթար Սեբաստացին թէ և շատ ժիր ու եռանդոտ հրատարակիչ է, բայց Եւրոպայից նրա ուղարկած գրքերի և Բօսֆորի ափերում լոյս տեսածների մէջ չը գտնենք ինչ հիմնական տարբերութիւն, ինչ առաւելութիւն կարող են գտնել, եթէ, ի հարկէ, հաշւի չառնենք տպագրական արուեստի ներկայացրած տարբերութիւնը։ Եթէ ս. Ղազարի վանքը Ադրիական ծովի մի կղզու վրա գոյութիւն էր տալիս միմիայն աղօթագրքերի և աստուածաբանական հատորների պաշարը մեզանում ստուարացնելու համար, կարելի էր և չուրախանալ որ նա կայ։ Մեր ընդհանուր առաջադիմութեան տեսակէտից բոլորովին մի և նոյն էր թէ ով կը սովորեցնէ մեզ աստուածաբանութիւն— Ամբրօզիւսի դպրոցը, թէ՞ դօմինիկեան, եզուիտ կամ մխիթարեան վարդապետը։ Այդ կողմից մենք հազարներ շատ ունէինք և առանց կրօնական գըրքերի չէինք մնայ։

Օրինակ, գիտնական Խաչատուր վարդապե-

տից կամ Մխիթար Սեբաստացուց ինչով էր պակաս եզուիտ պատեր Յակոբ Վիլլօտ։ Այս կրօնաւորին մենք տեսանք Նոր-Ջուղայի կրօնական խռովութիւնների մէջ *)։ Լաւ ուսումնասիրելով հայոց լեզուն, նա մի շարք հեղինակութիւններ գրեց, որոնց տպագրութիւնը սկսեց Եւրոպա վերադառնալուց յետոյ։ Վիլլօտ ունի «Մեկնիչ սրբոյ Աւետարանին», «Մեկնութիւն դաւանութեան ուղղափառ հաւատոյ», «Զորք խոկմունք յաղագս յաւիտենականութեան» կրօնական շարագրութիւնները, «Բառգիրք Լատին-Հայ», որոնք տպագրվեցան Հռոմում (1710—1714)։ Կեանքի մէջ Յակոբ Վիլլօտ կրօնական խառնակութիւններ բորբոքող և ղեկավարող մարդ էր, բայց իր գրքերի մէջ աշխատում է սիրաշահել հայերին, ձեւանալով նրանց բարեկամ և կարեկից, նոյն իսկ յանձն առնելով պաշտպանել հայոց եկեղեցին մի քանի մեղադրանքների դէմ։ Նա գրել է նոյն իսկ «Պատմութիւն կաթողիկոսաց և թագաւորաց հայոց» փոքրիկ տետրակը, որ լոյս տեսաւ Վենետիկում 1713-ին և որի մէջ դասաւորված է հայոց կաթողիկոսների և թագաւորների յաջորդութիւնը կամ «գաւազանագիրքը»։

Երբ մի օտար մարդ, սովորելով հայոց լեզուն, կարողանում էր այդքան բան անել, կարող է մեզ զարմանք պատճառել կրօնական գրակա-

---

*) «Հայկ. Տպ.», I, եր. 248.

նութեան այն առատութիւնը, որ արտադրում էին հայ վարդապետները։ Եւ Մխիթարն ու նրա միաբանութիւնը ոչինչ անուն և վաստակ չէին թողնի հայերի մէջ, եթէ նրանց գրական գործերը այնպիսի բաներ լինէին, որոնց տեսանք մինչև այժմ։ Բայց ս. Ղազարի վանքը այդպէս չը պիտի մնար։ Մխիթարը իր կենդանութեան ժամանակ ցոյց տուեց որ իր միաբանութիւնը բազմաթիւ անպէտք հրատարակութիւնների շարքում մի-մի անգամ այնպիսի մեծագործութիւններ պիտի ցոյց տայ, որոնք հիացմունք պիտի ազդեն ամենքին։ Ահա ինչպէս։

1733 թուականին Մխիթար Աբբան Բօրտօլիի տպարանից լոյս հանեց իր հրատարակած Աստուածաշունչը։ Դա մի հսկայ, հիանալի գործ էր, մի տպագրութիւն, որի նմանը դեռ մեր մէջ չէր եղած։ Ոչինչ չէր խնայել Մխիթարը՝ այդ գործը ամեն կողմից կատարեալ դարձնելու համար — ոչ անձնական աշխատանք, ոչ նիւթական միջոցներ։ Պղնձի վրա քանդակած նուրբ պատկերների առատութիւն, գեղեցիկ ծաղկագրեր, մաքուր տպագրութիւն ազնիւ, թանգ թղթի վրա, շատ խնամքով կատարված սրբագրութիւն — ահա այդ գեղարուեստական հրատարակութեան զարդերը. մինչև այժմ էլ մեզանում մեծ հռչակ է վայելում «Աբբայի Աստուածաշունչը»։ Միակ պակասութիւնը, ինչպէս գիտենք, այն է, որ Մխիթարը, ձեռքի տակ չունենալով գրչագիրներ, արտատպեց Ոսկանի Աս-

տուածաշունչը և կարողացաւ շատ քիչ բան ուղղել նրա պակասութիւններից։ Բայց գլխաւորը այդ չէ։ Մխիթարը յիշատակարանի մէջ մի առ մի նկարագրել է թէ ինչպէս է տպել Աստուածաշունչը. կրկնապատիկ ծախսեր, աշխատանք, լարված ուշադրութիւն — սրանք, ճիշտ որ, անխուսափելի էին, մանաւանդ այն ժամանակ, երբ տպարանական գործը դեռ այնքան թերի էր, չը կային կատարելագործված մեքենաներ։ Առհասարակ, «Աբբայի Աստուածաշնչի» տպագրութեան պատմութիւնը վկայում է, որ Մխիթարը և նրա աշակերտները սովորել են եւրօպացու պէս աշխատել. ս. Ղազարի վանքը պատկառելի, ակադեմիական հրատարակութիւններ անելու ընդունակութիւնն էր ստանում։

Ահա, ամենից առաջ, Մխիթարեանների գերազանց յատկութիւնը, որին մեզանում դեռ ուրիշ ոչ մի հիմնարկութիւն չէ հասել։ Միաբանութիւնը հայ ազգի մէջ ամենաբարձր, առաջնակարգ տեղ գրաւում էր նախ և առաջ իբրև հրատարակիչ։

Տեսնենք այժմ նրա մի այլ յատկութիւնը։ 1749 թուականին լոյս տեսաւ Վենետիկում «Պատմութիւն վարուց Գրիգորի Լուսաւորչին» գիրքը։ Մեծ բան չէ այս աշխատութիւնը և Մխիթարը չէ նրա հեղինակը։ Բայց գիրքը նշանաւոր է մի քանի կողմերով։ Նախ և առաջ դա մի գեղեցիկ վկայութիւն է Մխիթարի դպրոցի մասին, որով-

հետև պատկանում է նրա աշակերտներից մէկի, Մատթէոս վարդապետի գրչին։ Ի՞նչ է ցոյց տալիս այդ գիրքը։—Գրական ճաշակ, լեզուի կանոնաւորութիւն, հեղինակելու ոյժ, որոշ հասկացողութիւն ոճի ու չափի մասին։ Գրական անկման այն տխուր, երկարատև ժամանակներում Մխիթարեան դպրոցի այդ առաջին պտուղը գալիս էր աւետելու, որ պատրաստվում է աւելի լաւ ու հարուստ ապագայ հայոց գրականութեան համար։ Երրորդ նշանաւոր հանգամանքը այն ճիւղն է, որին վերաբերում է գիրքը—պատմագրութիւնը. դա այն ասպարէզն է, ուր Մխիթարեանները մեծ անուն հանեցին և ամենից մեծ ծառայութիւնը մատուցին իրանց ազգին. Մատթէոս վարդապետի հեղինակութեան մէջ արդէն տեսնում ենք այն առաւելութիւնները և պակասութիւնները, որոնք յատուկ են Մխիթարեաններին՝ պատմագրութեան մէջ։ Առաւելութիւններն են պատմելու շընորհքը, լայն ծանօթութիւն աղբիւրների հետ, մանրակրկիտ ուսումնասիրութիւն։ Ս. Ղազարի վարդապետները շատ կարդացած, լեզուագէտ մարդիկ են. նրանց առջև միայն հայոց ազգային աղբիւրները չեն բացված, այլ և յոյն, լատին, հին և նոր հեղինակները։ Վենետիկից դուրս ոչ ոք չունի այդքան պատրաստութիւն և այդ պատճառով Մխիթարեանները հեղինակութիւն են։ Բայց նրանք ունեն և հիմնաւոր պակասութիւններ.—դա վանական պատմագրութիւն է, միամիտ, ամեն ինչին

հաւատացող, առանց խիստ քննադատութեան։ Բաւականանք այս համառօտ դիտողութիւններով։ Աւելի մանրամասն կը խօսենք այն ժամանակ, երբ կը հասնենք Ջամչեանին, XVIII դարի այս առաջնակարգ, հսկայ գրագէտին։

Մխիթարեանների այս երկրորդ յատկութեան միացած է և երրորդը, որ արտայայտվեց նոյնպէս Մխիթարի ժամանակ։ Նոյն 1749 թւականի մայիսի 19-ին լոյս տեսաւ «Բառգիրք Հայկազեան Լեզուի» հսկայական գործը, որ մի դարագլուխ է կազմում մեր գրականութեան մէջ։ Ամենից առաջ նա գալիս էր ցոյց տալու թէ ս. Ղազարի վանքում ինչպէս լաւ գիտեն աշխատել. աշխատել հաւաքական ոյժերով, յամառ տոկունութեամբ, հիմնաւոր, գիտնական պատրաստութեամբ։ Գործը սկսուել էր դեռ 1727 թւականին, բայց ընդհատվեց երկար ժամանակով, նորից սկսվեց 1742-ին և վերջացաւ 1745-ին։ Այդքան ժամանակամիջոցում Մխիթարը և նրա աշակերտները ստեղծեցին մի հարուստ բացատրական բառարան, որի յատկութիւնները ուղղակի անգնահատելի են։

Մինչև այդ չը կար հայերէն բառարան, այս բառի իսկական նշանակութեամբ։ Մի քանի լատին վարդապետներ կազմել էին լատիներէն-հայերէն բառարաններ, որոնք տպագրվեցան զանազան ժամանակներում. բայց դրանք չափազանց պակասաւոր, սխալ ու աղքատ էին։ Կար և մի հայերէն բառարան, որ կազմել էր Երեմիա վարդապետը. դա

էլ շատ համառօտ էր, այնպէս որ հարիւր բառից մէկը հազիւ կարելի էր գտնել նրա մէջ: Այդ բառարանները ոչինչ օգուտ չէին կարող տալ Մխիթարին և նրանք միանգամայն անտես առնվեցան: Պէտք էր նորից կազմել բառարանի նիւթը, տալ մի ընդարձակ, գիտնական աշխատութիւն, որ ի նկատի պիտի ունենար մի շարք կարևոր նպատակներ: Ժամանակը ստիպողաբար պահանջում էր մի այդ տեսակ գործ: Հայոց լեզուն արդէն չափազանց աղաւաղված էր և գնալով աւելի և աւելի ցած էր ընկնում, աղքատանում: Իւրաքանչիւր հեղինակ գործ էր ածում բառերը այնպէս, ինչպէս ինքն էր հասկանում. և այդ պատճառով մեծ քանակութեամբ բառեր կորցրել էին իրանց իսկական նշանակութիւնը, քերականական կանոնները շփոթվել էին: Հայոց լեզուին սպառնում էր մի մեծ աղէտ. այդպէս գնալով, նա պիտի բոլորովին այլանդակվէր, կորցնէր իր կենսունակութիւնը:

Այդ աղէտի դէմ Մխիթարը ծրագրում է մի շատ հիմնաւոր, թէև շատ էլ դժուար իրագործելի միջոց. հաւաքել հին հայոց գրականութեան բառերը, բացատրել նրանց այն մտքով, ինչպէս հասկացել և գործ են ածել նրանց ամենայայտնի հայ հեղինակները: Ծախս ու աշխատանք չը խնայելով, նա զանազան հայաբնակ տեղերից բերել է տալիս գրքեր. դրանց մէջ գործ ածած բառերի բուն իմաստը որոշելու համար մանրամասն և բարեխիղճ ուսումնասիրութիւններ է կատարում: Մեծ ծա-

ռայութիւն մատուցանում են մանաւանդ յունարէնից և լատիներէնից թարգմանած գրքերը. Մխիթարը գտնում է այդ թարգմանութիւնների բնագրերը, համեմատում է դրանց և գտնում է բառերի ճիշտ միտքը: Հին հայկական թարգմանութիւնների թագն ու պսակը, ինչպէս յայտնի է, Սահակի և Մեսրոպի աշխատութիւններով թարգմանված Աստուածաշունչն է: Մխիթարը ամենից շատ այդ առատ ու անսպառ աղբիւրին է դիմում. նա ձեռքի տակ ունի յունարէն բնագիրը և համեմատութեան միջոցով գտնում է թէ Սահակի ու Մեսրոպի ժամանակ ինչպէս էր հասկացվում այս կամ այն բառը: Այդ, միանգամայն ճիշտ ու անսխալ միջոցով, Մխիթարին և նրա աշխատակիցներին աջողվում է վերականգնել հայոց լեզուի նախկին մաքրութիւնը: Նրանք բացատրում են բառերի նշանակութիւնը և որպէս զի այդ բացատրութիւնները քմածին չերևան, բերում են վկայութիւններ գրքերից, գնելով այն կտորները, ուր գործ է ածված բացատրութեան կարօտ բառը:

Բաւական չը համարելով այդ կերպով պարզած բացատրութիւնները, Մխիթարը դիմեց և կենդանի լեզուին. հարց ու փորձ արաւ Վենետիկում եղած հայերին և ժողովրդական լեզուից էլ շատ հարստութիւններ հանեց: Ընտրութիւնը կատարվում էր շատ խիստ կերպով. պէտք է իմանալ որ այն ժամանակվայ ս. Ղազարի վանքը

շատ ձեռագիրներ չունէր, որպէս զի շատ բառեր և շատ բացատրութիւններ քաղէր նրանց միջից. այդ պատճառով էլ բառարանի մէջ չեն մտցնվում այն բառերը, որոնց միտքը բաւականաչափ պարզ չէ կամ կասկածելի է։ Այդպիսի բառերից կազմվեց մի ուրիշ բառարան, որ հրատարակվեց յետոյ։

Այսպիսի զարմանալի տոկունութեամբ տարած աշխատութիւնը մի շատ պատկառելի գործ տուեց մեզ։ Բառարանը բաղկացած է 1273 երեսից. իւրաքանչիւր երես ունի երկու սիւնակ, իսկ իւրաքանչիւր սիւնակ բաղկացած է 62 մանրատառ տողերից։ Ընդամէնը, ուրեմն, մօտ 79,000 տող։ Եւ եթէ չը մոռանանք որ դա բառարան է, որի իւրաքանչիւր բառը պիտի չափված, կշռված լինի, մանրակրկիտ ուսումնասիրութիւններից հանուած, այն ժամանակ կարող ենք երևակայել թէ ինչ վիթխարի աշխատութիւն են գործ դրել Մխիթարը և նրա աշակերտները այդ առաջին հայերէն բառարանի վրա։

Այո, մեզանում էլ տպագրական մամուլը սկսում էր մտքի և աշխատանքի հրաշալիքներ տալ։ Միայն այս գործը որքան է բարձրացնում Մխիթար Աբբային իր ժամանակակիցների մէջ։ Դրանով աջողվում է լեզուն կենդանացնել, տալ նրան մի մեծ հարստութիւն, որի նշանակութիւնը հասկանալու համար բաւական է նոյն իսկ մի թեթև հայեացքով չափել այն ժամանակվայ գրականութիւնը, նրա աղքատ ու անտաշ լեզուն։ Բառա-

րանը Մխիթարեան միաբանութեան համար կատարեալ և վերջնական յաղթանակի մի հոյակապ կոթող էր։ Նա տուեց ս. Ղազարի վանքին տիրապետութեան անսահման իրաւունք. վանքը այնուհետև մեր լեզուի տէրն է դառնում, ղեկավարում է նրան իբրև բարձրագոյն հեղինակութիւն, իբրև ակադեմիա, որ օրէնքներ է արձակում և որին հպատակվում են ամենքը։

Բայց Մխիթար Սեբաստացուն չէր վիճակված տեսնել իր սկսած հիանալի գործի վախճանը։ Բառարանի վերջին թերթերն էին տպվում, երբ նա ծանր հիւանդութիւնից վախճանվեց (1749 թուականի ապրիլի 27-ին) 74 տարեկան հասակում, և թաղվեց իր շինած վանքի մէջ։

Այդ երկարատև, եռանդոտ կեանքի գլխաւոր հանգամանքները մեզ արդէն ծանօթ են։ Մենք գիտենք թէ որքան շատ չարչարվեց այդ մարդը. գիտենք թէ որտեղից սկսեց նա և ուր վերջացրեց իր գործունէութիւնը։ Սեբաստիայի երկու անգրագէտ կոյսերի աշակերտը մեռնում է Վենետիկում, իր ձեռքով հաստատած բարեկարգ, մեծագործ միաբանութեան գրկում. Աստուածաշունչը, Հայկազեան Բառարանը նրա մեծ գործերն են. կաթոլիկ աշխարհում նա այնքան հռչակ էր ստացել, որ երբ գնացել էր Հռոմ, կարդինալներից մի քանիսը արժանի էին համարում նրան պապական գահի

վրա բազմելու *)։ Մահը վերջ էր դնում այդ եռանդոտ, բազմաչարչար կեանքին մի այնպիսի ժամանակ, երբ նրա միաբանութեան գոյութիւնը ապահովված էր։ Մխիթարը ամեն ինչ պատրաստել էր, կարգի բերել։ Նա պատրաստել էր ոչ միայն օթևան, որի մէջ պիտի յարատևէր միաբանութիւնը, այլ և այն հոգին, որ պիտի թագաւորէր այդ օթևանի մէջ. և նրան մնում էր միայն կտակ թողնել իր աշակերտներին, որ հաւատարիմ մնան իր սկսած գործին։ Երջանիկ էր Մխիթարը և ժառանգների կողմից. դրանք զանցառու, վատնող և անբարեխիղճ ժառանգորդներ չը հանդիսացան։ Հայկազեան Բառարանի երկրորդ հատորը, որ բաղկացած էր հնացորդ բառերից, յատուկ անուններից, աշխարհաբարից գրաբար և գրաբարից աշխարհաբար թարգմանութիւններից, հրատարակեցին այդ աշակերտները։ Բայց միայն այդքանը չէր Մխիթարի յաջորդների գործը։ Նրանք ոչ միայն սրբութեամբ պահեցին իրանց ստացած ժառանգութիւնը, այլ և աւելի հարստացրին, ճոխացրին նրան։

Մխիթարի աբբայութեան շրջանը դեռ սկզբնաւորութիւնն էր, զարգացման առաջին աստիճանը, սաղմնային դրութիւնը։ Դա կէս դարի մի շրջան էր։ Մխիթարի մահվանից յետոյ սկսվում

*) Ագոնց, եր. 292։

է միաբանութեան նոր, երկրորդ շրջանը, որ նոյնպէս կէս դար է շարունակվում։ Այդ շրջանին մենք կը վերադառնանք յետոյ։ Իսկ այժմ մենք պիտի տեղափոխվենք Արևելեան Հայաստան և տեսնենք թէ ինչեր էին կատարվում այնտեղ։

ԳԼ. Գ.

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

I

Վենետիկից և Կ. Պոլսից յետոյ որպիսի հակապատկեր է ներկայացնում Հայաստանի այն բաժինը, որ Պարսկաստանի տիրապետութեան տակ էր գտնվում։ Այստեղ անփոփոխ ծանրացած է դարերի գժբախտ իրականութիւնը. մահմեդական սանձարձակ բռնակալութիւնը ճնշում է առաջվայ պէս. նոյն ստրուկները և նոյն կեղեքիչները։ Այստեղից նայելով դէպի արևմուտք, մենք տեսնում ենք թէ որքան մեծ առաջադիմութիւն է Կ. Պոլսում և Վենետիկում սկսված գրական շարժումը։ Այստեղ ոչ տպարան է գործում, ոչ գրքեր են հեղինակվում կամ թարգմանվում։ Այստեղ ոչինչ յարմարութիւն չը կայ որ մտաւոր առաջադիմութեան ճառագայթները թափանցեն պարսկական արիւնոտ իրականութեան ներսը։ Ու արևելեան Հայաստանը տգէտ ու խեղճ է. նա յետ է մնում գրական գոր-

ծում, մինչդեռ արևմտեան հայութիւնը առաջ է գնում թէև դանդաղ, բայց հաստատուն քայլերով։

Բայց այստեղ, պարսկական Հայաստանում, կայ մի ուրիշ շարժում, որի մասին հասկացողութիւն անգամ չունի արևմտեան հայութիւնը։ Այստեղ արծարծվում է քաղաքական ազատութեան միտքը։ Ահա թէ ինչ խոշոր գործ կարող էր Պարսկահայաստանը հակադրել Թիւրքահայաստանի մտաւոր շարժման։ Պատմութիւնը, բաժանելով հայերին երկու մասի, բաժանել է և այդ մասերի դերերը. արևմուտքում գրական շարժում, իսկ արևելքում քաղաքական շարժում—այսպէս է դրութիւնը տասնութերորդ դարում։ Երկու շարժումները չը միացան միմեանց հետ. պարսկա-թիւրքական սահմանագլուխը մի հզօր անջրպետ հանդիսացաւ դրանց մէջ. մի կողմում գրական շարժում առանց քաղաքական իդէալների, միւս կողմում—քաղաքական շարժում առանց գրական-մտաւոր շարժման։

Արևելեան Հայաստանի սկսած գործն էլ իր խոշոր հանգամանքները, իր հերոսներն ունէր։ Եթէ արևմուտքում կար մի Մխիթար Սեբաստացի, որ հերոսական ջանքերով գրական գաղթականութիւն էր հիմնում, արևելքում էլ գործում էր Իսրայէլ Օրին, որ նոյնպիսի հերոսական ջանքեր էր թափում հայերի մէջ մի ազատական շարժում ստեղծելու և կենդանացնելու համար։ Տասնութերորդ դարի այս երկու խոշոր անունները—Մխիթար և Օրի—հաւասար իրաւունքներ ունեն մեր

ազգի երախտաւորներ կոչուելու, թէև մէկը խաղաղ վանական գործիչ էր, դրչի և դպրութեան մարդ, իսկ միւսը քաղաքական գործիչ էր, որ իր հայրենիքի բարօրութեան համար վառօդի և արիւնի գաղափարն էր քարոզում։ Նրանք առաջացրին շարժումներ, որոնք հաւասարապէս անհրաժեշտ էին հայերին, որոնք աստիճանաբար զարգացան և դարձան մեր վերածնութեան նշանաբանը։

Օրին, ինչպէս գիտենք *), իր ծրագիրներով և հաւատարմաթղթերով Սիւնիքից ուղևորվեց Եւրոպա 1699 թուի գարնանը։ Կ. Պօլսի վրայով նա անցաւ Գերմանիա, ներկայացաւ Պֆալցի կուրֆիւրստին։ Նրա հետ էր Մինաս վարդապետ Տիգրանեան։ Կուրֆիւրստը հիւանդ էր և Օրին ստիպված էր վեց ամիս սպասել Դիւսելդորֆում։ 1699-ի աշնանը Օրին ներկայացրեց կուրֆիւրստին մանրամասն գրութիւններ, որոնց մէջ նկարագրում էր իր ճանապարհորդութիւնը դէպի Հայաստան և պատմում էր թէ ինչպէս պէտք է գլուխ բերել հայերի ազատութեան սուրբ և մեծ գործը։ Պֆալցի իշխանը, միանգամայն հաւանութիւն տալով այդ ծրագիրներին, ուղարկեց Օրիին Վիեննա, Լէօպօլդ I կայսրի մօտ, որի աջակցութեամբ պիտի գլուխ բերվէր հայերի ազատութիւնը։

Բայց Եւրոպայի քաղաքական հանգամանքները փոխվել էին և շատ աննպաստ էին հայկական

*) «Հայկ. Տպ.» I. գլ. XV.

դատի համար։ Կայսրը սաստիկ զբաղված էր իր համար աւելի կարևոր, աւելի մեծ և կնճռոտ հարցով։ Սպանիայի թագաւորը մահամերձ դրութեան մէջ էր և անժառանգ։ Վաղուց հարց էր ծագել թէ ով պիտի ժառանգէ նրա թագը և այդ հարցը գրաւել էր պետութիւնների ընդհանուր ուշադրութիւնը։ Սպանիան այն ժամանակ մի ահագին պետութիւն էր, որ լայնատարած կալուածներ ունէր թէ Եւրոպայում և թէ մանաւանդ երկրագնտի միւս մասերում. առած էր դարձել թէ արևը մայր չէ մտնում սպանիական պետութեան սահմաններում։ Այդ մեծ հարստութեան ժառանգորդ էին հանդիսանում ֆրանսիական Լուդովիկոս XIV թագաւորը և աւստրիական Լէօպօլդ կայսրը, որոնք ազգակցական կապերով կապված էին Սպանիայում թագաւորող տան հետ։ Երկու ժառանգները թէև պայմանագրերով համաձայնութիւն էին կայացրել սպանիական ժառանգութիւնը բաժանելու համար, բայց այդ ժառանգութիւնը չափազանց չաղ կտոր էր, չափազանց շատ էր ախորժակ գրգռում, ուստի և ամէն մէկը աշխատում էր առիւծի բաժին ստանալ։ Սպանիական թագաւորը մեռաւ 1700 թուին. նա կտակով ժառանգ էր նշանակել Լուդովիկոսի թոռին, որ գնաց Սպանիա՝ գահ բարձրանալու համար։ Բայց Լէօպօլդն էլ կամենում էր իր որդուն նստեցնել այդ գահի վրա։ Պատերազմը անխուսափելի էր. նա պատրաստվում էր վաղուց

և պիտի վճռէր ժառանգութեան հարցը յօգուտ այս կամ այն կողմի։ Լէօպօլդը շտապեց խաղաղութեան դաշինք կապել թիւրքերի հետ, որպէսզի նրանց դէմ կռւող զօրքերը նոր պատերազմի պատրաստվէին։ Իսկ այդ նոր պատերազմը պիտի լինէր շատ մեծ, երկարատև։ Սպանիական ժառանգութեան հարցի մէջ շատ կարևոր շահեր ունէին և Անգլիան ու Հօլլանդիան, որոնք և կայսրի դաշնակից հանդիսացան։ Լուդովիկոս պիտի կռւէր համարեա Եւրոպայի կէսի դէմ և պատերազմի դաշտը շատ լայնատարած էր. նա բռնում էր Իտալիան, Հռէնոսի ափերը, Սպանիայի սահմանները։

Ահա այդ պատրաստութիւնների մէջ էր Լէօպօլդ կայսրը, երբ Իսրայէլ Օրին ներկայացաւ նրան՝ հեռու արևելքում տանջվող մի քրիստոնեայ ժողովրդի ազատութիւնը խնդրելու համար։ Կայսրը, ի հարկէ, չէր կարող կատարել Օրիի խնդիրքը, թէև նրանից խնդրում էին մի փոքրաթիւ բանակ։ Բայց նա միանգամից չը մերժեց էլ հայերին ազատելու միտքը. ընդհակառակն, յուսադրական թուղթ գրեց հայ մելիքներին, իսկ Օրիին խորհուրդ տուեց դիմել Ռուսաստանի օգնութեան, որովհետև, ասում էր, առանց ռուսաց թագաւորի համաձայնութեան և աջակցութեան չէ կարելի զօրք ուղարկել Կասպից ծովի ափերը։ Լէօպօլդը թոյլ, անվճռողական մարդ էր. հայ պատգամաւորը նը-

րանից լսեց միայն խոստումներ, բարի ցանկութիւններ, բայց որ և է դրական գործ, հաստատ դիտաւորութիւն նա չը կարողացաւ իմանալ, թէև քաղաքական աշխարհի դրութիւնը պարզ ցոյց էր տալիս, որ կայսրը չէ էլ կարող խոստումներից և բարի ցանկութիւններից մի քայլ առաջ գնալ։

Օրին պիտի մտածէր Ռուսաստան ճանապարհորդելու մասին։ Հայերի բարերարը, Պֆալցի կուրֆիւրստը, այստեղ էլ չը խնայեց իր օգնութիւնը և մի նամակ գրեց ռուսաց Պետրոս թագաւորին, որին յայտնում էր հայ պատգամաւորների խորհուրդը, իր համակրութիւնը հայերի գործին և խնդրում էր նրա աջակցութիւնը։ Օրիի հետ կուրֆիւրստը մի նամակ էլ ուղարկեց Անգեղակոթի Մելիք-Սաֆրազին և նրա ընկերներին։ Այդ նամակի մէջ նա ամենադրական, ոգևորող խօսքերով յուսադրում էր հայ իշխաններին, թէ Օրիի բերած ծրագիրը անպատճառ կիրականանայ, թէ քրիստոնեայ զօրքեր կուղարկվեն Հայաստան և նրանց օգնութեամբ հայերը կը թօթափեն պարսկական լուծը ու անկախութիւն, ազատութիւն, խաղաղութիւն կը հաստատեն իրանց երկրում։ Խոստանում էր ամենամեծ գաղտնապահութիւն և հաւատացնում էր մելիքներին, որ Աստուած Օրիին է ընտրել հայրենիքի մեծ և սուրբ գործը գլուխ հանելու համար։

Լէօպօլդ կայսրն էլ յանձնարարական նամակ

գրեց Պետրոս Թագաւորին։ Հայ պատգամաւորութիւնը 1701 թուականի գարնանը ճանապարհւեց դէպի Ռուսաստան, յանձնարարական նամակ ստացաւ նաև Լեհաստանի թագաւորից ու յունիսի 30-ին մտաւ ռուսաց սահմանները։ Սմօլենսկում նրան ընդունեցին իբրև Պֆալցի կուրֆիւրստի և կայսրի դեսպան։ Օրիի և Մինաս վարդապետի հետ էր և Նաղար Օրեխօվիչ, որ հայաստանցի հայ էր, բայց ինչպէս երևում է, Լեհաստանում էր ապրում. սա էլ թարգմանի պաշտօն էր կատարում։ Հասնելով Մօսկվա, Օրին իր հետևորդների հետ լաւ ընդունելութիւն գտաւ. ռուսաց կառավարութիւնը առանձին բնակարան յատկացրեց նրան և տալիս էր թէ նրա և թէ նրա հետ եղած մարդկանց ուտելիքի փողը։ Յուլիսի 11-ին, տեղ հասնելուց չորս օր յետոյ, բօեարին Գօլօվին հարցրեց Օրիից դեսպանութեան նպատակը։ Սա պատասխանեց, թէ դա գաղտնիք է, որ բաց կանէ թագաւորի առաջ, որովհետև ինքը ռուսերէն չը գիտէ, իսկ թարգմանի միջոցով մանրամասն բացատրութիւններ տալը անյարմար է համարում։ Սակայն Պետրոսը իսկոյն ունկնդրութիւն չը շնորհեց հայ պատգամաւորին։ Նոյն Գօլօվինը առաջարկեց նրան մի քանի հարցեր, որոնց Օրին յանձն առաւ պատասխանել գրաւոր կերպով։

Այսպէս սկսւեցին Օրիի հռչակաւոր բանակցութիւնները ռուսաց կառավարութեան հետ։ Բայց այստեղ էլ աննպաստ հանգամանքներ և արգելք-

ներ կային կանգնած հայոց հարցի առաջ։ Ռուսաստանն էլ այդ ժամանակ խառնուած էր պատերազմական գործողութիւնների մէջ, որոնք նրա համար կեանքի և մահւան նշանակութիւն ունէին։ Սպանիական ժառանգութեան համար բացւած պատերազմի հետ միաժամանակ սկսւել էր և Հիւսիսային կոչւած պատերազմը։ Նա ուղղւած էր շվեդական պետութեան դէմ և նրա հոգին Պետրոսն էր, որին մի կողմից Լեհաստանն էր օգնում, իսկ միւս կողմից—Նօրվեգիան։ Կամենալով Ռուսաստանի սահմանները հասցնել ծովին, որպէս զի հեշտ լինի հաղորդակցութիւնը Եւրօպայի հետ, կամենալով, ինչպէս ասում է բանաստեղծ Պուշկին, պատուհան բաց անել դէպի Եւրօպա, Պետրոս Մեծը աչք էր դրել Բալտիկ ծովի արևելեան ափերի վրա, ուր տիրապետում էին շվեդացիները։ Պատերազմը սկզբում շատ անյաջող էր ռուսների համար։ 1700 թուականի նոյեմբերի 19-ին ռուսաց բանակը, թւով 35—40 հազար, որ պաշարել էր Նարվա քաղաքը, ենթարկւեց 8,500 շվեդացիների յարձակման, սաստիկ պարտութիւն կրեց և փախուստ դարձաւ։ Պետրոսը, ինչպէս այդ յատուկ է մեծ հոգիներին, չը յուսահատւեց այդ պարտութիւնից, այլ խրատներ առաւ։ Նա գիտէր որ այդպէս էլ պիտի լինէր, որովհետև ռուսները դեռ անկիրթ են և, ուրեմն, չը պիտի կարողանան դիմանալ նոյն իսկ մի փոքրաթիւ եւրօպական զօրքի յարձակման։ Հեռատես, խորաթափանց թագաւորը յայտարարեց,

որ ռուսները պատերազմել պիտի սովորեն իրանց յաղթող թշնամիներից և սկսեց եռանդով պատրաստութիւններ տեսնել. հաւաքեց նոր զօրքեր, կրթում, սովորեցնում էր նրանց, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ շվեդական թագաւորը արշաւել էր Լեհաստան։

Այսպէս էր գործերի դրութիւնը այն միջոցին, երբ Օրին հասաւ Մոսկվա։ Պետրոսին հարկաւոր էին յաղթութիւններ, որովհետև հարկաւոր էին Բալտիկ ծովի ափերը. բայց դեռ ոչ մի յաղթութիւն նա չէր տարել, դեռ մի ափ հող չէր գրաւել իր ցանկացած տեղերում, իսկ շվեդական Կարոլոս XII թագաւորը ամեն ժամանակ կարող էր Լեհաստանից իր զէնքը դարձնել Ռուսաստանի դէմ։ Այսպիսի մի լարված դրութեան մէջ հայերի ներկայացուցիչը զօրք էր խնդրում իր խեղճ հայրենիքի ազատութեան համար։ Անհնարին էր, ի հարկէ, այդպիսի գործ սկսել այժմ։

Բայց քանի որ հարցը Արևելքին էր վերաբերում, Պետրոսը չէր կարող միանգամայն անտարբեր մնալ։ Նրա մեծ խելքը վաղուց էր ըմբռնել թէ Ռուսաստանի բարեկեցութեան և տնտեսական առաջադիմութեան համար ինչ նշանակութիւն ունեն արևելեան երկիրները։ Ազով բերդը թիւրքերից խլելուց յետոյ, 1698-ին, Պետրոսը արդէն մտածում էր Ազովեան և Կասպից ծովերը մի ջրանցքով միացնելու մասին։ Կասպից ծովի առևտրական և քաղաքական նշանակութիւնը նա շատ լաւ էր հաս-

կանում, ապա ուրեմն պիտի հետաքրքրվէր և այդ ծովի շուրջը ապրող ազգերով։ Արևելեան գործերի վերաբերմամբ թագաւորը ունէր իր ծրագիրներն ու դիտաւորութիւնները, սակայն այդ բոլորը նա թողնում էր յարմար ժամանակի, երբ շվեդական պատերազմը վերջացած կը լինէր այնպէս, ինչպէս ինքն էր ցանկանում։

Ահա այս պատճառներով Պետրոսը առանձին ուշադրութիւն դարձրեց Օրիի վրա։ Թէև այժմ չէր կարելի իրագործել նրա ծրագիրները, բայց դրանք հարկաւոր էին ապագայի համար։ Եւ ռուսաց կառավարութիւնը սկսեց ամենայն հետաքրքրութեամբ լսել Օրիին, որ իբրև լաւատեղեակ մարդ՝ լիուլի տեղեկութիւններ էր տալիս պարսկական գործերի մասին։ Հայոց պատգամաւորին առաջարկուած էին հետևեալ հինգ հարցերը. 1) Ո՞րքան զօրք է մտադիր տալ Պֆալցի կուրֆիւրստը. և առհասարակ ուրիշ ինչ գերմանական իշխաններ պիտի օգնեն և որքան զինուոր պիտի տան։ 2) Այդ զօրքերը ինչ ճանապարհով և ինչ պատրուակով պիտի անցնեն Ռուսաստանի վրայով և ով պէտք է պաշար տայ նրանց։ 3) Ռուսաց թագաւորի հողերով արշաւելիս զօրքերը չեն վնասի թագաւորի հպատակներին և ինչպէս դրան հաւատալ։ 4) Եթէ ամենակարող Աստուածը բախտ կը տայ և կը գրաւվեն տեղեր, ում անունով պիտի պահվեն նրանք և ում զօրքերը ինչ քանակութեամբ պիտի մնան այդ տեղերում։ 5) Զինուորական արշաւանքը վերջա-

ցնելուց յետոյ, որ տեղերում կը լինի զօրքերի ձմեռոցը և նրանք որտեղից և ում հաշուով պաշարեղէն կը ստանան։

Յուլիսի 14-ին Օրին ուղարկեց Պետրոս Թագաւորին իր առաջին գրաւոր յայտարարութիւնը։ Դրա մէջ նա նախ և առաջ շնորհակալութիւն էր յայտնում այն ընդունելութեան համար, որին արժանացան ռուսաց հողի վրայ թէ ինքը և թէ իր հետևորդները։ Դիմելով ապա իր առաքելութեան նպատակին, Օրին ասում էր.

Եկանք մենք այստեղ, որպէս զի ընկնենք ձեր Թագաւորական մեծութեան ոտները և մեզ այստեղ ուղարկողների կողմից խնդրենք ողորմութիւն օգնել մեր խեղճուկ ժողովրդին, որ սաստիկ տանջվում է անհաւատների բռնութեան տակ։ Զենք կասկածում, որ ձեր Թագաւորական մեծութեանը յայտնի է թէ հայոց երկրում սրանից առաջ, հին ժամանակներում, եղել են թագաւոր և քրիստոնեայ իշխաններ. բայց յետոյ, նրանց անմիաբանութեան պատճառով, տեղի ունեցաւ այն, որ հայոց այդ ամբողջ Թագաւորութիւնը ընկաւ անհաւատների լծի տակ։ Երկու հարիւր յիսուն և աւել տարիներ կան, ինչ այդ ամբողջ քրիստոնէութիւնը հեծում է անհաւատների լծի տակ. և ինչպէս Ադամի որդիները յուսով սպասում էին Մեսիայի գալստեան, որ պիտի ազատէր նրանց յաւիտենական մահից, այնպէս էլ այս խեղճ ժողովուրդը միշտ ապրել է և այժմ ապրում է այն յոյսով, թէ օգնութիւն կը ստանայ ձեր Թագաւորական մեծութիւնից։ Նրանց մէջ կայ նախագուշակութիւն թէ վերջին ժամանակներում անհաւատները կը դառնան սաստիկ կատաղած և կը սկսեն հարկադրել քրիստոնեաներին ընդունել իրանց ամենագարշելի օրէնքը. և այն ժամանակ կը գայ Մոսկվայի Օգոստափառ տանից մի մեծ իշխան, որ Աղեքսանդր Մեծից էլ շատ քաջ կը լինի և կը վերցնէ հայոց Թագաւորութիւնը ու կազատէ քրիստոնեաներին։ Այս մարգարէութեան հաւատում էին մինչև այժմեան ժամանակը և հաւատում են այժմ էլ, որովհետև իսկապէս տեսնում ենք, որ անօրէնները այն աստիճան չարութեան են հասել, որ քրիստոնեաներին մեծ հարկերով և բռնութեամբ հարկադրում են ընդունել Մահմէդի հաւատը, իսկ միւս կողմից տեսնում ենք այն բնական վառ ձգտումը, որ ունի ձեր Թագաւորական մեծութիւնը քրիստոնէական հաւատը մեծացնելու և բազմացնելու համար, ինչպէս նաև ձեր ճշմարիտ խոստումը պատերազմել անհաւատների դէմ, որոնք երբէք այնքան թոյլ ույժ չեն ունեցել, ինչպէս այժմ, որովհետև 70 և աւել տարիներ կան ինչ նրանք մի նշանաւոր պատերազմ չեն ունեցել *)։

Պատասխանելով իրան առաջարկած հինգ հարցերին, Օրին ասում էր. 1) Կուրֆիւրստի գընդերը մեզ հարկաւոր չեն. պատերազմի առաջին տարում հարկաւոր չեն ուրիշ զօրքեր, բացի ռուսաց զօրքերից։ Եւ մենք զօրքեր չենք խնդրել Կուրֆիւրստից, այլ միայն օգնութիւն, քանի որ նա բարեկամութիւն ունի եւրօպական շատ վեհապետների հետ. մենք օգնութիւն խնդրեցինք, որպէս զի եթէ Թիւրքիան մեզ դէմ պատերազմ սկսէ, Եւրօպան այդ ժամանակ օգնէ մեզ ծովի և ցամաքի կողմից։ Բայց որովհետև Կուրֆիւրստը այնպիսի իշխան է, որ ուզում է մաս ունենալ այս փառաւոր

---

*) Эзовъ—„Сношенія Петра Великаго съ арм народомъ“, եր. 75։ Օրիի պատմութիւնը մենք ամբողջապէս վերցնում ենք այդ գրքից։

գործի մէջ, ուստի նա խոստանում է իր զօրքերը, և եթէ հաճոյ լինի ռուսաց թագաւորին, կը տայ օգնութիւն և ուրիշ բաներով։ Բացի կուրֆիւրստից և կայսրից, մենք գերմանական ուրիշ իշխաններին չենք յայտնել մեր նպատակը։ Իսկ կայսրն էլ խոստանում է օգնութիւն, եթէ կամենայ թագաւորը։ 2) Զօրքերը Ռուսաստանի միջով անցնելիս, ամեն ինչ կառնեն փողով, կը վճարեն նոյն իսկ ձուի գինն էլ. նրանք անցնում են ռուսաց հողերով ռուսաց թագաւորի անուան տակ։ 3) Եթէ թագաւորը թոյլ տայ զօրքերին անցնել իր երկրով, ամեն տեսակ ապահովութիւն կը տրուի որ բնակիչները ոչինչ վնաս չեն կրի, ընդհակառակն, օգուտ կը ստանան զօրքերից։ 4) Եթէ Աստուած բախտ կը տայ, բոլոր գրաւված բերդերը թագաւորի իշխանութեան տակ կը մնան և այնտեղ ռուսաց զօրքեր կը մնան։ 5) Զինուորական արշաւանքը վերջացնելուց յետոյ թագաւորի զօրքերը կը ձմերեն հայոց թագաւորութեան մէջ և կը կերակրվեն հայերի հաշւով։ Երկիրը այնքան պտղաբեր է և հարուստ, որ նրա իւրաքանչիւր նահանգը կարող է 100 հազար զինուոր կերակրել առանց դժուարութիւնների։ Ամենագլխաւորն այն է, աւելացնում էր Օրին, որ թագաւորը ընդունէ մեր խնդիրքը ու համաձայնվի դառնալ մեր երկրի տէր։ Ցետոյ կիմանայ նորին մեծութիւնը թէ դրանից ինչ մեծ չահ կունենայ։ Բաւական է որ միանգամից 10 կամ 20 հազար զինուոր մտնէ անհաւատների երկիրը, և թագաւորը

կը տեսնէ որ 10 օրվայ ընթացքում 100 հազարից աւել հայ կը մտնէ նրա իշխանութեան տակ։ Մեծ պատրաստութիւններ հարկաւոր չեն, հայերը մեծ բանակ չեն պահանջում, այլ խնդրում են միայն 10—20 հազար զօրք, որովհետև իրանք էլ պատրաստ ունեն մեծ քանակութեամբ զինված մարդիկ։

Ծրագիրը հրապուրիչ էր ամեն կողմից։ Ռուսաց կառավարութիւնը աւելի ևս ուշադիր դարձաւ և սկսեց աւելի մանրամասն տեղեկութիւններ հաւաքել։ Հարկաւոր էին բերանացի բացատրութիւններ էլ, և մենք տեսնում ենք որ յուլիսի երկրորդ կէսում հայոց պատգամաւորի և ռուսաց կառավարութեան մէջ յարաբերութիւնները աւելի ևս եռանդոտ բնաւորութիւն են ստանում։ Օրին ամենից շատ աշխատում էր որ իր բանակցութիւնները գաղտնի մնան, որովհետև եթէ մահմեդական աշխարհին յայտնի դառնար այդ բանը, հայ ազգը մեծ վտանգի մէջ կընկնէր։ Զգուշութիւնը նա այն աստիճանին էր հասցնում, որ նոյն իսկ չէր հաւատում իր թարգման Օրեխօվիչին, նկատի ունենալով նրա երիտասարդ հասակը։ Այդ պատճառով ռուսաց կառավարութիւնը թարգմանի պաշտօնը յանձնեց Նիկօլայ Սպօթարիուսին, մի յոյնի, որ ծնվել էր Մօլդավիայում, կրթութիւն էր ստացել Կ. Պօլսում և Իտալիայում, իսկ 1672 թւականից տեղափոխվել էր Մօսկվա, ուր ծառայում էր իբրև թարգման և գրական աշխատութիւններով էր զբաղվում։ Սպօթարիուսն էլ մի ճնշված և գերի ազգի զաւակ էր,

միջնորդ էր հանդիսանում յունաց պատրիարքների և ռուսաց Թագաւորների քաղաքական գաղտնի յարաբերութիւնների մէջ և ուշադրութեամբ հետևում էր թէ ինչեր են կատարվում Օսմանեան պետութեան մէջ: Նրան վիճակված էր կարևոր դեր կատարել և այն գործի մէջ, որ սկսել էին հայերը:

Օրին նրա հետ խօսում էր Թիւրքերէն, իսկ նա ռուսերէնի էր Թարգմանում այդ խօսակցութիւնը: Մի շարք նիստեր տեղի ունեցան Օրիի, Սպօթարիուսի և մի ռուս պաշտօնեայի մասնակցութեամբ: Այդ նիստերի արձանագրութիւնները ցոյց են տալիս որ ռուսաց կառավարութիւնը աշխատում էր որքան կարելի է շատ մանրամասն և բազմակողմանի տեղեկութիւններ ստանալ հայկական շարժման մասին, մանաւանդ կամենում էր պարզել թէ ինչ դեր են կատարում այդ շարժման մէջ արևմտեան Եւրօպայի վեհապետները: Օրիից պահանջվում էր դիպլօմատիկան մեծ նրբամտութիւն, որպէս զի ռուսների մէջ կասկած չը ծագէ թէ հայոց հարցը Եւրօպայի մէջ սարքված մի բան է, որ կարող է Ռուսաստանի շահերին վնասել: Այդ պատճառով էլ Օրին աշխատում էր հաւատացնել որ հայերը իրանց յոյսը դրել են Ռուսաստանի վրա, որ արևմտեան քրիստոնեայ վեհապետների կողմից միայն համակրութեան ցոյցեր են եղել մինչև այժմ, իսկ գործից սպասվող բոլոր քաղաքական օգուտները միայն Ռուսաստանը պիտի քաղէ: Խօսք կար, ի հարկէ, և այն մասին թէ ինչու

հայ պատգամաւորութիւնը անմիջապէս չէ դիմել Մօսկվա, այլ նախ գնացել է Եւրօպա. Օրին այդ առիթով բացատրեց թէ պարսիկների ահը ստիպեց իրան այդպիսի ճանապարհ բռնել:

Համոզված լինելով որ պատերազմական գործողութիւններ սկսելու ամենալաւ ժամանակն է, Օրին Թախանձում էր որ իր զեկուցումները շուտ յայտնվեն Թագաւորին, որ Պետրոսը ընդունէ հայերի խնդիրքը և խօսք տայ թէ յանձն է առնում գլուխ բերել նրանց ազատութեան գործը: Այդ անելուց յետոյ Թագաւորը, ինչպէս խնդրում էր Օրին, պիտի կայսրի և կուրֆիւրստի նման յուսադրական Թուղթ գրէ հայ մելիքներին, որոնք սպասում են պատասխանի: Օրին մտադիր էր այդ բոլոր Թղթերը յատուկ սուրհանդակի ձեռքով ուղարկել հայերին Աստրախանի վրայով: Իսկ պատերազմական գործողութիւնները, ասում էր նա, պէտք է սկսել իսկոյն ևեթ, նոյն տարվայ հոկտեմբեր ամսից ոչ ուշ: Եւ որովհետև շվեդական պատերազմը մեծ խոչընդոտ էր հանդիսանում այդ բանի դէմ, ուստի Օրին հաւատացնում էր թէ այդ պատերազմը ոչինչ արգելք չէ կարող առաջացնել. Ռուսաստանը Կովկասին սահմանակից տեղերում ունի կօզակների զօրք, կարող է հաւաքել այդ զօրքը՝ շվեդական պատերազմի դաշտը ուղարկելու պատրուակով, բայց կարելի է յանկարծ դարձնել նրան դէպի Պարսկաստան և անակնկալ կերպով, քամու նման, յարձակվել: Արշաւանքի խիստ արագու-

թիւնը կը վճռէ գործի ելքը ամենաշատը մի քանի օրում։ Հարկաւոր չէ որ զօրքը ունենայ իր հետ ծանրոցքներ, բացի թնդանօթներից. ամեն ինչ՝ փող, պաշար, հագուստ առատ է և պատրաստ հայոց երկրում։

Բայց որքան էլ շտապէր Օրին, ռուսաց կառավարութիւնը չէր կարող մի այդպիսի մեծ գործ սկսել առանց երկար ու բարակ մտածելու, միայն հաւատալով հայրենասէր հայի խօսքերին։ Օրին տեսնում էր որ իր բացատրութիւնները բաւականաչափ մանրամասն և պարզ չեն և այդ պատճառով յաճախ աւելացնում էր, թէ ինքը պատրաստ է պատասխանել ամեն մի հարցի, որ կը տան իրան։ Նա ներկայացրեց նաև զինուորական արշաւանքի մանրամասն ծրագիրը։ Մենք արդէն խօսել ենք այդ ծրագրի մասին, ցոյց ենք տուել թէ ինչ պակասութիւններ ունէր նա *)։ Այստեղ այդ բոլորը կրկնելու կարիք չը կայ և միայն մնում է աւելացնել որ Օրին երբեմն հակասութիւնների մէջ էլ էր ընկնում։ Այսպէս, ռուսներից խնդրած զօրքերի թիւը նա մէկ որոշում էր 10—20 հազար, մէկ 25 հազար, իսկ մի անգամ էլ ասաց թէ նոյն իսկ 5 հազար հոգին էլ բաւական է։ Շատ հասկանալի է որ մի օտար պետութիւնից յանուն քրիստոնէութեան ազատութիւն հայցողը պիտի ամեն կողմից հեշտ իրագործելի ցոյց տար իր

*) «Հայ. Տպ. I, գլ. XV.

ներկայացրած գատը, բայց նա չէր նկատում որ չափազանց հեշտացնելը նոյնքան անհարկաւոր էր, որքան չափազանց դժուարացնելը։

Այդ բոլորը նախնական բանակցութիւններ էին։ Օրիի բոլոր զեկուցումները ներկայացրվեցին Պետրոս Մեծին և միայն հոկտեմբերին Օրին տեղեկութիւն ստացաւ որ թագաւորը առանձին ունկնդրութիւն պիտի շնորհէ նրան։ Այդ ունկնդրութիւնը տեղի ունեցաւ հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբին։ Օրին ներկայացաւ թագաւորին իբրև Պֆալցի կուրֆիւրստի դեսպան և մատուցեց ընծաներ։ Ընդունելութիւնը միանգամայն գոհացրեց Օրիին։ Իսկ նոյեմբերի 19-ին թագաւորի անունից յայտարարվեց նրան ռուսաց կառավարութեան պատասխանը։ Մի յուսադրական պատասխան էր դա։ Ամենագլխաւորը, որ ուզում էր իմանալ Օրին, այն էր թէ արդեօք թագաւորը համաձայն է ընդունել հայերի գործը իր հովանաւորութեան տակ։ Նրան յայտնեցին թէ թագաւորը «հակված է», բայց շվեդական պատերազմը թոյլ չէ տալիս որ նա ամբողջ գործը իր վրա վերցնէ։ Ուստի առաջարկվում էր Օրիին գրել կուրֆիւրստին, որ նա, ինչպէս խոստացել էր, ուղարկէ երեք կամ չորս գունդ զինուորներ, որոնց ռուսաց հողի վրայով անցնելու մասին առանձին կարգադրութիւն կանվի։ Բայց ռուսաց կառավարութիւնը չէր ուզում գործը հիմնել Օրիի տեղեկութիւնների վրա։ Դրանից առաջ Պարսկաստան էր ուղարկվել ոմն

Վասիլի Բուչուկօվ՝ պարսկական գործերին մօտիկուց ծանօթանալու համար. ինչպէս երևում է, Բուչուկօվի տուած տեղեկութիւնները այնպէս չէին ներկայացնում Պարսկաստանի դրութիւնը, ինչպէս ներկայացնում էր Օրին։ Այդ պատճառով վճռված էր, նախ քան գործ սկսելը, մի ուրիշ մարդ ուղարկել Պարսկաստան, վաճառականի անունով, աւելի մանրամասն և հաստատ տեղեկութիւններ հաւաքելու համար։ Ցանկալի էր որ այդ մարդու հետ գնար և մի եւրօպական հմուտ ինժեներ, որ կազմէր պարսկական բերդերի յատակագիծը, և Օրիին առաջարկվում էր խնդրել կուրֆիւրստից մի այդպիսի ինժեներ։

Այսպէս ահա, կուրֆիւրստից էր կախված գործ սկսելը։ Բայց Օրին չը կարողացաւ նրա կողմից հաստատ խոստումներ անել. հայերի բախտից էր որ այդ ժամանակ արդէն սկսվել էր պատերազմը սպանիական ժառանգութեան համար. կուրֆիւրստը պիտի մասնակցէր այդ պատերազմին, և, ի հարկէ, չէր կարող այժմ զօրք տալ։ Ցամենայն դէպս, Օրին յանձն առաւ գրել կուրֆիւրստին գնդեր ուղարկելու մասին, բայց ինժեներ ուղարկելը աւելորդ համարեց, ասելով թէ կուրֆիւրստը միայն իրան, Օրիին է հաւատում և մի ուրիշին չի յանձնի այդ գործը։ Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ Պետրոս Մեծը, մինչև գործը սկսելը, չէր ուզում որ և է պաշտօնական թղթի մէջ խօսել հայերի ազատութեան մասին. և այդ

պատճառով Օրիին բերանացի յայտնվում էր թէ ռուսաց կառավարութեան պատասխանը նա ինքը պիտի հաղորդէ թէ կուրֆիւրստին և թէ հայ մելիքներին։ Բայց ամենից կարևորը այն դեսպանութիւնն էր, որ ռուսները ուզում էին ուղարկել Պարսկաստան։ Դրա բերած տեղեկութիւնների հետ պիտի համաձայնեցնէր ռուսաց կառավարութիւնը իր այն գործողութիւնները, որ խոստանում էր սկսել հայերին ազատելու համար։ Օրին, լաւ հասկանալով այդ բանը, սկսեց միջնորդել որ իրան էլ ուղարկեն այդ դեսպանութեան հետ։ Նա մտադիր էր փոխել իր անունը և ձիաներ առնելու պատրուակով շրջել ամեն տեղ։ Մի ուրիշ մարդ, ասում էր նա, չէ կարող իմանալ այն ամենը, ինչ ինքը հեշտութեամբ կիմանայ, որովհետև քրիստոնեաները չեն հաւատայ ուրիշին և ահից ոչինչ են յայտնի նրան։

Բանակցութիւնների այդ դրութեան մէջ շվեդական պատերազմը յանկարծ կլանեց ռուսաց կառավարութեան ամբողջ ուշադրութիւնը։ Դեկտեմբերին ռուսները առաջին յաղթութիւնը տարան, ջարդելով շվեդացիների մի բանակը։ Օրին, ի հարկէ, ստիպված էր ընդհատել բանակցութիւնները։ Առաջին բօեարին Գօլօվինին գրած նամակներում նա շեշտում էր թէ կառավարութիւնը այնքան զբաղված է, որ ինքը չէ կարողանում երկար գրել իր գործի մասին։ Միայն խնդրում էր որ իրան իմաց տրվի թէ ինչ դառաւ պարսկական դեսպանութեան

միտքը, որովհետև եթէ ուղարկվի այդպիսի դեսպանութիւն, ինքն էլ անպատճառ պիտի գնայ նրա հետ. խնդրում էր նոյնպէս որ իրան թոյլ տրվի մարդիկ ուղարկել կուրֆիւրստի և հայ մէլիքների մօտ՝ ռուսաց կառավարութեան պատասխանը յայտնելու համար։ Իսկ եթէ պարսկական դեսպանութիւնը պիտի ուշանայ, Օրին խնդրում էր, Մոսկվայում պարապ չը նստելու համար, ընդունել իրան զինուորական ծառայութեան մէջ և ուղարկել այն բանակը, որ գործում էր շվեդական զօրքերի դէմ։

1702 թւականի մարտին Պետրոսը հրամայեց նորից յուսադրել Օրիին որ շվեդական պատերազմը աջողութեամբ վերջացնելուց յետոյ ինքը անպատճառ իր ձեռքը կառնէ այն գործը, որի համար ուղարկված է նա. այդ մասին Օրին կարող է հաղորդել իրան ուղարկողներին։ Իսկ Օրիին զինուորական ծառայութեան մէջ ընդունելու հարցը թողնվում էր, մինչև որ թագաւորը կը վերադառնայ Արխանգելսկից, ուր գնում էր Սպիտակ ծովի ափերը ամրացնելու համար, որովհետև սպասում էին թէ շվեդացիները այդ կողմից պիտի յարձակվեն Ռուսաստանի վրա։ Օրին և Մինաս վարդապետը, լսելով թագաւորի այդ ողորմած խօսքերը, ինչպէս ասված է պաշտօնական թղթի մէջ, արտասվելով խոնարհ շնորհակալութիւն յայտնեցին նորին թագաւորական մեծութեան, որ նա չը մերժեց իրանց խնդիրքը, այլ թագաւորական խօսքով

և խոստումով հաստատեց և ուրախացրեց իրանց։

Այդ ուրախութիւնը Օրին շտապեց հաղորդել հայերի բարերար կուրֆիւրստին, նոյն մարտին նրա մօտ ուղարկելով իր թարգման Նազար Օրեխովիչին. իսկ ապրիլ ամսին Աստրախանի և Կասպից ծովի վրայով Հայաստան ուղարկեց Միրօն Վասիլեվ անունով հային, որ պիտի մէլիքներին հասցնէր կարևոր թղթեր։ Այս Միրօն Վասիլեվը 30 տարուց ի վեր բնակութիւն ունէր Մոսկվայում, ծառայել էր ռուսաց զօրքի մէջ, ստացել էր կապիտանի աստիճան, տան և ընտանիքի տէր մարդ էր. այդ հանգամանքները Օրիի համար լաւ երաշխաւորութիւն էին որ Միրօնը հաւատարմութեամբ կը կատարէ իր պաշտօնը և կարևոր զգուշութիւններ գործ դնելով կը յայտնէ հայերին թէ նրանց ազատութեան գործը գլուխ գալու վրա է։

Կուրֆիւրստից Օրին պատասխան ստացաւ նոյն տարվայ աշնանը, իսկ Միրօն Վասիլեվը Հայաստանից վերադարձաւ միայն 1703 թւականի գարնանը։ Կուրֆիւրստը Օրիին ուղարկեց այն նամակը, որ ուղղել էր Պետրոս թագաւորին։ Այդ նամակի մէջ Յովհան-Վիլհելմ ջերմագին շնորհակալութիւններ էր յայտնում ռուսաց ինքնակալին այն ուշադրութեան համար, որին նա արժանացրել էր Օրիին ու նրա գործը և շատ խնդրում էր անպակաս անել այդ ուշադրութիւնը և ապագայում, հովանաւորելով տանջվող քրիստոնեաներին ազատե-

լու փառաւոր ձեռնարկութիւնը։ Իրան, Օրին, կուրֆիւրստը յայտնում էր իր բաւականութիւնը որ ռուսաց մեծ թագաւորը բարեհաճութեամբ է ընդունել նրան. և իր ձեռքով աւելացնում էր այդ նամակին. «Ամբողջ սրտից խնդրում եմ Աստուածուն, որ նա օրհնէ ձեր սուրբ դիտաւորութիւնները. և ես ինձ բախտաւոր կը համարեմ, եթէ կարողանամ որ և է բանով օգնել այդ մեծ գործին. բայց որովհետև մենք այժմ պատերազմ ունենք Ֆրանսիայի, Սպանիայի և նրանց դաշնակիցների հետ, ուստի ես կարող եմ աջակցել իմ ցանկութիւններով, միջնորդութեամբ և մի քանի բաների մէջ ծառայութիւններս մատուցանելով։ Աղօթեցէք Աստուծուն, որ մենք յաղթական կերպով վերջացնենք պատերազմը. այն ժամանակ ես գործ կը դնեմ իմ բոլոր ջանքերը, որ օգնեմ ձեզ և ապացուցանեմ իմ անկեղծ ցանկութիւնները»։

Այս սիրալիր նամակը Օրիի առջև բաց էր անում տխուր անհրաժեշտութիւնը։ Պէտք էր յետաձգել գործը։ Եւրոպայում սկսուած երկու ահագին պատերազմները գալիս էին հայերի յոյսերը եթէ ոչ միանգամայն ջարդելու, գոնէ անյայտութեան մատնելու։ Եւ այս հարուածը մի այնպիսի ժամանակ, երբ երեք քրիստոնեայ վեհապետներ անկեղծ կերպով պատրաստ էին օգնութեան ձեռք մեկնել դժբախտ հայերին։ Այժմ ամեն տեղ ասում էին թէ պէտք է սպասել մինչև որ կը վերջանային նրանք։ Այն ժամանակները սաստիկ երկարատև էին պա-

տերազմները։ Եւ սակայն Օրին ինչպէս էր շտապում։ Այն գործը, որին նա այդպէս նուիրուած էր, պիտի կատարուէր արագութեամբ, մի յանկարծակի արշաւանքով։ Իսկ հանգամանքները հարկադրում էին սպասել...

Պետրոսը ամենայն եռանդով աշխատում էր Բալտիկ ծովի ափերի վրա։ Պատերազմական բախտը նրա կողմն էր և շվեդացիները, պարտութիւններ կրելով, քայլ առ քայլ տեղի էին տալիս ռուսներին։ Հէնց նոյն 1703 թուականին անխոնջ թագաւորը, թշնամու կրակի տակ, Նևայի գետաբերանի վրա Պետերբուրգի հիմքն էր դնում։ Օրին աւելի ևս համոզվում է որ պէտք է դեռ երկար իզուր սպասել Մոսկվայում և վճռում է անձամբ գնալ Պարսկաստան՝ գործերի դրութիւնը ուսումնասիրելու և ապագայ ապստամբութիւնը պատրաստելու համար։ Բայց այս անգամ նա ծածուկ ճանապարհորդողի դերը չէ յանձն առնում. գնալ Եւրոպա, նորից խօսել կուրֆիւրստի և կայսրի հետ, հաւաքել իր շուրջը պատերազմի գործում հմուտ մասնագէտ անձանց և տանել նրանց Հայաստան, ցոյց տալ ամեն ինչ, որպէս զի նրանք որոշեն ապագայ արշաւանքի բոլոր հանգամանքը— ահա ինչ մտքի վրա էր նա այժմ։ Այդպիսի մի գործ կատարելու համար նա վճռում է մտնել Պարսկաստան իբրև դեսպան։ Դեսպանութեան պատրուակն էլ պատրաստ էր. կայսրը, Հռոմի պապը պարսից Շահին թղթեր են գրում, որոնց մէջ

խնդրում են քրիստոնեաների վիճակը բարւոքել, և
այդ Թղթերը տեղ է հասցնում Օրին: Մինչև այդ
Պարսկաստանը շատ էր տեսել այդպիսի յանձնա-
րարութիւններ կատարող եւրոպական դեսպաններ,
ուրեմն այժմ էլ Օրիի դեսպանութիւնը ոչինչ կաս-
կածներ չէր յարուցանի, իսկ նա, օգուտ քաղելով
իր պաշտօնական դիրքից, կիմանար այն ամենը,
ինչ պէտք էր իմանալ՝ նրա պաշտպանած գործը
սկսելու համար: Եւ յայտնելով իր այդ դիտաւո-
րութիւնները ռուսաց կառավարութեան, Օրին
նոյեմբերին և դեկտեմբերին տուած իր Թղթերով
խնդրում էր Թոյլ տալ որ ինքը վերադառնայ Եւ-
րոպա: Դեսպանի պաշտօն ստանձնելու համար Օ-
րին խնդրում էր Պետրոսին շնորհել իրան գնդա-
պետի աստիճան: Դա հարկաւոր էր, որպէս զի նա
Եւրոպայում զինագործների և զինուորական մարդ-
կանց հետ բանակցութիւններ սկսէ ապագայ ար-
շաւանքը պատրաստելու համար: Նա մտադիր էր,
Պարսկաստանից վերադառնալուց յետոյ, Աստրա-
խանում իր հաշւով մի ամբողջ գունդ կազմել և
դնել Թագաւորի տրամադրութեան տակ: «Ես չեմ
խնդրում որ զինուորական մի գունդ յանձնվի իմ
հրամանատարութեան, այլ խնդրում եմ միայն
գնդապետի աստիճան, որպէս զի դրանով աւելի
հեշտ լինէր դրդել մարդկանց շարունակել մեր
գործը համաձայն վեհափառ Ցարի մտքին,—գրում
էր Օրին:—Գնդապետութեան աստիճան շնորհելու
մէջ Թէ հայերը, Թէ օգոստափառ կայսրը և Թէ

պայծառափայլ կուրֆիւրստը կը տեսնեն Թագա-
ւորի ողորմածութեան և համակրութեան նշան»:
Մի ուրիշ խնդրագրի հետ Օրին ներկայացրեց Թա-
գաւորին Հայաստանի քարտէզը: «Այս նկարից—
ասում էր նա—կարելի է տեսնել, որ ոչ մի ուրիշ
բերդ չը կայ ամբողջ պետութեան մէջ, բացի
Երևանից. ամենաբարի Աստուածը Թող շնորհ տայ
ձեր մեծութեան և այժ ձեր զօրքերին, որ նա
նուաճվի և այն ժամանակ ամբողջ Հայաստանը և
Վրաստանը կը հպատակեցնէք ձեզ»:

Ռուսաց կառավարութիւնը համաձայն էր այդ
բոլոր առաջարկութիւններին: Պետրոսը տուեց
գնդապետութեան աստիճան, նամակներ գրեց
կայսրին և կուրֆիւրստին, որոնց յայտնում էր
ակնարկներով Թէ ընդունել է Օրիին, որ և բերա-
նացի բացատրութիւններ կը տայ նրանց այն գոր-
ծի մասին, որի համար եկել է:

Թողնելով իր ընկեր Մինաս վարդապետին
Մոսկվայում, գնդապետ Օրին Պետրոսի Թղթերի
հետ 1704 Թւականի փետրուարի 10-ին ուղևորվեց
Եւրոպա, ուր բացի հայրենիքի գործերից՝ նրան
Դիւսէլդորֆում սպասում էր և ընտանիքը: Հար-
կաւոր է այստեղ աւելացնել որ Օրին իր սեփական
միջոցներով էր այդքան ճանապարհորդում, աշխա-
տում իր հայրենակիցների համար: Երբ նա Հա-
յաստանից ճանապարհվում էր Եւրոպա, մէլիքները
առաջարկեցին որ նա մի գումար վերցնէ իր հետ
ծախսերի համար: Մինաս վարդապետը համաձայն

էր այդ բանին, բայց Օրին հրաժարվեց փող տանել իր հետ, պատճառ բերելով թէ ճանապարհին վտանգաւոր է փող ունենալը։ Նա ծախեց Դիւսել-դորֆում ունեցած իր կալուածքը և այդպէս էր հայթայթում բոլոր ծախսերը։ Եւ սակայն, նա երկու որդի ունէր։ Դրանց ուզում էր բերել իր հետ Մոսկվա և սովորեցնել ռուսերէն լեզուն։

II

Իզուր չէր Իսրայէլ Օրին այնքան շտապում. իզուր չէր նա այնքան հաստատ համոզված որ Պարսկաստանին ամենախիստ հարուածներ հասցնելու յարմար ժամանակն է։ Իրանը, ճիշտ որ, քանդվում ու քայքայվում էր արագ կերպով։

Շահ-Աբաս Մեծը քաղաքական մեծ փայլ տուեց Իրանին, դարձրեց նրան մի խիստ ուժեղ, աշխարհակալ պետութիւն։ Բայց այդ փառքը նրա հետ գերեզման իջաւ։ Ժառանգների կողմից շատ դժբախտ էր այդ ահարկու բռնաւորը, որ մի և նոյն ժամանակ Պարսկաստանի վերանորոգիչն էլ էր։ Նրա մահից յետոյ պետութիւնը սկսեց արագ քայլերով դիմել դէպի անկում։ Ճիշտ է, նրա ժառանգների մէջ եղան այնպիսինները, որոնք արիւնարբու բռնակալութեան մէջ դուցէ գերազանցեցին էլ նըրան, բայց պետութեան հարկաւոր են ոչ թէ այդպիսի արիւնարբուներ, այլ վեհապետներ, որոնք կարողանան զարգացնել երկրի տնտեսական ույժերը։ Ահա այդպիսի թագաւորներ չը տեսաւ Իրանը Շահ-Աբասից յետոյ։ Երկիրը սպառել էր իր բոլոր տնտեսական միջոցները, աղքատութեան ծայրն էր հասել, իսկ Սէֆեվի թագաւորները իրանց օրերը անց էին կացնում հարէմում և գինեխմութեան մէջ։ Ոչինչ կարգ ու կանոն չը կար պետութեան մէջ՝ և մոռացութեան տալով պետական բոլոր շահերը, այդ թագաւորները իրանց ծախսերը ստանում էին ժողովրդից, դուրս ծծելով նրա վերջին հիւթերը։

Այդ անընդունակ, մեղկ ու թոյլ թագաւորներից մէկն էր Հիւսէյն-Շահը, որ նստեց Իրանի գահի վրա 1694 թւին։ Դա մի կրօնամոլ շիա էր և վերին աստիճանի յիմար կառավարիչ։ Արքունիքում տիրապետում էին մօլլաները, «որոնք, բարեպաշտաբար իրանց աչքերը դէպի երկինք ուղղած, մեծ բազմութեամբ շրջում էին պալատում» *)։ Հասկանալի է թէ որպիսի դժբախտութիւն էին պետութեան համար այդ տգէտ ֆանատիկոսները։ Ողորմելի Հիւսէյնի թագաւորութեան ժամանակամիջոցը Պարսկաստանի պատմութեան ամենամռայլ էջերից մէկն է կազմում։

Աղուանից Եսայի կաթողիկոսը, Հիւսէյն-Շահի ժամանակակիցը, թողել է մի թերատ, անկատար, վայր ի վերոյ պատմութիւն **), որ, սա-

---

*) Мюллеръ—«Исторія Ислама», т. III, СПБ., 1896, եր. 409։

**) «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի».

կայն, գրութիւնը լուսաբանող մի քանի վառ նկարագրութիւններ է տալիս։ Այդտեղից մենք իմանում ենք որ Հիւսէինը և նրան շրջապատողները կաշառքներով էին ապրում։ Ոչ մի քաղաքի կամ գաւառի կառավարիչ մի քանի ամսից աւել չէր կարողանում մնալ իր պաշտօնում, տեղերը վաճառւում էին, պաշտօնավարները փոխվում էին տարին երկու-երեք անգամ։ Եւ որովհետև ամեն մէկը կաշառքով էր ստանում իր տեղը, ուստի պաշտօնի մէջ մտնելուն պէս ընկնում էր ժողովրդի վրա և կեղեքում էր նրան իր տուած փողերը յետ ստանալու համար։ Բայց սա մի ընդհանուր չարիք էր Արևելքում. և Հիւսէին Շահը տարբերվում էր միւս թագաւորներից երևի միայն նրանով, որ անհնարին չափազանցութեան էր հասցրել հարստութիւն ձեռք բերելու այդ բարբարոսական միջոցը։ Կար աւելի սարսափելին։ Պաշտօնեաների միջոցով հպատակների արիւն ծծելը բաւարարութիւն չէր տալիս մոլլաներով և ներքինիներով լցված արքունիքի ծախսերին։ Եւ Հիւսէինը, առանց երկար ու բարակ մտածելու, հրամայեց նոր և նոր հարկեր դնել ժողովրդի վրա։

Այդ հրամանը սկսեց գործադրվել 1699 թւին, այսինքն այն տարին, երբ Իսրայէլ Օրին գնաց պարսկական Հայաստան և այնտեղ ազատութեան

տպագրվել է երկու անգամ՝ Շուշում 1839 թւին և Երուսաղէմում 1868 թւին։

կայծեր տարածեց։ Պարսիկ պաշտօնեաները սկսեցին ժողովրդագրութիւն։ Ամեն տեսակ բռնութիւններով ժողովուրդը մղվում էր հարկատուութեան տումարների մէջ. ոչ մի ազատ չը մնաց, մինչև իսկ եկեղեցականներն էլ, որոնք արտօնված դասակարգ էին կազմում, ծանր հարկերի ենթարկվեցան։ Ամեն ինչ, որ ապրուստի միջոց էր տալիս ժողովրդին՝ սկսած արտից և այգուց և վերջացրած տնային անասուններով, հարկի տակ մտաւ։ Հիւսէին-Շահի անընդունակ կառավարութիւնը միայն բազմատեսակ ծանր հարկեր հնարելու մէջ ցոյց տուեց եռանդուն գործունէութիւն։ Եւ յայտնի էլ էր որ այդպիսի կեղեքումներով ազգաբնակութեան շունչը կտրող կառավարութիւնը մի առանձին ոյժի տէր չէ։ Նախկին բռնակալների ազդած ահն ու սարսափն էր, որ հարկատուներին պահում էր հլու հնազանդութեան մէջ։ Թէև ստրկատէրերը «թուլամորթ և կանայք» *) էին, բայց ստրկութիւնը շարունակվում էր ինքն ու ինքը առաջ գնալ, մղվելով անցեալի ահեղ հարուածներից։

Եւ հէնց այդ էր պատճառը որ Թաւրիզի խանը, գնալով Ղարաբաղի և Գանձակի կողմերից կըրկնապատկած և հնգապատկած հարկեր հաւաքելու, այն էլ երեք տարվանը միասին, ունէր իր հետ միայն հազար հարիւր մարդ։ Ծանր էր լուծը, ժողովուրդը այն աստիճան աղքատութեան մէջ էր,

*) Եսայի կաթողիկ., եր. 35.

որ նոյն իսկ պարսկական խժդժութիւններն էլ սարսափ չէին պատճառում նրան և նա վճարելու անկարողութիւնն էր յայտնում։ Ուստի հազար հարիւր մարդիկ տագնապ և արհաւիրքներ տարածեցին մի ահագին երկրում, ուր իւրաքանչիւր հարկահանի դէմ կարող էր մի ամբողջ գիւղ դուրս գալ։ «Թուլամորթ և կանացի» պարսիկները ջարդում, ծեծում էին, տանջանքների էին ենթարկում և ոչ ոք նրանց դէմ ծպտուն չէր հանում, այնքան բթացել էր ժողովուրդը իր զարհուրելի ստրկութեան մէջ։ Եւ որովհետև պարսից կառավարութիւնը աշխատում էր ամէն մի հարկատուից հինգ կաշի քերթել, այդ պատճառով էլ այս հարկահանութեան ժամանակ ամենալայն չափերով գործադրվում էր այն վայրենի օրէնքը, որով մահմեդականացած քրիստոնեան իր բոլոր ազգականների կայքերին էր տիրանում։ Բռնութեամբ դուրս էին քաշում տղաներին և աղջիկներին, յափշտակում էին նրանց, բռնութեամբ մահմեդականացնում և ապա այս միջոցով խլում քրիստոնեաների վերջին կարողութիւնը։ Թշուառութիւնը ընդհանուր էր։ Պատմիչը ոչ միայն Ղարաբաղում, այլ և Ջուղայում ու Երևանում տեսել է բազմաթիւ մարդիկ, որոնք այդ միջոցով վերջին աղքատութեան էին հասցրվել։

Դրութիւնը աւելի ևս ճնշող, յուսահատական էր Ղարաբաղում։ Եւ այդ ոչ թէ այն պատճառով, որ այդտեղ աւելի քան մի ուրիշ տեղ սանձարձակ ու անգութ էին պարսիկ կեղեքիչները։ Ո՛չ։

Ղարաբաղի հայ մէլիքները ընդամենը մի երկու տարի առաջ յոյսեր էին տուել որ մահմեդական բռնակալութեան վերջն է եկել. Իսրայէլ Օրին նրանց հասկացրել էր որ դառն լուծից ազատվելը հնարաւոր է և հեշտ։ Ահա այդ մտքին սովորած մարդկանց համար մանաւանդ պիտի անտանելի լինէր դրութիւնը։ Եւ չը գիտէին հայ մէլիքները թէ ինչ պիտի լինի։ Օրին վաղուց էր գնացել, նրա հաւաքած քրիստոնեայ զօրքերը դեռ 1700 թւին պիտի մտնէին Հայաստան և ազատէին հայերին։ Բայց անցաւ այդ ժամանակը, անցաւ մի աւելորդ տարի էլ, և Օրիից ոչ մի տեղեկութիւն։ Այդ անյայտութիւնը բացատրում էին չար լեզուները, զանազան վատ բաներ խօսելով Օրիի մասին։ Երևի նրանք ասում էին թէ Օրին ստախօս էր, թէ նրան հարկաւոր էին հայ մէլիքների թղթերը ինչ որ փառասիրական նպատակների համար։ Եւ գործի գլուխ կանգնածները, ի հարկէ, պիտի հիասթափվէին, գուցէ և եղած չը համարէին Եւրոպա գնացած պատգամաւորութիւնը։

Այս դրութեան մէջ էին հայերը, երբ 1702 թւականի ամառը Աստրախանից ճանապարհ ընկած ռուս և հայ վաճառականների հետ մի մարդ ափ իջաւ Կասպից ծովի Նիզօվոյ նաւահանգստում, ուղևորվեց Շամախի և այդտեղից Գանձակ։ Այդ մարդը Օրիի պատգամաւոր Միրօն Վասիլևն էր։ Իր հետ բերած նամակներից մէկը նա պիտի յանձնէր Աղուանից Սիմէօն կաթողիկոսին, իսկ միւսը

—էջմիածնի Նահապետ կաթողիկոսին։ Բացի այդ յանձնարարութիւնից Միրոնը ուրիշ մի բան չը գիտէր. նրան նոյն իսկ յայտնված չէր թէ նամակները ինչ բովանդակութիւն ունեն։ Գանձակում Միրոնն իմացաւ որ Սիմէօն կաթողիկոսը գտնվում է Զարդաթլու տեղում, որ քաղաքից հեռու չէր։ Կաթողիկոսը, կարդալով նամակը, յայտնեց Միրոնին թէ ինքը պատասխան կը գրէ, երբ նա վերադառնալիս կը լինի դէպի Ռուսաստան։ Եւ Միրոնը ճանապարհվեց էջմիածին՝ յանձնարարութեան միւս մասը կատարելու համար։ Այդտեղ նա հիւանդացաւ և 2 1/2 ամիս պառկած մնաց։

Նամակները տեղ հասան, կարդացվեցան։ Ի՞նչ նորութիւններ։ Դարերով ստրկութեան մէջ չղթայված երկրի վրա ծագում էր հրաշալի օրվայ արշալոյսը։ Ո՛րքան սխալված էին Օրիի մասին վատ խօսողները։ Մինաս վարդապետը գրում էր թէ ինչպէս է այդ մարդը անդադար աշխատում, օգնութիւն հայցում. իր հայրենիքի արտասուքները սրբելու համար նա մոռացել էր իր տունն ու երեխաներին, վաճառել էր իր կալուածքը։ Եւ նրա ջանքերի հետևանքերը մէլիքների աչքի առջև էին։ Կուրֆիւրստը, կայսրը յուսադրական թղթեր էին ուղարկել, բայց ամենից նշանաւորը այն էր, որ Մոսկվայի մեծ թագաւորը յանձնարարել էր Օրիին յայտնել հայերին թէ ինքը մենակ, առանց նոյն իսկ կողմնակի օգնութեան, պատրաստ է նրանց

ազատել և թէ այդ գործը նա կը սկսէ՝ հիւսիսային պատերազմը վերջացնելուց յետոյ։

Այդ աւետիքը լսող մէլիքների թւում այլ ևս չը կար Անգեղակոթի Մէլիք-Սաֆրազը, նա, որ Օրիի ձեռնարկութեան հոգին էր։ Երևի այդ ժամանակ մէլիքը վախճանված էր։ Միրոնի էջմիածին ուղևորվելուց յետոյ վախճանվեց և Գանձասարի Սիմէօն կաթողիկոսը։ Մէլիքներից երկուսը գնացին էջմիածին, որպէս զի Նահապետ կաթողիկոսի հետ գործեն։ Բայց Նահապետը դժբախտութիւն չէր համարում պարսից լուծը և երկու մէլիքները նոյն ցրտութիւնն ու անհամակրութիւնը գտան Ամենայն հայոց կաթողիկոսի մօտ, ինչ գտել էր Օրին 1699 թւականին։ Նա պարսից Շահին տարէկան 20 հազար ռուբլու ընծաներ էր տալիս և բացի դրանից կաշառքներ էր մատուցանում տեղական խաներին ու բէկերին, մի բան, որ նրա նախորդները չէին արել։ Մէլիքները հարկ են համարում իսկոյն պատասխան ուղարկել Օրիին վերադարձող Միրօն Վասիլևիչի հետ։ Բայց կաթողիկոսը չէ միանում նրանց հետ և նրա տեղ երկու մէլիքների հետ պատասխանին ստորագրում է մի ոմն Մինաս վարդապետ, որ իրան անուանում է Նահապետ կաթողիկոսի փոխանորդ։ Այդ պատասխանը կազմված էր շատ զգուշաւոր ոճով։ «Մեր աչքերը օրն ի բուն նայում են փրկութեան ճանապարհին որ տեսնենք թէ երբ կը գայ և կը կատարվի այն ուրախ հարսանիքը»—գրում էին մէլիքները 1702

թուականի նոյեմբերի 7-ին։ Թէև նամակը Ռուսաստան տանողը միանգամայն վստահելի մարդ էր, բայց և այնպէս գրողները վախենում էին երկար ու բարակ բացատրութիւններից, խոստանում էին շուտով աւելի մանրամասն գրել և խնդրում էին որ Օրին էլ մութ ու դժուար հասկանալի ոճ գործածէ իր նամակներում։

Զգուշութիւնները շատ էին հարկաւոր. լրտեսների և մատնիչների պակասութիւն հայոց ազգի մէջ երբէք չէ եղել. իսկ Օրին և մելիքները այնքան հեռատես էին, որ ամենախիստ գաղտնապահութիւնը իրանց ձեռնարկութեան առաջին պայմանն էին ընդունել։ Նրանք որոշել էին ապստամբութիւն բարձրացնել միայն այն ժամանակ, երբ քրիստոնեայ պետութիւնների զօրքերը կը մտնեն Հայաստան. ուրիշ կերպ վարվել կընշանակէր ժամանակից շատ առաջ զարթեցնել քնած թշնամուն և նրա ձեռքը սուր տալ որ կոտորէ անպաշտպան ժողովուրդը։ Այդ բոլորը շատ լաւ յայտնի էր, և զգուշութիւնը, ինչպէս շատ անգամ տեսանք, գործադրվում էր միանգամայն խելացի կերպով։ Բայց մելիքները տեսան որ Նահապետ կաթողիկոսի համար զգուշութիւնը միայն պատրուակ էր. նա ոչ միայն չէր միանում հայերի ազատական շարժման, այլ և կարող էր վնասել նրան։ Ուստի մելիքները հեռացան Էջմիածնից, տանելով իրանց հետ հաստատ համոզմունք որ չարժէ այլ ես որ և է դի-

մում անել հայոց ընդհանրական կաթողիկոսին այդ գաղտնի գործի առիթով։

Բարեբախտաբար, Գանձասարի վանքում Սիմէօնի տեղ կաթողիկոս նստեց Եսային, վերև յիշած մեր պատմագիրը։ Եսային հոգով և սրտով նուիրվեց ազատական շարժման և նրա ժամանակից Գանձասարը, ուր Օրին այնքան սառն ընդունելութիւն էր գտել երեք տարի առաջ, դարձաւ այն միակ տեղը, ուր կենտրօնանում էին բոլոր քաղաքական բանակցութիւնները, ապստամբական ծրագիրները։ Գանձասարը հայկական գործի հոգին էր։ 1703 թուականի մայիսին այդտեղ հաւաքվել էին երկրի հայ կառավարիչները։ Դա առաջին գաղտնի ժողովն էր Գանձասարում. ներկայ էին ութ մելիքներ, որոնցից եօթը Անգեղակօթի ժողովին մասնակցողներից էին։ Օրին և Մինաս վարդապետը մի քանի հարցեր էին գրել իրանց նամակներում և գաղտնի ժողովը զբաղվեց այդ հարցերի քննութեամբ։ Նախ և առաջ պէտք էր գրել մի շնորհակալական թուղթ Պետրոս թագաւորին։ Կազմվեց մի երկար գրութիւն, որ ստորագրվեց մայիսի 27-ին և որի մէջ մելիքները իրանց խոնարհ շնորհակալութիւնն էին անում և սրտաշարժ խօսքերով աղաչում էին Պետրոսին չը մոռանալ գերի Հայաստանը։ Մենք չենք կարող չը բերել այստեղ մի կտոր՝ լեզուի պարզութեամբ գրած այդ աղերսագրից, որ միևնոյն ժամանակ լաւ ցոյց է տալիս

թէ որքան էր դրագլխութիւնը տարածված ազատութեան ոգով վառված մարդկանց մէջ.

Աստուծոյ սիրեցեալ քաջ Թագաւոր հազար ամիցն մէջ, հազարէն մին թէ որ պատահի այսպիսի շնորհալի մեծ հարկ զոր Աստուած քո ժամանակաւն քեզ պատրաստեաց. Այսուհետև չունիմք այլ ուստեքէ ումուտ, ունիմք յերկինս զԱստուած և յաշխարհի զքեզ, որ այս քանի ամ է որ կու լսենք քո մեծ քաջութիւնդ և ամեն ինչ բարի արարմունքդ Նորա համար շատով կը ցանկամք և կը շտապեմք որ քո ժամանակումն լինի անես մեզ ճար, որ չի լինի թէ իւր չար նիւթումն զմեզ ընչիւք կորուսանէ և ամրացուցանէ զիւր թագաւորութիւնն, որ այլ ուստեքէ չիլնի մեզ հնարք, Եթէ մեզանից և եթէ վրացոց մեծամեծաց և բազումս հնարիւք մոլորեցոյց և էտ մեծութիւն, երկու հարիւր ամ այլ աւելի է որ մեք գերի եմք, և այլ թագաւորաց այսպիսի առատ սրտիւ չաք գիմեր որ գիտակ էք սող չի լինիլ։ Այսօր մեք մեզանից անցաք մեր յանձն առ քո թագաւորութիւնդ անձնեցաք այնպիսի հնարիւք կատարեա որ մին տեղաց մեզի մնաս չի հասնի մինչև առ մեզ մտանելն։

Օրիի նամակներից երևում էր և մի այլ բան. Մոսկվայի արքունիքում հայոց գործին շատ համակրում էր Թագաւորի առաջին մինիստրը, բոեարին Գոլօվինը. իսկ Նիկօլայ Սպօթարիուս, իբրև թարգման, շատ օգնութիւններ էր մատուցանում գործին։ Պէտք էր շնորհակալութիւն յայտնել այդ բարերարներին էլ։ Մէլիքները վճռում են տալ Գոլօվինին 20 հազար ոսկի, իսկ Սպօթարիուսին 4000 ոսկի (բաշխիշ) իբրև ընծայ։ Այդ մասին էլ շնորհակալութեան թղթեր են ուղարկում եր-

կուսին։ Եւ որովհետև այդպիսի մեծ գումարներ անմիջապէս և առանց ուշադրութիւն գրաւելու չէր կարելի ուղարկել Հայաստանից, ուստի մէլիքները իրանց ստորագրութիւններով և կնիքներով վաւերացրած մուրհակներ են ուղարկում այդ պաշտօնեաներին, ապահովութիւն տալով որ նշանակված գումարները ժամանակին կը վճարվեն *)։

Փող ուղարկելու մի և նոյն դժուարութիւնը հարկադրում է մէլիքներին անկատար թողնել և Մինաս վարդապետի նամակի այն կէտը, որ վերաբերվում էր հայ պատգամաւորութեան ծախսերի համար դրամ հասցնելուն։ Մէլիքները լիազօրութիւն են տալիս որ Օրին ու վարդապետը Ռուսաստանում պարտք վերցնեն, որքան կամենում են. իրանք մեծ ուրախութեամբ կը վճարեն ամեն մի գումար, հէնց որ հնարաւորութիւն և ապահովութիւն կը լինի։ Նրանք յոյս էին յայտնում որ այդ բանի մէջ հայ պատգամաւորներին կօգնեն Ռուսաստանում գտնվող հայ վաճառականները, մանաւանդ որ դրանցից մէկը (անունը յայտնի չէ) արդէն ինքնայօժար կերպով շատ օգնութիւն էր հասցրել Օրիին։ Այս բարերարին էլ մէլիքները մեծ շնորհակալութիւն էին յայտնում։

Ուղարկելով այս թղթերը, մէլիքներին մնում

*) Սպօթարիուսին տուած մուրհակի վերաբերմամբ տ. Ю. Арсеньевъ—„Новыя данныя о службѣ Николая Спаѳарія въ Россіи", М., 1900, եր. 57։

էր գնալ իրանց տները և սպասել թէ այնուհետև ինչ լուրեր կը գան Օրիից։ Եւ Օրին այս անգամ էլ երկար սպասել տուեց նրանց։

Մոսկվայից նա գնաց Վիեննա, ուր այդ ժամանակ գտնվում էր և Պֆալցի կուրֆիւրստը։ Սպանիական ժառանգութեան համար սկսված պատերազմը 1704 թուականից ընդունեց նոր կերպարանք. ֆրանսիացիները ամեն տեղ պարտութիւններ էին կրում, աւստրիական կայսրի և նրա դաշնակիցների համար սկսել էր աւելի եռանդով գործելու և յաղթական արշաւանքները առաջ տանելու ժամանակը։ Կուրֆիւրստը զեկուցում ներկայացրեց Լէօպօլդին Օրիի գործերի մասին։ Օգնական զօրքեր ուղարկելը այժմ մանաւանդ անկարելի էր։ Եւ կայսրն էլ համաձայն էր որ իրերի այդ դրութեան մէջ աւելի լաւ կը լինի որ Օրին առայժմ բաւականանայ պարսից Շահի մօտ թղթեր տանելով։ Վիեննայից Օրին կուրֆիւրստի հետ գնաց Դիւսէլդօրֆ. այդտեղ էլ գլուխ բերվեց նրա դեսպանութեան ամբողջ գործը։

Սպանիական պատերազմի հանգամանքները այնպիսի քաղաքական դրութիւն ստեղծեցին, որ անյարմար համարվեց Օրիին դեսպան ուղարկել կայսրի կողմից։ Այդ պատճառով կուրֆիւրստ Յովհան-Վիլհելմ իր խոստովանահայր քահանային ուղարկեց Հռոմ այսպիսի յանձնարարութեամբ. պապը մի նամակով խնդրում է պարսից Շահին որ նա թոյլ չը տայ հարստահարել իր հպատակ

քրիստոնեաներին և այդ նամակը նա ուղարկում է Պարսկաստան Օրիի հետ։ Պապը կատարեց կուրֆիւրստի այդ խնդիրքը և ուղարկեց խնդրած նամակը։ Լէօպօլդ կայսրի կողմից նամակ չը պիտի գրվէր Շահին, այդպէս էր պահանջում աւստրիական քաղաքականութիւնը. բայց դրա փոխարէն կուրֆիւրստը, ինչպէս միշտ, չը խնայեց իր կողմից անել այն, ինչ հարկաւոր էր իր բարեկամ հայերի փրկութեան համար. նա էլ նամակ գրեց Շահին և կրկնեց նրա մէջ պապի խնդիրքը։ Օրին սկսեց պատրաստութիւններ տեսնել։ Ինչպէս ասացինք, նա կամենում էր Աստրախանում կազմել մի հայկական գունդ, որ պիտի օգնէր ռուսներին պարսկական արշաւանքի ժամանակ։ Գունդը բաղկացած պիտի լինէր 300—400 հոգուց։ Նրա համար Օրին Ամստերդամում գնեց 15—20 հազար րուբլու զէնքեր և ուրիշ հարկաւոր բաներ։ 1705-ին նա պատրաստվում էր վերադառնալ Ռուսաստան, բայց մի անակնկալ դէպք պահեց նրան։ Մայիսի 6-ին վախճանվեց Լէօպօլդ կայսրը, որին յաջորդեց Յովսէփ I։ Հարկաւոր էր որ Օրին խնդրէ նոր կայսրին որ սա էլ, Լէօպօլդի նման, հովանաւորէ հայերին։

1706 թուականի հոկտեմբերին Օրին Մոսկվայումն է։ Ռուսաց կառավարութիւնից նա խընդրում էր, որ հայկական գնդի համար Ամստերդամում իր գնած զէնքերը և իրերը առանց մաքսի մտցնվեն Ռուսաստան և ուղարկվեն Աստրախան։

Նոյնպէս խնդրում էր, որ թոյլ տան իր երկու որդիներին (որոնց նա թողել էր Կեօլնում) գալ Մոսկվա։

Դեսպանութիւնը բոլորովին պատրաստ էր։ Մօտ 50 հոգուց բաղկացած մի շքախումբ պիտի հետևէր Հռօմի դեսպանին։ Այդ խմբի մէջ կային զանազան ազգութիւնների պատկանող մարդիկ—հայ, ռուս, ֆրանսիացի, շվէյցարացի, գերմանացի, հօլլանդացի, լեհացի և այլն։ Զանազան էին և այդ մարդկանց դիրքն ու պարապմունքները· կային զինուորականներ, գերձակներ, ծառայողներ· մէկը նոյն իսկ իր կնոջն էր տանում իր հետ։ Ամենքի համար Օրին համազգեստներ էր կարել տուել· առհասարակ նա ոչինչ չէր խնայում, որ դեսպանութիւնը շքեղ լինի և արժանաւոր կերպով ներկայացնէ եւրոպական պետութիւնը պարսից արքունիքում։ Ինչպէս երևում է, այդ դեսպանութեան հետ պիտի վերադառնար հայրենիք Թոմաս եպիսկոպոս Վանանդեցին, որի հետ, երևի, ծանօթացել էր Օրին Ամստերդամում։ Հայագէտ Շրօդէր, ինչպէս գիտենք, եպիսկոպոսի հետ պիտի գնար Հայաստան՝ հայոց լեզուն ուսումնասիրելու համար *)· բայց հասնելով Մոսկվա, նա իմացաւ, որ եպիսկոպոսը վախճանվել է, ուստի միացաւ Օրիի խմբի հետ։ Յայտնի է, սակայն, որ նշանաւոր հայագէտը չը հասաւ Աստրախան և ստիպված ե-

*) «Հայկ. Տպ.», I, եր. 350.

ղաւ վերադառնալ Եւրոպա։ Օրիի դեսպանութեան ծրագիրը վերջացնելու համար մեզ մնում է յիշել, որ նա, ինչպէս և ամեն մի դեսպանութիւն, ունէր իր առաջին և երկրորդ քարտուղարները, թարգմանները և այլն։

Պետրոս Մեծն էլ յանձնարարական նամակ գրեց Հիւսէյն Շահին Օրիի դեսպանութեան մասին, իր կողմից էլ խնդրելով որ Շահը թոյլ չը տայ նեղացնել քրիստոնեայ հպատակներին։ Օրին բացի դրանից խնդրել էր, որ իր հետ Վրաստան ուղարկվի վրաց արքայորդի Արչիլը, որ մի քանի տարիներից ի վեր, ստիպված լինելով հեռանալ հայրենիքից, բնակութիւն էր հաստատել Մոսկվայում։ Այդ բանը Օրին հարկաւոր էր համարում այն պատճառով, որ վրացիներն էլ միանան հայերի հետ, երբ ռուսները արշաւանք կը սկսեն դէպի Պարսկաստան· պէտք էր Արչիլին հաստատել հայրենի գահի վրա և այդ մասին յայտնել պարսից Շահին։ Բայց ռուսաց կառավարութիւնը, որ առհասարակ ամեն բանի մէջ համաձայն էր Օրիի հետ, ինչպէս երևում է, անկատար թողեց այս մի խնդիրքը· գոնէ յայտնի է որ Արչիլը չը գնաց Վրաստան և վախճանվեց Մոսկվայում։

Վերջացնելով բոլոր պատրաստութիւնները, Օրին իր ահագին շքախմբի հետ ճանապարհ ընկաւ Մոսկվայից 1707 թւի յունիս ամսին։ Մինաս վարդապետը մնաց Ռուսաստանում· նրան պիտի տե-

զեկուցումներ հաղորդէր Օրին՝ կառավարութեան ներկայացնելու համար։

Օրիի դեսպանութեան մասին շատ մանրամասնութիւններ չը կան։ Յայտնի չէ թէ երբ հասաւ նա Պարսկաստանի սահմանագլխի ամենանշանաւոր քաղաքը—Շամախի։ Բայց յայտնի է որ Շամախում նա ստիպված եղաւ երկար սպասել։ Ահագին տպաւորութիւն գործեց այդ բազմամարդ դեսպանութիւնը, որի նմանը, գոնէ Շամախում, դեռ չէր տեսնված։ Բայց բազմամարդութիւնից աւելի ազդու և անսովոր էր այն հանգամանքը, որ դեսպանութեան գլուխը մի հայ էր, այն էլ պարսկաստանցի հայ։ Եւ սակայն նա Սպահան էր գնում իբրև ռուսաց (աւելի ճիշդ—Հռոմի) դեսպան, տանում էր իր հետ ռուսաց թագաւորի, գերմանական թագաւորի և պապի նամակները։ Տեսակ տեսակ կասկածոտ շշուկներ տարածվեցան Շամախում, որոնք զանազան բացատրութիւններ էին առաջացնում։ Մահմեդականները ուզում էին հասկանալ թէ ինչ իսկական նպատակ ունի դեսպանութիւնը. և նրանց համար խորհրդաւոր նշանակութիւն էր ստանում մանաւանդ այն հանգամանքը, որ ռուսաց թագաւորի դեսպանը հասարակ հայ էլ չէ, այլ հին հայկական իշխանների տոհմից է։ Շամախու խանը շտապեց հաղորդել Շահի կառավարութեան այս չքեղ դեսպանութեան հանգամանքները և խնդրեց կարգադրութիւն։ Ինչպէս երեւում է, խանը աւե-

լորդ չը համարեց պարսից արքունիքին հասցնել և իր բոլոր կասկածները։

Օրիի դեսպանութեան առջև լուրջ արգելքներ էին ծագում։ Սպահանում երկար ժամանակ չը գիտէին թէ ինչ պատասխան տան Շամախու խանին։ Ինքը, Հիւսէին-Շահն էլ, վախեց։ Բոլոր հանգամանքներին նայած՝ պէտք էր արգելել Օրիի դեսպանութիւնը և հրամայել խանին որ նա յետ դարձնէ այդ վտանգաւոր հային։ Այդպէս էլ կարծում էին պարսից արքունիքում. իսկ Սպահանում ապրող մի քանի եւրոպացիներ ամեն կերպ աշխատում էին սաստկացնել կառավարութեան կասկածները։ Այսպէս, Լուդովիկոս XIV-ի կողմից Սպահան ուղարկված մի ֆրանսիացի հաւատացնում էր թէ կեղծ են այն նամակները, որ բերում է իր հետ Օրին, որպէս թէ քրիստոնեայ թագաւորներից։ Կային և այնպիսիները, որոնք բացարձակ մատնութեան դիմեցին։ Նրանք ասում էին թէ հայերի մէջ գոյութիւն ունի մարգարէութիւն, որ նրանց թագաւորութիւնը պիտի վերանորոգվի մի քրիստոնեայ թագաւորի հովանաւորութեան տակ. այդ մարգարէութիւնը, ասում էին, կատարւում է հէնց այժմ, որովհետև Իսրայէլ Օրիի անուան մէջ կան այն բոլոր տառերը, որոնք հարկաւոր են՝ «il sera roi» *) բառերը կազմելու համար։ Տգէտ, նախապաշարված պարսիկների համար այդ ծիծաղելի գուշակու-

*) «Նա թագաւոր կը լինի»։

թիւնն էլ բաւական էր։ Արքունիքում տիրած չփոթութիւնից շատ գեղեցիկ կերպով օգտվեց մի ճարպիկ աւղանցի, որի մասին յետոյ կը խօսենք. Նա էլ շահագործում էր Հիւսէյն-Շահի երկչոտութիւնը և դրանով իր համար բաց էր անում մի ճանապարհ, որ Պարսկաստանի համար ահագին դժբախտութիւն էր։ Բայց որքան էլ մեծ լինէին Սպահանի կառավարութեան վախերը, վերջ ի վերջոյ գալիս էր մի հարց. ինչ կը լինի, եթէ Պարսկաստանի սահմաններից յետ դարձնվի մի օտար պետութեան խաղաղ դեսպանութիւնը, որ բարեկամական նամակներ էր տանում իր հետ։ Ցաւը այնքան մեծ չէր լինի, եթէ այդ դեսպանութիւնը եւրօպական մի հեռաւոր երկրից եկած լինէր։ Բայց Օրին Ռուսաստանից էր գալիս, որ սահմանակից երկիր էր, որի եռանդուն թագաւորը արդէն յաղթողի անուն էր հանել։ Ռուսաստանի ահը հարկադրեց մոռանալ «il sera roi»-ն և պարսից կառավարութիւնը կամայ ակամայ թոյլ տուեց Օրիին գնալ Սպահան։ Այդ բանը տեղի ունեցաւ 1709 թւականին, այսինքն Օրիի ճանապարհվելուց երկու տարի յետոյ։

Ի՞նչ էր անում Օրին Շամախում այդքան երկար սպասողութեան ժամանակ։—Յայտնի չէ։ Եւ սակայն շատ հետաքրքրական էր իմանալ թէ ինչ յարաբերութիւններ ունէր նա հայ մելիքների հետ, ինչպէս էր իրագործում իր դեսպանութեան բուն նպատակը, որ Պարսկաստանի բոլոր հանգամանք-

ները լաւ զննելն ու ուսումնասիրելն էր։ Բայց եթէ չը մոռանանք որ Օրին մեծ զգուշութիւններով էր տանում իր գործը և միշտ գիտէր որ զգուշութիւնն է այդ գործի աջողութեան առաջին, ամենակարեւոր պայմանը,—մենք պիտի ենթադրենք որ նա, երևի, ամեն կերպ աշխատում էր քնացնել պարսից կառավարութիւնը, կասկածների տեղիք չը տալ, ուստի և ամեն ինչ կատարում էր գաղտնի կերպով։

Պարսկաստան գնալիս Օրին մտաւ Էջմիածին, այցելեց հայոց կաթողիկոսին։ Այդ ժամանակ կաթողիկոս էր Աղէքսանդր Ջուղայեցին։ 1709 թ. յուլիսի 7-ին գրած մի թղթով նա յայտնում էր Պետրոս թագաւորին թէ Օրին գնաց Պարսկաստան։ Երևի Օրին էր խնդրել նրան գրել մի այդպիսի թուղթ։ Կաթողիկոսը օրհնում էր թագաւորին, բարեմաղթութիւններ էր անում և ապա աւելացնում էր թէ Օրին ամենքին մեծ զարմանք պատճառեց, այնքան շատ լաւ կերպով էր պահպանում թագաւորի պատիւը։

Հիւսէյն-Շահը, չը նայած իր ներքին վարանումներին և դժգոհութեան, Օրիին ընդունեց մի օտարերկրացի դեսպանին վայելուչ պատիւներով։ Պետրոս Մեծին գրած իր պատասխանի մէջ Շահն ասում էր. «Համաձայն ձեր ցանկութեան՝ Իսրայէլ Օրիի դեսպանութեան կատարեալ աջողութեան համար մենք ցոյց տուինք նրան մեր ողորմած ուշադրութիւնը, օգնութիւնը և յարգանքը։ Թող

պարզ լինի ձեր պայծառ հայեացքին, որ թէև յիշեալ քրիստոնեայ ժողովուրդների մէջ կան ազգաներ, որոնք, մեր պետութեան արժանաւորութիւնը նկատի առնելով, պիտի արժանի պատիւը կրէին իրանց վատ արարքների կամ վատ ուղղութեան համար, բայց ձեր բարեկամական նամակը, որ ամրացնում է մեր մէջ վաղուց գոյութիւն ունեցող բարեկամութիւնն ու համաձայնութիւնը, հրաւիրում է մեզ գնալ ողորմութիւնների և մեր հպատակներին յարգելու մեր ընտրած ճանապարհով, և մենք վեհանձնաբար ներում ենք յիշեալ ժողովուրդների բոլոր արարքներն ու մեղքերը, այն պայմանով, որ նրանք այսուհետև այլ ևս այդպիսի սխալների մէջ չընկնեն»։ Թէ ինչ են նշանակում այս ակնարկութիւնները, հաստատապէս ասել չէ կարելի, քանի որ չը գիտենք թէ ինչ խօսակցութիւն է տեղի ունեցել Շահի և դեսպանի մէջ։ Ուշադրութեան արժանին այն գոռոզութիւնն է, որով պարսից ողորմելի բռնակալը բարեհաճում էր ներող և ողորմած հանդիսանալ։ Շատ զարմանալի է, որ այնքան հարստահարվող քրիստոնեաները դեռ մեծ յանցաւորներ էին պարսից կառավարութեան առաջ և պէտք էր ռուսաց թագաւորի միջնորդութիւնը, որպէս զի Հիւսէին-Շահը ողորմածաբար ներէ իր անկեղծ ստրուկներին։ Շատ խղճալի պէտք էր համարել Օրիի դեսպանութեան հետևանքը, եթէ նա այս տեսակ մի թուղթ ստանալու համար գնացած լինէր Պարսկաստան։

Նա երկար չը մնաց Սպահանում։ Երևում է որ այնտեղ ամեն ինչ շտապով կատարվեց, որպէս զի հայ դեսպանը պարսից մայրաքաղաքում երկար նստելու հարկաւորութիւն չունենար։ Նոյն 1709 թւականի սեպտեմբերին Օրին Շամախումն է և ռուսաց կառավարութիւնից նաւեր է խնդրում Կասպից ծովով Աստրախան ճանապարհվելու համար։ Այդ ժամանակ Շամախում մի ինչ-որ ապստամբութիւն է տեղի ունենում և Օրին զինում է իր մարդկանց՝ հարկաւոր դէպքում պաշտպանվելու համար։ Հետաքրքրական է, որ նա ունէր իր հետ և 12 փոքրիկ թնդանօթ։

Ճանապարհորդութիւնը պիտի կատարվէր առաջիկայ տարվայ գարնանը։ Բայց 1710 թւականն էլ Օրին հարկադրված է լինում անցկացնել Շամախում, որովհետև այդ քաղաքում մնացած մի ռուս վաճառականի գոյքերը յափշտակողներից ազատելու համար նա երեք անգամ մարդ ուղարկեց Շահի մօտ՝ հարկաւոր հրամանները ստանալու համար։ Վերջապէս նա դուրս է գնում Շամախուց և հասնում է Կասպից ծովի Նիզօվօյ նաւահանգիստը։ Այդտեղ նրան նոր դժուարութիւններ էին սպասում։ Պէտք է իմանալ, որ Պետրոսի յանձնարարութեամբ Օրին իր հետ Ռուսաստան էր տանում 20 հայ ընտանիք, որոնք մետաքսից զանազան կտորներ գործել գիտէին։ Այդ արհեստաւորների համար Օրին գնել էր մետաքս և այլ հարկաւոր իրեր։ Բացի դրանից՝ նա տանում էր իր հետ ու-

րէշ զանազան ապրանքներ՝ ընծաների համար, նոյնպէս և 25 ձի, որոնք գնված էին յատկապէս Թագաւորին ընծայելու համար։ Այդ բոլորը Աստրախան տեղափոխելու համար Օրին խնդրել էր ուղարկել չորս նաւ, բայց միայն երկու նաւ ուղարկվեցին Նիզօվոյ։ Օրին հարկադրված եղաւ ձիաները ցամաքային ճանապարհով ուղարկել Աստրախան, իսկ ինքը և իր հետևորդները տեղաւորվեցան երկու նաւերում։ Մէկը հասաւ Աստրախան, իսկ միւսը, որի մէջ գտնվում էր ինքը, Օրին, փոթորիկի հանդիպեց և յետ մղվելով դէպի ափը, ջարդվեց։ Օրին իր մարդկանց հետ ափ դուրս եկաւ և հարկադրված էր ձմերել Նիզօվոյի մէջ։

Ամբողջ ժամանակ նա չէր մոռանում այն գործը, որի համար այդքան աշխատութիւններ էր յանձն առել։ Նա անդադար թղթակցութիւն ունէր Մինաս վարդապետի հետ, որ իր կողմից ամէն հարկաւոր բան իսկոյն հաղորդում էր ռուսաց կառավարութեան։ Դժբախտաբար, թէ Օրիի նամակների և թէ Մինաս վարդապետի հաղորդագրութիւնների մէջ մենք չենք գտնում մանրամասնութիւններ թէ ինչպէս Օրին կատարեց իր դեսպանութիւնը, ինչ ունէր հաղորդելու հայկական գործի մասին և գործողութիւնների ինչ եղանակ էր ցոյց տուել նրան այդ երկար ճանապարհորդութիւնը։ Նա միշտ կրկնում էր թէ անձամբ կը զեկուցանէ Թագաւորին այն ամէնը, ինչ տեսել է և արել է։ Մի բան միայն միշտ անփոփոխ է այդ

նամակների մէջ. դա այն մեծ յոյսն է, որ քրիստոնեաները դրել են ռուսաց Թագաւորի վրա։ Այդ յոյսը, ճիշտ որ, այնքան վառ էր, այնքան ոգեորիչ, որ հայերը Օրիի վերադարձի ժամանակ նոյն իսկ մի քիչ մոռացան զգուշութիւնը։ Գանձասարի Եսայի կաթողիկոսը, տեսակցելով Օրիի հետ, այն աստիճան ոգեորվեց հայրենիքի ազատութեան մտքով, որ վերցնելով իր միաբանութիւնը, ճանապարհվեց դեսպանութեան հետ դէպի Ռուսաստան, որպէս զի անձամբ Պետրոսին յայտնէ հայ ժողովրդի զգացմունքները և աղաչանքները։

1710—1711 թւականները շատ նշանաւոր էին Ռուսաստանի համար։ Դեռ 1709-ին շվեդացիները սարսափելի պարտութիւն կրեցին ռուսաց զօրքերից Պօլտավա քաղաքի մօտ և նրանց Թագաւոր Կարոլոսը փախաւ Թիւրքիա։ Պետրոսի տարած այդ մեծ յաղթութիւնը ահագին տպաւորութիւն գործեց Արևելքում։ Թիւրքիայի լուծի տակ հեծող քրիստոնեաները հրաւիրում էին Պետրոսին գալ և ազատել իրանց։ Եւ Թագաւորը, մի կողմ թողնելով իր սովորական զգուշութիւնը, ծրագրեց մի արշաւանք Թիւրքիայի դէմ։ 1710 թւականին պատերազմը համարեա թէ յայտարարված էր։ Ահա այդ ժամանակից Օրին տեղեկութիւններ էր հաղորդում այն բոլոր դէպքերի մասին, որոնք տեղի էին ունենում Թիւրքիայում և Պարսկաստանում։ Թիւրքիան եռանդով պատրաստվում էր պատերազմի, իսկ Պարսկաստանը արդէն սկսել էր իր ընդհարու-

միները Աւղանխատանի հետ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է թէ այդպիսի ժամանակներում որքան կարեւոր էին այն տեղեկութիւնները, որ Օրին հաւաքում էր և ուղարկում Մոսկվա։

Մինչդեռ նա Նիզօվօյում այդպիսի գործերով էր զբաղված, Աստրախանից լուր եկաւ թէ նրա ուղարկած ձիաները, ապրանքը տեղական իշխանութեան կողմից արգելքի տակ են դրված և նրանց համար մաքս են պահանջում։ Բացի դրանից, նրա շքախմբի այն մասը, որ արդէն հասել էր Աստրախան, մնալով այդտեղ առանց օգնութեան, սկսել էր զանազան գանգատներ անել։ Օրին նամակ նամակի ետեւից է հասցնում Մինաս վարդապետին, գրում է և կառավարութեան, գանգատվելով Աստրախանի իշխանութիւնների վրա և մեղադրելով անբարեխիղճ պաշտօնեաներին։ Այս անգամ նրա նամակները հայերէն են։ Երեւի Եսայի կաթողիկոսը կամ նրա հետ եղած հոգեւորականներից մէկն էր գրում։ «Ես թագաւորի ամրումն եկեալ եմ Իրանու երկիրն,—գրում էր Օրին Նիզօվօյից 1711 թւի մարտի 1-ին.—հիմա գլխով և ապրանքով էլի թագաւորին ծառայութեանն եմ գալիս. թագաւորին ոչ մին փրքազէն *) ինձ ապրանք չեն տուել, չեմ գիտում մեր ապրանքն ինչ կողմանէ են զաւթում»։ Իսկ իր վրա եղած գանգատների առիթով նա խնդրում էր. «Ահա խնդիրքս

*) Приказъ.

այն է ի քո մեծութենէդ, որ թէ տեղդ մեզ զարչուարդ տուող և կամ խօսք ասող լինի, այսպէս բանին թահամուլ տայք և համբերէք մինչև մեք գամք և մեր ամենայն անցք և որպիսութիւնն քո մեծութեանդ արզ անեմք. այնուհետև ինչպէս կուհրամայես ամր քոնն է»։ Աստրախանի ռուս պաշտօնավարների թոյլ տուած անկարգութիւնը միանգամայն անպատուութիւն համարելով, Օրին գրում էր. «Աղուանից երկրի պատրիարդն մեզ հետ էր, պիտի որ գայ յերկրպագութիւն մեծի թագաւորութեանդ. սա մեզ մօտ, և մեք հալայ Հայոց երկրումս, այս խօսքերս որ եկաւ մեզ մեծ ամօթանք եղաւ տեղս»։ Եւ իր դէմ եղած չարախօսութիւնների մասին գոնէ մի համառօտ բացատրութիւն տուած լինելու համար, Օրին ասում էր. «Ծառայդ Իրանու երկրումս ինչ որ արարեալ եմ և ասացեալ, ամենն պատճառով է և առանց պատճառի բան չեմ արարեալ. հիմա չեմ կարող գրել, երբ որ ատն համբուրելու հասայ, ամէն արզ կանեմ»։

Վերջապէս Օրին մի կերպով հասնում է Աստրախան 1711 թւականի ամառը։ Մինչև այդ Մինաս վարդապետը մի շարք խնդրագրեր էր ներկայացրել կառավարութեան Օրիի իրերը և ապրանքը ազատելու հրաման խնդրելով։ Ինքը, Օրին էլ, մի ամսի չափ մնալով Աստրախանում, աշխատում էր կարգի բերել անակնկալ պատահարների պատճառով իր խանգարված գործերը, որպէս զի որքան կարելի է շուտ ճանապարհվի Մոսկվա և

դարձեալ նուիրվէ իր սիրած և փայփայած սուրբ գործին։

Բայց ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել։ Հայաստանի ազատութեան գաղափարը մի սաստիկ հարուած ստացաւ. Օրին, այդ գաղափարի ստեղծողը և մարմնացումը, օգոստոս ամսին վախճանվեց Աստրախանում։

Եսայի կաթողիկոսը, թաղելով նրան հայոց եկեղեցու բակում, տրտում վերադարձաւ Գանձասար։

III

Մեռաւ Օրին, բայց նրա գործը նրա հետ գերեզման չը մտաւ։ Մնում էր Մինաս վարդապետը, որ և իսկոյն բռնեց իր հայրենասէր ընկերի տեղը։ Յայտնելով Պետրոս Մեծին Օրիի մահը, նա խնդրում էր որ իրան մոռացութեան չը տան և խոստանում էր իր ծառայութիւնները մատուցանել։

Մինաս վարդապետը, ի հարկէ, Իսրայէլ Օրի չէր։ Հայաստանցի մի վարդապետ, նա չունէր և չէր կարող ունենալ քսան տարի Եւրոպայում ապրած, արեւմտեան լեզուներին լաւ ծանօթ, զինուորական կրթութիւն ստացած Օրիի քաղաքագիտական ընդունակութիւնները, փորձառութիւնը և մանաւանդ մեծ, անշէջ եռանդը։ Բացի դրանից, Օրիի նեցուկն էր Պֆալցի կուրֆիւրստի պէս մի անձնա-

կան բարեկամ, որ այնքան ազդեցիկ դիրք ունէր Եւրոպայում և այնքան անկեղծ կերպով օգնում էր հայերին։ Օրիի մահը հեռացնում էր այդ բարերարին հայոց գործից։ Դա փոքր զրկանք չէր. այնուհետև այլ ևս եւրոպական արքունիքներում ոչ ոք չէր խօսում Պարսկաստանի լուծի տակ տառապող քրիստոնեայ ժողովրդի ազատութեան մասին։

Բայց Մինաս վարդապետը այն երախտիքն ունի, որ շարունակեց աշխատել Օրիի ուղղութեամբ. եթէ չը լինէր նա, ազատասիրական շարժումը կանհետանար հայերի մէջ իբրև մի վաղանցուկ երազ։ Հայկական հարցը կենտրօնացաւ ռուսաց արքունիքում. Մինաս վարդապետին չաջողվեց յարաբերութիւններ պահպանել Արևմտեան Եւրոպայի հետ, համակրութիւններ գտնել այնտեղ։ Նրա գործը այն եղաւ, որ շարունակեց միջնորդի դեր կատարել հայերի և ռուս կառավարութեան մէջ։ Այդպիսի մի միջնորդ շատ հարկաւոր էր, որովհետև գործերը Արևելքում ընդունում էին սուր, վճռական կերպարանք։

Օրիին չաջողվեց խորտակել պարսկական տիրապետութիւնը Հայաստանում։ Բայց նրա դեսպանութիւնը Պարսկաստանի համար ահաւոր ցնցումներ առաջացնող մի կողմնակի պատճառ հանդիսացաւ։ Ահա ինչպէս։

Շահ-Աբասի երկաթէ ոյժն էր որ միութիւն էր պահպանում Իրանի զանազան մասերի մէջ։

Նրա թուլամորթ յաջորդների ժամանակ անիշխանութիւնը սկսեց տակն ու վրա անել երկիրը. ուժեղացան տեղական իշխանութիւնները, խաները, և Պարսկաստանում ներքին խռովութիւնները անպակաս էին։ Ըմբոստների մէջ Հիւսէյն-Շահի ժամանակ անուն հանեց Աւղանստանի Ղանդահար քաղաքը, ապստամբութիւնների մի բոյն, որը հպատակեցնելու համար պարսից շահերը շատ անգամ էին զէնքի դիմել։ Ղանդահարը սաստիկ վտանգաւոր դարձաւ մանաւանդ այն ժամանակից, երբ այնտեղ ապստամբութեան գլուխ անցաւ Միր-Վէյսը, մի շատ ընդունակ պատերազմող և վերին աստիճանի ճարպիկ արևելցի։ Հիւսէյն-Շահը, այդ մարդուն անվնաս դարձնելու համար, Ղանդահար ուղարկեց Գուրգին-խանին։

Գուրգին-խան—դա Քարթալինիայի Գիօրգի թագաւորի պարսկական անունն էր։ Այդ թագաւորը չէր կարողանում հանգիստ նստել իր հայրենիքում, ուստի կանչվել էր Սպահան վրաց մի զօրաբաժնի հետ։ Վրաստանը անթիւ դժբախտութիւնների, աւերմունքների մատնված մի երկիր էր, որովհետև նրա երեք թագաւորները և բազմաթիւ իշխանները անբարոյականացած ժամանակի փչացած որդիներ լինելով, միմեանց միս էին կրծում, միմեանցից իշխանութիւն և փառք խլելու համար։ Գիօրգին համարեա միշտ ներքին պատերազմների մէջ էր ժամանակ անցկացնում. յամառ ու աւերիչ էին նրա պատերազմները մա-

նաւանդ Հերակլ I-ի դէմ, որ կոչվում էր Նազար-Ալի-խան և մահմեդականացած վրացի թագաւորների շարքում ամենահրէշաւորներից մէկն էր։ Գիօրգին այդ կռիւների ժամանակ շատ անգթութիւններ ցոյց տուեց, շատ ստորութիւններ գործեց, բայց անկարող եղաւ իր գահը պաշտպանել Քարթալինիայում. այդ պատճառով էլ վրացի մի զօրաբաժնի հետ գնաց Պարսկաստան և ապրում էր Սպահանում։

Նշանակվելով Ղանդահարի կառավարիչ, Գուրգին-խանը պարսկական մեծ զօրք կուտեց այնտեղ, որպէս զի ճնշէ սիւննի աւղանների ապստամբութիւնը, իսկ յետոյ շարունակէ արշաւանք դէպի Բէլուջիստան։ Ղանդահարում նա սկսեց մի սոսկալի գործունէութիւն. նրա զօրքերը կատարեալ իրաւունք ստացան կողոպտելու, աւերելու, քանդելու։ Ինքը, Գուրգին-խանը, կողոպտած հարստութիւններն էր դիզում, գինեխմութեան և անառակութիւնների մէջ էր օրեր անցկացնում։ Աւղաններին նա արհամարհում էր, անուանում էր նրանց «մուղալ» և զուարճանում էր վայրենի տեսարաններով. այսպէս, նա աւղանցի կանանց հաւաքել էր տալիս իր առջև ու նրանց ծոցը կրակախառն մոխիր էր ածել տալիս. ապա, տեսնելով նրանց տանջանքները, ասում էր. «մուղալը լաւ է խաղում» *)։

*) Տէր-Յովհանեանց—«Պատմութիւն Նոր-Ջուղայու», հ. Ա., եր. 221։

Անհնարին էր որ մի ժողովուրդ կարողանար դիմանալ այդքան բռնութիւններին։ Միր-Վէյսը ստիպված էր տանել Գուրգին-խանի նախատինքները լռութեամբ։ Նա ունէր Մահմուդ անունով մի որդի, որ գեղեցիկ տղայ էր։ Վրացի խանը հրամայում է հօրը որ որդուն «բերէ իր մօտ»։ Մահմուդը, սաստիկ վիրաւորվելով այդ գզուելի առաջարկութիւնից, հեռանում է Ղանդահարից։ Կարող էր Գուրգին-խանը նախատեսել թէ մի օր այդ գեղեցիկ տղան ինչպէս պիտի տակն ու վրա անէ ամբողջ Պարսկաստանը... Միր-Վէյսն էլ, հպատակվելով Ղանդահարի ահարկու կառավարչի հրամանին, հեռացաւ, գնաց Սպահան։ Գուրգին-խանը գրեց Հիւսէին-Շահին թէ պէտք է արգելել այդ մարդուն Սպահանում, որովհետև դա էր աւղանական խռովութիւնների հոգին։ Եւ Միր-Վէյսը մնաց Սպահանում, իրաւունք չունենալով հեռանալ այդտեղից։

Բայց դա նրա համար մի շատ օգտակար գերութիւն էր։ Սպահանում նա տեսաւ և համոզվեց թէ որպիսի ոչնչութիւն է ներկայացնում Պարսկաստանը։ Հիւսէին-Շահը, իր անթիւ մոլլաների խրատներին հպատակվելով, ինչ-որ չինութիւններ էր սկսել Սպահանի մօտ, անձամբ հսկում էր այդտեղ տասնեակ տարիների ընթացքում։ Ոչինչ կարգ, ոչինչ զինուորութիւն. պալատական հաւերի կուտն էլ մի հարկ էր, որ պարտաւոր էին տալ Ջուղայեցի հայերը։ Պատմում են, որ Հիւսէինը մի

օր մի ագռաւ է սպանում. և այդ ահագին քաջութիւնը յաւերժացնելու համար նա հրամայում է ողորմութիւն բաժանել աղքատներին։ Միր-Վէյսը այդ ընդհանուր յիմարութեան մէջ շատ լաւ հասկացաւ թէ ինչ կարելի է անել կիսավայրենի, նետերով և սրերով զինված աւղանների օգնութեամբ։ Պէտք էր միայն տապալել Գուրգին-խանին և Սպահանից դուրս գնալու յարմարութիւն գտնել։

Յարմար առիթը Օրիի դեսպանութիւնն էր։ Միր-Վէյսը սկսեց եռանդով չահագործել այն երկիւղը, որ ազդել էր հայ դեսպանը պարսից ողորմելի Շահին և նրան շրջապատողներին։ Օրին, ինչպէս երևում է, մօտիկ յարաբերութիւններ էր սկսել Գուրգին-խանի հետ. նկատենք այստեղ, որ Գուրգին-խանի հարազատ եղբայրն էր Արչիլ արքայորդին, որ ապրում էր Մօսկվայում և որին Օրին ուզում էր տանել իր հետ և հաստատել Վրաստանում։ Այդպիսով, ի հարկէ, Գուրգին-խանն էլ կը միանար այն ապստամբութեան, որ պատրաստվում էր Անդրկովկասում, քրիստոնեաների մէջ։ Միր-Վէյսը շտապեց այս հանգամանքը պարզել պարսից կառավարութեան առաջ. մի հանգամանք, որ կասկածելի էր դարձնում իր անհաշտ թշնամի Գուրգին-խանի հաւատարմութիւնը։ Նա ասում էր որ Օրին դեսպան չէ, այլ Ռուսաստանի գաղտնի գործակալ։ Յայտնի են ռուսաց թագաւորի ծրագիրները և փառասիրական ձգտումները. Նա ուզում է իր կրօնակից քրիստոնեաներին բարձրաց-

նել Պարսկաստանի դէմ. ապացոյց—նա դեսպան է ուղարկում մի հայի, թէև այդ պաշտօնի համար կարող էր ուրիշ մարդ գտնել իր պետութեան մէջ: Եթէ Ռուսաստանը զօրք ուղարկէ, վրացիներն ու հայերը այս զօրքի հետ կարող են առանց մի ան-գամ էլ հրացան արձակելու գրաւել բոլոր Անդրկովկասը մինչև Արաքս գետը: Ղանդահարի և Քիրմանի զօրքերը գտնվում են Գուրգին-խանի հրամանատարութեան տակ, իսկ խանը այդ զօրքերով ոչ միայն չի գնայ իր ազգակիցների և կրօնակիցների դէմ կռուելու, այլ կարող է մեծ խռովութիւններ յարուցանել Պարսկաստանի սրտի մէջ և վտանգել պետութիւնը:

Շահ-Հիւսէյնը հաւատում է ճարպիկ աղանցուն. բայց չը կարողանալով Գուրգին-խանին պաշտօնանկ անել կամ յետ կանչել, ամենից լաւ է համարում Միր-Վէյսին ոչ միայն ազատութիւն տալ, այլ և հաստատել նախկին կոչման մէջ: Շահը կարծում էր թէ այդ երկու ախոյեանները, միմեանց հետ մրցելով, միմեանց անվնաս կը դարձնեն Պարսկաստանի համար:

Բայց դա մի աղէտալի սխալ էր: Միր-Վէյսը գնաց Ղանդահար ոչ իր թշնամուն իսկոյն մարտի հրաւիրելու համար: Նա աւելի խելօք էր քան Հիւսէյն-Շահը և նոյն իսկ Գուրգին-խանը: Ձևանալով վերջինիս բարեկամ, նա հաշտութիւն խօսեց և նոյն իսկ համաձայնվեց Գուրգին-խանին կնութեան տալ իր աղջկանը, որ հռչակված էր իր գե-

ղեցկութեամբ: Անհեռատես վրացին երկու ոտով ընկաւ թակարդի մէջ. իբրև գեղեցիկ աղջկայ բախտաւոր նշանած՝ նա գնաց Միր-Վէյսի խնճոյքին և այնտեղ անչնչացաւ զայրացած աւղանների սրերի տակ: Նրա մարմինը քաշքշվում էր փողոցներում և անպատւութեան ենթարկվում: Կոտորվեց և վրաց ամբողջ զօրաբաժինը: Միր-Վէյսը իր ձեռքն առաւ իշխանութիւնը, հաւաքեց և կազմակերպեց մեծ զինուորական ույժ. Ղանդահարը ոչ միայն անկախ էր, այլ և պատրաստվում էր ահեղ հարուածներ տալ Պարսկաստանին:

Օրին իր վերադարձին դեռ Շամախումն էր, երբ տեղի ունեցան այս շատ նշանաւոր դէպքերը: Դրանք հետևանք էին իր դեսպանութեան*): Բայց դեռ ինչեր կային առջևում: Արդէն 1711 թւականի մարտ ամսին նա յայտնում էր ռուսաց կառավարութեան որ պարսից Շահը զօրք է ուղարկել Ղանդահարի դէմ, բայց այդ զօրքը սաստիկ ջարդ է կերել և փախուստ դարձել: Աւղանների այս աջողութիւնները կարծես ազդանշան էին Պարսկաստանը շրջապատող սիւննի մահմեդականների համար: Դարձեալ բորբոքվում էր արևմա-

---

*) Մանրամասն կերպով այս անցքերի մասին խօսում է եզուիտ Կրուսինսկի («Histoire de la révolution de la Perse, Paris, 1728»), որ 20 տարի ապրել է Սպահանում: Ձեռքի տակ մենք ունենք միայն փոքրիկ հատուածներ այդ աշխատութիւնից, որ, ինչպէս երևում է, շատ հետաքրքրական տեղեկութիւններ է պարունակում իր մէջ:

հեղ ընդհարումը իսլամի այդ երկու ճիւղերի մէջ։
Նոյն 1711 թւականին, երբ Եսայի կաթողիկոսը
վերադառնում էր Աստրախանից, լեզգիները աս-
պատակում էին պարսկական հողերը, կողոպտում
և գերում էին ազգաբնակութիւնը... Միւս կողմե-
րից էլ սիւննիների արշաւանքներն էին պատ-
ռաստվում։ Արևելքը հրդեհվելու վրա էր։

Այդ արծարծվող բոցերը Պետրոս Մեծի հա-
մար առաջին նշանակութիւն ունէին։ 1711-ին,
ինչպէս գիտենք, նա պատերազմում էր Թիւր-
քիայի դէմ։ Պատերազմը դժբախտ էր նրա համար։
Պրուտ գետի մօտ նա քիչ էր մնում որ գերի ընկ-
նէ թիւրքերի ձեռքը և նրա ամուսին Եկատերի-
նան մեծամեծ ընծաներով կաշառեց թիւրք հրա-
մանատարին, գնեց հաշտութիւն, որ ազատում էր
և թագաւորին։ Բայց այսպիսի անաջողութիւնները
չէին կարող կոտրել Պետրոսի պողպատէ եռանդը։
Միաժամանակ շարունակում էր նա շվեդական
պատերազմը և աշխատում էր որ Ռուսաստանը
առևտրական միջնորդ դառնայ Եւրոպայի և Ասիայի
մէջ։ Ամբողջ Արևելքը, սկսած Չինաստանից մինչև
Միջերկրական ծովը, նրա մեծ ծրագիրների մէջ
առանձին կարևոր տեղ էր բռնում։ Եւ այդ ահա-
գին տարածութեան վրա ամենից առաջնակարգ
տեղը, որի համար Պետրոսը պատրաստ էր նոյն
իսկ պատերազմ սկսել, սահմանակից Կովկասն էր
իր Կասպիական ծովով։ Հաստատվելով Բալտիկ
ծովի ափերին, Պետրոսը սկսեց ջրանցք փորել

տալ՝ այդ ծովը Կասպից ծովի մէջ թափվող Վոլ-
գայի հետ միացնելու համար։ Ջրային այդ յարմար
ճանապարհով պիտի Պարսկաստանը իր ապրանք-
ները փոխադրէր Եւրոպա։ Կովկասը իբրև այդ
ճանապարհի մի ծայրը, այնքան մեծ կարևորու-
թիւն ունէր, որ Պետրոսի համար աւելի քան
պարզ ու անխուսափելի մի անհրաժեշտութիւն էր
Կասպից ծովի ափերին հաստատվելը։

Պէտք էր շտապել։ Այդտեղ, այդ ծովի արև-
մտեան ափերին, Ռուսաստանը կարող էր իր դէմ
ունենալ մի այնպիսի դեռ զօրեղ թշնամի, ինչպէս
էր Թիւրքիան։ Սիւննի մահմեդականութեան ար-
շաւանքները Պարսկաստանի դէմ դէպի առաջ էին
մղում և թիւրքերին, որոնք անհրաժեշտ էին հա-
մարում կուլ տալ հոգեվարք Պարսկաստանը։ Ան-
շուշտ, Շահ-Հիւսէինի ողորմելի կառավարութիւնը
ոչինչ արգելք չէր կարող դառնալ որ օսմանցինե-
րը Կովկասի արևմտեան կողմից մի ոյժգին արշա-
ւանքով հասնեն Կասպիականի ափերին, ուր նրանք
տիրապետողներ էին մի ժամանակ։ Եւ որովհետև
Ռուսաստանը, շվեդական պատերազմի պատճառով,
դեռ չէր կարող զէնքի ոյժով գործել Պարսկաստա-
նում իր առևտրական շահերը պաշտպանելու հա-
մար, ուստի Պետրոսը առ ժամանակ դիմեց դիպ-
լօմատիական միջոցներին։

1715 թւականին նա մի նոր դեսպանութիւն
ուղարկեց Պարսկաստան։ Դեսպան Արտեմի Վո-
լինսկի հրաման ունէր լաւ հետազօտելու պարսկա-

կան բոլոր գործերը, երկրի աշխարհագրական դիրքը, զինուորական ույժերը, ռազմական ճանապարհները։ Այսքանը, ի հարկէ, գաղտնի պիտի կատարվէր։ Իսկ դեսպանութեան պաշտօնական, բացարձակ նպատակը առևտրական էր։ Պէտք էր դաշնագիր կնքել, որով ռուս վաճառականներին ազատ առևտրի իրաւունք էր շնորհւում Պարսկաստանում․ Շահը պիտի հրամայէր հայ վաճառականներին որ սրանք մետաքսը և այլ ապրանքները Եւրոպա ուղարկեն Աստրախանի և Պետերբուրգի վրայով։

Դեսպան Վօլինսկուն տուած հրահանգների մէջ կար և այս կէտը․ «Տեղեկութիւններ հաւաքել հայ ժողովրդի մասին․ շա՞տ է նա և ի՞նչ տեղերում է ապրում․ հայերի մէջ կա՞ն նշանաւոր մարդիկ ազնուականներից կամ վաճառականներից և ինչպէս են նրանք վերաբերվում դէպի նորին թագաւորական մեծութիւնը․ սիրով և քաղցրութեամբ վարվել նրանց հետ և բարեկամութիւն հաստատել» *)։ Հայկական հարցը, ուրեմն, կար ռուսաց կառավարութեան առաջ։ Մինաս վարդապետը յիշեցնողի, խնդրողի դեր էր կատարում։

Օրիի մահը մեծ հոգսեր պատճառեց վարդապետին։ Պէտք էր նրա իրերը և գոյքը ազատել յափշտակութիւնից, վերջացնել նրա հաշիւները,

*) С. Соловьевъ—„Исторія Россіи“ М., 1868. հատ. 18, եր. 28։

վճարել պարտքերը։ Այդ գործերով էր զբաղված Մինաս վարդապետը ամբողջ երեք տարի և նրա գրագրութիւնների գլխաւոր առարկան այդ ժամանակամիջոցում Օրիի գործերն են կազմում։ 1714 թուականի վերջերում միայն, այսինքն այն ժամանակ, երբ պատրաստվում էր Վօլինսկու դեսպանութիւնը, նա ներկայացնում է մի ծրագիր թէ ինչպէս կարելի է հայերին Ռուսաստանի հովանաւորութեան տակ առնել։ Այստեղ այլ ևս չը կան Օրիի համարձակ արշաւանքները, մեծ նախագծերը․ երևում է վարդապետ մարդը։ Նա առաջարկում էր որ ռուսաց կառավարութիւնը պարսից Շահից իրաւունք ստանայ իր հաշւով Կասպից ծովի ափին, Նիզօվօյ նաւահանգստում, մի հայկական վանք կառուցանէ։ Վանքում կարող էր հաստատվել ռուսաց մի զօրաբաժին, որի հովանու տակ կը հաւաքվէին հայերը։ Վարդապետը խորհուրդ էր տալիս դիմել նաև կայսրի, կուրֆիւրստի օգնութեան, որ նրանք էլ խնդրեն Շահին վանք կառուցանելու մասին։ Եւ որպէս զի Մինաս վարդապետը կարողանայ ցոյց տալ թէ ինքը միայն եկեղեցական գործերի պատճառով է մնում Ռուսաստանում, խնդրում էր թոյլ տալ իրան հայոց մի եկեղեցի կառուցանել Պետերբուրգում։ Մինաս վարդապետը պատրաստ էր գնալ Եւրոպա, եթէ իր առաջարկած ծրագրի համար հարկաւոր լինի խընդրել կայսրին և միւս վեհապետներին։

Այդ առաջարկութիւնը ոչինչ հետևանք չու-

նեցաւ և չէր կարող ունենալ, այնքան աներև էր նրա խակութիւնը։ Ռուսաց կառավարութիւնը աւելի օգտակար համարեց որ վարդապետը գնայ Հայաստան և այնտեղ տեղեկութիւններ հաւաքէ։ Այդ ճանապարհորդութիւնը տեղի ունեցաւ 1716 թուականին և կատարվում էր Իսրայէլ Օրիի գոյքերը որոնելու պատրուակով։ Ռուսաց կառավարութիւնը յանձնարարեց դեսպան Վօլինսկուն, որ այդ ժամանակ դեռ Շամախումն էր գտնվում, աջակցել Մինաս վարդապետին, որի առաքելութեան իսկական նպատակն էլ յայտնվեց նրան։ Բայց Վօլինսկին, յայտնի չէ թէ ինչու, ոչինչ աջակցութիւն ցոյց չը տուեց։

Նոյն տարվայ յուլիսին Մինաս վարդապետը հասաւ Էջմիածին. այդ ժամանակվայ կաթողիկոս Աստուածատուր Համադանցին աւելի լաւ համարեց հետևել իր նախորդների օրինակին և հեռու մնալ հայերի քաղաքական շարժումից, ուստի և վարդապետին հաստատ խոստում չը տուեց, պատճառ բռնելով թէ վախում է պարսիկներից. նա միայն մի նամակ գրեց, որի մէջ յայտնում էր թէ վարդապետը ներկայացել է իրան, պատմել է ամեն ինչ և ընդունվել է սիրով։

Ուրիշ կերպ էր վերաբերմունքը, ի հարկէ, Գանձասարի վանքում։ Եսայի կաթողիկոսը գրկաբաց ընդունեց վարդապետին, արքեպիսկոպոսութեան աստիճան տուեց նրան և մի նամակ գրեց Պետրոս Մեծին, որի մէջ եռանդուն և ջերմ խօս-

քերով խնդրում էր նրա օգնութիւնը, հովանաւորութիւնը։ Բացի դրանից Եսային Ռուսաստանում ապրող հայերի առաջնորդ նշանակեց Մինաս վարդապետին։ Այդպիսով Գանձասարի վանքը իր համար մի նոր թեմ էր ստեղծում Ռուսաստանում. բայց աւելի կարևորը այն էր, որ այնուհետև Մինաս վարդապետը կարող էր շարունակել իր գործունէութիւնը իբրև ռուսահայերի առաջնորդ և իբրև Աղուանից կաթողիկոսութեան ներկայացուցիչ, այսինքն այն մարմնի, որ իր վրա էր վերցրել հայերի քաղաքական վերածնութեան հոգսերը։

Գանձասարում գիտէին որ ռուսաց դեսպանը ապրում է Շամախում։ Մինաս վարդապետը, նոյն ամառվայ վերջին ճանապարհվելով դէպի Ռուսաստան, տարաւ իր հետ կաթողիկոսի մարդկանցից մի քանիսին, որպէս զի նրանց ներկայացնէ դեսպան Վօլինսկուն։ Թագաւորի ներկայացուցչի ընդունելութիւնը մի լաւ ապացոյց կը լինէր հայերի համար, թէ Ռուսաստանը շարունակում է հայերի պաշտպանը հանդիսանալ և չէ մոռացել իր խոստումները։ Բայց Շամախում Վօլինսկին, չը նայած որ հրաման ունէր իր կառավարութիւնից, շատ ցուրտ ընդունելութիւն ցոյց տուեց վարդապետին և չուզեց խօսել նրա հետ։ Դա մի գոռոզ և ինքնահաւան մարդ էր. և վարդապետը ստիպված էր իր հետ եկածներին յետ դարձնել, ասելով թէ ինքը թուղթ կը ստանայ թագաւորից և կուղարկէ կաթողիկոսին։ Վօլինսկին ոչինչ չարաւ և այն

ժամանակ, երբ Մինաս վարդապետը Նիզովոյ նաւահանգստում կալանաւորվեց։ Այդտեղ Օրիի մարդկանցից մէկը նրանից պահանջեց իր ռոճիկը և գանգատվեց տեղական թուրք իշխանութիւններին, որոնք բանտ նստեցրին նրան։

Հետևեալ 1717 թուականի մարտին Մինաս վարդապետը Մոսկվայումն էր և հաշիւ ներկայացրեց իր ճանապարհորդութեան մասին։ Ամենամեծ յոյսը նա դրել էր Գանձասարի վրա, որի թեմը բաղկացած էր 900 գիւղերից. դրանք մեծ գիւղեր են, ունեն հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր, շատերը և չորս հարիւր, նոյն իսկ դրանից էլ աւել տներ։ Թէ էջմիածնի և թէ Գանձասարի թեմերում ապրող հայերի թիւը, վարդապետի կարծիքով, հասնում էր մօտ 200 հազարի—վաճառական թէ գիւղացի. երևի այդ հաշուի մէջ նա նկատի ունէր միայն տղամարդկանց, քանի որ ասում էր թէ այդ քանակութիւնը պատերազմի ժամանակ Թագաւորի կողմը կը բռնէ։

Իսկ ինչ զեկուցում տուեց Վօլինսկին հայերի մասին։ Այդ մենք չը գիտենք։ Նոյն մարտ ամսին նա մուտք գործեց Սպահան։ Պարսից կառավարութիւնը պաշարուած էր նոյն երկիւղներով և կասկածներով, որոնք առաջ եկան Օրիի ժամանակ։ Վօլինսկին իր բնաւորութեամբ այնքան գրգռեց պարսիկներին, որ նրան նոյն իսկ բանտարկեցին և ապա առաջարկեցին հեռանալ մայրաքաղաքից։ Ի զուր դիմադրում էր ռուս դեսպանը, պատճառ

բերելով իր բերած առևտրական առաջարկութիւնները։ Շահի կառավարութիւնը խոստացաւ կատարել այդ բոլորը յետոյ, և Վօլինսկին ստիպված էր սեպտեմբերին ճանապարհ ընկնել Սպահանից։ Բայց այդքան կարճ միջոցն էլ բաւական էր որ նա ճանաչէր Պարսկաստանը և կրկնէր Օրիի կարծիքները։ Իր զեկուցումների մէջ նա յայտնում էր թէ Պարսկաստանը բոլորովին փտած ու քայքայված է, թէ Հիւսէին-Շահը մի ապուշ է, խաղալիք դարձած իրան շրջապատող յիմարների ձեռքին։ Դեսպանը առաջարկում էր թողնել դիւանագիտական գործողութիւնները և ուղղակի զէնքի դիմել. չը պէտք է ձեռքից տալ ամենայարմար ժամանակը. Պարսկաստանը հոգեվարքի վրա է, բայց կարող է երևան գալ մի կարող և ուժեղ Շահ և այնուհետև նուաճման գործը կը դժուարանայ։ Գուշակութիւնը միանգամայն ճիշտ էր. Վօլինսկին դրանից յետոյ նշանակվեց Աստրախանի նահանգապետ և շարունակ արծարծում էր պատերազմական գործողութիւններ սկսելու միտքը։ Բայց Պետրոսը չէր շտապում, սպասում էր հիւսիսային պատերազմի վերջին։

Երբ Վօլինսկին վերադառնում էր Ռուսաստան, Շամախում նրան ներկայացաւ Փարսադանբէկ անունով մէկը, որ ուղարկուած էր վրաց Վախտանգ Թագաւորի կողմից։ Վախտանգը խնդրում էր որ ռուսները անյապաղ սկսեն ազատաբար պատերազմը և յայտնում էր որ ինքը ամեն

ժամանակ պատրաստ է մնալ այդ արշաւանքին։ Նա էլ հաւատացնում էր թէ Պարսկաստանը մի ոչնչութիւն է ներկայացնում։ «Ժամանակ է որ քրիստոնեաները յաղթեն մուսուլմաններին, ոչնչացնեն նրանց», ասաց Փարսադան-բէկը. Նա խնդրում էր հրահանգներ տալ Վախտանգին թէ ինչպէս պէտք է պատրաստուել։ Վօլինսկին, ի հարկէ, այդպիսի լիազօրութիւն չունէր, նա միայն կարող էր այդ խնդիրը ներկայացնել իր թագաւորին։

Իրագործւում էր Օրիի ծրագրի այն մասը, որ վերաբերում էր Վրաստանին։ Նրա ժամանակ, XVII դարի վերջին, չէր կարելի մեծ յոյս ունենալ թէ Անդրկովկասի երկու խոշոր քրիստոնեայ ժողովուրդները—հայերը և վրացիները կը միանան իսլամի տիրապետութեան դէմ։ Վրաստանում միմեանց յաջորդում էին մահմեդականացած վրացի թագաւորներ, որոնք սոսկալի դժբախտութիւն էին քրիստոնեայ երկրի համար։ Պարսից Շահերի այդ մոլեռանդ ստրուկները, որոնք ամեն ինչ պատրաստ էին զոհել իրանց փառասիրութեան, չէին կարող, ի հարկէ, թոյլ տալ որ և իցէ ապստամբութեան միտք անգամ։ Եւ Օրին, ինչպէս տեսանք, կամենում էր նախ մի յեղափոխութիւն կատարել Վրաստանում, թագաւորեցնելով այնտեղ, ռուսների օգնութեամբ, Արչիլ արքայորդուն և այդպիսով վերջ տալով մահմեդական թագաւորների գոյութեան, ապա միայն միացնել հայերի ու վրացիների պատերազմական ոյժերը։ Բայց դա մի

շատ դժուար գործ էր, որ գլուխ չէր գալ առանց ահաւոր ցնցումների, ներքին կռիւների։ Այժմ այդ վտանգը չը կար. Վախտանգը պարսիկների հաճութեամբ էր թագաւոր դարձել և ինքնայօժար կերպով պատրաստ էր մնալ ապստամբութեան։

Վախտանգը XVIII դարի սկզբում մի լուսաւոր երևոյթ էր դժբախտ Վրաստանի համար։ Նա թագաւորեց 1711-ին, բայց մահմեդականութիւն չընդունեց, մի բան, որ պարտաւորական էր վրացի թագաւորների համար։ Այդ քաջագործութիւնը հեշտ չէր Վրաստանի այն անկարգ, խառնակ ժամանակներում։ Վախտանգը միացնում էր իր մէջ հեռատես, քաղաքագէտ, հայրենասէր թագաւորի և լուսաւորութեան հովանաւորի յատկութիւնները։ Նա էր, որ երկու տարի առաջ, երբ դեռ երկրի կառավարիչ էր, բաց արեց Թիֆլիսում առաջին վրացերէն տպարանը, հրատարակեց գրքեր, հաւաքեց ու մի տեղ ամփոփեց վրաց հին տարեգրութիւնները։ Նա ջանք չէր խնայում բարեկարգութիւններ մտցնելու համար։ Թշնամիներ, ի հարկէ, շատ ունէր. լարվեցան ինտրիգներ, դաւեր, որոնք հարկադրեցին նրան գնալ Պարսկաստան և Շահի արքունիքում ամրացնել իր դիրքը։ Այդտեղ նա ստիպված եղաւ մահմեդականութիւն ընդունել և ստացաւ Հիւսէին-Կուլի-խան անունը։ Բայց այդ հանգամանքը ազդեցութիւն չարաւ նրա սրտի և հոգու վրա. կրօնափոխութիւնը երեսանց էր և նա

շարունակում էր մնալ մի լաւ քրիստոնեայ։ Հիւսէյին-Շահը պահեց նրան Պարսկաստանում, իսկ Քարթալինիայի կառավարիչ նշանակեց նրա Բակար որդուն, որ նոյնպէս հարկադրուած եղաւ մահմեդական դառնալ և ստացաւ Շահ-Նավազ անունը։

Վօլինսկու դեսպանութեան ժամանակ Վախտանգը դեռ Պարսկաստանում էր, բայց շարունակ մտածում էր թէ ինչպէս կարող կը լինի ազատել իր հայրենիքը պարսկական լուծից։ Այդ պատճառով էլ նա Փարսադան-բէկին ուղարկեց Շամախի։ Ամբողջ յոյսը դնելով Ռուսաստանի վրա, Վախտանգը չէր կարող անտես անել հայերի մէջ սկսուած շարժումը։ Եւ նա միացաւ հայերի հետ։

Վերջապէս երկու քրիստոնեայ, բախտակից ազգերը հասկացան իրանց շահերը։ Հայերի և վրացիների եղբայրակցութիւնը տանջուած, արիւնոտ հայրենիքի համար—ահա ինչ խոշոր, հրաշալի նորութիւն էր բերում ազատական շարժումը Անդրկովկասում։ Եւ այդ նորութիւնը ստեղծում էին երկու մարդիկ, ազատութեան ոգով տոգորուած երկու իշխանաւորներ. մէկը վրաց թագաւորն էր, միւսը—Եսայի կաթողիկոսը…

IV

Իսկ Պարսկաստանի գլխին խառնում էին աւելի և աւելի մռայլ, փոթորկալից ամպեր։ 1717-

ին ապստամբութիւն ծագեց Հէրաթում. ապստամբների դէմ ուղարկուած պարսկական զօրքը սաստիկ պարտութիւն կրեց, լէզգիները քարուքանդ արին Մէշէդի շրջակաները։ 1718-ին քրդական մի մեծ արշաւանք հեղեղեց Արարատեան երկիրը, Սալմաստը, Համադանի և նոյն իսկ Սպահանի շրջակաները։ Լէզգիների համար արդէն սովորական բան էր դարձել պարբերաբար իրանց սարերից իջնելը և ասպատակութիւններ փռելը դէպի ամեն կողմ։ Բայց ամենից նշանաւորը Ղանդահարի շարժումն էր. այնտեղ երևան էր եկել մի նոր ուժեղ ու անգութ նուաճող։ Դա Միր-Վէյսի որդի Միր-Մահմուդն էր, այն գեղեցիկ տղան, որին Գուրգին-խանը կամենում էր յափշտակել իր հարեմի համար… Աւղանները նրա առաջնորդութեամբ անցան պարսից սահմանը։

Սիւննի մահմեդականութիւնը, կարծես խօսք մի արած, յարձակվում էր ամեն կողմից պարսկական դիակի վրա և կտոր-կտոր էր անում նրան։ Հաղորդելով այս բոլորի մասին Մինաս վարդապետին՝ Այվազ անունով մի հայի միջոցով, Եսայի կաթողիկոսը շատ վտանգաւոր էր համարում հայերի դրութիւնը և յանձնարարում էր վարդապետին մեծ զգուշութիւն, որպէս զի միանգամայն ծածուկ պահվի հայերի գործը։ Նշանաւոր է որ նա զգուշացնում էր Մինաս վարդապետին և էջմիածնեցիներից։ Մի տխուր, անպատուաբեր փաստ է, որ էջմիածինը, ինչպէս շատ անգամ տեսանք,

ոչ միայն չէր միանում հայկական շարժման, այլ և հակառակորդի դեր էր կատարում։ Պատճառը Էջմիածնի և Գանձասարի մէջ տիրող հին հակառակութիւններն էին։ Էջմիածինը պահանջում էր որ Աղուանից կաթողիկոսները հպատակվեն իրան, ճանաչեն իր գերիշխանութիւնը։ Վէճերը այդ հողի վրա անպակաս էին. դրանց վրա աւելանում էին և հոգևորականութեան համար այնքան ահագին նշանակութիւն ունեցող դրամական հաշիւները։ Բանն այն է, որ Շամախի քաղաքը և նրա նահանգը (Շիրվան) վաղուց կռուախնձոր էին դարձել երկու աթոռների մէջ. իւրաքանչիւր կողմը իր թեմ էր համարում նրանց և չէր թոյլ տալիս որ հակառակ կողմը ժողովարարութիւններ կատարէ այնտեղ։

Եսայի կաթողիկոսի ժամանակ այդ հակառակութիւնները աւելի սուր կերպարանք ստացան։ Եւ սակայն այնպիսի ժամանակներ չէին, երբ կարելի կը լինէր ամեն ինչ մոռանալ՝ կղերական իրաւունքների և եկամուտների համար։ Եսային շատ լաւ էր հասկանում այդ բանը. դառնալով հայկական շարժման պարագլուխ, նա չէր կարող չը տեսնել որ էջմիածնական փառամոլութիւնը այդ վերին աստիճանի խորհրդաւոր, փափուկ միջոցներում կարող էր աւելի վտանգաւոր լինել հայերի համար, քան նոյն իսկ պարսիկների կատաղութիւնը։ Ուստի նա բռնեց զիջողութիւնների ու հաշտութեան ճանապարհը. մի քանի անգամ գնաց Էջմիածին, իր հպատակութիւնը յայտ-

նեց, վէճերին վերջ դրեց։ Բայց և այնպէս, Աստուածատուր կաթողիկոսի ժամանակ յարաբերութիւնները նորից լարվեցան և Շամախում նորից հաստատվեցան էջմիածնեցիները։ Դա մի սաստիկ հարուած էր, որ ստանում էր ոչ միայն Գանձասարը, այլ և հայոց գործը։ Մենք տեսանք թէ որքան կարևոր տեղ էր Շամախին՝ ռուսաց կառավարութեան հետ յարաբերութիւններ պահպանելու համար։ Ահա այս պատճառով էր որ Եսային զգուշացնում էր Մինաս վարդապետին էջմիածնական լրտեսներից *), որոնք վխտում էին Շամախում և պատրաստ էին, Գանձասարին վնասելու համար, նոյն իսկ մատնութիւնների դիմել։

Բայց նամակով զգուշացնելը բաւական չէր. հարկաւոր էին աւելի իրական միջոցներ՝ Էջմիածինը այդ կարևոր ժամանակներում անվնաս դարձնելու համար։ Եւ 1719 թւականին Եսային նորից գնաց Էջմիածին **)։ Այդ քայլն անել ստիպում էր և դրամական միջոցների պակասութիւնը։ Միայն հայկական շարժումը որքան փող էր պահանջում Գանձասարի աղքատ ու փոքրիկ թեմից։ Իսկ գործը գնալով մեծանում էր։ Արդէն հայկական զօրք կազմելու գաղափարն էր ծագել։ Շամախու պէս մի հարուստ, մեծ, վաճառաշահ քա-

*) Эзовъ, եր. 327։

**) Սիմէօն կաթողիկոս—«Ջամբռ», Վաղարշ., 1873, եր. 82.

ղաքը օգնութեան նշանաւոր աղբիւր էր, բայց նրան յափշտակել էին էջմիածնեցիները։ Բարերախտաբար, Աստուածատուր կաթողիկոսը չը յամառեց և Գանձասարը նորից յետ ստացաւ Շամախութեամբ։

Ուշադրաւ է որ Գանձասարի թեմը կազմող երկիրները թէ և այնպիսի մի մեծ գործի վրա էին, ինչպէս էր քաղաքական ազատութեան համար պատրաստւող ապստամբութիւնը, բայց գոռոզ և ինքնահաւան էջմիածնեցիների աչքում վայրենի, անպիտան մի ժողովրդի հայրենիք էին համարվում։ Ահա թէ ինչպէս էր զարգացած հայերի մէջ ընդհանուր շահերի գաղափարը։ Այստեղ էլ մենք կանգնած ենք հայկական հին, աղէտալի իրականութեան առաջ։ Մի գաւառի գործը անհասկանալի էր միւս գաւառի համար—այսպէս էր միշտ և այս պատճառով էր որ հայերը երբէք չը կարողացան մի միապաղաղ ոյժ կազմել…

Մենք տխուր պարտականութիւն ունենք այստեղ յիշատակելու, որ նոյն իսկ Գանձասարի թեմում էլ ներքին միաբանութիւնը և համաձայնութիւնը կատարեալ չէր։ Ուր որ երևան է եկել մի անձնազոհ, ազգի գործին նուիրված մարդ, նրա քթի տակ իսկոյն բուսել է հայ դաւաճանը, մատնիչը։ Այսպէս էր և Աղուանից երկրում։

Գանձասարի կաթողիկոսութիւնը երկար ժամանակից ի վեր Հասան-Ջալալեան իշխանական տոհմի ժառանգական սեփականութիւնն էր դար-

ձել. Եսային էլ Խաչէնի այդ հին, նշանաւոր իշխաններից էր։ XVII դարի վերջերում Ջրաբերդի Մեծ-Շէն գիւղի Սարգիս քահանայի որդի Սիմէօն եպիսկոպոսը Մռաւ սարի մի լանջի վրա հիմնեց Երից Մանկանց վանքը և ապա, ինքնագլուխ կաթողիկոս դառնալով, սկիզբ դրեց հակաթոռ կաթողիկոսական տոհմին։ Այդ ժամանակից Աղուանից երկրի ներքին խաղաղութիւնը վրդովվեց. հակառակ կաթողիկոսների մէջ հաստատուեց մի եղբայրասպան պայքար, որ շարունակվեց երկար և գնալով աղէտալի կերպարանք ընդունեց։ Երից Մանկանց վանքը դարձաւ դաւաճանութեան, օտարամոլութեան, մատնութեան օջախ. Սիմէօնի կաթողիկոսական տոհմը այդ միջոցներով էր պահպանում իր գոյութիւնը… 1705 թւին Սիմէօնին յաջորդեց Ներսէսը, որ դարձաւ Եսայի կաթողիկոսի «խոչընդոտն ու հակառակորդը» *)։ Հասկանալի է թէ որքան դժուարութիւններ էր յարուցանում այդ Ներսէսը իր փառասիրական կռիւներով։ Երկիրը մի միութիւն էր կազմել օտարի լուծը թօթափելու համար, բայց ահա այդ ընտանիքի մէջ երևան եկաւ ազգային դաւաճանը։ Ժողովուրդը գանգատվում էր, բողոքում էր նրա դէմ։ 1707 թւականին, երբ Օրին իբրև դեսպան գտնվում էր Շամախում, երկու հակաթոռ կաթողիկոսները կանչվեցին էջմիածին, ուր Աղէքսանդր

*) «Ջամբռ», եր. 82։

կաթողիկոսը, քննելով բողոքները, նզովեց Ներսէսին և կաթողիկոս հրատարակեց Եսայուն։ Վտանգաւոր երկպառակութիւնը առժամանակ վերացաւ. բանադրված, «նեռ» անուն ստացած Ներսէսը պատուից ընկած էր, երկրում մնալ չէր կարողանում, աստանդական կեանք էր վարում։ Բայց Եսային այդ միջոցով չէր կարող ընդ միշտ ազատվել իր անհաշտ թշնամուց։ Վերջ ի վերջոյ նա հասաւ այն եզրակացութեան, որ ամենից լաւը խաղաղութիւնն է։ Նա հաշտվեց Ներսէսի հետ։ Այդ զոհն էլ նրանից պահանջում էր հայկական գործը։ Այնպիսի մի ժամանակ, երբ ամեն կողմից փոթորիկներ էին բարձրանում, չէր կարելի ընտանի թշնամի ունենալ։

Փոթորիկները շուտ վրա հասան։ 1720 թուականին, Միր-Մահմուդը, 10 հազար աւղանցի զօրքերի գլուխ անցած, յարձակվեց պարսկական Քիրման քաղաքի վրա և գրաւեց նրան. բայց այդտեղ էլ Լուտֆ-Ալի-խանը, պարսից 20 հազար զօրքերով սաստիկ ջարդ տուեց նրան։ Պարտութիւնը երկար չը կանգնեցրեց աւղաններին. պարսից արքունիքը մի ճակատագրական թուլութեամբ իր կորուստն էր պատրաստում. աւղաններին ջարդող խանը անմիջապէս զոհ դարձաւ Սպահանի կանանոցների և նրանց ներքինիների վրէժխնդրութեան և չղթայակապ բանտարկվեց։ Միր-Մահմուդը, նորից կարգի բերելով իր ույժերը, առաջ շարժվեց։

Լեզգիները իրանց ձիւնապատ լեռների կատարներից կարծես տեսան այդ հեռաւոր արշաւանքը և իրանք էլ, յաջորդ տարին, ահագին քանակութեամբ արշաւեցին դէպի Կուր գետի հովիտը։ Նրանց առաջնորդների մէջ էր Դօվութ-բէկ անունով մէկը, որ անդադար բանակցութիւններ ունէր թիւրքաց սուլթանի հետ և կատարում էր Ստամբօլից եկած հրահանգները։ Լեզգիները յարձակվեցան Շամախու վրա. գրաւեցին, կողոպտեցին նրան։ Իսկ կողոպտելու շատ բան կար այնտեղ։ Շամախին այդ ժամանակ ամենափարթամ և ամենագեղեցիկ քաղաքն էր արևելեան Անդրկովկասում*)։ Այնտեղ էր կենտրոնացած առևտուրը Հնդկաստանի, Թիւրքիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի մէջ։ Վաճառականների անհուն հարստութիւնները լեզգիների աւարը դարձան։ Շիա մահմեդականները կոտորվեցան. Շամախու խանը սպանվեց։ Միայն ռուս վաճառականների վնասը հասնում էր 500 հազար ռուբլու։

Անդրկովկասի պարսիկ խաները միայն գիշատիչ լեռնականների դէմ և Բարդայի մօտ մեծ քանակութեամբ զօրք հաւաքեցին։ Բայց ծոյլ, թուլամորթ մարդկանց այդ ահագին բազմութիւնը չը դիմացաւ լեզգիների առաջին իսկ բախումին, փախուստ դարձաւ և ցիր ու ցան եղաւ։ Երկիրը մատնվեց լեռնականների անսանձ վայրենութիւն-

*) Եսայի կաթ., եր. 33.

ներին։ Հայերը թէ Շամախում և թէ գաւառներում համեմատաբար շատ քիչ վնասվեցան։ Բայց դա չէր նշանակում թէ լեզգիները առհասարակ պիտի խնայեն հայերին։ Հարուստ աւարը բաժանել, տեղաւորել էր հարկաւոր. այդ պատճառով նրանք վերադարձան իրանց լեռները։

Ցաջորդ գարնան այդ աւերիչ լաւան նորից իջաւ լեռներից, անցաւ Մուղանի դաշտը և Արաքսի հովտով արշաւեց դէպի Ղարաբաղի լեռնաստանը։ Նրա առջևից փախչում էր պարսկական զօրքը։ Լեզգիները կողոպտեցին Դիզակ և Վարանդա գաւառները և ապա անցան Խաչէն գաւառը։ Այստեղ մանաւանդ սարսափելի էր կոտորածն ու աւարառութիւնը։ Ազգաբնակութիւնը փախաւ լեռները, մտաւ քարերի ծերպերը, թագնվեց կուսական անտառների խորքում։ Բայց իզուր։ Ամեն տեղ հասնում էին թշնամու ձեռքերը, ամեն տեղից դուրս էին քաշում թագնվածներին։ Եսայի կաթողիկոսը, թողնելով Գանձասարը, հեռացաւ նրա մօտ բարձրացած անմատչելի սարի գագաթը և այդտեղից տեսնում էր թէ ինչպէս էին գերում, կոտորում, թալանում լեզգիները։ Երբ այլ ևս տանելու բան չը մնաց, լեռնականները սկսեցին յետ դառնալ դէպի Կուր գետը։ «Մարդիկն ամենն սրախողխող առնէին, կանայքն, երեխայքն, աղջկունքն ամենն քշելով տանէին դէպի Դաղստան,—գրում են ականատեսները *). — հասուստ

*) Эзовъ, եր. 340։

սուր, առաջուստ Կուր գետն, որն գետմին (նաւ) մտանէր, որն ձիոյ ագի բռնելով, որն թափուէր երեսս ջրոյն. ջուրն արիւնախառն, երախայքն ամենն թափելով գետն տանէր որպէս խուխ գարնանային։ Եւս յորժամ անցուցանէին այն կողմն եսիրքն ամենն յորժամ բաժին-բաժին առնէին լազգիքն այս խղճուկ քրիստոնեայքս. կանայք, երեխայք, աղջկունքն, մայրն մէկ լազգոյ բաժին անկանէր, տղան մէկ ուրիշ լազգոյ բաժին անկանէր, աղջիկն մէկին անկանէր. յորժամ միմեանց բաժանէին, մայրն որդւոյ բաժանէին, աղջիկն ի մօրէն, միմեանց գիրկս անկանելով, սուգ աղաղակ բառնալով կոչեցուցանէին, ոչ տեսանէ աչս մարդոյ և ականջս ոչ լսէ ձայն արտասուալից սգոյն»։

Բայց և այնպէս, Հայաստանի համար այնքան սովորական այս հարուածը այս անգամ շատ էլ ցաւալի ու սարսափելի չէր։ Նա առաջացրեց հակահարուած։ Իզուր չէր հայ ժողովուրդը քան տարիների ընթացքում սովորել զէնքի ուժով ազատութիւն ձեռք բերելու մտքին. իզուր չէին Եսայի կաթողիկոսի ջանքերն ու պատրաստութիւնները։ Վախտանգ թագաւորը 1719-ին վերադարձել էր Վրաստան և զինուորական ույժ էր պատրաստում։ Եսային էլ, որ բարեկամական յարաբերութիւններ ունէր նրա հետ, սկսեց նոյն գործը իր երկրում։ Այժմ լեզգիների արշաւանքը միանգամայն անպատ-

րաստ և անպաշտպան չը գտաւ երկիրը. լեռների վրա ամրացած էին զինուած հայերի խմբերը, որանց առաջնորդում էին տեղական մելիքները և իւզբաշիները։ Վտանգը միացրեց այդ խմբերը և Ղարաբաղը մի կարճ միջոցում 12 հազար սեփական հայ զօրք ունէր։ Բայց այդ բազմութիւնը դեռ վարժ ու պատրաստ չէր, չունէր առաջնորդ. նա սպասում էր ռուսաց թագաւորին, պիտի պահպանէր իր ոյժերը աւելի մեծ գործի համար։ Այդ պատճառով էլ մանր, յանկարծակի արշաւանքներով էր բաւականանում և մի քանի անգամ ջարդեց լէզգիների և թուրքերի խմբերը *)։

Այսպէս է սկսվում Ղարաբաղի հայ զինուորութիւնը, որ գործեց XVIII դարի համարեա մինչև վերջը և հայութեան մէջ մի նոր, չը տեսնուած երևոյթ էր կազմում ստրկութեան և տանջանքների երկար դարերից յետոյ։ Լէզգիների արշաւանքն էր, որ նրան առաջին անգամ լոյս հանեց. նոյն արշաւանքն էլ հանդէս բերեց մի հանգամանք, որի նմանը չէր տեսել Անդրկովկասի քրիստոնէութիւնը։

Ղարաբաղի վիճակին ենթարկվեց և Գանձակ քաղաքը. լէզգիները պաշարեցին նրան և աւապատակութիւններ տարածեցին մինչև Սևանի լիճը։ Գանձակը դիմադրում էր պաշարողներին և այդ միջոցին նրան օգնութեան հասաւ Վախտանգ Թա-

*) Эзовъ, եր. 341։

գաւորը, որ ունէր մի մեծ բանակ։ Գիշատիչ լեռնականները աւելի լաւ համարեցին, առանց կռուի բռնելու, հեռանալ այդ կողմերից։ Վախտանգը բանակ դրեց Գանձակի մօտ. Եսայի կաթողիկոսն էլ այդ բանակում էր։ Կամենալով պատժել սուննի մահմեդականներին, որոնք միանում էին լէզգիների հետ և կողոպտում իրանց հարևաններին, Վախտանգը թոյլ տուեց իր զօրքին կողոպտել մահմեդական ազգաբնակութիւնը, մանաւանդ որ գանձակեցիները, հակառակ իրանց խոստման, պաշար չը տուեցին վրաց զօրքին։ Հրամայված էր ձեռք չը տալ քրիստոնեաներին. բայց վրացիները չը բաւականացան թուրք գիւղերի աւարով և լաւ քարուքանդ արին նաև շատ հայ գիւղեր *)։ Այդ թշնամական վարմունքը, սակայն, սառնութիւն չը գցեց երկու ազգերի մէջ։ Վախտանգը սէր և համակրութիւն էր ցոյց տալիս դէպի հայերը, իր ձեռքն առաւ հայ զօրքին կանոնաւոր կազմակերպութիւն տալու և դասաւորելու, ինչպէս նաև զօրագլուխներ նշանակելու գործը **)։ Մայիսի վերջերին վրաց բանակը վերադարձաւ տուն։ Վախտանգի հետ Եսայի կաթողիկոսն էլ գնաց Թիֆլիս, ուր մնաց չորս ամիս։

Մինչդեռ Անդրկովկասում այդ դէպքերն էին կատարվում, Պարսկաստանի մայրաքաղաքը որ-

*) Եսայի կաթողիկ., եր. 43.

**) Эзовъ, եր. 336։

հասկան տագնապի մէջ էր գտնվում։ Միր-Մահմուդը, գրաւելով պարսկական քաղաքները, առաջացել էր մինչև Սպահան։ Հիւսէին-Շահը փորձեց դիմադրել այդ յաղթական արշաւանքին. Նոր միայն գիւղացիներ հաւաքել տուեց, զինեց և ուղարկեց աւղանների դէմ։ Գիւլնաբաթի մօտ, 1722ի փետրվարի 25-ին, սկսվեց ճակատամարտը։ Պարսիկները 50 հազար հոգի էին, թւով երեք անգամ գերազանցում էին աւղաններից. բացի դրանից, նրանք ունէին 24 թնդանօթ, մինչդեռ Միր-Մահմուդի զօրքը ձիաւոր էր, զինված սրերով, նիզակներով և վահաններով։ Այդ վայրենի խուժանը, այնու ամենայնիւ, յաղթութիւն տարաւ. նա խլեց պարսից թնդանօթները, կրակ սկսեց պարսկական բանակի դէմ և սա փախուստ դարձաւ։ Այնուհետև Պարսկաստանի մայրաքաղաքը և Շահը Միր-Մահմուդի ձեռքումն էին։ Հիւսէին-Շահին մնում էր փակվել Սպահանում, յայտնի չէ թէ ինչի վրա յոյս դնելով։ Աւղանները պաշարեցին Սպահանը. քաղաքում սկսվեց սոսկալի սով։ Ամեն ինչ մատնված էր անխուսափելի կորստի։ Միայն Շահի որդի Թահմազը կարողացաւ փախչել Սպահանից և գնաց Ղազուին, յոյս ունենալով այդ կողմերում զօրք հաւաքել և գոնէ Պարսկաստանի հիւսիսային մասերում պահպանել Սէֆէվիների թագաւորութիւնը։ Բայց նա կարողացաւ միայն 400 մարդ խմբել իր շուրջը…

Այս սոսկալի պարտութիւնները, այս արագ

քայքայումը ցոյց են տալիս թէ Իսրայէլ Օրին որքան լաւ էր հասկացել Պարսկաստանի ոյժերը խորտակելու միջոցը։ Այժմ կատարվում էին նրա մշտական պնդումները թէ Պարսկաստանը նուաճելու համար ոչ մեծ զօրք է հարկաւոր, ոչ երկարատև պատերազմ։ Պետրոս Մեծը այժմ միայն աւելորդ համարեց անգործութեան մէջ մնալ։ Շվեդական պատերազմը վերջացել էր 1721 թւականին, բերելով Ռուսաստանին ահագին օգուտներ, իսկ նրա թագաւորին—կայսրի տիտղոս։ Շամախում ռուս վաճառականների կողոպտվելը մի գեղեցիկ առիթ էր, որին նա սպասում էր անհամբերութեամբ։ Տարվայ վերջին նա հրամայեց արշաւանքի պատրաստութիւններ տեսնել Աստրախանում, իսկ երբ լուր ստացաւ որ Միր-Մահմուդը նուաճում է Պարսկաստանը, ինքն էլ ուղևորվեց Աստրախան զօրքերի գլուխն անցնելու համար։

Հաւաքվել էր մի շատ պատկառելի բանակ. 30 հազար կանոնաւոր և մօտ 70 հազար անկանոն զօրքեր։ Ձիաւոր զօրքը ցամաքային ճանապարհով գնաց դէպի Կովկասեան լեռները, մնացածները նաւ նստեցին 1722 թ. յուլիսի 18-ին։ Ինն օրից յետոյ նաւերը մօտեցան ափին. հասաւ և ձիաւոր զօրքը ու ամբողջ բանակը սկսեց առաջ խաղալ։ Մինաս վարդապետն էլ ռուսաց բանակի մէջ էր։ Տեղացի իշխանները միմեանց ետևից հնազանդութիւն յայտնեցին ռուսներին. մէկը միայն չնչին դիմադրութիւն ցոյց տուեց և դրա համար էլ սաստիկ

պատժվեց.—ռուսները մոխրի կոյտ դարձրին նրա գիւղաքաղաքը։ Օգոստոսի 23-ին Դերբենտը, առանց մի հրացան արձակելու, անձնատուր եղաւ կայսրին. նաիբը ծունկ չոքած՝ քաղաքի բանալիները յանձնեց Պետրոսին։ Բագուի խանն էլ յայտնեց որ պատրաստ է հպատակվել։ Մնում էր որ այդ զինուորական զբօսանքը դիմէ դէպի Շամախի։

Հասկանալի է թէ Պետրոսի այդ արշաւանքը ինչ ահագին տպաւորութիւն պիտի գործէր մահմեդական արևելքում։ Թիւրքիան նոյնպէս սկսեց պատերազմական պատրաստութիւններ տեսնել։ Այժմ այլ ևս ծածուկ բան չէր որ ռուսաց զօրքը գնում է Պարսկաստանը նուաճելու։ Օսմանեան պետութիւնը անտարբեր մնալ չէր կարող։ Երբ Հիւսէին-Շահը, Միր-Մահմուդի արշաւանքը կանգնեցնելու համար, դիմեց սուլթանի կառավարութեան և օգնութիւն խնդրեց, Ստամբօլում նրա դեսպանին յայտնեցին թէ չէ կարելի օգնել մի շիայի՝ սիւննու դէմ։ Այժմ այլ ևս այդ հանգամանքը չը կար Թիւրքիայի առաջ. ռուսաց թագաւորը քրիստոնեայ էր և օսմանեան կառավարութիւնը շատ լաւ հասկանում էր, որ եթէ նա հաստատվի Անդրկովկասում, այն ժամանակ Թիւրքահպատակ հայերն ու վրացիները նոյնպէս գլուխ կը բարձրացնեն և կը միանան ռուսների հետ։ Երզրումի փաշան պատերազմական գործողութիւններ սկսելու հրաման ստացաւ։

Հասկանալի է նոյնպէս և այն զգացմունքը,

որ այդ ժամանակ յուզում էր հայերին։ Քանի տարի էր, ինչ նրանք խնդրում էին, աղաչում էին և սպասում այս արշաւանքին։ Այժմ նա իրագործվում էր. և կասկած չէր կարող լինել որ եկել հասել է ազատութեան օրը։ Օգոստոսի 18-ին Եսայի կաթողիկոսը Թիֆլիսից գրում էր Մինաս վարդապետին թէ ամեն ինչ պատրաստ է, հայերն ու վրացիները միացել են և շուտով կը ճանապարհվեն կայսրին հանդիպելու։ «Պարսկաստանի այժմեան խառնակ դրութեան մէջ աւելի լաւ և յարմար ժամանակ որոնել չէ էլ կարող Նորին կայսերական մեծութիւնը՝ պարսկական հողերը գրաւելու համար»—աւելացնում էր կաթողիկոսը և խնդրում էր շուտով հրահանգներ հասցնել թէ ինչ պէտք է անել։

Վախտանգը Պետրոսից հրաւէր էր ստացել զօրքերով դիմաւորելու իրան Շամախում և սեպտեմբեր ամսին ահագին բազմութեան գլուխ անցած, դուրս եկաւ Թիֆլիսից և ուղևորվեց դէպի Գանձակ։ Հասնելով Կոտրած կամուրջին (Խրամ գետի վրա, Սընըղ-քօրփի), Վախտանգը առաջարկեց Եսայի կաթողիկոսին առաջ գնալ և հայ զօրքը հանել Ղարաբաղից, տանել դարձեալ Գանձակ։ Աղուանից կաթողիկոսը, ինչպէս վայել էր Հասան-Ջալալեան մի իշխանին, լաւ հասկանում էր և զինուորական գործը։ Մի տեղ հաւաքեց հայոց զօրքերը, փոքր ինչ վարժեցրեց, կարգ ու կանոն

ավերեցրեց։ Տասն հազար ընտիր տղամարդիկ, երկրի երիտասարդութեան ծաղիկները, զէնքի տակ էին։ Նրանց առաջնորդողներն էին Եսային՝ Գիւլատանից, Շրուանն ու Սարգիսը՝ Ջրաբերդից և Մելիք-Յովսէփը՝ Գանձակից *)։ Մեծ ուրախութիւններով, «համարելով նոր նորոգեալ զիշխանութիւն հայոց», ինչպէս ասում է Եսային, զօրքը ճանապարհ ընկաւ։ Նրա հետ էին Եսային, Ներսէսը, եպիսկոպոսներ, քահանաներ։

Գանձակի մօտ, Ջօլակ անունով տեղում, հայերը բանակ դրին։ Քաղաքի միւս կողմում իջել էր Վախտանգի բանակը։ Երեք օրից յետոյ կայացաւ երկու զօրքերի հանդիսաւոր միացումը։ Հայերը գնացին վրաց բանակը. դեռ տեղ չը հասած, վրաց զօրքը զինուորական պատիւներով դիմաւորեց հայերին և սկսվեցին մի շարք զինուորական հանդէսներ. ձիարշաւ, հրացանաձգութիւն։ Որքան ժամանակներից ի վեր չէր տեսնված մի այդպիսի հանդիսարան. երկու քրիստոնեայ ազգեր, երկուսն էլ բախտակից, երկուսն էլ մի կաթսայի մէջ տապակվելիս, բայց հեռացած միմեանցից կրօնական նախապաշարմունքների շնորհիւ, համարեա թշնամի միմեանց,—այժմ եղբայրանում էին մի սուրբ ուխտով։ Եղբայրացնողը ազատու-

*) Այսպէս են անուանված այդ գլխաւորները Պ. Եղեանցի գրքում (եր. 341)։ Իսկ Եսայի կաթողիկոսը անուանում է դրանց Աւան, Շրուան, Շահնի և Սարուխան։

թեան համար բարձրացրած զէնքն էր. երկու կողմից էլ ներկայ էին բազմաթիւ հոգևորականներ. նրանք էլ հաշտ ու բարեկամ էին միմեանց հետ։ Վախտանգը խորին բաւականութեամբ էր դիտում լեռնցի հայ կտրիճների շարքերը և իր մօտ կանչելով մելիքներին, ասաց նրանց. «Այսուհետև զօրացէք և քաջ եղէք. ոչ մի տեղից և ոչ ոքից մի վախենաք, որովհետև ահա հասել է քրիստոնեաների փրկութեան ժամանակը» *)։ Զինակից ազգերի եղբայրութեան ականատես ժողովուրդը հրճւում էր։ «Ուրախոյս բարձրացրած,—ասում է ականատեսը **)—ձայն արձակեցինք միմեանց հետ միասին, թէ գալու է քրիստոնեաների փրկիչը, ինչպէս մեր ճշմարիտ Փրկիչ Քրիստոսը Ծաղկազարդի օրը եկաւ Երուսաղէմ. և մեր երեխաները «Ովսաննա ի բարձունս» էին գոչում և մենք ամեն մէկս չորեր ունէինք պատրաստ գցելու թագաւորի ոտների տակ, ասելով. «Օրհնեալ եկեալ յանուն Տեառն»։

Բայց այդպէս չեղաւ։ Վաղաժամ, անհիմն էին հայ-վրացական բանակի հրճւանքները։ Գանձակի մօտ ոչ ոք չը գիտէր, թէ այդ ժամանակ ինչ է կատարվում Կասպից ծովի ափին։ Դեռ օգոստոսի 29-ին Պետրոսը զինուորական խորհուրդ կազմեց և յայտնեց, որ պէտք է զօրքերի մեծ մա-

*) Եսայի կաթ., եր. 49։

**) Эзовъ, եր. 336։

ար վերադարձնել Աստրախան։ Կայսրը հրաժարվում էր արշաւանքը անձամբ առաջ տանելուց։ Ի՞նչ էր պատճառը։ Աստրախանից 12 նավերով ալիւր էր ուղարկված զօրքի համար. նավերը փոթորիկի բռնվեցին և ափ նետվեցին, ալիւրը մեծ մասամբ փչացաւ։ Կարգադրված էր նոր պաշար ուղարկել Աստրախանից, բայց յոյս չը կար թէ այդ պաշարն էլ շուտ և անվտանգ կը ստացվի։ Բացի դրանից, երկրի անսովոր կլիմայական պայմանները, մանաւանդ տիրող սաստիկ շոգերը վնասակար ազդեցութիւն էին անում զօրքի վրա. հեծելազօրքի ձիաների մի նշանաւոր մասը կոտորվել էր։ Ուստի Պետրոսը, թողնելով Դերբենտում բերդապահ զօրք և տալով իր զօրավարներին ապագայ գործողութիւնների հրահանգներ, ինքը վերադարձաւ Աստրախան, ուր հասաւ հոկտեմբերի սկզբում. իսկ դեկտեմբերին նա արդէն Մօսկվայումն էր։

Զափազանցութիւն կը լինէր Պետրոսի նահանջման մի միակ պատճառը պաշարների պակասութիւնը համարել։ Մի երկրում, ուր ազգաբնակութիւնը ոչինչ դիմադրութիւն չէր ցոյց տալիս, դեռ չէր կարելի անյուսալի համարել արշաւող բանակի դրութիւնը, մանաւանդ որ հեռու չէր Աստրախանը, հեռու չէին և այն երկիրները, ուր ազգաբնակութիւնը այդպիսի հրճուանքով սպասում էր իր ազատարարներին։ Պաշարների պակասութիւնը պատճառներից մէկն էր միայն. կային ա-

ւելի հիմնաւոր, աւելի լուրջ պատճառներ։ Բանն այն էր, որ Պետրոսը Կովկասում լոկ առևտրական շահեր էր որոնում։ Նրան հարկաւոր էր միայն Կասպից ծովը՝ Բալտիկ ծովի համար։ Անդրկովկասեան քրիստոնեաների պատճառով պէտք էր ընդհարվել Թիւրքիայի և Պարսկաստանի հետ. այդպիսի մեծ պատերազմ չը կար Պետրոսի ծրագրի մէջ։ Իսկ Կասպից ծովը գրաւելը, ինչպէս ցոյց էր տալիս փորձը, այնքան էլ դժուար չէր. այդ գործի համար բաւական էին և փոքրիկ զօրաբաժիններ, բայց դրանցից էլ աւելի կտրուկ միջոցը դիպլօմատիական ճանապարհն էր։

Դեռ նախ քան Աստրախանից դէպի Կովկաս ճանապարհվելը, յունիսի 25-ին, Պետրոսը հրամայեց գրել Պարսկաստանի ռուսաց հիւպատոս Ավրամօվին հետևեալը. «Առաջարկիր հին կամ նոր Շահին կամ ում կը գտնես լիազօրութիւն ունեցող, որ մենք գնում ենք դէպի Շամախի ոչ թէ Պարսկաստանի դէմ պատերազմելու, այլ ապստամբներին (լէզգիներին) ոչնչացնելու համար, որոնք մեզ վնասներ պատճառեցին. և եթէ պարսից կառավարութեանը ներկայ ծայրայեղ քայքայված դրութեան մէջ հարկաւոր է օգնութիւն, մենք պատրաստ ենք օգնել և մաքրել երկիրը բոլոր թշնամիներից, նորից հաստատել պարսից մշտական տիրապետութիւնը, եթէ դրա փոխարէն նա կը զիջէ մեզ Կասպից ծովի ափերում գտնող մի քանի նահանգները, որովհետև գիտենք որ եթէ պարսիկ-

ները այժմեան թուլութեան մէջ մնան և մեր այս առաջարկութիւնը չընդունեն, այն ժամանակ թիւրքերը կը տիրեն ամբողջ Պարսկաստանին, մի բան, որին մենք հակառակ ենք. մենք չենք ուզում որ թիւրքերը տիրեն Պարսկաստանին, ոչ էլ ինքներս ենք ուզում տիրել» *)։ Հիւսէյն-Շահի որդի Թահմազը, որ նոյնպէս մի խեղճ ու թոյլ արարած էր և թափառում էր հիւսիսային Պարսկաստանում, համաձայնութիւն տուեց այդ առաջարկութեան և մի դեսպանութիւն ուղարկեց Պետրոսի մօտ այդ մտքով դաշնագիր կնքելու համար։ Դեսպան Իսմայիլ-բէկը արտասվելով ասում էր ռուսաց հիւպատոսին. «Մեր հաւատը և օրէնքը բոլորովին ոչնչանում են, իսկ մեր տէրերի ստութիւնն ու գառազութիւնը չէ պակասում»։

Պետրոսի անակնկալ վերադարձը մեծ վհատութիւն և անասելի կսկիծ պատճառեց հայերին և վրացիներին։ Կայսրը գիտէր որ այդպէս պիտի լինի. ուստի ճանապարհից, Աստրախան վերադառնալիս, Թիֆլիս ուղարկեց Իվան Տոլստոյ անունով օֆիցերին, յանձնարարելով նրան հաւատացնել Վախտանգին որ արշաւանքը շարունակել չէր կարելի։ Ապագայի մասին Պետրոսը ոչինչ խոստումներ չէր անում. ընդհակառակն, առաջարկում էր Վախտանգին, որ նա էլ իր կողմից միջնորդէ պարսից կառավարութեան առաջ որ Ռուսաստանին

*) Соловьевъ, Т. 18, եր. 47։

տրվեն ծովեզերեայ նահանգները։ Տոլստոյի հետ Մինաս վարդապետը երկու հայ ուղարկեց, որոնք թէ պիտի խօսէին հայերի հետ և թէ տեղեկութիւններ հաղորդէին։

Վախտանգը դեռ Թիֆլիս չէր վերադարձել, երբ այնտեղ հասաւ Տոլստոյ։ Վախտանգի որդի Վախուշտը, որ Թիֆլիսի կառավարիչն էր, սարսափով լսեց Պետրոսի վերադարձի լուրը։ Տպաւորութիւնն այքան սաստիկ էր, որ Վախտանգը խնդրեց Տոլստոյին ծածուկ պահել իր բերած լուրը, որպէս զի ժողովուրդը չը յուսահատվի։ Բանն այն էր, որ Էրզրումի փաշան, սուլթանի հրամանի վրա հիմնվելով, ստիպողաբար պահանջում էր վրացիներից հպատակութիւն. թիւրք կառավարութիւնը արդէն պայքար էր սկսել Կ. Պոլսում ռուսաց դեսպանի հետ և ասում էր թէ Պարսկաստանը միմիայն Թիւրքիային կարող է պատկանել, քանի որ քրիստոնեաները երբէք Պարսկաստանի տիրապետողները չեն եղել։ Իր այդ իրաւունքները Թիւրքիան պատրաստ էր հաստատել պատերազմով. բայց մինչև Ռուսաստանի դէմ պատերազմ յայտարարելը, հրամայվեց Էրզրումի փաշային գրաւել Վրաստանը, Երևանը, Գանձակը։ Վրացիները, յոյս ունենալով ռուսների վրա, մերժեցին թիւրքերի առաջարկութիւնը։ Այժմ, երբ չքանում էր ռուսների վրա դրած յոյսը, ծագում էր օրհասական հարց—ինչ անել։ Ժողովուրդը դեռ սպասում էր ռուսներին և Տոլստոյ, իբրև ռուս օֆիցեր,

սրտառուչ ցոյցերի առարկայ էր դառնում Թիֆլիսի փողոցներում։

Ստանալով տխուր լուրը, Վախտանգը կորագլուխ վերադարձաւ Թիֆլիս։ Գուցէ նրան աջողվէր պատւով դուրս գալ դժուար դրութիւնից, եթէ այդ միջոցին Վրաստանի դժբախտ ճակատագիրը մի նոր թշուառութիւն չը յարուցանէր։ 1722-ին մեռել էր Կախէթի Իմամ-Կուլի-խանը, մահմեդականացած վրացի թագաւորը։ Նրան յաջորդեց եղբայրը, որի քրիստոնէական անունն էր Կոստանդին։ Դա մի վերին աստիճանի կատաղի մահմեդական էր, Մահամմէդ-Կուլի-խան անունով, արիւնարբու, գոռոզ, քինախնդիր։ Պարսից Շահից (Թահմազից) նա ստացաւ և Երևանի Նահանգի կառավարութիւնը։ Կախէթ հասնելուն պէս նա թշնամական գործողութիւններ սկսեց Վախտանգի դէմ։ Դրդողը Վախտանգի եղբայր Եսսէն էր, որ գաղտնի կերպով իմաց տուեց Մահամմէդ-Կուլի խանին թէ Վախտանգը ռուսաց թագաւորին հպատակվել է ուզում*)։ Դաւաճան եղբօր զզվելի արարքը ներքին սարսափելի խռովութիւնների պատճառ դարձաւ։ Կախէթի խանը մտաւ Քարթալինիա, քարուքանդ արեց։ Դժբախտութիւններ էին թափվում Վախտանգի գլխին. Վրաստանի սահմանի վրա երևաց թիւրքաց զօրքը և նորից հպատակու-

*) П. Іоселіани—„Грузія подъ властью царей-магометанъ", Тиф. 1849, եր. 123.

թիւն պահանջեց։ Եւ Վախտանգը ստիպված էր կատարել այդ պահանջը, յոյս ունենալով որ Պետրոս Մեծը չի թողնի իրան։ Բայց թիւրքաց հպատակութիւնն էլ չազատեց նրան դժուարութիւններից։ 1723-ին Մահամմէդ-Կուլի-խանը գրաւեց Թիֆլիսը, աւերեց ու քանդեց նրան, բայց չը կարողացաւ վայելել այդ բարբարոսութեան պտուղները. թիւրքերը գրաւեցին Քարթալինիան և Մահամմէդ-Կուլի-խանը ստիպված էր նրանց յանձնել Թիֆլիսի բանալիները։ Վախտանգը, զրկվելով մայրաքաղաքից և գահից, թափառում էր Վրաստանի լեռներում և անդադար օգնութիւն էր խնդրում Պետրոսից։ Բայց իզուր. Տօլստօյը, որ դեսպանի նման մի պաշտօնեայի դեր էր կատարում նրա մօտ, հեռացաւ։ Հանգամանքներից օգուտ քաղեց միայն Վախտանգի դաւաճան եղբայրը. նա քրիստոնեայ էր, ընդունել էր շիա մահմեդականութիւն, նորից քրիստոնեայ էր դարձել, այս անգամ էլ սիւննի մահմեդական դարձաւ և Մուստաֆափաշա անունով սկսեց կառավարել Թիֆլիսը, իբրև օսմանեան վալի։ Վախտանգը վերջ ի վերջոյ բոլորովին ձեռք վերցրեց իր հայրենիքից և գնաց Ռուսաստան։

Համեմատաբար լաւ էր հայերի դրութիւնը։ Գանձակի մօտից վերադառնալուց յետոյ, հայ զօրքերը ցած չը դրին իրանց զէնքը և չը ցրվեցին, այլ ամրացան լեռներում և երկու մշտական բանակ կազմեցին, որոնք կոչվում էին Սղնախ։ Մեծ Սղնա-

խը, պատելով այն մի քանի անորոշ ցուցմունքներից, որոնք մնացել են ժամանակակից գրութիւնների մէջ, գտնվում էր Մռաւի լեռներում (Ջրաբերդ գաւառ), Թարթառ գետի վրա *): Իսկ փոքր Սղնախը այդտեղից դէպի հարաւ պիտի լինէր, երևի Վարանդայի Բիրս լեռներում **): Գլխաւոր հրամանատարն էր Մելիք-Աւանը ***):

Բացի այդ երկու ամրացրած բանակներից, հայ զօրքեր կային և Սիւնեաց երկրի Ղափան գաւառում: Սիւնիքում էր սկիզբ առել Իսրայէլ Օրիի գործունէութիւնը և Ղափանը, շնորհիւ իր լեռնային ամուր դիրքի և խիտ հայ ազգաբնակութեան, նրա ծրագրի մէջ նկատված էր իբրև մի շատ կարևոր կենտրոն ապստամբական գործողութիւնների համար: Երբ լեզգիների արշաւանքը ոտքի կանգնեցրեց հայերին, իսկ Պետրոսի մօտաւոր գալուստը ոգևորեց բոլոր քրիստոնեաներին, Ղափանում էլ վառվեց ապստամբութեան բոցը:

---

*) «Դաւիթ-բէկ», Վաղարշապատ, 1871, եր. 2:

**) Այս ենթադրութեան ուժ է տալիս այն փաստը, որ 1723 թւին պարսից զօրքերի առաջապահ մասերը ընդհարվեցան հայ զօրքերի առաջապահ մասերի հետ Հադրութ գիւղի մօտ (Эзовъ, եր. 362), որ գտնվում է Դիզակ գաւառում և որը, ինչպէս բացատրում է անանուն պատմողը, «մօտ էր հայոց զօրքին»: Շուշու մօտ այժմ էլ կայ Սղնախ անունով հայ գիւղը:

***) Դաւիթ-բէկի պատմութեան մէջ Մելիք-Աւանը կոչված է «Յովհաննէս պետ Դադարացոց» (եր. 10):

Վախտանգը, ինչպէս տեսանք, առանձին հոգատարութեամբ կարգաւորում էր հայ զինւորութիւնը: Նոյն բարեացակամութեամբ վերաբերվում էր հայերին և նրա որդի Բակարը (Շահ-Նաւազ): Սա Վրաստանում գտնվող այն հայերին, որոնք ծանօթ էին պատերազմական գործին, ուղարկեց Ղարաբաղ և Սիւնիք՝ հայ գնդերը առաջնորդելու համար: Այդ զօրավարների թիւը հասնում էր 30-ի և դրանց մէջ էր հայազգի Դաւիթ-բէկը, որ Սիւնիքում հանդիսացաւ մի քաջ և տաղանդաւոր հրամանատար, սկսեց գործել անկախ և ինքնագլուխ: Նրա մասին յետոյ կը խօսենք: Առ այժմ տեսնենք թէ ինչ էին անում Ղարաբաղի երկու Սղնախները:

V

Պետրոս Մեծի վերադարձը հայերի համար դեռ չէր նշանակում թէ ամեն ինչ վերջացել է և այլ ևս աւելորդ են ջանքերը: Նրանք դարձեալ սկսեցին խնդրել, աղաչել կայսրին: Մինաս վարդապետը ստանում էր բազմաթիւ նամակներ, որոնց մէջ նրան խնդրում էին ճար գտնել: Նա էր ամենքի յոյսը, նա պիտի համոզէր ռուսաց կառավարութիւնը շարունակել սկսած գործը: Վրաստանի հայոց առաջնորդ Մինաս եպիսկոպոս Փարվէզեան գրում էր որ եթէ ռուսները միւս տարին, այսինքն 1723-ին, նորից չերևան Շամախում, հայերը բնաջինջ կը դառնան: Նոյն աղաչանքն էին

անում և Ղարաբաղի մելիքները. նամակ գրեց նոյն իսկ Ներսէս կաթողիկոսը։

Եւ իրաւ, հայերի դրութիւնը շատ վտանգաւոր էր։ Մահմեդական աշխարհում միայն այդ ազգն էր, որ ըստ երևոյթին, միանգամայն հաշտւել էր իր ճակատագրի հետ և երկար ժամանակներից ի վեր ցոյց էր տուել թէ ամենաանվնաս և հլու հպատակը ինքը պիտի լինի։ Սովորել էին նրան կեղեքել, իսկ նա սովորել էր համբերել։ Այժմ, յանկարծ, այդ խեղճ ժողովուրդը զինված բանակ էր դարձել և սպառնական դիրք էր գրաւել իր լեռներում։ Ամեն կողմից այդ բանակի դէմ էր ուղղվում մահմեդական զէնքը. արևմուտքից առաջանում էին օսմանցիները. պարսիկները, մանաւանդ տեղական թուրք ազգաբնակութիւնը անտարբեր չէին, իսկ հիւսիսից սպառնում էին Թիւրքիայի գործիք դարձած լեզգիները։ Եւ հայերը, ի հարկէ, այլ ևս չէին ծածկում իրանց ապստամբական դիրքը. բորբոքվեց լեռնային պատերազմը նախ և առաջ տեղային թուրքերի դէմ. ազատաբար հրացանը գրկած հայը ամենից առաջ տեսնում էր իր ամենամօտիկ թշնամուն, որ շարունակ կեղեքել ու տանջել էր նրան։ Արշաւանքներ էին գործվում զանազան ցեղերի դէմ. յաղթում, կոտորում էին հայերը։ Այդ կոտորածները այնքան մեծ չափեր ընդունեցին, որ Կախէթի Մահամմէդ-Կուլի-խանը, իբրև Երևանի կառավարիչ, 700 թումանի տուգանքի ենթարկեց Էջմիածնի Աստուածատուր

կաթողիկոսին և ստիպում էր նրան որ պահանջէ հայ զօրքերից վերջ դնել այդ արիւնահեղութիւններին։ Կաթողիկոսը չուզեց խառնվել այդ գործի մէջ և չէր էլ կարող խառնվել, քանի որ ինքն էլ այժմ սկսել էր համակրել ապստամբութեան, թէև ամեն կերպ ցոյց էր տալիս իր չէզոքութիւնը։

Չը նայած այս աջողութիւններին, հայերի առջև կանգնած էր ապագայի հարցը։ Այդ անկանոն, դեռ անփորձ զինուորութիւնը չէր կարող դիմադրել մի մեծ կանոնաւոր բանակի, մանաւանդ որ զէնքեր քիչ ունէր և զուրկ էր մի ընդհանուր, փորձված առաջնորդից։ Յոյսը դարձեալ ռուսաց կայսրն էր։ Եւ անդադար դիմումներ էին անում նրան։ Մինչև այժմ այդ դիմումները առանձին մարդկանց, մեծ մասամբ հոգևորական պետերի կողմից էին լինում. այժմ բանակցութիւններ վարողը հայ զօրքն էր։ Նրա գլխաւորների ժողովն էր վճռում թէ ինչ պէտք է անել և լիազօրներ էր ուղարկում, առաջարկութիւններ, խնդիրքներ էր ներկայացնում։

Պետրոսը այդ միջոցին զբաղվածէր իր կասպիական ծրագիրներով։ Դերբենտում նա մանրամասն հրահանգներ էր տուել ապագայ գործողութիւնների մասին և այժմ հետևում էր թէ ինչպէս են կատարւում այդ հրահանգները։ Գնդապետ Շիպօվ գրաւեց Ռեշտը, սկսեց ամրութիւններ կառուցանել այդ քաղաքի մօտ և Ղազվինի ճանապարհի վրա։ Աւելի դժուար եղաւ այն գործը, որ յանձ-

նարարված էր զօրքերի գլխաւոր հրամանատար գեներալ Մատիւշկինին. Բաքուն չը համաձայնեց իր կամքով անձնատուր լինել. ռուսաց նաւերը մօտեցան ափին և մի թեթև կռւից յետոյ փախցրին պարսիկ բերդապահ զօրքը։ Այդ կարևոր նաւահանգիստը ձեռք գցելուց յետոյ, Պետրոսը իրաւունք ունէր իրանը համարել Կասպից ծովի արևմտեան ափը. դժուար չէր և նրա հարաւային ափին տիրանալը։ Պարսկաստանը որ և է դիմադրութիւն ցոյց տալու ընդունակութիւնից միանգամայն զուրկ էր։ Այնտեղ տիրում էր կատարեալ խառնաշփոթութիւն։

1722-ի հոկտեմբերի վերջերում սովը պաշարված Սպահանում այն աստիճանի կատաղութեան հասաւ, որ սկսեցին նոյն իսկ մարդկային միս էլ ուտել։ Հիւսէին-Շահը ճարահատեալ գնաց Միր-Մահմուդի բանակը, իր ձեռքով Սէֆէվիների թագը դրեց նրա գլխին, իսկ ինքը բանտարկվածի պէս մնաց, գոհ մնալով և նրանով, որ յաղթողը կեանք շնորհեց իրան։ Այսպէս Սպահանում գահ բարձրացաւ աւղանների հարստութիւնը։ Իմանալով այդ բանը, Թահմազն էլ իրան Շահ հրատարակեց հիւսիսային Պարսկաստանում. բայց չահութիւնն էլ նրան օգուտ չը բերեց. նա մնաց նոյն թոյլ ու ողորմելի մարդը, որ թափառում էր քաղաքից քաղաք, բայց ոչ մի տեղ չէր գտնում ոյժ և օգնութիւն՝ իր ժառանգական իրաւունքները պահպանելու համար։

Թահմազը չէր վտանգաւոր Պետրոսի համար. Վտանգը Թիւրքիայի կողմից էր, որ աւելի և աւելի խստապահանջ էր դառնում և չէր ուզում որ Պարսկաստանում քրիստոնեայ տիրապետութիւն հաստատվի։ Ռուսաց դիպլօմատիան ամեն ջանք գործ էր դնում վէճը խաղաղութեամբ վերջացնելու համար։ Պետրոսը առաջարկում էր խաղաղ կերպով բաժանել Պարսկաստանը։ Նա բաւականանում էր իր կասպիական նուաճումներով և թոյլ էր տալիս որ Թիւրքիան էլ վերցնէ իր ուզած կտորները։ Թիւրքիան չէր ուզում լսել անգամ այդ առաջարկութեան մի կէտը մանաւանդ։ Անդրկովկասեան քրիստոնեաների աղաչանքները չէր արհամարհում Պետրոսը, նա անկեղծ կերպով կամենում էր մի բան անել նրանց համար, որքան ներում են քաղաքական միջոցները։ 1723 թւականի ապրիլին ռուսաց կառավարութեան կողմից մի նամակ ուղարկվեց Թիֆլիսի հայոց առաջնորդ Մինաս եպիսկոպոս Փարվէզեանին, իբրև պատասխան նրա մի աղերսական գրութեան։ Այդ նամակի մէջ յայտնված էր, որ կայսրը չէ մոռացել հայերին և անպաշտպան չի թողնի նրանց։ Թիւրք կառավարութիւնը պահանջում էր որ ռուսները այլ ևս արշաւանք չը գործեն լէզգիների դէմ. Պետրոսը համաձայն էր այդ բանին, բայց իր կողմից պահանջում էր որ թիւրքաց զօրքերն էլ Հայաստան և Վրաստան մտնելու իրաւունքը չունենան։ Եւ որովհետև Բ. Դուռը ուշադրութեան չէ առել

ռուսաց այդ պահանջը, ուստի յայտնվում էր հայերին և մանրամասն գրված էր Վախտանգին որ կայսրը չի թողնի որ թիւրքերը վնասեն քրիստոնեաներին։

Իրաւ է, Պետրոսը Կ. Պօլսում դրեց Հայաստանը և Վրաստանը չէզոք երկիրներ ճանաչելու առաջարկը, բայց թիւրք կառավարութիւնը սաստիկ հակառակվեց. թէ այս և թէ ուրիշ պատճառներով անխուսափելի էր թւում պատերազմը։ Պետրոսը հրամայեց պատրաստութիւններ տեսնել։ Բայց Կ. Պօլսի ֆրանսիական դեսպան Բօննա խաղաղ միջնորդի դեր ընդունեց և սկսվեցին երկարատև խորհրդակցութիւններ՝ վէճը առանց զէնքի վճռելու համար։

Այսպէս ահա հայերը դեռ վերջնականապէս յուսահատվելու պատճառ չունէին։ Նրանց առաջարկվում էր պինդ պահվել, միաբան լինել վրացիների հետ և սպասել յարմար ժամանակի։ Պետրոսը ընդունում էր իր մայրաքաղաքում եղած հայերին, յուսադրում էր նրանց։ Իսկ 1723-ի յունիսին նա գրեց իր երկրորդ հրովարտակը հայերին և ուղարկեց նրան Ղարաբաղ՝ Իվան Կարապետ անունով հայի ձեռքով։ Այս երկրորդ հրովարտակն էլ գրված էր, առաջինի նման, անորոշ, մութ ոճով։ Դրա մէջ Պետրոսը թոյլ էր տալիս որ հայերը վաճառականութիւն անեն Կասպից ծովի վրա իր ձեռք բերած քաղաքներում և խոստանում էր զանազան արտօնութիւններ շնորհել։ Բայց Կարապե-

տի առաքելութիւնը այդ նպատակը չունէր. հրովարտակը գրված էր այդ ձևով, որպէս զի եթէ թշնամիների ձեռքն ընկնելու լինի՝ չը վնասէ հայերին։ Իվան Կարապետը մեծամեծ զգուշութիւններով տանում էր իր հետ և մի այլ թուղթ, որի բովանդակութիւնը շատ կարևոր էր։ Պետրոսը ամենադրական, պարզ խոստումներով յուսադրում էր հայերին և հաւատացնում էր թէ ինքը անպատճառ գլուխ կը բերէ նրանց ազատութիւնը։ «Մենք—ասված էր այդ թղթի մէջ—շատ տրամադիր ենք և պատրաստ ազատել նրանց (հայերին) անհաւատների լուծից։ Բայց նրանք էլ կարող են հասկանալ, որ այդ բանի համար չափազանց անհրաժեշտ էր, որ մենք նախ Կասպից ծովի վրա հաստատվենք և այդ ծովի վրա եղած տեղերին տիրենք, որպէս զի այնտեղից դէպի հայերը սուրչաւելու և նրանց հետ միանալու բոլոր պատրաստութիւնները տեսնենք»։ Կասպից ծովի վրա հաստատվելու գործը աջողութեամբ առաջ է գնում, ուրեմն հայերը պիտի ապահով լինեն, որ նրանց օգնութեան հասնելու և գերութիւնից թափելու ժամանակն էլ կը գայ։ Պետրոսը խորհուրդ էր տալիս պինդ պահվել, ամեն կերպ աշխատել դիմանալու, մինչև որ կը գան ռուսները։ Իսկ եթէ զօրքի գլխաւորները և առհասարակ ժողովրդի երևելիները չեն կարողանում դիմանալ և սաստիկ նեղված են մահմեդականներից, այդ դէպքում թող

նրանք հեռանան երկրից, ապաստան գտնեն ռուսների գրաւած քաղաքներում, պատուիրելով ժողովրդին առժամանակ հանդարտ մնալ։

Իվան Կարապետը այս վերին աստիճանի կարևոր թուղթը մեծ դժուարութիւններով կարողացաւ տեղ հասցնել։ Ուղևորվելով Բագուից, նա մէկ էլ յետ դարձաւ, մնաց մի քանի օր և նորից ճանապարհվեց։ Շամախի նա չը մտաւ, այլ գնաց Մէյսարիի վանքը, ուր մնաց 18 օր։ Լէզգիները սաստիկ հսկողութիւն ունէին ճանապարհների վրա. Իվանը ծածուկ մարդ ուղարկեց Շամախի, կանչեց Ալէքսանդր անունով քահանային և երկու գլխաւորների, ցոյց տուեց իր բերած թղթերը։ Դրանց օգնութեամբ նա անցաւ Սաղիանի վանքը, ուր մնալով երկու օր, փոխեց իր շորերը և դեկտեմբերի ցրտերին մուրացկանի կերպարանքով ինն օր ճանապարհ կտրելով, հասաւ Փոքր Սղնախ, իսկ այդտեղից էլ գնաց Մեծ Սղնախ։ Կայսրի հրովարտակները, ի հարկէ, մեծ ուրախութիւն պատճառեցին և նորից ոգևորեցին հայ զինուորներին։

Երկու Սղնախների ներքին հանգամանքների մասին ոչ մի մանրամասն տեղեկութիւն չը կայ։ Այդ պատճառով շատ հետաքրքրական են այն մի քանի խօսքերը, որ նուիրում է Իվան Կարապետը հայ զինուորութեան։ Այդտեղից մենք նախ և առաջ իմանում ենք որ հայկական ազատութեան գործը դեռ մանկական թոյլ քայլեր էր անում,

բայց դաւաճանութիւնը արդէն իր բոյնն էր դրել նրա սրտում։ Ներսէս կաթողիկոսի հաշտութիւնը Եսայու հետ շատ կարճատև եղաւ. նա խզվեց հէնց այս փափուկ ժամանակներում. Ներսէսը քաշվել էր Երից Մանկանց վանքը և իր եղբայր Սարգսի ու մի քանի իւզբաշիների հետ հակառակորդի դիրք էր բռնել, դառնալով թուրքերի կողմնակից։ Այս դաւաճանները բանը այն տեղն էին հասցրել, որ նոյն իսկ յարձակվում էին հայ գիւղերի վրա և կողոպտում նրանց։ Բայց կար աւելի վտանգաւոր դաւաճան։ Դրա անունն էր Մէլիք-Բաղըր. հիմնելով իր համար առանձին բերդ, նա մեծ շփոթութիւն էր մտցնում հայերի մէջ և նրանց ամեն մի գործը հասցնում էր Շահ-Թահմազի ականջին։ Ինչպէս յատուկ է ստոր դաւաճաններին, Մէլիք-Բաղըրը, ճաշի հրաւիրելով իր մօտ 55 նշանաւոր մարդիկ հայոց զօրքերից, բոլորի գլուխները կտրել տուեց և ուղարկեց Շահին։ Բանի կենդանի էր այդ մարդը, հայերի միաբանութիւնը միշտ վտանգված պիտի լինէր. ուստի Սղնախում վճռված էր քարուքանդ անել նրա բերդը, վերացնել մէջ տեղից այդ անխիղճ մատնիչին։

Հայ զինուորութեան համար այս դաւաճանութիւնները մռայլ հանգամանքներ էին։ Բայց նրանք վհատութիւն, կազմալուծութիւն պատճառել չը կարողացան։ Սղնախները արդէն անուն էին հանել իրանց գործողութիւններով։ 1723-ի

աշնանը Թիւրքաց մի ահագին բանակ յարձակվեց Գանձակի վրա և աւերեց նրա մի մասը։ Շատ հայեր գերի ընկան, իսկ հալածվածների մեծ մասը, մերկ ու բոբիկ, փախաւ Մեծ Սղնախը, հայ զօրքերի պաշտպանութեան տակ մտաւ։ Հայերը ոչ միայն պատսպարեցին իրանց դժբախտ եղբայրակիցներին, այլ և մի պատգամաւորութիւն ուղարկեցին Իբրահիմ փաշայի մօտ և պահանջեցին որ նա արձակէ գերի հայերին։ «Դու ուղարկված ես Գանձակը գրաւելու և ոչ թէ խաղաղ մարդկանց գերելու համար»,—ասում էր հայոց զօրքը։ Եւ Իբրահիմը կատարեց այդ պահանջը, ի հարկէ աւելի սիրտ շահելու համար, քան երկիւղից դրդված։ Սիրտ շահելը ունէր առանձին նպատակ. Թիւրք կառավարութիւնը աշխատում էր իր կողմը գցել հայոց զօրքը։ Իբրահիմը մարդ ուղարկեց հայերի հրամանատար Մէլիք-Աւանի մօտ և առաջարկեց նրան միանալ Թիւրք բանակի հետ։ Հայերը մերժեցին այդ առաջարկութիւնը։ Թէև այդ ժամանակ նրանք դեռ չէին ստացել Պետրոսի յուսադրական հրովարտակը, բայց և այդպէս, հաւատում էին որ առանց օգնութեան չեն մնայ և առաջ կը տանեն իրանց գործը։

Բայց ո՞րքան դրական նշանակութիւն ունէին Իվան Կարապետի բերած կայսերական թղթերը։ Որ Պետրոս Մեծը քրիստոնեաներին ազատելու անկեղծ ցանկութիւն ունէր, դրա մասին կասկած լինել չէ կարող։ Բայց քաղաքական հանգամանք-

ները կայսրի անձնական կամեցողութիւնից զօրաւոր էին։ Թիւրքիայի դիմադրութիւնը անխորտակելի էր. այդպիսի հանգամանքներում պահանջը առաջ տանել կարելի էր միայն պատերազմի միջոցով։ Ռուսաստանը չէր կարող պատերազմի աւերանքներին ենթարկուել Անդրկովկասի մի քանի երկրների համար։ Եւ նրա կառավարութիւնը, կասպիական նուաճումներին օրինական ձև տալու համար, ստիպած եղաւ պաշտպանողական դաշնակցութիւն կապել Պարսկաստանի հետ։ Հայերին ուղղված հրովարտակները գրվեցան յունիսին. իսկ նոյն 1723-ի սեպտեմբերի 12-ին Պետերբուրգում ռուս լիազօրները և Թահմազի դեսպան Իսմայիլբէկը ստորագրեցին ռուս-պարսկական դաշնագիրը։ Երկու պետութիւնների մէջ համաձայնութիւն էր կայանում այսպիսի պայմաններով. Ռուսաստանը ստանում էր Դերբենտը, Բագուն իրանց շրջականերով, Գիլան, Մազանդարան և Աստրաբադի նահանգները և դրա փոխարէն պարտաւորվում էր իր զօրքերով պահպանել Շահի գահը, կռուել նրա թշնամիների դէմ և ճնշել ամեն մի ապստամբութիւն, որ բարձրանում էր Շահի իշխանութիւնը խախտելու համար։ Դաշնագրի հինգերորդ յօդուածը ասում էր. «Նորին կայսերական մեծութիւնը խոստանում է որ ամեն ժամանակ բարեկամ կը համարէ նրանց, որոնք բարեկամ են Շահին ու պարսից կառավարութեան և թշնամի նրանց, որոնք Շահի ու պարսից կառավարութեան թշնա-

միներ են. ամբողջ պարսկական պետութեան մէջ եթէ որևիցէ մէկ կողմից թշնամական գործողութիւն լինի, կայսրը պիտի օգնէ այդ թշնամութիւնները զսպելու համար *)»։

Այս դաշնադրութեան ուղիղ հետևանքն այն էր, որ քրիստոնեայ հայերի և վրացիների ազատութեան միտքը դառնում էր մի բան, որին այժմ պիտի հակառակվէր Ռուսաստանը, քանի որ իր վրա էր վերցրել այսպիսի պարտաւորութիւններ։ Թէև Թահմազ-Շահը չընդունեց այդ պայմանները, թէև օսմանեան կառավարութիւնը պնդում էր թէ Թահմազը այդպիսի դաշնակցութիւններ կնքելու իրաւունք էլ չունի, քանի որ դեռ կենդանի է նրա հայրը, բայց ռուսաց կառավարութիւնը միայն այդ թղթի վրա կարող էր հաստատել իր տիրապետական իրաւունքները Կասպից ծովում. ուստի և ամուր հաստատվելով դաշնագրի մէջ յիշված տեղերում, յայտարարեց որ թոյլ չի տայ որ և է մէկին խանգարել այդ տիրապետութիւնը։ Պէտք էր սպասել, որ դաշնագրի մի կողմը կատարելուց յետոյ, ռուսները կը սկսեն կատարել և միւս կողմը։ Սպահանում նստած էր Մահմուդ-Շահը և մի բարբարոս ինքնակալի նման անգթութիւններ էր անում։ Բայց ռուսաց զօրքը չը գնաց նրա դէմ, որպէս զի, դաշնագրի զօրութեամբ, զէնքի ոյժով վերա-

*) Юзефовичъ—„Договоры Россіи съ Востокомъ„ СПБ. 1869, եր. 188։

հաստատէ Սէֆէվիների թագաւորական իրաւունքները։

Այնուհետև Պետրոսը, ի հարկէ, այլ ևս չէր կարող յոյսեր տալ հայերին։ Յարաբերութիւնները ընդունում են այլ կերպարանք։ Նոր գրաւած երկրների մէջ պէտք էր վստահելի տարր բնակեցնել. այդ նպատակով Պետրոսը կարգադրութիւններ է անում որ հայերին և վրացիներին գրաւեն դէպի Կասպեան ափերը, իսկ մահմեդական, մանաւանդ սիւննի մահմեդական տեղացիներին, որքան հնար է, դուրս մղեն։

Հայերը տեղեակ չէին այս դիպլօմատիական անց ու դարձին և շարունակում էին առաջվայ նման խնդրել Պետրոսին, որ շտապեցնէ իր արշաւանքը։ Մինաս վարդապետը անշէջ եռանդով տեղեկութիւններ էր հաղորդում այն բոլոր դէպքերի մասին, որոնք տեղի էին ունենում Արևելքում։ Թէ որքան լաւ էր նա. կազմակերպել տեղեկութիւններ ժողովելու գործը, ցոյց է տալիս մի ընդարձակ և շատ մանրամասն յիշատակագիր, որ գրված է Ռէշտում 1723 թւականի օգոստոսին *)։ Ջուղայեցի մի հայ վաճառական, Պետրոս դի-Սարգիս Գիլանենց, թողնելով իր առևտրական գործերը, ծախսում է իր միջոցները հայրենիքի փրկութեան գործի համար։ Նստած Ռէշտում, ուր ամեն կողմից հայեր էին գալիս առևտրական և այլ

*) «Կռունկ» ամսագիր, 1863, № 2—3։

գործերով, նա մանրամասն տեղեկութիւններ է հաւաքում այդ հայերից Մինաս վարդապետի համար։ Կովկասում, Թիւրքիայում, Պարսկաստանում փոքր ի շատէ աչքի ընկնող դէպք չէր լինում, որի մասին տեղեկութիւն չունենար Գիլանենցը։ Մի զարմանալի ընդունակութեամբ, որ պատիւ կարող էր բերել նոյն իսկ հեղինակ մարդկանց, նա դասաւորել է այդ կցկտուր տեղեկութիւնները, դուրս է գցել հակասութիւնները, և ստացվել է մի պատմական յիշատակարան, որի մէջ շատ մանրամասն են մանաւանդ Հիւսէյին-Շահի և Մահմուդի գործերը, աւղանցիների արշաւանքը, Սպահանի պաշարումը, օսմանցիների պատրաստութիւնները։ Իր այդ նշանաւոր յիշատակարանը Պետրոսը ուղարկեց Մինաս վարդապետին և վերջում խնդրում էր նրան օգնութիւն հասցնել խեղճ հայոց ազգին, որին մեծ վտանգ էր սպառնում։

Այդ մի և նոյն վտանգի մասին էին անդադար գրում և մելիքները։ Եւ իրաւ, օսմանեան զօրքերը առաջ էին արշաւում մեծ եռանդով. նրանք չտապում էին ոչ միայն պարսկական ժառանգութիւնից չաղ-չաղ պատառներ խլել, այլ և ոչնչացնել Պետրոսի ձեռնարկութիւնները Կովկասում։ Նրանց գլխաւոր նպատակներից մէկն էր վաղօրօք գրաւել Բագուն, որպէս զի դրանով պատռեն Կասպից ծովեզերքը բռնած ռուս զօրքերի գիծը, երկու կտրված մասերի բաժանեն նրանց ու հարկադրեն հեռանալ այդ կողմերից։ Թիւրք

պետութեան համար սաստիկ վտանգաւոր էր մանաւանդ քրիստոնեաների միաբան ապստամբութիւնը և Երզրումի փաշայի պատգամաւորը Էջմիածնում բացարձակ ասում էր կաթողիկոսին, թէ հայերն են ռուսներին բերել տուել, ուզում են գրաւել նոյն իսկ օսմանեան երկիրները և դրա համար էլ 60 հազար զինված մարդ են պատրաստել. պատգամաւորը իմաց էր տալիս, որ այդ բանը հայերին էժան չի նստի *)։ 1724-ին օսմանցիները նշանաւոր աջողութիւն ունեցան. նրանք գրաւեցին Խոյը, Համադանը, Երևանը, վերջապէս հաստատվեցան Վրաստանում. Վախտանգը, ինչպէս տեսանք, յաղթվեց և փախաւ Իմերեթիա։ Միայն Ղարաբաղն ու Ղափանն էին կանգնած օսմանեան արշաւանքի առաջ։ Պարզ էր, որ օսմանցիները իրանց ամբողջ ծանրութեամբ պիտի ընկնեն այդ երկրների վրա և ոտնակոխ անեն, որովհետև չէին կարող իրանց ետևում թողնել մի քանի տասնեակ հազար զինված թշնամիներ և այդպէս առաջանալ դէպի Կասպից ծովը։

Ահա այս նեղ դրութիւնը հարկադրեց հայերին մի պատգամաւորութիւն ուղարկել Պետերբուրգ։ Երեք հոգի էին պատգամաւորները—երկուսը քահանայ, Անտօն և Պետրոս անուններով, իսկ երրորդը աշխարհական, որին կոչում էին Թեօխվա-Չելեբի։ Պետրոս քահանան Շամախու

*) Պետրոս Գիլանենց, „Կռունկ“, 1863, № 3, եր. 196.

Ղարալա գիւղից էր, բայց երևում է որ Անտօնն էլ չամախեցի էր: Քեօխվա-Չէլէբիի մասին յայտնված էր, որ նշանաւոր մարդ է, Թէպէտ և մի դժբախտ հայր. 19 հոգուց բաղկացած նրա ընտանիքը գերի էր Դաղստանում: Այդ երեք մարդկանց յանձնարարված էր յայտնել Պետրոսին հայերի դժուար դրութիւնը, օսմանցիների արշաւանքը և խնդրել օգնական զօրք: Ամբողջ վեց ամիս պատգամաւորութիւնը Աստրախանում սպասում էր Թոյլտւութեան՝ Պետերբուրգ գնալու: Եւ երբ տեղ հասաւ, տեսաւ որ քաղաքական հանգամանքները բոլորովին փոխված են:

Պետրոս Մեծը այլ ևս իրաւունք չունէր բողոքել օսմանցիների արշաւանքի դէմ: 1724 Թւականի յունիսի 24-ին նա ինքը Բ. Դրան հետ դաշնագիր ստորագրեց, որով վերջ էր տրվում ռուս-Թիւրքական վէճերին: Համաձայնութիւնը կայացել էր այն մտքով, որ ռուսները իրանց ձեռքում պահեն Կասպիական արևմտեան ծովեզերքը, իսկ Թիւրքիան վերցնէ Անդրկովկասի մնացած տեղերը և Ատրպատականը. Շամախին տրվեց դաղստանցի Դօուլթ-բէգին, սուլթանի վասալին: Այսպէս, ուրեմն, Ղարաբաղն ու Ղափանն էլ օսմանեան սեփականութիւն էին: Այդ համաձայնութիւնը դեռ հայերին յայտնի չէր և նրանք չը գիտէին Թէ ինչու ռուսաց կառավարութիւնը այլ ևս չէ պատասխանում իրանց Թղթերին:

Ղարաբաղն ու Ղափանը չարունակում էին

կռուել և սպասել օգնութեան: Էջմիածնի Աստուածատուր կաթողիկոսը մի նամակով յորդորում էր Եսայի կաթողիկոսին հնազանդվել օսմանցիներին, հաւատացնում էր որ օսմանցիներն էլ լաւ տիրողներ են: Ներսէս կաթողիկոսն էլ նոյն խորհուրդն էր տալիս. նա հօ առանց այդ էլ մահմեդականների կողմնակից էր, այժմ հաւատացնում էր իր հակառակորդին Թէ իզուր է այլ ևս օգնութեան սպասում, քանի որ օսմանցիները մօտենում են Գանձակին և այնտեղից պիտի արշաւեն դէպի Ղարաբաղ: Բացի երկու կաթողիկոսների նամակներից, տեղի ունեցաւ մի վհատեցուցիչ եղելութիւն էլ, որ եկաւ հաստատելու Թէ ամբողջ մահմեդական աշխարհում Ղարաբաղն ու Ղափանն են մնում այն քրիստոնեայ երկիրները, ուր բարձրացած է ազատութեան զէնքը: 1724-ին, Վախտանգը, կորցնելով ամեն մի յոյս, ընդ միշտ Թողեց իր հայրենիքը և վերցնելով իր ամբողջ ընտանիքը, ուղևորվեց Աստրախան՝ Ռուսաստանում բնակութիւն հաստատելու համար: Դա մի ամբողջ գաղթականութիւն էր, որին մասնակցում էին վրաց ազգի բոլոր դասակարգերը, սկսած եպիսկոպոսներից և իշխաններից: Ընդամենը մօտ 1400 հոգի էին Վախտանգի հետ գնացողները. ով չէր կարողացել հաշտվել օսմանեան տիրապետութեան հետ, անդառնալի կերպով հեռանում էր իր երկրից: Եւ սակայն Եսայի կաթողիկոսն ու նրա հետ միաբանված մէլիքները անդրդվելի մնացին: Ոչինչ չէր կարողանում յու-

սահատեցնել այդ ոգևորված զինուորներին։ Ղափանի և Ղարաբաղի մէջ հաստատված կապը, երկու երկիրներում էլ տեղի ունեցող պատերազմական աջողութիւնները հայ զօրքերին մոռացնել էին տալիս թէ կայ օսմանեան բանակ...

Հայ պատգամաւորութեան Պետրոս Մեծը կարող էր մի խորհուրդ միայն տալ—գաղթել Կասպից ծովի ափերը։ 1724 թւի Նոյեմբերի 10-ին նա մի հրովարտակ ուղղեց հայոց ազգին, որի մէջ ասված էր թէ հայերը Ղարաբաղից և Ղափանից կամենում են գաղթել ռուսաց նոր գրաւած երկիրները, ուստի ինքը, որ միշտ մի առանձին բարեհաճութիւն է ունեցել դէպի հայոց ազգը, ընդունում է այդ ցանկութիւնը և հրաւիրում է ամէքին, մեծին թէ փոքրին, անյապաղ գնալ բնակութիւն հաստատել այնտեղ։ Խօսք կար որ ռուսաց զօրքերը առաջանան մինչև Շամախի, որպէս զի հայերը նրանց պաշտպանութեան տակ գաղթեն, բայց Պետրոսը մերժեց զօրք տալը, ի նկատի ունենալով Թիւրքիայի հետ կնքած դաշնադրութիւնը։ Նա հրամաններ գրել տուեց Դերբենդի, Բագուի, Գիլանի, Մազանդարանի կառավարիչներին, որ հայ գաղթականներին բնակութեան տեղեր յատկացնեն։ Իվան Կարապետը մնացել էր Ղարաբաղում. մի թուղթ էլ նրան գրվեց որ համոզէ հայերին գաղթել։

Կայսերական հրովարտակը և ուրիշ թղթեր հայերին ուղարկվեցին Բեօխվա-Ջէլէբիի և երկու

քահանաների հետ։ Սրանք ճանապարհ ընկան Պետերբուրգից նոյեմբերին և ճանապարհին ձմերեցին։ Գարունը բացվելուն պէս էլ չը կարողացան շարունակել ճանապարհը, որովհետև Շամախուն տիրած լեզգիները սաստիկ հսկում էին ճանապարհներին և պատգամաւորներից մէկը ընկաւ նրանց ձեռքը, սպանվեց։ Մնացածները տեղ հասան միայն 1725-ի մայիսին։

Մինչև այդ Ղարաբաղում արդէն սկսվել էր կռիւ օսմանցիների դէմ։ Կանոնաւոր պատերազմ, ի հարկէ, չէր կարող լինել. հայերը փոքր զօրաբաժիններով լեռներից յարձակումներ էին գործում։ Որքան էլ աջող լինէին այդ յարձակումները հայերի համար, բայց նրանք չէին կարող կանգնեցնել մի կանոնաւոր բանակի արշաւանքը։ Եւ օսմանեան մի զօրաբաժին, բաղկացած մօտ վեց հազար մարդուց, երեք փաշաների հրամանատարութեամբ, մտաւ Ղարաբաղ։ Հայերը ստիպված էին հնազանդութիւն ցոյց տալ, բայց դիմեցին խորամանկութեան. զօրքը մանր խմբերով—երկու հարիւրով, երեք հարիւրով—բաժանեցին գիւղերի վրայ և ապա այդ խմբերը կոտորեցին *)։ Ամբողջ բանակից

*) Այս ձևի կռիւը, ինչպէս երևում է, շատ էր գործադրվում Ղարաբաղում։ Պետրոս Գիլանենցը պատմում է որ Ղանլու-Շաբան անունով իւզբաշու երեք հարիւր մարդիկը կոտորվեցան Աւետարանոց գիւղում այսպէս. այդ մարդիկ բաժանվեցին տների վրա, և երբ մէլիքի տանից հրացանի ձայն լսվեց, ամեն մէկը վեր կացաւ և

միայն 150 մարդ ազատվեց կոտորածից։ Երեք փաշաներից երկուսը սպանվեցան, երրորդը, Սալահ-փաշան, ընկաւ հայերի ձեռքը և յայտնեց որ օսմանցիները վճռել են ոչնչացնել հայերին, որպէս զի բաց ճանապարհ ունենան դէպի Կասպից ծովը։ Հայերը ազատեցին և մօտ 200 քրիստոնեայ գերիներ, որոնք գտնվում էին օսմանեան բանակում։

Այս դէպքը տեղի ունեցաւ 1725 թւի մարտի 1-ին։ Եսայի կաթողիկոսը մելիքների հետ շտապեց թուղթ հասցնել ռուսաց կառավարութեան և յայտնել նրան թէ ահա օսմանցիներն էլ եկան, բայց կայսրի խոստացած զօրքը չը կայ։ Օսմանեան բանակը ընաջինջ անելու մասին նրանք գրում էին. «Ահա այս արաքը և գործ մեր ոչ թէ մերով կարողութեամբ է, այլ դքո ամենայաղթ զօրութիւնդ և օգնութիւն յուսալով, ապաւինեմք և համբերեմք սպասելով»։ Օսմանցիները հիմա, ի հարկէ, աւելի մեծ զօրքով կը գան Ղարաբաղի վրա. և հայերը Քրիստոսի անունով աղաչում էին շտապեցնել օգնութիւնը։ Այդ թղթի վերջում մի ընորոշ հանգամանք է չօշափված։ Դիմելով Դերբենդի և Բագուի ռուս հրամանատարներին, հայերը զարմանում էին թէ ինչպէս է որ կայսրից ոչինչ պատասխան չեն ստանում.

սպանեց իր հիւրին։ Երևի, օսմանեան բանակի այս կոտորածն է, որ աւանդութիւնը յիշում է կատարված 1732 թւականին։ Այդ աւանդութեան վրա է հիմնված իմ «Մէլիքի Աղջիկը» վէպը։

ալդեօք դրա պատճառն այն է, որ հայերի գրած թղթերը չեն ուղարկվում Ռուսաստան, թէ ուղարկվում են, բայց այնտեղից չէ ստացվում պատասխան։

Ահա այսպիսի անհամբեր սպասողութեան, յուզմունքների մէջ էր Ղարաբաղը, երբ Բեօխվա-Զէլէբին և Անտօն քահանան ներկայացան Մէլիք-Աւանին Շօշու գիւղի *) մօտ եղած բանակում և յայտնեցին որ թղթեր են բերել Պետերբուրգից։ Իսկոյն մարդիկ ուղարկվեցին Եսայի կաթողիկոսի և մելիքների ետևից։ Նրանք հաւաքվեցան. կարդացվեց Պետրոսի հրովարտակի հայերէն թարգմանութիւնը։ Ընդհանուր զարմանք, ամենքը ապշած են։ Ոչ ոքի մտքովն անգամ չէր անցել գաղթել Կասպից ծովեզերքը, իսկ հրովարտակի մէջ ասված էր թէ հայ պատգամաւորութիւնն է ասել թէ Ղարաբաղն ու Ղափանը պատրաստ են գաղթելու։ Բոլորված են լեռնցի առաջնորդները մի շրջանի մէջ և ասում են.

—Ա՛յ տէր-Անտօն, մենք քեզ ուղարկեցինք, գնա՛, իմացիր, տես զօշուն կը գա՛յ մեզ, մին քօմակ և ճար կը լինի թէ ոչ. Երբ ասացինք մեզ համար տեղ ուզիր Դարբանդ, Բագու, Գիլան և կամ այլ տեղ որ մենք գնանք տեղն կենանք. մեր

*) Շօշու գիւղը գտնվում է Շուշի քաղաքի մօտ։ Վերջինս իր անունը հէնց այդ գիւղից է ստացել։—Ահա՛ մի վկայութիւն էլ, որ Փոքր Սղնախը գտնվում էր Քիրսի լեռներում, այժմեան Շուշու շրջականերում։

գիրն որ դու տարար, ուստ էր գրած թէ մեզ տեղ տուր, որ գնանք տեղդ կենանք...

Անտոն քահանան չը կարողացաւ պատասխան տալ. նա խաբել էր, նա իրանից էր յայտնել ռուս կառավարութեան թէ Ղարաբաղի ամբողջ ազգաբնակութիւնը, որ հարիւր հազար տներից աւել է, ինչպէս նաև Ղափանը, ուր աւելի մեծ քանակութեամբ հայեր են ապրում, ինքնայօժար կամենում են գաղթել։ Խաբեբայ քահանան թողեց իր բերած թղթերը և երկու օրում անյայտացաւ, փախաւ Ղարաբաղից։ Մնացածը բացատրեց Բեօվխա-Չելեբին։

—Դուք մեր տուն քանդեցիք, ասացին մելիքները։

—Ախպէր, ես ինչ անեմ, իմ անունս գրած չէր գրումն, ինքն (այսինքն քահանան) միայն գրել երետ ինչ որ իւրեան մաթլաբն էր։

—Մեր գրերն թամամի տարաք։

—Ուղբաչոց գիրն, Իվան Կարապետի գիրն տարանք, ամա Եսայի կաթողիկոսի գիրն ղամբախ ջղոտեց, ինքն մէկ գիր գրեց, տարաւ առ թագաւոր *)։

Գործված էր ահագին սխալ։ Եսայի կաթողիկոսը փորձեց դրստել այդ սխալը յուլիսի 25-ին գրած իր նամակով. նա յայտնեց որ իրանք գաղթելու մասին չեն խնդիրք ներկայացրել, որ գաղ-

*) Эзовъ, եր. 424.

թելը անհնարին է այդքան ահագին բազմութեամբ, եթէ ռուսաց զօրքերը չը մօտենան Ղարաբաղի սահմաններին։ Թէև կաթողիկոսը յայտնում էր որ հայերը չեն ընդդիմանայ գաղթելու հրամանին, բայց դա ճիշտ չէր ընդհանուր տրամադրութեան տեսակէտից։ Հայերը լսել անգամ չէին ուզում գաղթելու մասին։ «Եւ իրաւ, մեծ իրաւունք ունին,—գրում էր իշխան Դոլգորուկովը.—առաջինը, որ պիտի թողնեն իրանց վաճառականութիւնը, երկրորդ՝ այնպիսի ընտիր և հաճելի տեղեր թողնելով, պիտի գնան այնպիսի անպտղատու տեղեր, ուր իրանց ապրուստի համար ոչինչ չեն կարող գտնել» *)։

Գրելով իր թուղթը, Եսայի կաթողիկոսը չը գիտէր որ Պետրոսը այլ ևս չը կայ։ Մեծագործ կայսրը վախճանվել էր 1725 թւի յունվարի 28-ին։

VI

Ղարաբաղի հայերի հետ, միաժամանակ, նոյն 1722 անմոռանալի թւականին, ինչպէս տեսանք, ոտքի կանգնեց և Սիւնեաց աշխարհը։ Այստեղ ապստամբական շարժումը աւելի ուժեղ էր, իր հետևանքներով աւելի փառաւոր, բայց, դժբախտաբար, և աւելի կարճատև, քան Ղարաբաղում։ Մօտ տասը տարվայ ընթացքում սիւնեցի հայը

*) Ibid, եր. 435.

անընդհատ պատերազմներով իրագործեց ստրուկ հայութեան կատարեալ ազատագրութիւնը և երկար դարերի մեր անցեալի, ողբալի պատմութեան մէջ բաց արեց մի հերոսական պանծալի շրջան, որին պէտք է յատկացնել Ղափանցիների շրջան անունը։ Որովհետև Ղափանն էր պատերազմի դաշտը, նա էր կռուողը, յաղթողը. Սիւնիքի շատ գաւառներն էին մասնակցում ազատարար պատերազմութեան. բայց նրանցից ոչ մէկը Ղափան չէր։

Լեռնոտ ու դժուար մատչելի է Սիւնիքը առհասարակ. բայց Ղափանի գաւառը Սիւնեաց լեռնաշխարհում էլ մի առանձին տեղ է գրաւում իր ամուր դիրքով։ Մեր հին աշխարհագրութիւնների մէջ չը կայ Ղափան անունը։ Միջին դարերում Բաղք և Ձորք գաւառները միանում են և այնտեղ յիշվում է Կապան անունով մայրաքաղաքը։ Ահա այդ քաղաքը տալիս է իր անունը ամբողջ գաւառին. Կապանը դառնում է Ղափան։ Այդ անուններն էլ—Ձորք, Կապան—բնորոշում են երկրի աշխարհագրական կերպարանքը։ Խոր ձորերի, լեռնային կապերի, վիթխարի գագաթների մի անտառոտ աշխարհ է դա։

Տոկուն, քաջ մի ժողովուրդ էր ապրում այդ աշխարհում։ Ցայտնի է թէ Սիւնիքը որքան կարևոր, առաջնակարգ մի իշխանութիւն էր մեր պատմութեան մէջ ամենահին ժամանակներից։ IX դարի վերջերից, հայերը, օգուտ քաղելով արաբա-

կան տիրապետութեան աստիճանաբար թուլացումից, սկսում են իրանց համար եթէ ոչ մի ընդհանուր, համազգային անկախութիւն, գոնէ փոքրիկ, տեղական ինքնավարութիւններ ստեղծել. Թագաւորական գահեր են հիմնվում Անիում, Վասպուրականում, Կարսում։ X դարի վերջին քառորդում մի փոքրիկ, նահանգական թագաւորութիւն էլ Բաղաց աշխարհում է կենդանութիւն առնում. նրա օրինակին հետևում է Գուգարքի Տաշիրք գաւառը (Լօռի)։ Միաժամանակ հինգ թագաւորութիւններ. բայց դրանցից ոչ մէկը երկարատև չէ։ Ամենից շատ ապրում է Բաղաց թագաւորութիւնը։ Այնտեղ էր իր անառիկ դիրքով հին ժամանակներից հռչակված Բաղաբերդը, մի ամրութիւն, որի նմանը չունի Սիւնեաց ամբողջ լեռնաշխարհը։ Ժողովուրդը սիրում է իր հարազատ անկախութիւնը. Բաղաց թագաւորութեան Կապան մայրաքաղաքը իր անունն է տալիս ոչ միայն իր գաւառին, այլ և հարևան գաւառներին։ Նոյն իսկ Սիւնիք անունը կորցնում է իր ընդհանուր աշխարհագրական անունը, յաճախ տեղի է տալիս այդ մայրաքաղաքից կազմված անուան և կոչվում է Ղափան։

Բայց Ղափանի թագաւորութիւնն էլ երկարատև չէր. մօտ երկու դար ապրելուց յետոյ նա գլուխ է իջեցնում սելջուկեան թուրքերի սրերի տակ։ Բաղաբերդն ու Կապանը, անպաշտպան մնալով, քանդվում են. Ղափանի լեռնաստանում

հաստատվում են նուաճողները։ Եւ այնուհետև միանման դարեր են անցնում այդ երկրի վրայով. տեղական մանր թուրք իշխանութիւններ են կազմվում, հայ ժողովուրդը ստորադրված է դրանց, բայց կառավարվում է մէլիքների ձեռքով։

Միայն XVII դարից սկսած մենք տեսնում ենք որ Ղափանից շատերն են դուրս գալիս՝ աշխարհ տեսնելու և շահ վաստակելու համար։ Դրանք վաճառականներ են։ Սահմանակից լինելով Արաքսի հովտի այն մասի հետ, ուր հայ վաճառականութիւնը ծաղկեցրել էր Ջուղայի, Ագուլիսի, Մեղրիի նման գիւղաքաղաքներ, Ղափանն էլ իր առևտրական կարաւաններն է սկսում շրջեցնել աշխարհի զանազան կողմերում. ղափանցիներին մենք հանդիպում ենք թէ Զմիւռնիայում, թէ Կ. Պօլսում և թէ եւրօպական ուրիշ վաճառանոցներում։

Բայց վաճառականութիւնը Ղափանի համար մի մասնաւոր երևոյթ էր և, ի հարկէ, չէր կարող այնքան սաստիկ ազդեցութիւն ունենալ լեռնցի ժողովրդի վրա, ինչպէս ունէր, օրինակ, Ջուղայում և Ագուլիսում։ Վաճառականութիւնը ոչ միայն չէ արգելում որ Ղափանը միանայ հայերի ազատագրական շարժման, այլ, ընդհակառակն, կապվում էլ է այդ ապստամբութեան հետ։ Բուն Ղափանի և Մեղրիի սահմանագլխի վրա գտնվող Վանք գիւղից դուրս եկած մի մարդ, Ոսկան Շահումեան անունով, XVII դարի կէսից բաց է ա-

նում Վենետիկի մէջ մի առևտրական տուն, որ վաճառահանում էր Դամասկոսի կերպասներ, հալէլիներ, ապակեայ ճրագարաններ և այլ արևելեան ապրանքներ։ Հարիւր տարի և գուցէ էլ աւել գոյութիւն պահպանեց Շահումեան առևտրական տունը և շատ նշանաւոր հանդիսացաւ Վենետիկի վաճառականական աշխարհում։ Յայտնի է, օրինակ, որ երեք տարվայ միջոցում (1740—1743) Շահումեան տունը վաճառքի հանեց մի միլիօն ֆրանկից աւել արժողութեամբ միայն Դամասկոսի կերպասներ և «ոսկեայ թիթեղներ» *)։

Սակայն այդ ընդարձակ առևտրական շրջանառութիւնը չէ Շահումեան տան հռչակը։ Մեր պատմութեան մէջ միշտ կը յիշատակվի այդ տունը ոչ որպէս մի խոշոր առևտրական ձեռնարկութիւն, —այդ կողմից Շահումեանները մի անօրինակ երևոյթ չեն կազմում. գոյութիւն ունէին աւելի նշանաւոր հայ առևտրական տներ։ Շահումեան տան անջնջելի յիշատակը այն է, որ նա անմահացրեց Ղափանում ազատութեան համար զէնք բարձրացրած քաջերին։ Հիմնադիր Ոսկանի եղբայրն էր Վրթանէսը, որ ունէր Ստեփանոս անունով մի որդի։ Ահա այս Ստեփանոսի շնորհիւ է, որ մենք այսօր մեր ձեռքում ունենք սիւնեցի հայ ժողովրդի պատերազմների պատմութիւնը, մօտ ութ տարվայ մի պատմութիւն, որ մեր մատենա-

*) Հ. Ալիշան—«Սիւնիք», եր. 445.

*գրութեան մէջ մի թանկագին գոհար է *)։*

*Ինքը, Ստեփաննոսը չէ գրել այդ պատմութիւնը. բայց նա ականատես է եղել պատերազմներին, անձամբ մասնակցել է նրանց և բաւական աչքի ընկնող դեր է կատարել։ Պատերազմներից յետոյ ստիպված լինելով ցած դնել ազատութեան զինուորի սուրը, Ստեփաննոս Շահումեանը գնաց Վենետիկ՝ իր կեանքի մնացած մասը առեւտրական գործերին նուիրելու։ Բայց այդտեղ չը մոռացաւ իր հերոս ընկերներին, որոնք գլուխ էին դրել հայրենիքի անկախութեան համար։ Մօտենալով Մխիթարի միաբանութեան, տեսնելով հայ վարդապետների այդ խումբը, որ գրքեր է քրքրում, գրում է, նա մտածեց անմահացնել Ղափանի հերոսութիւնները և իր տեսածն ու լսածը թելադրեց Մխիթարի աշակերտներից մէկին, Հ. Ղուկաս Ստեփանեան Սեբաստացուն, որ և այդ պատմուածքներից հիւսեց մի սիրուն պատմութիւն **)։*

Մի շատ կարևոր գործ․—ուրիշ մանրամասն յիշատակարաններ այդ հերոսական շրջանի մասին մենք չունենք։ Որքան դժբախտ էր Արևելեան Հայաստանը մտաւոր զարգացման կողմից։ Այնտեղ

*) *Հ. Չամչեանը համարեա ամբողջովին արտագրել է այդ պատմութիւնը իր „Հայոց Պատմութեան“ մէջ (Հատ. Գ., գլ. խը—խթ)։ Առաջին անգամ այդ գիրքը առանձին տպագրվեց Վաղարշապատում* 1871 *թւականին, „Դաւիթ-բէգ“ վերնագրով։*

**) «Սիւնիք» եր. 301.

սկսվում է մի այդքան մեծ շարժում, կատարվում են այնքան փառաւոր գործեր, բայց չէ գտնվում մի վարդապետ, մի գրագէտ հայ, որ կազմէ այդ անմոռանալի ժամանակների մանրամասն տարեգրութիւնը։ Իսրայէլ Օրին, Ղարաբաղի մելիքները կորած պիտի մնային անյայտութեան մէջ, եթէ ռուսաց և բաւարական պետական արխիւներում պահված չը մնային նրանց գրագրութիւնները։ Ոչինչ յիշատակ չը պիտի մնար Դաւիթ-բէկի և նրա քաջերի մասին, եթէ այդ քաջերից մէկը, Շահումեանը, կենդանի մնացած չը լինէր, եթէ նա գնացած չը լինէր Վենետիկ, եթէ Վենետիկում չը լինէին ժրաջան հայ վարդապետներ։ Սիւնիքի և Արցախի բազմաթիւ վանքերը, հայ զօրքերի կատարած գործերի ականատեսները, լեզու ու կարողութիւն չունեցան պատմելու իրանց տեսածները, եթէ հաշուի չառնենք Եսայի կաթողիկոսի կիսատ մնացած պատմագրութիւնը։

Ժամանակակիցների այդ մտաւոր աղքատութիւնն է պատճառ, որ հայերի քաղաքական վերածնութեան ժամանակի պատմագիրը լիակատար տեղեկութիւնների պակասութիւն է զգում։ Արխիւներից հանած գրագրութիւնները, ճիշտ է, առատ են, բայց նրանցից կարելի է կազմել ազատական շարժման արտաքին, դիպլօմատիական պատմութիւնը, որ չէ կարող չոր ու ցամաք չը լինել, քանի որ նրա աղբիւրները պաշտօնական թղթերն են, իսկ այդպիսի թղթերի մէջ իրակա-

նութիւնը կամ գունաւորված է լինում կամ չափազանց նեղ շրջաններում ներկայացրած։ Ոչ մի պատմութիւն չէ կարող կատարեալ լինել, եթէ նրա մէջ բացակայում են ներքին հանգամանքները, եթէ պատմութիւն ստեղծող ժողովուրդը չը կայ մէջ տեղ։ Ուստի հասկանալի է թէ որքան թանկագին, եզակի մի աղբիւր է Ստեփաննոս Շահումեանի գրել տուած պատմութիւնը, որ թէև շատ համառօտ է, բայց պահած ունի իր մէջ այնպիսի մանրամասնութիւններ, որոնց չէինք հանդիպի պաշտօնական գրագրութիւնների մէջ։ Դա հայ զինուորներից մէկի վկայութիւնն է, մի զինուորի, որ չէ մոռացել հարազատ գոյներով նկարել իրականութիւնը, պատմել մեզ հայի առաքինութիւններն ու արատները, հերոսական գործողութիւնների փայլուն և մութ կողմերը։

Սրանք այդ պատմութեան գեղեցիկ զարդերն են։ Բայց չէ կարելի չը խոստովանել և այն, որ նա միանգամայն գոհացնել քննողին չէ կարող։ Գործի գրական արժանաւորութիւնները անուրանալի են. ոչ ոք հայ վարդապետներից չէր կարող այնպէս գրել այդ պատմութիւնը, ինչպէս գրեց Մխիթարի դպրոցին պատկանող վարդապետը։ Բայց նրա գործի մէջ նկատվում է միակողմանիութիւն. դա հեռու աշխարհում, ուրիշի թելադրութեամբ գրված մի յիշատակարան է։ Թելադրողը զարգացած, ամեն ինչին լաւ տեղեակ մարդ չէր, իսկ գրողը, ի հարկէ, չէր կարող վերստու-

գել նրա ասածները, պիտի մեքենայի դեր կատարէր։ Եւ այդ պատճառով Սիւնեաց աշխարհի ազատագրութիւնը չէ ներկայանում այն դրութեան մէջ, ինչպէս էր իրապէս։ Նա երեւում է իբրև յանկարծ բռնկված, արհեստական մի հրդեհ, որ չէ ունեցել իր նախընթաց պատմութիւնը, առաջուց պատրաստվող այրեցիկ նիւթերը։ Ստեփաննոս Շահումեանը, իբրև մէկը գլխաւոր գործիչներից, կամեցել է չափազանց մեծացնել իր կատարած դերը։ Ուստի այսպէս է պատմում գործի սկզբնաւորութիւնը։

Լեզգիների արշաւանքները, ասում է նա, տակն ու վրա արեցին Ղարաբաղի և Սիւնեաց երկրի ազգաբնակութիւնը։ Ղափանում տիրեց կատարեալ սարսափ. երթևեկութիւնը դադարեց, մարդիկ կասկածով էին վերաբերվում միմեանց, քաղաքը քաղաքի, գիւղը գիւղի չէր հաւատում. մէկը միւսին թշնամի էր համարում։ Ահա այդ աղէտալի դրութեան ժամանակ ինքը, Ստեփաննոս Շահումեանը, գնում է վրաց իշխան Շահ-Նաւազի մօտ և խնդրում է նրան որ մի զօրապետ տայ հայերին՝ թշնամիների դէմ կռուելու համար։ Այդ միտքը ընդունել տալու համար Շահումեանը, իբր թէ, դիմել էր և կեղծիքի. իր հետ տարել էր Ղափանի յիսուն տանուտէրերի անուններից գրված մի հանրագիր, որի մէջ նրանք խնդրում էին տալ իրանց մի փորձված զօրապետ, իսկ իրանք պարտաւորվում էին զօրք հաւաքել, պատերազմական

պատրաստութիւններ տեսնել և իրանց գաւառը պաշտպանել թշնամիներից։ Թուղթը յօրինել ու գրել էր Ստեփանոսը, իսկ նրա վրա դրած կնիքները կեղծ էին. Ստեփանոսն էր շինել տուել այդ կնիքները։ Շահ-Նաւազը, իբր թէ, հաւատացել է այդ կեղծած թղթին և Սիւնիք է ուղարկել Դաւիթ-բէկին, որ իր մօտ էր գտնվում։

Այսպէս է բացատրում Շահումեանը Ղափանի պատերազմների սկզբնապատճառը։ Բայց այդպէ՞ս է։ Մենք, որ քայլ առ քայլ ծանօթացանք ժամանակի դէպքերի հետ, կարող ենք ամենայն վստահութեամբ ասել որ այդպէս չէ։ Պատահական հանգամանքի ծնունդ չէր Դաւիթ-բէկի գործունէութիւնը Սիւնիքում։ Նրան Վրաստանից Սիւնեաց աշխարհը տանողը Ստեփանոս Շահումեանի կեղծած թուղթը չէր, այլ այն մարդը, որ այդ միջոցին պառկած էր իր գերեզմանի մէջ, Աստրախանի հայոց եկեղեցու բակում—Իսրայէլ Օրին։ 1698 թւականից էր պատրաստվում այն գաղափարը, որ այժմ աճման վերջին աստիճանին էր հասել, հասունացել էր, դարձել սուր և վառօդ, բոյն էր դրել հայոց լեռներում՝ ազատութիւն ձեռք բերելու համար։ Նշանաւոր հայ հայրենասէրը դրել էր հիմքը, ամրացրել. նրան վիճակված չէր Աստրախանում հայկական գունդ կազմել և անձամբ մասնակցել Պետրոս Մեծի արշաւանքին դէպի Պարսկաստան, մի արշաւանք, որին նա ինքը սպասում էր այնքան անհամբեր կերպով

և որին սպասել սովորեցրել էր և հայերին։

1722 թւականից առաջ չէր կարող երեան գալ Դաւիթ-բէկ, թէ՛կուզ Շահումեանը մի քանի կեղծած հանրագրեր ունենար իր ձեռքում. որովհետև միայն այդ թւականին Պետրոսը շարժեց իր զօրքերը դէպի Հայաստանի կողմը, միայն այդ ժամանակ առաջ եկաւ հայ զինուորութիւնը, կայացաւ հայերի և վրացիների զինուորական եղբայրակցութիւնը՝ Վախտանգի պէս մի իդէալիստ թագաւորի հրամանատարութեան տակ։ Շահ-Նաւազը, Դաւիթ-բէկին Սիւնիք ուղարկողը, Վախտանգի որդի Բաքարն էր, որ այդ ժամանակ կառավարում էր Վրաստանը իր հօր բացակայութեան պատճառով։ Մենք տեսանք որ Վախտանգը այդ ժամանակ հայ-վրացական բանակը հաւաքել էր Գանձակի մօտ՝ Պետրոսի առաջը գնալու համար։ Նա էր, որ կազմակերպում, զետեղում էր հայկական զօրքը, հրահանգներ էր տալիս հայերին. նրա կարգադրութեամբ էր որ Շահ-Նաւազը պատերազմական գործերին տեղեակ հայերին ուղարկեց՝ հայոց բանակը առաջնորդելու։ Մեզ ծանօթ Իվան Կարապետը, դեսպանութեան պաշտօնով Գանձասար հասնելուն պէս, հաղորդում էր ռուսաց կառավարութեան, ի միջի այլոց, և այն, թէ Վախտանգի որդին իր մարդկանցից 30 հոգի է ուղարկել հայերի մօտ *)։ Եթէ սա Դաւիթ-բէկի

*) Эзовъ, եր. 366։

խումբը չէ, պէտք է, ուրեմն, լինի մի այլ փաստ, որ ցոյց է տալիս թէ Շահ-Նաւազը, Վրաստանի այն տարտամ ու վտանգաւոր ժամանակներում, իր մարդկանցից ուղարկում էր հայերին ոչ թէ իբրև ողորմութիւն, ոչ թէ կեղծած թղթերի ազդեցութեան տակ, այլ իբրև մի անհրաժեշտութիւն, որ պահանջում էր ընդհանուր գործը։ Դա երկու ազգերը միացնող ծրագրի մի մասն էր։

Եւ Ղափանը բոլորովին անպատրաստ ու անտեղեակ չէր, ինչպէս ներկայացնում է Շահումեանը։ Նա պատրաստվում էր վաղուց, Ղարաբաղի հետ միասին և Ղարաբաղի նման. այսինքն նախ իւրացնում էր զէնքի ոյժով ազատութիւն նուաճելու գաղափարը և ապա, երբ հասաւ պայմանաւորված ժամանակը—Պետրոսի արշաւանքը, երբ այլ ևս կասկած չը կար որ պէտք է վառել ապստամբութեան հրդեհը, նա էլ զէնք վերցրեց։ Ղափանը մի անջատ ու առանձին գործ չէր սկըսում, այլ հայ զինուորութեան մի մասն էր, նրա մի թևը։ Մի երկիր, որի տէրերը չէին էլ ուզեցել ստորագրել Շահումեանի կազմած թուղթը, չէր կարող յանկարծ, միանգամից բռնկվել և տարիների ընթացքում նահատակվել մի գաղափարի համար, որ մինչև այդ անյայտ էր։ Շահումեանի ասելով, բռնկեցնողը Դաւիթ-բէկն էր իր փոքրիկ խմբի հետ։ Բայց անկարելի է ծուխ ստանալ այնտեղ, ուր չը կան այրեցիկ նիւթեր. գաղափարը ոչ մի ազգի մէջ չէ ծնվում ու զարգանում կա-

խարդական գաւազանի մի շարժումով, օրերի, նոյն իսկ մի քանի ամիսների ընթացքում *)։

Ո՛չ, պատրաստի նիւթեր կային երկրում, երբ 1722 թուականին այնտեղ գնաց Դաւիթ-բէկը։ Եւ բոլորովին հարկաւոր էլ չէ որ այս նշանաւոր մարդը հայերի ազատագրութեան գաղափարի սկզբնապատճառ համարվի։ Առանց այդ էլ նրա կատարած գործը շատ բաւական է, որ մեր առջև նկարվի նրա վիթխարի պատկերը։

Ո՞վ էր Դաւիթ-բէկը։—Մէկը մեր պատմութեան ամենանշանաւոր դէմքերից։ Մեր ոչ մի նշանաւոր պատմական գործիչ չունի իր մանրա-

---

*) Մեր անմոռանալի վիպագրող Րաֆֆին էլ իր «Դաւիթ-բէկ» վէպի մէջ Շահումեանի ցուցմունքներին է հետևում և զարգացնում է Սիւնիքի ապստամբութեան պատմութիւնը իբրև պատահական կերպով սկսած, մի խեղճ թղթից առաջ եկած և զարմանալի հեշտութեամբ գլուխ բերած գործ։ Սա դեռ վէպ է։ «Խամսայի Մէլիքութիւններ» աշխատութեան մէջ էլ, որ մի պատմական ուսումնասիրութիւն է, դէպքերը նա պատմել է վայր ի վերոյ։ Րաֆֆին իր ձեռքի տակ չունէր այն նոր նիւթերը, որոնք բոլորովին ուրիշ կերպարանքի մէջ են ներկայացնում հայերի ազատական շարժումը XVIII դարի սկզբում։ Բայց նրա ժամանակ էլ ռուսաց գրականութեան մէջ կային բաւականաչափ նիւթեր՝ իրերի իսկական դրութիւնը ըմբռնելու համար։ Առհասարակ մեր առաջնակարգ, տաղանդաւոր վիպագրողը բազմակողմանի և խոր ուսումնասիրութիւն չէ կատարել Ղարաբաղի և Սիւնիքի այս գործերի վերաբերմամբ, որոնք տեղի ունեցան XVIII դարի սկըզբում։

ման կենսագրութիւնը.—այսպէս է և Դաւիթ-բէկը։ Շահումեանը մեզ միայն մի քանի բառեր է տալիս։ Սիւնեաց երկրից էր Դաւիթ-բէկը, «հայկազեան տոհմից», «ազնուական, բարեպաշտ, արդարակորով, ծանօթ գրոց, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, զօրաւոր բանիւք և գործովք, վրէժխնդիր թշնամեաց ազգին մերոյ»։ Եւ ուրիշ ոչինչ. ոչ ծննդեան տեղ ու թուական, ոչ անցկացրած կեանքի պատկեր։ Մենք միայն տեսնում ենք մի պատրաստ անուն, պատրաստ գործող։ Այդպէս են և հայկական զինուորութեան բոլոր պարագլուխները։ Բայց Դաւիթ-բէկը սովորական գործիչներից չէր. բնութիւնը պարգևել էր նրան արտասովոր ընդունակութիւններ, այլապէս նա չէր կարող կատարել այնքան գործեր, որոնք մեր հայկական իրականութեան մէջ հրաշքների կերպարանք են ընդունում։

Սիւնիքում նա գտաւ միայն հում նիւթեր, ցիր ու ցան ոյժեր, որոնք մշակված չէին՝ գործը առաջ տանելու համար. կարելի է ասել որ իսկապէս պատրաստ, առձեռն և միանգամայն հաստատուն մի ոյժ միայն կար—ժողովրդի ապստամբական տրամադրութիւնը։ Մնացածը պէտք էր ստեղծել, միացնել, մարզել և արիւն դարձնել, կեանքի հրաւիրել։ Եւ Դաւիթ-բէկը այդպէս էլ արաւ մի եռանդով, մի այնպիսի ընդունակութեամբ, որ միանգամայն ապահովում էր ձեռնարկութեան աջողութիւնը։

Յայտնվելով երկրի մէջ իբրև յեղափոխական մի առաջնորդ, նա արդէն չափած-կշռած ունէր հանգամանքները, միջոցները։ Ամենից պարզը, հիմնականը, նա, որ գործի հոգին էր կազմում, պատերազմելու եղանակն էր։ Մի լաւ կազմակերպած ժողովրդական, պարտիզանական պատերազմ—ահա ամենագլխաւորը։ Պատերազմ մանր խմբերով, Օրբի փայփայած եղանակով, այսինքն յանկարծակի վրա տալով, քամու պէս յարձակուելով. այս դէպքում յարձակուողը թեթև է, դիւրաշարժ և սարսափ է ազդում,—մի հանգամանք, որ ամենամեծ յաղթութիւնների չափ զօրաւոր է։

Իբրև սկզբնական փորձ, իբրև ամենառաջին քայլ, որ տանում էր Սիւնիքը դէպի ապստամբական ծուխը, Դաւիթ-բէկը անձամբ մի արշաւանք է կատարում։ Շտապով գումարելով ձեռքի տակ ընկած առաջին պատրաստ ռազմիկ ոյժերը, թւով մօտ 400 մարդ, նա Իւչ-Թափալարի ընդարձակ դաշտավայրում կայծակի պէս ընկնում է Ղարաչօղլու անունով թուրք ցեղի վրա և ոչնչացնում նրան։ Դա ընդհանուր ապստամբութեան ազդանշանն էր, և երկրի զանազան կողմերից սկսում են հաւաքվել հայ մելիքներ ու տանուտէրեր իրանց փոքրիկ զօրախմբերի հետ։ Շարժումը այնքան արդէն հասունացած էր, որ ազդանշանը արձագանք է տալիս ոչ միայն Ղափանի լեռներում, այլ և անցնում է Գողթանի վրայով, հասնում է մինչև իսկ Արաքսի ափին. Հին-Ջուղան էլ, Շահ-Աբասի

կուտած աւերակների վրա նորից կեանք սկսած այս փոքրիկ գիւղը, ապստամբութեան հետ է։

Սիւնիքում էլ, ինչպէս և Ղարաբաղի Սղնախներում, հայ զինուորութիւնը իր առջև ունի մի և նոյն անհրաժեշտութիւնը—կռիւ տեղական մուսլիման ազգաբնակութեան դէմ։ Մի անհրաժեշտութիւն էր դա, որ ունէր իր պատմական և ռազմագիտական խոր պատճառները։ Հայերը հպատակ էին երկու իշխանութիւնների. մէկը տեղական խանն էր կամ բէկը, երկրի անմիջական տէրը և կառավարիչը, իսկ միւսը—պարսից կենտրոնական իշխանութիւնն էր, Շահերի կառավարութիւնը։ Ապստամբութեան հետ անմիջապէս և ամենից առաջ ընդհարուողը տեղական իշխանութիւնն էր, որի ոյժը տեղական մուսլիման ազգաբնակութիւնն էր։ Ուրեմն կռւել ազգաբնակութեան դէմ, նախ և առաջ նշանակում էր մաքրել երկիրը անհաշտ թշնամի մի տարրից, որ իր կրօնական հասկացողութիւններով, դարերի նուիրագործած իրաւունքով տիրապետող էր հանդիսանում, իսկ հայը—նրա ստրուկը. միայն մաքրված երկրում կարող էր ապստամբութիւնը ազատ գործել, կենտրոնանալ, ոյժեր համախմբել։ Տեղական խաներին և բէկերին բոլորովին թուլացնել—սա ամենակարևորն էր գործի աջողութեան համար։

Եւ Դաւիթ-բէկը ամենայն եռանդով այդ իսկ ծրագիրն էր առաջ տանում։ Նա լաւ գիտէր որ պարսից կենտրոնական իշխանութիւնը ոչ միայն

հեռու է, այլ և թոյլ, քայքայված, հոգեվարքի մէջ. նրա հետ գործ ունենալու հարկաւորութիւն չի լինի։ Ուստի հայ զօրապետը իր բոլոր ոյժերը լարում էր տեղական թշնամի ազգաբնակութեան դէմ. Նա մաքրում էր երկիրը մի զարմանալի յամառութեամբ։ Եւ սկսվեց ներքին պատերազմը, անխնայ, երկարատև, կատաղի պատերազմ։ Դաւիթ-բէկը կարողացաւ արծարծել այդ կրակը, մի անհաշտ հրդեհ գոյացնել։ Նրան շատ լաւ աջողվեց հանել միմեանց դէմ հարևաններին, ատամներով կռւելու եռանդով ոգևորել նրանց։ Երկու ժողովուրդ դուրս էին եկել իրար դէմ. դա ցեղերի, կրօնների ընդհարում էր։ Մէկը եկւորն էր, որ երկար ժամանակ տիրել էր թաթարական իսլամի բոլոր անգթութիւններով. իսկ միւսը բնիկ, քրիստոնեայ ժողովուրդն էր, որի մարտիրոսական համբերութիւնը այժմ սպառվել էր։ Դարերը այդ երկու թշնամիների մէջ շատ դառնութիւն, շատ թոյն էին կուտել։ Այժմ եկել էր հաշւի, վրէժի ժամը։ Եւ միշտ ճնշված քրիստոնէութիւնը, ազատութեան հովերով արբեցած, զէնքը ձեռքին, կատաղի էր, խնայել չը գիտէր, անգթութեան էր հասցնում իր գործողութիւնները։

Լեռներում բորբոքված պատերազմի ասպարէզը հետզհետէ լայնանում էր, ընդարձակվում։ Տեղացի թուրք ազգաբնակութեան ձեռք են տալիս հարևան խաները. Բարգուշատը, Օրդուբատը,

Նախիջևանը, մինչև իսկ Արաքսով բաժանված Ղարադաղը ջարդվող իսլամի օգնութեան են վազում. ոչնչացնող արշաւանքները կրկնվում են յաճախակի՝ ահագին քանակութեամբ զինված գիշատիչներ թափելով երկրի ներսը: Դաւիթ-բէկը, զինված անխռով հրամանատարի սառնասրտութեամբ, կարգադրութիւններ է անում, հարուածներ է ուղղում դէպի այն կողմերը, որտեղից վտանգ է տեսնում: Դրսից նա օգնութիւն չունի. Ղարաբաղի Սղնախները կապված էին նրա հետ սերտ յարաբերութիւններով, բայց օգնական զօրագնդեր չէին ուղարկում.—այնտեղ էլ հարկաւոր էին զօրքերը, այնտեղ էլ գործ շատ կար: Շատ խիստ պահպանվող մի սիստեմ ենք նկատում հայկական ամբողջ ապստամբութեան մէջ.—Նա տեղական բնաւորութիւն ունի, ամրացած յայտնի տեղերում՝ ճանաչում է գործողութիւնների յայտնի սահմանները, չէ ոգևորւում զինուորական արկածախնդրութիւններով, մեծ-մեծ նպատակներ չունի: Միայն մի անգամ ենք տեսնում Մէլիք-Աւանին Սիւնիքում. նա իր զօրքով պաշարում է Որոտնայ բերդը, բայց աջողութիւն չէ ունենում:

Եւ Դաւիթ-բէկը կարօտ էլ չէ դրսի օգնութեան. Նա զարգացնում է տեղային պատերազմական միջոցները, և որքան աւելանում է թշնամիների թիւը, այնքան աւելի շատ է նա գործի մէջ մտցնում ռազմիկ ույժեր: Իբրև կազմակերպող, իբրև ժողովրդից զինուորական բա-

նակներ ստեղծող, նա մի կատարեալ տաղանդ է. գործում է կրակոտ եռանդով, նոյն իսկ անողոք խստութեամբ, պահանջող, պատժող ու վարձատրող է, անաջողութիւններից չէ ընկճվում: Այսպէս, Հալիձորի Մէլիք-Փարսադանն ու նրա փեսայ Տէր-Աւետիքը սկզբում չը կամեցան միանալ ապստամբութեան և անտես արին Դաւիթ-բէկի հրաւէրը: Եւ ահա առաջին յարմար միջոցին Դաւիթ-բէկը ձերբակալում է երկուսին, բանտարկում Շնհէրի բերդում: Մէլիք-Աւանի կարգադրութեամբ ազատվելով բանտից, մէլիքն ու քահանան այլ ևս անհնազանդ ու անմիաբան չեն. նրանք մտնում են գործի մէջ և հանդիսանում են, մանաւանդ քահանան, հերոսներ բազմաթիւ կռիւների մէջ: Շատ բնորոշ է այս եղելութիւնը և ցոյց է տալիս թէ որքան լաւ էր ըմբռնել Դաւիթ-բէկը իր ազգի հոգեբանութիւնը: Տաղանդաւոր զօրապետը գիտէր ժամանակին և փրկարար երկիւղի միջոցով գործել:

Նոյն տաղանդն է երևում և Սիւնիքում եղած զօրքերի դասաւորութեան մէջ: Դա մի տեղ համախմբված մի բանակ չէր: Իւրաքանչիւր գաւառ ունէր իր տեղական զօրքը, որ գտնվում էր տեղական մէլիքի կամ տանուտէրի հրամանատարութեան տակ: Այդ զօրաբաժինները, առանձին առանձին վերցրած, փոքրիկ բաներ էին, յաճախ չէին էլ հասնում հազարի: Ամէն մէկը պիտի պաշտպանէր իր գաւառը, բայց և միշտ

պատրաստ պիտի լինէր օգնութեան հասնելու հարևան գաւառին, երբ մեծ վտանգ էր սպառնում։ Ընդհանուր արշաւանքների ժամանակ տեղային զօրաբաժինները միանում էին։ Ինքը, Դաւիթ-բէկը, իբրև գլխաւոր հրամանատար, ապրում էր մի յայտնի տեղ, շրջապատուած իր օգնականներով, եթէ ներելի է այս նմանութիւնը—իր գլխաւոր շտաբով. այդտեղից էլ նա հրամաններ էր արձակում, ղեկավարում էր գործերը։ Սկզբում նրա բնակութեան տեղը Շնհէր բերդն էր, Տաթևի ձորում. բայց երբ այդ կողմերում այլ ևս կռւի գործ չը մնաց, երբ պատերազմի ամբողջ կատաղութիւնը ծանրացաւ Սիւնիքի հարաւային կողմերում, նա տեղափոխվեց Ղափան և այդտեղ իր գործողութիւնների յենարան դարձրեց Հալիձորը, մի ամրացրած բերդ կառուցեց այնտեղ։

Տեղական, անջատ զօրաբաժիններով գործ առաջ տանելու սիստեմը կարող էր կատարեալ աջողութիւն ունենալ միայն այն դէպքում, երբ այդ անջատ ուժերը միացնող, մի ընդհանուր ծրագրի ենթարկող հեղինակաւոր ձեռք կար։ Դաւիթ-բէկը հէնց այդպիսի ձեռք ունէր. նրա հեղինակութիւնը ահագին էր, ուստի և նրա լարած մեքենան անսխալ գործում էր ցոյց տուած ուղղութեամբ։ Մեծ չփոթութիւններ, անկարգութիւններ չէին խանգարում գաւառներ կապող միութիւնը։ Տեղային ինքնօգնութեան գաղափարը այնքան զարգացած էր, որ երբ թշնամին յար-

ձակվում էր մի թոյլ կէտի վրա, հարևան զօրախմբերը, տեղեկութիւն ստանալով այդ մասին, իսկոյն միանում էին յարձակվողների դէմ։

Կարգապահութիւնը խիստ էր, և Դաւիթ-բէկը նրան հաստատ պահելու համար երբեմն նոյն իսկ անգթութեան էլ էր դիմում։ Մեր պատմութեան մէջ շատ յաճախ չեն այնպիսի դէպքեր, երբ ընդհանուր գաղափարը մոռացնել տար տեղային, գաւառական առանձնութիւնը։ Դաւիթ-բէկի երկաթէ ձեռքը, որ իր ծանրութեամբ խրատել ու խելքի էր բերել Մէլիք-Փարսադանին և Տէր-Աւետիքին, մի դէպքում էլ ցոյց տուեց որ դողալ, թուլանալ չը գիտէ, երբ պէտք է կարգապահութեան, անձնուէր ծառայութեան դասեր տալ։ Օրդուբատի կողմից մեծ քանակութեամբ թուրքեր յարձակվում են Դաշտուն աւանի վրա։ Նրանց դէմ իր զօրքով դուրս է գալիս Կալերի Պապ զօրավարը. բայց վախկոտի մէկն է դառնում և, տեսնելով թշնամու բազմութիւնը, վատաբար փախչում է։ Դաւիթ-բէկը, լսելով այս բանը, անձամբ մի զօրաբաժին է տանում թուրքերի դէմ, որոնք կարողացել էին, օգտվելով Պապի վախկոտութիւնից, աւերել շրջակայ հայ գիւղերը. յարձակվողները փախչում են Դաւիթ-բէկի առաջից, բայց հայ զօրավարը դրանով չէ բաւականանում. Պապը հարց ու փորձի է կանչվում և իր երկչոտութեան համար գլխատվում է Դաւիթ-բէկի հրամանով։ Եւ դեռ պէտք է աչքի առաջ ունենալ.

որ Պապը դրանից առաջ զօրքերի մի լաւ առաջնորդ էր հանդիսացել։

Այսպիսի եռանդուն, խիստ միջոցներով, խելացի կազմակերպութեամբ, հզօր կամքով ղեկավարվող հայկական ապստամբութիւնը մի կարճ միջոցում փայլուն հետեւանքների է հասնում։ Կարիք չը կայ այստեղ յիշատակելու այն բոլոր պատերազմները, որոնք տեղի էին ունենում Ղափանի և սահմանակից գաւառներում։ Դրանք բազմաթիւ են, կրում են յանկարծակի յարձակումների, կայծակի արագութեամբ իջնող հարուածների բնաւորութիւն։ Եւ աջողութիւնը միշտ հայերի կողմը չէ, նրանք էլ ենթարկվում են դառն հարուածների. եղան դէպքեր, երբ Դաւիթ-բէկը հարկադրված էր նահանջել թշնամու առջեւից։

Բայց անաջողութիւնները չէին վհատեցնում, այլ, ընդհակառակն, աւելի ևս բորբոքում էին կատաղութիւնը երկու, միմեանց դէմ վեր կացած, ազգերի մէջ։ Դաւիթ-բէկը թշնամու դէմ գործ է ածում նրա զէնքը. «ակն ընդ ական» սկզբունքը, որ մահմեդական Արեւելքում շարունակում էր մնալ իբրեւ ամենից պարզ հասկանալի օրէնք, ղեկավարում էր և Դաւիթ-բէկին։ Եւ պէտք է դրա համար մեղադրել սիւնեցի տաղանդաւոր հրամանատարին։ Թաղամեր աւանում մընացել էին 60 տուն թուրքեր. չը կամենալով գաղթել, նրանք խնդրել աղաչել էին հայերին շնորհել իրանց այդտեղ ապրելու իրաւունք և փո-

խարէնը խոստացել էին հպատակվել հայերին։ Բայց երբ Օրդուբադի թուրքերը մի արշաւանք են գործում դէպի խաղաղ հայ գիւղերը, քանդում են նրանցից երկուսը, կոտորում են տղամարդկանց և գերի տանում կանանց ու երեխաներին, Դաւիթ-բէկը հրամայում է, իբրեւ վրէժ, կոտորել Թաղամերի այդ հպատակ թուրքերին։ Հայ զօրքերը կատարում են այդ հրամանը և ապա սկսում են որոնել ուրիշ թուրքերի, որպէս զի հատուցումը լիակատար լինի։ Կոտորում էին և այն հայերին, որոնք մահմեդականացած էին։ Թաղամերի կոտորածը, անշուշտ, մի անգթութիւն էր, որը չէ կարելի արդարացնել մարդկայնութեան տեսակէտից։ Սակայն պէտք է նկատի առնել շատ հանգամանքներ. ապստամբական կռիւ մղելու միջոցները և այդ միջոցների զարգացրած կատաղութիւնը, ժամանակի հասկացողութիւնները, չափից դուրս լարված այն տենդային դրութիւնը, որ անգութ ու անխնայ էր դարձնում հայերին ու թուրքերին՝ փոխադարձ թշնամութեան մէջ։

Հերոսական, բուն ժողովրդային կռիւը ծնում է հերոսներ։ Եւ Սիւնիքի պատերազմները շատ հարուստ են հերոսներով։ Դրանց մէջ առաջնութիւնը, ի հարկէ, պատկանում է Դաւիթ-բէկին։ Բայց նրա ձեռքի տակ անուն ու հռչակ հանեցին քաջեր, որոնք նոյնքան անմոռանալի են, որքան ինքը, ազատարար պատերազմը։ Պատմութիւնը մեր առջեւ բաց է անում մի շարք գեղեցիկ անուն-

ներ։ Ահա Մխիթար սպարապետը, Թորոս իշխանը. ահա Մելիք-Փարսադանը իր հուժկու փեսայ Տէր-Աւետիքի հետ. ահա Բայինդուրը, Բալին. ահա, վերջապէս, ինքը, պատմիչ Ստեփաննոս Շահումեանը։ Պէտք է ասել որ այդ անվեհեր զինուորներն էին հայ զօրավարի թեւն ու թիկունքը, լրացնում էին այն նպաստաւոր հանգամանքները, որոնք ազատութեան գործի կատարեալ յաղթանակն էին ապահովում։ Դրանց շնորհիւ էր, որ Դաւիթ-բէկը ստիպված չէր ամեն մի արշաւանք անձամբ վարել, այլ կարողանում էր ընդհանուր կարգադրողի դերը կատարել, կազմել մի կենտրոն, որտեղից արձակվում էին պատերազմի այս կամ այն մասը գլուխ բերելու հրամաններ։

Եւ նրա ստորադրեալները կատարում էին այդ կարգադրութիւնները բարեխղճութեամբ, եռանդով։ Ոչ միայն փոքրիկ արշաւանքների մէջ, այլ և աւելի բարդ ու դժուար գործերում նրանք ցոյց էին տալիս հրամանատարի ընդունակութիւն, հերոսական քաջագործութիւններ։ Այսպէս, Մխիթար սպարապետն ու Տէր-Աւետիքը իրանց բազմաթիւ յաղթութիւնները պսակեցին Զեվու անունով խիստ ամուր բերդի նուաճումով։ Իսկ Բայինդուրը հռչակվեց իր անունը այն խոշոր յաղթութեամբ, որ տարաւ Մեղրիի պատերազմի մէջ։ Թուրքերը ահագին բազմութեամբ պաշարել էին Մեղրին. պաշարուածները աջողութեամբ դիմադրում էին յարձակումներին, բայց սակաւաթիւ

էին։ Օգնութեան է հասնում Բայինդուրը, որին աջողվում է իր զօրաբաժնով մտնել պաշարված գիւղաքաղաքը։ Բնակիչները ուրախութիւնից հիւրասիրութիւն են պատրաստում զօրքի համար. բայց Բայինդուրը արգելում է մի բան ուտելը և երդվում է բերանին պատառ չը դիպցնել, քանի որ թշնամին դեռ չէ վանդվել։ Նա տեղեկութիւն էր ստացել որ պաշարողները մեծ օգնութիւն են սպասում Արաքսի միւս ափից. ուստի շտապեց իր հարուածը իջեցնել, քանի դեռ թշնամին չէր ուժեղացել։ Նա կազմում է ճակատամարտի ծրագիրը և յարձակվում է թշնամու վրա։ Յաղթութիւնը փառաւոր էր։ Թուրքերը, ահաւոր ջարդ ուտելով, փախուստ դարձան, բազմաթիւ գերիներ և իրանց ամբողջ բանակը թողնելով հայերի ձեռքին։ Ամբողջ Ղափանը տօնեց այդ նշանաւոր յաղթութիւնը։

Իր դարաւոր ստրկութեան կեղտերը արիւնով լուացող երկիրը կարող էր պարծենալ Դաւիթ-բէկով և նրա օգնականներով։ Բայց նոյն այդ օգնականների համար պակաս պարծանք չէր երկաթէ կամքով զինված մի հրամանատար ունենալը։ Նրա երկաթէ ձեռքն էր կարգ ու կանոն պահպանում։ Առանց նրան՝ հերոսների այդ խմբի մէջ չէր լինի միութիւն, կարգապահութիւն։ Մենք տեսանք որ գործի համար Դաւիթ-բէկը զլխատել տուեց Պապին։ Բայց պատմութիւնը դրանից աւելի մի նշանաւոր փաստ էլ է հաղորդում։ Դա-

ւիթ-բէկը մահվան վճիռ արձակեց և իր ամենանշանաւոր օգնականներից մէկի, Մխիթար սպարապետի դէմ։ Սպարապետ անունը, որ Շահումեանի գրել տուած պատմութեան մէջ միշտ կպած է Մխիթարին, ցոյց է տալիս որ այս մարդը Դաւիթ-բէկից յետոյ երկրորդն էր զօրքերի հրամանատարութեան մէջ։ Մենք չը գիտենք, ինչպէս գոյութիւն ունէր այդ հին տիտղոսը Սիւնիքում, թէ նրան ստեղծել է պատմութիւն գրող վարդապետը։ Բայց բոլոր հանգամանքները ցոյց են տալիս որ Մխիթարը կարևոր դիրք ունէր զօրքի մէջ։ Եւ ահա Դաւիթ-բէկը ցոյց տուեց որ հարկաւոր դէպքում նա չի խնայի նոյն իսկ այդ քաջ և նշանաւոր մարդուն։ Հանգամանքները դարձեալ խիստ բնորոշ են։ Մխիթարի և Դաւիթ-բէկի մէջ ինչ-որ խռովութիւն է ընկնում։ Մի կռուի ժամանակ Մխիթարը փորձում է վրէժ հանել բէկից. բայց ինչպէս եղել է և լինում է հայերի մէջ, մի այնպիսի միջոցով, որ վնասում էր ոչ թէ հակառակորդին, այլ ընդհանուր գործին։ Կռուի տաք ժամին Մխիթարը յանկարծ յետ է քաշում իր զօրաբաժինը. Թուրքերը օգուտ են քաղում այդ չփոթութիւնից, յարձակւում են, ջարդում հայերին, վերցնում են շատ գերիներ։ Դաւիթ-բէկը, առանց այլ և այլութեան, հրամայում է սպանել Մխիթարին։ Բայց նրան շրջապատող մեծաւորները աւելի սառնասիրտ են գտնվում։ Մխիթարի արածը վատութիւն էր. բայց եթէ այդ

քաջի ցոյց տուած ծառայութիւնները կշռի դնվէին, այս դէպքը ներողամտութեան արժանի մի թեթև յանցանք կը լինէր։ Եւ նրանք միջնորդում են, մահվան վճիռը ոչնչացնում։ Դա մի մեծ խելօքութիւն էր. Մխիթարը հայոց գործին շատ հարկաւոր էր։ Բայց և այնպէս, նա ծեծվեց բէկի հրամանով։

Ընտանեկան այս անհամաձայնութիւնները, բարեբախտաբար, շատ չէին և Դաւիթ-բէկը կարողանում էր ժամանակին արմատախիլ անել նրանց։ Աւելի ծանր ու դժուար էր ներքին մի ուրիշ կեղտոտութեան դէմ կռւելը։ Դաւիթ-բէկի և նրա քաջերի ճանապարհը վարդերով չէր ծածկված։ Երկրի բոլոր տէրերը չէին ոգևորված ազատ հայրենիք ունենալու գաղափարով։ Կային ճանապարհի վրա դարան մտած օձեր էլ. կային դաւաճաններ, ուրացողներ։ Վրաստանից Սիւնիք հասնելուն պէս Դաւիթ-բէկը ստիպված եղաւ ամենից առաջ մի դաւաճանի դէմ դարձնել իր պատժող ձեռքը։ Տաթևի Մէլիք-Դաւիթը, մահմեդականութիւն ընդունած մի ստոր մարդ, որ կոչվում էր Բաղըր *),

*) Սա, երևի, այն Մէլիք-Բաղըրն է, որի մասին Իվան Կարապետը գրում էր (տ. վերևում, եր. 325) թէ նա 55 նշանաւոր հայերի գլուխները դաւաճանութեամբ կտրել էր տուել և ուղարկել Շահին։ Իվան Կարապետը յայտնում էր ռուսներին թէ մէլիքները վճռել են քարուքանդ անել Բաղըրի բերդը։ Գուցէ Որոտնայ բերդն էր Բաղըրի բերդը. դա գտնւում է Տաթևի մօտ և մահմեդականների

զօրք հանեց Դաւիթ-բէկի դէմ։ Կռւի մէջ յաղթւելով, ուրացող մէլիքը ընկաւ հայերի ձեռքը։ Դաւիթ-բէկը ուղարկեց նրան Շնհէր, ուր նա եկեղեցում ամբողջ տասն երկու օր պիտի կրկնէր բազմութեան առաջ ժողովրդական մի առած. «Լոյսը Լուսաւորչի հաւատին, վայ ուրացող մարդուն»։ Դրանից յետոյ դաւաճանը գլխատվեց և այդպիսով ազգային գործը ազատվեց մի չար թշնամուց։

Աւելի վտանգաւոր և չարագործ հանդիսացաւ Բարգուշատի Երիցվանից աւանի մէլիքը, Ֆրանգիւլ անունով։ Սա, կարծելով թէ Դաւիթ-բէկի ձեռքով պիտի զրկվի իր իշխանութիւնից, հոգով և մարմնով նուիրվեց թուրքերին։ Նրա սարքած մի թակարդի մէջ ընկաւ հայ նշանաւոր զօրագլուխներից մէկը, Զամնդուրի Թորոս իշխանը։ Բարգուշատի Ֆաթալի-խանը շատ էր ընդհարվել հայերի հետ, բայց միշտ ջարդ էր կերել. դաւաճան հայ մէլիքը խօսք կապեց նրա հետ, բայց արտաքուստ հաւատարմութիւն ցոյց տուեց Թորոս իշխանին և սրա հետ պատերազմի դուրս եկաւ Ֆաթալի-խանի դէմ։ Կռիւը աջող էր հայերի համար. ոգևորվելով իրանց յաղթութեամբ, նրանք

համար մի կարևոր ամրութիւն էր Դաւիթ-բէկի ժամանակ։ Այսպէս ենթադրել է տալիս այն հանգամանքը, որ Մէլիք-Աւանը, ինչպէս պատմում է Շահումեանը, պաշարեց Որոտնայ բերդը, բայց չը կարողացաւ վերցնել։ Վերջը Դաւիթ-բէկը քանդեց մահմեդականութեան այդ ուժեղ պատուարը։

սկսեցին հալածել թուրքերին. բայց թուրքերի փախուստը մի թակարդ էր. նրանք յանկարծ յետ դարձան և յարձակվեցան հայերի վրա. այդ ժամանակ Ֆրանգիւլն էլ ետևից յարձակվեց իր զօրքով։ Հայերը ընկան երկու կրակի մէջ, ջարդվեցան, գերիներ տուին։ Ինքը, Թորոսը, հերոսաբար ընկաւ պատերազմի մէջ և Զամնդուրի ոյժը ոչընչացաւ։ Իսկ Ֆրանգիւլը, խանին աւելի ևս հաճոյանալու համար, մահմեդականութիւն ընդունեց։

Թորոս իշխանի մահվան չափ ցաւալի էր և միւս աչքի ընկնող զօրապետ Մէլիք-Փարսադանի մահը։ Սա էլ ընկաւ դաւաճան հայի գնդակից։ Այդ դաւաճանը Ագուլիսի Մէլիք-Մուսին էր *), որ թշնամական դիրք բռնեց հայ զինուորութեան դէմ և դարձաւ նրա հակառակորդների թիկունքը։

Այդքան անողորմ էր ընտանի թշնամին։ Դաւիթ-բէկի օգնականների փայլուն խումբը բազմաթիւ յամառ կռիւներ մղեց մահմեդականների դէմ, բայց ոչ ոք չընկաւ այդ պատերազմների մէջ. անվեհեր քաջութիւնը, լեռնցու յանդգնութիւնը հրաշքներ էին գործում։ Միայն հայ զզուելի դաւաճանութիւնն էր, որ երկու նշանաւոր մարտնչողներ խլեց այդ փայլուն խմբից՝ ստոր խաբեբայութիւնների միջոցով։ Մէլիք-Մուսին պիտի սպանվէր

*) Ագուլեցի Մուսաբէկեան ընտանիքը երկար ժամանակ Ագուլիսի և շրջակայ գիւղերի կառավարիչն էր։ Այդ ընտանիքից էր Շամախու Հասան-խանը, որ սպանվեց լեզգիների արշաւանքի ժամանակ։

Դաւիթ-բէկի հրամանով, եթէ չը լինէր Մէլիք-Փարսադանը: Հայի մէջ նոյն իսկ հասարակ երախտագիտութեան զգացմունք չէ գոյանում դէպի իր ազգակիցը և այն ժամանակ, երբ այսպիսի խոշոր բարերարութիւն է ստանում նրանից: Մէլիք-Մուսին իր մարդկանց տանում է Թովմա առաքեալի վանքի դէմ, ուր ամրացած էր Դաւիթ-բէկի մի զօրաբաժինը: Բայց վերջինս մեղք է համարում իր ազգակից հայերի դէմ կռւի դուրս գալ և Մէլիք-Փարսադանը առաջ է գալիս հասկացնելու ապստամբներին թէ այսպիսի ժամանակ հայը հայի վրա զէնք չը պիտի բարձրացնէ: Այդ ժամանակ ահա Մէլիք-Մուսու հրամանով արձակված հրացանը գետին է գլորում Հալիձորի տէրոջը...

Իզուր չէր Դաւիթ-բէկը այնքան անողոք խստութեամբ վարվում Մէլիք-Ցամդիւլի և Մէլիք-Մուսու հոգին ունեցող հայերի հետ: Չը նայած այդ խստութիւններին, վատութիւնը գնալով մեծ ծաւալ էր ստանում հայերի մէջ. և հերոս հրամանատարը ստիպված էր միաժամանակ երկու տեսակ կռիւ մղել. մէկը դարաւոր թշնամու—մահմեդականութեան դէմ, միւսը—ներքին ապականութեան դէմ, որ աւելի հին, աւելի վտանգաւոր և անգութ թշնամի էր:

Պատմութիւնը, ճիշտ է, ժողովուրդներն են ստեղծում. Սիւնիքի շարժումը, ճիշտ է, տարիներից ի վեր պատրաստվող անհրաժեշտութիւն էր և Դաւիթ-բէկը, ճիշտ է, գտաւ երկրում հասու-

նացած գաղափար. բայց չը պէտք է մոռանալ որ ժողովուրդների մէջ առաջնորդ հանդիսացող ուժեղ ու տաղանդաւոր անհատներն են այս կամ այն ընթացքը տալիս պատմութեան, հաղորդում են իրանց ժամանակին մի յայտնի հոգի, գոյն: Դաւիթ-բէկը, անկասկած մի շատ ուժեղ, շատ տաղանդաւոր գործիչ, Հայաստանի բազմաթիւ դժբախտ, գերի նահանգներից մէկում իր անխոնջ աշխատութեամբ, իր անվեհեր քաջութեամբ և—գլխաւորը—հերոսական հայրենասիրութեամբ, մի այնպիսի մեծագործութիւն կատարեց, որի հեռաւոր նմանութիւնն անգամ անյայտ է հայոց պատմութեան այն արիւնաներկ էջերին, որոնք գալիս են Ռուբինեան իշխանութեան ոչնչացումից յետոյ: Չորս տարվայ ընթացքում նա մաքրեց Սիւնիքը, զուտ հայկական իշխանութիւն հիմնեց այնտեղ ոյժի իրաւունքով,—մի իրաւունք, որ Արևելքում միակ հասկանալի, միակ արդար սկզբունքն էր այն խառն ու դժբախտ ժամանակներում: Սա հայերի համար մի այնպիսի հրաշք էր, որ, կարծես, պիտի վառէր, բորբոքէր ամբողջ ազգը, անսահման ոգևորութիւն պիտի հաղորդէր նրան. և այդ թըշուառ ժողովուրդը, որին չէր վիճակված ստրկութեան շղթաները հանգիստ կերպով կրելու բախտն անգամ, ամեն կողմից պիտի դիմէր դէպի այդ լեռնային հայ իշխանութիւնը, ինչպէս խաւարի մէջ երկար խարխափող մարդը դիմում է դէպի հեռուից

երևացող փոքրիկ լոյսը, որ գիշերային արհաւիրքներից ազատվելու յոյսն է ներշնչում։

Բայց այդպէս էր հայ ժողովուրդը։—Ո՛չ, դժբախտաբար։ Այդ ազգի գերութիւնը անդառնալի էր. ոչ մի հրաշք, ըստ երևոյթին, այլ ևս չէր կարող համախմբել նրան հայրենի ազատութեան օջախի շուրջը, տաքացնել նրան, վերանորոգել նրա արիւնը, նոր առաւօտ բաց անել նրա տխուր կեանքի մէջ։ Սիւնիքը իր ձեռք բերած ազատութեամբ էլ կղզիացած մնաց։ Եւ այդ կղզին էլ հետզհետէ փոքրանում էր, հետզհետէ նուազեցնում էր ազատութեան զինուորների թիւը...

Ի՞նչ է սրա պատճառը։ Մենք ներկայ աշխատութեան մէջ, դեռ այն ժամանակից, երբ սկսում էինք բացատրել արևելեան քրիստոնեաների ազատագրութեան հանգամանքները, շարունակ շեշտում էինք հայրենիքի գաղափարի բացակայութիւնը հայերի մէջ, շեշտում էինք այն իրողութիւնը, որ ոչ ժողովրդի բանաստեղծութիւնը, ոչ գրականութիւնը չէին տաքացնում հայերի սրտերը, չէին վառում նրանց մէջ ազատ ապրելու մի տենչանք։ Մենք չափազանց կարճ յիշողութեան տէր ժողովուրդ էինք. մեզանում գրագէտ դասը ճգնաւոր էր, վաճառական դասը խոր խրված էր իր հաշիւների մէջ և իր ձգտումներով չէր էլ կարող թոյլ տալ պատերազմական գրութիւն այն տեղերում, ուր պիտի երթևեկէին նրա կարաւանները, իսկ

արհեստաւոր և հողագործ դասը տգէտ էր, ստրկութեան մէջ գլուխ ճկած։

Երբ կարդում ենք մանրամասնութիւններ այն անվերջ կրօնական վէճերի մասին, որոնք բորբոքված էին Կ. Պօլսում և ուրիշ տեղերում՝ լուսաւորչականների և կաթօլիկների մէջ, և ապա հանդիպում ենք Դաւիթ-բէկի պէս մի բացառիկ, լուսաւոր երևոյթին, ակամայ մեր մէջ հարց է ծագում. եթէ հայերը այդ կրօնական անպտուղ վէճերի մէջ իրանց վատնած եռանդի և հարստութիւնների գոնէ մի չնչին մասը դնէին մի Դաւիթ-բէկի տրամադրութեան տակ,—ինչե՞ր չէին կարող պատահել հայոց աշխարհում։ Եթէ պատարագի բաժակի մէջ ջուր խառնելու կամ չը խառնելու պատճառով այնպիսի յօժարութեամբ կախաղան բարձրացողները, թիւրքաց բանտերում ու թիաբաններում տանջվողները, մի օրվայ մէջ հարստութեան բարձրութիւնից աղքատութեան անդունդը գլորվողները յօժար լինէին նոյն զրկանքներն ու չարչարանքները կրել և այն գործի համար, որի ներկայացուցիչը Դաւիթ-բէկն էր, այն ժամանակ, ի հարկէ, մենք ուրիշ բան կը տեսնէինք։

Ահա ինչն էր պակասում—գաղափար, գիտութիւն։ Չը կային այդ բաները, և ազատութեան համար կռուողները մենակ էին, ոչ ոքին չէին կարողանում ոգևորել։ Այն, ինչ որ պիտի պատմենք

այսուհետև, աւելի ևս հաստատում է այդ տխուր իրողութիւնը։

Մի ահաւոր անուն բարձրացնելով Սիւնեաց լեռներում, Դաւիթ-բէկը դրանով արդէն վերջացրել էր գործի ամենադժուար մասը։ Տեղային մահմեդականութիւնը ընկճված էր. հարեւան Թուրք իշխանութիւնների արշաւանքները այլ ևս վտանգաւոր չէին հայերի համար, որոնք սովորել էին կռուել և յաղթել։ Մնում էր պարսից կենտրոնական կառավարութիւնը. բայց Շահ-Թահմազից առանձին երկիւղ չը կար. և Դաւիթ-բէկին կը մնար հանդարտ կերպով կարգադրել գործերը իր երկրում, եթէ երեւան չը գար մի նոր, աւելի զօրեղ թըշնամի։

Դա Թիւրքիան էր։ Ինչպէս տեսանք, օսմանեան արշաւանքի մի ծայրը արդէն հիւսիսից հասել էր Ղարաբաղին։ 1726 թւականին նրա միւս ծայրն էլ հարաւից սկսեց գործել հայ զինուորութեան դէմ, մօտենալով Ղափանին։ Մեծ փորձութիւն էր գալիս հայկական զօրքերի համար։ Այժմ այլ ևս թոյլ, անչնչացող Պարսկաստանը չէր կանգնած առջևում. օսմանեան բանակը արշաւում էր զանազան ուղղութիւններով, աւերմունք և սարսափ տարածելով ամեն կողմ։ Պարսկական երկիրներից հաւաքած աւարը ահագին էր. բայց աւելի մեծ էր գերիների թիւը. հայերը և թուրքերը մեծ խմբերով քշվում էին դէպի օսմանեան երկիրը և այնտեղ վաճառվում էին։

Սարսափը իր ազդեցութիւնը գործեց և Սիւնիքում։ Հասաւ մի ժամանակ, երբ Դաւիթ-բէկը իրան համարեա մենակ տեսաւ։ Արշաւող թշնամու ահը վերանորոգեց հայերի մէջ հին ստրուկի հոգին։ Զօրքը փախաւ այս ու այն կողմը, շատ տեղեր, որոնք մինչև այդ միացած պատերազմում էին մահմեդականների դէմ, շտապեցին հպատակվել օսմանցիներին։ Մի կարճ միջոցում Ղափանը շրջապատված էր թշնամիներով։ Ինքն ըստ ինքեան օսմանեան բանակը շատ մեծ չէր. բայց հայերի դէմ կռուելու համար այդ բանակում հաւաքվեցան տեղացիների մեծամեծ խմբեր. այդտեղ էին Օրդուբադի, Բարգուշատի խաները. այդտեղ էին և շատ հայեր։ Գողթան գաւառը ծածուկ միացաւ օսմանցիների հետ։ Զանգզուրը, Թորոս իշխանի երկիրը, որ այնքան կարեւոր դեր էր կատարել հայոց պատերազմների մէջ, այժմ տատանվում էր և պատրաստ էր առաջին իսկ յարմար դէպքում անցնել օսմանցիների կողմը։ Դրսից եկած ահաւոր ոյժը ներքին կատարեալ քայքայման, դարաւոր անբարոյականութեան յուսահատեցնող պատկերն էր փռել ամեն տեղ։ Այդ ընդհանուր կործանման մէջ կանգնած էր Դաւիթ-բէկը իր ամուր Հալիձորում։ Ամեն ինչ քանդվում էր նրա չորս կողմը. միայն 17 մարդ էին մնացել նրա հետ...

Բայց նա վայր չը դրեց իր սուրը։ Ընտանեկան վատութիւնը, թշնամու ահագին բազմութիւնը չը վախեցրին հերոսին։ Նա դարձեալ գործ դրեց

իր կրակոտ եռանդը, նորից սկսեց ստեղծել պատերազմի նիւթեր. կարողացաւ հաւատ ներշնչել իրան շրջապատողներին, հաւաքեց ու կազմակերպեց մի փոքրաթիւ զօրք, թւով մի քանի հարիւր հոգի, և այդ մի բուռն մարդկանցով պատերազմ յայտարարեց օսմանեան հզօր բանակների դէմ: Մի յանդգնութիւն էր դա, որ ծիծաղելի չէր թւում այնպիսի կռւողների աչքում, ինչպէս էին Դաւիթ-բէկը, Մխիթար սպարապետը, Տէր-Աւետիքը: Ու նորից բորբոքվեց կատաղի կռիւը, այս անգամ անհաւասար ոյժերով, այս անգամ մի զօրեղ թշնամու դէմ: Տեսնելով այդ պատրաստութիւնները, թիւրքաց զօրքերը 1727-ին ներս խուժեցին Ղափան:

Կռւածաղիկը Հալիձորն էր: Դաւիթ-բէկը դուրս եկաւ իր բերդից, որպէս զի բռնէ գետի անցքերը և թոյլ չը տայ թշնամուն այս կողմն անցնել: Այդ միջոցին էլ նա տեսնում էր իւր թոյլ ոյժերի քայքայումը: Թշնամու բանակի տեսքը բաւական էր որ նրա զինուորների մէջ եղած վախկոտները թողնեն ու փախչեն օսմանցիների մօտ: Բայց ամենքը չէին վախկոտ. մնացին մի բուռն քաջեր և դրանց էլ տարաւ Դաւիթ-բէկը, դրաւեց գետի անցքը: Դա էլ չօգնեց. երկու օրից յետոյ նա տեսաւ որ օսմանեան բանակում գտնվող հայ հրացանաւորները անցան գետի ուրիշ կողմով: Մնում էր յետ դառնալ և փակվել բերդում: Հայերն էին առաջնորդում թշնամուն դէպի այն ամրու-

թիւնը, ուր ամփոփված էր ազատված հայութեան վերջին յոյսը: Բայց դա մի անօրինակ դէպք էլ չէր: Նոյն այդ Ղափանում, վեց դար առաջ, սելջուկեան թուրքերը աշխատում էին ոչնչացնել Բաղաց թագաւորութիւնը, բայց նրա անառիկ բերդերը ապարդիւն էին դարձնում այդ ջանքերը: Կորցնելով ամեն մի յոյս, նրանք առաջ քաշեցին իրանց հետ եղած հայերին. և Շիրակի իշխան Գրիգոր Ապիրատեանը խաբէութեամբ ներս մտաւ Կապան բերդը, յանձնեց նրան թուրքերին, որոնք սպանեցին Սենեքերիմ թագաւորին և տիրեցին երկրին: Եւ քանիսն են այսպիսի դէպքեր, երբ հայը իր ձեռքով թշնամուն մտցնում էր իր տունը, հաստատում էր նրան այնտեղ ու ինքը նրա ստրուկը դառնում:

Հալիձորի պաշարումը Դաւիթ-բէկի հերոսական գործերի պսակն է կազմում: Վեց օր չարունակ օսմանցիները յարձակումներ էին գործում այդ բերդի վրա, բայց յետ էին մղվում այն մի բուռն քաջերից, որոնք կռւում էին պարիսպների վրայից: Եօթներորդ օրը ամենասաստիկն էր. պաշարողները, երեք մասի բաժանելով իրանց ոյժերը, կատաղի կերպով գրոհ տուին բերդի վրա: Փոքրիկ, բայց ամուր բերդի վրա գնացողների ահագին բազմութիւնը կարող էր չփոթեցնել ամեն մէկին: Հարիւրաւոր և հազարաւոր դրօշակակիրներին հետեւում էր մարդկային մի ծով, որ ալիքներ տալով ընդհարվում էր պատերին. այդ ալիքները

յետ ու յետ էին դառնում, բայց ետևից եկողները անցնում էին առաջինների վրայով, կատաղի յարձակումներ էին տալիս, սանդուխքներ էին դնում՝ պատերի վրա բարձրանալու համար։ Կռիւը շարունակվեց ամբողջ ութ ժամ։ Գնդակների շառաչիւնը, Թմբուկների ձայները, զինուորների գոռիւն-գոչիւնները ամբողջ օրը Թնդում էին բերդի շուրջը։ Հալիձորը օրհասին մատնված մի նաւի էր նման, որին ամեն կողմից ծեծում էին գոռ ալիքները։

Օրը վերջանալու վրա էր և պաշարվածները տեսնում էին որ դիմադրութեան յոյսը չքանում է։ Երեք եպիսկոպոսներ կային բերդում. նրանք, քահանաները, Շնհէրի կուսանոցից փախած կոյսերը սկսեցին աղաչել, պաղատել երկինքը, որ օգնէ հայերին. Նրանք զանգակներ էին հնչեցնում, սուրբ Մինասի մասունքները հանեցին եկեղեցու սեղանի վրա և երեսի վրա ընկած՝ Աստուած էին կանչում։ Այդ միջոցին վճռվեց մի վերջին, յուսահատական փորձ կատարել։ Մխիթար սպարապետը և Տէր-Աւետիքը հաւաքեցին երեք հարիւր զինուորներ և սկսեցին պատրաստել նրանց մի յարձակում գործելու։ Պարիսպների վրա կռւողները շարունակում էին իրանց գործը, իսկ Դաւիթ-բէկի երկու հերոս օգնականները սիրտ էին տալիս այդ երեք հարիւրին, հասկացնում էին թէ որքան լաւ է պատւով և քաջութեամբ մեռնել պարիսպներից դուրս, քան մնալ բերդում և բաց աչքով տեսնել

թէ ինչպէս թշնամին պիտի կոտորէ իրանց ընտանիքները և ուրիչ գազանութիւններ կատարէ։ Պատրաստելով ամենքին, Մխիթարն ու Տէր-Աւետիքը դուրս տարան այդ խումբը բերդի գաղտնի դռնով. ամենքից առաջ իրանք էին գնում։

Տեղի է ունենում մի խիստ, ջղուտ յարձակում. հայերը կայծակի պէս են վրա ընկնում և սկսում անխնայ կոտորածը։ Օսմանեան ահագին բանակը, բաղկացած մեծ մասամբ տեղացի կամաւորներից, շփոթութեան մէջ է ընկնում. շարքերը խառնվում են։ Շատ խմբեր փորձով գիտէին թէ ինչ ցնցող թափով և կատաղութեամբ են ընդհարվում Դաւիթ-բէկի զօրքերը և այժմ էլ, զգալով նոյնը, սկսում են գլուխ կորցնել ու փախչել. Բերդի վրայից կռւողներն էլ միանում են իրանց ընկերներին, խառնիճաղանճի սարսափը աւելի ևս սաստկանում է և ամբողջ բանակը, վրա հասած մթութեան մէջ, ցրիւ է գալիս. հաւաքելով իր մնացորդները, նա շտապով նահանջում է, հեռանում, թողնելով Հալիձորի պատերի տակ իր ծանրոցքի մեծ մասը և ահագին քանակութեամբ սպանվածներ։

Այդ հերոսական գործը դառնում է մի նոր զարդ Սիւնիքի պատերազմների մէջ։ Օսմանցիներին էլ կարելի է յաղթել, ահա ինչ էր հարկաւոր ցոյց տալ։ Դաւիթ-բէկը թողեց պաշտպանողական պատերազմի միտքը. այժմ կարելի է դուրս մղել օսմանցիներին ամբողջ Ղափանից։

Մոտակայ կէտը, որ ընտրեց նա արշաւանքի համար, Մեղրին էր, ուր բանակ էր դրել մի փաշա: Բայց յարձակողական պատերազմը պահանջում է զգուշութիւն, հիմնաւոր պատրաստութիւն: Եւ Դաւիթ-բէկը նախ շտապում է օգուտ քաղել այն տպաւորութիւնից, որ գործել էր օսմանցիների պարտութիւնը Հալիձորի մօտ: Նա որոնում է դաշնակից: Բայց ո՞վ կարող էր միանալ նրա հետ օսմանցիների դէմ: Շրջապատող Թուրք խանութիւնները արդէն օսմանեան բանակումն էին: Բայց կար պարսից կառավարութիւնը: Նա մեծ շահ ունէր որ օսմանցիները յաղթվեն, դուրս մղվեն երկրից. նա ինքն էլ պատերազմում էր օսմանցիների դէմ: Արաքսի միւս ափում, Օրդուբատի դիմաց, կանգնած էր Շահ-Թահմազի մի զօրաբաժինը, որ ուղարկված էր այդտեղ՝ Արտապատականի սահմանագլուխը օսմանեան արշաւանքներից պաշտպանելու համար: Դաւիթ-բէկը Մխիթար սպարապետին և Տէր-Աւետիքին 66 ձիաւորների հետ ուղարկեց այդ զօրաբաժնի հրամանատար խանի մօտ և առաջարկեց նրան միասին պատերազմել թշնամու դէմ: Մի քայլ էր դա, որ պտուղ էր բերում հայ զօրավարի քաղաքական հեռատեսութեան: Պարսկաստանի դաշնակից լինելը, ի հարկէ, անհամեմատ ձեռնտու էր հայերի համար, քան Թիւրքիայի իշխանութեան տակ մտնելը: Պէտք էր պահպանել հինը, որովհետև նա

փտած էր, չէր կարող կանգնեցնել այն, ինչ սկսել էին հայերը. բայց օսմանցիները այդպէս չէին:

Այս առաջին պատուիրակութիւնը միանգամից չը վճռեց գործը: Եւ Դաւիթ-բէկը վճռեց դիմել Շահ-Թահմազին: Նա մի քանի արշաւանքներում էլ յաղթեց թիւրքերին, իսկ Մխիթար սպարապետը և Տէր-Աւետիքը մի դիւցազնական յանդուգն գործ սարքեցին, որի հետևանքն այն եղաւ, որ օսմանցիները հեռացան Մեղրիից: Դաւիթ-բէկի պատգամաւորութիւնը ուղևորվեց Թաւրիզ. նա տանում էր իր հետ չորս բեռը օսմանեան կտրած գլուխներ իբրև ապացոյց որ հայերը յաղթում են: Շահ-Թահմազն էլ հասկացաւ թէ որքան ձեռնտու է մի այդպիսի ժամանակ հայերի դաշնակցութիւնը Պարսկաստանի հետ և հաճութեամբ ընդունեց իրան ուղղած առաջարկութիւնը: Դաւիթ-բէկը Շահի կողմից նշանակվեց ընդհանուր հրամանատար. նրան հպատակվում էին և տեղական բոլոր մահմեդական իշխողները—մի բան, որ համարեա անօրինակ էր մի իսլամ պետութեան մէջ: Բացի դրանից, Դաւիթ-բէկը ճանաչվում էր ինքնագլուխ իշխան իր նուաճած երկրում և դրամ կտրելու իրաւունք էլ էր ստանում: Շահը թանգագին ընծաներով և յատուկ հրովարտակով հաստատեց այս բոլորը:

Ահա ինչ հետևանքներ էր բերում Հալիձորի յաղթութիւնը: Սիւնեցի հերոսը կարող էր պարծենալ որ իր սրի բերանով իրականացրեց Իսրայէլ

Օրիի տենչանքները: Հայկական անկախութիւնը այլ ևս երազ չէր, գաղափարական հասկացողութիւն չէր. նա կատարված փաստ էր…

Ստանալով այսպիսի բարձր դիրք, Դաւիթ-բէկը իրան յատուկ եռանդով գործողութիւններ է սկսում օսմանցիների դէմ: Փոխադրելով իր բանակը Մեղրի, նա այդտեղ է հաւաքում տեղական բոլոր հայ թէ թուրք զօրքերը և արշաւում է Օրդուբատի վրա: Մի յանկարծակի յարձակումով այս քաղաքը գրաւված է. Դաւիթ-բէկը, ժամանակ չը կորցնելով, հալածում է օսմանցիներին և հասնում է Ագուլիս: Ագուլեցիները դուրս եկան Դաւիթ-բէկի առաջ, համբուրում էին նրա ձեռքը: Դա հնազանդութեան և սիրոյ նշան էր և հայոց զօրքը հանգիստ կերպով տեղաւորվեց Թովմա առաքեալի վանքում: Տասն օրվայ ընթացքում օսմանցիները երեք անգամ յարձակվեցան հայերի վրա, բայց երեք անգամ էլ յետ մղվեցան: Շահ-Թահմազի հրամանով երեք պարսիկ խաներ էլ միացան Դաւիթ-բէկի բանակին. Նորից յարձակում օսմանցիների կողմից և նորից անաջող: Թովմա առաքեալի վանքում բանակ դրած հայերը նայում էին Ագուլիսին և միամտաբար կարծում էին թէ, իբրև մի հայ գիւղաքաղաք, Ագուլիսը իրանց է նուիրված: Ո՛չ Դաւիթ-բէկը, ո՛չ նրան շրջապատողները չը գիտէին որ ագուլեցիների համբոյրները յուդայական էին, չը գիտէին որ այդ վաճառականական խոշոր կենտրոնը ծածուկ կերպով օսմանցիներին էր նուիր-

ված և հէնց նա է պատճառը, որ այդքան յաճախացել են օսմանեան յարձակումները:

Վերջին յարձակումից երկու օր հազիւ անցած՝ Դաւիթ-բէկը ստիպված եղաւ ընդունել օսմանցիներից մի բաց ճակատամարտ Մ'արազի դաշտում: Նա այսպէս դասաւորեց իր զօրքերը. մի կողմում պարսիկ խաները, միւս կողմում հայ զօրքերը, իսկ Տէր-Աւետիքը իր զօրաբաժնով գործում էր Արաքսի կողմից: Երբ սկսվեց պատերազմը, հայերը իմացան թէ որքան աւելորդ բեռ են իրանց համար պարսից օգնական զօրքերը. խաները առաջինը եղան փախչողները: Բայց հայերը պինդ կանգնեցին, չը թողին պատերազմի դաշտը և յաղթութիւն տարան: Այնուհետև Դաւիթ-բէկը իր վախկոտ դաշնակիցների ետևից ընկաւ և բռնութեամբ վերադարձրեց նրանց Ագուլիս: Բայց խաները փախան. և հայերը, նրանց պատժելու համար, յափշտակեցին նրանց տները, իսկ հարեմները տարան Հալիձոր:

Ագուլեցիների աչքի առջև էին տեղի ունենում այս հերոսական գործողութիւնները. սակայն նրանց սրտին ու մտքին ոչինչ չէին ասում այդ տեսածները: Ո՛չ մահմեդականների հրամանատար դարձած հայ ինքնագլուխ իշխանը, ո՛չ հայերի պատերազմական զարմանալի բախտը չը կարողացան խեղդել նրանց մէջ թշնամութիւնը: Հէնց այն միջոցին, երբ հայոց զօրքը Թովմա առաքեալի վանքում հանգստանում էր այդքան գործերից յետոյ,

երևան եկաւ Մելիք-Մուսու վերոյիշեալ դաւաճանութիւնը, որին զոհ գնաց Մելիք-Փարսադանը։ Նոր միայն բացվեցին հայ զօրականների աչքերը։ Հեռանալով դաւաճան Ագուլիսից, նրանք աւար առան մօտիկ գիւղում ագուլեցիների ապրանքը։ Բայց այդքանով չը բաւականացաւ Դաւիթ-բէկը։ Նա զօրք ուղարկեց Ագուլիսի դէմ. շրջականները կողոպտվեցան, հայերը այժմ մեղք էին համարում խնայել իրանց թիւրքամոլ ազգակիցներին։ Նրանք աշխատում էին դուրս հանել ագուլեցիներին գիւղաքաղաքից և այդտեղ ջարդել նրանց։ Այդ նպատակով էլ երկու կողմից կրակ գցեցին Ագուլիսը։ Բայց բնակիչները դուրս չեկան. և բաւական համարելով իրանց տուած պատիժը, հայերը վերադարձան Մեղրի։

Ագուլիսը չար օրինակ հանդիսացաւ և Զավընդուր գաւառի համար։ Այստեղի գլխաւորները յայտարարեցին որ չեն ճանաչում Դաւիթ-բէկին. բայց Տէր-Աւետիքը ընկճեց նրանց, հարկադրեց թողութիւն խնդրել Դաւիթ-բէկից. ինքն էլ մի լաւ ջարդ տուեց օսմանեան մի զօրաբաժնի, որ այդ ժամանակ մտել էր Զանգեզուր։

Այսպէս ահա ամեն կողմից աջողութիւն էր ստեղծվում հայկական անկախութեան համար։ Ի՞նչ կը լինէր այդ գործը, եթէ անողոք ճակատագիրը մի սոսկալի հարուած չը լինէր պատրաստած։ Մի հարուած էր դա, որ գալիս էր այն ժամանակ, երբ հայոց գործը դեռ նոր էր ծլել և ամ-

բանում էր պատերազմական ծխի մէջ։ 1728 թուականին Դաւիթ-բէկը վախճանվեց Հալիձորում, իր տան մէջ։ Ահա ինչ հարուած էր իջնում հայերի գլխին։ Քաջի մահը մահ էր և ամբողջ գործի համար։ Սիւնիքում մի ուրիշ Դաւիթ-բէկ չը կար այլ ևս...

Սկզբում գործը, ըստ երևոյթին, գնում էր իր կարգով։ Դաւիթ-բէկի տեղը, զօրքերի գլխաւորների հաւանութեամբ, բռնեց Մխիթար սպարապետը։ Մխիթարը մի արժանաւոր յաջորդ էր իբրև քաջ զինուոր. բայց Սիւնիքում, ինչպէս տեսանք շատ օրինակներից, միայն քաջ զինուոր չէր հարկաւոր։ Պէտք էր երկաթի ձեռք, նուաճող, հպատակեցնող։ Այդպիսի ձեռք չունէր Մխիթարը։ Եւ բորբոքվեցին ընտանի խռովութիւնները։ Այս անգամ քայքայում մտցնողը Տէր-Աւետիքն էր...

Պատմիչը չէ բացատրում, թէ ինչից առաջացաւ Տէր-Աւետիքի թշնամութիւնը Մխիթարի դէմ։ Բայց հեշտ կարելի է գուշակել որ մէջ տեղ գործում էր քահանայի փառասիրութիւնն էլ։ Նա, մի անպարտելի հերոս, ոչնչով պակաս չէր Մխիթար սպարապետից և իր հրաշալի քաջագործութիւններով պակաս արժանի չէր Դաւիթ-բէկի ժառանգութիւնը ստանալու, մանաւանդ որ Հալիձորը իր աներոջն էր պատկանում։ Մի տարի միայն շարունակվեց Մխիթարի իշխանութիւնը։ Այդքան ժամանակն էլ բաւական եղաւ որ Տէր-Աւետիքը թեքվի օսմանցիների կողմը։ Հալիձորը նորից պա-

չարվեց. բայց այս անգամ նա չէր դիմադրում թշ-նամուն։ Նոյն միջոցին, երբ պաշարողները կրակ էին թափում դրսից, բերդի ներսում տեղի ունէին խռովութիւններ։ Տէր-Աւետիքը, վերցնելով իր հետ երկու մարդ, գնաց օսմանեան բանակը՝ անձնատուր լինելու պայմանների մասին խօսելու համար։ Մխիթար սպարապետը չը կամեցաւ իր պատերազմական ընկերի բախտին ենթարկվել. օսմանցիների մօտ նա չը գնաց, այլ գտնելով յարմար միջոց, գիշերը միակ իջաւ բերդի պարսպից և հեռացաւ այդ անպատուութեան վայրից, թողնելով այնտեղ իր կնոջն ու երեխաներին։

Տէր-Աւետիքը պայմանաւորվել էր որ օսմանցիները, տիրանալով Հալիձորին, ոչ ոքին վնաս չեն տայ։ Բայց միւս օրը Հալիձորը հիմն ի վեր քարուքանդ դարձաւ և ինքը, քահանան, ականատես եղաւ մի սոսկալի կոտորածի, որի ժամանակ չը խնայվեց ոչ հասակ, ոչ սեռ։ Որքան անփառունակ վերջ էր տալիս այդ հերոսը իր ամբողջ գործունէութեան։ Սոսկալի տեսարանի ազդեցութեան տակ նրա մէջ վառվում է կրօնական կրակը։ Նա նոր միայն զգում է որ ինքը քահանայ է, իսկ քահանային վայել չէ այդքան արիւն թափելը։ Ու դառնում է ինքն իրան դատապարտող մի ողորմելի յանցաւոր. թողնում է երկիրը, ուր այնքան մեծ գործեր էր կատարել, վերցնում է օսմանցիներից ծանր, սոսկալի գնով առած իր գլուխը ու

ճանապարհվում է Երուսաղէմ՝ իր մեղքերի թողութիւնը ստանալու համար։

Ստացա՞ւ արդեօք։ Նրա ձեռքով սպանված հայրենի գործը շատ կասկածելի է դարձնում այդ։ Իսկ գործը սպանված էր, թէև Սիւնիքում դեռ կենդանի էր Մխիթար սպարապետը։

Փախչելով Հալիձորից, թողնելով իր երեխաներին թիւրքաց սրերի տակ, այս հերոսը ջանքեր էր գործ դնում կորցրածը յետ ստանալու և երկրի պատիւը փրկելու համար։ Նա այլ ևս Ղափանում չը մնաց, անցաւ հիւսիսային Սիւնիք և հաստատվեց Խնձորէսք անունով մեծ բերդում։ Մի տարվայ ընթացքում նա կարողանում է ահագին գործ կատարել, հաւաքում է զօրք, սկսում է յանդուգն արշաւանքներ։ Յարձակվում է Որդուբադի վրայ, վերցնում է նրան, մեծ կոտորած անում և հարիւր վաթսուն ուղտերի վրա բեռնած հարուստ աւարը տանում է Խնձորէսք։

Բայց այդ բերդում ուրախութեամբ չեն դիմաւորում քաջին։ Խնձորէսքը, ընդհակառակն, սարսափի մէջ է ընկնում. ստրկական հոգին խօսում է բնակիչների մէջ. վախենում են օսմանցիներից, վախենում են թէ կը գան իրանց էլ այնպէս կը կոտորեն, ինչպէս կոտորեցին հալիձորցիներին։ Ու պահանջում են Մխիթարից որ հեռանայ այդտեղից։ Բայց սպարապետը, ինչպէս երևում է, այդ միջոցին մի մարդ էր, որ գլուխ դնելու տեղ չէր գտնում Սիւնիքի մէջ։ Նա չէ

հեռանում։ Ուստի վախկոտութիւնը դիմում է մի հրէշաւոր եղեռնագործութեան։ 1730 թւականի մի օր վեր են կենում խնձորէսքցինները, խփում սպանում են Մխիթարին, կամենալով ցոյց տալ օսմանեան իշխանութիւններին թէ Խնձորէսքը նրանց հլու հպատակն է։ Սպանողները մի այլ ստորութիւն էլ են կատարում. կտրում են դիակի գլուխը և տանում Թիւրք փաշայի մօտ։ Բայց պատմիչը ասում է թէ փաշան աւելի ազնիւ գտնվեց, քան այդ դաւաճան հայերը. քաջ և նշանաւոր զօրավարին այդպէս ամարդի կերպով սպանելը այնքան զայրացնում է նրան, որ հրամայում է կոտորել գլուխը բերողներին։ Եւ դա է մնում այդ ողբալի մահվան միակ հատուցումը։

Այնուհետև Դաւիթ-բէկի կառուցած շէնքը սկսում է փուլ գալ սոսկալի արագութեամբ։ Մխիթարի զօրքի մի մասը ցրիւ է գալիս, միւսը անցնում է Ղարաբաղ, մելիքների մօտ։ Մենք չը գիտենք թէ ինչ վախճան ունեցան Դաւիթ-բէկի միւս զօրապետները, օրինակ Բայինդուրը։ Ստեփանոս Շահումեանը, ինչպէս ասացինք, գնաց Վենետիկ և վաճառական դարձաւ։ Ս. Ղազարի վանքում նա իր ազգականների հետ շինել տուեց մի խորան Լուսաւորչի անունով, իսկ այդ սեղանի առաջ պատրաստեց իրանց տոհմային դամբարանը։ Բայց յայտնի չէ թէ երբ և ուր վախճանվեց Ստեփանոսը. նա ամուսնացել էր Վենետիկում Գարագաշեան հայ-կաթօլիկ ընտանիքի մի աղջկայ հետ։

Հարստութիւնն էլ չը մնաց նրան. 1757-ին Շահումեանների առևտրական տունը սնանկացաւ և Ստեփանոսի աղջիկը, իբրև կարօտ, նպաստ էր ստանում մի բարեգործական գումարից*)։

Խնձորէսք գիւղի հարաւ-արևելեան կողմում ժայռերից մի լեզուակ է բաժանվում, որի երեք կողմից հոսում է գիւղի գետակը։ Այժմ այդ քարային լեզուակի հարթ մասի վրա երևում է մի փոքրիկ աւերակ եկեղեցի, շրջապատված պարիսպով։ Եկեղեցու հիւսիսային կողմում, մի հասարակ տապանաքարի վրա, կարելի է կարդալ հետևեալ անգրագէտ տողերը.

Այս է տապան ի հանգիստեան
Իջեալ մարմնով ի գերեզման
Սայ Մխիթար մեծ անուանեալ
Սորա ոնէր իշխանութիւն
Սա բնմուրատ գնաց ջիվան
Որ է երկրէն սայ Կեանձով էր.
Նահատակեցաւ ՌՃՀԶ **)։

Պատմիչը անուանում է Մխիթարին «վերջին մխիթարիչ Հայոց»։ Եւ սա ճիշտ է։ Հայկական անկախութեան վերջին ներկայացուցիչն է պառկած այդ գերեզմանում՝ զոհ հայրենի անպիտանութեան։

---

*) „Սիոնիք“, եր. 302.

**) Ե. Լալայեան—«Զանգեզուրի Գաւառ», Թիֆլիս, 1899, եր. 35։ Թուականը սխալ է. պիտի լինի ՌՃՀԹ.

Նրանից յետոյ Սիւնիքը ոչինչ դեր չէ կատարում հայկական շարժման մէջ…

VII

Դաւիթ-բէկի հետ մի և նոյն տարում, 1728-ին, վախճանվեց և Գանձասարի Եսայի կաթողիկոսը։ Պակասում էր հայկական գործի ամենանշանաւոր ներկայացուցիչներից մէկն էլ, նա, որ Իսրայէլ Օրիի աջ բազուկը հանդիսացաւ, որ քսան և հինգ տարվայ ընթացքում, չը նայած անաջողութիւններին, պահպանում էր երկրում ազատութեան մի վառ յոյս։ Այդ մարդն էր, որ եկեղեցու հովւի պաշտօնի հետ միացրեց զինուորական գործունէութիւնը։ Նա էր, որ Ղարաբաղի և Սիւնիքի լեռներում հանդէս բերեց զինված հայութիւնը։ Շատ բան չէր կարող անել Օրին, եթէ նրա հետ միաժամանակ Գանձասարում չը լինէր Եսայի կաթողիկոսը։ Պատմութեան ընթացքը շատ պարզ ցոյց է տալիս որ ազատութեան գաղափարը Օրիի հետ վաղաժամ գերեզման կը մտնէր, եթէ Եսային իր վրա վերցրած չը լինէր սկսած գործի շարունակութիւնը։

Իր կեանքի վերջին երկու տարում Եսայի կաթողիկոսը այլ ևս հանդէս չէ գալիս ռուսաց կառավարութեան ուղղած թղթերում. գոնէ մեզ յայտնի գրագրութիւնների մէջ նրա անունը 1726-ից յետոյ չը կայ։ Պատճառը, որքան կարելի է գու-

շակել Մինաս վարդապետի մի երկար բացատրութիւնից *), հիասթափումն էր։ Եսային շարունակ ոգևորել էր հայերին ռուսների օգնութեան յոյսով. այդ ոգևորութիւնը անչափ լարել էր երկրի ոյժերը, հասցրել էր նրան այն դրութեան, որ նա ստիպված էր պատերազմներ տալ նոյն իսկ մի այնպիսի ուժեղ թշնամու, որպիսին էր Թիւրքիան։ Մենք տեսանք, որ 1725-ին հայերը ոչնչացրին օսմանեան մի զօրաբաժին։ Յաջորդ 1726 թւականին սէրասքէր Սարը-Մուստաֆա փաշան, որ բնակվում էր Գանձակում, աւելի մեծ ոյժերով մի արշաւանք մտցրեց Ղարաբաղ։ Հայերը դուրս եկան նրա դէմ և առանց որ և է օգնութիւն ստանալու, մենակ, ութ օր շարունակ կռւեցին։ Այդ ուժեղ դիմադրութեան հետևանքն այն եղաւ, որ թիւրքերը, մեծամեծ կորուստների պատճառով, յետ դարձան Գանձակ։ Ռուսաց զօրքերի հրամանատար իշխան Դոլգորուկով գրում էր իր կառավարութեան թէ միայն Աստուած է պահպանում հայերին, թէ չէ՝ մարդկային խելքից բարձր է հասկանալ թէ դեռ ինչպէս են նրանք պահվում այդքան զօրեղ թշնամու առաջ **)։

Եթէ հեռուից նայող օտարականը այդպէս էր մտածում, իրանք, հայերը, ի հարկէ, աւելի լաւ էին հասկանում թէ որքան վտանգաւոր դրութեան

*) Эзовъ, եր. 460։

**) Ibid, եր. 437։

մէջ են ընկել, իրանց վրա կենտրոնացնելով օսմանեան բանակի հարուածները, որոնք ուղղված էին երկու կողմից—Ղափանից և Գանձակից: Այս պատճառով էլ նրանք, վերոյիշեալ յամառ պատերազմից մի ամիս անցած, մի մեծ պատգամաւորութիւն ուղարկեցին նոյն իշխան Դոլգորուկովի մօտ, Սալեան, և խնդրում էին օգնական զօրք տալ: Բայց ռուս հրամանատարը, ի հարկէ, չը կատարեց այդ խնդիրքը, քանի որ ոչինչ կարգադրութիւն չունէր Պետերբուրգից:

Իսկ Պետերբուրգում, Պետրոսի մահից յետոյ, փոխվեց շատ բան: Մեծ վերանորոգչին յաջորդեցին ժառանգներ, որոնք ոչ նրա հանճարն ունէին, ոչ հեռատեսութիւնը և ոչ նոյն իսկ եռանդի մի մասը: Գահը Պետրոսից ժառանգողը նրա ամուսին Եկատերինան էր. երկու տարուց յետոյ Եկատերինային յաջորդեց անչափահաս Պետրոս երկրորդը: Երկուսն էլ թոյլ վեհապետներ, երկուսն էլ խաղալիք դարձած ուժեղ պալատականների ձեռքին:

Եկատերինա I-ի և Պետրոս II-ի ժամանակ համարեա անփոփոխ մնաց ռուսաց քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ: Իրական օգնութիւն հասցնել հայերին չէր կարելի, ինչպէս չէր կարողանում հասցնել Պետրոս Մեծը՝ Թիւրքիայի հետ կնքած դաշնագրութեան պատճառով: Դրա փոխարէն ռուս կառավարութիւնը շարունակում էր յուսադրել հայերին, շարունակում էր գրգռել նրանց, որ պահվեն, չը հպատակվեն օսմանցիներ-

րին, մինչև որ կը գայ յարմար ժամանակը: Եթէ կար այդ քաղաքականութեան մէջ մի նորութիւն, դա այն էր, որ մտադրութիւն կար հայոց զօրքերը ծառայեցնել ռուսաց այն բանակում, որ գրաւած ունէր Կասպիական ծովեզերքը: Բայց իշխան Դոլգորուկով ընդդիմացաւ այդ ծրագրին, ասելով թէ հայերը առանց այդ էլ հազիւ են դիմանում օսմանեան զօրքի հարուածներին. իսկ եթէ զրկվեն իրանց սեփական զօրքից, պիտի հպատակվեն Թիւրքիային,—մի բան, որ բոլորովին ցանկալի չէր ռուսաց շահերի տեսակէտից:

Ահա այսպիսի դրութիւնը սկսեց ռէակցիա առաջացնել հայերի մէջ: Եսայի կաթողիկոսը չը գիտէր ինչ պատասխան տալ մելիքներին, երբ սրանք պահանջում էին բացատրել թէ ինչ են ուզում անել ռուսները և երբ, վերջապէս, պիտի օգնեն հայերին: Անհամաձայնութիւններ սկսվեցին հայոց բանակի մէջ, և ինչպէս երևում է, շատ լուրջ անհամաձայնութիւններ: Մինաս վարդապետը յիշատակում է ինչ-որ պառակտումներ, կռիւներ և աւելացնում է. «Կաթողիկոսը, տեսնելով նրանց (զօրքերի) մէջ մեծ չփոթութիւն և մատնութիւն, անժամանակ վերջացրեց իր կեանքը»: Կամենում է ասել որ Գանձասարի կաթողիկոսը ցաւից ու կսկիծից վախճանվեց: Եւ այնպիսի մի մարդուց, ինչպիսին էր Եսային, ճիշտ որ կարելի էր սպասել այդ տեսակ մի մահ. տեսնել քառորդ դար փայ-

փայած գաղափարների խորտակումը և խորապէս չը ցնցվել—ամէն մարդ չէ կարող...

Սակայն գաղափարի վերջնական խորտակում չէր դա։ Ինչպէս երևում է, խռովութիւնները շուտ վերջացան, չը մտցնելով բանակի մէջ ծանր անկարգութիւններ։ Մենք տեսնում ենք նոյն դրութիւնը. գործի գլուխ է անցած Մէլիք-Աւանը և եռանդով շարունակում է հոգատարութիւնները։ Հայերը, այնուամենայնիւ, մի նոր բան գտնել չը կարողացան՝ իրանց դրութիւնից դուրս գալու համար։ Նրանք շարունակեցին անել այն, ինչ անում էր Եսայի կաթողիկոսը։ Մէլիք-Աւանը, թողնելով Սղնախում Օհան, Աբրահամ, Բաղի և Աւագ իւզբաշիներին, ինքը իր եղբայր Թարխան-իւզբաշու հետ գնաց Բագու՝ տեղական ռուս հրամանատարի հետ անձամբ խօսելու համար։ Ոչինչ չը կարողանալով անել այդտեղ, նա Թարխանին և իր հետ եղած մի քանի հայերին ուղարկեց Պետերբուրգ՝ նորից բանակցութիւններ վարելու, նորից օգնութիւն հայցելու համար։ Նամակը, որ տարան այդ պատգամաւորները Պետրոս II կայսրին, գրված էր 1729 թւի փետրվարին։ Այդտեղ Մէլիք-Աւանը, իբրև հայ զօրքի գլխաւոր հրամանատար, ասում էր թէ Թարխանը և նրա հետ եղողները իրանից լիազօրութիւն ունեն Պետերբուրգում ամէն ինչ բացատրելու։ Միայն մի բանով էր հպարտ լեռնցի հրամանատարը—զինուորի անաղարտ պատւով։ Նա դնում էր ռուսաց կառավարութեան առաջ այն

հանգամանքը, որ ահա եօթներորդ տարին է, ինչ կազմվել է հայկական զօրքը, նա անդադար կռիւներ է անում օսմանցիների դէմ, բայց դեռ գերի չէ տուել թշնամուն, ընդհակառակն, շատ անգամ է ջարդել նրան։ «Վասն Աստուծոյ խաթրին մեզ մին օգնութիւն անես,—գրում էր այդ քաջ և համեստ զինուորը.—այսօր շատ նեղ տեղ ենք, լուսահոգի մեծ թագաւորի գերեզմանի խաթրին մեզ քոմակ և օգնութիւն հասուցանես որ անօրէնի ձեռքին էսիր չի լինիմք, վերև Աստուած, ներքև քո հրամանքդ ես» *)։

Թարխան-իւզբաշին մանրամասն տեղեկութիւններ հաղորդեց ռուսաց արտաքին գործերի Կօլլեգիային հայերի դրութեան մասին։ Նրա ասելով, հայ զօրքի թիւը այդ ժամանակ հասնում էր մօտ 30 հազարի։ Զօրքը ամրացած էր պինդ տեղերում, գտնվում էր չորս մարդկանց հրամանատարութեան տակ, շարունակ կռիւներ էր մղում օսմանցիների դէմ, երբէք չէր յաղթվել և յոյս ունէր դեռ երկար դիմադրել։ Օսմանցիները, չը նայած իրանց գործ դրած ջանքերին, չէին կարողանում հայերին հարկատու դարձնել. միայն Սղնախներից շատ հեռու մի քանի գիւղեր, որոնց հայ զօրքը օգնութիւն հասցնել չէր կարողանում, ստիպված էին մի թեթև հարկ տալ նրանց։ Երկիրը մատակարարում է այն ամենը, ինչ հարկաւոր էր զօրքին.—

*) Эзовъ, եր. 442։

կային երկաթի, պղնձի, կապարի, արծաթի հանքեր. դրանցից միայն երկաթի հանքերն էին շահագործվում, այն էլ գլխաւորապէս զէնքեր շինելու համար։ Զինագործները տեղացի հայերն էին. զգացվում էր լաւ վառօդի պակասութիւն, իսկ պղնձի և արծաթի հանքերը մնում էին առանց շահագործութեան, որովհետև հասկացող վարպետներ չը կային։ Չը կային նոյնպէս և թնդանօթներ՝ դարձեալ վարպետներ չը լինելու պատճառով, և Թարխանը խնդրում էր մասնագէտներ ուղարկել հայերի մօտ։ Երկիրը այնքան առատ բերքեր ունէր, որ հայ ժողովուրդը խոստանում էր իր հաշւով պահել պահպանել ռուսաց օգնական զօրքը։

Սակայն ռուսաց կառավարութիւնը այդ նոր պատգամաւորութեան առիթով մի նոր վճիռ կայացնելու հարց չունէր։ Նրա վերաբերմունքը մնաց նոյնը, ինչ էր մինչև այդ։ Եւ ինչ նոր բան կարող էր նա անել, քանի որ Պետրոս Մեծի ծրագիրը ոչ միայն մոռացվելու վրա էր, այլ և մեծ ծանրութիւն էր դարձել պետութեան համար։ Չը կար վերանորոգիչ կայսրի նման պետական հանճարը, և նրա այնքան ջանքերով, այնքան հեշտութեամբ ձեռք բերած պարսկական մեծ, հարուստ նահանգները ոչ միայն ոչինչ օգուտ չէին տալիս գանձարանին, այլ և պատճառում էին անհագին վնասներ։ Չը կար խելացի, ժիր տնտես, և այդ ծանր բեռից ազատվելու մեծ տրամադրութիւն էր առեղծվել կառավարչական շրջաններում։ Արդէն

1729 թւականի փետրվարին Ռէշտում կնքած մի դաշնագրով Ռուսաստանը համաձայնում էր վերադարձնել Պարսկաստանին Աստրաբադի և Մազանդարանի նահանգները։ Այսպիսի դրութեան մէջ գտնվող կառավարութիւնը, ի հարկէ, ոչ օգնական զօրք տուեց հայերին, ոչ նոյն իսկ ուղարկեց նրանց խնդրած վարպետներին։ Եւ Թարխան-իւզբաշին վերադարձաւ հայրենիք, բերելով իր հետ նոյնը, ինչ բերել էին նրանից առաջ գնացողները. յուսադրութիւն, խորհուրդ՝ չը հպատակվել օսմանցիներին, դիմանալ առժամանակ, մինչև որ գործերի դրութիւնը կը պարզվի։

Այսքանը ընդհանուր գործի համար։ Բայց այս անգամ կար մի մասնաւոր նորութիւն էլ, որ վերաբերում էր հայ զօրքերի գլխաւոր հրամանատարին։ Ինչպէս երևում է, Թարխան-իւզբաշու բանակցութիւնների ժամանակ նորից արծարծվեց հայերի գոնէ մի մասի գաղթելու հարցը։ Թէև Թարխանը իր բացատրութիւնների մէջ դրականապէս յայտարարել էր թէ հայերը չեն ուզում գաղթել, բայց դա, երևի, ընդհանուր, գլխովին գաղթականութեան էր վերաբերում, իսկ մասնաւոր գաղթականութեան հարցը արգելքների չէր հանդիպում։ Գոնէ ռուսաց պետական գաղտնի խորհրդի որոշման մէջ, որ կայացել էր Թարխան-իւզբաշու հետ ունեցած բանակցութիւնների հիման վրա, ասված է որ եթէ ինքը, Թարխանը կամ նրա հետ Բագու գնացած Աւանը կամենան

մնալ ռուսաց տիրապետութեան տակ գտնվող երկիրներում, այդ բանը կը թոյլատրվի նրանց և ռուսաց կառավարութիւնը յանձն է առնում երկուսին էլ բաւարար ռոճիկներ տալ։ Թարխան-իւզբաշին վերադարձին ստացաւ 1000 րուբլի և մի սամոյրի մուշտակ։ Նոյնպիսի մուշտակ ուղարկվեց և Մէլիք-Աւանին և բացի դրանից՝ հրամայվեց Բագուի ռուս իշխանութեան տեղական արդիւնքներից տարեկան 1000 րուբլի ռոճիկ տալ իւրաքանչիւր եղբօրը։

Մէլիք-Աւանը, ուրեմն, վճռել էր թողնել Ղարաբաղը։ Թէ ինչ եղաւ Թարխանը, մենք չը գիտենք. բայց Աւանին 1729 թւականից տեսնում ենք արդէն շատ հեռու հայոց Սղնախներից։ Նա դարձել զինուոր է, դարձել հայերի հետ է, բայց ծառայում է ռուսաց կառավարութեան։

Պէտք է ի նկատի ունենալ, որ հայերը, չը նայած որ իրանք էլ ունէին զօրք, ունէին կռուող մարդկանց կարօտութիւն, բայց ցոյց տալու համար թէ որքան անկեղծ հաւատարմութիւն ունին դէպի Ռուսաստանը, կազմել էին ձիաւոր զօրքի մի բաժին, որ գործում էր Կասպիական ծովեզերքը բռնած ռուս զօրքերի շարքում։ Այդ զօրաբաժինը կոչվում էր «Հայկական Էսկադրօն»։ Սկիզբը դնողը, եթէ չենք սխալվում, Պետրոս դի-Սարգիս Գիլանենցն էր, մանրամասն յիշատակարանի հեղինակը, որի մասին խօսեցինք վերևում։ Հայրենի ազատութեան նուիրված այդ վաճառականը իր

հաշուով կազմեց մի խումբ հարիւր զինուած հայերից, որոնք ռուսների հետ մասնակցում էին պատերազմական գործողութիւններին Կասպից ծովի հարաւային ափերում և բաւական քաջութիւններ ցոյց տուին։ Ինքը Պետրոսը, ընկաւ կռուի մէջ, բայց նրա խումբը մնաց. նրա տեղն անցաւ Եղիազար Խաչատրեանը *), որ երկար ժամանակ ծառայեց, յայտնի էր Լազար Խրիստոֆորով անունով և հասաւ գեներալ-մայորի աստիճանին։ Հայ գեներալների նախահայրն էր այդ քաջ մարդը։ Նա դեռ գնդապետի աստիճանում էր, երբ Մէլիք-Աւանն էլ գնաց ստուարացնելու ռուսաց բանակում ծառայող հայ զօրաբաժնի թիւը։ Աւանը տարաւ իր հետ հինգ իւզբաշի և 232-ից աւելի զինուոր. որանցից 150 հոգի պահում էր իր հաշուով։

Այսպէս ահա, Ղարաբաղը մի նշանաւոր կորուստ էլ ունեցաւ։ Հայոց զօրքերի գլխաւոր հրամանատարի հեռանալը նշանակում էր հա զինուորութեան քայքայումը։ Արդեօք այդ քայքայումը պէտք է նկատել իբրև մի բնական հետևանք ռուս կառավարութեան բռնած անտարբեր դիրքի, թէ նա առաջացաւ Մէլիք-Աւանի հեռանալու պատճառով,—մենք այդ չը գիտենք։ Բայց որ հրամանատարը իր հռչակված անունով, իր պատերազմական ընդունակութիւններով կարող էր դեռ

*) Эзовъ, եր. 458.

շատ հարկաւոր գալ իր հայրենիքը,—այս էլ աւելի քան պարզ է։ ՄէլիքԱսանը, որ կոչվում էր նաև Մէլիք-Ասան-խան *), ինչպէս երևում է, Դաւիթ-բէկի նման ճանաչված էր Շահ-Թահմազից իբրև գլխաւոր առաջնորդ և ստացել էր նրանից «խան» և «սպասալար» տիտղոսները։ Դժբախտաբար, սա էլ, ինչպէս և Դաւիթ-բէկը, իր անունը, իր գործերն է միայն թողել մեզ. բայց թէ որտեղից էր նա, ինչ անցեալ ունէր,—դարձեալ չը գիտենք **)։

---

*) Собраніе актовъ, относ. къ обозр. исторіи Армянскаго народа, М., 1838, հատ. II, եր. 57։

**) Րաֆֆին («Խամսայի Մէլիքութիւններ», եր. 53—57 և «Դաւիթ-բէկ», II հատոր) Մէլիք-Ասանին և Դիզակի Մէլիք-Եգանին համարում է մի և նոյն մարդը և ասում է թէ Մէլիք-Եգանը յետոյ անուանվեց Մէլիք-Ասան։ Բայց սա մի խոշոր սխալ է։ «Ասան» Ղարաբաղի բարբառում «Յովհաննէս» անուան կրճատումն է և Եգանը չէր կարող մի այդպիսի անուն ստանալ։ Դիզակի Մէլիք-Եգանը շատ շինութիւններ է թողել, որոնց արձանագրութիւնների մէջ (տ. «Արցախ», Մ. եպիս. Բարխուդարեանի, Բագու, 1895, եր. 75—76) նա միշտ Մէլիք-Եգան է անուանվում։ Այդպէս է անուանում և Աբրահամ կաթողիկոս Կրետացին իր «Պատմագրութեան» մէջ (եր. 31)։ Կայ և աւելի հաստատ փաստ։ Ռուսաց կառավարութեան ուղղած մի թղթին ստորագրել են թէ՛ Եգանը և թէ Ասանը։ Եկատերինա կայսրուհու մի հրովարտակը, գրված 1726 թւին, ուղղված է Մէլիք-Եգանին և Ասան-խղբաշուն։ Ուրեմն Ասանը առանձին էր, Եգանը առանձին։ Պէտք է ասենք, որ բոլոր պաշտօնական գրագրութիւնների մէջ Ասանը անուանված է խղբաշի, բայց մենք գործ ածեցինք նրա միւս անունը—Մէլիք-Ասան, ի

1730 թւականը մենք կարող ենք ընդունել իբրև մի սահմանակէտ, երբ հայերի ապստամբական շարժումը կատարեալ անաջողութիւն է ներկայացնում։ Տեսանք որ այդ ժամանակ վերջնականապէս խլանում է անկախութեան գործը Ղափանում. տեսանք և այն, որ մօտաւորապէս նոյն այդ ժամանակ անյայտանում են Ղարաբաղի Սղնախները։ Սակայն այստեղ, Ղարաբաղում, գործը վերջնականապէս չէ մեռնում, այլ ընդունում է ուրիշ կերպարանք, դառնում է երկար ժամանակ մոխրի տակ թաղված կրակ, ապա նորից արծարծվում է։ Այնպէս որ 1730 թւականը հայերի քաղաքական շարժման վերջը չէ. նա միայն փակում է այդ գործի առաջին շրջանը, մի շրջան, որ սկսվել էր Իսրայէլ Օրիի առաջին անգամ Սիւնիքում երևան գալու օրից։

նկատի ունենալով նրա բարձր պաշտօնը և ստացած պատիւները։ Չը կամենալով այս մարդու ծագման մասին որ և է դրական բան ասած լինել, մենք ենթադրում ենք, որ Ասանը, երևի տիրում էր այժմեան Շուշու շրջականների վրա։ Մինչև այժմ էլ Շուշու հարաւ-արևելեան ժայռը կոչվում է «Ասանայ քերծ»։ Այդտեղ էլ երևում են աւերակներ, որոնք կոչվում են «Ամարաթներ» (ապարանքներ). և ժողովուրդը պատմում է որ այդտեղ էր բնակվում Ասան-խղբաշին („Արցախ“, եր. 423)։ Մենք արդէն ասացինք, որ շատ ցուցմունքներ կան, թէ Փոքր Սղնախը Շուշու մօտերքումն էր գտնվում։ Գուցէ Մէլիք-Ասանը, իբրև հրամանատար, հէնց այդտեղ էլ ապրում էր և հիմնել էր իր համար բերդ։

Ի՞նչ է ցոյց տալիս այդ շրջանը։ Ամեն յոյս, աջողութեան ամեն հաւանականութիւն հիմնված էր Պարսկաստանի անկման և ծայրայեղ թուլութեան վրա։ Հայերը ամեն կերպ աշխատում էին օգտվել այդ բարեյաջող հանգամանքից. Նրանք ամեն ինչ արին, չը խնայեցին ոչ մի ջանք, ոչ մի զոհ։ Զոհ բերողները ապստամբված երկու նահանգները չէին միայն, այլ և համարեա ամբողջ Անդրկովկասի հայութիւնը։ Զայրացած մահմեդականութիւնը Ղարաբաղի և Սիւնիքի հայ քաջերի վրէժը հանում էր ամեն տեղ, ուր կար խաղաղ, անպաշտպան հայ ազգաբնակութիւն։ Միանգամից համոզվելով թէ ռուսներին Անդրկովկաս բերողները հայերն են, թէ քրիստոնէութիւնը պաշտպանելու և ազատելու համար են այնքան պատրաստութիւններ տեսնվում, մահմեդական փանատիկոսութիւնը սկսեց ամեն յարմար դէպքում կոտորածներ անել զանազան կողմերում։

Ռուսների օրերում թշնամի էին մանաւանդ, ինչպէս տեսանք, լէզգիները, օսմանցիների այդ վայրենի գործակալները։ Նրանք դարձան և հայերի կատաղի թշնամին։ 1725 թւականի յունվարին լէզգիները յարձակվեցան Մուսկիւրի (Դերբենտի մօտ) 12 դժբախտ հայ գիւղերի վրա և սոսկալի անգթութիւններ կատարեցին։ Նրանց առաջ էր մղում այն հաւատը, որ եթէ ռուսները գրաւել են ծովի ափը, եթէ քարուքանդ են արել իրանց մի քանի գիւղերը և բռնութիւններ են գործ դրել լեռնցի

կանանց և տղամարդկանց վրա, այդ բոլորի պատճառը հայերն են, ապա ուրեմն, չարչարել հայերին, կոտորել, կողոպտել նշանակում է կատարել մի սուրբ գործ, նշանակում է մանաւանդ «սուրբ գեավուրներին» (չէկ գեավուր, այսպէս են անուանում ռուսներին) վնաս հասցնել։ Այդ բարբարոսութիւնները յուզիչ պարզութեամբ, ահաւելի գոյներով նկարագրել է մի ոմն Մարտիրոս վարդապետ՝ Դերբենտից գրած իր նամակում*)։ Յափըշտակել տարել են, ասում է նամակագիրը, «թէ ձի, թէ տաւար, թէ գոմէշ, թէ ապրանք, թէ չոր, թէ պղինձ, թէ արծաթեղէն, թէ ոսկեղէն, թէ երկաթեղէն, թէ փող, թէ մարդ, թէ կին, թէ աղջիկ, թէ տղայ, թէ ցորեն, թէ բրինձ, թէ չալթուկ»։ Սարսուռ ազդող մանրամասնութիւններից մէկը հետեւեալն է. «Շատ կին և շատ աղջկունք շատ չնամալէն կոտորվել են, ոմանք մերձ ի մահ են եղել. զերա սոքա որ մեռել և տկարացել են, սոցա տեղ մարդիկ են տանում պղծվում»։

Ահա ինչ զոհեր էր տալիս հայութիւնը քաղաքական այն շարժման համար, որ սկսվել էր լեռնային երկու նահանգներում. ահա որքան սարսափելի թանգ էր նստում այն՝ նոյն իսկ պլատոնական համակրութիւնը, որին հայերը արժանանում էին մի քրիստոնեայ պետութեան կողմից։ Արիւնոտ զոհերը անհրաժեշտ են ամեն տեղ, ուր

*) Эзовъ, եր. 415.

ծխում է ազատութեան փարօսը։ Բայց հայերի տուած այնքան զոհերը, այնքան հերոսական ջանքերը անպտուղ մնացին։ Եկաւ ժամանակ, երբ այլ ևս անհնարին էր մի բան անել։ Չը կարծենք թէ հայ զինուորութեան կազմալուծման մի միակ պատճառը տաղանդաւոր զօրապետների մահն էր կամ ասպարէզից հեռանալը։ Ո՛չ։ Եթէ չը լինէին էլ այդ մահերը, եթէ հայ քաջերը շարունակէին կանգնած մնալ իրանց տեղը, դարձեալ XVIII դարի երևանական թուականներին դրութիւնը միանգամայն անյուսալի պիտի մնար։ Եւ դրա պատճառն այն է, որ աջողութեան ամենամեծ գրաւականը—Պարսկաստանի թուլութիւնը—այդ ժամանակ յանկարծ, միանգամից, չքացաւ։ Անակնկալ կերպով, աւերակների տակից, վեր կացաւ մի ուժեղ ու ահաւոր Պարսկաստան, որ յիշեցնում էր Աքեմենեանների, Շահ-Աբաս Մեծի ժամանակները։ Թիւրքիան և Ռուսաստանը, որոնք այնպիսի հեշտութեամբ բաժանել էին իրանց մէջ պարսկական ահագին կալուածները, ստիպված եղան թողնել ամեն ինչ և հեռանալ մրցութեան դաշտից։ Մի ահաւոր հօսանք եկաւ քանդեց ու անհետացրեց Պետրոս Մեծի բոլոր ջանքերը, բոլոր ծրագիրները։ Իզուր չէր դեսպան Վօլինսկին 1715 թւին գրում. «Կարող է երևան գալ մի ուժեղ Շահ և այնուհետև նուաճման գործը կը դժուարանայ»։

Այդ Շահը երևան էր եկել։ Եւ դա Նադիրն էր։

Աւղանական հարստութեան հիմնադիր Մահմուդ-Շահը Իրանի գահի վրա երեք տարուց աւել չը կարողացաւ մնալ։ Դա մի անգութ բարբարոս էր, որ սիրում էր արեան լճերի մէջ խեղդել ամեն մի ապստամբական փորձ, որ տեղի էր ունենում Պարսկաստանում։ Ղազվինի ապստամբութիւնը ճնշելու համար Մահմուդը խնջոյքի կանչեց պարսիկ ազնուականութիւնը, ամենքին կոտորեց, ջընջեց նրանց ընտանիքները։ Մի ուրիշ անգամ, նոյնպէս խնջոյքում, նա կոտորել տուեց 3000 պարսիկ զինուորներ, որոնց ընդունել էր իր զօրքի մէջ։ Շահ-Թահմազին պատժելու համար, վայրենի արիւնարբուն նրա հօրը, դժբախտ Հիւսէին-Շահին, մի սոսկալի գործի ականատես դարձրեց. այդ թագաւորի ծերունու աչքի առաջ Մահմուդը իր ձեռքերով խեղդեց նրա որդիներին ու թոռներին, թւով հարիւր հոգի։ Անգութ բարբարոսութիւններից էր արդեօք թէ ուրիշ պատճառից, Մահմուդը ցնորվեց, իսկ նրա մարմինը սկսեց լափել մի ինչ-որ զարհուրելի բորոտութիւն։ Նա քաշվեց մի ինչ-որ անկիւն, բայց այդտեղ էլ սպասում էր նրան սպանողի դանակը։ Սպանողները նրա հարազատ աւղաններն էին. այդ ժամանակ Մահմուդը դեռ 27 տարեկան մի երիտասարդ էր։

Նրան 1725-ին յաջորդեց նրա որդի Աշրաֆը։ Սա էլ մի արիւնարբու գազան էր, բայց գըլխաւորապէս իր աւղանների վերաբերմամբ։ Պար-

սիկներին նա խնայում էր, մինչև իսկ աշխատում էր հաշտեցնել նրանց աւղանական գահի հետ և մոռացնել տալ Սէֆէվիների տունը։ Բայց Շահ-Թահմազը խանգարում էր նրան։ Մի կողմից Աշրաֆը, միւս կողմից ռուսների ու օսմանցիների արշաւանքները ստիպեցին այդ գլուխ կորցրած ու Թուլամորթ Թագաւորին, խեղդվողի նման, բռնել իւրաքանչիւր չիւղից, որ օգնութիւն էր խոստանում։ Մենք տեսանք թէ որպիսի հաճութեամբ նա ընդունեց Դաւիթ-բէկի առաջարկութիւնը։ Մի ուրիշ մարդ էլ այդ ժամանակներում իր խոնարհ ծառայութիւնները դրեց նրա տրամադրութեան տակ. այդ մարդը խորասանցի էր, յայտնի էր դարձել իբրև յանդուգն աւազակապետ և կոչւում էր Նադիր-Ղուլի (հրաշքների ստրուկ)։ Թահմազը, առանց տատանվելու, բռնեց այդ մեկնած ձեռքը։

Թողնելով աւազակի արհեստը, Նադիրը մտաւ Թահմազի ծառայութեան մէջ, փոխեց իր անունը, կոչվեց Թահմազ-Ղուլի (Թահմազի ստրուկ) և մի կարճ միջոցում դարձաւ սարսափ ազդող, հռչակաւոր զօրավար։ Պարսկաստանը զգաց որ նոր մարդ է երևացել և հաւաքեց իր բոլոր ոյժերը։ Ջէնքը ամենքից առաջ դարձրած էր, ի հարկէ, աւղանների դէմ, որոնք իրանց բարբարոսութիւններով ազգային կատաղի զայրոյթ էին առաջացրել ամբողջ Իրանում։ Նադիրը նրանց դուրս վռնդեց իր հայրենի Խորասանից, իսկ 1729-ի վերջում

սաստիկ ջարդ տուեց Աշրաֆի զօրքերին Թեհրանի մօտ։ Աշրաֆը փախաւ Սպահան, սպանեց այդտեղ Հիւսէին-Շահին, բայց «գողերի առաջնորդը» —ինչպէս նա հեգնաբար անուանում էր Նադիրին —ամեն կողմից նեղում էր նրան և նա, վերջապէս, փախաւ Աւղանստան, ուր և սպանվեց մի աւազակ ցեղի ձեռքով։ Սպահանը ազատված էր և Նադիրը մեծ հանդէսով այնտեղ մտցրեց Շահ-Թահմազին, թէև շատ նշաններով էր ցոյց տալիս որ ինքը չը պիտի լինի այդ Շահի ստրուկը, այլ ընդհակառակն։ Եւ Թահմազը հասկանում էր այդ։

Այնուհետև բացվեց պատերազմ Թիւրքիայի դէմ՝ պարսկական երկիրները յետ առնելու համար։ Նադիրը մի քանի փայլուն յաղթութիւններով հարկադրեց Թիւրքերին հաշտութիւն խնդրել։ Երբ զինադադարի ժամանակն անցաւ, Նադիրը այլ ևս կռւի դաշտում չէր, այլ արշաւել էր Հէրաթի դէմ։ Թահմազը չուզեց սպասել իր զօրավարին, այլ նախանձելով նրա փառքին, ինքը անցաւ զօրքերի գլուխը։ Բայց ժողովուրդը և զօրքը շատ շուտ տեսան թէ որքան մեծ տարբերութիւն կայ այդ անընդունակ, մոլի թագաւորի և աւշառ զօրավարի մէջ։ Թիւրքերը մի քանի անգամ լաւ ջարդեցին Թահմազին և իրանց ձեռնտու մի դաշնագիր կնքեցին նրա հետ, որով մի քանի նահանգներ զիջելով պարսիկներին, իրանց ձեռքում թողեցին ամբողջ Վրաստանն ու Հայաստանը մինչև Արաքս գետը, խոստանալով օգնել պարսիկներին՝ ռուսնե-

րին Կասպիական ափերից հեռացնելու համար։ Այդ պայմանները աւելի ևս զայրացրին պարսիկներին Թահմազի դէմ։ Օսմանեան օգնութիւնը հարկաւոր էլ չէր, քանի որ ռուսները չէին մտածում զէնք վերցնել Պետրոս Մեծի ժառանգութիւնը պահպանելու համար. 1732 թւականի յունվարին Ռէշտում կնքված դաշնագրութեամբ նրանք յետ դարձրին Կասպիական ամբողջ ծովափը մինչև Կուր գետը, պահելով իրանց ձեռքում միայն Բագուն և Դերբենտը։

Այդ միջոցին Նադիրը, Շահի աչքից ընկած, գտնվում էր Խորասանում։ Թահմազը, սակայն, կանչեց նրան իր մօտ և այդ անխելքութեան համար լաւ պատիժ ստացաւ։ Նադիրը մենակ չը մտաւ Սպահան, այլ 50 հազար զօրքի գլուխ անցած. նա գահընկէց արաւ Թահմազին և Իրանի շահինշահ հռչակեց նրա վեց ամսական Աբաս անունով որդուն։ Երբ այդ մանուկը թագադրվում էր, Նադիրը, տեսնելով թէ ինչպէս է նա բղաւում, ասաց. «Հանգստացիր, Շահ, քո կորցրած նահանգները շուտով կը վերադառնան քո իշխանութեան տակ»։ Դա հեգնութիւն՚ էր. Իրանի իսկական տէրը ինքը, Նադիրն էր իր եղբայրների և որդիների հետ։

Նորից պատերազմ յայտարարվեց Թիւրքիայի դէմ. աջողութիւնը փոփոխակի էր, բայց և այնպէս, Նադիրը ցոյց տուեց թէ ինչ զօրավար է ինքը։ 1735-ին նա պատերազմը փոխադրեց հիւ-

սիսային կողմերը։ Յունիսի 14-ին Արփաչայի հովտում Նադիրը 50 հազար զօրքով սոսկալի մի ջարդ տուեց օսմանեան բանակին, որ թւով երկու անգամ մեծ էր. սէրասքէր փաշան և 20 հազար օսմանցիներ ընկան այդ պատերազմում, որին ներկայ էր և Էջմիածնի Աբրահամ կաթողիկոսը։ Յաղթութեան հետևանքն այն էր, որ Վրաստանը, Հայաստանը, Շիրվանը նորից անցան Պարսկաստանին։ Այս մասին նա մի չարախնդութեամբ հաղորդեց և ռուսաց կառավարութեան. ռուսներին նա արհամարհում էր, ասելով թէ աւելներով պիտի դուրս անէ նրանց պարսկական երկիրներից։ Եւ ռուսները շտապեցին հեռանալ նաև Բագուից ու Դերբենտից, համաձայն այն դաշնագրի, որ մի քանի ամիս դրանից առաջ կնքվել էր պարսից բանակում, Գանձակի մօտ։

Մի կարճ միջոցում Պարսկաստանը էլի իր հին սահմաններն ստացաւ։ Դա քիչ էր։ Եւրոպայում էլ տարածվեց Նադիրի հռչակը և ամենքը սպասում էին որ Պարսկաստանը կը ստանայ իր հին դիրքը, այսինքն կը դառնայ ամենախոշոր զինուորական պետութիւնը Առաջաւոր Ասիայում։ Կարո՞ղ էր Նադիրը բաւականանալ մի մեծ, տաղանդաւոր զօրավարի փառքով, երբ ամեն ինչ ասում էր թէ նա պիտի լինի իր ստեղծած պետութեան գլուխը։ Հէնց այդ միջոցին էլ մանուկ Շահ-Աբասը դայեակների ձեռքում կեանքից զրկվեց. Թահմազը աքսորատեղում էր վախճանվել կամ

սպանվել։ 1736 թուականի ձմեռը Նադիրի հրամանով Մուղանի դաշտը հաւաքվեցան Պարսկաստանի բոլոր կառավարիչները, աշխարհական և հոգևոր պետերը։ Կանչված էր և Աբրահամ կաթողիկոսը. եկել էին Արարատեան երկրի, Նախիջևանի և այլ կողմերի հայ մելիքները։ Կազմվեց ահագին բանակ։ Նադիրը առաջարկեց այդ բազմութեան մի թագաւոր ընտրել Պարսկաստանի համար. և ով կը համարձակվէր չասել որ այդ թագաւորը ինքը, Նադիրն է։ Մարտի 10-ին, Նովրուզ-բայրամի օրը, Նադիրը հանդիսաւոր կերպով թագադրուեց. Աբրահամ կաթողիկոսն էր սուրը նրա մէջքին կապողը։ Սէֆէվիների տոհմը վերջացաւ։ Մի ահաւոր, խելօք և հեռատես բռնակալ ունէր այժմ Պարսկաստանը։ Բոլոր դժբախտութիւնների պատճառ դարձած պարսիկ հոգևորականութիւնը այն սաստիկ սանձահարվեց, որ չը յանդգնեց ձայն հանել, երբ Նադիրը, իբրև սիւննի, հրամայեց միացնել շիա և սիւննի դաւանութիւնները և վերացնել մէջ տեղ եղած բոլոր խտրութիւնները։

Այդ ահաւոր բռնակալը, որից դողում էր Արևելքը, բախտի բերմունքով, մի առանձին սէր և համակրութիւն ունէր դէպի հայոց խեղճ կաթողիկոսը, կատարում էր նրա խնդիրքները, տալիս էր Էջմիածնին զանազան արտօնութիւններ։ Ի՞նչպէս էր Աբրահամ կաթողիկոսը արժանացել այդ բախտին—յայտնի չէ։ Նա մի առանձին խելք ու ընդունակութիւն ունեցող մարդ չէր, բայց ինչպէս

երևում է, լաւ իւրացրել էր արևելեան քաղաքականութիւնը և գիտէր հաճոյանալ։ Արդեօք սա էր պատճառը, թէ մէջ տեղ դեր էր կատարում զանդաւոր բռնակալներին յատուկ անհասկանալի քմահաճութիւններից մէկը,—իրողութիւնն այն է, որ հայոց ծերունի կաթողիկոսը իր դիրքը և վայելած համակրութիւնը յաճախ ծառայեցնում էր իր դժբախտ ժողովրդի օգտին, աղերսաւոր հանդիսանալով ահարկու նուաճողի առաջ, խնամք և գթութիւն խնդրելով նրանից։ Այսպէս, Նադիրը հրամայել էր որ Արարատեան երկրից և Թիֆլիսից երեք-երեք հարիւր տուն հայեր գաղթեցնեն Պարսկաստան։ Կաթողիկոսը այդ միջոցին Նադիրի հետ Թիֆլիսում էր գտնվում։ Ցուցակագրված հայերը լացով և աղաչանքով ընկան նրա ոտները և նա կարողացաւ իր պաղատանքներով ազդել բռնակալի սրտի վրա ու փոխել տալ այդ սարսափելի վճիռը։ Բայց Արարատեան երկրին օգնել չը կարողացաւ կաթողիկոսը. նշանակված տները քշեցին տարան և Նադիրը միայն այն արաւ որ հրամայեց տնային անասուններ տալ այդ դժբախտներին։ Նոյնպիսի բարերար հանդիսացաւ կաթողիկոսը և Մուղանի դաշտում. այստեղ նա փողով, աղաչանքներով ազատեց բազմաթիւ հայ գերիներ, խնամեց նրանց և ուղարկեց այս ու այն կողմը։

Երախտագիտութեան զգացմունքը թելադրեց Աբրահամ կաթողիկոսին նկարագրել Նադիրի, այդ «երկրորդ Ալէքսանդրի» (Մակեդոնացու), ինչպէս

ինչն է անուանում, մի քանի գործերը և յատկապէս Թագաւորութիւնը *)։ Այդ փոքրիկ աշխատութիւնը վերջինն է մեր այն պատմագրութիւնների կամ, աւելի ճիշտ ասած, ժամանակագրութիւնների շարքում, որի սկիզբը դրվեց V դարում։ Աբրահամ կաթողիկոսը վերջինն է այն հայ հեղինակներից, որոնք իրանց ժամանակի դէպքերը գրի էին առնում. և նրա մէջ խտացած են մեր այդ տեսակ գրողների բոլոր պակասութիւնները։ Սաստիկ սահմանափակվելով իր նիւթի շրջանում, նա ճանաչում է միայն Նադիրին և իրան, երկար մանրամասնութիւններով պատմում է իր ստացած պարգևները, Նադիրի սարքած հանդէսները, բերում է Մուղանում հաւաքված խաների և բէկերի ցուցակը, բայց հայերի այն ժամանակվայ դրութեան, գործերի մասին ոչինչ չէ գրում։ Հետաքրքրական են նրա ճանապարհորդութիւնները։ Էջմիածնից Մուղան գնալիս և այնտեղից վերադառնալիս, նա այցելեց Ղարաբաղի և մանաւանդ Սիւնիքի այն բոլոր տեղերը, ուր ընդամենը մի 7—8 տարի առաջ բորբոքված էր հայկական ապստամբութիւնը, ուր գործում էին Մէլիք-Աւանը, Դաւիթ-բէկը, Մխիթար-սպարապետը։ Սակայն այդ գործերի և գործիչների մասին

*) Տպուած է Վաղարշապատում 1870 թւին «Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ պատմագրութիւն անցիցն իւրոց և Նադր Շահին պարսից» վերնագրով։

—ոչ մի խօսք անգամ։ Հայոց կաթողիկոսը միայն ահարկու Նադիրի անձով է զբաղված, միայն նրա ներբողն է գրում և նրան չէ հետաքրքրում հայերի սկսած այն մեծ գործը, որ աւելի կարևոր էր քան Նադիրի թագաւորութիւնը։ Մենք մինչև անգամ չենք տեսնում այդ յիշատակարանի մէջ թէ ինչպէս էր վերաբերվում Նադիրը ապստամբութեան գլուխ կանգնած հայ մէլիքներին, ինչու Մուղանում Ղարաբաղի մէլիքներից ներկայ էր միայն Մէլիք-Եգանը։ Նկատենք այստեղ, որ այս հայ մէլիքին Նադիրը պատիւներ արեց, նշանակելով Ղարաբաղի մէլիքների գլխաւոր։ Այդ ժամանակից է կարծեմ, որ Ղարաբաղում վերջնականապէս կազմակերպվում են հինգ գլխաւոր մէլիքութիւնները, որոնք կոչվում են Խամսայի մէլիքութիւններ։

Իր գովված «երկրորդ Աղէքսանդրին» Աբրահամ կաթողիկոսը երկար ժամանակ չը տեսաւ. նա վախճանվեց 1737-ին, մինչդեռ Նադիրը դրանից յետոյ միայն իսկապէս հասաւ Աղէքսանդրի փառքին. նա նուաճեց Ղանդահարը, Հնդկաստանը, որտեղից անհուն հարստութիւններ դուրս բերեց, Սամարկանդը, Խիվան, Բուխարան։ Պարսկաստանը Եփրատից մինչև Հինդոս գետն էր ձգվում, իսկ հիւսիսից նա մինչև անգամ անցել էր Կովկասեան սարերի միւս կողմը։ Բայց մեծ աշխարհակալը դարձաւ և մի զարհուրելի բռնակալ։ Մի անգամ նրան սպանելու փորձ եղաւ. փորձը չա-

ջոլվեց, բայց Նադիրը դրանից կասկածոտ ու վայրենի մի դահիճ դարձաւ այն երկրի համար, որը հասցրել էր այդքան մեծ փառքի։ Ու սկսեց անհնարին, հրէշաւոր գազանութիւններ. կուրացրեց իր որդուն, կտրած գլուխներից բուրգեր էր կուտել տալիս այս ու այն կողմերում։ Շիրազի ամբողջ ազգաբնակութիւնը կոտորել տուեց, Մէշէդում հանել տուեց բոլոր բնակիչների մի կամ երկու աչքերը։ Պարսկաստանը անապատի էր փոխվում. ազգաբնակութիւնը ահագին խմբերով փախչում էր օտար երկիրներ։

Հայերն էլ իրանց բաժինն ունեցան այս հրէշաւոր անգթութիւնների մէջ։ Նադիրը յանձնարարեց Նախիջևանի խանին իմանալ թէ ինչ տրամադրութիւն կայ ժողովրդի մէջ իր անձի վերաբերմամբ։ Կանչելով իր մօտ տեղացի նշանաւոր անձանց, որոնցից երեսուն երեք հոգի հայերից էին, խանը իրան կեղծեց բռնակալ Շահից զզված մի մարդ և խորհուրդ էր հարցնում թէ արդեօք լաւ չէր լինի որ իրանք էլ փախչեն և ազատվեն։ Կանչվածները միամտութիւն ունեցան հաւատալու և յայտնելու թէ, իրաւ, իրանք էլ այդպէս են մտածում։ Խանը ցուցակագրեց նրանց, որպէս թէ հարկաւոր կարգադրութիւններ անելու համար, իմացաւ և նրանց համախոհների անունները, տեղը և ապա այդ բոլորը յայտնեց Նադիրին։ Պատասխանը բերին սարսափելի Շահի դահիճները. նրանք կուրացրին բոլոր ցուցակա-

գրածներին, իսկ նրանց կայքը յափշտակուեց սոսկալի անգթութիւններով. անմեղ երեխաներն անգամ տանջանքների էին ենթարկվում *)։ Բայց Նադիրի անգթութիւնները աւելի անտանելի էին Նոր-Ջուղայում. այդտեղի հայերի համար նա հանդիսացաւ մի կատարեալ ժանտախտ։ Ու դժբախտ ժողովուրդը չը կարողացաւ դիմանալ այդ բարբարոսութիւններին. զանազան կողմերում ապստամբութիւններ էին ծագում։ Ժողովրդի խորին ատելութիւնը սարսափով խեղդելու համար Նադիրը վճռեց կոտորել ամբողջ Սպահանը։ Բայց 1744 թւի մայիսի 24-ի երեկոյեան Սալահ-բէկ անունով մի զինուորական պաշտօնեայ, չորս ընկերների հետ, մտաւ «երկրորդ Ալէքսանդրի» վրանը, կտրեց նրա գլուխը։ Իրանի փառքը սկսեց դարձեալ նսեմանալ։

Մեզ մնում է տեսնել թէ ինչ եղան հայերի ապստամբական շարժման կենդանի մնացած պարագլուխները։ Կասպից ծովի ափից յետ քաշվելուց յետոյ Հայկական Էսկադրօնը շարունակեց իր ծառայութիւնը ռուսաց զօրքերի շարքում։ 1734 թուականին Մէլիք-Աւանը, մի խնդրագրի մէջ յիշատակելով իր մատուցած ծառայութիւնները, խնդրում էր. 1) վերադարձնել իր սեփական միջոցներից իր զօրախմբի վրա ծախսած 8000 ռուբլին. 2) հիւսիսային Կովկասի ռուսաց սահմաններում գտնվող 9

*) Զամչեան, Գ., եր. 816։

հայ գիւղերը շնորհել իրան իբրև սեփականութիւն. 3) շնորհել նաև գեներալ-մայորի աստիճան, որպէս զի հայերը դրանով աւելի ևս գրաւվեն և մտնեն ռուսաց ծառայութեան մէջ. 4) թոյլ չը տալ որ թիւրքերի, պարսիկների և լէզգիների գերութիւնից ազատված և Ռուսաստանում գտնվող հայ գերիները վերադառնան հայրենիք, որպէս զի այդպիսով հայերի քանակութիւնը ռուսաց պետութեան մէջ բազմանայ։

Այդ առաջարկութիւններն ընդունվեցան և Մէլիք-Աւանը, ինչպէս երևում է, այնուհետև զբաղված էր հայոց գաղթականութեան հիմք դնելու գործով։ Թերեքէ գետի ճահճոտ, վատառողջ ափերի վրա հայ գիւղեր գոյացան։ 1735 թւին այդ գաղթականները հիմնեցին Ղզլար քաղաքը։ Նրանք պէտի կռւէին անհիւրասէր բնութեան շատ և շատ արգելքների դէմ և տոկուն ու յամառ աշխատասիրութեամբ կարողացան ծաղկեցնել այդ անապատ ու վայրենի տեղերը։ Մէլիք-Աւանին մենք մէկ էլ տեսնում ենք Ելիսավետա Պետրօվնա կայսրուհու ժամանակ (1741—1761), Պետերբուրգում։ Արքունի պալատում սիրալիր ընդունելութիւն է գտնում հայ նշանաւոր զօրապետը. կայսրուհին նրա թոռան նշանակից փրէյլին։ Մէլիք-Աւանի տոհմից առաջացան իշխան Սմբատեանները, իշխան Մէլիքեանները, Հայրապետեանները *)։

*) Собраніе актовъ, II, եր. 57։

Շատ ողբալի էր Մինաս վարդապետի վախճանը։ 1736 թւականին նա էլ մի երկար գրութիւն է ներկայացնում ռուսաց կառավարութեան՝ իր կատարած գործերի մասին։ Այդ թղթից մենք տեսնում ենք որ Իսրայէլ Օրիի ընկերը շարունակում է լինել Ռուսաստանի հայոց առաջնորդ, արդէն ծերացած է, ապրում է մեծ մասամբ Աստրախանում, բայց ոչինչ համարում չունի հայերի մէջ, զուրկ է միջոցներից։ Խնդրում է կայսերական հրամանով հաստատել իրան առաջնորդական պաշտօնի մէջ, հրատարակեցնել հայերին իր իշխանութեան և զինուորներ տալ, որպէս զի նրանց հետ գնայ Աստրախան և այդտեղ թշնամիներից ապահով ապրէ պետական ռոճիկով։

Վերջերում Մինաս վարդապետը խնդրեց որ իրան ընդունեն յունադաւանութեան մէջ և ռուսաց եկեղեցու պաշտօնեայ դարձնեն։ Բայց կարծեմ այդ էլ չը ստացաւ...

ԳԼ. Դ.

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

I

Պատմութեան ընթացքը այժմ մեզ հարկադրում է թողնել բուն Հայաստանը և գնալ մի բուռն հայերի ետևից, որոնք բնակութիւն հաստատեցին Հնդկական թերակղզու զանազան անկիւններում։ Վաճառականներ են դրանք, բայց մեր ազգի մտաւոր և քաղաքական պատմութեան մէջ առանձին տեղ և առանձին ուշադրութիւն գրաւելու իրաւունքն են ստացել իրանց գործերով։ Ահա թէ ինչպէս։

Մենք տեսանք հայութեան երկու խոշոր մասերում սկսված շարժումները. արևմուտքում—գրական, արևելքում—քաղաքական։ Մանրամասն նկարագրելով այդ երկու շարժումները, մենք ընդգծեցինք այն շատ կարևոր և բնորոշ հանգամանքը, որ դրանք չը միացան իրար հետ, մնացին առանձնացած, կղզիացած, և պարսկա-թիւրքական

մշտական սահմանագլուխը այն մեծ անջրպետն էր, որի մի կողմում գրական շարժումն էր, առանց քաղաքական գաղափարների, իսկ միւս կողմում քաղաքական շարժումն էր, առանց գրական գործունէութեան։ Հարկաւոր է ուշադրութեամբ վերաբերվել այս հանգամանքին։ Մխիթար Սեբաստացին և Իսրայէլ Օրին իրար չեն ճանաչում, գրիչը և սուրը չեն միանում, թէև երկուսն էլ հաւասար չափով հարկաւոր են հայերին, իբրև քաղաքական մարմին կազմող մի համայնքի, որ արևելեան հարցի մէջ այնքան աղէտալի ճակատագիր ունէր։ Եւ այդ կղզիացումը, ինչպէս կարող ենք եզրակացնել մինչև այժմ պատմածներից, իր խակնիքն է գնում երկու շարժումների վրա էլ։ Գրական շարժումը, խորթ մնալով այն սկզբունքներին, որոնք քարոզվում էին Հայաստանի արևելքում վառօդի միջոցով, շարունակեց հին ուղղութիւնը, ամփոփված մնալով համարեա միմիայն կրօնական-բարոյական նեղ շրջանների մէջ, չը համապատասխանելով ազգի իրական պահանջներին, ժամանակի ոգուն և տրամադրութեան։ Միւս կողմից էլ քաղաքական շարժումը, չունենալով իր հետ այնպիսի հզօր գործօն, որպիսին է գրականութիւնը, չը կարողացաւ ժողովրդականութիւն ստանալ իր սահմաններից դուրս, դառնալ հանրային գաղափար, զինուորագրել մեծ մասսաներ, տարածել, լայնացնել շարժումը։ Ու այդ շարժումը, ինչպէս

տեսանք, ամփոփված մնաց միայն Ղարաբաղի և Սիւնիքի լեռներում։

Այս դրութիւնը, կարելի է համարձակ ասել, պիտի երկար շարունակուէր Հայաստանի հողի վրա։ Բայց ահա XVIII դարի երկրորդ կէսից երևան է գալիս հեռաւոր Հնդկաստանում մի փոքրաթիւ հայ գաղթականութիւն, որ սկսում է կատարել արևմտեան և արևելեան հայութիւնների շարժումները միացնողի դեր։ Այդ գաղթականութիւնը հասկանում է երկու կողմերի պակասութիւնները, որոնք առաջանում էին միակողմանիութիւնից և տգիտութիւնից, մի հզօր խթան է հանդիսանում՝ մտաւոր զարգացումը և քաղաքական ազատութիւնը միմեանց մօտեցնելու, միմեանց հետ եղբայրացնելու համար։ Այս է ահա հնդկական գաղթականութեան ամենախոշոր երախտիքը։ Նրան հետևում է, նրա պէս գործում է և մի այլ հայ գաղթականութիւն—Ռուսաստանի հայ գաղթականութիւնը։ Եւ համարեա ամբողջ մի դար, XVIII-ի կէսից մինչև XIX-ի կէսը, այդ երկու հայկական հատուածների ազդեցութիւնը ահագին է եղել։ Անտես անել կուլտուրական այդ մեծ ոյժը, չէ կարելի. առանց դրա հետ ծանօթանալու չէ էլ կարող լինել ամբողջացրած, լիակատար պատմութիւն։

—

Որտեղից էին Հնդկաստանի հայերը։ Այս հարցը մեզ տանում է Նոր-Ջուղա։ Պարսից մայ-

րաքաղաքին կպած այս վաճառականական գաղութի կատարած դերի հետ մենք ծանօթ ենք արդէն *)։ Ահա այդ վաճառականներից էլ գլխաւորապէս կազմուեց հնդկական գաղթականութիւնը։

Հետևելով Ջուղայեցի հայերի ճակատագրին, մենք տեսանք մի զարմանալի գիծ։ Դա այն է, որ այդ ընդունակ, ժիր վաճառականները ստեղծում են իրանց համար նախանձելի բարեկեցութիւն, բայց հէնց այդ բարեկեցութիւնն էլ դառնում է նրանց դժբախտութիւնների պատճառ։ Այդքանը բաւական չէ։ Դժբախտութիւնները չեն ոչնչացնում նրանց, այլ կարծես շատ հարկաւոր են, որպէս զի նրանք աւելի առաջադէմ, աւելի գործունեայ և հռչակաւոր դառնան։ Քանի որ Ջուղան իր հին տեղն էր, Արաքսի մերկ ու ժայռոտ ափի վրա, նա տալիս էր անվախ, համարձակ վաճառականներ, որոնք պտտում էին աշխարհի չորս կողմում և ոսկի ու փարթամութիւն էին հաւաքում իրանց տների մէջ։ Այդ հարստութիւնն էլ պատճառ դարձաւ որ Ջուղան աւերվի Շահ-Աբասի ձեռքով և փոխադրվի Պարսկաստանի սիրտը, Սպահան։ Լացով ու կսկիծներով թողեց ժողովուրդը իր բնակութիւնը. և իր Արաքսի, իր ժայռոտ գետափի սիրով էր տոչորվում հեռաւոր, անդարձ պանդխտութեան մէջ։ Բայց Նոր հայրենիքում նա դարձաւ

*) „Հայկ. Տպ.“, հատ. I.

աւելի բարեկեցիկ, աւելի փարթամ. Նրա առեւտրական ընդունակութիւնները գնահատվեցան Շահ-Աբասի կողմից. Նրան փաղաքշում էին, նրան ամէն տեսակ արտօնութիւններ էին տալիս։ Սկսվեց Ջուղայեցիների հանրային գործունէութիւնը. Նրանք բաց են անում իրանց քսակը Հայաստանի ժողովրդի համար, հանդիսանում են մեկենասներ, զարգացնում են իրանց մէջ ազգային կրթութիւնը, իրանց փողով, իրանց ձեռք բերած մեծ հեղինակութեամբ ազդում են հայերի մեծ մասի վրա, դառնում են ղեկավարող, ուղղութիւն տուող իշխանաւորներ։

Բայց Ջուղայեցու ճակատագիրը չը փոխվեց։ Այդ բացառիկ, ամէն կողմով նախանձելի դրութիւնը չէր կարող մշտատեւ լինել Պարսկաստանի պէս մի երկրում։ Որքան աճում ու զարգանում էր Ջուղայի հարստութիւնը, այնքան ակներեւ էր դառնում, որ այդ հայ վաճառականներին սպասում է մի դառն ու վշտալի ապագայ։ Առատ դիզվում էին հարստութիւնները վաճառականական դասութի մէջ. փառաւոր ապարանքներ էին կառուցվում, մի-մի պալատներ, զարդարված ոսկով ու արծաթով, գեղեցիկ նկարներով։ Այդ ապարանքներում յաճախ հիւրընկալվում էին պարսից թագաւորները, որոնք գտնում էին այդտեղ ամէն երկրաւոր բարիքների առատութիւն, արեւելեան ճոխ փարթամութիւն։ Բայց Իրանի տէրերը դեռ չէին նախանձվում իրանց հովանաւորութեան տակ այդ-

քան անօրինակ բարեկեցութեան հասած գեաւուրներին։

Այդպէս շարունակվեց մինչեւ XVII դարի վերջերը։ Երբ Պարսկաստանն ընկաւ, սնանկացաւ, եւ պարսից արքունիքը կարօտողի, մուրացկանի օրին հասաւ, փոխվեց, ի հարկէ, եւ Ջուղայի դրութիւնը։ Դժբախտ եւ ապուշ Շահ-Հիւսէյնի ժամանակից Ջուղան դառնում է պարսկական արքունիքի համար դեռ չը շահագործված մի ոսկեհանք։ Սպահանի կառավարիչները չէին կարող չը տեսնել իրանց աչքի առջեւ փռված անպաշտպան, բայց շատ ճոխ բարեկեցութիւնը մի այնպիսի ժամանակ, երբ Իրանի արեգակնափայլ վեհապետը փող չունէր իր գինեխմութիւնների, իր հարէմի, իր անթիւ մօլլաների համար։ Եւ Ջուղայում բարձրանում են հեծեծանքներ. այնտեղ է մտնում պարսկական հարստահարութիւնը՝ զօռով յափշտակելու, խլելու համար։ Այդ օրվանից Ջուղայի աւերումը միայն ժամանակի հարց էր դառնում։

Դժբախտութիւնները հէնց սկզբից հայերի ձեռքով մտցրվեցին Ջուղայի մէջ։ Կրօնամոլ Շահ-Հիւսէյնը, ի հարկէ, աշխատում էր որ իր երկրում ամէնքը մահմեդական լինեն։ Հին կրակապաշտ պարսիկների (գեաբրների) մի մասը կրօնափոխ անելուց յետոյ, նա ուշադրութիւնը հայերի վրա դարձրեց։ Չը դիմելով բռնութիւնների, նա առաջարկեց հայերին ընդունել մահմեդականութիւն։ Մէջ տեղ պիտի գործէին յօժար կամքը, համոզ-

մունքը։ Անշուշտ Հիւսէին-Շահը այստեղ ղեկավարվում էր այն համոզմունքով, որ քրիստոնէութիւնը ոչնչութեան է հասել, որ նա չէ կարող խլամի վարդապետութեան պէս հաստատուն ու որոշ սկզբունքներ պաշտպանել։ Այդ մտքի մէջ նրան հաստատում էին, երևի, կրօնական կատաղի կռիւները, որոնք տեղի ունէին նրա ժամանակ Ջուղայում։ Ոչինչ հեղինակութիւն չէր կարող ունենալ քրիստոնէութիւնը պարսից աչքունքի առաջ, քանի որ կաթօլիկ քարոզիչները և հայ վարդապետները իրար գզգզում էին, իրար անիծում, իրար հերձուածող, կռապաշտ անուանում։ Եւ այդպիսի ժամանակ բնական էր մօլլաներով շրջապատված մի Շահի համար բացարձակ ասել հայերին թէ կայ աւելի լաւ և բարձր կրօն և դա—խլամն է։ Համոզմունքով ազդելու համար Շահը սարքում էր կրօնական վիճաբանութիւններ վարդապետների և մօլլաների մէջ, որոնք պիտի հաստատէին թէ ո՛ր կրօնն է կատարեալ։ Բայց երբ պալատական մօլլաները անկարող եղան յաղթել հայ վարդապետներին, Շահը սկսեց անցկացնել այն միտքը, որ իրան պարզապէս ցանկալի է մահմեդական տեսնել իր բոլոր հաւատարիմ հպատակներին։

Եւ խլամը բաւական լաւ որս ունեցաւ Ջուղայեցիների մէջ։ Գործ էին ածում քաղաքական այն միջոցները, որոնք դեռ խլամի առաջին դարերում էին մշակված՝ մահմեդականութիւն ընդունելը

ամեն կողմով ձեռնտու և շահաւէտ դարձնելու համար։ Փառքի և նիւթական շահի խոստումներով կուրացած շատ հայեր խլամացան։ Սրանց միջոցով մօլլաները գեղեցիկ պատրուակ գտան միջամտելու հարուստ հայերի գործերի մէջ։ Ուրացողները, իրանց նախկին դաւանակիցներին կեղեքելու նպատակով, ամեն տեսակ սուտ մատնութիւնների, զրպարտութիւնների էին դիմում. Նրանք ունէին սուտ վկաների բազմութիւն, մանաւանդ գիտէին, նեղը ընկած ժամանակ, բարձրաձայն, ամբոխի և իշխանութեան առաջ, արտասանել «հաւատս հայհոյեց» խօսքերը, որոնք այնքան սարսափելի են մահմեդական աշխարհում։

Ու Ջուղայի մէջ բոյն դրին սանձարձակ բռնութիւնները։ Կառավարութիւնը, կրօնափոխ հայերի մատնութիւնների վրա հիմնվելով, տուգանքներ էր ենթարկում հայերին, գրաւում էր նրանց հարստութիւնները։ Աւելի սարսափելի էին այդ հրամանները կատարող պաշտօնեաները։ Նրանք սոված գայլերի նման ընկնում էին այնքան չաղ պատառներ ներկայացնող հայերի վրա, մէկին երկու երեք էին առնում, չարչարում, տանջում էին իրանց զոհերին։ Հարստահարութիւնների ընդարձակ ասպարէզ դարձած Ջուղան այլ ևս չէր կարող պահել իր մէջ մի վաճառականական համայնք։ Եւ նա ընկնում էր, դատարկվում։ Հալածանքները, պէտք է ասել, դեռ ընդհանուր չէին. Նրանք ուղղված էին դեռ անհատների դէմ։ Բայց այդ հան-

գամանքը մեծ նշանակութիւն չունէր. գլխաւորն այն էր, որ ոչ ոք ապահով չէր կարող լինել թէ կեղեքումների զոհ չի դառնայ. ամեն ինչ ցոյց էր տալիս որ այլ ևս չէ կարելի յոյս դնել պարսից կառավարութեան վրա։ Եւ ջուղայեցիները սկսեցին որոնել բնակութեան այլ տեղեր։ Նրանք սկսեցին գաղթել։

XVIII դարի սկզբում գաղթականութիւնը արդէն զգալի չափեր ընդունած ենք տեսնում։ 1705 թւականին Ջուղայում դատարկ մնացած տների թիւը հասնում էր 159-ի *)։ Նրանց տէրերը հեռացել էին, վերադարձի մասին չէին էլ մտածում, ուստի երկուորներ բնակվեցան նրանց մէջ։ Գաղթականութիւնը բացարձակ կերպով չէր տեղի ունենում, ոչ էլ մեծ-մեծ խմբերով։ Հատ-հատ մարդիկ, ծածուկ կերպով, թողնում էին իրանց տաքցրած բոյները ու փախչում էին պարսկական իրականութիւնից։ Բայց նրանք ցիրուցան չէին դառնում. վաճառականութեան յարմար տեղեր որոնելով, նրանք ուղևորւում էին դէպի վաճառաշահ կենտրոնները։ Մեծ մասը դիմում էր դէպի հարաւ, դէպի Բուշիր, Պարսից Ծոցի այդ նաւահանգիստը, իսկ այնտեղից անցնում էր Հնդկաստան։

Այդ խաղաղ գաղթականութիւնը գուցէ այնքան չը փութացնէր Ջուղայի քայքայումը, եթէ Շահ-Հիւսէինի անպէտք կառավարութիւնը քաղա-

*) «Պատմ. Ն. Ջուղայու» հատ. I, եր. 293։

քական տագնապների դուռ բացած չը լինէր։ Ջուղան Սպահանի արուարձանն էր, իսկ Սպահանը, ինչպէս գիտենք, այն գլխաւոր բեմն էր, ուր տեղի ունեցան այնքան սասանեցնող դէպքեր և յեղափոխութիւններ։ Սպահանի այս վիճակը սաստկացրեց այն աղէտները, որոնք թափվում էին Ջուղայի գլխին և չարունակ աւերում էին նրան։

Այստեղ շատ հետաքրքրական կը լինէր լուծել մի հարց.—ինչպէս վերաբերվեցան ջուղայեցի հայերը դէպի Իսրայէլ Օրին և նրա գործը։ Բայց ցաւելով պէտք խոստովանել որ այս հարցի վերաբերմամբ չը կան որոշ վկայութիւններ և մնում է փոքր ի շատէ հաւանական ենթադրութիւններին դիմել։ Անշուշտ Օրին, մանաւանդ Սպահանում եղած ժամանակը, չէր կարող անտես անել Ջուղայի հարուստ, հեղինակաւոր հասարակութիւնը։ Նա, երևի, յարաբերութիւններ ունէր ջուղայեցիների հետ և, հաւանական է, վայելում էր նրանց համակրութիւնը. հաւանական է որ ջուղայեցիներն էին դիւրացնում Օրիի յարաբերութիւնները Ղանդահարի Գօրգին-խանի հետ։ Միայն այն հանգամանքը, որ ջուղայեցի վաճառական Պետրոս դի-Սարգիս Գիլանենց այնպիսի սիրով նուիրվեց հայրենիքի ազատութեան գործին, զոհեց իր կարողութիւնն ու անձը, բաւական աչքի ընկնող ապացոյց է, որ հաստատում է թէ ջուղայեցիները անտարբեր չէին դէպի հայկական շարժումը։ Գոնէ չէ կարելի ասել թէ ջուղայեցիներից ոչ ոք չէր

համակրում Հայաստանի ազատութեան մտքին։ Որ Ջուղայեցիները մասնակից էին այն շարժման, որի նպատակն էր ջնջել պարսից իշխանութիւնը Հայաստանում, դրա մի ապացոյցն էլ այն կարող է համարվել, որ նրանց համարում էին աւղաններին Սպահան բերողներ, այսինքն պարսից իշխանութեան անկումը ցանկացող մի տարր։ Թէև այդ մեղադրանքը ոչ մի հիմք չունէր, որովհետև հայերը աւղանների կողմնակից լինելու ոչ մի պատճառ չունէին, բայց ճիշտ է և այն, որ առանց կրակի ծուխ չէ լինում։ Այդպիսի մի մեղադրանքը, երևի, հիմք էր գտնում այն բանի մէջ, որ Ջուղայեցիները ցանկանում էին տեսնել ռուսներին տիրած Պարսկաստանի վրա։

Այսպէս թէ այնպէս, Ջուղան երկու կրակի մէջ ընկաւ, երբ Միր-Մահմուդը պաշարեց Սպահանը։ Նախ քան պաշարումը Ջուղայեցիները շատ էին աղաչել, որ թոյլ տան իրանց տեղափոխվել Սպահան, որովհետև Ջուղան բոլորովին անպաշտպան էր, չունէր նոյն իսկ պարիսպներ։ Սակայն պարսից կառավարութիւնը մերժեց այդ թախանձանքները։ Պատճառներից գլխաւորը, ի հարկէ, այն էր որ Սպահանը, չունենալով ուտելեղէնի պաշար, չէր կարող ընդունել իր մէջ մի նոր մեծ բազմութիւն։ Բայց կար և մի բնորոշ պատճառ էլ։ Պարսից մեծամեծներից մէկը այսպիսի դատողութիւններ յայտնեց. աւղանները աւազակներ են, նրանք չեն եկել երկիրներ նուաճելու, այլ

հարստութիւններ հաւաքելու. թող նրանց լինի փարթամ Ջուղան, գուցէ դրանով կշտանան և յետ դառնան։ Եւ այդ միտքը հաւանութիւն գտաւ Շահի մօտ. Ջուղան զոհվում էր Շահ-Հիւսէյնի փտած գահի փրկութեան համար։ Բայց Ջուղայեցիներից մի քանի ընտանիքներ տարվեցան Սպահան՝ իբրև պատանդներ։ Բացի դրանից, պահանջեցին որ 300 երիտասարդ Ջուղայեցիներ զինվեն և գնան Շահի պալատը պահպանելու։ Վաճառականները զէնք գործ ածել էլ գիտէին. 300 Ջուղայեցիներ, զինուած անգլիական և հօլլանդական ընտիր հրացաններով և ատրճանակներով, մտան Սպահան, բայց տեսան որ իրանք չեն հարկաւոր պարսիկներին, այլ իրանց զէնքերը։ Այդ զէնքերը խլվեցին և Ջուղայեցիները վերադարձան իրանց տները։ Հայ վաճառականներին այլ ևս ոչինչ չէր մնում անել, բայց միայն փակվել տներում և սարսափահար սպասել թշնամուն։

Աւղանները; առանց, ի հարկէ, որ և է դիմադրութեան հանդիպելու, գրաւեցին Ջուղան և շրջակաները։ Ի՞նչ պիտի անէին հայերը։ Իսկոյն հպատակութիւն յայտնել Մահմուդին, նշանակում էր ցոյց տալ անհաւատարմութիւն դէպի պարսիկները, իսկ անտես անել Մահմուդին, նշանակում էր ենթարկվել բարբարոս յաղթողի բարկութեան։ Մինչդեռ նրանք տարուբերվում էին այդ երկու կրակների մէջ, անցան մի քանի օրեր. Մահմուդը ինքը կանչել տուեց հայերին և հարցրեց պատճա-

որ, թէ ինչու նրանք չեն գալիս յաղթողի ոտները։ Հայ քալանթարը և քէթխուդաները ասացին, թէ թշնամութիւնից դրդված չեն իրանք այդպէս արել. հայերը ստրուկներ են միայն, և նրանց համար մի և նոյն է, թէ ով կը լինի իրանց տէրը։ Այդ միանգամայն ճիշտ իրողութիւնը համոզեցուցիչ էր և բռնաւորի համար, մանաւանդ որ նրա մօտիկ մարդկանցից մէկը, անշուշտ լաւ տուրք ստացած լինելով հայերից, բարեխօսի դեր էր կատարում։ Եւ Մահմուդը կեանք շնորհեց Ջուղայեցիներին, բայց պահանջում էր, որ նրանք իրանց արեան գինը տան։ Իսկ այդ արիւնը գնահատվեց 120 հազար թուման։ Այդ գումարը լացացրեց հայերին. և լաւ հասկանալով, որ ուրիշ կերպ չէ կարելի համոզել աւղանցուն, թէ այդ տուգանքը սոսկալի ծանրութիւն է նոյն իսկ Ջուղայի համար, նրանք առաջարկեցին, որ աւղանները իրանք գնան ու մտնեն տները, վերցնեն ինչ տեսնում են։ Վերջը Մահմուդը սակարկութեան դիմեց և կանգ առաւ 70 հազար թուման գումարի վրա *)։ Ջուղայեցիները յանձն առան վճարել այդ գումարը։

*) Պարսկական թումանը այն ժամանակներում, ինչպէս վկայում է Յակոբ Շահամիրեանը «Նոր Տետրակ» գրքի մէջ, հաւասար էր 20 հնդկական ռուփիի։ Մի ռուփին 50 կոպէկից աւել արժէ. հետևաբար պարսկական թումանը այն ժամանակ արժէր 10 րուբլուց աւել։ Այս հաշուով Մահմուդը Ջուղայեցիներից պահանջում էր 1,200,000 րուբլի, բայց յետոյ բաւականացաւ 700,000 րուբլով։

Քալանթարը Մահմուդի մարդկանց հետ ման էր գալիս տնէ տուն, որքան ոսկի, արծաթ, թանգագին քարեր և իրեր էր տեսնում, վերցնում էր։ Հարցը այնքան տուգանքի քանակութեան մէջ չէր, որքան այդ տուգանքը առնելու ձևի մէջ. քսան հազար թումանի արժէք ունեցող հարստութիւնը գնահատվում էր ինն հազար թուման և այդպէս էլ հաշուի էր գնվում։ Աւելացրէք դրա վրա հայերի տներից հանած 5000 հատ «աթլաս, ղութնի, մահուդ և շալ կապայ, 8000 չուխայ կապայ» առանց կարի, որպէս զի աւղան զինուորները չորեր կարեն իրանց համար, մեծ քանակութեամբ վերմակ, ներքնակ, բարձ, «բոլորն էլ զառ ու զումաշ», աւելացրէք բացի դրանից և 12 հատ աղջիկներ,—և դուք մի մօտաւոր հասկացողութիւն կը կազմէք, թէ ինչ ահագին գնով Ջուղայեցիները գնեցին իրանց գլխի ողջութիւնը։ Թէ Ջուղայից և թէ ուրիշ տեղերից խլած այդքան գանձերը Մահմուդը ուղարկեց Ղանդահար և դրանց հետ նաև 60 տուն հայեր, որոնք պիտի բնակվէին Աւղանիստանում՝ այդ երկրին իրանց խելքով և ընդունակութեամբ ծառայելու համար *)։

Կարելի է ասել, որ Ջուղայի մահվան դատավճիռը առաջին անգամ ստորագրողը աւղանական արշաւանքն էր։ Մահմուդը այսպէս էր դատում. «Փողը հային հարկաւոր չէ. փողը հարկա-

*) Պետրոս Գիլանենց, «Կռունկ», 1863, եր. 188.

տոր է աւղան զինուորին, որ կռւում է. հայը պիտի ստրուկ լինի և վար ու ցանք անէ. ապա ուրեմն, փողը, հարուստ տունն ու անզը բոլորովին աւելորդ են նրա համար»։ Այդպէս էլ նա վարվում էր հայերի հետ. կեղեքել, առնել ամեն մի արժէքաւոր բան և փոխարէնը թոյլ տալ որ կաթնատու կովը ապրէ—այս էր նրան ղեկավարող միտքը։ Բայց տեսէք թէ որքան սև է ստրուկի բախտը. այն հանգամանքը, որ աւղանները հայերին չէին կոտորում, տեղային պարսիկ ազգաբնակութեան համար մի ապացոյց էր որ աւղանները հայերի դաշնակիցներն են և հայերն են աւղաններին բերել Պարսկաստան։

Եւ հանգամանքները, հակառակի պէս, գալիս էին այս անհեթեթ զրպարտութիւնը հաստատելու։ Այսպէս, երբ պարսիկ խաներից մէկը, Ֆրիդօն-խանը, մեծ քանակութեամբ զօրք հաւաքելով, դուրս է գալիս Մահմուդի դէմ, Փէրիայի գաւառում պարսիկները նրան համոզում են թէ բոլոր դժբախտութիւնների պատճառը հայերն են։ Այդ գաւառում Շահ-Աբասի տարած գաղթականութիւնից կազմուել էին հայ գիւղեր. Ֆրիդօն-խանը վճռում է բնաջինջ անել չորս հատ այդ գիւղերից և մի զօրաբաժին է ուղարկում այդ նպատակով։ Բայց կոտորածը տեղի չէ ունենում այս անգամ. հանդիպում են աւղան զօրքեր, որոնք փախցնում են պարսիկներին և ազատում հայ գիւղերը։ Այս պատահական օգնութիւնը այլ ևս ոչինչ կասկած

չէ թողնում պարսիկների մէջ. ուստի երբ նոյն Ֆրիդօն-խանը, օգուտ քաղելով աւղանների հեռանալուց, կրկին երեւում է Փէրիայի գաւառում, նրա առաջը դուրս եկած պարսիկները օձիք պատռելով, գլուխներին մոխիր ցանելով հաւատացնում էին նրան թէ աւղանների կատարած արիւնահեղութիւնների, աւերմունքների բուն պատճառը հայերն են, որոնք բերել են նրանց պարսից երկիրը։ Այս անգամ աւղան զօրքեր չը կային և Ֆրիդօն-խանի զօրքերը անպատիժ սրի քաշեցին չորս հայ գիւղերի բնակիչներին, իսկ սրից ազատուածներին գերի տարան։ Այդ գերիներին ազատեց Մահմուդը իր մի արշաւանքի ժամանակ։ Դա էլ մի նոր փաստ էր, որ գալիս էր կատարելապէս հաստատելու պարսկական այն առասպելը, թէ աւղանները հայերի բարեկամներն ու դաշնակիցներն են։

Այդ առասպելը սարսափելի աղէտներ պատճառեց մանաւանդ Ջուղայեցիներին, երբ Պարսկաստանի տէրը Նադիրը դարձաւ։ Ահարկու բըռնաւորը իր ամբողջ կատաղութիւնը թափեց հայ վաճառականների վրա. նրա առաջ կրկնում էին նոյն չարախօսութիւնը հայերի մասին և նա հաւատում էր դրանց կամ գոնէ շատ ձեռնտու էր համարում հաւատացողի նման երեւալ։ Փառասէր իշխողին հարկաւոր էին դրամական ահագին միջոցներ իր աշխարհակալական ձգտումները իրագործելու և «երկրորդ Աղէքսանդրի» փառքին վայել

ճոխութիւններ ցոյց տալու համար։ Ուստի նա անողորմ կերպով քամում էր ջուղայեցի վաճառականներին, դուրս էր ծծում այդ երբեմն փարթամ գաղութի վերջին հիւթերը։ Նոյն իսկ Հնդկաստանից անհուն հարստութիւններով վերադառնալուց յետոյ էլ նրա աչքը ջուղայեցիների ոսկու վրա էր։ 1739 թուականից մինչև իր մահվան տարին, 1747-ը, Նադիրը ստանում էր Ջուղայից տարեկան ոչ պակաս քան 10 հազար թումանի· բայց եղան ժամանակներ էլ, երբ Ջուղան մի տարվայ մէջ տուեց նրան 45 հազար թուման։

Հասկանալի է որ այդքան հարստութիւններ ժողովրդի մէջքից հանելը հեշտ չէր լինի առանց բռնութիւնների դիմելու։ Եւ Նադիրը, ինչպէս գիտենք, պատիժներ ու գաղանութիւններ խնայողներից չէր մանաւանդ այն միջոցին, երբ նա ընկաւ զարհուրելի կասկածոտութեան մէջ և ամենայն հեշտութեամբ ստորագրում էր ամբողջ քաղաքներ, ամբողջ համայնքներ բնաջինջ անելու վճիռներ։ Դեռ Ջուղան, անշուշտ, բախտաւորներից մէկն էր· նրան կողոպտում, մերկացնում էին, նրա մէջ սովորական էր դարձել բնակիչներին տանջելը, ամեն տեսակ բարբարոսական անգթութիւններով փող, հարստութիւն խլելը, բայց և այնպէս, գոնէ թոյլ էին տալիս ջուղայեցիներին ապրել, գոնէ կեանք էին շնորհում նրանց, անդադար հարստահարվողի, կողոպտվողի կեանք։ Սարսափահար ժողովուրդը անիծում էր «երկրորդ Ալեքսանդրին», թէև նա էր Իրանին վաղեմի փառք ու մեծութիւն տուողը։ Ջուղայեցիների զգացմունքը երևում է ժողովրդական բանաստեղծ Բաղիր օղլու երգերի մէջ։ Այսպէս է սկսվում այդ երգերից մէկը·

Թուն ՃԼԱ *) շուն Նադիր սալվանն վեր առեց կրակն,
Ոչ միայն երկրումս մարդ չեթող, այլ թամամ աշխարհիս էրիտ մին մին մահակն։
Մահակն էրիտ ողջին մին մին լուծեց լուծ,
Էլ ոչ գլուց իմացաւ ոչ ահվալ հարցուց,
Մեծ ու պստիկ ողջին խեղդեց քոռացուց **)։

Ի՞նչ էր մնում անել։ Փէրիայի գաւառում գտնվող մի քանի հայ գիւղեր մահմեդականութիւն ընդունեցին։ Իսկ ջուղայեցիները հեռանում էին իրանց դժբախտ քաղաքից, լաւ հասկանալով որ Պարսկաստանի մէջ իրերի դրութիւնը ոչինչ լաւ ապագայ չէ խոստանում։ Եւ իրաւ, Նադիրի մահից յետոյ երկիրը մատնվեց կատարեալ անիշխանութեան. Իրանի գահը կուածաղիկ դարձաւ բազմաթիւ թեկնածուների ձեռքին. ով վրա էր հասնում, փոքր ի շատէ աջողութեամբ գործում, նա էլ ժողովրդի տէրն էր, մանաւանդ ժողովրդի կեղեքողը։ Աւազակութիւնները, սոսկալի սանձարձա-

*) Ազարիայի թուականն է, որ սկսվում է Ջուղայի հիմնարկութեան օրից։

**) Պատմ. Նոր-Ջուղայու, հատ. I, եր. 268.

կուլթեան հասան։ Մինչև այդ Ջուղան կողոպտողները պարսից Շահերն էին. այժմ զանազան աւազակ ցեղեր, ինչպէս, օրինակ, վայրենի լօռերը, նոյնպէս ձեռք էին հասցնում նրան, աւերում, թալանում։ Հեռանալու, անդարձ գաղթելու անհրաժեշտութիւնը գնալով աւելի ստիպողական էր դառնում ջուղայեցիների համար։

Բայց պէտք է նկատել որ պարսից կառավարութիւնը այնքան լաւ էր հասկանում Ջուղայի նշանակութիւնը, որ չէր ուզում զրկվել նրա վաճառականներից։ Գաղթականութիւնը խստութեամբ արգելված էր և սակայն այդ արգելքը կարող չեղաւ կանգնեցնել գաղթականութիւնը։ Հայերը տեսակ-տեսակ միջոցների էին դիմում. հարուստ ընտանիքները Երուսաղէմ ուխտ գնալու պատրուակով թոյլտուութիւն էին ստանում օրը ցերեկով ճանապարհորդելու և այդ իրաւունքը, ի հարկէ, մեծամեծ կաշառքներով էին ձեռք բերում։ Իսկ շատերը պարզապէս փախչում էին. վարձելով հմուտ ջորեպաններ, նրանք գիշերը դուրս էին գալիս իրանց տներից, փակում էին դռները, թողնելով սենեակների մէջ տնային բոլոր իրերն ու կարասիները, բանալին գցում էին կտուրը և վերցնելով իրանց հետ դրամ, գոհարեղէն և այլ թեթև քաշ ունեցող հարստութիւններ, նստում էին ջորիների վրա և արարշաւ փախչում։

Մէջ տեղ փառաւոր կերպով օգտվում էր Ջուղայի քալանթար Սարգիսը։ Սա, 1739-ին

ստանձնելով իր պաշտօնը և տեսնելով որ ալանթալանի ժամանակներ են, ինքն էլ մի կողմից հանդիսացաւ մի բռնաւոր և սկսեց անխնայ կեղեքել իր ազգակիցներին։ Եթէ պէտք էր լինում արքունիքի համար մի քանի հազար թուման հաւաքել, քալանթար Սարգիսը մի հազարն էլ իր համար էր առնում։ Ագահութիւնը հասցնում էր նրան մատնութիւնների, որոնք լաւ միջոց էին խանական անգթութիւններով կաշառքներ կորզելու համար։ Մի կողմից էլ այս վատ մարդն էր փութացնում ջուղայեցիների գաղթականութիւնը, որ նրա համար եկամուտների մի առատ աղբիւր էր։ Բոլոր հեռացողները, մանաւանդ փախչողները, պիտի նախ կաշառքներով փակէին նրա բերանը և ապա մտածէին ճանապարհվելու մասին։ Գաղթականների զգացմունքները, դրութիւնը նկարագրելու համար բերում ենք այստեղ կտորներ մի նամակից, որ գրել են երեք գաղթական եղբայրներ իրանց մօրը, Բասրա քաղաքից, 1753 թուականին *).

Իրաւի որ ճշմարիտ կասէք թէ եթէ ձեզ համար լինէինք նեղութիւն քաշում, ձեզ բօլբօլ փող կուղարկէինք որ խարջէք և տաք աղա Սարգիս քալանթարին, որ ձեզ չը նեղացնէր, և մենք կը գայինք ձեզ զուլուղ, որ ուրախ ապրէք։ Ապա մենք էլ զրոյց ունենք ասելու, այն է թէ

*) Պատմ. Նոր-Ջուղայու, II, եր 296։ Մենք թեթև փոփոխութիւններ մտցրինք՝ գրուածքը աւելի հասկանալի դարձնելու համար.

մեր պապենական, հօրենական էսչանք տարէն դատած գօվլաթ հանդերձ մեր տատմունքօվն երեք չօրս տարումն տունք զալըմին (բռնաւորին), հէրիք չէր որ մեր հէր էդ երկրին զօլմին ֆիքրից, ղասից (մտատանջութիւն) և երկիւղից մեռաւ, մեզ եթիմ անմխիթար թողեց, էս էլ դեռ հերիք չէր, որ մարլաղ էր թուրքի, վրացու անմխիթար մնացինք, էդ երկրէն փախանք, էսօր քանի տարի է Աստուծոյ ողորմութեամբն և ձեր սուրբ աղօթիւքն էսչանք հօգի քուրդի, հայի, ֆրանկի ղուլուղ անելով գառեցինք տունք մեր պարտքերն. հաւատացէք ալեօրուել ենք, որպէս ինձ տեսել էք, տասն անգամ աւել եմ ալեօրուել։ Մին ուրախութիւն չենք տեսել և ուրախութիւն չենք արարել, ի՞նչ սրտով պիտի գանք էդ երկիրն կամ ի՞նչ ումիդով գանք, երբ տարէն և ամսէն մին թաղաւոր է նստում, և մի քանի գօվրանայ՝ զուլմն մեզանէ պակաս չէ. էս էլ մեր ազգն բոլորովին տեսնում ենք և լսում ենք որ սիրտ չունեն գան Ջուղայ. մենք ինչո՞ւ գանք, չօրս հինգ տանով հօ Ջուղան աւադ (շէն) չէ մնալու։ Էսպէս բաներ տեսնելով և լսելով յուսահատուել ենք մնացել. և ձեր հրամանոց որ խարջլուղ չենք ուղարկում և ձեր գրած բարաթները (փոխանակագիր) որ չենք ընդունում, շատ պատճառներ ունենք. որպէս առաջ արզ եմ արել, մէկ էլ արզ անեմ, տեսնում ենք որ խզուր պարտք ենք անում, ձեզ ուղարկում, բայց ձեզ չէ հասնում, ձեռներից ուժով կամ յօժար կամքով խլում են և բարաթը որ գրում էք, տասն թուման առնում, քսան էք գրում, տասին հինգն էլ տալիս էք զալըմին, որ տանի քուրթի փոր կոխի, մեզ վրայ մնծութիւն ծախի...

Ձեզ ամենքիդ յայտնի է որ էդ երկիրն մեզ համար խէր չի առում. ի՞նչ եղան Խալդարենց երեք օջախն, Շարիմանենց, Սալընջենց, Ջախաթունենց, Բրղղենց, Ջամալենց, Գերաքենց, Բառասանենց, Բամալենց, Խօջա-Պօղոսենց, Խօջա-Շարփրաղենց, Ցրանգոխենց, աղա Դաւութենց, Խօջա-Նիկողոսենց, Ջիգ-Մուքելենց, Աղա-Բաբենց, Փարսադանենց, Մեծ-Շահենց և այլ միւս օջախները, որ ձեր հրամանքն էլ, առաւել պատուելի մայրս, լաւ ես տեղեակ։ Մէկն էլ չէ մնացել, մենք հօ նրանց նօքարը չենք դառնալ, էնպէս աւադ և մարդաշատ ու հաստատ թագաւորութեան ժամանակումն որ նրանք փչացան, մենք մի չօրս հինգ տուն էս խարաբ և անհաստատ ժամանակումն ի՞նչպէս պիտի ապրենք, Նանի ջան... Մտածիր մեզ և քոյրերիս խղճա, գնա՝ Մեհրաբ խանի տներն ընկիր, պաղէ էլ աղաչանք եմ արել որ Մեհրաբ խանի ղուլուղումն արզ առի, որ ձեզ դուրս ուղարկի. ինչպէս և լինի, յուսացէք Աստուած, դուրս եկէք որ համ քուերքս իրանց մօրպալին հասնեն, համ մենք և համ հրամանքդ ուրախանաս հանգստանաս, համ Աստուծով մենք... Առաջ մենակ էի, չէիր լսում, հիմա երեք եղբայր միատեղ ենք գրում, էլի լսում չես, իրաւունք ունիս, ինչ կը գայ մեր ձեռքից. գոնէ Հըռիփսիմէն և Մարիամ ջանն ուղարկիր և եթէ կարելի կը լինի, Երկու լաւ աղջիկ էլ հրամանոցդ ձեռքումն նշանիր, ուղարկիր մինը պարոն Պօղոսի, մինը պարոն Յոհաննէսի համար. թէ որ չը լինի, թօյլատրութիւն գրիր որ տեղս համատանցի և հալէպցի և Ջուղայու Սպցէքանց աղջկերք կան, պսակել տամ։ Ինչ էլ լինի, ինչ որ հրամանոցդ կամքն է գրիր և ապա որ իմանանք, ամեն հրամանդ կը պահենք, բայց էն որ գրում ես թէ եկէք Սպահան, չենք լսում... Աղվանի գալը և Ջուղու տառապանքն լսեցինք, քանի բառերով գրեցինք որ մտածէք տեսնէք որ միշտ էդ երկրի զալումը չէ պակասելու, մի օր առաջ դուրս եկողը շատ հանգիստ կը լինի։

Այս անսարուեստ, իրական պատկերը նկարում է մեր առջև քայքայված, աւերակնացած բարեկեցութեան ցաւալի տեսարանը։ Ջուղան երկրորդ անգամ մոխիրների կոյտ էր դառնում. այս

անգամ նա այլ ևս պոկ չէր գալիս իր տեղից, չէր փոխադրվում օտար, հեռաւոր աշխարհ։ Նա մնում էր իր տեղը. բայց ինչ դրութեան մէջ.—աղքատ, փճացած, տխուր ու լալկան։ Փառաւոր ապարանքները դատարկ էին կանգնած. այլ ևս մարդիկ չը կային որ բնակվէին այդ թափուր ու չքեղ սենեբում և նրանք քանդվում էին, այգիների տեղեր դառնում։ Բարն անգամ չէր կարողանում պահպանել վաղեմի փարթամութեան յիշատակը։ Մնում էր, ինչպէս և Արաքսի ափում, մի մեծ գերեզմանատուն միայն, որ վկայում էր թէ Ջուղան ունեցել է մի նախանձելի անցեալ։ Հարիւր և աւելի տարիներ էին անցել այն ողբալի օրերից, երբ Շահ-Աբասի գերեվարութեան ականատես երգիչը*) ողբում էր ջուղայեցիներին այսպիսի խօսքերով.

Ափսոս քեզ, Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիր ու ցան եղաք անմեղ անխորհուրդ...

Այժմ էլ ճիշտ նոյնն էր Ջուղայի վիճակը. այժմ էլ ափսոսելի էր այդ խեղճիկ ժողովուրդը։ Բայց մենք թողնենք աւերակների արտաճմլիկ տեսքը, աւերուածների ցաւերն ու կսկիծները։ Ջուղայեցիների ճակատագրի ներքին խորհուրդն է հետաքրքրականը. մենք գիտենք, որ դժբախտ պատահարները, հալածելով նրանց, պատճառ էին

*) Ստեփան վարդապետ։ Տե՛ս «Քնար Հայկական», Պետերբուրգ, 1868, եր. 134։

դառնում որ այդ մարդիկ օգտակար հանդիսանան հայ ազգի համար։ Այս տեսակէտից Ջուղայի դըլխին թափված հարուածները մի-մի գեղեցիկ ժպիտ էին հայութեան համար։

Տարօրինակ չէ այս հանգամանքը։ Ահա Նադիր-Շահի բռնութիւնների ժամանակ, 1743 թուականին, Ջուղայի առաջնակարգ, հարուստ վաճառական Աղազարը կամ Եղիազարը ուղարկում է իր Յովհաննէս որդուն Ռուսաստան, որպէս զի իմանայ՝ յարմա՞ր է արդեօք տեղափոխվել այնտեղ և ազատվել անսահման հարստահարութիւններից։ Յովհաննէսը լաւ լուր է բերում և Աղազարը 1747-ին ընդմիշտ թողնում է Ջուղան ու ընտանիքով գնում Ռուսաստան։ Այդտեղ նա Լազարեան տոհմի նախայրն է դառնում, այն տոհմի, որի անուան հետ կապված են այնքան փառաւոր գործեր և որ մեր պատմութեան մի ամբողջ շրջանն է գրաւում։

Բայց մենք թողնենք առայժմ Լազարեաններին։ Ջուղայեցի գաղթականների մեծ մասը Հընդկաստան է գնում, և մենք նախ այդ մասին պիտի հետևենք։

II

Հայերը նոր չէին ծանօթանում Հնդկաստանի հետ։ Արևելքի այս ճոխ ու քաղաքակիրթ երկիրը ամենահին ժամանակներից էր հռչակված իր բնա-

կան հարստութիւններով, իր զարմանալի արդիւնագործութեամբ. թէ աշխարհակալ և թէ վաճառական ազգերի համար դա եղել է նախանձ շարժող, ախորժակ գրգռող մի չքնաղ պատառ։ Դէպի Հնդկական թերակղզին էին գնում մեծամեծ զինուորական բանակներ՝ նուաճումների համար. այնտեղ էին դիմում և առևտրական կարաւանները՝ հնդկական թանգագին ապրանքներ դուրս բերելու և համաշխարհային վաճառանոցներում ցըրվելու համար։

Հայերն էլ շատ վաղուց ճանաչում էին Հընդկաստանի ճանապարհը. Հայաստանը հէնց հնդկական մեծ առևտրական ճանապարհի վրա էր գտընւում*)։ Դեռ Քսենոֆոնը պատմում է**) որ պարսից թագաւորը, կամենալով դեսպանութիւն ուղարկել Հնդկաստան, դիմեց հայերին, իբրև ճանապարհը լաւ ճանաչող մարդկանց և առաջարկեց այդ դեսպանութեան ուղեցոյցը լինել։ Պատմում են որ քրիստոնէութիւնը առաջին անգամ Հընդկաստան մտցնողը մի շատ հարուստ վաճառական հայ էր, որ ապրում էր IV դարում և որի անունն էր Մար Թովմա Կանա։ Իբրև թէ այս Թովման էր, որ ընտելանալով բնիկներին, բերել տուեց եպիսկոպոսներ և քահանաներ, նոյնպէս և քրիստոնեայ գաղթականութիւն ասորիներից և այժ-

*) «Հայկ. Տպ.» I, եր. 291.

**) «Կիւրօպեդիա», III, գլ. II.

մեան Մադրասի մօտ շինեց մի փոքրիկ քաղաք եկեղեցիներով ու դպրոցներով*)։ Բագրատունիների ժամանակ էլ հայ վաճառականները մտնում էին Հնդկաստան. յայտնի է, որ Սմբատ Երկրորդ թագաւորը Անիի մայր եկեղեցու համար Հնդկաստանից բերել տուեց մի հիանալի բիւրեղեայ ջահ, որ արժէր 80 հազար ոսկի։

Առևտրական յարաբերութիւնները Արևելքի և մանաւորապէս Հնդկաստանի հետ հայերը զարգացրին միջին դարերից սկսած, երբ կորցնելով իրանց անկախութիւնը և հայրենիքը, գաղթականական կեանքին սովորեցին և առևտրին նուիրւեցին։ Նրանք մտան նոյն իսկ Չինաստան, ուր XIV դարի սկզբում մի հայ տիկին կառուցանում է մի մեծ և գեղեցիկ եկեղեցի և մեռնելիս կտակում է նրան ֆրանցիսկեան կրօնաւորներին։ Այս դէպքը ցոյց է տալիս որ հայ վաճառականը շատ անգամ մենակ չէր կատարում իր համաշխարհային թափառումները. նրա հետ երբեմն գնում էր և նրա կինը, հարկաւոր էր լինում հիմնել փոքրիկ գաղութներ։ Այդ տեսակ գաղութներ կային և Հնդկաստանում ու նրա սահմանակից երկիրներում. դեռ 1563 թուականին Հնդկաստանի Աքբարաբատ քաղաքում հիմնւում է հայկական եկեղեցի։ Հնդկաստանը նոյն իսկ լեհական հայ գաղթականութեան շատ լաւ ծանօթ շուկայ էր։ Բայց այնտեղ ամենից

*) «Սիսական», եր. 469։

յաճախ երևացողները Ջուղայեցի վաճառականներն էին դեռ այն ժամանակ, երբ բնակված էին Արաքսի ափին։ Իսկ երբ հիմնվեց Նոր-Ջուղան և Շահ-Աբասի պէս հզօր բանակալը իր հովանաւորութեան տակ առաւ նրան ու ոչինչ չէր խնայում երկրի վաճառականութիւնը զարգացնելու համար, Ջուղայեցիները, ի հարկէ, անտես չէին կարող անել իրանցից այնքան մօտիկ գտնվող հռչակաւոր երկիրը, որ ժիր ու խիզախ վաճառականների համար մի կատարեալ ոսկեհանք էր ներկայացնում։

XVII դարի սկզբից, այսինքն Նոր-Ջուղայի հիմնելու ժամանակից, հայկական յիշատակները բազմանում են Հնդկաստանի սահմաններում և այդ սահմաններից դուրս։ Վաճառականութիւնը հային տանում է Բիրման, Սիամ, Հնդկական ովկիանոսի կղզիները—Եաւա, Սումատրա, Փիլիպեան արշիպելագոսը, մանաւանդ Մանիլա քաղաքը։ Արգելքները կարծես գոյութիւն չունէին հայ վաճառականի համար. Սպանիան համարեա արգելում էր օտարների մուտքը Փիլիպեան կղզիները, բայց հայերը մտնում էին. Չինաստանի մէջ անգամ, ուր այնքան դժուարութիւններ և արգելքներ կային դրսեցիների, մանաւանդ քրիստոնեաների դէմ, հայ վաճառականները այն աստիճան սովորական երևոյթ էին, որ եզուիտ քարոզիչները այդ վաճառականների պէս էին հագնվում, որպէս զի կարողանան ազատ մուտք և ազատ երթևեկութիւն ունենալ երկրում։ Իրանց եռանդուն

գործունէութեամբ հայ վաճառականները այնքան կարևոր դեր բռնեցին Հնդկաստանի առևտրի մէջ, որ երկար ժամանակ նրանք համարվում էին այդ առևտրի գլխաւոր տէրեր, թէև նոյն Հնդկաստանում աւելի մեծ չափերով և աւելի լուրջ կազմակերպութեամբ գործում էին եւրօպական մի քանի ազգեր։ Մ՛եզ համար հետաքրքրական է թէ ինչպէս եւրօպացիները, դարերի անխոնջ աշխատութեամբ, բոլորովին նուաճեցին Արևելքի այս հրաշալի կտորը. հետաքրքրական է այն պատճառով, որ այդ դանդաղ կատարվող նուաճումը հայ վաճառականութեան փարթամ զարգացման հետ զուգընթացաբար էր գնում, իսկ երբ նուաճումը կատարված իրողութիւն դարձաւ, հայ վաճառականութիւնն էլ մատնվեց անկման և անդառնալի կորստի։

Հնդկաստան անունով սովորաբար կոչվում է այն լայնատարած աշխարհը, որ պարունակում է իր մէջ ամբողջ Հնդկական թերակղզին մինչև Հիմալայեան լեռները։ Հին ժամանակներից այդ տարածութիւնը ներկայացնում էր առանձին անկախութիւնների մի ցանց, ցեղերի, լեզուների և կրօնների մի մեծ խառնարան։ Քանի որ նաւագնացութիւնը չէր զարգացած, Հնդկաստանը երեք կողմից յարձակումներից պաշտպանված էր ծովով։ Նուաճողների արշաւանքները գալիս էին ցամաքով, հիւսիսից, ուր թէև բարձրացած են մեր երկրագնդի ամենաբարձր լեռնաշղթաները, բայց

դրանց մէջ կան անցքեր, որոնք Հնդկաստան մըտցնող դռների պաշտօն են կատարում։ Այս պատճառով էլ արշաւանքների ենթարկված էր գլխաւորապէս երկրի հիւսիսային մասը, բուն Հնդկաստանը (իսկական թերակղզին կոչվում է Դէքքան), այսինքն Հինդոս և Գանգէս գետերի հովիտները (Փէնջաբ և Բենգալիա)։

Թողնելով աւելի հին արշաւանքները, յիշենք որ Քրիստոսի VII դարից Հնդկաստանում սկսում է հաստատվել մահմեդական տիրապետութիւնը։ Հետևեալ դարում արաբները նորից իրանց իշխանութեան ենթարկեցին Փէնջաբը։ Բայց այդ փորձերը աջողութիւն չունեցան մինչև X դարը, երբ Ղազնա քաղաքի աւղան-թիւրքական իշխանութիւնը սկսեց հաստատուն հիմքերի վրա դնել իսլամի տիրապետութիւնը Հնդկաստանում։ XI դարում, Ֆիրդուսիի մեկենաս Մահմուդ-Շահը 17 անգամ արշաւեց դէպի Հինդոսի հովիտը, նուաճումներ արաւ, ահագին հարստութիւնների տիրացաւ։ Նրանից յետոյ մահմեդականների տիրապետութիւնը զանազան փոփոխութիւններով շարունակվեց մինչև XVI դարը, երբ Հնդկաստանը նուաճեց Լէնկթիմուրի ցեղից առաջացած մէկը, Բաբեռ անունով, որ հիմնեց «մեծ մողոլների» թագաւորութիւնը, որ երկարատև գոյութիւն պահպանեց և մի քանի նշանաւոր թագաւորներ տուեց։

Մինչդեռ Բաբեռի մօնգոլական զօրքը առաջանում էր հիւսիսից, ծովի կողմից էլ հնդկական

ափերին մօտենում էին քրիստոնեայ եւրոպացիները։ Դրանք պորտուգալացիներն էին, այն ժամանակվայ ծովային նշանաւոր պետութիւններից մէկի հպատակները, որոնք դրանից առաջ գտել էին ծովային ճանապարհը Եւրոպայից մինչև Հընդկաստան, որ պտտում էր Աֆրիկայի արևմտեան, հարաւային և արևելեան ափերով։ 1510 թւականին այդ համարձակ ծովագնացները ձեռք գցեցին Գօա նաւահանգիստը Հնդկաստանի արևմտեան ափում, իսկ 1538 թ. նրանք արդէն անցել էին Հնդկաստանի հիւսիս-արևելեան ծովափը, ուր առևտրական կայարան հաստատեցին այժմեան Կալկաթայի մօտ։ Պորտուգալացիների այդ արշաւանքները առևտրական նպատակ ունէին։ Բայց դա մի նոր տեսակի առևտուր էր. պորտուգալացի վաճառականին հետևում էր հրազէնը։ Հնդկացիները դիմադրութիւն ցոյց տուին, բայց եկւոր եւրոպացիների թնդանօթները հարկադրեցին նրանց լռել։ Այդ սպառազինված վաճառականութիւնն էր, որ այնուհետև սկսեց կամաց-կամաց կլանել հընդիկների մեծ աշխարհը։ Նա, այդ նոր երևոյթը, հրաշքներ էր գործում. տիրացաւ ամբողջ առևտրին և Ասիայի ճոխ մթերքներն ու զարմանալի առատ հարստութիւնները լցրեց Լիսաբոն, որ սկսեց ծաղկել, մեծանալ և Եւրոպայի ամենագեղեցիկ կենտրոններից մէկը դարձաւ։ Միայն պորտուգալացին իրաւունք ունէր ծովային ճանապարհներով առևտուր անել Հնդկաստանի հետ. և մնացած եւ-

ւոպական ազգերը, հնդկական ապրանքներ գնելու համար, պիտի գնային Լիսաբոն։

Բայց անվերջ չէր պորտուգալացիների տիրապետութիւնը։ XVI դարի վերջից նրանց տեղը սկսեց բռնել փոքրիկ, զարմանալի աշխատ և անհիւրասէր բնութիւն ունեցող Հոլլանդիան։ Երկու եւրոպական ազգերի մրցութիւնը ուժեղ էր. բայց հոլլանդացիները դուրս հանեցին այդ մրցութեան մէջ։ Նրանց նաւերը տիրապետող հանդիսացան ծովերի վրա և զէնքի ույժով հեռացրին պորտուգալացիներին շատ տեղերից։ 1603-ին Հնդկաստանի հետ առեւտուր անող մանր վաճառականական ընկերութիւնները միացան, կազմեցին մի մեծ ընկերութիւն, որ ստացաւ «Հնդկական» անունը։ Թէ ինչ վիթխարի ձեռնարկութիւն էր դա, երեւում է նրանից, որ ամբողջ հարաւային Ասիան, Արաբիայից մինչև Եապօնիա, հոլլանդական վաճառականների ձեռքին էր գտնվում։ Հնդկական ընկերութիւնը մի ամբողջ պետութիւն էր. նա պահում էր զինուորական գնդեր, իրաւունք ունէր պատերազմ հրատարակել տեղական իշխողների դէմ, շինել մարտկոցներ և բերդեր, դաշնակցութիւններ կապել, հաշտութեան պայմաններ թելադրել և այլն։

Այդ առեւտրական ընկերութիւնը անօրինակ բան չէր այն ժամանակվայ Եւրոպայում։ Գաղթականական քաղաքականութեան այն ժամանակներն էին, երբ մեծամեծ գործեր կատարվում էին մաս-

նաւոր առեւտրական ընկերութիւնների միջոցով։
Անգլիայում էլ գոյութիւն ունէին այդպիսի ընկե-
րութիւններ, որոնք իրանց մէջ բաժանել էին հա-
մաշխարհային վաճառանոցները։ Այսպէս, XVI
դարի կէսից գործում էր Լեւանտեան ընկերու-
թիւնը, որ առեւտուր էր անում Թիւրքիայի հետ։
Արեւելքում հոլլանդացիների ձեռք բերած առաջին
աջողութիւնները մրցութեան ասպարէզ հանեցին
անգլիացիներին և այս ընդունակ ազգը հանդէս
հանեց իր առեւտրական հանճարը՝ բախտաւոր ա-
խոյեանին յաղթելու համար։ Անգլիացի վաճառա-
կանները էլ հիմնեցին «Հնդկական Ընկերութիւն»,
որ հաստատուեց Եղիսաբէթ թագուհու հրովարտա-
կով 1601-ին։ Դա այն հռչակաւոր ընկերութիւնն
էր, որ վերջ ի վերջոյ բոլորովին նուաճեց ամբողջ
Հնդկաստանը և դարձրեց նրան բրիտանական ա-
մենագեղեցիկ կալուածներից մէկը։

Սկզբից, երկար ժամանակ, Հնդկական Ընկերութեան գործերը շատ դանդաղ էին առաջանում։ Մօնղոլական թագաւորութիւնը այնքան զօրեղ էր, որ եւրոպացիները չէին կարողանում չափից աւել գլուխ բարձրացնել գոնէ այն երկիրներում, որոնք նրա սահմանների մէջ էին գտնվում կամ ճանաչում էին նրա իշխանութիւնը։ XIV դարի կէսից մինչև XVII-ի սկիզբը թագաւորեց Բաբերի թոռն Աքբար-Շահը, որի ժամանակ մօնղոլական թագաւորութիւնը հասաւ բարեկեցութեան բարձր աստիճանին։ Աքբարը հռչակաւոր է մանաւանդ

նրանով, որ անունով միայն մահմեդական էր, իսկ իրօք մի շատ լաւ մարդ էր և ազատամիտ թագաւոր, որ աշխատում էր գրաւել իր բոլոր այլադաւան հպատակների սրտերը, վերացնել կրօնական խտրութիւնները. դրա համար նա նոյն իսկ փորձեց հիմնել մի նոր կրօն, որ պիտի եղբայրացնէր կռապաշտ և իսլամ հնդիկներին։ Բայց այդ՝ իրապէս մեծ թագաւորը ունեցաւ թոյլ ժառանգներ, և ահա միայն սրանց ժամանակ եւրօպացիների և մանաւանդ անգլիացիների գործերը աջող ընթացք ստացան։ Անգլիական Ընկերութիւնը իրաւունք ստացաւ մի քանի տեղերում ֆակտօրիաներ (պահեստների, գրասենեակների տեղեր) հիմնելու։ Առաջին ֆակտօրիան բացվեց Սուրաթ քաղաքում, արեւմտեան ծովափի վրա, 1612 թւականին, Աքբարի որդի Ջահանգիր-Շահի թոյլտւութեամբ։ Ամբողջ XVII դարի ընթացքում ընկերութեան գլխաւոր ջանքն էր բազմացնել ֆակտօրիաների թիւը զանազան տեղերում։ Հետզհետէ նա ձեռք է բերում Մադրասը և Կալկաթայի տեղը արեւելեան ծովափում, Բօմբէյը արեւմտեան ծովափում։ Այդ առեւտրական կայանները դառնում են փոքրիկ կենտրոններ, որոնց շուրջը խտանում և մեծանում էին գաղութներ. սրանց կառավարութիւնն էլ Ընկերութեան էր պատկանում։ Նշանակվում էին նահանգապետներ, զօրաբաժիններ էին պահվում, պաշտօնէութիւններ էին հաստատվում. Ընկերութիւնը, հօլլանդականի նման, ստա-

ցաւ պատերազմ հրատարակելու, դաշնագրութիւններ կապելու իրաւունք։

Անգլիացիների օրինակին հետեւեցին և ֆրանսիացիները, որոնք 1624-ին հիմնեցին նոյնպէս Հնդկական Առեւտրական Ընկերութիւն։ Մինչդեռ անգլիացիները փորձում էին գլխաւորապէս հիւսիսային Հնդկաստանի ափերում, ֆրանսիացիները ընտրեցին աւելի հարաւային երկիրներ և ձեռք բերեցին Պօնդիշէրի քաղաքը, հիմնեցին այդտեղ մի փոքրիկ գաղթականութիւն։ Մրցութեան դաշտը մնաց այդ երկու ազգերի—ֆրանսիացիների և անգլիացիների մէջ. պօրտուգալացիները համարեա այլ եւս չը կային Հնդկաստանի առեւտրական հրապարակում, հօլլանդացիները սաստիկ թուլացել էին, որովհետև Անգլիան մի շարք եռանդուն միջոցներով խլել էր նրանցից տիրապետութիւնը ծովերի վրա։ Բայց XVII դարում դեռ անգլօ-ֆրանսիական մրցութիւնները ընդհարումների պատճառ չը դարձան։ Իւրաքանչիւր ֆակտօրիա մի ծովափնեայ պահեստ էր մի յայտնի տեղի ապրանքների համար. երկրի ներսերում վաճառականութիւնը հնդկացիների ձեռքումն էր. նրանք կատարում էին միջնորդի դեր, առնում էին ապրանք և վաճառում եւրօպացիներին։

Հայերը Հնդկաստանում երեւան էին գալիս իբրև վաճառականների մի առանձին խումբ, որ ունէր իր արտահանութեան առանձին ճանապարհները, իր առանձին շուկաները և առեւտրական

ճիւղերը։ Համեմատել անգամ չէ կարելի հայ և եւրոպացի վաճառականների դրութիւնը։ Մինչդեռ եւրոպացիները հանդէս էին գալիս այդպիսի վիթխարի ընկերական կազմակերպութեամբ, պաշտպանում էին իրանց շահերը զօրքերի և թնդանօթների օգնութեամբ, հայերը շարունակում էին իրանց հին, նահապետական սիստեմով գործել։ Նրանք առանձին-առանձին էին առևտուր անում, ցրված ույժերով, կամ փոքրիկ, աննշան ընկերակցութիւններով։ Ջուղայեցի վաճառականների գործավարութիւնը դարձեալ հին ձևի մէջ մնաց։ Նրանք բաժանված էին խոշոր և մանր վաճառականների. խոշորները փոքրիկ գումարներով փող էին տալիս մանրերին և սրանք գնում էին առևտուր անելու, իսկ դրամատիրոջ տալիս էին շահ 6—12%։ Հետաքրքրական է թէ ինչպէս էին նրանք երկրի հում նիւթերը շահագործում։ Բամբակի մեծ առևտուր կար նրանց ձեռքում. հայ վաճառականը գնում էր բամբակ և բաժանում էր բամբակ մանողներին. ստանալով դրանից թել, նա յանձնում էր կտաւագործներին։ Այդ կերպով պատրաստած կտաւը ուղարկվում էր Բենդէր-Աբաս նաւահանգիստը, որտեղից ապրանքը տարածվում էր ոչ միայն Պարսկաստանում, այլ և Թիւրքիայում, հասնում էր նոյն իսկ եւրոպական շուկաներին, ուր նա յայտնի էր «պարսկական կտաւ» անունով *)։

*) Շէրեր—«Պատմ. Անգլիոյ վաճառականութեան», թարգմ. Մ. Աղաբէկեան, Կ. Պոլիս, 1882, եր. 51.

Հետևելով իրանց հին, պապենական գործավարութեան, հայ վաճառականները, այնուամենայնիւ, այնքան առաջադէմ գտնվեցան Հնդկաստանում, որ եւրոպացիների համար լուրջ մրցակիցներ էին հանդիսանում։ Այդ հանգամանքի պատճառները ջուղայեցի վաճառականների ընդունակութիւնն ու ճարպիկութիւնն էին. նրանք մտնում էին բնիկ ազգաբնակութեան մէջ, մօտենում էին տեղական կիսանկախ կամ անկախ իշխողներին (ռաջաներին) և բարձր պաշտօնեաներին (նաբաբներին), իրանց տակտով ու ազնւութեամբ, իրանց չափազանց համբերատարութեամբ և բազմամեայ անխոնջ աշխատութեամբ ձեռք էին բերում հաւատ, վստահութիւն և անդադար լայնացնում էին իրանց առևտրական շրջանառութիւնը։ Եւրոպայի վաճառականի թեւն ու թիկունքը հրացանն ու թնդանօթն էր. յենվելով ույժի վրա, եւրոպացիները, որքան էլ չուզենային, դիմում էին բռնութիւնների։ Շատ վատ յիշատակներ էին թողել մանաւանդ պօրտուգալացիները, որոնք աւազակային միջոցներով էին ապրանքներ ձեռք բերում, կեղեքում ու հարստահարում էին ազգաբնակութիւնը։ Անզէն, խաղաղ հայ վաճառականը այդպէս չէր և լինել չէր կարող։ Ուստի նրա գործունէութիւնը այնքան արդիւնաւոր էր նոյն իսկ երկրի համար, որ XVIII դարի վերջերում մօնղօլ թագաւորներից մէկը արտօնութիւններ էլ տուեց։ Խաչատուր վարդապետը, որ Ջուղայից նուիրակ էր ուղարկ-

ված, կարողացաւ ստանալ հետևեալ իրաւունքները. 1) Հայոց ազգը ազատ լինի ամեն կողմով. 2) Եթէ հայոց ազգից մէկը մեռնէ, նրա ստացուածքը, չարժական թէ անշարժ, հայոց ազգի սեփականութիւնը պիտի դառնայ, ուրիշները իշխելու իրաւունք չունենան. 3) «Մալ, միրէս, խարջխարջէն կէս ռուփի տան, մաքս հարիւրին երեք և կէս, ինչ զգեստ ուզենան հագնեն, ուր կամենան գնան, ոչ ոք չը հանդիպի նոցա» *)։

Հնդկական առևտուրը անհագին շահեր էր բերում։ Եղել են ժամանակներ, երբ անգլիական Ընկերութիւնը օգուտ ստացել է 340 տոկոս **)։ Հայերն էլ դիզում էին հարստութիւններ։ XVII դարի երկրորդ կէսում Ջուղայեցի Յովսէփ Մարգարեանը իր եղբօր հետ ընկերանում է և առևտուր սկսում Հնդկաստանում. մօտ 100 հազար ռուփի դրամագլխով այդ եղբայրները 30 տարվայ ընթացքում ստանում են զուտ արդիւնք 1,763,000 ռուփի ***)։ Հայ վաճառականի համար սովորական էր դրած դրամագլխի չափ շահ ստանալ առևտրից։ Բայց և այնպէս, հայերը Հնդկաստանում չէին կարողանում անկախ դիրք բռնել։ Չը կարողանալով միանալ, մեծ դրամագլուխ ունեցող մի նշանաւոր

*) „Ազգասէր“ շաբաթաթերթ, Կալկաթա, 1845, եր. 125։

**) Гиббинсъ—„Очеркъ Исторіи англійской торговли и колоній“, СПБ. 1899. եր. 8։

***) Պատմ. Նոր-Ջուղայու, հատ. I, եր. 183։

ընկերութիւն կազմել, նրանք առանձին-առանձին պիտի կախված լինէին եւրոպական ընկերութիւններից հէնց այն պատճառով, որ ապրանքներ արտահանելու միջոցներ չունէին, ինչպէս նաև չունէին սեփական նաւահանգիստներ և պահեստների տեղեր։ Այս և սրա պէս ուրիշ հանգամանքներ, որոնք հայերի անպատրաստութիւնից և աւանդապահութիւնից էին առաջանում, հարկադրում էին նրանց՝ Հնդկաստանում գործող եւրոպացի ազգերից մէկին ու մէկի հետ միանալ։ Բայց ում հետ։

Դեռ Շահ-Աբաս Մեծը, պորտուգալացիներին դիմադրելու համար, դիմել էր անգլիացիների օգնութեան և առևտրական դաշնադրութիւն կնքելով նրանց հետ, չէնացրել էր Բէնդէր-Աբաս բանուկ նաւահանգիստը՝ Հորմուզի նեղուցի վրա։ Կարծես մեծ բռնաւորը նախատեսում էր որ հարաւային Ասիան վերջ ի վերջոյ անգլիացիներին պիտի պատկանէ։ Այդ նախատեսութիւնը, կարծես, ունէին և հայերը։ Նրանք մօտեցան անգլիացիներին, իսկ անգլիացիները շատ լաւ ըմբռնեցին թէ ինչ են հայերը Հնդկաստանի և առհասարակ ասիական առևտրի համար և ինչ ույժ են ներկայացնում։ Այդ ույժի դէմ մաքառում չառաջացրին նրանք, այլ զիջողութիւններով և համաձայնութեամբ նուաճելու քաղաքականութիւնը գործադրեցին։

1688 թւականի յունիսին անգլիական Ընկերութեան վարչութիւնը մի դաշնագիր կնքեց հայ վաճառականների ներկայացուցիչ, Ջուղայեցի Խօ-

ջա-Փանոս Բալանթարի հետ։ Այդ դաշնագրութիւնը շատ լայն իրաւունքներ էր տալիս հայերին և հէնց դրանով էլ որոշում էր Հնդկաստանի հայերի ապագայ վիճակը։ Ահա ինչ էր ասում նա. 1) Հայ ազգը տիրանում է այն բոլոր իրաւունքներին, որ ունեն անգլիացի վաճառականները. 2) Հայերին բացարձակ ազատութիւն է տրվում ամեն ժամանակ երթևեկութիւն ունենալ Հնդկաստանից ուրիշ աշխարհներ և ուրիշ աշխարհներից Հնդկաստան՝ Ընկերութեան նաւերով և այն պայմաններով, ինչ վայել է ազատ մարդկանց. 3) Նրանց համար ազատութիւն է բնակվել Ընկերութեան որ քաղաքում, աւանում, բերդում կամենան. առնել, տալ, կալուածներ և տներ գնել, ընտրվել քաղաքական պաշտօնների համար այնպէս, ինչպէս թէ անգլիացի էին ծնված. հաւատի և դաւանութեան կատարեալ ազատութիւն են վայելում։ Եւ եթէ Ընկերութեան որ և է նահանգապետ կամենայ խանգարել այս իրաւունքները և արտօնութիւնները, այնպիսին չը պիտի պահվի ծառայութեան մէջ։ Հարկեր կամ տուրքեր Հնդկաստանում հայերը պէտք է նոյնքան տան, որքան բնիկ անգլիացիները։ Այնուհետև երկար ու մանրամասն յիշատակվում է թէ հայերը ինչ ապրանքների համար ինչ մաքս և նաւավարձ պիտի տան։ Միայն այդ ապրանքների երկար ցուցակը ցոյց է տալիս թէ որքան բազմակողմանի ու ճոխ էր հայ առևտրականների գործունէութիւնը Հնդկաստանում, Հնդկական արշի-

պելագոսում, Չինաստանում։ Մի ուրիշ, լրացուցիչ թղթով, որ ստորագրված է մի և նոյն օրը, Ընկերութիւնը յանձն էր առնում հետևեալ պարտաւորութիւնները. եթէ Ընկերութեան պատկանող որ և է քաղաքում կամ աւանում ապրող հայերի թիւը հասնում է քառասունի, այդտեղ Ընկերութիւնը պարտաւոր է նրանց հող տալ՝ եկեղեցի կառուցանելու համար. Ընկերութիւնը կառուցանում է նաև փայտէ եկեղեցիներ հայերի համար, իրաւունք տալով նրանց ապագայում, եթէ կամենան, քարէ եկեղեցիներ շինել փայտեղէնի տեղը. նաև Ընկերութիւնը իր միջոցներից եօթը տարվայ ընթացքում տարեկան եօթն ֆունտ ստերլինգ ռոճիկ է տալիս այն քահանային կամ պաշտօնեային, որին հայերը կընտրեն իրանց եկեղեցուն ծառայելու համար *)։

Ի՞նչ են ցոյց տալիս այս նշանաւոր արտօնութիւններն ու իրաւունքները։—Ամենից առաջ այն, որ հայերը անգլիացիների աչքում շատ կարևոր և մեծ ոյժ էին երևում։ Ինքը, Ընկերութիւնը, իր այդ թղթերի մէջ խոստովանում է որ հայերը Հնդկաստանի և առհասարակ Արևելքի առևտրի մեծ մասը իրանց ձեռքում ունեն, ուստի թէ Ընկերութեան և թէ նոյն իսկ Անգլիայի շահերի տեսակէտից ցանկալի է որ նրանք անգլիական նաւերով փոխադրեն իրանց ապրանքները,

---

*) „Ազգասէր“, 1846, №№ 37 և 39։

փոխեն իրանց առևտրական ճանապարհը և ուղղակի Անգլիայի հետ յարաբերութիւններ ունենան, որպէս զի անգլիական գանձարանը մտնեն նրանց տուած մաքսերը։ Ահա այդ օգուտները Ընկերութիւնը գնում էր արտօնութիւնների և ազատութեան գնով, որ տալիս էր հայերին։ Անգլիական ազգի հանճարը հէնց սրա մէջ է. տիրել է և տիրում է նա երկրագնտի բոլոր կողմերում, բայց ոչ մի տեղ չէ վախենում ազատութիւն և մարդկային բարձր իրաւունքներ տալուց։ Ընդհակառակն, նա հէնց այդ ազատութիւններով էլ գրաւում է իր հպատակին, յենված իր բարձր կուլտուրայի, իր ազգի գիտակցութեան, իր մտաւոր ահագին կարողութեան վրա։

Հնդկաստանի հայերն էլ հէնց այս միջոցով էին նուաճվում։ Նրանք իրանց ճակատագիրը կապեցին անգլիացիների հետ. դա նշանակում էր որ նրանք հոգով ու մտքով պիտի ենթարկվեն անգլիացիներին և պիտի զգան այս գրութեան բոլոր քաղցրութիւններն ու դառնութիւնները։ Քաղցրութիւն էր, ի հարկէ, վայելել Ասիայի բարբարոս անկիւններում ազատ անգլիացու բոլոր իրաւունքները, գտնել հզօր պաշտպանութիւն, գործունէութեան բոլոր յարմարութիւնները և մի և նոյն ժամանակ ազատ ու իրաւատէր լինել իբրև առանձին ազգ. կատարեալ իրաւունք ունենալ պահպանելու և զարգացնելու իր ազգային ինքնուրոյնութիւնը, իր լեզուն, իր գրականութիւնը, իր կրօնական

անկախութիւնը։ Բայց այդ քաղցրութիւնները տանում էին դէպի անխուսափելի դառնութիւն։ Մի բուռն ժողովուրդ, այն էլ հայերի պէս մի ժողովուրդ, չը պիտի կարողանար դիմանալ, կանգնել երկար և պահպանել իր ազգային ինքնուրոյնութիւնը։ Այդ փոքրիկ ժողովուրդը պիտի խեղդվէր անգլիական հզօր կուլտուրայի ծովի մէջ, մի ծով, որ վերջ ի վերջոյ կանհետացնէր այդ աննշան մեծութիւնը, թոյլ տալով որ մի ժամանակ եկեղեցիներն ու տապանաքարերը վկայեն թէ եղել են հայեր ու չը կան։

Այդպէս էլ եղաւ։ Ուրիշ կերպ չէր կարող լինել։ Մեծ ազգերը, կլանող կուլտուրաները չեն շտապում. հայերը ամբողջ 150 տարի և աւել պահվեցին Հնդկաստանում իբրև հայ։ Բայց մենք իրաւունք ունենք բախտը անիծելու, որ Հնդկաստանի հայերը հէնց սկզբից անգլիական ազդեցութեան տակ ընկան։ Եթէ հնդկահայերը միմիայն իրանց առևտրով, իրանց ահագին շահերով հետաքրքրվէին և բաւականանային, նրանք, ամենաշատը մի անցողակի անուն, մի չնչին յիշատակ թողած կը լինէին մեր պատմութեան մէջ։ Բայց նրանք մեզ համար կուլտուրական մեծ ույժ դարձան. մենք կը տեսնենք նրանց ազգային գրականութիւնը, նրանց դպրոցները, նրանց առաջաձեռնութիւններն ու կտակները յօգուտ ամբողջ ազգի։ Ահա այստեղ հասկանալի է թէ ինչ էր անգլիական ազդեցութիւնը։ Նա էր, այդ ազդեցութիւ-

նը, մի գլխաւոր պատճառ, որ ի բնէ ընդունակ, ազգային-հասարակական բնազդներով տոգորված Ջուղայեցին դառնում է աւելի ևս զգայուն, աւելի պատրաստակամ, պարտաճանաչ։ Թէև մեծ մասամբ կիսագրագէտ վաճառական, նա իր ժամանակի ազգայիններից առաջ է ընկնում. իսկական հայրենասէր էր նա դեռ այն ժամանակ, երբ հայրենասիրութիւնը մեզանում խեղդված էր եկեղեցու, կրօնական ծէսերի հետ կապված նեղ հասկացողութեան մէջ. նա առաջին անգամ հիմնում է պարբերական մամուլ, նա սիրում է գիրքն ու դպրութիւնը և իր հեռաւոր պանդխտութիւնից դասեր ու խրատներ է տալիս հայութեան, քաշում է նրան դէպի առաջ։

Չէ կարելի, ի հարկէ, ասել թէ բոլոր հնդկահայերն էին այդպէս։ Ոչ, նրանց մեծամասնութիւնը իսկական վաճառական էր, այսինքն սեփական շահի, սեփական բարեկեցութեան ստրուկ։ Հնդկահայերի պատմութիւնը պահել է մի շատ պերճախօս փաստ, որ ցոյց է տալիս թէ ինչ անհեթեթութիւնների ու վայրենութեան էր հասնում անչափ աջողութիւններից և անսպասելի հարստութիւններից յղփացած վաճառականը։ Այդպիսիներից էին Սուրաթի հայերը XVIII դարի երկրորդ կէսում։ Հասնելով բարեկեցութեան այն աստիճանին, երբ մարմնապաշտութիւնը և կերուխումը դառնում են միակ հասկանալի սրբութիւն, այդ վաճառականները իւրաքանչիւր օր խնճոյքի էին

հաւաքվում մէկի կամ միւսի տանը։ Խնջոյքը չքեղութեան և զեղխութեան բոլոր կարգ ու կանոններով էր տանվում. արբեցութիւն, անչափ ուտել, պարեր, երաժշտութիւն, կանայք։ Բայց այս բոլորը բաւականութիւն չէր տալիս հայ բուրժուաներին։ Եւ նրանք, իրանց ուրախութիւնը աւելի ազդու և հետաքրքրական դարձնելու համար, խելք խելքի են տալիս ու եկեղեցական կարգերն են իրանց լրբութեան առարկայ դարձնում։ Քէֆ անողներից մէկը եպիսկոպոս էր դառնում, միւսը քահանայ, սարկաւագ, սարկաւագուհի, դպիր. երգում էին եկեղեցական երգեր, կատարվում էին կրօնական արարողութիւններ։ Այսպէս, երբ պարող կանայք սկսում էին հագնել իրանց պարի շորերը, վաճառականները սկսում էին երգել «Խորհուրդ խորին» երգը. կամ երբ սկսում էին «Փառք ի բարձունս» երգը և հասնում էին այն տեղին, ուր ասվում է՝ «Ցոյց մեզ, Տէր, ողորմութիւնս քո», ամենքը վեր էին կենում և համբուրում էին պարող կանանց ծծերը *)։

Այսպիսի տարր էլ կար հնդկահայ վաճառականութեան մէջ։ Նոյն պատմութիւնը տալիս է մեզ և վերին աստիճանի գծծի ու շահամոլ մարդկանց տիպեր էլ **)։ Բայց հնդկա-

*) Պատմ. Նոր-Ջուղայու I, եր. 188.

**) Այդպիսիներից մէկն էր և Ռափայէլեան վարժարանի հիմնադիր Եդուարդ Ռափայէլ Ղարամեանը. Նրա կեանքից մի շատ տգեղ, ուղղակի զզուելի փաստ պատմում

հայերի բախտն այն էր, որ նրանց մէջ շատ կային պատուաբեր, արժանաւոր անհատներ. և այդ բախտաւոր առաւութիւնը, որ միանգամից չէր առաջ գալիս, այլ հետզհետէ, տարիների ընթացքում, տուեց նրանց այնքան նախանձելի դիրք հայութեան մէջ։ Այստեղ մենք պէտք է չը մոռանանք և այն, որ բոլոր հայ վաճառականները չէին անգլիական ազդեցութեան տակ գտնւում։ Կային և այնպիսիները, որոնք վաճառականութիւն էին անում ֆրանսիական մասում, Պօնդիչէրիում, ինչպէս նաև քիչ չէին և այնպիսիները, որոնք գործում էին անկախ եւրօպական ընկերութիւններից, ուղղակի բնիկների մէջ, մօնգոլ թագաւորների հովանաւորութեան տակ։ Այստեղ հայերը յաճախ թողնում էին վաճառականի զբաղմունքները և հասնում էին նոյն իսկ ռաջայի (մեծ զօրապետ, իշխան) աստիճանին. Նրանց ազդեցութիւնը այնքան մեծ էր որ երկրի բուն տէրերին իրանց ուզածի պէս էին շարժում և ահագին հարստութիւններ հաւաքում *)։ Այդ դիրքից և ազդեցութիւնից օգտվում էին եւրօպացիները։ 1644 թւին անգլիացիները մտան Բենգալիա, առևտուր անելու համար. 1651-ին նրանք մի դեսպանու-

է Ս. Վարդ. Թէոդորեանը („Պատմ. Մուրադեան վարժարանին", Պարիզ, 1866, հատ. I, եր. 44)։

*) Հ. Չագըճեան—„Պատմութիւն Հայոց" Վիեննա, 1872, եր. 411։

թիւն ուղարկեցին Շահ-Ջահանի մօտ և այդ դեսպանութեան առաջնորդն էր հայ վաճառական Աղա-Սահրադը։ Դեսպանութեան հետ էր մի անգլիացի բժիշկ, որ բժշկեց Շահի աղջկան և փոխարէնը խնդրեց որ մօնգոլ կայսրը շնորհ անէ Բենգալիա մտած անգլիացիներին։ Շահը կատարեց այդ խնդիրքը և անգլիացիները հաստատվեցան այն տեղում, ուր յետոյ գոյութիւն ստացաւ Կալկաթա քաղաքը։ 1669 թւին Հնդկաստան գնաց ֆրանսիական ընկերութեան դիրեկտոր Կարօնը։ Հիմնելով ֆրանսիական առաջին ֆակտօրիան Հնդկաստանում, Կարօնը մարդիկ ուղարկեց երկրի զանազան կողմերը՝ նոյն տեսակ առևտրական հիմնարկութիւնների տեղեր պատրաստելու և տեղացի իշխողների հետ համաձայնութիւն կայացնելու համար։ Այդ մարդկանցից մէկը հայ էր, Մարգար անունով **)։

Թէև հայերը այսպէս ցրված էին Հնդկաստանի զանազան կողմերում, գտնվում էին զանազան դիրքերի մէջ և զանազան ազդեցութիւնների տակ, բայց մենք իրաւունք ենք համարում նկատի առնել միայն անգլիական ազդեցութիւնը. և այս այն պատճառներով, որ նախ՝ հայ վաճառականների մեծ մասն էր գտնւում անգլիական կալուածներում, երկրորդ՝ այդ մեծամասնութիւնն էր, որ

**) Лависсъ и Рамбо—„Всеобщая Ист.", т. VI, եր. 801—805. „Ազգասէր", 1845, № 14.

ցոյց տուեց հանրային մի լուսաւոր գործունէութիւն, մինչդեռ միւս տեղերի հայերը թողել են յիշատակներ միայն իրանց հարստութեան և փառքի մասին։ Վերջապէս կայ և այն հանգամանքը, որ ի վերջոյ բոլոր հնդկահայերը, ինչպէս և ամբողջ Հնդկաստանը, մտան անգլիական տիրապետութեան տակ։ Այնպէս որ թէ բնիկների մէջ և թէ ֆրանսիական կալուածներում ապրող հայերին կարող ենք մի կողմ թողնել։

Անգլիացիների հետ ապրող հայերը վաղ են սկսում ենթարկվել անգլիական կուլտուրային, կրթութեան։ Դեռ XVIII դարի առաջին քառորդում, դեռ այն ժամանակ, երբ անգլիացիները Հնդկաստանում շատ զօրաւոր դիրք չէին ձեռք բերել, մենք տեսնում ենք հայ մեծատուն ընտանիքներ, ուր անգլիացի ուսուցիչներ կան։ Մովսէս Խորենացու պատմութիւնը առաջին անգամ ամբողջովին լատիներէնի *) թարգմանողները, Վիլհելմ և Գէորգ Վիստօն եղբայրները, հայերէն սովորել էին իրանց հօրից, որ Մադրասում ուսուցչութիւն էր անում Գրիգոր Աղաւիրեան անունով հայի տանը։ Ահա անգլիական ազդեցութեան օգուտների հէնց մի առաջին, թէև կողմնակի փաստ։ Հայերի մէջ առաջացաւ մի այնպիսի անգլիասիրութիւն, որ նրանցից շատերը իրանց անձնական աջողութիւնն ու շահերը կապեցին Անգլիական

*) Տպուած է Լոնդոնում, 1736-ին։

ընկերութեան բախտի հետ այնպիսի ժամանակներում, երբ ընկերութիւնը շատ դառն, նոյն իսկ օրհասական դրութեան մէջ էր գտնվում։ Մենք պարտաւոր ենք մի թռուցիկ ակնարկ գցել այդ ընկերութեան պատմութեան վրա, որպէս զի հասկանանք թէ անգլիական գործավարութիւնը Հնդկաստանում դաստիարակչական ինչ տեսակ ազդեցութիւն կարող էր ունենալ հայերի վրա։

Եւրոպացիների առևտրական աջողութիւնները կախված էին այն հանգամանքից թէ որքան բարեհաճ տրամադրութիւն էին ցոյց տալիս տեղացի իշխողները, մանաւանդ «մեծ մօղօլները» դէպի այդ վաճառականները։ Իսկ բարեհաճութիւն ցոյց տալը կախված էր այն հանգամանքից թէ որքան ուժեղ կամ թոյլ է այս կամ այն իշխողը, թագաւորը։ Մենք տեսանք որ Աքբար-Շահի թոյլ յաջորդները իրաւունք տուին անգլիացիներին առևտրական պահեստներ և գրասենեակներ հաստատել իրանց ուզած մի քանի տեղերում։ Որքան թոյլ ու անկարող էին իշխողները, այնքան լաւ էին գնում եւրոպական ընկերութիւնների գործերը. այդ դէպքում եւրոպացիները զինուորական ոյժն էին իրանց իրաւունք դարձնում և առնում էին զոռով այն, ինչ չէին տալիս յօժար կամքով։ Բայց ահա XVII դարի երկրորդ կէսից (1660-ից) թագաւորում է Աւրէնգ-Զէբը, մի կարող, ուժեղ միապետ, որ նուաճումներ է անում, մեծացնում է մոնգօլների թագաւորութիւնը, բայց Աքբար-

Ծահի հակապատկերն է—մի ֆանատիկոս մահմեդական, որ ամբողջ ժամանակ մտածում է մարգարէի կրօնը տարածելու և տիրապետող դարձնելու մասին։ Այդ բարեպաշտական մտքերը իրականացնելու համար նա, ինչպէս վայել է մոլեռանդ աղանդաւորին, դիմում է բարբարոս բռնակալութեան ամենախիստ միջոցներին, յենվելով իր ահագին ուժի, իր յաղթութիւնների վրա։ Հնդկաստանում բացվում է երկարատև պատերազմների, այն էլ կրօնական պատերազմների մի մեծ շարք. անղացի ու խոլամ ազգաբնակութիւնը կեղեքւում է, ենթարկվում ծանր վիրաւորանքների և վերջապէս ապստամբութեան է դիմում՝ իր հին ազգային սովորութիւնները, իր կրօնական հաւատալիքները պաշտպանելու համար։ Ապստամբութիւնները, ի հարկէ, ճնշվում են սոսկալի անգթութիւններով։ Աւրէնգ-Զէբը այդպէս թագաւորեց մինչև 1707 թւականը։ Ճիշտ է, նա ստեղծեց մի ահագին պետութիւն, նուաճելով և իր երկաթէ ձեռքին հպատակեցնելով համարեա ամբողջ Հնդկական թերակղզին, բայց հէնց այդ մեծութեան մէջ թաքնված էր մի անդիմադրելի քայքայում, որ միայն աջող հանգամանքների էր սպասում։

Այդքան մոլեռանդ սիւննիի ժամանակ եւրօպացի քրիստոնեայ վաճառականները, ինչ ասել կուզէ, շատ վատ պիտի համարէին իրանց դրութիւնը։ Վնասվեցին մանաւանդ անգլիացիները։ 1686 թւականին նրանք սկսեցին նեղել Բենգա-

լիայում. անգլիացիները փորձեցին զէնքի ուժով դիմադրել, բայց դրանով միայն կատաղեցրին Աւրէնգ-Զէբին, որի ուղարկած բանակը ջարդեց անգլիացիներին և դուրս վռնդեց նրանց Բենգալիայից։ Բոլոր անգլիական գաղութները թէ արևելեան և թէ արևմտեան ծովափում կողոպտվեցան։ Հնդկաստանը համարեա թէ բոլորովին կորած էր անգլիական վաճառականների համար. և նրանք, ուրիշ ճար չը գտնելով, ստիպված եղան խոնարհվել ահարկու թագաւորի առաջ և իրանց հնազանդութիւնը յայտնել։ Այդպէս միայն նրանք կարողացան մնալ Հնդկաստանում։ Յիշենք որ հէնց այս տխուր ժամանակներում էր որ կնքվեց վերոյիշեալ դաշնագրութիւնը Ընկերութեան և հայ վաճառականների մէջ։ Սա էլ մի ապացոյց է, որ անգլիացիները շատ կարօտ էին հայերի աջակցութեան։

Տխուր ժամանակներն անցան, հէնց որ մեռաւ Աւրէնգ-Զէբը։ Նրա պետութիւնը, որի մէջ կուտակված էր այնքան դժգոհութիւն, այնքան թշնամութիւն, սկսեց պատառ-պատառ լինել, ցրիւ գալ. նրա յաջորդներն էլ թոյլ ու ողորմելի էին, գլուխ բարձրացրին տեղական իշխողները, անկախութիւն հաստատեցին իրանց համար. «մեծ մօղոլի» թագաւորութիւնը համարեա ոչնչութեան հասաւ։ Ահա այդ ժամանակ էլ սկսվեց Հնդկաստանի իսկական նուաճումը եւրօպացիների ձեռքով։ Անգլիացիների և ֆրանսիացիների մէջ սկսվեց

մրցութիւն. Իւրաքանչիւր կողմը աշխատում էր գրաւել ռաջաներին, նաբաբներին և սուբաբներին և այս իշխողները պատրաստ էին անցել այն կողմը, որ շատ փող էր տալիս։ Այդ մրցութիւնների մէջ ֆրանսիացիները մեծ աջողութիւն ձեռք բերին. Ֆրանսիական Ընկերութիւնը աշխատում էր մեծ եռանդով, գործադրելով թէ նուրբ քաղաքականութիւն, թէ զէնք և թէ դրամ։ Ֆրանսիական Հնդկաստանում երևան են գալիս խելքի և ընդունակութիւնների տէր, տաղանդաւոր գործիչներ, որոնք կառավարիչների, ծովապետների պաշտօններում ցոյց են տալիս կամքի ոյժ, քաղաքական նրբամտութիւն։ Դրանց մէջ շատ նշանաւոր է մանաւանդ Դիւպլէ, Ֆրանսիական Ընկերութեան նահանգապետը (1741 —1754)։ Լաւ զգալով, որ մօնղոլական պետութիւնից միայն մի խեղճ ուրուական է մնացել, Դիւպլէն յղանում է և գործադրել է սկսում մի համարձակ միտք—նուաճել Հնդկաստանը զէնքի ոյժով, նուաճել հէնց հնդկացիների ձեռքով. այլապէս այդ հարուստ երկիրը չահագործել չի լինի։ Մինչև այդ՝ ֆրանսիական և անգլիական ընկերութիւնները լոկ առևտրական հիմնարկութիւններ էին. նրանք չէին էլ մտածում հողեր ձեռք բերելու մասին, այլ աշխատում էին լաւ շահվել առևտրից և օգուտներ տալ բաժնետէրերին։ Դիւպլէն իր Ընկերութիւնը դարձնում է մի պատերազմող, աշխարհակալ պետութիւն. նա տեղացի հնդիկներից զօրագնդեր է կազմում, կրթում

է նրանց եւրօպական սիստեմով և ահագին հռչակ է ստանում Հնդկաստանում, դառնում է մի տեսակ թագաւոր։ Սկսվում են պատերազմներ. բայց դրանք շատ շուտով կորցնում են իրանց բուն նպատակը և դառնում են երկու եւրօպական ազգերի արիւնահեղ ընդհարումներ Հնդկաստանի հողի վրա։

Անգլիական Ընկերութիւնը քնած չէր, թէև չունէր, ֆրանսիականի նման, նշանաւոր գործիչներ։ Նա էլ դիմեց նոյն միջոցներին, նա էլ դարձաւ պատերազմող պետութիւն. և որովհետև միակ այդ երկու մեծ մարմիններն էին միմեանց արժանի, միմեանց համահաւասար մրցակիցներն ու ախոյեանները Հնդկաստանի առևտրական հրապարակում, ուստի նրանք էլ յարձակվեցան իրար վրա՝ համեղ որսից առիւծի բաժին ստանալու համար։ 1743 թւականին Անգլիան էլ մտաւ այն պատերազմի մէջ, որ մղվում էր Եւրօպայում աւստրիական ժառանգութեան պատճառով. այդ պատերազմում նա Ֆրանսիայի հակառակորդն էր։ Եւրօպայում տեղի ունեցող պատերազմը առիթ դարձաւ, որ ֆրանսիական և անգլիական ընկերութիւններն էլ Հնդկաստանում իրար դէմ կռուեն։ Եւ 1746 թւին ֆրանսիացիները խլեցին Մադրասը անգլիացիների ձեռքից։ Այստեղ յայտնի դարձաւ թէ ինչպէս են հայերը վերաբերվում անգլիացիներին։ Մադրասում ապրում էր Ջուղայեցի շատ

նշանաւոր և շատ հարուստ վաճառական Պետրոս Ոսկանեանը։ Միայն Մադրասում նա ունէր 33 տուն։ Պետրոսը փախաւ քաղաքից և ֆրանսիացիները քանդեցին նրա բոլոր տները, գրաւեցին նրա բոլոր գանձերն ու հարստութիւնները և տարան Պօնդիշէրի։ Դիւպլէն մարդ ուղարկեց հայ վաճառականի մօտ, խոստացաւ վերադարձնել նրա բոլոր ստացուածքները, եթէ նա կանցնէ ֆրանսիացիների կողմը։ Բայց Ոսկանեանը մերժեց այդ առաջարկութիւնը։ «Ինչ հարստութիւն ունեմ, անգլիացիներից եմ ստացել,—պատասխանեց նա,—և պարտաւոր եմ համարում ինձ բոլորովին հաւատարիմ մնալ անգլիացիներին»։ Դրա հետ հպարտ մեծատունը խնդրում էր, որ իր գանձերը բաժանեն աղքատներին, «որովհետև, աւելացնում էր նա, չեմ կարծում որ ֆրանսիական մեծահամբաւ պետութիւնը կարօտ լինի իմ չնչին ստացուածքներին» *)։

Անգլօ-ֆրանսիական ընդհարումները երկար տևեցին Հնդկաստանում, յամառ էին, բազմաթիւ։ Դիւպլէն շատ գեղեցիկ կերպով էր կազմել Հնդկաստանը նուաճելու ծրագիրը, բայց անգլիական հանճարն էր, որ փոխ առաւ ֆրանսիացիների այդ ծրագիրը և գլուխ հանեց նրան։ Անգլիական Ընկերութիւնն էլ ունեցաւ իր հանճարեղ զօրավարը. դա լորդ Կլայվն էր, որ անգլիական զէնքի

*) Պատմ. Նոր-Ջուղայու, I, եր. 134.

փառքը տարածեց Հնդկաստանի բոլոր անկիւններում և կատարեալ յաղթանակ պարգևեց անգլիացիներին։ Ֆրանսիացիները, Դիւպլէի հեռանալուց յետոյ, ստիպված էին տեղի տալ իրանց հզօր ախոյեանին. հետզհետէ նրանք կորցրին իրանց բոլոր կալուածները, այնպէս որ XVIII դարի 60-ական թւականներին ֆրանսիական տիրապետութիւնը Հնդկաստանում համարեա թէ ոչընչացաւ։ Ասպարէզը մնաց միայն անգլիացիներին։ Բայց նրանք դեռ Հնդկաստանի իսկական տէրերը չէին. նրանք դեռ պիտի զէնքով կամ սակով նուաճէին տեղացի անկախ բազմաթիւ իշխաններին։ Սկսվեցին մանր և խոշոր պատերազմներ, որոնք տևեցին մինչև XIX դարի կէսը։

Այդ անվերջ պատերազմներից մի քանիսի մէջ հայերն էլ մեծ դեր կատարեցին *)։ Օրինակ, Ջուղայեցի Պետրոս աղա Յարութիւնեան ազատեց անգլիական զօրքը սովից, պաշար հասցնելով նըրան։ Այդ պատերազմներից միայն մէկը կը յիշատակենք մենք։ 1763 թւականին անգլիացիները ստիպված եղան զէնք գործ ածել Միր-Կասըմի դէմ, որին իրանք էին նշանակել հարուստ Բենգա-

*) Հնդկաստանում XVIII դարի ընթացքում տեղի ունեցած պատերազմների պատմութիւնը գրել է Ջուղայեցի Թովմաս Խօջամալեան, որ նախ նաւապետ էր, ապա դարձաւ երևելի վաճառական։ Նրա գրուածքը տպված է Կալկաթայում 1849-ին «Պատմութիւն Հնդկաց» վերնագրով։

վիայի տէր։ Միր-Կասըմը, զզուելով անգլիացիների հարստահարութիւններից, զօրքեր հանեց նրանց դէմ, մի շարք պատերազմներ սկսեց, որոնք մղվում էին մեծ հմտութեամբ և յամառութեամբ։ Մեզ համար հետաքրքրականն այն է, որ Միր-Կասըմի բանակի հրամանատարները հայեր էին։ Գլխաւոր հրամանատարը վերոյիշեալ Պետրոս աղա Յարութիւնեանի եղբայրն էր, Գրիգոր անունով։ Այս Գրիգորը վաճառական էր, բայց յանկարծ դարձաւ մի քաջ և անուանի զինուորական, որին հպատակվում էր Միր-Կասըմի ամբողջ զօրքը։ Նա ստացաւ Գորգին-խան անունը և երկրում մեծ հռչակ էր վայելում։ Եւ Գրիգորը միակ հայը չէր այդտեղ. Միր-Կասըմի բանակում կար և հայ զօրախումբ, կազմված նոյնպէս վաճառականներից։ Բացի Գրիգոր-խանից, անուն են հանել և ուրիշ հայ զօրավարներ, որոնց թիւը հասնում էր ութի։ Դրանք կոչվում էին հազարապետ. Մարգար Ջուղայեցի (Գրիգորի եղբայրը), Յարութիւն Ջուղայեցի, Գրիգոր Այվազեան Ջուղայեցի, Պետրոս Հայաստանցի՝ Աղձնիկ գիւղից, Ղազար Մարաղեցի, Մարտիրոս Մարաղեցի, Սուքիաս Թաւրիզեցի, Յովհաննէս Թաւրիզեցի։

Գորգին-Խանը կառավարում էր ամբողջ երկիրը. հայերը իրանց քաջութիւններով այնքան մեծ անուն էին հանել, որ երկիւղ էին ազդում ամենքին։ Միր-Կասըմի զօրքը, հայ հրամանատարների առաջնորդութեամբ, շատ արշաւանքներ

գործեց դէպի զանազան կողմեր. հայերը ցոյց տուին մեծ քաջութիւն մանաւանդ անգլիացիների դէմ, որոնք մի անգամ յաղթվեցան հայերից և այնքան անճարացել էին, որ փորձեցին կաշառել Գորգին-խանին։ Բայց հայ զօրապետը հպարտութեամբ պատասխանեց թէ ինքը այդպիսի ստորութիւն չի անի և պիտի հաւատարիմ մնայ Միր-Կասըմին, ինչպէս իր եղբայր Պետրոսը հաւատարիմ է անգլիացիներին։ Դրանից յետոյ պատերազմը աւելի սաստկացաւ. բոլոր ընդունակ հայ զօրավարները ուղարկվեցան անգլիացիների դէմ, բայց այստեղ երևան եկաւ հայկական մի բնորոշ յատկութիւնը։ Գորգին-խանը արհամարհեց իր հայ հազարապետներին, նրանց պատերազմական խորհրդի չը կանչեց և ամենքի վրա հրամանատար նշանակեց մի հնդկացու, որ մի անընդունակ մարդ էր։ Հայերը վիրաւորվում են և պատերազմի մէջ դիտմամբ անգործ են մնում, այնպէս որ անգլիացիները մի անակնկալ յարձակումով փախցնում են հնդկական զօրքի մեծ մասը։ Տեսնելով այդ դրութիւնը, հայ զօրավարները նոր միայն միանում են և յարձակվում անգլիացիների վրա. երկար ու յամառ կռուի մէջ թէև հայերը մեծամեծ քաջութիւններ են ցոյց տալիս, բայց յաղթել անգլիացիներին չեն կարողանում։ Այնուհետև էլ հայ հրամանատարները առանձին-առանձին մի քանի անգամ սաստիկ և երկարատև կռիւներ են բռնվում անգլիացիների հետ. բայց Գորգին-խա-

նից չարունակ դժգոհ են մնում։ Այս անհամաձայնութիւնը վերջնականապէս քայքայում է Միր-Կասըմի զօրքը. անգլիացիները յաղթութիւններ են տանում։ Գորգին-խանը սպանվում է իր մի զօրականի ձեռքով. հայերը ցրվում են, էլի իրանց վաճառականութիւնն են սկսում։ Մի քանի հրամանատարներ չարունակում են ծառայել Միր-Կասըմին, բայց ընկնում են անգլիացիների ձեռքը և ազատ արձակվում։ Պատմիչը *) գանգատվում է հայ սպարապետի և հազարապետների ագիտութեան և անզգուշութեան վրա։ «Ամենքը վաճառականներ էին—ասում է նա—և ինչ գիտէին թէ ինչ է զինուորական պատիւն ու մեծարանքը»։ Եւ իրաւ. քաջութիւն ու խիզախութիւն չէր պակասում այդ վաճառականներին։ Նրանք ցոյց տուին որ միայն ոսկին չէ նրանց գաղափարը, այլ գիտեն և կռուել։ Բայց հայկական նախանձն ու անմիաբանութիւնը այստեղ էլ քանդեց ամբողջ գործը, թէև հայը օտարին սովորաբար շատ լաւ ծառայել գիտէ **)։

*) Խօջամալեան—«Պատմ. Հնդկաց», եր. 115.

**) Հետաքրքրական է, որ հայերը հնդկացի իշխողներին ծառայում էին և XIX դարում։ Այսպէս, 1829-ին Աքպարաբատի Թագաւորի սպարապետն էր Յակոբ Պետրոսեանը. Նրա ձեռքի տակ կար հայ զօրքի մի գունդ, բաղկացած հարիւր հոգուց։ Թագաւորի թիկնապահ շատ սիրված զօրքն էր դա (Ղազարօվիչ, „Ստորագրութիւն Կալկաթա քաղաքի“, Վենետիկ, 1832, եր. 43)։

III

Հնդկահայ վաճառականի հասարակական գործունէութեան առաջին աչքի ընկնող օրինակը տալիս է մեզ վերոյիշեալ Ջուղայեցի Պետրոս Ոսկանեանը։ XVIII դարի առաջին կէսում նա Մադրասում Անգլիական Ընկերութեան խորհրդականներից մէկն էր և շատ յայտնի էր նոյն իսկ օտարների մէջ իբրև բարեսէր մեծատուն։ Իր հարստութիւններից նա բաժին հանեց այն երկրին, որ այնքան հարստացրել էր նրան։

Բայց չը մոռացաւ և իր իսկական հայրենիքը։ Հէնց այս կողմից էլ նա ներկայանում է իբրև տիպար հնդկաստանցի երախտաւոր հայերի։ Դա ջերմ հայրենասիրութեան տիպարն էր։ Ո՛չ հարստութիւնը, ո՛չ փառքը չէին կարողանում խեղդել նրա մէջ հայրենիքի կարօտը։ Ոսկանեանին այնքան տանջում էր այդ կարօտը, որ նա կարգադրեց՝ իր մահից յետոյ հանել իր սիրտը և տանել թաղել Ջուղայում։ Այդպէս էլ արին։ Բայց հայրենի հողով ծածկվելու բախտը բաւական չէր այդ սրտին. իր սաստիկ սէրը նա արտայայտեց և շօշափելի, հանրօգուտ գործով։ Ոսկանեանը կտակ էլ թողեց յօգուտ Ջուղայի, գուցէ առաջինը հնդկական հռչակաւոր կտակներից։ Այդ կտակով 400 թուման նշանակվում էր Ջուղայում աղքատանոց շինելու համար, 1000 թուման մի այնպիսի դպրոց բաց

անելու համար, ուր պիտի ուսանէին հայ, լատին և թիւրք լեզուները, 60 թուման էլ այդ դըպրոցի շինութիւնը կառուցանելու համար։

Հասարակական գործունէութիւն, հիմնված առողջ, ազնիւ հայրենասիրութեան վրա—ահա ինչ ենք տեսնում Հնդկաստանցի հայ վաճառականների մէջ։ Դա մի նոր երևոյթ է։ Փոխվում են հասկացողութիւնները. տեղային, եսամոլ հայրենասիրութիւնը տեղի էր տալիս աւելի լայն, հանրային գաղափարին. մի ընդարձակ, ընդհանուր հայրենասիրութիւն է դա։ Զգացվում է հայութեան, հայ երկրի շահերի կարևորութիւնը, աւելի լայն, աւելի խոշոր բարեգործութիւնների անհրաժեշտութիւնը։ Հրապարակ են գալիս մոռացված գաղափարներ. սրանց մեծարելու, սրանց համար խոշոր զոհաբերութիւններ անելու միտքն է արծարծվում։ Ո՞վ բերեց այդ նոր հայեացքը։—Անգլիական ազդեցութիւնը։

XVIII դարի առաջին երեք քառորդներում մի այլ ազգ հազիւ թէ կարողանար այնպէս կըրթել մարդկանց բարձր ու վեհ գաղափարների ոգով, ինչպէս կրթում էր անգլիական ազգը։ Հըպարտ, հայրենասէր, ազատ, բարձրագլուխ անգլիացին իր օրէնքներով, որոնք ապահովում էին իւրաքանչիւր անհատի իրաւունքները, անկախութիւնը, իր սահմանադրական կառավարութեամբ, որ ամբողջ ժողովրդի վեհապետական իրաւունքներն էր պահում, Վօլտէրի և Մօնտեսքիէի նա-

խանձն ու հիացմունքն էր շարժում։ Նոյն այդ անգլիացին պատերազմում էր Հնդկաստանում, ցոյց էր տալիս հերոսութիւններ, իր խելքով, իր տոկուն բնաւորութեամբ հրաշքներ էր գործում Ասիայի այդ անկիւնում, ուր ամենահին ժամանակներից մարդը վիզ էր ճկում բարբարոս բռնակալութեան լուծի տակ։ Այդ բոլորը տեսնում էր հայ վաճառականը և, բնականաբար, նրա մէջ էլ շարժվում էին տենչանքներ հայրենիքի ազատութեան, մարդկային իրաւունքների մասին։ Իսկ ինչ մտաւոր պաշար էր ուղարկում Անգլիան Հնդկաստանում գործող իր որդիներին։—Մի շատ զարգացած մամուլ, որ առաջադէմ գաղափարներ էր տարածում, որ հասարակական կարծիքի արտայայտիչն էր և ժողովրդի առաջ էր դնում պատգամաւորների ժողովի նիստերը, ուր ժամանակի հռչակաւոր ճառախօսները, ազատութեան, արդարութեան, օրինականութեան այդ մեծ պաշտպանները, արտասանում էին անվախ, որոտալից, պերճախօս ճառեր *)։

Բացի դրանից, անգլիական ցեղը հէնց այդ միջոցին երևան էր հանել մի հերոսական ահագին պայքար, որ ամբողջ աշխարհի ուշադրութիւնն էր

*) Անգլիայի այդ դրութիւնը հիանալի կերպով պատկերացրել է ֆրանսիացի նշանաւոր գիտնական Տէն (Исторія англійской литературы, Спб., 1871, ч. II, եր. 185—201)։

գրաւել և մարդկային ամենանուիրական գաղափարների, իրաւունքների անունով էր մղվում։ Դա Հիւսիսային Ամերիկայի անգլիական գաղթականութիւնների ներքնական ինքնապաշտպանութիւնն էր, որ փոխվեց ապստամբութեան, երկարատև արիւնահեղ պատերազմների և ապա ծնեցրեց Միացեալ-Նահանգները։ Ամերիկական շարժումը նկատելի էր դարձել դեռ 1754 թւականներից, երբ գաղթականական առանձին նահանգները առաջին անգամ միացան՝ երկիրը ընդհանուր ույժերով պաշտպանելու և ռամկավարական վարչութիւն սահմանելու համար *)։ Մենք ունենք մի քանի հատ նշանաւոր փաստեր, որոնք վկայում են թէ ինչպէս ովկիանոսի միւս ափում սկսված այդ մեծ ազատասիրական շարժումը ազդում է Գանգէսի ափերում առևտուր անող մի բուռն հայ մարդկանց վրա։ Սրանք հասկանում են, որ իրանց ժողովուրդն էլ իրաւունք ունի անկախ սեփականատէր, ազատ լինելու։ Սարուկ ու արնաքամ Հայաստանը դառնում է այդ մարդկանց մտատանջութեան առարկայ. Նրանք, այդ վաճառականները, սկսում են հասկանալ թէ ինչ է հարկաւոր հային։ Բայց ինչ կարող էր անել վաճառականը այդ հեռաւոր երկրից։ Նա թողնում է իր շահն ու վաստակը,

*) Нейманнъ—„Исторія Америк. Соединен. Штатовъ“, Спб., 1866, т. I. եր. 115.

դառնում է քաղաքական գործիչ, մտնում է հրապարակախօսի, քարոզողի, յորդորողի դերի մէջ։

Հայաստանը արդէն ունէր գործ, որ ցոյց էր տալիս հնդկաբնակ հայրենասէրներին, թէ մի ազատ հայրենիքի գաղափարը չէ կարող ցնորք լինել և՛ հայի համար։ Դա Ղարաբաղի ապստամբական շարժումն էր, որ թէև անաջողութեան էր հանդիպել, բայց դեռ ապրում էր այն լեռներում, հայ կիսանկախ և քաջ մելիքների հովանաւորութեան տակ։ 1760 թւականին Լօնդօնից Պետերբուրգ գնաց Էմին Յովսէփեան անունով մի հայ վաճառական. Նա համադանցի էր և Հնդկաստանում ահագին հարստութիւն էր դիզել։ Ներկայանալով ռուսաց արքունիքին, Էմին Յովսէփեանը առաջարկեց նորից ձեռք առնել հայերի ազատութեան գործը և խոստացաւ իր ամբողջ հարստութիւնը դնել ռուսաց կառավարութեան տրամադրութեան տակ։ Եղիսաւետա Պետրովնա կայսրուհու կառավարութիւնը այդ ժամանակ արևելեան քրիստոնեաների հարցով զբաղվելու միտք չունէր։ Բայց և այնպէս, Յովսէփեանի առաջարկութիւնը բոլորովին անտես չարվեց. խորհուրդ տուին հայ վաճառականին որ նա նախ գնայ Հայաստան և իմանայ հայերի տրամադրութիւնն ու հայեացքները։

Յովսէփեանը ճանապարհվեց Անդրկովկաս։ Ղարաբաղի, նոյնպէս և Երևանի մելիքները դեռ

պատրաստ էին շարունակել ազատութեան պայքարը, և հարուստ Հնդկաստանցին, որ եկել էր յայտնելու թէ իր միլիօնները զոհում է հայրենիքին, միայն ոգևորութիւն և հիացմունք կարող էր ազդել ազատութեան զինուորներին։ Ի՞նչն էր պակաս, որ նորից ոտքի կանգնէր ապստամբութիւնը։ — Յայտնի չէ. մենք տեսնում ենք Յովսէփեանին Հնդկաստան գնալիս. նրան չէր աջողվել կենդանացնել իր ծրագիրը *)։ Ինչ էլ լինի Էմին Յովսէփեանը դրանից յետոյ էլ դեռ երկար ժամանակ չէր մոռացել իր ծրագիրը **)։

Այս հայրենասէր վաճառականի ժամանակակից է մի աւելի եռանդուն, աւելի հետաքրքրական անձնաւորութիւն։

Հնդկաստան գնացած ջուղայեցիների մէջ կար մի խեղճ գերձակ, Շամիր Սուլթանում Շամիրեան կամ Շահամիրեան անունով։ Մադրասում նա բաց է անում մի փոքրիկ խանութ, բայց շուտով թողնում է ասեղն ու մկրատը, դառնում է սեղանաւոր, մարգարիտի առևտուր է սկսում և կարճ միջոցում հնդիկ մի նաբաբի աջակցութեամբ

*) Бутковъ—„Матеріалы по исторіи Кавказа“, т. II, Спб., 1869, եր. 141.

**) 1780 թւականին հռչակաւոր գեներալ Սուվորով կազմում էր Հայաստանի ազատութեան ծրագիրը և նամակ գրել տուեց որ Էմինը գայ Պետերբուրգ՝ բանակցութիւնների համար («Կռունկ» ամսագիր, 1863, եր. 511)։

մեծ հարստութեան տէր է դառնում։ Մեծ ընտանիք ունէր նա. և նրա որդիներից երկուսի անունները պէտք է իմանալ. աւագը կոչվում էր Յակոբ, նրանից կրտսերը—Եղիազար։

Մի պարզ արհեստաւոր, սնված ու մեծացած Ջուղայի անկման, քայքայման շրջանում, պարսկական բռնութիւններից մեծ չարչարանքներով օտար երկիր փախած,—նա, ի հարկէ, չունէր մեծ կրթութիւն, նոյն իսկ լաւ չէր իմանում հայոց լեզուն։ Հնդկաստանը, սակայն, կերպարանափոխում է նրան. և միայն հարստութիւնը չէ այդ կերպարանափոխութեան նշանը։ Շահամիրեանը ճանապարհորդում է շատ տեղեր. նրա հարցասէր, կենդանի և աշխոյժ խելքը շատ բան է սովորում անգլիացիներից։ Երևի, նա սովորել էր անգլերէնը, կարդում էր գրքեր և լրագիրներ։ Եւ ահա մեր ջուղայեցի գերձակը հրապարակ է դուրս գալիս իր ազգին նոր մտքեր քարոզելու, քաղաքական և հասարակական առաջադիմութեան ճանապարհ ցոյց տալու համար։ Մի ժիր, հայրենասէր գործիչ է նա։ Մտքեր տարածելու, պրօպագանդա սկսելու գործիքը—տպարանը—շատ հարկաւոր էր այդպիսի մարդուն և նա իր որդի Յակոբի անունով բաց է անում Մադրաս քաղաքում մի հայերէն տպարան, առաջինը Հնդկաստանի հայերի մէջ։ Փոքրիկ, շատ պակասաւոր մի հիմնարկութիւն էր դա. հնդկական հողը դեռ այդպիսի գործեր զարգացնելու պատրաստութիւն չունէր.

ոչ տպագրական թուղթ էր ճարվում, ոչ հմուտ վարպետներ կային։ Աւելի աղքատիկ ու պակասաւոր էին այն ոյժերը, որոնք պիտի կենդանացնէին տպարանը, նիւթ տալով նրան։ Մի վաճառականական փոքրիկ գաղութի մէջ, հայրենի երկրից, գրական դասակարգից այնքան հեռու մի տեղ, նոյն իսկ շատ համեստ մտաւոր միջնավայր ստեղծել չէր կարելի, որքան էլ անպակաս լինէր եռանդը, բարի կամքը։ Սակայն Շահամիրեանը անում է այն, ինչ կարելի էր անել այդպիսի պայմանների մէջ. չը նայած իր անպատրաստութեան, լոկ իր վառվռուն հայրենասիրութեամբ ոգեւորված, նա դառնում է հնդկահայերի գրականութեան նախահայրը։ Ինչե՛ր չէ անում սուրբ ոգեւորութիւնը։

Շահամիրեանը Սաղմոս կամ Ժամագիրքը չէ տպագրել տալիս, այլ ինքը հանդիսանում է հեղինակ, գրքեր է շարադրում։ Պէտք է նախ և առաջ ուշադրութիւն դարձնել այն բանի վրա, որ թէ տպարանի տէրը և թէ գրքեր գրողն ու հրատարակողը Շամիրի որդի Յակոբն է։ Բայց մենք շատ փաստեր ունենք հաւատալու որ եթէ ոչ գրողը, գոնէ ներշնչողը, անմիջապէս ղեկավարողը ինքը, Շամիր Սուլթանումն է։ Այդ փաստերն են նրա նամակները, նրա ամբողջ գործունէութիւնը։ Յակոբը դեռ պատանի էր, դեռ ուսում էր առնում։ Նրա ուսուցիչ Մովսէս Բաղրամեանը դառնում է Շահամիրեանի աշխատակիցը։ Շահամիրեանը, չը նայած իր այդ աշխատակցի օգնութեան,

հարկադրված է խոստովանել իր տպագրութիւնների մէջ թէ ինքը վաճառական մարդ է, ուսում չէ ստացել, չը գիտէ քերականութիւն և ուղղագրութիւն, և եթէ, այնուամենայնիւ գրքեր է գրում և հրատարակում, պատճառն այն է որ սիրում է իր ազգը, կամենում է ծառայել նրան իր իմացածով։ Թո՛ղ, ասում է նա, լեզուագէտ, գիտուն հայերը աւելի լաւ կատարեն այն, ինչ ինքն է անում, մի անուսում վաճառական. այն ժամանակ նա ինքը շատ ուրախ կը լինի և կը քաշվէ ասպարէզից։ Այս բանը նա շատ անգամ է կրկնում։ Եւ մենք, կարդալով Շահամիրեանի գրքերը, չենք կարող կատարեալ իրաւունք չը տալ նրան։ Իր անգրագիտութեամբ հանդերձ նա մի բոլորովին նոր երեւոյթ էր մեր գրական աշխարհում. հայ գիտուն գրագէտները չէին հասկանում այն, ինչ հասկացաւ և սկսեց քարոզել Շահամիրեանը։

IV

Առաջին գիրքը, որ լոյս տեսաւ Յակոբ *) Շահամիրեանի տպարանից, մի այբբենարան էր,

*) Մենք թէ տպարանը և թէ գրքերը կը շարունակենք Յակոբի անունով յիշատակել, չը մոռանալով, սակայն, որ այդ անուան ետեւում միշտ կանգնած է Շամիր Սուլթանումը։ Ի դէպ. Նրա ազգանունը գրվում է կամ Շամիրեան, կամ Շահմիրեան, կամ Շահամիրեան։ Մենք ընտրեցինք վերջինս։

որ նման չէր մեր սովորական այբբենարաններին, այլ կազմված էր նոր ձևով, երևի, եւրօպական օրինակի վրա։

Դրան 1772 թւականին յաջորդում է Շահամիրեանի առաջին հեղինակութիւնը՝ «Նոր Տետրակ, որ կոչի Յորդորակ» անունով։ Անմիջապէս այդ վերնագրի տակ բացատրված է որ գիրքը յօրինված է՝ հայ երիտասարդներին ծուլութեան քնի թմրութիւնից սթափեցնելու համար։ Աստուածաբանութիւնը, հոգեպաշտութիւնը չեն այդ սթափեցնողները, այլ—առաջին անգամ երկար դարերից ի վեր—ազգային ինքնաճանաչութիւնը, իսկական հայրենասիրութիւնը։

Սկսվում է այդ գիրքը մի ընդարձակ ոտանաւորով։ Կիսագրագէտ մարդը յանձն է առել մի շատ դժուար աշխատանք—ոտանաւորով զարթեցնել գաղափարական մեծ շարժում, հասկացնել անկման արատը և վերածնութեան կենսատու զօրութիւնը։ Այդ բանաստեղծական փորձը խիստ անաջող է. Նրա մէջ արուեստ չը կայ, բացակայում է չափը, լեզուն աղքատ է, ոճը անհարթ, աղքատիկ։ Եւ դա Երգ է, որ պիտի ծուլութեան մահանման քնից սթափող երիտասարդութեան ղեկավարը դառնայ։ Ո՛չ, այդպիսի արհեստական, ողորմելի ոտանաւորները չեն, որ ցնցում են դարաւոր ստրկութեան մատնված մի ժողովրդի սիրտն ու հոգին, ցոյց են տալիս անկման սարսափը,

փտող վէրքերը։ Բայց մեղաւոր էր ազնի և մկրատի մարդը, այդ հարուստ ակնավաճառը, որ լեզու և շնորհք չունէր իր սիրած ազգի մէջ յուզմունք և հիացմունք տարածել կրակոտ լեզուով, իսկական բանաստեղծի ոգևորութեամբ։ Իսկական բանաստեղծներ աշխարհային այն ցաւերի համար, որոնց ուզում էր երգել Շահամիրեանը, հայ ազգը դեռ չէր տուել։ Եւ մենք չարադրութեան գոնէ նշանակութիւնը հասկանալու համար չը պիտի նայենք նրան արուեստի տեսակէտից։ Միանգամայն հաշտվենք, ինչպէս շատ տեղ խնդրում և թախանձում է ինքը՝ Շահամիրեանը, այն իրողութեան հետ, որ դերձակութիւնից ակնավաճառութեան հասած այդ վաճառականը գրական տեսակէտից փոքր ի շատէ կատարեալ գործեր չէ ուզեցել տալ մեզ, այլ միայն մտքեր զարթեցնելու, գաղափարներ ձևակերպելու տենչանքից է ստիպվել իր խեղճ գրչին ասպարէզ տալ։ Այս հայեցակէտը որոշելուց յետոյ մենք կը գտնենք Շահամիրեանի մօտ շատ նշանաւոր յատկութիւններ։

«Նոր Տետրակը» առաջին հրապարակախօսութիւնն *է մեզանում։ Մի շատ ախորժելի զարմանքով մենք գտնում ենք նրա մէջ մի առանձին, բախտաւոր բացառութիւն. դժոխքի և արքայութեան հանգամանքները բացատրելու համար չէ նա կազմվել և լոյս տեսել, ոչ դաւանաբանական վէճեր ծեծելու համար, ոչ էլ քնացնող հոգեշահ*

խրատներ տալու համար։ Դա աշխարհային ցաւերին նուիրուած մի աշխահիկ գրուածք է. իրականութիւնն է նրա էութիւնը, դժբախտութեան, յետամնացութեան դէմ դարման գտնելու հոգսն է նրա միակ ձգտումը։ Շահամիրեանը առաջին հայն է միջին դարերից յետոյ, որ վերցնում է հայութիւնը իբրև ազգութիւն. Նա հասկանում է որ հոգեպաշտութիւնը չէ կարող միայնակ երջանկացնել մի ազգութիւն այս աշխարհում, ուր գործում են բազմաթիւ բնական օրէնքներ. և մտնում է իր ազգի դրութեան մէջ, ցոյց է տալիս նրա պակասութիւնները, մտրակում է ազգային տգիտութիւնը, ուսումնատեացութիւնը, անմիաբանութիւնը. Նա պահանջում է որ հինաւուրց ստրուկը սրբէ իր կեղտերը, ոտքի կանգնէ իբրև վերածընւող մի մարմին և ազատութիւն, կատարեալ անկախութիւն ձեռք բերէ։ Առանց այդ քաղաքական ազատութեան, ասում է նա, չը կայ փրկութիւն, չը կայ ազգային պատիւ, առաջադիմութիւն և երջանկութիւն։ Ահա ինչ է քարոզում այդ անարուեստ, խեղճ ու կրակ ոտանաւորը, որ թոյլ ու անկարող է, բայց և գեղեցիկ ու յուզիչ՝ իբրև մանկական առաջին թոթովանք...

Ո՞րտեղից և ինչպէս դուրս բերեց Շահամիրեանը այդ ճշմարտութիւնները. ովքեր էին նրա դաստիարակները, նրան ղեկավարողները։ Ինքը, շարադրութիւնը, պատասխանում է այս հարցերին։ Առաջին աղբիւրը Ս. Գիրքն է, Աստուածաշունչը

և Աւետարանը։ Հետաքրքրական է Շահամիրեանը իբրև այդ գրքերի բացատրող։ Մարդկային միտքը երկու ծայրեր է ներկայացնում կրօնական գրքերը հասկանալու և բացատրելու մէջ։ Եղել են այնպիսիները (և դրանք անհագին թիւ են կազմում), որոնք այդ գրքերից դուրս են բերել միայն սաստիկ ատելութիւն դէպի աշխարհային գործերը, միայն յուսահատութիւն և հիասթափումն մարդու բնութեան, ընդունակութիւնների վերաբերմամբ։ Այստեղից առաջացել է վանական-ճգնաւորական իդէալը, որ վարակել է ամբողջ աշխարհը, սպանել է մարդու մէջ ինքնագործունէութեան ամեն մի միտք, ամեն մի ձգտում. դարերի ընթացքում նա մարդկանցից պատրաստում էր իրանք իրանց ատող անհատներ, որոնք պիտի մոռանային ամեն աշխարհային գործ ու հոգս և մտածէին, տանջվէին միմիայն երկնքի համար։ Մեզանում ամբողջ գրականութիւնը այդ սպանող ոգով էր տոգորված. ստորացնել մարդու արժանաւորութիւնը, սովորեցնել որ մարդը մի ոչնչութիւն է, սոսկալի յանցանք է գործում, սրտանց կպչելով երկրաւոր գործերին, հաստատել թէ ամեն ինչ ունայնութիւն է լուսնի տակ և ոչինչ լաւ բան չէ կարելի սպասել նիւթական աշխարհից— ահա ինչ ջանքեր էր գործադրում վանական-ճգնաւորական իդէալը՝ մարդկանց ստրկացնելու և իր թագաւորութիւնը անխախտ պահելու համար։

Հայերը այդ կողմից միջնադարեան ամբողջ քրիստոնէութեան մի կտորն էին կազմում։

Բայց եղան և այնպիսինները, որոնք բոլորովին ուրիշ գաղափարներ հանեցին նոյն Ս. Գրքից։ Այս սակաւաւորներն էին, որ ազատութեան, ջերմ հայրենասիրութեան, մտքի անկախութեան, լայն հայեացքների քարոզիչներ դարձան, հիմնվելով այն իսկ գրքերի վրա, որոնցից վանականութիւնը այնքան յուսահատական, մռայլ, անձնասպան եզրակացութիւններ էր հանում։ Շահամիրեանը հէնց այս տեսակ քարոզիչներից մէկն էր մեզանում, առաջինը՝ երկար դարերի խաւարի մէջ։ Ազգային իրաւունքները, քաղաքական ազատութեան ստիպողական անհրաժեշտութիւնը նա հաստատում և ապացուցանում է Աստուածաշունչի տուած օրինակներով, Քրիստոսի և նրա աշակերտների վարդապետութիւններով։ Շահամիրեանի ժամանակ Հիւսիսային Ամերիկայի անգլիական գաղթականութիւնները, նոյն այդ Ս. Գիրքը քաղաքական անկախութեան և ապստամբական շարժման դրօշակ դարձրած, մեծ ոգևորութեամբ և անձնազոհութեամբ պաշտպանում էին իրանց նուիրական իրաւունքները։ Այդ մեծ շարժումը դասեր էր տալիս ամէն մէկին նոյն Աստուածաշունչի և Աւետարանի վրա. և այդտեղից էլ, երևի, ներշնչումներ էր ընդունում հայերի քաղաքական վերածնութեան առաջին գրական քարոզիչ Շահամիրեանը։

Ս. Գրքից յետոյ Շահամիրեանին ոգևորողը

հայոց ամենամեծ հեղինակն էր, Մովսէս Խորենացին։ Խօսելով Խորենացու պատմութեան առաջին տպագրութեան մասին, մենք ցոյց տուինք թէ ինչ մեծ դեր պիտի կատարէր մեր պատմահայրը՝ ազգային գիտակցութիւն, ինքնաճանաչութիւն տարածելու մէջ *)։ Խորենացու ազդած հայրենասիրական կրթութեան առաջին երևոյթը, տպագրութեամբ լոյս տեսնելուց յետոյ, հնդկաստանցի վաճառականն էր։ Ո՛րպիսի ոգևորութիւն, հաւատ, խրախոյս են ներշնչում Շահամիրեանցին ազգային այն հին հերոսները, որոնց նկարագիրը թողել է Մովսէս Խորենացին։ Հայկը, Տիգրանը, Տրդատը նրա թև ու թիկունքն են դառնում՝ ազատութիւն քարոզելու մէջ։ Այդ անունները կենդանացնում են Շահամիրեանի սովորաբար ցուրտ, արհեստական ոտանաւորը. դուք զգացվում էք, կարդալով այն տողերը, ուր Շահամիրեանը կանչում է հին հայոց քաջերին, ցոյց է տալիս նրանց Հայաստանի տխուր, արիւնոտ ներկան և նրանց հովանաւորութիւնն ու օգնութիւնն է խնդրում։

Համեմատութիւնը անցեալի և ներկայի մէջ նրան դառն մտածութիւնների է հասցնում։ Հայաստանը նրան ներկայանում է սկզբից մի ընտրեալ և երջանիկ երկիր. Արարատը, Նախիջևանը, Մարանդը, դրախտի գետերը իրանց հետ կապված աւանդութիւններով վկայ են որ երկիրքը առաջ-

*) «Հայկ. Տպ.», I, եր. 336—343.

նութիւն է տուել այդ երկրին, դարձնելով նրան մարդկութեան առաջին հայրենիք։ Հսկաներ էին թագաւորում այդտեղ. և հայը այդ ժամանակներում գովելի էր բոլոր ազգերից աւել. իսկ այժմ... «Ստրկաբար օտար ազգերի ծառայութեան տակ ընկնելու պատճառով, իբրև ստոր գերիներ՝ բոլոր ազգերից անպիտանը և ատելին դարձանք», բացականչում է Շահամիրեանը։ Առաջին անգամն է, որ հայոց պատմութիւնը իր փիլիսոփայութիւնն է յայտնում այդ վաճառական հայրենասէրի բերանով։ Մինչև այդ՝ հայը իր դժբախտութիւնների, իր ստրկալի գերութեան պատճառը միմիայն իր մեղքն էր համարում։ Նրան ամեն ժամանակ համոզում էին, որ եթէ կոտորած կոտորածի ետևից է գալիս, եթէ քար քարի վրա չէ մնում, կայ միայն մի պատճառ. այն, որ նա, այդ մոլորուող և սպառուող ազգը, շատ է մեղաւոր, իր անիրաւութիւններով, իր յանցանքներով շարժում է երկնքի բարկութիւնը և այդպիսի պատիժներ է ստանում։ Եւ դժբախտ, անզէն, ցիրուցան ազգը աւելի ևս թուլանում էր այդ համոզմունքից, աւելի ևս խրվում էր կրօնական նախապաշարմունքների մէջ։ Շահամիրեանը այդպէս չէ հասկանում հայոց երկրի կործանման բուն պատճառը։ Մեղքը իր կարգին, ասում է նա, բայց Հայաստանը արիւնով լուացող թշնամիները միայն իրանց ույժով չէին տիրում ու առնում, այլ այն պատճառով, որ հայերը ժամանակի ընթացքում անպիտանացան, ծուլացան,

չէին հետևում իրանց փառաւոր նախնիքների օրինակին, չէին պատերազմում, չէին միանում, մոռացել էին հայրենիքի շահերը։ Կոտորողների, քանդողների դիմաց նրանք միայն մի միջոց գիտէին —փախչել, անյայտանալ քարերի ծերպերում։ Ամեն մէկը կեանք փրկել էր աշխատում. բայց դա փրկութիւն չէր. որոնք էգ էին—կանայք, աղջիկներ, միահամուռ խայտառակւում, պղծվում էին, իսկ արուները—տղամարդիկ, երեխաներ, մեծից մինչև փոքրը, կոտորվում էին։ Հայաստանը սուգի հայրենիք դարձաւ. հայոց վարդերն ու մանուշակները չորացան, քաղցրահամ աղբիւրները արիւնոտ եղան. հայը թափառական ընկաւ երկրից երկիր, իսկ իր իսկական հայրենիքում միայն արտասունք էր ուտում ամեն տեղ փռված դիակների մէջ...

Երկար ողբում է Շահամիրեանը այս դժբախտ դրութիւնը, երկար նա կանչում է իր նախահայրերին, կանչում է հին Իսրայէլի դժբախտութիւնները ողբացողներին, քրիստոնէական եկեղեցու սուրբերին։ Թող ամենքը տեսնեն թէ ինչպէս գազան տիրողները չեն բաւականանում իրանց սահմանած հարկերն ու տուրքերը ստանալով, այլ խլում տանում են կոյսերը, բռնաբարում են, ծնողներին անհուն վիշտ և տանջանքներ պատճառելով։

Բայց ողբով, հառաչանքներով, աղօթքներով հրաշքներ չէ կարելի կատարել այս աշխարհում։ Եւ Շահամիրեանը դրանով բաւականանալ չէ էլ

ուղում։ Նա տեսնում է իր աչքի գործ, հաւատում է թէ կը վերակենդանանայ մի ազատ Հայաստան, նա զգում է որ «հեռացաւ գիշերվայ այնքան խաւարամած և մառախլապատ աղջամուղջը և ահա մօտեցաւ հասաւ արևի ծագումը մեր աշխարհը լուսաւորելու համար, կորաւ ու չքացաւ ձմեռվայ սաստկութիւնն ու դժնդակութիւնը և հասաւ ծաղիկներ ծնող ու մանուշակներ բերող գարունը՝ մեր երկիրը զուարճացնելու համար»։ Թող ցիրուցան հայութիւնը համաշխարհային պանդխտութիւնից վերադառնայ տուն, իր ստացուածքի տէրը դառնայ։ Մահ հայրենիքի ազատութեան համար —ահա ինչը պիտի բերէ այդ արևը, այդ գարունը։ Երանի թէ —ասում է նա—հայերը կարողացած լինէին նահատակվել իրանց հայրենիքի փրկութեան համար. նրանք կոտորուել են անհագին քանակութեամբ, բայց ինչ օգուտ։ Պէտք էր որ ազգի մի մասը միւս մասի համար գլուխ դնէր, մեռնէր ապրեցնելու համար, քան թէ թոյլ տար որ ամբողջ ազգը ծառայ և ստրուկ դառնար օտարին։ Մի ազգ, որ ազատութիւնը պահպանում է պատերազմի մէջ, երբէք չէ պակասում. օրինակ է բերվում ռուսաց ազգը, որ իր նուաստ դրութիւնից բարձրացաւ, դարձաւ տիեզերակալ։ Ուրեմն պէտք է աշխատել, պէտք է զէնք ունենալ, վարժվել նրա գործածութեան մէջ։ Ոչ ոք չը պիտի իրան անկարող համարէ. ոչ ոք չը պիտի արդարացնէ իրան՝ ասելով

թէ գանձ և կարողութիւն չունի։ Արիացէք, բացականչում է Շահամիրեանը, եկէք մէջ տեղից վերցրէք մեր ամօթն ու նախատինքը։ Թող հայոց չքնաղ օրիորդները հայ կտրիճներից փեսայ ընտրեն իրանց համար և թող ասեն իրանց փեսաներին. «Թշնամիներից վրէժ հանեցէք, մեզ համար հարուստ աւար բերէք, աւելի հարուստ քան այն աւարը, որ նրանք մեզանից ստացել են. արդար հատուցում, չուտ-չուտ պահանջեցէք տոկոսներով»։ Իսկ ծերերն ու պառաւները թող, ի սէր Քրիստոսի, նոյնպէս դառնան ազատութեան առիթ. թող չասեն նրանք, թէ իրանց քիչ է մնացել ապրել և ո՞վ կենդանի կը մնայ, որ տեսնէ ազատութիւնը։ «Անդադար յորդորեցէք առոյգ մանուկներին և երիտասարդներին, որ արի լինեն. եթէ ոչ դուք, ձեր սերունդները գուցէ արժանանան իրանց սեփական ժառանգութեան»։

Շատ հետաքրքրական է Շահամիրեանցի վերաբերմունքը դէպի հոգևորականութիւնը։ Նրան ղեկավարող դեր չէ յատկացնվում ազգային նոր վերածնութեան գործում։ Շահամիրեանցը ամենայն յօժարութեամբ խոստովանում է որ հոգևորականութիւնը կատարել է դեր անցեալում, որ նա պահել է եկեղեցին և մեծ ազդեցութիւն ունի ազգի վրա։ Բայց աղաչում է հոգևորականներին այլ ևս չանիծել հայերին։ Ինչպէս յայտնի է, հայոց պատմութեան ամենատխուր շրջաններում երկրի աւերմունք պատճառող զանազան դժբախտութիւն-

ների մէջ յիշատակվում է և հոգևորականների ա-
նէծքը։ Ներսէս Պարթևը անիծեց Արշակին և Պա-
պին. հայոց փառաւոր մայրաքաղաք Անիի կործան-
ման մէջ խառն էր հոգևորականի մատը և ամէնքը
հաւատացած են որ թշնամու ուժը չէր նրան քա-
րուքանդ անողը, այլ հայ հոգևորականի անէծքը։
Ուստի և Շահամիրեանցը խնդրում աղաչում է որ
նորոգվող Հայաստանը այլ ևս չենթարկվի այդ ա-
նէծքներին, որոնց շնորհիւ կործանվել են ոչ միայն
իշխանութիւնները, այլ և ամբողջ երկիրը։

Բայց ինչ պէտք էր անել որ հայ ժողովուր-
դը ըմբռնէ վերանորոգչական գաղափարները։
Հնդկաստանցի հայրենասէրը գիտէ, ի հարկէ, որ
իր գիրքը, այդ գրքի նման հարիւրաւոր ուրիշ
գրքեր բաւական չեն հասկացնելու հայ ամբոխին
թէ ամօթ ու նախատինք է ստրկութիւնը, թէ ժո-
ղովուրդը կարող է իր ձեռքով իր երջանկութիւ-
նը տնօրինել, եթէ զէնք ունենայ։ Գրքերը բաւա-
կան չէին։ Հարկաւոր էր մի աւելի մեծ բան. հայ-
րենի դժբախտութիւնները առաջանում էին տգի-
տութիւնից, պէտք էր, ուրեմն, վերցնել նրան,
պէտք էր ուսման լոյսը տարածել հայերի մէջ։ Ու
Շահամիրեանցը անդադար «ուսում, ուսում» է
կանչում։ «Եւրոպան ամէնքիս գաղափարն է»—ա-
սում է նա. եւրոպական շատ ազգեր էլ մեզ պէս
են եղել. պէտք է նրանց հետևել, նրանցից օրի-
նակ վերցնել։ Սա առաջին հրաւէրն էր մեզանում,
որ ուղղվում էր ժողովրդին. հրաւէր դէպի եւրո-

պականութիւն, դէպի ուսում և քաղաքակրթու-
թիւն՝ քաղաքական վերակենդանութեան համար։
Ինքը, հեղինակը, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ,
եւրոպական նորագոյն մտքի ազդեցութեան տակ
էր գտնվում։ Ո՛չ Ս. Գիրքը, ո՛չ ազգային պատմու-
թիւնը չէին կարող միայնակ ներշնչել նրան այդ
համարձակ մտքերը, բաց անել նրա մտքի առաջ
վերածնութեան մի յեղափոխական ճանապարհ,
եթէ ժամանակակից քաղաքակիրթ ազգերի խօսքն
ու գործը անհասկանալի, անյայտ մնային նրան,
եթէ դարի ազատասէր, քննական ոգին չը լինէր
նրա ղեկավարն ու ուղեցոյցը։

Այդ համարձակ մտքերը, այդ ազատական
յեղափոխութիւնը պէտք էր ապացուցանել։ Պէտք
էր ցոյց տալ թէ զէնքով անկախ հայրենիք պահ-
պանելը մի նոր, դեռ չը տեսնված բան չէ կարող
համարվել հայերի մէջ, թէ հայը, ստանալով մի
ազատ երկիր իր ապրուստի, իր երջանկութեան
համար, միայն վերանորոգում էր այն, ինչ ունէր
մի ժամանակ. նա ուրիշից չէ յափշտակում այդ
երկիրը, այլ միայն վերահաստատում է իր հի-
նաւուրց իրաւունքները այդ երկրի վրա։ «Ո՛չ,—
ասում է Շահամիրեանցը,—մենք ուրիշ բան չենք
ցանկանում, բայց միայն ստանալ մեր սեփական
և հաւաստի ժառանգութիւնը, որ կորցրել ենք
մեր անկարգութեան և ծուլութեան պատճառով։
Այն, ինչ տգիտութեամբ կորցրել ենք, պարտաւոր
ենք յետ ստանալ իմաստութեամբ և արիու-

թեամբ»։ Եւ այդ բոլորը հաստատելու համար նա դիմում է հայոց պատմութեան։ Շատ լաւ էր հասկացել Շահամիրեանցը որ ազատութեան գաղափարը կարող է հիմք գտնել միայն այնտեղ, ուր զարգացած է ազգային ինքնաճանաչութիւնը։ Մի գերի ազգ կարող է զգալ իր դրութեան ամբողջ ամօթն ու նախատինքը, երբ նա սկսում է հասկանալ թէ ինչ է ինքը, որտեղից է գալիս և ուր է գնում, երբ նա տեսնում է իր նախնիքներին, գտնում է նրանց մէջ ոգևորող գաղափարներ։ Ոչինչ այնպէս չէ նպաստում մի ազգի ինքնաճանաչութեան, ինչպէս համեմատութիւնը անցեալի և ներկայի մէջ։ Այդ պատճառով Շահամիրեանցը բաց է անում հայի առջև նրա մոռացված անցեալը, գրում է հայոց պատմութիւն։

«Նոր Տետրակի» ամենամեծ մասը նուիրված է հայոց պատմութեան և Հայաստանի աշխարհագրութեան։ Մենք համարում ենք այդ մասը գրական մի շատ գնահատելի փաստ, ի նկատի առնելով այդ գործի հանգամանքները։ Հայը ունէր մեծահատոր կրօնական գրքեր, բայց չունէր իր հայրենիքի փոքր ի շատէ ամբողջացրած, լիակատար պատմութիւնը։ XVII դարի վերջում մենք տեսանք Մինաս Համդեցու աղքատիկ «Ազգաբանութիւն Հայոց» գործը և ցոյց տուինք թէ ինչ նշանակութիւն ունէր նոյն իսկ մի այդպիսի ողորմելի պատմութիւնը այն ժամանակներում, երբ հայը համարեա բոլորովին մոռացել էր իր

անցեալը *)։ Համդեցուց յետոյ Ցակոբ Շահամիրեանցն էր, որ գրեց հայոց պատմութիւնը, բայց համեմատաբար աւելի ընդարձակ ծաւալով։

Դա մի ամբողջացրած պատմութիւն չէ, ունի խոշոր պակասութիւններ։ Բայց անկարելի էլ էր որ Շահամիրեանցի պէս մի մարդ Հնդկաստանի պէս մի երկրում կարողանար նոյն իսկ մի համառօտ պատմութիւն կազմել առանց պակասութիւնների։ Նրա գլխաւոր աղբիւրը եղել է Խորենացին։ Մինչև Արշակունեաց թագաւորութեան վերջը, այսինքն մինչև այն տեղը, ուր վերջանում է Խորենացու գրուածքը, Շահամիրեանցի պատմութիւնը թէ մանրամն է, թէ հետաքրքրական։ Այդ ժամանակից յետոյ մեր հեղինակը հաստատ հող չունի ոտի տակ, սահում է պատմական եղելութիւնների վրայով, տալիս է կցկտուր տեղեկութիւններ, համարեա միայն անունների մի ցուցակ։ Աղբիւրների պակասութիւնը շատ զգալի բացեր է թողնում գործի մէջ։ Այսպէս, հինգերորդ դարի կրօնական պատերազմի մասին Շահամիրեանցը շատ աղօտ ու վայր ի վերոյ հասկացողութիւն ունի, թէև Եղիշէի պատմագրութիւնը ութ տարի էր, ինչ հրատարակված էր Կ. Պօլսում։ Ի վերջոյ Շահամիրեանցը մի քանի շատ հետաքրքրական էջեր է նուիրում Ղարաբաղի մելիքներին,

*) «Հայկ. Տպ.», I, եր. 284.

նկարագրում է թէ ինչ իշխանութիւն ունեն նրանք և ինչպէս են կառավարում իրանց երկիրը։

Վերջացնելով հայոց պատմութիւնը, մեր հեղինակը մի առանձին գլխի մէջ քննում է թէ ինչ պատճառներից ընկաւ հայոց թագաւորութիւնը։ Եօթը հատ են այդ պատճառները. 1) Բացարձակ միապետական կամ, աւելի ճիշտ ասած, բռնապետական կառավարութեան ձևը Հայաստանում։ Չը կար հաստատուն օրէնք, որին հպատակվէին ամենքը. ժողովուրդը խորհրդակցական իրաւունք չունէր իր երկրի կառավարութեան մէջ։ Այս սկզբունքը Շահամիրեանցը մանրամասն բացատրում է իր մի ուրիշ աշխատութեան մէջ, որի մասին յետոյ կը խօսենք։ 2) Թշնամին Հայաստանի վրա տիրեց ոչ թէ իր զօրութեամբ, ոյժով. «մեր թշնամու իմաստութիւնն էր, որ մեզ կաշկանդեց»։ Մեր բազուկի զօրութիւնը չէ նուաճուել, այլ մեր մտքի կուրութիւնն է մեզ տուել թշնամու ձեռքը։ Մարդը նախ յիմարանում է, ապա կորչում. յիմարութեան և տգիտութեան պատճառով շատ ազգեր են կորել։ 3) Մեր երիտասարդները, ոչ թէ արիութեան պակասութիւնից, այլ տգիտաբար միմեանց դէմ էին դուրս գալիս և փոխանակ թշնամիներին կոտրելու՝ իրար էին կոտորում։ Շատ յիմարներ, թողնելով իրանց բնիկ ազգը, մեծ քինախնդրութեամբ և նախանձով միանում են այլազգերի հետ, ինչպէս օձը կարիճի հետ։ 4) Անմիաբանութիւն. իրար դէմ ատելութիւն գրգռելով, հայերը չը կա-

րողացան մնալ իրանց աշխարհում, ցիրուցան դարձան, քամու տարած չոր ճիւղերի կամ եղէգնի պէս փռվեցան երկրի երեսին և այդպէս էլ մաշվեցան։ 5) Ծուլութիւն. մեր երկիրը բերքերի պակասութիւնից չամայացաւ, այլ որովհետև ծոյլ ու անգործ էին մշակներն ու երկրագործները. նրանք թոյլ տուին որ իրանց արտերն ու հանդերը արջերի և վարազների ոտների տակ տրորվեն։ Իսկ ծոյլերի առաջ արքայութիւնն էլ փակ է։ Պէտք է արի ու քաջ լինել, արդար, խոհեմ ու ողջախոհ։ 6) Մեր յամառ, բռի բնաւորութիւնը։ Հնազանդութիւն, կարգապահութիւն չէ եղել։ 7) Հայերը ատել են ուսումը, օր օրի վրա յամառել են տգիտութեան և մտաւոր կուրութեան մէջ։ Պարտաւոր ենք այսուհետև այդպէս չը լինել. պիտի ատենք տգիտութիւնը, սիրենք իմաստութիւնն ու հանճարը, որպէս զի զարգանանք, մեծանանք և այդպէս հանգստանանք այնքան նեղութիւններից և թշուառութիւններից յետոյ։—Բացի այս եօթը պատճառներից կան և ուրիշ շատերը, բայց բոլորը մի առ մի յիշատակել զանց է անում Շահամիրեանցը, միայն յորդորում է ձեռք վերցնել այն հին մոլորութիւնից թէ Աստուծու կամքով է քանդվել Հայաստանը։ Աստուած բարերար է, չարութեան աղբիւր լինել չէ կարող, և մենք իզուր ենք մեր պակասութիւնների պատճառով եղածը վերագրում այն սկզբունքին, որ ամենքի լաւութիւնն է կամենում։ Բայց ինչն է հայերի փրկու-

թիւնը։—Սահմանադրութիւն,—ասում է Շահամիրեանցը,—մի հաստատուն վարչական օրէնք, ժողովրդի կամքով և մասնակցութեամբ մշակված և ընդունված։ Թող լինի այդ բանը, և «դուք նորից կը տեսնէք ձեր ծայրագոյն իշխանութիւնը, նոյն իսկ աւելի հարուստ քան էր առաջ, որովհետև մեր վաղեմի իշխանները իմաստութեամբ չէին վարվում, ինչպէս հարկաւոր էր»։

Այս եզրակացութիւնների մէջ ճիշտ նկատված պակասութիւնների և պատճառների հետ մենք գտնում ենք և շատ միամիտ անգիտութիւն, խակ խորհրդածութիւններ։ Հեղինակը միմիայն հայ ազգի ներքին յատկութիւնների մէջ է տեսնում քաղաքական անկման պատճառները, դիտմամբ թէ չիմանալով ոչնչութեան է հասցնում արտաքին հանգամանքները։ Դրանով նա ուզում է հեշտացնել հայկական վերածնութեան գործը։ Եւ իրաւ, համեմատաբար որքան քիչ բան էր այդ ծրագրով պահանջվում հայերից՝ միանգամայն անկախ ու ազատ լինելու համար։ Բաւական էր աշխատել միայն ներսում, վերցնել բարոյական պակասութիւնները, և անկախութիւնը ինքն ըստ ինքեան կը գար։ Մոռանում էր Շահամիրեանցը շատ և շատ բան. նա պարզ հասկացողութիւն չունէր հայերի թւի իսկական չափի և քաղաքական ոյժի մասին անցեալում. չէր հասկանում Հայաստանի աշխարհագրական դիրքի նշանակութիւնը, որ ահագին դեր է խաղում ազգերի ճակատագրի մէջ. վերջապէս ամենից մեծը, ամենից կարևորը—ազգերի հեղեղը, որ արևելքից արևմուտք անցնելիս, երկար դարերի ընթացքում ոչնչացրեց ամեն ինչ, ոչնչացրեց ոչ միայն թոյլ Հայաստանը, այլ և անհամեմատ ուժեղ ու մեծ Պարսկաստանը, արաբական խալիֆների պետութիւնը, բիւզանդական կայսրութիւնը։ Համաշխարհային այդ սոսկալի աղէտների մէջ նոյն իսկ բարոյապէս աւելի զօրեղ, ներքին կազմակերպութեամբ աւելի տոկուն մի ազգ չէր կարող անվնաս մնալ, չը կորցնել իր հայրենի ժառանգութիւնը։ Շահամիրեանցը դատում էր, երևակայում էր, երազում, բայց իրականութեան, գործնական կեանքի վերաբերմամբ զարմանալի միամիտ էր։ Հայաստանից հեռու ծնված, իր գրական գործունէութեան միջոցին հայրենիքից աւելի ևս հեռացած, նա չէր կարող կշռել և դատել իբրև շատ փորձված մարդ. շատ բան նա լսել էր, շատ բան էլ երևակայութեան, ենթադրութիւնների միջոցով էր պարզում իր համար։ Եւ այդ հանգամանքը աւելի ևս աչքի է ընկնում մանաւանդ այն ժամանակ, երբ նա վերջացնում է խրատներն ու յորդորները, հին պատմութիւնը և մտնում է իրական կեանքին, ներկայ Հայաստանին։

Ինչպէս ասացինք, Շահամիրեանցը հայոց պատմութեան կցել է և Հայաստանի աշխարհագրութիւնը։ Շնորհակալութեան արժանի է նա և

այդ գործի համար, որի մէջ մտցրել է սեփական շատ աշխատանք։ Թէ ինչ նշանակութիւն ունի հայրենագիտութիւնը,—այդ հասկանալի է և առանց բացատրութիւնների։ Ահա այդ կարևոր ճիւղի մէջ էլ առաջին, աչքի ընկնող նախաձեռնող է հանդիսանում մեր հնդկաստանցի վաճառականը, յաղթելով մի շարք դժուարութիւններ։ Նրա ժամանակ հրատարակված էր Մովսէս Խորենացուն վերագրվող աշխարհագրութիւնը *)։ Առաջնորդ ընտրելով այդ համառօտ գործը, Շահամիրեանցը աւելացնում է ուրիշ աղբիւրներից հաւաքած իր տեղեկութիւնները և տալիս է Հայաստանի մի բաւական լիակատար և նոյն իսկ մանրամասն տեղագրութիւնը, որի մէջ առաջին փորձն է անում ցոյց տալու թէ այժմեան որ տեղերին են համապատասխանում հին աշխարհագրական անունները, նկարագրում է նոր տեղերը, պատմում է թէ ինչ տեղերի հետ ինչ պատմական յիշատակներ են կապված։ Բացի դրանից նա ցոյց է տալիս Հայաստանի սահմաններից դուրս գտնվող այն երկիրները, որոնց վրա հայերը մի ժամանակ տարածել էին իրանց տիրապետութիւնը, իսկ մի առանձին գլխում, ուր քննվում է այն հարցը թէ որքան հարկեր է տալիս հայ ազգը իր վրա իշխողներին, մէջ են բերված և այն երկիրները, ուր գոյութիւն ունեն հայ գաղթականութիւններ։

*) «Հայկ. Տպ.» I, եր. 161—166։

Մի քայլ էլ առաջ է գնում Շահամիրեանցը և փորձում է լրացնել աշխարհագրութեան մի կարևոր պակասը—վիճակագրութիւնը։ Այստեղ նա արդէն ոչինչ հաստատուն, դրական տեղեկութիւն չունի և գործում է լոկ իր երևակայութեան օգնութեամբ, ուստի և ընկնում է չափազանցութիւնների մէջ։ Նա վերցնում է Հայաստանը հին սահմանների մէջ և այդպիսով ստանում է մի «հայրական ժառանգութիւն», որ տարածվում է Կասպից ծովից մինչև Միջերկրականը։ Բնաջինջ անող սուրը, որ դարերի ընթացքում սպառում էր հայ կեանքը այդ սահմանների մէջ և ահագին գաղթականութիւններ էր հանում մայր երկրից, մեծ նշանակութիւն չունի Շահամիրեանցի համար։ Նրա հաշւով դուրս է գալիս մի խիտ, միապաղաղ բնակչութիւն ծովից մինչև ծով։ Հայաստանը ունի 20 նահանգ, որոնց մէջ կան 258 գաւառ և 103 քաղաք։ Վերածելով այդ բոլոր տեղերը գիւղերի, նա ընդունում է որ ամբողջ Հայաստանում կարելի է ընդունել 77,400 գիւղ. իւրաքանչիւր գիւղ միջին թւով 60 տուն հաշւելով, ստացվում է ընդամենը 4,644,000 տուն։ Այնուհետև իւրաքանչիւր տան մէջ ընդունելով 6 հոգի, դուրս է գալիս որ ուրեմն Հայաստանի ամբողջ ազգաբնակութիւնը բաղկացած է 27,864,000 հոգուց։ Այս քանակութեան ուղիղ կէս մասը համարում է այլազգիներ՝ «տաճիկ» անունով, ուրեմն զուտ հայ ազգաբնակութիւն ստացվում է 13,932,000։ Հա-

նելով այս թուից կանանց և աղջիկների մի ենթադրական թիւ, դարձեալ ընդհանուր թւի կէսը, ինչպէս նաև հարկ չը վճարող ծերերի և մանուկների թիւը, Շահամիրեանցը դուրս է բերում որ պարսիկներին և օսմանցիներին հարկ տուող չափահաս հայ տղամարդկանց թիւն է 5,224,500։ Այդ բազմութիւնը տալիս է գլխահարկ 10,449,000 ոսկի և զանազան անուղղակի հարկեր՝ մաքս, հաս. բաժ՝ դարձեալ նոյնքան։ Ընդամենն, ուրեմն, հայ ազգի գրպանից դուրս է գալիս տարին 20,898,000 ոսկի կամ 4,179,000 պարսկական թուման։

Ինչո՞ւ համար է այս հարկերի հաշիւը։—Չը մոռանանք Շահամիրեանցի իսկական նպատակը —հայերին քնից արթնացնելը և ազատութեան սովորեցնելը։ Տեսնում էք, ասում է, ինչ անհուն քանակութեամբ հարստութիւն է դուրս գալիս մեզանից ամեն տարի։ Սա դեռ մեր յօժարակամ տուրքն է. եթէ աւելացնէք այն հարստութիւնները, որ օտար տիրապետողները խլում են մեզանից զոռով, այն ժամանակ հաշիւ ու համար չէք գտնի։ Յայտնի են Սպանիայի հարուստ արծաթահանքերը. բայց հայ ազգը իր տէրերի համար այդ հանքերից էլ մեծ եկամուտների աղբիւր է։ Սպանիացիները չարչարվելով են արծաթ հանում իրանց հանքերից, իսկ մեզ վրա տիրողները մեր կրօնը հայհոյելով, մեր պատիւը ոտնատակ տալով են առնում։ Օտարները մեզ տիրեցին ոչ թէ

իրանց սեփական ոյժով, այլ մեր աջակցութեամբ. մենք տգիտութեամբ նրանց տուինք մեր գանձերը, մեր ցորենը, մեր ձիաները. և նրանք այդպէս զօրեղացան ու տիրեցին մեզ։ Եւ ինչ է մեր դրութիւնը։ Տիրողները չեն թողնում որ մենք հագնենք մեր ցանկացած զգեստը, ձի հեծնենք, ազատօրէն ցոյց տանք մեր կանանց և աղջիկների գեղեցկութիւնը. մեր երիտասարդներին չեն թոյլ տալիս ցոյց տալ արիութիւն և քաջութիւն։ Կորագլուխ ման ենք գալիս յանցապարտների նման, ծառայ ենք և երիտասարդութեան ժամանակ բռնաբարվում ենք։ «Ո՛հ, դառն և սգալի մեծ թշուառութիւն. ով կարող է հաւաքել ու պատմել ամեն ինչ, եթէ սրանից բիւրապատիկ աւել էլ գրէ»։ Ձեզ չեն թոյլ տալիս մտածել մի ուրիշ բանի մասին, բացի միայն նրանից, որ դուք մի քանի կերակուրներով յագեցնէք ձեր փորի քաղցը և կտաւներով ծածկէք ձեր անդամների մերկութիւնը. բայց ագռաւներն էլ, մկներն էլ, նոյն իսկ այնքան չնչին որդներն էլ կարողանում են կշտացնել իրանց փորը։ Չորս հարիւր տարի եղաւ, ինչ մենք բոլորովին հրաժարվեցանք պատերազմներից և խռովութիւններից, հարկատու եղանք օտարներին, որպէս զի ազատենք մեր անձը մահից։ Եւ 400 տարիների ընթացքում ամբողջ հայ ազգը՝ տղամարդիկ թէ կանայք, ծերեր թէ տղաներ հառաչելով ու յոգոց հանելով մեռան տխուր ու անմխիթար մահով։ Իսկ եթէ մենք էլ

այդպէս վարենք մեր կեանքը, միմիայն մեր փորը լցնելու ջանք անենք, աւելի վատ կերպով պիտի մեռնենք. և ոչ միայն մենք, այլ և մեր որդիները, մեր որդիների որդիները մինչև աշխարհի վերջը։

Ուստի Շահամիրեանցը երդուեցնում է հայերին բոլոր սրբութիւններով, յանուն քաջ նախահայրերի—Հայկի, Արամի, Տրդատի—գործել և գործել ազատութեան համար։ Ողորմեցէք, ինքներդ ձեզ ողորմեցէք, ով հայկազուններ. ամօթ չէ որ որդիները ողորմեն իրանց մօրը։ 400 տարիների ընթացքում մեր չար նախահայրերը և առաջնորդները մի քանի անգամ աղաչեցին դրացի քրիստոնեաներին, բայց մինչև այսօր ոչ ոք չօգնեց մեզ, ձեռք չը մեկնեց մեզ. իսկ մի քանիսները մեզ մխիթարելու փոխարէն՝ վիրաւորեցին մեզ։ Եւ լաւ էր որ այդպէս եղաւ, մենք ոչ ոքին պարտական չը մնացինք, ամբողջ ժամանակ մեր օգնականը Աստուած էր։ Այժմ էլ, յոյս դնելով Աստուծու վրա, խնդրենք որ նա սէր դնէ մեր սրտի մէջ, գուցէ արծարծուած սիրոյ բորբոքմամբ օգնենք մեր տառապեալ և ընկած մայր Հայաստանին, ողորմենք նրան։ Դժուար չէ ողորմելը. այդ ողորմութիւնը չի պակասեցնի մեր հարստութիւնները, մեր կերակուրները, մեր զարդերը, որովհետև ամէն ինչ մենք մեզ համար ենք անում։ Եթէ օտարին անհուն գումարներ ենք տալիս ինչպէս հարկ, ինչեր կարող ենք անել, այդ գումարները մեր օգտին ծառայեցնելով։ Նրանք կարող են բաւակա-

նութիւն տալ պատերազմողներին, որոնք պիտի յարուցանեն մեր ազգը, վերացնեն մեր նախատինքը և ազատեն այն ձեռքերից, որոնք միշտ նեղում են մեզ։

Այսպէս ահա, պարզվում է Շահամիրեանցի քարոզած քաղաքական ծրագիրը։ Մենք սկսում ենք մտածել որ Հնդկաստանցի հայ հայրենասէրը յորդորում է հայերին ապստամբութիւն բարձրացնել։ Բայց նա շտապում է դրականապէս յայտարարել որ չունի այդպիսի միտք։ Շատ հետաքրքրական է նրա բացատրութիւնը։ «Մենք չենք ասում որ հայերը ապստամբեն այլազգիների կամ իրանց կառավարիչների դէմ և աչք դնեն նրանց ստացուածքի վրա և կամ վնաս տան նրանց։ Քաւ լիցի, դա քրիստոնեաների գործ չէ»։ Հապա ինչպէս պիտի գլուխ բերվի Հայաստանի ազատութիւնը։ Շահամիրեանցը արդէն ասել է որ մենք նոր բան չենք ուզում, ուրիշի սեփականութիւն խլել չենք կամենում, այլ միայն մեր սեփական ժառանգութիւնն ենք յետ ստանում։ Իսկ սա, ինչպէս երևում է, ապստամբութիւն չէր Շահամիրեանցի համար։ Բայց ինչպէս պէտք էր հասկացնել պարսիկներին և օսմանցիներին թէ հայերը իրաւունք ունեն անկախ ու ազատ ապրել իրանց հայրենիքում։ «Եթէ—ասում է Շահամիրեանցը—դուրս գան իշխաններ հայոց ազգից—և այդպիսիները կան Հայաստանում—կամ մի ուրիշ մէկը, որ ջանք է անում հայերի ազատութեան համար, այն

ժամանակ առաջ պիտի գան հայ համայնքները՝ մէկը միւսից աւել օգնելու Նրանց։ Վերեւում ասացինք որ օգնելը հեշտ է։ Հեշտ է, որովհետեւ եթէ այն հարկերի մի տասներորդ մասը, որ հայերը տալիս են այլազգիներին, տան այդ իշխանին օգնութիւն, նա ինքը կիմանայ թէ ինչ պէտք է անել և կանէ. և Աստուած էլ Նրա օգնականը կը լինի»։

Ուրեմն, Շահամիրեանցի ծրագրով, երեւան է գալիս մի իշխան, որ ազատում է Հայաստանը և հայերի պարտքը այն է միայն, որ փողով օգնում են Նրան։ Կար արդեօք այդպիսի ազատարար։ Շահամիրեանցը ճանաչում է այդպիսի մէկին։ Նորից մի ակնարկ գցենք Նրա գրած հայոց պատմութեան վրա և կը տեսնենք մի այսպիսի հանգամանք։ Այնտեղ, ուր վերջանում է Բագրատունեաց թագաւորութիւնը, մեր հեղինակը անսպասելի կերպով սկսում է բացատրել թէ Բագրատունիների տոհմը ամբողջապէս չը վերջացաւ, այլ մինչև այժմ էլ պահպանում է իր գոյութիւնը.—նոյն այդ տոհմից է վրաց թագաւորութիւնը։ Եւ Շահամիրեանցը սկսում է փառաբանել իր ժամանակի վրաց թագաւորին, որ Հերակլ II էր, անուանելով Նրան քաջ, քրիստոնէութեան հզօր ախոյեան և մասնաւորապէս հայ ազգի պաշտպան։ Հերակլը, ասում է նա, վճռել է ազատել քրիստոնէութիւնը պարսից և օսմանեան լուծից, իսկ հայերին այնքան սիրում է, որ չէ զանազանում իր սեփական ազգից։

Ահա ով էր կանգնած Շահամիրեանցի առաջ իբրև Հայաստանը ազատող։ Թէև այս մասին չը կայ դրական, որոշ վկայութիւն «Նոր Տետրակի» մէջ, բայց Շահամիրեանցի Նամակագրութիւնները ոչ մի կասկած չեն թողնում որ այդպէս էր Նրա միտքը։ Նա անմիջական բանակցութիւններ ունէր վրաց թագաւորի հետ, գրում էր և ստանում էր պատասխաններ։ Ինչպէս երեւում է, հնդկաստանցի մեծատուն հայը պատրաստ էր իր հարստութիւնը մէջ բերել, եթէ Հերակլը յանձն առնէր գործել Նրա ծրագրով. և Հերակլը անկարելի չէր համարում այդ առաջարկութիւնը, գոնէ յատուկ մարդիկ էր ուղարկում Հնդկաստան՝ Շահամիրեանցի հետ անձամբ խօսելու։ Բայց միայն դրամը չը պիտի լինէր հայերի երախտագիտական հատուցումը։ Շահամիրեանցը Հերակլի համար տեղ էր պատրաստում ազատված Հայաստանի կառավարութեան մէջ։ Ահա այստեղ հայրենասէր վաճառականը ներկայանում էր Ասիայի համար մի բոլորովին անօրինակ վերանորոգիչ և հազիւ թէ Նրա ծրագրած գործը համոզիչ և ուշադրութեան արժանի լինէր վրաց թագաւորի համար։ Շահամիրեանցի դիտաւորութիւնները և քաղաքական գաղափարները հասկանալու համար առայժմ թողնենք Նրա բանակցութիւնները և ծանօթանանք Նրա մի ուրիշ նշանաւոր աշխատութեան հետ։

«Նոր Տետրակի» հրատարակութիւնից հազիւ մի տարի անցած, Շահամիրեանցը իր տպարանից

լոյս հանեց մի նոր գիրք, որի վերնագիրն է «Գիրք անուանեալ Որոգայթ Փառաց»։ Ոչինչ չէ ասում այդ վերնագիրը, նոյն իսկ եթէ աւելացնենք նրա բացատրութեան համար գրված «վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան» բառերը։ Անկարգութիւններ կալանաւորող մի որոգայթ... Որքան խեղճ, միամիտ բացատրութիւն։ Բայց դարձեալ չը զարմանանք. մենք գիտենք թէ ինչ է Յակոբ Շահամիրեանցը իբրև հայ հեղինակ։ Այժմ աւելացնենք որ այս գրքի մէջ այլ ևս չը կայ աշխատակից Մովսէս Բաղրամեանցը և դուրս կը գայ այսպիսի մի հանգամանք. «Որոգայթ Փառաց»-ը XVIII դարի մեր զարմանալի գրքերից մէկն է նոյն իսկ ամենից շատ զարմանալին, բայց վաճառականի անգրագիտութեամբ սաստիկ աղճատված մի գիրք։ Գրական արժէքի տեսակէտից նա ոչինչ է, կարդալ նրան շատ դժուար է.—անհամ, ձանձրացուցիչ շատախօսութիւնների և անվերջ կրկնութիւնների մի քաօս է դա։ Բայց ինչ անակնկալութիւններ, ինչ գոհարներ ենք գտնում այդ կոպիտ ու անտաշ ստեղծագործութեան մէջ։ «Որոգայթը» ուղղակի մի պարծանք է մեր գրականութեան համար։ Նա սահմանում է պետական, վարչական, օրէնսդրական կարգեր, որոնք պիտի մտցնվէին ազատված Հայաստանի մէջ։ Հերակլ Թագաւորի համար պատրաստված գիրը երևում է գրքի հէնց առաջին երեսի վրա, ուր կարդում

ենք. «Ի Թագաւորութեան Յոգոստափայլ Տեառն Երկրորդի Հէրակլիոսի ի Թիֆլիս»։

Ազատել հայերին օտարների ծառայութիւնից բաւական չէր։ Պէտք էր որ անկախ Հայաստանը ապրէր իբրև քաղաքական ազատ մարմին, պէտք էր որ իւրաքանչիւր հայ այլ ևս ենթարկված չը լինէր ասիական բռնակալութեան կամայականութիւններին, դառնար իր երկրի տէրը, նրա կառավարողն ու օրէնսդիրը. հաւասարութեան, ազատութեան բոլոր բարիքները վայելող հայ քաղաքացի—այս է այն միտքը, որ ղեկավարել է Շահամիրեանցին իր զարմանալի գիրքը գրելիս։ Եւ նա մի երկար, ձանձրալի, շատ տեղ անհասկանալի առաջաբանի մէջ անթիւ անգամ ապացուցանում ու կրկնում է թէ Հայաստանի փրկութիւնը և երջանկութիւնը պէտք է հիմնել երկու սիւների վրայ—Օրենք և Հանրապետութիւն։

Մենք, խօսելով արևմտեան Եւրոպայի մէջ ծագված Լուսաւորութեան Դարի մասին *), ցոյց տուինք, որ այդ հսկայ առաջադիմական շարժման տեսակէտից մեծ յետադիմութիւն և դժբախտութիւն էր այն գրականութիւնը, որ այդ ժամանակ մշակվում էր հայ հոգևորականութեան ձեռքով։ Ասացինք որ ոչ անգլիական փիլիսոփաների, ոչ Վոլտէրի, Մօնտեսքիէի մտքերը չէին թափանցում մեր խաւարի մէջ, այլ նոյն իսկ այդ

*) Տ. վերևում, գլ. Ա., IV.

երիտասարդական թարմութեան ոգևորիչ ժամանակներում էլ մենք չարունակում էինք կերակրվել միջնադարեան սխոլաստիկայի և ճգնաւորական բարեպաշտութեան գաղափարներով։ Ցակոբ Շահամիրեանցը մի փայլուն օրինակ է, որ ցոյց է տալիս թէ մենք նոր ժամանակների լոյսի մէջ այդքան դժբախտ ու զրկված չէինք լինի, եթէ մեզանում գոյութիւն ունենար աշխարհական գրագէտ մի դասակարգ, որ ազատ լինէր վանական նախապաշարմունքներից ու հնամոլութիւնից, կրթված լինէր եւրոպական գաղափարների վրա և կարողանար գրականութիւն հիմնել ու պահպանել։ Այս անգրագէտ վաճառականը իր անտաշ, թոթով լեզուով *) մեզ ասում է որ ինքը իր ժամանակի գաղափարական շարժումների մի արձագանքն է։ Ո՞րտեղից և ինչպէս նա, մի ասիացի խեղճ մարդ, այդքան բարձր, համարձակ մտքեր սովորեց։

Երբ նա ապացուցանում է միահեծան միապետութեան վնասակարութիւնը, պահանջում է որ ամբողջ ժողովուրդը լինի իր երկրի օրէնսդիրը, մենք այդ տողերի ետևում տեսնում ենք Լոկկին։ Երբ նա սկսում է ճառել, որ բարեկարգութիւնը, մի պետութեան այդ հիմքն ու խարիսխը,

*) Մենք չը գիտենք թէ ինչ լեզուների հետ էր ծանօթ Շահամիրեանցը և ինչ չափով։ Այստեղ մենք նկատի ունենք միայն հայերէնագիտութիւնը։

հաստատ օրէնքն է, մենք ըմբռնում ենք ամբողջ դատողութիւններ, որոնք Մօնտեսքիէի «Օրէնքների Ոգին» անմահ գրքի ազդեցութեան տակ են կազմվել։ Ինքը, Շահամիրեանցը, այդ առաջաբանի մէջ յիշում է եւրոպական ազգերը, անգլիական սահմանադրութիւնը, Հիւսիսային Ամերիկան և յատկապէս Վաշինգտոնին։ Եւրոպական ազգերի մասին նա ասում է. թող չառարկեն հայերը թէ այդ կարգերը եթէ այդքան լաւ են, ապա ինչու բոլոր եւրոպայիները չեն ընդունում նրանց։ Եւրոպական բոլոր ազգերը, պատասխանում է նա, սրտանց համակրում են այդ կարգերին և շատ տեղ արդէն ժողովրդական ներկայացուցիչների ժողովներն են օրէնքներ հրատարակում։ Օրինակ է բերում անգլիական մեծ ազգի սահմանադրութիւնը։ Անգլիայում թէ և կայ թագաւոր, բայց իւրաքանչիւր անհատ վայելում է կատարեալ ազատութիւն՝ օրէնքների պաշտպանութեան տակ։

Սակայն Շահամիրեանցի վրա ամենից մեծ ազդեցութիւն գործողը, ինչպէս ասել ենք, ամերիկական շարժումն էր։ «Այժմ լսում ենք մի նոր բորբոքման մասին, գրում է նա.—իմաստուն մէկը, Վաշինգտոն անունով, բրիտանական ազգից ծնված Ամերիկայում, հակառակվելով տէրերին և հաւաքելով Ամերիկայի ժողովրդից շատ զօրք, աշխատում է ազատութիւն գտնել և անկախ լինել. թէև գործի վախճանը դեռ չէ երևացել, բայց ամերիկացիների սրտի ցանկութիւնը բնական է

մարդու բնութեան, որովհետև չը կայ երկրի երեսին մարդկային ստացվածների մէջ աւելի քաղցր բան, քան ազատութիւնը»։ Սա այն ժամանակների լաւագոյն մարդկանց ասածների կրկնութիւնն է։ Այսպէս էին վերաբերվում ամերիկացիներին Անգլիայի հռչակաւոր պետական մարդիկ, գրողները. այսպիսի ձայներ էին լսվում Եւրոպայի զանազան կողմերից։ Ամերիկական ժողովրդի դատը մարդկային սքանչելի մեծագործութիւններից ամենաբարձրն էր։ Հիւսիսային Ամերիկան ապստամբվում էր Անգլիայի դէմ ոչ այնքան այն պատճառով, որ գաղթականութիւնները շատ էին ճնշված, շատ էին ինքնուրոյնութիւնից ու ինքնավարական ազատութիւններից զրկված,—այդ կողմից շատ երկիրներ կարող էին նախանձել նրան,—այլ գլխաւորապէս այն պատճառով որ ազատութեան և անկախութեան ոգին հասել էր զարգացման բարձր աստիճանին և գործադրութիւն էր պահանջում։ «Անկախութիւն ձեռք բերելու մէջ Ամերիկայում գրիչը պակաս կարևոր ծառայութիւններ չը մատուցեց քան սուրը», ասում է ամերիկական յեղափոխութեան պատմագիրներից մէկը։ Այն ժամանակ, երբ Շահամիրեանցը գրում էր իր գիրքը, դեռ չէր սկսվել անգլօ-ամերիկական պատերազմը, որի մէջ այնքան պիտի փառաւորվէր մեծ Վաշինգտօնը. բայց գրիչը արդէն հասունացրել և միանգամայն անխուսափելի էր դարձրել այդ ազատարար պատերազմը։ Տարինե-

րից ի վեր, սկսած այն ժամանակից, երբ ծագեցին առաջին անհամաձայնութիւնները գաղթականութիւնների և Անգլիայի մէջ, ամերիկական լրագիրները պատրաստում էին մտքերը, ներշնչելով նրանց վստահութիւն, քաջութիւն. հրատարակվեցան մի շարք բրօշիւրներ, որոնցից մի քանիսը պատմական հռչակ են ստացել և ահագին ազդեցութիւն էին թողնում ոչ միայն ամերիկացիների մէջ, այլ և Անգլիայում։ Ազատութեան և օրինականութեան նուիրված այդ ներբողները մի կրակոտ լեզուով ազնիւ կրքեր էին յարուցանում, առաջացնում էին մտքերի մի ահագին յեղափոխութիւն։ Եւ ազատ Ամերիկայի հայր Վաշինգտօնի կողքին պատմութիւնը թոյլ է տալիս արժանաւորապէս կանգնել Սամուէլ Ադամսին, որ գործում էր գրչով, միացնում էր ամերիկական նահանգները մի նուիրական դրօշակի տակ։

Գաղափարական, վեհ, եռանդուն ժամանակներ էին։ Հեշտ էր այդպիսի ժամանակներում որ նոյն իսկ մեզ պէս մի խեղճ ազգի միջից դուրս գային Շահամիրեանցներ.—պէտք էր միայն ուշադրութեամբ ականջ դնել առաջաւոր հոսանքներին։ Ինքը, Անգլիան, ազատութեան այդ սքանչելի հայրենիքը, որքան մեծ օրինակներ էր տալիս։ Վօլտէրին անկեղծ հիացմունք պատճառած, նրան կրթած, ազատութեան զինուոր դարձրած երկիրը թէև սաստիկ գրգռված էր Ամերիկայի իր գաղթականութիւնների դէմ, բայց այնտեղ չէին պա-

կասում պետական և գրական մեծ մարդիկ, որոնք պաշտպանում էին ազատութեան անունով ոտքի կանգնած ամերիկացիներին, չէին քաշվում բացարձակ ասելու իրանց հայրենակիցներին, իրանց կառավարութեան, թէ նրանք անարդար են, թէ նրանք ճնշում, սպանում են ազատութիւնը։ Այդ հոյակապ անձնաւորութիւններից էին Ուիլիամ Պիտտ և Բօրկ։ «Ես շատ ուրախ եմ, որ Ամերիկան դիմադրում է,—ասաց Պիտտ իր մի ճառի մէջ.—երեք միլիօն մարդիկ, որոնք ընդունակ կը լինէին այնքան խլացնել իրանց մէջ ազատութեան զգացմունքը, որ յօժարակամ ստրկութեան ենթարկվէին, կարող կը լինէին մի լաւ գործիք դառնալ մնացած անգլիացիներին էլ ստրկացնելու համար... Ամերիկայի ներկայ ապստամբութեան ոգին այն իսկ ոգին է, որ մեզանում հաստատեց մեր ազատութեան էական, հիմնական և մեծ սկզբունքը, որ սահմանում է թէ Անգլիայի հպատակներից ոչ մէկը չէ կարող ենթարկվել որևէ հարկի առանց նրա անձնական համաձայնութեան։ Այս փառաւոր ոգին Ամերիկայում ոգևորել է երեք միլիօն մարդկանց, որոնք նախապատիւ են համարում աղքատ ու ազատ լինել, քան դառնալ ամօթալի հարստութեան և ոսկեզօծած շղթաների մէջ. պաշտպանելով իրանց իրաւունքները, նրանք կը մեռնեն իբրև մարդիկ, այն էլ իբրև ազատ մարդիկ։ Իբրև անգլիացի ծագմամբ և սկզբունքներով, ես ընդունում եմ որ ամերիկացիները ու-

նեն բարձրագոյն և անկողոպտելի իրաւունք իրանց սեփականութեան վրա, իսկ այս իրաւունքի տեսակէտից արդարացի է որ նրանք պաշտպանեն իրանց մինչև վերջին ծայրայեղութիւնը» *)։ Պէտք է յիշատակել միւս ճառախօսներին, գրողներին. պէտք է աւելացնել, որ նոյն այս եռուն ժամանակներում լոյս տեսան Իւնիուսի հռչակաւոր «Նամակները», որոնք պաշտպանում էին քաղաքացիական ազատութիւնը և որոնցից մէկը ուղղած էր նոյն իսկ անգլիական թագաւորին և ցոյց էր տալիս թէ նրա, թագաւորի, ամբողջ դժբախտութիւնն այն է, որ նա երբէք չէ լսել ճշմարտութեան լեզուն։ Ամէն տեղ կատաղի, տաղանդաւոր պաշտպանութիւն մի և նոյն վեհ գաղափարների—ազատութեան, մարդկային իրաւունքների։ Հնդկաստանում նստած մեր խեղճ, բարի, հայրենասէր Շահամիրեանցը որքան առատ ու փայլուն լոյսերով էր ողողված։

Բացի ժամանակակից այդքան հզօր դրդիչներից ու գործօններից, Շահամիրեանցին էր նայում և մի փառահեղ օրինակ խոր հնութեան միջից։ Դա հանրապետական Հռօմն էր։ Արդէն Մօնտեսքիէն, ինչպէս իր տեղում յիշեցինք, մի աշխատութեան մէջ քննել էր հռօմէական պետութեան զարգացման և անկման պատճառները և

*) Тэнъ—«Истор. анг. лит.», т. II, եր. 194.

ցոյց էր տուել որ հանրապետութիւնն էր Հռոմի փառքի և ույժի գլխաւոր աղբիւրը. երբ ազատ քաղաքացիների մէջ թուլացան հանրապետական զգացմունքները, պետութիւնն էլ սկսեց փչանալ, զարգացնել իր մէջ այնպիսի արատներ, որոնք պիտի հարթէին նրա անկման ճանապարհը։ Շահամիրեանցը կրկնում է նոյն այս միտքը. նա էլ նոյն կերպով է պատճառաբանում Հռոմի քայքայումը։ Ո՛րպիսի ոգևորութեամբ է նա վերաբերվում այնպիսի մի հանրապետական գործիչին, ինչպէս էր, օրինակ, Կինկիննատոս, որ պետութեան առաջին մարդ լինելուց յետոյ քաշվում է գիւղը և սկսում է հող վարել իբրև մի հասարակ մշակ։ Շահամիրեանցը շատ ցանկալի է համարում որ Հռոմի պատմութիւնը հայերէն թարգմանվի և մաղթում է որ այդ հռչակաւոր հանրապետութեան ոգին իջնէ հայերի վրա, տարածվի նրանց մէջ, բացի, ի հարկէ, հեթանոսական կրօնից։

Եւ ահա այս բոլոր առաջնորդների ղեկավարութեամբ մեր հեղինակը գալիս է երկար ու բարակ բացատրելու թէ Հայաստանը միապետութիւն չը պիտի լինի։ Այդպէս է թելադրում մեր պատմական անցեալը, այդպէս է ցոյց տալիս և բնական օրէնքը։ Հայաստանի պատմութեան նա մօտիկ ծանօթ չէ, լաւ ուսումնասիրել է, ինչպէս տեսանք, միայն Մովսէս Խորենացուն։ Բայց այս պատմագրի լուսաբանած շրջանն էլ բաւական է որ Շահամիրեանցը համոզվի, թէ Հայաստանի

դժբախտութեան պատճառը միապետութիւնն էր։ Մի մարդ, ասում է նա, կանգնում էր պետութեան գլուխ, անում էր ինչ ուզում էր, իսկ արածները մեծ մասամբ վնասակար էին, որովհետև նա չունէր խորհրդականներ ժողովրդի կողմից։ Գոյութիւն չունէին հաստատուն օրէնքներ, որոնց հպատակվէին ամենը. և սա մի մեծ աղէտ էր մեր աշխարհի համար. Հայաստանը կործանվեց այն պատճառով, որ արդար ու իմաստուն օրէնքների մասին հասկացողութիւն չունէր։ Տիրում էր բարբարոսական միապետութիւն, և գլխաւոր կառավարողը, իր քմահաճութիւններին ու կամայականութիւններին թողնված մի բռնապետ, գործում էր մեծամեծ սխալներ, որոնցից վնասվողը ժողովուրդն էր։ Մեր շատ թագաւորներ և իշխողներ «ամբարիշտ ու անիրաւ էին և վարում էին իրանց իշխանութիւնը գոռոզութեամբ և ինքնահաւանութեամբ, զրկելով, կողոպտելով, սկելով կամ անասնական բնութեամբ անցկացնելով իրանց կեանքը, մինչև որ կորան իրանք և կորցրին մեր պատիւը և հայոց սերունդը մատնեցին գերութեան, իսկ մեր աշխարհը ուրիշների ժառանգութիւն դարձրին»։ Հայերի անկարգութիւնը նրանց անկման, ստորացման և անասելի թշուառութեան պատճառ դարձաւ։ Չէ եղել և չէ կարող լինել արեգակի տակ ոչ մի բան, որ չունենայ օրէնք. ամեն մի գործ աւերվում, ոչնչանում է, երբ հակառակ է օրէնքին։

Այս մտածութիւնները արդարացի են մեծ մասամբ։ Հայոց երկիրը իր քաղաքական անկախութեան միջոցին մի ասիական բռնապետութիւն էր։ Շահամիրեանցը չէր սխալւում. թէև միայն Մովսէս Խորենացին էր նրա միակ աղբիւրը, բայց յայտնի է, որ ոչ միայն Արշակունիների, այլ և Բագրատունիների ժամանակ գրաւոր հաստատուն օրէնքներ գոյութիւն չունէին մեզանում։ Եւ այսպէս շարունակվեց մինչև XIII դարի սկիզբը, երբ մի հայ վարդապետ հաւաքեց և կարգաւորեց մի դատաստանագիրք, որ իր բազմաթիւ պակասութիւններով հանդերձ՝ հայերէն միակ իրաւաբանական գիրքն է մեր ամբողջ պատմութեան մէջ *)։ Բռնապետութիւնը հէնց այն պետական կազմակերպութիւնն է, որ օրէնքներ չունի։ Տեսնենք թէ ինչպէս է բնորոշում Մօնտեսքիէն բռնապետութիւնը. «Բռնապետական իշխանութեան բնութիւնն այն է, որ մի մարդ է այդ իշխանութեան տէրը և այդ մի մարդը այդ իշխանութեան գործադրութիւնը յանձնում է նոյնպէս մէկին։ Մի մարդ, որին բոլոր հինգ զգայարանքները միշտ ասում են թէ նա ամեն ինչ է, իսկ մնացած մարդիկ ոչինչ են, բնականաբար ծոյլ է, տգէտ, վաւաշոտ։ Ուստի նա ինքը չէ գործերով պարապում։ Բայց եթէ նա այդ

*) Վ. վ. Բաստամեան—«Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք», Վաղարշապատ, 1880, առաջաբան, եր. 13—52։

գործերը յանձնէ մի քանի մարդկանց, սրանց մէջ կը սկսվեն երկպառակութիւններ, ինտրիգներ, որովհետև իւրաքանչիւրը կը ձգտէ ստրուկների մէջ առաջինը լինելու պատիւն ստանալ»։ Բռնապետութեան սկզբունքը երկիւղն է։ Այստեղ արդէն չէ կարելի մեղմ լինել. «Եթէ բռնակալական պետութեան մէջ թագաւորը գէթ մի վայրկեան ցած դցէ սպառնացող ձեռքը, եթէ նա չը կարողանայ իսկոյն և եթ ոչնչացնել այն մարդկանց, որոնք առաջին տեղերն են գրաւում պետութեան մէջ,—ամեն ինչ կորած է, որովհետև երկիւղը—միակ շարժող սկզբունքը այս տեսակ կառավարութեան մէջ—անյայտացել է և ժողովուրդը այլ ևս չունի հովանաւոր» *)։ Շահ-Հիւսէինը, ասում է Մօնտեսքիէ, դեռ Միր-Վէյսի արշաւանքից առաջ էր զգում որ իր պետութիւնը պիտի քանդվի, որովհետև ինքը արիւն քիչ էր թափել։

Բռնապետութիւնը, ուրեմն, չէ կարող թոյլ լինել, այլապէս նա չէ էլ կարող գոյութիւն պահպանել։ Սա իսկապէս մի սարսափելի դրութիւն է։ Իսկ Հայաստանը միշտ թոյլ էր, հետևաբար և ամենադժբախտը բռնապետութիւնների մէջ։ Այս հանգամանքն էր, որ հասկանալի դառնալով Շահամիրեանցին, հարկադրում էր նրան պնդել թէ Հայաստանի կործանողը միապետութիւնն էր։ Բայց այստեղ մեր հեղինակին անծանօթ է մնա-

*) «О духѣ законовъ», Спб., 1900, եր. 31.

ցել մի ուրիշ, շատ կարևոր հարց. կարո՞ղ էր Հայաստանը մի անկարգ բռնապետութիւն չը լինել։ Եթէ Շահամիրեանցը աւելի խոր և բազմակողմանի ուսումնասիրութիւն կատարելու հնարաւորութիւնն ունենար, նա կը տեսնէր որ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել Ասիայի այն անկիւնում, ուր հայերն էին ապրում։ Մի ազգ, որ տասնեակ դարերի ընթացքում չէր կարողացել հասկանալ գրաւոր, հաստատուն օրէնքների անհրաժեշտութիւնը, մի ազգ, որի մէջ չափազանց զարգացած էր աւատական սիստէմը, որ երբէք չը մտածեց այդ սիստէմը վերացնելու և ընդհանուր համայնական շահեր ու գաղափարներ բւրացնելու մասին, կարո՞ղ էր այլ ճակատագիր ունենալ, կարո՞ղ էր ստեղծել հանրապետութիւն կամ օրէնքների վրա յենված միապետութիւն։—Չէր կարող։ Կառավարութիւնները ստեղծում են ժողովուրդները։ Իսկ ժողովրդից կարելի է պահանջել աւելի կատարեալ կառավարչական ձև միայն այն դէպքում, երբ նա հասել է կուլտուրական զարգացման մի յայտնի աստիճանին։

Բնական օրէնքների տեսակէտից էլ Շահամիրեանցը անարդար և անբնական էր գտնում միապետութիւնը։ Մի անհատ չէ կարող այնքան կատարեալ լինել, պակասութիւններից ու արատներից այնքան ազատ, որ նրան կարելի լինի յանձնել անսահման իշխանութիւն մի ամբողջ ազգի վրա։ Թագաւորել կարող է միայն Աստուած. մահկանացու մարդը չունի նրա անսխալականութիւնը, նրա գերագոյն յատկութիւնները. մարդը երբեմն բարկանում է, երբեմն ծուլանում, երբեմն ուրախ է, երբեմն տխուր, երբեմն զայրացկոտ, երբեմն գթած։ Ուրեմն «չը պիտի տանք մեր սանձը այնպիսի ինքնակալի ձեռքը, որ ճմլէ մեր կզակը իր կամքի և հաճոյքի համաձայն»։ Մարդիկ ծնվում են ազատ և համահաւասար. և նրանք, մեծից մինչև փոքրը, պիտի կազմեն մի հօտ, որի կառավարողը պիտի լինի ոչ թէ այս կամ այն անհատի կամքը, քմահաճութիւնը, այլ մի և ընդհանուր Օրէնքը։ Երկիւղը, բռնապետութեան այս գլխաւոր և միակ հիմքը, չէ կարող արդարացնել մարդուն, որ կամաւ հրաժարվում է ազատութիւնից և ենթարկվում բռնակալի ձեռքին։ «Դու մահվան երկիւղի պատճառով թուլանում ես քո ազատութիւնից և հնազանդվում ես անօրէններին. բայց ահա մի ամենամանր կարիճ կամ օձ և կամ մի անմարս սառն կերակուր կարող է այդպիսի մահ բերել քո բնական կեանքին։ Ասել է թէ ամեն թունաւոր կենդանի կարո՞ղ է քո թագաւորը լինել։ Ո՛չ։ Մեզ հարկաւոր է մեռնել ազատ և պատրաստել մեզ համար յաւիտենական կեանք։ Անասուններն էլ չունեն իրանց մէջ մէկը, որ ինքնակալ և ինքնակամ հրամայող լինէր նրանց վրա, ուրեմն որքան ամօթ է մեր բանականութեան համար լինել հնազանդ մի մարդու, որ մեր նմանութիւնն ու բնութիւնն ունի, որ ինքնակամ

հրամայող է դառնում մեզ վրա»։ Ո՛չ, կառավարողը ինքը, ժողովուրդը պիտի լինի. Թագաւորը Օրէնքը պիտի լինի։ Մարդու և Աստուծու մէջ կարող է միայն մի ծայրագոյն իշխանութիւն լինել—Օրէնքը, որ ամէն մէկին տալիս է իր երկիրը կառավարելու, նրա ճակատագիրը տնօրինելու իրաւունք։

Բայց ինչպէս կարող են միլիօնաւոր մարդիկ կառավարել երկիրը։ Հնարաւոր չէ որ այդ միլիօնները հաւաքուեն միասին, վճռեն իրանց անելիքները։ Մի կալում դարսված է մեծ քանակութեամբ ցորեն. այդ ցորենի արժանաւորութիւնն իմանալու համար բաւական է նրանից վերցնել մի բուռ միայն։ Այսպէս էլ ժողովուրդը. բաւական է մեր երկրում գտնվող իւրաքանչիւր տասը հազար անձից երկու-երկու ներկայացուցիչ ընտրել. դրանք կը դառնան իրանց ընտրող բազմութեան փոխանորդ և կը կատարեն նրա բոլոր գործերը։ Փոխանորդները կը ժողովեն միասին, կը մշակեն օրէնքներ. հարկաւոր է իշխանութիւն, որ գործադրէ օրէնքները, և այդ իշխանութիւնը կընտրվի փոխանորդների միջից մի յայտնի ժամանակով։ Իրանց աստիճանի համեմատ այդ պաշտօնեաները վայելում են պատիւներ, բայց երբէք իշխանաւորներ չեն, այլ ժողովրդի սպասաւորներ, նրան ծառայողներ, ինչպէս Աւետարանում ասված է, թէ ով ձեր մէջ մեծ է, նա պիտի լինի ամենքի սպասաւոր։

Այսպէս, ուրեմն, Շահամիրեանցը առաջարկում է Հայաստանի համար հանրապետական կառավարութիւն, հիմնված ռամկավարական սկզբունքների վրա։ Հանրապետական կարգերի հետ ծանօթացնելը բաւական չէ համարել նա. իր այդ մտքերը բազմաթիւ կրկնութիւններով ապացուցանելուց յետոյ դիմում է գործնական միջոցին—տալիս է օրէնքների մի ծրագիր, որ գրքի ամենահետաքրքրական կողմն է ներկայացնում. այդտեղ կայ թէ հայկական հանրապետութեան սահմանադրութիւնը, թէ քրէական և քաղաքացիական օրէնքների մի ժողովածու։ Եւ Շահամիրեանցը հաւատում է որ այդ կարգերը կարող են հեշտութեամբ հաստատվել Հայաստանի հողի վրա։ Հարկաւոր է որ ժողովրդի մէջ տեղի ունենայ մի յայտնի պատրաստութիւն՝ այդ օտար ու նոր սկզբունքների ըմբռնելու և գործադրելու համար։ Շահամիրեանցը գտնում է որ բաւական կը լինի և այն, եթէ հայերը հասկանան իրանց պարտաւորութիւնները, որոնք ձևակերպված են այսպէս. 1) Հայաստանի գլխաւորները (գետապետ) պէտք է հրամայեն Հայաստանում ապրող բոլոր մարդկանց, արու թէ էգ, սովորել գրել ու կարդալ հայերէն. 2) Հայ հայրերը իրանց որդիներին պիտի նախ հայերէն գրագիտութիւն սովորեցնեն, ապա զինուորութիւն, ինչպէս պիտի սովորեցնեն նաև հնազանդվել Օրէնքներին. 3) Հայ տիկինները պէտք է հաւանեցնեն իրանց և իրանց աղջիկների սըր-

տերը ամուսին ընտրել քաջ մարդկանցից ու յաղթող զինուորներից և ամաչեցնեն իրանց ամուսիններին, երբ սրանք կը մտնեն ուրիշ ազգերի ծառայութեան մէջ։ «Այսքան օգնութիւն ձեր կողմից բաւական կը լինի որ հայոց ազգը փայլէ երջանկութեամբ Հայաստան աշխարհի երեսին»։

Մենք կը տեսնենք որ «այդքան օգնութիւնը» բաւական չէր, կը տեսնենք որ Շահամիրեանցի գործը ամբողջովին մի ուտոպիա էր։ Բայց առայժմ դեռ դիմենք նրա խմբագրած օրէնքներին։ «Որոգայթ Փառաց»-ը առհասարակ այնքան նշանաւոր գիրք է, որ արժէր նրան մի առանձին մանրամասն ուսումնասիրութեան առարկայ դարձնել, ցոյց տալ այն աղբիւրները, որոնք ղեկավարել են Շահամիրեանցին մի այդպիսի գործ պատրաստելիս։ Իսկ թէ մեզանում շատ հեշտերից ու սովորականներից չէր այդ գործը, կարելի է իմանալ հէնց նրանից, որ իրաւաբանութիւնը հայոց գրականութեան մէջ համարեա անյայտ մնացած մի ճիւղ է և բացի Մխիթար Գօշի «Դատաստանագրքից» մենք հազիւ թէ կարողանանք գտնել մի այլ գիրք, որի առարկան լինէին օրէնքները։ Շահամիրեանցի օրէնսգիրքը Մխիթար Գօշի հետ համեմատած այն առաւելութիւնն ունի, որ միայն քրէական ու քաղաքացիական իրաւունքը չէ շօշափում, այլ և պետական, հասարակական իրաւունքը։ Սակայն մենք այստեղ չենք կարող մանրակրկիտ կերպով քննել «Որոգայթ Փառացը». մեր

աշխատութեան ծրագիրը ինքն ըստ ինքեան հասկանալի է դարձնում որ այստեղ մենք կարող ենք միայն Շահամիրեանցի օրէնքների էութիւնը դնել։

Շահամիրեանցը չէ կարողացել մի յայտնի սիստէմով դասաւորել իր օրէնքները։ Ընդամենը 521 յօդուած է նա խմբագրել և դրանք խառնված են վայրիվերոյ. երեւում է որ հեղինակը ինչ որ գտել է կամ ինչ որ յիշել է, իսկոյն գրել է, չը մտածելով կարգի և հետեւողականութեան մասին։ Խառն է ոչ միայն դասաւորութիւնը. խառն են և հայեացքները։ Խիստ ազատամիտ առաջադիմական որոշումների հետ մենք տեսնում ենք յօդուածներ, որոնք շատ միամիտ են, յետադիմական, նոյն իսկ ասիական։ Յանկարծ, հանրապետական խիստ լայն սկզբունքներ արծարծող յօդուածների շարքում ձեր աչքին է ընկնում, օրինակ, մի յատուկ յօդուած, որ արգելում է բակլա ցանել Հայաստանում, երևի այդ բոյսի յատկութիւնը ի նկատի առնելով։ Այս խառնաշփոթութեան մէջ մենք կը փորձենք որոնել հետեւեալ կէտերը. 1) Պետական կազմակերպութիւն. 2) Հասարակական կարգեր. 3) Դատաստանական օրէնքներ։

I. Պետական կազմակերպութիւն։ Կասպիական ծովից մինչև Կիլիկայի արեւմտեան սահմանները և Տայք նահանգից մինչև Տաւրոս լեռները Հայաստան է և պիտի յաւիտեան մնայ հայերի ժառանգութիւն, առանց մի քայլ տեղ անգամ պակասեցնելու։ Պետութիւնը հիմնվում է ազգայնամոլա-

կան սկզբունքների վրա. խղճի և անձնաւորութեան կատարեալ ազատութիւն է, բայց իւրաքանչիւր մարդ, որ ապրում է Հայաստանում, պէտք իրան պարտք համարէ հայ կոչվելը և պէտք սովորէ հայերէն: Բոլոր պետական և հասարակական պաշտօնները տրվում են միմիայն լուսաւորչական եկեղեցուն պատկանող հայերին, թէև միւս կրօնները ազատութիւն են վայելում: Պետութեան ամբողջ մեքենան հիմնված է ընտրողական սկզբունքի վրա. ձայնատուութեան իրաւունքը չէ սահմանափակված, ընդհանուր է: Իւրաքանչիւր տասն երկու հազար տուն ընտրում է երկու փոխանորդ կամ, խօսելով ներկայի լեզուով, պատգամաւոր: Պատգամաւորները իրանց ընտրողներից ստանում են ռոճիկ: Նրանցից է կազմվում պետական ամբողջ պաշտօնէութիւնը — գործադիր, վարչական, դատաստանական մարմինները, նոյն իսկ զօրքի գլխաւոր հրամանատարները: Պատգամաւորները ընտրվում են երեք տարով. այդ ժամանակն է որոշւում և բոլոր ընտրովի պաշտօնէութիւնների համար, իսկ իւրաքանչիւր երեք տարուց յետոյ լիազօրութիւնները վերանորոգվում են ընտրութեամբ. վերընտրվել թոյլատրվում է ամենքին, թէ պատգամաւորներին, թէ նրանցից ընտրված պաշտօնեաներին:

Հանրապետութեան միջուկը, ի հարկէ, այդ պատգամաւորների ժողովն է, որ մշակում է օրէնքներ երկրի համար և միակ բարձրագոյն հիմնարկութիւնն է: Հարցերը այդտեղ վճռվում են վիճաբանութիւններով և ձայների բացարձակ առաւելութեամբ: Պատգամաւորները իրանց միջից ընտրում են գործադիր իշխանութեան գլուխ, որ կոչվում է Նախարար. դա հանրապետութեան նախագահն է: Ապա գալիս են միւս պաշտօնեաները: Նախարարը ունի առանձին ծածուկ խորհուրդ, բաղկացած 6 հոգուց: Մինիստրութիւններ այն ձևով. ինչպէս գոյութիւն ունեն այժմ, չը կան: Դրանց փոխարէն տեսնում ենք այսպիսի անուններով հիմնարկութիւններ. լրտեսապետութիւն, զինապետութիւն, վառօդապետութիւն, կառապետութիւն, վրանապետութիւն, կերակրապետութիւն, գանձապետութիւն, երկրաչափութիւն, պետ տկարների և աղքատների: Առաջին հինգ հիմնարկութիւնները զինուորական են. կերակրապետութիւնը իր տեսակի երկրագործական մինիստրութիւն է, գանձապետութիւնը—ֆինանսների: Հետաքրքրական է կերակրապետութիւնը: Նա պէտք հսկէ հողագործութեան վրա, որպէս զի անմշակ հողեր չը մնան. և եթէ երկրագործները միջոց չունեն վարելու և հնձելու, պետութիւնը պէտք միջոցներ տայ այդպիսիներին: Ժողովրդի կերակրի գլխաւոր հոգսը այդ պաշտօնէութեան վրա է. նա պէտք երեք տարվայ պաշար պահէ հասարակական շտեմարաններում, ամեն տարի հաւաքելով հացահատիկներ: Բոլոր այս հիմնարկութիւնները կառավարվում են երեք-երեք մարդ-

կանց ձեռքով, որոնք յատկապէս ընտրվում են պատգամաւորներից։ Ընտրվում են բացի դրանից և քաղաքներ կառավարողներ, զօրքի սպարապետներ, հազարապետներ, հարկերի վրա հսկող պաշտօնեաներ, ինչպէս նաև 60 դատաւորներ բարձրագոյն կամ մայր դատարանի համար։ Կայ և մի պատուաւոր պաշտօն, որ կոչվում է «Հայր Հայաստանեայց». սա ընտրվում է երեք օրվայ ժամանակով և պաշտօն ունի երդվեցնելու բոլոր պաշտօնեաներին։ Իւրաքանչիւր պաշտօնեայի ընտրութեան մասին կազմված են պաշտօնական թղթեր կամ նամակներ, որոնց օրինակները ամենայն մանրամասնութիւններով գրել է Շահամիրեանցը իր գրքի մէջ։

Բոլոր պաշտօնեաները պատասխանատու անձնաւորութիւններ են ազգի առաջ. պաշտօնը չէ արգելում որ զանցառու կամ կաշառակեր պաշտօնեան, սկսած նախարարից, դատի ենթարկվի և հեռացվի իր տեղից։ Նախարարի պաշտօնի հետ կապված են հետևեալ պարտաւորութիւններն ու իրաւունքը. խստութեամբ պահպանել օրէնքները, լինել հայ ազգի ներկայացուցիչ և բերան, վարել արտաքին քաղաքականութիւնը՝ պատերազմ հրատարակելու և հաշտութիւն կնքելու իրաւունքով։ Նախարարը զօրքերի ծայրագոյն հրամանատարն է, իրաւունք ունի ներումն շնորհել մահապարտներին, բայց տարին եօթն անգամից ոչ աւել։ Նա

հայերի առաջին պաշտօնատարն է, մի և նոյն ժամանակ և հաւատարիմ սպասաւորը։

Մի առանձին յօդուածով նախարարութիւնը դարձնվում է ժառանգական։ Դա կարող է լինել այն դէպքում, երբ Հայաստանում կը յայտնվեն նախկին թագաւորական տների ժառանգներ, մարդիկ, որոնք կապացուցանեն թէ իրանք սերված են կամ Հայկից կամ Վաղարշակից և կամ Բագրատից։ Այդպիսիները պէտք է լինեն հայլուսաւորչական և նախարարութիւն են անում մինչև մահ, իսկ մահից յետոյ նոյն պաշտօնը ժառանգում են նրանց որդիները։ Այսպիսով Շահամիրեանցը մի ձեռքով քանդում է այն, ինչ շինել էր միւս ձեռքով։ Պետութեան առաջին պաշտօնեային դարձնելով ժառանգական, նա իսկապէս հիմքից խախտում էր իր հանրապետութիւնը և տեղը դնում էր սահմանադրական միապետութիւն։ Եւ ինչու էր նա այդպէս անում։ Հայկի ու Վաղարշակի ժառանգներին նա հազիւ թէ սպասելիս լինէր. այնքան հեռաւոր հնութիւնից չէր կարող սերունդ պահվել։ Ուրիշ բան է Բագրատը. մենք արդէն տեսանք որ սրա սերունդը դեռ շարունակվում էր—վրաց թագաւորը։ Յատկապէս Հերակլի համար էր գրված այդ տարօրինակ յօդուածը. Շահամիրեանցը կամենում էր այս կերպով վարձահատոյց լինել Հերակլին, մատուցանելով նրան ժառանգական նախագահութեան կամ, որ համարեա մի և նոյնն էր, սահմանադրական միապետի

պաշտօնը նրա ազատած Հայաստանում։ Մինչեւ ընտրված նախարարը միայն ինքն էր ռոճիկ ստանում, ժառանգական նախարարի որդիներին էլ, արու թէ էգ, յատկացվում էին ռոճիկներ։

Պետութեան գլխաւոր նեցուկը զօրքն է։ Հայոց զօրքերի թիւը Շահամիրեանցը որոշում է 90 հազար, դրանից 21 հազարը ձիաւոր, 69 հազարը—հետեւակ։ Բանակը բաժանվում էր երեք սպարապետութեան, որոնք կոչվում են կարմիր, կապոյտ և դեղին։ Այդ գոյները դրօշակների գոյներն են. և դրա համեմատ էլ սպարապետների և զինուորների գդակն ու կապան պիտի լինեն կամ կարմիր, կամ կապոյտ, կամ դեղին։ Շահամիրեանցը առանձին ուշադրութեամբ է վերաբերվում զօրքին և աշխատում է իր օրէնքների մէջ նախատեսել զինուորական ծառայութեան բոլոր մանրամասնութիւնները, նոյն իսկ այնպիսիները, որոնք հասկանալի են ինքն ըստ ինքեան։ Այսպէս, մի առանձին յօդուած ասում է. «Գիշերապահ զինուորը եթէ քնէ իր ծառայութիւնը կատարելիս, պիտի պատժվի»։ Կամ թէ պատերազմի ժամանակ իւրաքանչիւր զօրաբաժին, նախ քան քնելը, պիտի պահապաններ նշանակէ, որպէս զի անակնկալ յարձակումն չը լինի։ Ինչպէս տեսանք, զօրքի բոլոր հրամանատարները, նախարարից սկսած մինչև հազարապետները, ընտրովի են. առաջին անգամից զարմանալի է թւում, որ հրամանատարներ ընտրողը ինքը, զօրքը չէ, այլ ժողովրդի

պատգամաւորները։ Բայց պէտք է իմանալ որ Շահամիրեանցի կանոններով իւրաքանչիւր հայ զինուոր է. 12 տարեկան հասակից նա պիտի զինավարժութիւն և զինուորական ծառայութիւն սովորէ։ Գործող բանակի մէջ երիտասարդները մտնում են վիճակահանութեամբ. 100-ից 5-ը պիտի զինուոր գնան վիճակ հանելով և ծառայեն 7 տարի զօրքի մէջ։ Ընդհանուր զինուորագրութեան այս կանոնը շատ հետաքրքրական է այն ժամանակների համար։ Եւրոպական շատ կարգերի ենք հանդիպում այդ զինուորական կազմակերպութեան մէջ։ Բայց և տեսնում ենք այնպիսի հին կարգ, որպիսին է պատերազմական աւարի բաժանումը։ Թշնամուց խլած ամեն բան—ոսկի, արծաթ, ակներ, ամեն տեսակ անասուններ, իւղ, ձէթ, գինի պէտք է վաճառել հրապարակական աճուրդով և գոյացած գումարը բաժանել հրամանատարներին և զինուորներին. նախարարը *) ստա-

*) Հետաքրքրվողների համար դնենք այստեղ հայոց նախարարի պաշտօնական համազգեստի նկարագրութիւնը. «Սև ուրար թիկնամէջով։ Ուրարի վրա մի ոսկէտիպ առիւծ։ Ակներից շինած մի ճառագայթ ձախ կրծքի վրա։ Այդ ճառագայթի մէջ «Գառն Աստուծոյ» դրօշակ խաչով։ Մի ոսկէ շղթայ պարանոցից կախված և այդ շղթայի ծայրին մի ոսկէ ձիաւոր։ Վերարկուն մի սև ու երկար փիլոն է և փիլոնի ներսը (աստառը) մկան մորթից. մէջքին կապած է սուր, իշխանական ցուպ ձեռքին. թագ-պսակ գլխի վրա և խաչ՝ գագաթի վրա։

նում է 5 տոկոս, ձիաւոր զօրքը 16, իսկ հետեւակը—34 տոկոս: Պատերազմի ժամանակ ոչ մի զինուոր իրաւունք չունի նոյն իսկ մի ձու առնել բնակիչներից զոռով. ամէն բան պէտք է առնվի փողով:

Պետութեան եկամուտները գոյանում են հարկերից և տուրքերից: Գլխահարկ գոյութիւն չունի, որովհետև նա ստրկութեան նշան է, մինչդեռ Հայաստանում ապրող իւրաքանչիւր մարդ միանգամայն ազատ է: Գլխահարկի փոխարէն ազգաբնակութիւնը տալիս է հարկ իր կերած կերակրից, հագած զգեստից և գործ ածած աղից: Ենթադրվում է Հայաստանի մէջ 24 միլիօն բնակիչ. իւրաքանչիւր անհատ տարեկան տալիս է 40 դահեկան կերակրի համար, 10 դահեկան զգեստի և նոյնքան էլ աղի հարկ: Մնացած եկամուտները ստացվում են անուղղակի հարկերից. մաքս ներմուծվող ապրանքներից, առևտուրի, անշարժ կալուածքների և այլ տուրքեր: Ընդամենը այդպիսով ստացվում է 1320 միլիօն դահեկան կամ 66 միլիօն պարսկական թուման: Հետաքրքրական է հարկերի մի տեսակը: Մօնտեսքիէն ասում է որ իւրաքանչիւր հանրապետութեան թշնամին փափկակեցութիւնն է, զեղխութիւնը. այդ պատճառով էլ հռոմէական հանրապետութիւնը օրէնքներ էր հրատարակում աւելորդ ծախսարարութիւնների դէմ: Շահամիրեանցն էլ, երևի հէնց այդ հանգամանքի ազդեցութեան տակ, հարկերի է են-

թարկում այն բոլորը առարկաները, որոնք անհրաժեշտ չեն սովորական, միջակ կեցութեան մէջ: Ով միջոց ունի հարուստ ու շքեղ ապրելու, նա պիտի տուրք տայ պետութեան՝ այդ շքեղութեան իրերից: Ահա ինչ յօդուածներ ենք գտնում: «Սաղրի կօշիկ հագնողն հատուցէ տարէն երկու դրամ արծաթ, կանայք ազատ». «Զառ գօտիկ և զառ հաշիս զգենողն տարէն տասն դահեկան, կանայք ազատ»: Տուրք է վճարում զարդարուն սենեակում ապրողը, մետաքսէ գորգի վրա նստողը, մի կանգունից աւելի մեծութեամբ հայելի պահողը, կառքեր ունեցողը, մարմարեայ աւազան շինել տուողը և այլն:

Այժմ նայենք ծախսերին: Պետական եկամուտների մեծագոյն մասը յատկացրած է բանակին. մնում են մի քանի թեթև գումարներ միայն աղքատներին խնամելու, որբ մանուկներին ուսում տալու, դեղերի և բժիշկների համար: Հանրապետութիւնը սեփական նախաձեռնութիւն չունի երկրի կրթական-կուլտուրական գործերի մէջ. ոչ ժողովրդական լուսաւորութեան, ոչ ճանապարհների հաղորդակցութեան, ոչ արհեստների և առևտրի զարգացման համար գումարներ չը կան նշանակված: Մինիստրութիւնների նմանութիւն ունեցող վերոյիշեալ հիմնարկութիւնները սեփական բիւջէ չունեն: Օրինակ, մենք տեսանք թէ ինչ է կերակրապետութիւնը. այնքան կարևոր պարտաւորութիւնները ինչպէս պիտի կա-

տարէ այդ մարմինը, քանի որ պետական գանձարանը նրան ոչինչ չէ տալիս, բացի միայն երեք հատ կերակրապետների ռոճիկից։ Ընդհանուր առմամբ, պետական բոլոր ծախսերի գումարն է 1237 միլիոն դահեկան։

II. Հասարակական կարգեր։ Իւրաքանչիւր անհատ կատարելապէս ազատ է բարի կամ չար գործելու մէջ, ազատ է խօսելու, դատողութիւններ տալու մէջ։ Սակայն այս լայն ռամկավարական սկզբունքին սաստիկ հակասում է օրէնսդրի դասակարգային նախապաշարմունքը։ Հասարակական ժողովներից նա պահանջում է կարգ պահպանել ըստ դասակարգերի. տեղեր գրաւելը կախված է մարդու աստիճանից և դիրքից։ Նոյն իսկ եկեղեցում, ուր խտրութիւն չը կայ «հրէայի և հեթանոսի» մէջ, Շահամիրեանցը այսպէս է կանգնեցնում աղօթողներին. 1) նախարարը, 2) իշխանները, 3) զորագլուխները, 4) զինուորները, 5) վաճառականները, 6) հողագործները և 7) արհեստաւորները։ Այսպէս և կանայք։ Մինչև անգամ մասնաւոր, ընտանեկան խնճոյքների մէջ էլ պահանջվում է գործադրել նոյն կարգաւորութիւնը, յատկացնելով ամեն մէկին նստելու տեղ, նայած պատւին և աստիճանին։

Հասարակական հանրաշահ գործեր կատարողները, մանաւանդ շահաւէտ արհեստներ երկրի մէջ մտցնողները ստանում են պետութիւնից պարգևներ։ Քաղաքների բարեզարդութիւնը ա-

ռանձին հոգածութեան առարկայ է. փողոցները անուններ պիտի ունենան, իսկ տները՝ թուահամարներ։ Ուսումը պարտադիր է ամենքի համար, թէ արու և թէ էգ։ Բայց հասարակական դպրոցները թողնված են ծնողներին։ Ամեն տեղ, սկսած առաջին քաղաքից մինչև յետին փոքրիկ գիւղը, պէտք է լինեն երկու ուսուցիչներ. մէկը տղաներին և աղջիկներին գրել կարդալ սովորեցնելու համար, իսկ միւսը տղաներին զինուորական կրթութիւն տալու համար.—ինչպէս գիտենք, իւրաքանչիւր արու, 12 տարեկան հասակից, պիտի զինուորական արհեստը սովորէ։ Միայն որբերն ու ապօրէն զաւակները դաստիարակվում են պետութեան հաշւով։ Տկարներին և աղքատներին խնամելն էլ պետական գործ է և դրա համար, ինչպէս տեսանք, սահմանված է յատուկ պաշտօնէութիւն, «Պետ տկարաց և աղքատաց» անունով։ Այդ պաշտօնէութեան պարտքն է մեծ քաղաքների մօտ կառուցանել ընդարձակ շինութիւններ, բոլոր չքաւոր տկարներին և վիրաւորներին խնամելու համար. հիմնվում են աղքատանոցներ, բժշկական օգնութիւնը պետական գանձարանի հաշւով է։ Բորոտներին պէտք է առանձնացնել և պահել սարերի վրա, մինչև կառողջանան. ապա նրանք ազատ են գնալ և ապրել ուր կը կամենան։

Շահամիրեանցը շատ մեծ ուշադրութիւն է դարձնում մանաւանդ հասարակական բարոյակա-

նութեան վրա և սահմանում է կարգեր ու պատիժներ, որոնք իրանց խստութեամբ բարբարոսութեան են հասնում։ Այսպէս, ազատութեան և հանրապետական գաղափարների այդ ոգևորված պաշտպանը նոյն իսկ հրապարակային ցոյցերի առարկայ է դարձնում կանանց հաւատարմութիւնը։ Ամէն մի կին, որ սրբութեամբ պահել է իր կուսութիւնը և ընծայել է նրան իր ամուսնուն, ունի պատիւ դաշտ դուրս գալ զբօսնելու, մտնել հանդէսների մէջ, սեղան նստել, պարել պատուաւոր տիկինների հետ։ Այդ պատիւներից զրկվում է այն կինը, որ կորցրել է կուսութիւնը մինչև պսակվելը, նոյն իսկ եթէ կուսութիւն խախտողը եղել է այն տղամարդը, որ յետոյ նրա ամուսինն է դարձել։ Բնորոշ է մանաւանդ հետևեալ օրէնքը։ Եթէ դայեակը խառնակվում է իր խնամքին յանձնած արու երեխայի հետ, նա պիտի 6 շաբաթ բանտ նստէ. ամէն հինգշաբթի օր մերկացնում են նրան, ման են ածում փողոցներում, վաթսուն անգամ մտրակ են խփում նրա փափուկ մսին. վեց շաբաթից յետոյ կտրտում են նրա գլխի մազերը և խայտառակութեամբ արձակում։

Պէտք է նկատել որ Շահամիրեանցը յանկացել է կնոջ համար փոքր ի շատէ տանելի դիրք ստեղծել հասարակութեան մէջ։ Կանայք ման են գալիս բաց երեսով. նրանք իրանց ամուսինների օգնականներն են։ Անզաւակ կինը իր ամուսնու մահից յետոյ ստանում է նրա կայքի կէսը, իսկ

զաւակ ունեցողը—մի երրորդական մասը։ Ամուսնացած զինուորը իր ռոճկի կէսը պիտի տայ իր կնոջը. պատերազմի ժամանակ կնոջը չէ կարելի գերի տանել։ Ամուսնանալուց առաջ հարսնացուն ու փեսան պիտի կնքեն իրանց մէջ քաղաքացիական դաշնագրութիւն. այդ թղթով փեսան պարտաւորվում է իր ունեցածից մի մաս հանել իր կնոջը և այդ մասը անձեռնմխելի պիտի մնայ ամէն տեսակ դէպքերում, եթէ ամուսինը նոյն իսկ վնասվի, ձախորդութեան մէջ ընկնէ։ Կնոջ սենեակը նուիրական է. ոչ ոք չէ կարող մտնել այնտեղ, բացի միայն այն դէպքից, երբ դատաստանական վճռով պէտք է ձերբակալել քրէական յանցապարտ նրա ամուսնուն։ Կանայք ազատվում են և մարմնական պատժից, բացի երկու դէպքից.—առաջինը, երբ դատաստանական վճռով պէտք է ծեծել յանցաւոր կնոջը և երկրորդ, երբ այդպէս է պահանջում մանկավարժութիւնը։ Շահամիրեանցը այս խայտառակ գործերը աշխատում է մեղմացնել շատ միամիտ կերպով։ Երբ դատաստանի վճիռը պէտք է գործադրել ամուսնացած կնոջ վրա, այդ դէպքում ամուսինը պիտի մտրակով 12 հարուած տայ նրա փափուկ տեղին, բայց զգուշութեամբ, որպէս զի վէրք չը պատճառէ կամ չը կոտրէ իր կնոջ ոսկորները։ Իսկ երբ վարժապետն է հարկաւոր համարում ծեծել իր պարտազանց աշակերտուհուն, այդ դէպքում տան կանայք են ծեծողները. հարուածների թիւը (միշտ մտրակով) իննից

չը պիտի անցնէ. դարձեալ յանձնարարվում է զգուշութիւն. ծեծվողը օրիորդ է, չը պիտի վնասէ իր դէմքը, ոչ էլ չափից դուրս վախենայ, որովհետև կարող է զրկվել որդեծնութեան ընդունակութիւնից։ Ամենածանր տպաւորութիւնը հէնց այս զգուշութիւններն ու հոգածութիւններն են թողնում։ Ի՞նչ է նշանակում իւրացնել դրսից եկած գաղափարները, մնալով, սակայն, խաւար իրականութեան զաւակ։ Այսպիսի պատիժներ առաջարկողը միւս կողմից անօրինում է որ օտար երկրից Հայաստան փախած յանցաւորը ազատ ու անձեռնմխելի մնայ և չը յանձնվի իր երկրի կառավարութեան։ Սա անգլիական օրէնք է, ինչպէս նաև այն, որ արջեր, գայլեր և այլ վնասակար կենդանիներ կոտորողները ստանում են պարգև պետական գանձարանից։ Մի և նոյն ժամանակ եթէ հիւանդը մեռնում է, նրան բժշկող բժիշկը ոչինչ վարձատրութիւն չէ ստանում, նոյն իսկ չէ կարող պահանջել իր գործ ածած դեղերի արժողութիւնը։ Իսկ եթէ նոյն բժիշկը ազատէ հիւանդին մահից, կամ մանկաբարձուհին ազատէ ծննդկանին դժուար և վտանգաւոր ծննդաբերութիւնից, նրանք ստանում են գանձարանից մի-մի գահեկան պարգև։

Հասարակական ուրիշ շատ կարգեր էլ է հիմնում Շահամիրեանը։ Մենք կը յիշատակենք միայն մի քանիսը։ Երեկոյեան ժամի 9-ից յետոյ տանից դուրս չը գալ առանց ճրագի, մեռելի տուն

կամ ծննդկանի մօտ չը գնալ առանց հրաւէրի (հրաւէրի օրինակն էլ դրված է), տարին սկսել յունուարի 6-ից, հարսանիքը, թաղումը, մկրտութիւնը կատարել առանց մեծ ծախսերի, այնպէս, ինչպէս սահմանում է Շահամիրեանը, որ չէ մոռացել նոյն իսկ քահանաների և եկեղեցական ուրիշ սպասաւորների վարձը նշանակել։

Այստեղ հարց է ծագում. ինչ դեր է կատարում հոգևորականութիւնը հայոց հանրապետութեան մէջ։ Նրան յատկացնվում է պատուաւոր տեղ. պատգամաւորների ժողովում նախարարից յետոյ առաջին տեղը պատկանում է հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ եպիսկոպոսին, որ, ինչպէս և նախարարը, երկու ձայն ունի։ Բայց և այնպէս, սահմանվում է որ ոչ պետութիւնը խառնվի հոգևորականութեան գործերի մէջ, ոչ էլ հոգևորականութիւնը՝ պետութեան գործերի մէջ։ Հետաքրքրական է հետևեալ կարգը։ Ամեն երեք տարին մի անգամ, երբ ընտրվում է նոր նախարար, նրա կողմից 12 ծեր և խոհեմ մարդիկ շրջում են վանքերն ու կուսանոցները, մտնում են միաբանների և ապաշխարողների մէջ, առանձնանում են ամեն մէկի հետ և իմանում են ամեն մէկի սրտի փափագը—արդեօք կամենում է աշխարհ դուրս գալ և ամուսնանալ։ Կազմում են այդպիսի փափագ յայտնածների ցուցակը, որ ներկայացնվում է նախարարին։ Վերջինս թոյլտուութիւն է խնդրում կաթողիկոսից և վանքերից ու կուսանոցներ-

րից հանվում ու աշխարհ են մտցնվում ամուսնանալ ցանկացողները։

III. Դատաստանական օրէնքներ։ Դատաստանական կազմակերպութիւնը այսպիսի պատկեր է ներկայացնում, որքան կարելի է հասկանալ Շահամիրեանցի վայր ի վերոյ, խառն ի խուռն յօդուածներից ու դատողութիւններից։ Կայ «Մայր Դատաւորութիւն». երևի, դա դատաստանական բարձրագոյն հիմնարկութիւնն է պետութեան մէջ։ Բոլոր մեծ քաղաքներում գոյութիւն ունին միայուն դատարաններ, որոնց անդամները ընտրովի են։ Դրանց են ենթարկված վիճակի քաղաքացիական և քրէական գործերը։ Բայց այդ դատարանները անընդհատ նիստեր չունեն. գործեր քննելու համար յատուկ ժամանակամիջոցներ են նշանակվում—գարնանամուտը, ամառնամուտը, աշնանամուտը և ձմեռնամուտը։ Սակայն որպէս զի մանր-մունր պահանջները արագ վճռվեն, դատարանի անդամներից իւրաքանչիւրը հերթապահութիւն է անում մի ամիս և վճռում է մանր գումարների պահանջները։ Քրէական գործերի քննութեան համար երդուեալների դատարան կայ։

Ընտրվում են 94 հոգի. դրանցից 70 հոգին բուն երդուեալներն են, որոնք դատավարութեան միջոցին պիտի համոզում կազմեն դատի ենթարկվածի մեղաւորութեան կամ անմեղութեան մասին. 12 հոգի դատաւորներն են, իսկ 12 հոգի մեղա-

դրվողի կողմից են, նրա պաշտպանները *)։ Բոլորը երդում են ուտում որ իրանց պաշտօնը սրբութեամբ կը կատարեն։

Դատավարութիւնը գրաւոր է։ Քաղաքացիական գործերում կայ գանգատվող, որ պահանջ է ներկայացնում, իսկ միւս կողմը, պատասխանատուն, դատախազ է կոչվում։ Քրէական գործերում կողմերից մէկը գանգատվող է, միւսը մեղաւոր։ Թէ քաղաքացիական և թէ քրէական գործերում գանգատվողի վրա է ընկած իր հակառակորդի մեղաւորութիւնը հաստատելու պարտքը։ Գործը սկսվում է այսպէս։ Գանգատվողը ներկայացնում է գանգատ. եթէ գործը քաղաքացիական է, պատասխանատու կողմը կամ դատախազը ներկայացնում է իր կողմից գրաւոր բացատրութիւն այդ գանգատի դէմ. իսկ եթէ քրէական է գործը, մեղաւորը պիտի երաշխաւորութիւն ներկայացնէ և ազատ մնայ, որպէս զի կարողանայ իր համար վկաներ և այլ ապացոյցներ պատրաստել. երաշխաւորութիւն չը ներկայացնողը բանտարկվում է։ Դատավարութեան ժամանակ երկու կողմերի ներկայացրած ապացոյցները կազմում են այն նիւթը, որի վրա հիմնվում է դատավճիռը. ինքը, դատաստանական իշխանութիւնը, նախնական քննութեան միջոցով փաստեր չէ ձեռք բե-

*) Այդ 12 մարդկանց ընտրում է մեղադրվողը իր ազգականներից կամ, եթէ կամենում է, օտարներից։

բում գործի էութիւնը պարզելու համար։ Աւելորդ է ներկայացնել այստեղ երդուեալների գործունէութիւնը. ամենքին յայտնի է թէ ինչպէս են նրանք գործը վճռում. դատավարութիւնից յետոյ փակւել խորհրդակցական սենեակում, չը հեռանալ այնտեղից մինչև վճիռ կայացնելը, ոչինչ յարաբերութիւն չունենալ դատւող կողմերի հետ — այս ամենը ծանօթ է։ Խորհրդակցութիւնից և վճիռ կայացնելուց յետոյ երդուեալները մտնում են դատարանի դահլիճը և նրանց առաջնորդը կարդում է վճիռը, որ մի բառից է բաղկացած. «Ցատակ», եթէ արդար է դատի ենթարկւածը, և «Աղուեղի», եթէ մեղաւոր է։ Այնուհետև 12 դատաւորները և մեղադրվողի 12 ներկայացուցիչներն են մտնում խորհրդակցութեան սենեակը՝ պատժի աստիճանը որոշելու համար։ Պատժի տեսակներն են. մահապարտութիւն, շիկացած երկաթով ձեռքը կամ մի այլ անդամը այրելը, ծեծ մտրակով, դրամական տուգանք, ցմահ բանտարկութիւն։ Թէև այս պատիժներից մի քանիսը թւում են մեզ այժմեան ժամանակ շատ խիստ ու անգութ, բայց և այնպէս, պէտք է խոստովանել, որ դատաստանական կազմակերպութիւնը առհասարակ լաւ է յօրինւած և ներկայացնում է մի եւրօպական հիմնարկութիւն։

—

Ահա ինչ պիտի լինէր ազատւած Հայաստանը Շահամիրեանցի ծրագրով։ Եթէ մենք այսքան շատ

ուշադրութիւն նուիրեցինք այդ գործին, պատճառն այն չէ, որ հաւատում ենք թէ հայոց երկրին հէնց այդպիսի կարգեր էին պակասում, թէ մի հանրապետութիւն իրագործել Ասիայի ամենադժբախտ անկիւններից մէկում նոյնքան հեշտ էր, որքան թղթի վրա գծագրելը։ Ընդհակառակն. մեզ համար ամբողջ այդ ծրագիրը, ինչպէս ասացինք, մի ուտօպիա է. Հնդկաստանցի վերանորոգիչը չէր ճանաչում իր իրական հայրենիքը. Նա թղթի, գրքի, երևակայութեան մարդ էր։ Այդպէս են եղել ազատութեան մասին առաջին անգամ խօսողները։ Եւ մեզ համար «Որոգայթ Փառաց»-ը նշանակութիւն ունի հէնց իբրև այդպիսի խօսք, իբրև քաղաքական գաղափարներ և թէօրիաներ արծարծող մի աշխատութիւն։ Հարկաւոր չէր որ այդ գրական խղճուկ արտադրութիւնը լինէր առաջնորդ և անսխալ ղեկավար. միտք արթնացնելը, հեռաւոր, լաւագոյն վարչական ձևերի մասին ազատ գաղափարներ տալն էլ բաւական են որ այդ գիրքը մի շատ նշանաւոր երևոյթ համարվի մեր մէջ։ Ուստի մենք էլ, իբրև գրքերի պատմութիւն ուսումնասիրող, պարտք համարեցինք մանրամասն ծանօթութիւններ տալ այդ նշանաւոր երևոյթի մասին։

Այդպէս հարկաւոր էր մանաւանդ այն պատճառով, որ «Որոգայթ Փառաց»-ը այժմ շատ հազուագիւտ գիրք է։ Իր ժամանակին էլ նա շատ չէ տարածվել.—Շահամիրեանցը նայում էր իր

աշխատութեան իբրև մի ծրագրի, ուստի տպագրել տուեց նրանից միայն հարիւր տասն հատ։ Մի հատի գինը նա նշանակել էր տասն ոսկի կամ քառասուն հնդկական ռուփի, ուրեմն մօտ 20 ռուբլի։ Պէտք էր սպասել որ քաղաքական այդպիսի գաղափարներ արծարծող գիրքը կը տպվէր մեծ քանակութեամբ, մատչելի կը լինէր ամենքին, որպէս զի լայն ժողովրդականութիւն ստանային հանրապետական սկզբունքները։ Զէ՞ որ դրանք այնպիսի սկզբունքներ էին, որոնք կարող էին կեանքի մէջ գործադրվել միմիայն ժողովրդի ընդհանուր կամքով, գիտակցութեամբ։ Բայց Շահամիրեանցը այդպէս չէր մտածում. նրան թւում էր թէ բաւական է որ մի քանի մարդիկ համաձայնվեն թէ հանրապետութիւն լինի, և նա կը լինի։

Այժմ տեսնենք թէ ինչ էր պատասխանում Շահամիրեանցին հայկական իրականութիւնը։

V

Ասացինք արդէն, որ «Որոգայթ Փառաց»-ի պէս ուտօպիաներ տարածելով չէր բաւականանում Շահամիրեանցը. միաժամանակ նա գործնական մարդ էր և աշխատում էր որ ազատ Հայաստանը միայն թղթի վրա չը լինի։ Այս նպատակով նա անդադար թղթակցում էր իր այն ժամանակակիցների հետ, որոնք կարող էին գործել, մի բան ստեղծել։ Նա չարունակ յորդորում էր, խրատներ էր տալիս և նրա այդ եռանդուն հոգսերն ու վառ տենչանքները բաւական են, որ նա էլ դասուի XVIII դարի մեր սակաւաթիւ քաղաքական գործիչների շարքում։

Չը նայած որ Հնդկաստանը այնքան հեռու էր, չը նայած որ ճանապարհներ, յարմար հաղորդակցութիւններ չը կային և շատ անգամ ամիսների մի երկար շարք էր հարկաւոր, որ նամակը տեղ հասնէ, Շահամիրեանցը ուղարկում էր իր ծրագիրներն ու տենչերը ամեն տեղ, ուր հարկաւոր էր։ Նրա թղթակիցներն էին Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսները, Հերակլ թագաւորը և նրա ժառանգ Գիօրգին, Ղարաբաղի հայ մէլիքները, Ռուսաստանի հայերի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը։ Եւ ամեն տեղից նա ստանում էր այնքան մանրամասն և լիակատար տեղեկութիւններ, որ Հնդկական ովկիանոսի ափից իմանում էր թէ ինչ է կատարվում Պարսկական Հայաստանում և ով է այնտեղ ընդունակ՝ գործ կատարելու։ Կարևոր թղթակից էր մանաւանդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը։ Ինչպէս կը տեսնենք իր տեղում, Արղութեանը, ռուսաց արքունիքում գրաւած իր բարձր դիրքի շնորհիւ, միակ մարդն էր այդ ժամանակներում, որ մարմնացնում էր հայկական ազատութեան յոյսը։ Նրա վարած բանակցութիւնները ռուս կառավարութեան հետ, այն խորհրդակցութիւններն

ու ծրագիրները, որոնց մէջ խորհրդատուի ու ղեկավարի դեր էր նա կատարում, համարեա ոչինչ կասկած չէին թողնում որ Իսրայէլ Օրիի գործը մեռած չէ, կենդանանում է և պիտի իր ցանկալի վախճանին հասնէ։ Շահամիրեանցը, ինչպէս ցոյց են տալիս բոլոր հանգամանքները, երկարատև և շատ եռանդուն նամակագրութիւն ունէր Արղութեանի հետ։ Արղութեանին հարկաւոր էին հնդկաստանցի վաճառականի ոչ միայն խելքն ու հասկացողութիւնը, այլ և հարստութիւնը. ուստի նա էլ մի առանձին ուշադրութեամբ էր վերաբերվում Շահամիրեանցին։

Տարաբախտաբար, շատ քիչ բան է մնացել Շահամիրեանցի նամակագրութիւններից *)։ Մեր ձեռքում եղածները «Որոգայթ «Փառաց»-ի տպագրութիւնից շատ յետոյ ժամանակներին են վերաբերվում։ Նախ քան այդ վաւերագրերին դիմելը, հետևենք Շահամիրեանցի տպարանին։

Երկարատև և բեղմնաւոր չէր այդ հիմնարկութեան կեանքը։ 1775 թւականին նա տպագրում է «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց» անունով գիրքը։ Յակոբ Շահամիրեանցը այլ ևս չը կայ. Նա վախճանվել է երիտասարդ հասակում, այց տպարանը շարունակում է կրել նրա անու-

*) Մի քանի հատ այդ նամակներից և ուրիշ վաւերագրերից սիրալիր պատրաստակամութեամբ մեր տրամադրութեան տակ դրեց հնագէտ պ. Ա. Երիցեանը։

նը. այս գիրքը տպողը նրա կրտսեր եղբայրն է, Եղիազարը, որի հրահանգիչը, այսինքն ուսուցիչը, նոյն Մովսէս Բաղրամեանն է։ Սակայն ոչ Յակոբը, ոչ էլ նրա եղբայր Եղիազարը, ինչպէս տեսանք, ինքնաբերաբար և ինքնագլուխ գործողներ չէին. մնում էր նրանց հայրը, Շամիր Սուլթանումը, որ ղեկավարող էր կամ նոյն իսկ միակ գործող իր որդիների անունից։ Այստեղ էլ, այս գրքի վրա, մենք դարձեալ տեսնում ենք Շամիրի դրոշմը—մկրատ, ասեղներ, կշիռ իր քարերով, թանաքաման։

Շահամիրեանի գրագրութիւնից մենք իմանում ենք, որ նա մի առանձին սէր ունէր դէպի հայոց հին մատենագիրները և սաստիկ ցանկանում էր տեսնել նրանց տպագրած։ Այդ միտքը նա սկսում է իրագործել վերոյիշեալ հրատարակութեամբ։ Բայց ինչ գիրք էր դա։ Ստեփանոս Օրբէլեանի պատմագրութեան մէջ կայ մի գլուխ, որ նկարագրում է Օրբէլեան իշխանների ծագումն ու Ջինաստանից գալը։ Այս գլուխը արտագրված էր մի ձեռագրի մէջ, որին կցած էր X դարի հեղինակ Մեսրոպ երէցի «Պատմութիւն վարուց սրբոյ Մեծին Ներսիսի» աշխատութիւնը։ Շահամիրեանը գտնում է այդ ձեռագիրը մի քահանայի մօտ և կարծելով թէ երկու աշխատութիւններն էլ Մեսրոպ երէցի գրածն են, հրատարակում է միասին։ Այդտեղ, սակայն, նորութիւնը միայն Օրբէ-

լեանի պատմագրութեան այդ մի գլուխն էր, իսկ Մեսրոպ երէցը տպագրված էր Կ. Պոլսում դեռ 1737-ին։

Գրքի վերջում Շահամիրեանը խնդրում էր իրան ձեռագիրներ ուղարկել տպագրելու համար. ծախսերը իր վրա էր վերցնում, մինչև իսկ պատրաստ էր գնել ձեռագրերը։ Ինչպէս երևում է, այդ հրաւէրը ոչինչ արդիւնք չունեցաւ, որովհետև տպարանը ոչ մի գիրք չը տպեց մինչև 1780 թւականը։ Այդ տարին լոյս է տեսնում «Պատմութիւն Նադիր-Շահի» գիրքը։

Նադիրը, իբրև նուաճող, այնքան մեծ անուն էր հանել, որ Եւրոպայում շատերը գրեցին նրա պատմութիւնը զանազան լեզուներով։ Գրողներից մէկն էր անգլիացի ճանապարհորդ Հանուէ, որի աշխատութիւնը տպագրվեց Լոնդոնում 1753-ին։ Այդ աշխատութիւնը թարգմանել է Պօղոս Միրզայեան Ամիթեցին, որ հայերէնը սովորել էր Ջուղայի Ամենափրկիչ վանքում, իսկ անգլիերէնին հմտացել էր, երևի, Հնդկաստանում։ Առաջին թարգմանութիւնը անգլիերէնից, որ կատարել են հնդկահայերը։

Դրանից յետոյ բոլորովին անհետանում է Շահամիրեանի տպարանը։ Գրականական գործունէութիւնը, չը նայած այդ մեծատան վառ հետաքրքրութեան, մի առանձին աջողութիւն չունեցաւ Մադրասում։ Դա շատ հասկանալի է։ Բայց Շահամիրեանի գլխաւոր նպատակը, որ հայ-

րենիքի ազատութիւնն էր, չարունակվեց անընդհատ եռանդով։

«Որոգայթ Փառաց»-ի մէջ մենք տեսանք այն կենտրոնական միտքը, որ նա գրել էր հայերի ազատութեան գործում։ Հերակլ թագաւորը, իբրև ծագումով Բագրատունի, հայերի ազատողն է հանդիսանում և ստանում է հայկական հանրապետութեան նախագահի պաշտօնը ժառանգաբար։ Օդի միջից չէր Շահամիրեանը հանել այդ հիմնական գաղափարը։ Իրականութիւնն էր նրան թելադրել այդ միտքը։ Հերակլը, իսկ որ, Կովկասի քրիստոնէութեան միակ յոյսն էր։

Պարսից թոյլ, քայքայվող պետութեան մէջ Հերակլը երևան է գալիս իբրև քաջ պատերազմող և մի բախտաւոր շրջան է բաց անում իր բազմատանջ հայրենիքի համար։ 1762 թւականին նա միացնում է իր իշխանութեան տակ Վրաստանի երկու անջատ, միմեանց թշնամի թագաւորութիւնները—Կախէթը և Քարթալինիան, ամրացնում է երկիրը, կազմակերպում է բանակը և սկսում է ոչ միայն ամենայն աջողութեամբ պաշտպանել պետութեան սահմանները, այլ և ընկճել շրջակայ թուրք խաներին։ Ճիշտ է, Հերակլը չէ կարողանում դուրս գալ պարսից հպատակութիւնից, ճիշտ է, պարսից արքունիքի համար դեռ «Գիւրջիստանի վալի» էր նա, բայց նրա Վրաստանը աւերակների տակից ոտքի ելած մի ոյժ էր ներկայացնում, որից վախենում էին։

Անդրկովկասի Թուրք խաները չարունակ թշնամութիւններ էին անում իրար հետ, կռւում էին իրար դէմ. իւրաքանչիւրը այնքան թոյլ էր ինքն ըստ ինքեան, այնքան մոռացուած էր պարսից կենտրոնական իշխանութիւնից, որ հեշտութեամբ կարող էր աւելի ուժեղի որսը դառնալ։ Հերակլը շատ գեղեցիկ կերպով օգտվեց այդ դրութիւնից։ Երևանի և Գանձակի խաները նրա հարկատուները դարձան, իսկ միւս խաները նրա բարեկամութիւնն էին որոնում։

Կար, բացի դրանից, մի հանգամանք էլ, որ աւելի ևս բարձրացնում էր Հերակլի հեղինակութիւնն ու պատիւը ազգաբնակութեան աչքում և որը հիացմունքով է յիշատակում Շահամիրեանը։ Ամբողջ Անդրկովկասի համար երկնային պատուհաս էին Դաղստանի լեռնականները, որոնք պարբերաբար իջնում էին իրանց լեռներից և սոսկալի մրրիկի նման անցնում էին երկրի վրայով, աւերակ ու անապատ տարածելով ամեն տեղ։ Դրանց դէմ աջողութեամբ կռւում էր Հերակլը։ Վրաստանը դարձաւ մի պատուար այդ մրրիկների դէմ և հարաւային Անդրկովկասը քիչ էր տեսնում լեռնցի գիշատիչների վոհմակները։

Եթէ Անդրկովկասի մահմեդական ազգաբնակութեան համար էլ Հերակլը միակ զօրեղ, տոկուն ույժն էր, հասկանալի է թէ ինչ կը լինէր նա քրիստոնեաների համար։ Հայերի միակ յոյսն էր այդ քրիստոնեայ թագաւորը և, պէտք է խոս-

տովանել, Հերակլը սիրով և բարեկամաբար էր վերաբերվում հայ ազգին։ Դրա մի մեծ ապացոյցն է այն մեծ յարգանքը, որ նա ունէր դէպի Էջմիածնի Սիմէօն կաթողիկոսը։

1765 թւականին Հերակլը մեծ բանակով գնաց Երևանի խանի դէմ։ Խանը, սարսափահար դարձած, փակվեց իր բերդում։ Թուրքերը հաւատացած էին, որ վրաց զօրքերը բերել էր տուել հայոց կաթողիկոսը. այդ պատճառով նրանք մի շարք պաշտպանողական միջոցներ էին ձեռք առել հայերի դէմ։ Այսպէս, խանը շրջակայքից 600 հայ էր հաւաքել և նրանց ձեռքը հրացաններ տալով, պահում էր Երևանում։ Հէնց որ Հերակլը յարձակւում գործէր բերդի վրա, այդ հայերը պիտի առաջ տարվէին. քրիստոնեաները քրիստոնեաներին չէին կոտորի, բայց եթէ Հերակլը մոռանար էլ քրիստոնէութեան պարտքը և շարունակէր պատերազմը, այն ժամանակ այդ հայերը կը կոտորվէին, իսկ մինչև այդ՝ խանը իր թուրքերի հետ կը հեռանար բերդից։ Թէև Սիմէօն կաթողիկոսը գործում էր փորձված քաղաքագէտի զգուշութեամբ, թէև նա չէր ցոյց տալիս թէ մի առանձին համակրութիւն ունի դէպի Հերակլը, բայց խանը շատ լաւ գիտէր որ Հերակլը չի վնասի նրան, ուստի և աւելորդ համարեց նրան կանչել Երևան՝ պաշարման ժամանակ այդտեղ պատսպարվելու համար։

Եւ նա սխալված չէր։ Հերակլը գնաց Էջմիա-

ծին, փառաւոր ընդունելութիւն գտաւ այնտեղ իբրև մի քրիստոնեայ թագաւոր, ամենայն պատկառանքով երկրպագեց տաճարի սրբութիւններին և ապա հիւրասիրվեց կաթողիկոսի մօտ, միշտ մեծարանքի և սիրոյ նշաններ ցոյց տալով նրան։ Երևանի խանը պատգամաւոր ուղարկեց Հերակլի մօտ, խնդրելով հաշտութիւն և խոստանալով հպատակութիւն և հարկատուութիւն։ Թագաւորը շատ էր բարկացած խանի վրա և չընդունեց այդ խնդիրքը։ Այն ժամանակ խանը դիմեց Սիմէօնին և վերջինս յօժարեցրեց Հերակլին։ Այնքան մեծ էր Հերակլի բարեկամութիւնը հայոց մայր աթոռի հետ, որ բացարձակ կերպով յայտնեց թէ Երևանը մի տարով բաշխում է Էջմիածնին ու նրա կաթողիկոսին, չուզեց նոյն իսկ որ և է գրաւոր պարտաւորութիւն խանի կողմից, միայն սաստեց թէ կը գայ երկրորդ անգամ, եթէ խանը չի կատարի իր բերանացի խոստումները։ Հայոց կաթողիկոսը վրաց բանակումն էր գտնվում, նոյն իսկ զօրքերի շարժման և ճանապարհների մասին խորհուրդներ էր տալիս, չէր թողնում որ զինուորները վնասեն արտերը և զրկողութիւններ պատճառեն ազգաբնակութեան։ Հերակլը նոր չէր այդպէս յարգում Սիմէօնին։ Թիֆլիսից էլ նա շարունակ բարեկամական յարաբերութիւններ էր պահպանել Էջմիածնի հետ. կաթողիկոսի համարեա ոչ մի խնդիրքը նա անտես չէր արել։ Եւ այժմ, իր արշաւանքի ժամանակ, նա ամեն մի պատշաճաւոր

դէպքում ցոյց էր տալիս ամենքին թէ հայոց կաթողիկոսի պատճառով է այդպէս մեղմ ու ողորմած վարվում Երևանի հետ։

Չորս տարուց յետոյ, 1779-ին, Հերակլը նորից ստիպված էր արշաւել Երևանի վրա։ Նորից վախկոտ ու թոյլ խանը, ուրիշ ճար չը գտնելով, դիմեց հայոց կաթողիկոսի բարեխօսութեանը և նորից Սիմէօնը հաշտեցրեց Հերակլին, վերադարձրեց նրան Վրաստան, ազատելով Արարատեան երկիրը պատերազմի արհաւիրքներից։

Ահա ինչ փաստեր ունէր Շահամիրեանը իր առջև։ Հերակլը, քրիստոնէութեան պաշտպան, ամբողջ մահմեդական Արևելքում միակ ուժեղ ու ընդունակ քրիստոնեայ վեհապետն էր։ Ո՞վ կարող էր ազատել հայերին, եթէ ոչ նա։ Մենք հաստատապէս չը գիտենք՝ միայն Շահամիրեանն էր, որ 1770-ական թւականների սկզբում արծարծում էր այդպիսի մի միտք, թէ կային և ուրիշ այդպէս մտածողներ էլ։ Շատ հաւանական է որ կային։ Ղարաբաղի մելիքները, հէնց որ տեսան Հերակլի զօրեղանալը, նրան էին դիմում և քաջալերութիւն գտնում։ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը, տարիներ յետոյ, նոյն այդ միտքն ունէր—ստեղծել հայ-վրացական մի պետութիւն Ռուսաստանի հովանաւորութեան տակ։

Այսպէս թէ այնպէս, Շահամիրեանը, չը բաւականանալով միայն գրքերի մէջ այդպիսի ծրագիր մշակելով, ուղղակի բանակցութիւն է սկսում

վրայ Թագաւորի հետ։ Յայտնի չէ թէ երբ սկսվեցին այդ յարաբերութիւնները. մեզ մօտ եղած աղբիւրները վերաբերվում են 1780-ական թւականներին, և այդ ժամանակ յարաբերութիւնները վրայ Թագաւորի և Հնդկաստանցի հայ վաճառականի մէջ բաւական մտերմական են. Հերակլը յաճախ պատգամաւորներ էր ուղարկում Շահամիրեանի մօտ, ամենայն ուշադրութեամբ էր վերաբերվում նրա առաջարկութիւններին։ Շահամիրեանը դեռ իր մտքի վրա էր, դեռ հաւատում էր որ Հերակլը պիտի լինի իր ազգի ազատարարը։ Բայց ուրիշ բան էին ցոյց տալիս հանգամանքները. Հերակլը այլ ևս այն չէր, ինչ մի 10—15 տարի առաջ։

Վրաստանի ուժեղանալը ժամանակաւոր երևոյթ էր։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել մի երկրում, ուր անպակաս էին ներքին խռովութիւնները, ուր պետական կազմակերպութիւնը թոյլ էր, հնացած։ Ինքը, Հերակլը, մինչև վերջը մնաց նոյնը—զինուոր, քաջ, ընդունակ։ Բայց, տարաբախտաբար, նրա անձնական բարեմասնութիւնները բաւական չէին փրկելու մի պետութիւն, որի ներքին ցաւերը նա չէր կարողանում բժշկել։ Լոկ զինուորական աջողութիւններով փայլող Վրաստանը ներքուստ նոյնն էր, ինչ դարերի ընթացքում—անմիաբան, երկպառակութիւններից կեղեքվող։ Զօրքը, որ Հերակլի առաջնորդութեամբ այնքան քաջութիւններ էր ցոյց տալիս,

բաղկացած էր մեծ մասամբ օտար վարձկաններից. ինչ յոյս կարելի էր դնել նրա վրա։ Այդ զօրքը ի վերջոյ ինքը դարձաւ անկարգութիւնների հեղինակ։

Բացի դրանից, 1770-ական թւականների սկզբում Հերակլը, ընդունելով Եկատերինա կայսրուհու հրաւէրը, նրա դաշնակիցը հանդիսացաւ ռուս-թիւրքական պատերազմի մէջ։ Ռուսաց մի զօրաբաժին մտաւ Անդրկովկաս և վրացիների հետ միացած՝ պատերազմական գործողութիւններ սկսեց Թիւրքիայի դէմ։ Այդ հանգամանքը բաց արեց թիւրք կառավարութեան աչքերը. նա պարզ տեսնում էր որ Վրաստանը հիւսիսային պետութեան ձեռքում լաւ գործիք է դառնում՝ Ասիայի կողմից իրան հարուածներ հասցնելու համար։ Կասկածոտ, միշտ արթուն հսկող և վստահութիւն չունեցող մի ուժեղ հարևանի անյարմարութիւնը շուտ զգաց Հերակլը. Վրաստանին արևմուտքից միշտ վտանգ էր սպառնում։ Դրութիւնը հետզհետէ վատանում էր, լեզգիները յարձակումներ էին գործում և աւերում Վրաստանը. նոյն իսկ Թագաւորի ընտանիքի մէջ տիրում էին երկպառակութիւններ։ Մի չարագուշակ մենակութիւն հետզհետէ ծանրանում էր Հերակլի վրա և նա տեսնում էր մռայլ ապագան, հասկանում էր որ ամեն կողմից մահմեդական աշխարհով շրջապատված Վրաստանը չը պիտի կարողանայ իր սեփական միջոցներով անկախութիւն պահպանել։

Հասկանալի է որ այդ հոգսերի մէջ նա չէր կարող մտածել այն յոյսերի մասին, որ հայերն էին դնում իր վրա։ Ոչ ոք չէ թողնում իր տունը հրդեհի ճարակ դառած, որ գնայ ազատէ հարևանի տունը։ 1779 թւականի գարնանը Հերակլը մի նոր արշաւանք սկսեց Երևանի դէմ. մի արշաւանք, որ շատ բան էր առում և ամենից առաջ այն, որ 1765 ու 1769 թւականները այլ ևս չէն վերադառնայ։ Դեռ կենդանի էր Սիմէօն կաթողիկոսը, բայց նրա խաղաղասիրական միջնորդութիւնները այս անգամ ոչինչ արդիւնք չը տւին։ Հիւանդ էր խեղճ ծերունին, բայց վեր կացաւ անկողնից և գնաց անձամբ խնդրելու ու համոզելու Հերակլին։ Հերակլը, սակայն, անողոք մնաց։ Սկսւեց պատերազմը, որ մի քանի ամսւայ մէջ անապատ դարձրեց ամբողջ Արարատեան դաշտը։ Հերակլը չէր կարողանում առնել Երևանը և այդ անաջողութիւնից զայրացած՝ կատարեալ ազատութիւն տւեց իր խառնիճաղանճ զօրքին, որ ընկաւ հայ և Թուրք գիւղերի վրա և ամեն ինչ քարուքանդ արեց «մարդակերների» նման, ինչպէս ասում է Սիմէօն կաթողիկոսը։ Հայերի մի մասը փախաւ Բայազէտ. բայց Հերակլը մարդիկ ուղարկեց որ փախստականներին համոզեն յետ դառնալ։ «Ինչո՞ւ ինչպէս օտարից փախել էք քրդերի աշխարհի անկիւնները,—ասում էր նրանց Հերակլը.—չէ՞ որ ձեզ համար եմ զէնք վերցրել, որ ազատեմ ձեզ ձեր նեղիչ պարսիկների ձեռքից.

ահա ես այստեղ պատերազմի մէջ եմ և չեմ թողնի պատերազմը, մինչև որ չը քանդեմ ամրոցները և իմ կողմից այս աշխարհի համար իշխողներ չը կարգեմ. իսկ ձեր գրկանքները եօթնապատիկ պիտի առնեմ պարսիկներից» *)։

Գեղեցիկ խոստումներ։ «Որոգայթ Փառաց»-ից վեց տարի անցած, կարծես իրականանում էին Շահամիրեանի, Արղութեանի և միւսների յոյսերը։ Փախստականները վերադառնում են։ Բայց ինչ ազատութիւն։ Գիւղերը աւերակ, ամեն ինչ թալանված, մարդիկ՝ գերի ընկած։ Ծերունի, հիւանդ կաթողիկոսին վիճակված էր տեսնել սարսափելի աւերակները և ոչինչ չը կարողանալ անել։ «Քանդեցին և աւերեցին բոլոր չէնքերը,—գրում է նա **)—գտած մարդկանց գերի տարան, բոլոր անասունները և կայքերը, տնային իրերը, հացահատիկների ամբարները և ուրիշ թագստոցները, ամեն ինչ հանեցին, աւերեցին և առան... Ձեռք գցելով փախստականներին, նրանց ուղարկեցին իրանց երկիրը և ապա մնացած բոլոր չէներն ու գիւղերը միահամուռ կրակ տալով, իրանք վեր կացան ու գնացին նոյեմբերի 3-ին»։ Ծանր ճգնաժամի մէջ ընկաւ Էջմիածինը. աւերված այդ ամբողջ երկրում նա էր միակ փոքր ի շատէ ունևոր, բարեկեցիկ հիմնարկութիւնը. և սովի ու

*) «Կռունկ» ամսագիր, 1860, եր. 279.

**) «Кавказскій Вѣстникъ», 1901, № 10, եր. 69.

զրկանքների մաշված ազգաբնակութիւնը, հայ թէ թուրք, էջմիածնից էր ապրուստ խնդրում ու ստանում: «Մահ էինք ցանկանում և մահ չը կար», աւելացնում է Սիմէօն կաթողիկոսը՝ իրերի դրութեան մասին մի հասկացողութիւն կազմել տալու համար:

Հերակլը ութ հայ գիւղ տարաւ գերի: Այդ ժողովուրդը հարկաւոր էր նրան՝ թէ առհասարակ իր երկրի ազգաբնակութիւնը աւելացնելու և թէ մասնաւորապէս Վրաստանի սահմանագլուխները ապահովելու համար: Գաղթականների մի մասը բնակեցնում է Ղարայեազի անապատում, մի մասը Թէլաւում, Թիֆլիսում: Ժողովուրդը կոտորվում էր, նրա կէսն էլ չէր մնացել, բայց Հերակլը դեռ ուզում էր նրան այս ու այն կողմը տեղափոխել: Թէլաւի հայերին նա հրամայում է բնակվել Թօփ-ղարաղաջ գիւղում, որ լէզգիների սահմանագլուխն էր: Բայց հայերը ընդդիմանում են: Հետաքրքրական է այն խօսակցութիւնը, որ տեղի է ունենում նրա և հայ քէթխուդաների մէջ: Հերակլը բարկացած ասում է հայերին թէ նրանք չը պիտի յանդգնեն ընդդիմանալ իրան, քանի որ նա իր սրով է նուաճել նրանց: Հայ քէթխուդաներից մէկը, Խրանած Յարութիւն անունով, պատասխանում է. «Ո՞վ տեսաւ քո սրի զօրութիւնը, չէ՞ որ երդումով վերադարձրիր մեզ Բայազէտից, և ո՞ւր է քո բարօրութիւնը, որ խոստանում էիր մեզ»: Այդպէս էլ հայերը մնացին Թէլաւում: Շու-

տով գաղթականների մի մասը, Երևանի խանի միջնորդութեամբ, վերադարձաւ հայրենիք:

Բայց այս արշաւանքը, այս գերեվարութիւնը վրաց թագաւորի ոյժն ու կարողութիւնը չէին ցոյց տալիս: Իրողութիւնը անփոփոխ էր մնում. նեղված ամեն կողմից, ոչինչ լաւ բան չը տեսնելով ապագայում, Հերակլը դիմում է Ռուսաստանին և 1783 թւականին Գիօրգիևսկում կայացած դաշնագրութեամբ ընդունում է ռուսաց հպատակութիւն, փոխարէնը ստանալով խոստում, թէ ռուսաց մի զօրաբաժին մշտապէս կը մնայ Վրաստանում՝ թշնամիներին դիմադրելու համար: Թէև այսպէս, բայց Շահամիրեանը չարունակում էր իր բանակցութիւնները Հերակլի հետ: 1786 թւականին Հերակլը վրաց իշխանի տիտղոս է տալիս Շահամիրեանցին՝ «նրա բազմատեսակ հաւատարմութեան համար», ինչպէս ասված է նրա հրովարտակում:

Ի՞նչ «բազմատեսակ հաւատարմութիւն» էր դա: Ասում են թէ Շահամիրեանը մի թանկագին ակն էր ուղարկել Հերակլին *): Նրա գրագրութիւններից երևում է, որ միայն այդ ակը չէր Հնդկաստանից ընծայ գնացել Թիֆլիս. ամբողջ հակերով էին այն ընծաները, որոնք նշանակվում

---

*) Ս. վ. Թէոդորեան.--«Պատմ. Մուրատեան վարժ.», Պարիզ, 1866, հատ. Ա., եր. 594:

էին արքունիքի և բարձրաստիճան անձինքների համար։

Իշխանական տիտղոսը աւելի ևս խրախուսում է Շահամիրեանցին։ Եւ բանակցութիւնները ընդունում են աւելի պարզ ու որոշ կերպարանք։ 1786 թւականին Հերակլի կողմից Հնդկաստան գնացին Յովսէփ անունով մի հինգհարիւրապետ և մի Կիրակոս, «վաճառական հայ վրացի»։ Նրանք տարան իրանց հետ Հերակլի հրովարտակը, որով իշխանութիւն էր շնորհվում Շահամիրեանին ժառանգաբար, և մի նամակ, որի բովանդակութիւնը մեզ յայտնի չէ։ Հետևեալ տարին Շահամիրեանը պատասխան է ուղարկում։ Դա մի երկար գրութիւն է, որի մէջ նա այսպէս է ձևակերպում իր առաջարկութիւնները.

Հերակլը գրում է «գիր շնորհաց», այսինքն բոլոր հայերին ուղղած մի նամակ, որի մէջ թագաւորը խոստանում է իր հովանաւորութիւնը հայ ազգին և հրաւիրում է հայրենիքից հեռացածներին վերադառնալ իրանց հայրերի երկիրը։ Այդտեղ հայերը ստանում են արտօնութիւններ, վճարում են չափաւոր հարկ։ Նամակի օրինակն էլ ուղարկել էր Շահամիրեանցը և խոստանում էր իր հաշւով տպագրել տալ հազարաւոր օրինակներ և ցրվել հայերի մէջ։ Ապա առաջարկվում է Հերակլին կանոններ հաստատել ժողովրդի համար։ Մենք արդէն գիտենք որ Շահամիրեանը ազգի փրկութիւնը տեսնում էր խելացի, արդար

և ազատամիտ օրէնսդրութեան մէջ և շարունակ քարոզում էր որ ամենից առաջ այդ բանը իրագործվի *)։ Ինքը արդէն պատրաստ ունէր մի այդպիսի օրէնսգիրք—«Որոգայթ Փառաց»-ը։ Դրանից մի օրինակ ուղարկում է Հերակլին, բայց դա տպածը չէ, այլ նրա համառօտութիւնը, ձեռագիր, որից պէտք է արտագրել տալ երկու օրինակ և մէկը ուղարկել Էջմիածնի կաթողիկոսին, միւսը՝ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանին։ Չը մոռանանք աւելացնել, որ դրա հետ Հերակլին ընծայ էր ուղարկվում և մի հատ Մովսէս Խորենացի, որպէս զի թագաւորը կարդալ տայ և իմանայ հայերի անցեալը, մանաւանդ Բագրատունիների, այսինքն իր նախահայրերի, պատմութիւնը։

Մեզ յայտնի է, որ Հերակլին հայոց աշխարհի տէր դարձնելու համար Շահամիրեանը ունէր այն օրինական հանգամանքը, որ նա էլ Բագրատունի է։ Եւ յիշեցնելով թագաւորին, որ նրա ժառանգութեան մի մասը (Հայաստանը) դեռ գտնվում է պարսից տիրապետութեան տակ, յիշեցնելով թէ որքան ամօթալի բան է որ քրիստոնեաները գտնվեն մահմեդականների լուծի տակ,

*) 1779 թւականին Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսին գրած մի նամակի մէջ Շահամիրեանը խնդրում էր նրան միանալ Էջմիածնի կաթողիկոսի հետ և ժողովրդական ընդհանուր համաձայնութեամբ խմբագրել որոշ և ամենքի համար պարտադիր օրէնքներ։

Շահամիրեանն ասում է որ այժմ, երբ վերջացել է Սէֆէվիների տոհմը և Պարսկաստանը երերուն ալիքների է նմանվում, եկել հասել է ժամանակը, որ Հերակլը տարածէ իր իշխանութիւնը և պարսիկների վրա։ Դա հեշտ է, պէտք է միայն զօրքի, կեանքի ապահովութիւն և դաւանութեան ազատութիւն խոստանալ,—և Պարսկաստանը յօժարութեամբ կը համաձայնի։ Ինչ վերաբերվում է Հերակլի այն ժառանգութեան, որ գտնվում է Թիւրքիայի տիրապետութեան տակ, Շահամիրեանը խորհուրդ էր տալիս կամաց-կամաց պատրաստվել և այդ ժառանգութիւնն ստանալու։ Պէտք է սպասել յարմար ժամանակի. իսկ մինչև այդ հարկաւոր է գրաւել այն կողմի հայերի սիրտը։ Գրաւելու միակ գեղեցիկ միջոցը դարձեալ նոյն ազատ, ժողովրդական օրէնսդրութիւնն է։ Երբ միանգամից այդ օրէնքները կը մտցնվեն Հերակլի ազատած Հայաստանի մէջ, այն ժամանակ Թիւրքիայի հայերն էլ կը հասկանան թէ ինչ գեղեցիկ բան է դա և հարկաւոր դէպքում արդէն միանգամայն համոզված կը լինեն թէ պէտք է Թիւրքաց Հայաստանն էլ միացնել ազատ Հայաստանին։

Նոյն այդ գրութեան մէջ Շահամիրեանցը չէ մոռացել իր շնորհակալութիւնները յայտնելու Հերակլին՝ իշխանական տիտղոսի համար։ Բայց, աւելացնում է նա, այդ տիտղոսը կրելը իրան առայժմ անյարմար է, որովհետև նա կը խանգարէ

իր վաճառականութեանը։ Երբ Շահամիրեանցը վերջացրած կը լինի իր գործերը, նա կը կամենար բնակութիւն հաստատել իր հայրենի երկրում, բայց որովհետև իշխան է նա, ցանկալի կը լինէր ունենալ սեփական հող՝ իշխանի պէս ապրելու համար։

Միաժամանակ Ղուկաս կաթողիկոսին գրած իր նամակի մէջ Շահամիրեանցը հետևեալ առաջարկութիւններն էր անում։ Պէտք է հայերը միանան վրացիների հետ և մնան ռուսաց հովանաւորութեան տակ։ Ազատված Հայաստանը պիտի ստանայ Հայկի սերունդներից մէկին, որ ձեռք առնէ նրա կառավարութիւնը, իսկ եթէ չը կայ այդ սերունդից մէկը, պէտք է, ուրեմն, Բագրատունիներից մէկին ընդունել։ Թող կաթողիկոսը փոյթ տանէ վրացի Բագրատունիների հետ միանալու։ Հարկաւոր է այդ Բագրատունիներից մէկի որդին վերցնել և ամուսնացնել մի ազնուատոհմ հայ օրիորդի հետ, որպէս զի նա լինի «ժառանգորդ ի վերայ տանն Հայոց». վրացի իշխանը, ի հարկէ, պիտի լուսաւորչական դաւանութիւն ընդունէր։ Ղուկաս կաթողիկոսին Շահամիրեանցը նաև առաջարկում էր ժողով կազմել և նրա քննութեան ենթարկել իր ուղարկած «Որոգայթ Փառաց»-ը։

Հնդկաստանում մշակված այդ քաղաքական ծրագիրը, ինչպէս տեսնում ենք, իր էական մասերում շատ չէ տարբերվում Իսրայէլ Օրիի ծրա-

գրից.—Նոյն կարծիքները Պարսկաստանի և Թիւրքիայի մասին, նոյն հեշտութիւնը, որով գլուխ էր բերվում հայկական ազատութիւնը, նոյն հայեացքները հայերի և վրացիների միացման մասին։ Բայց Օրին աւելի գործնական մարդ էր, աւելի մօտիկ էր ճշմարտութեան, քան հնդկաստանցի հայ վաճառականը։ Նկատենք հէնց այն, որ Օրին անձամբ շրջում էր, տեսնում, ուսումնասիրում. նա համոզված էր որ միայն մի եւրօպական, կանոնաւոր զօրաբանակ կարող էր վռնդել պարսիկներին Հայաստանից, մինչդեռ Շահամիրեանը կարծում էր թէ դրա համար բաւական է և Հերակլը, նա, որ իր սեփական երկիրը պահպանելու համար ստիպված էր ռուսաց հպատակութիւն ընդունել։

Թէ ինչ պատասխանեց Հերակլը Շահամիրեանցին, մենք չը գիտենք։ Բայց Ղուկաս կաթողիկոսի տուած պատասխանը շատ բնորոշ է. այդտեղ խօսում է իրականութիւնը, այն իսկ իրականութիւնը, որի վերաբերմամբ այնքան միամիտ էր Շահամիրեանցը։ Գրել էիր մեզ, ասում է կաթողիկոսը, հոգ տանել մեր աշխարհի և ազգի ազատութեան համար և ցոյց էիր տուել մի քանի միջոցներ և կարգադրութիւններ։ Բայց երանի էր թէ գրածներիդ գոնէ մի մասը իրականանար. որովհետև այդպիսի մի բան գլուխ բերելու համար հարկաւոր էր որ մեր ամբողջ ազգը բարեմիտ և հաւատացեալ տէրերի հովանու տակ գտնվէր և ապահովութիւն ունենար թէ նրանց խնամքով

կարելի է ձգտել երջանկութեան։ Բայց հայերը մեծ մասամբ մատնված են անողորմ թշնամիների խստութիւններին և հաւատարիմ ծառայութեամբ անգամ չեն կարողանում ողորմութիւն գտնել. ապա ինչ կը լինէր, եթէ ապստամբվէին։ Դու կասես թէ մենք հաճութիւն ունենք դէպի այլազգիների ծառայութիւնը և չենք սիրում ազատութիւնը։ Բայց եթէ այնպէս լինէր որ դու այս կողմերը գայիր և շրջագայէիր Ջուղայից մինչև այստեղ և ուրիշ այլ կողմեր, ուր կան հայեր, ականատես լինէիր մերոնց կացութեան, տեսնէիր նրանց անօգնականութիւնը և իշխողների բռնութիւնը, ինքդ կը վճռէիր որ այդպիսի բան չի լինի։ Հրէաներին ազատեց Մովսէսը. բայց ուր է մեր Մովսէսը, որ հրէականից էլ մեծագործ պիտի լինի, քանի որ հրէաները միայն Փարաւոնի իշխանութեան տակ էին, իսկ մեր ազգը ցիրուցան դառած է մի քանի իշխանութիւնների մէջ։ Թւում է թէ մի քանիսները, հաճոյանալու համար, ուրիշ կերպ են խօսել և իմ այս ճշմարիտ խօսքերը ծանր կը լինեն քեզ համար։ Հաստատապէս իմացիր, որ ոչ հիւսիսական պետութիւնից (Ռուսաստան) և ոչ էլ ուրիշներից մեզ օգնութիւն չէ լինելու։ Շրջապատված լինելով թշնամիներից, եթէ մենք նշան տանք թէ միանում ենք և նայում ենք մեր կարծեցեալ օգնողներին, մեզ վրա կը գան նեղութիւն, տանջանք, յափշտակութիւն և սուր։ Եթէ չես հաւատում, հարցրու և իմացիր թէ անցեալ-

ներում ինչ նեղութիւններ կրեցին ղարաբաղցիները, որոնք յոյս դրեցին այդ կարծեցեալ օգնողների վրա և թէ նրանց բռնաւորը (Շուշու խանը) ինչ ու ինչ փորձանքներ բերեց նրանց գլուխը *):

Ահա ինչ էր ասում իրականութիւնը: Եւ դա միանգամայն ճիշտ էր: Ղարաբաղի ժողովուրդը հերոսական ջանքեր էր գործ դնում մի թուրք խանից ազատվելու համար և նրան ոչ ոք չէր օգնում: Մենք տեսանք ուրիշ շատ օրինակներ էլ Մելիք-Աւանի և Դաւիթ-բէկի ժամանակ: Այդպէս էր դեռ այն լեռնաստանում, ուր կար անկախութեան նշոյլ, ուր պատերազմող տարրեր կային: Իսկ ինչ էր դրութիւնը երկրի դաշտային մասերում: Այնտեղ կատարեալ ստրկութիւն էր տիրում, իւրաքանչիւր թուրք բէկ կամ աղա մի անսահման բռնապետ էր անզէն ու անպաշտպան հայ ժողովրդի վրա: Այսպիսի միջնավայրում էր ուզում Շահամիրեանցը կանգնեցնել ռամկավարական հանրապետութիւն...

Գործնական հետևանք ունեցաւ Շահամիրեանցի միայն մի ցանկութիւնը—սեփական հող ունենալը: Հերակլը անկատար չը թողեց այդ խնդիրքը. Նրա հրամանով թագաժառանգ Գիօրգին 1790 թւի նոյեմբերի 10-ին գրած իր կալուածագրով տալիս է Շահամիրեանցին՝ իրան պատկանող ամբողջ Լօռին բոլոր գիւղերով ու հողերով, յայ-

*) „Դիւան Հայոց պատմ.“, Գիրք Ա.—Բ., եր. 18:

տնի սահմանների մէջ: Դա մի բաւական խոշոր նուիրաբերութիւն էր, և Շահամիրեանցը կարող էր այնտեղ մի փոքրիկ աւատական իշխանութիւն հիմնել և գոնէ մանր չափերով իրագործել իր ծրագիրները, եթէ առևտրական գործերի մէջ խրված մի վաճառական չը լինէր: Ի՞նչ էր պակաս: Ունէր իշխանական տիտղոս, մեծ կալուածք, հարստութիւն: Պակաս չէին և մարդիկ: Հէնց այդ ժամանակներում Ղարաբաղի ժողովուրդը, զզված Շուշու խանի բռնութիւններից, հեռանում էր իր երկրից և գաղթականութիւններ էր ցրվում դէպի զանազան կողմեր: Գաղթում էին և հայ մելիքները: Բայց Շահամիրեանցը տեղից չը շարժվեց, չը տիրացաւ իրան ընծայած կալուածքին:

1792 թւականի մայիսի 14-ից Ղուկաս կաթողիկոսին գրած նամակի մէջ Շահամիրեանցը յայտնում է որ մտադրութիւն ունի Լօռի քաղաքը իր ամբողջ գաւառի հետ տալ ՄելիքԱբովին, որին նա անուանում է «սիրեցեալ»: Դա նրա քաղաքական ծրագրի մի մասն էր: Պէտք է իմանալ, որ այդ ժամանակներում Ղարաբաղի հինգ մելիքութիւններից երեքը համարեա ոչնչացել էին կամ գոնէ բոլորովին անմնաս էին դարձել Իբրահիմխանի համար: Մնում էին Գիւլիստանը և Ջրաբերդը, երկու սահմանակից գաւառներ, որոնց քաջ տէրերը, Մելիք-Աբով և Մելիք-Մէժլում, դեռ շարունակում էին օրհասական կռիւ Շուշու բռնաւորի դէմ, թէև դրանց համար էլ համարեա վեր-

ջացել էր ամեն ինչ։ Ստիպված անապաստ, դըժ-բախտ հանգամանքներից, նրանք հեռացել էին հայ-րենիքից, դրսում որոնելով օգնութիւն։

Շահամիրեանցը մտածում է այսպէս կարգա-դրել Ղարաբաղի գործերը։ Այդ երկրի հարաւային մասը պէտք էր բոլորովին կորած համարել. ժողո-վուրդը դէս ու դէն էր ցրվում, մինչդեռ կարելի էր նրան հաւաքել այնպիսի տեղերում, ուր նա կարող էր պահպանել իր աւանդական ինքնավա-րութիւնը։ Դրա համար նախ և առաջ պէտք էր հաշտութիւն կնքել Շուշու խանի հետ, նոյն իսկ յարձակողական և պաշտպանողական դաշնագրու-թիւն կապել նրա և մէլիքների մէջ։ Այնուհետև Մէլիք-Աբովի և Մէլիք-Մէժլումի որդիները, որոնք Իբրահիմ-խանի ձեռքն էին ընկել և պահվում էին Շուշում, կը ստանային իրանց հայրական կա-լուածքները՝ Ջրաբերդ և Գիւլստան, Մէլիք-Աբովը երկրից հեռացած իր ժողովրդի հետ կը հաստատ-վէր Լօռում, Մէլիք-Մէժլումը—Շամքօրում։ Այդ տեղերում հայ ժողովուրդը, մի քանի ժամանակ խաղաղութիւն վայելելով, այնքան կը մեծանար և կուժեղանար, որ չորս մէլիքութիւնները հեշ-տութեամբ կարող կը լինէին զսպել Իբրահիմին։

Հերակլը պիտի կատարէր այդ ծրագիրը, և Շահամիրեանցը հէնց այդ տեսակ խնդիրք ուղար-կեց նրան։ Նրա համար շատ դժուար չէր մի այդ-պիսի գործ գլուխ բերելը։ Բայց նա չարեց։ Մի քանի տարի անցնելուց յետոյ Թագաժառանգ Գիօր-

գին յայտնում էր Շահամիրեանցին թէ Մէլիք-Ա-բովը չէ կամենում Լօռում ապրել և թէ ուրիշ այնպիսի մարդիկ չը կան, որոնք յանձն առնեն այդ կալուածքի կառավարութիւնը և հոգատարու-թիւնը։ Թագաժառանգը յորդորում էր, որ ինքը, Շահամիրեանցը, գայ ու տիրանայ իր ստացուած-քին, հանգստանայ հայրենի հողի վրա։ Ինչպէս երևում է, վրաց արքունիքին շատ ցանկալի էր մօտիկ հարևանութեան մէջ ունենալ հարուստ մարդուն։ Անկասկած, եթէ Շահամիրեանցը գնար, նրա առաջ ոչինչ դժուարութիւն չէր յարուցվի. շատ հեշտ կը լինէր հիմնել հայերի մի մեծ գաղ-թականութիւն և հաւաքել այնտեղ Ղարաբաղի բոլոր նշանաւոր մարդկանց։

Այդ հրաւէրն էլ նրան տեղից չարժել չը տուեց։ Առհասարակ Շահամիրեանցի համար բնո-րոշ գիծ է—ծրագիրներ կազմել, բայց միևնոյն ժամանակ լինել շատ միամիտ, անգործնական։ Վե-րոյիշեալ նամակում նա պատասխանում էր Ղու-կաս կաթողիկոսի այն առարկութեան թէ հայերը շրջապատված են թշնամիներով, ենթարկված են անողորմ տիրապետողներին և չեն կարող քաղա-քական շարժում սկսել։ Եւ ինչ էր նա ասում։ Այդ միջոցին ռուս-թիւրքական պատերազմը վերջաց-նելու համար Եաշ քաղաքում հաւաքված էին պա-տերազմող կողմերի լիազօրները։ Ռուսաց գլխա-ւոր հրամանատարի կողմից Եաշ էր կանչված և Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը։ Շահամի-

րեանցը Արղութեանի դրութիւններից գիտէր ար-
դէն թէ որպիսի համակրութեամբ է վերաբերվում
ռուսաց կայսրուհին դէպի հայերը։ Եւ ահա Շա-
համիրեանցը հաւատացած էր որ Եաշի «կօնգրէ-
սը», ինչպէս նա է անուանում, կը հրամայէ հայե-
րի և վրացիների դրացի տիրողներին հեռանալ ի-
րանց յօժար կամքով Ախալցխայից, Ախալքալաքից,
Բայազէտից, Երեւանից, Խոյից և ուրիշ տեղերից
ու յանձնել այդ երկիրները Հերակլ երկրորդին. և
կը հեռանան այդ տիրողները, նոյն իսկ վնաս չը
հասցնելով հայերին։ Ահա ինչպիսի միամիտ հեշ-
տութեամբ էր հնդկաստանցի քաղաքագէտը վճռում
դարաւոր արիւնոտ հարցերը։ Զուր չէր նա ասում
իր մասին. «Ինչպէս երազում քաղցածը հաց է
տեսնում, իսկ ծարաւածը ջուր, կարելի է որ իմ
մտքի ձգտումն էլ այդպէս լինի»։

Այո՛, հէնց այդպէս էլ եղաւ։ 1798 թւին
վախճանվեց Շահամիրեանցը և թաղվեց իրան պատ-
կանող հնդկական գիւղում։ Թողել էր նա ժառանգ-
ներ, բայց դրանցից ոչ մէկը նրա բարեմասնու-
թիւններից մէկն էլ չունեցաւ։ Հնդկական գա-
ղութում հայերը արագ փչանում էին. այդ փչա-
ցած, անբարոյական մարդկանցից էին և Շահա-
միրեանցի ժառանգները։ Նրանք վատնեցին իրանց
ժառանգած հարստութիւնները, անառակ և ան-
պէտք կեանք վարելով այնպիսի դրութեան հասան,
որ նրանց վերջին շառաւիղը XIX դարի առաջին
քառորդում արդէն մի անտուն, անտէր սրիկայ

էր, որի համար բանտերում ապրելն էլ բարօրու-
թիւն էր *)։ Կար Լօռին, բայց նա այնպէս էլ ան-
տէր մնաց։ Ռուսաց կառավարութիւնը, Վրաստա-
նում հաստատվելուց յետոյ, սպասում էր Շահա-
միրեանցի ժառանգներին որ գան ու տիրանան ի-
րանց հայրենական սեփականութեան։ Բայց այդ-
քան էլ չը կարողացան անել այդ ողորմելի, փչա-
ցած ժառանգները և Լօռին արքունական կալուածք
դարձաւ...

Շահամիրեանցը շատ մտածեց, շատ աշխա-
տեց, երազեց։ Բայց վերջ ի վերջոյ նրան մնաց
միայն այն պատիւը, որ նա, մի անգրագէտ վա-
ճառական, առաջինը եղաւ որ մտցրեց մեր վերա-
ցական-աստուածաբանական գրականութեան մէջ
աշխարհական տարր, հրապարակախօսական սկզ-
բունքներ, հայրենասիրութեան, ազատութեան,
անկախութեան գաղափարները։ Նա էր, որ առա-
ջին անգամ մամուլի միջոցով խօսք բաց արաւ ի-
րականութեան մասին, նկարագրեց ստրկութեան
դառնութիւնը, հայրենիքի շահերը նուիրագործեց,
ա-
դրեց օրէնքի, քաղաքական և հասարակական
ազատ զարգացման դատը։

Համաձայնվենք որ այդ պատիւն էլ փոքր
բան չէ...

—

*) Թէոդորեան, «Պատմ. Մար. Վարժ.», Ա., եր. 299
և 586։

VI

Երբէք չը մոռանանք վաճառականութեան բացասական կողմերը, որոնք շատ են. բայց և չուրանանք, որ այն ժամանակները, երբ մեզանում դեռ չը կար աշխարհական կրթված ու անկախ դասակարգ, Հնդկաստանի հայ վաճառականները, մանաւանդ ջուղայեցիները, այնքան գրական, գնահատելի ծառայութիւններ մատուցին մեզ, որ գոնէ դրանց բացասական յատկութիւնները պէտք է մոռացվեն։ Շահամիրեանցը անհատական երեւոյթ չէր. Հնդկաստանի հայութիւնը հարուստ էր ոչ միայն փողով, այլ և ընդհանուրի բարօրութեան նուիրած գործերով։

Եւ հարցնենք մեզ. շատ ստուարաթիւ էր այդ գործունեայ հայութիւնը։ Ասողներ կան 'թէ 10 կամ նոյն իսկ 20 հազարի էր հասնում Հնդկահայերի թիւը *)։ Բայց չը հաւատանք դրան. անկասկած, խիստ չափազանցացրած է այդ թիւը։ Գոնէ 1829 թւականին հնդկական երկիրները ճանապարհորդած մի հայ **) ասում է թէ ամբողջ Հնդկաստանում ապրող հայերը հազիւ 150 տուն լինեն։ Ենթադրենք թէ XVIII դարում դրանից անհամե-

*) Չամչեան, Պատմ. Հայ., եր. 411.

**) Պօղոս Լազարովիչ—«Ստորագրութիւն Կալկաթայ քաղաքի», Վենետիկ, 1832, եր. 43.

մատ մեծ էր հայ գաղթականութիւնը,—դարձեալ շատ աչքի ընկնող մի թիւ չենք ստանայ։ Մանաւանդ չը պիտի մոռանանք այն, որ հայերը, իբրև վաճառականներ, փոքրիկ խմբերով ապրում էին ցիր ու ցան մեծ երկրի զանազան կողմերում։

Այդ մանր գաղթականութիւնների մէջ XVIII դարում հռչակվում է մանաւանդ Մադրասի հայ գաղութը։ Հռչակվում է ոչ թէ իր բազմամարդութեամբ, այլ իր գործերով։ Այդտեղ սկսվեց մի գրականութիւն, որ չը նայած իր սաստիկ աղքատութեան, նշանաւոր է մեզ համար իբրև նոր ուղղութեան սկզբնաւորութիւն։ Այդտեղից էին դուրս գալիս առատ գումարներ հայոց վանքերի, եկեղեցիների, տպարանների, դպրոցների համար։ Այդտեղ էին դիմում հոգևորական ժողովարարները—էջմիածնի նուիրակները, պատրիարքները, առանձին նորգների ներկայացուցիչները. և պէտք է ասել, որ նրանցից ոչ մէկը դատարկաձեռն չէր յետ դառնում։ Հնդկաստանը XVIII դարում մի ոսկեհանք էր թէ հայ վաճառականների և թէ դրանց փողին կարօտ հայ հիմնարկութիւնների համար։ Բարեկեցութիւնը բարեգործութեան հետ մի զարմանալի դաշնակցութիւն էր կապել. կարծես մէկը առանց միւսի անհասկանալի էլ կը լինէր։

Հարստութիւնը ձեռք էր բերվում առատութեամբ. արդեօք այդ չէր պատճառը որ առատութեամբ էլ նուէրներ էին տրվում, կտակներ էին

կազմվում։ Հնդկաստանը դեռ կուսական դրութեան մէջ էր. անգլիացիները դեռ չէին մտել նրա բոլոր խորքերը։ Դեռ շարունակվում էր պատերազմը, որովհետև դեռ անկախ տեղացի իշխաններ կային։ Այդ տեղացիների հետ էին հայերը մեծ մասամբ գործ անում և այդ պատճառով էլ այնքան հեշտ ու շատ էին հարստանում։ Բանիմներն էին դատարկ ձեռքերով գնում Հնդկաստան՝ բախտ փորձելու համար և գտնում էին շլացուցիչ բախտ, դիզում էին մեծ հարստութիւններ։ Դեռ անգլիական մրցութիւնը հայերին դուրս չէր շպրտել ասպարէզից, չէր հասցրել նրանց սնանկութեան և աղքատութեան։ Աջողութիւնների այդ երջանիկ ժամանակներում հայ վաճառականը չէր խնայում, տալիս էր զրկվածին ու աղքատին, տալիս էր մանաւանդ իր ազգին։

Եւ ահա մի շարք փաստեր։ XVIII դարի երկրորդ կէսում Սիմէօն կաթողիկոսին աջողվում է մի հրաշք գործել.—Նա բաց է անում տպարան Էջմիածնում—առաջինը Հայաստանի հողի վրա։ Այդ բաւական չէ.—Նա բաց արաւ և թղթի գործարան, մի բան, որ մինչև այժմ էլ հայոց երկրում դեռ չէ տեսնված։ Անշուշտ, Սիմէօնի եռանդն ու ընդունակութիւնն էին այդպիսի հրաշք գործողները։ Բայց պատւի մի մեծ մասն էլ պատկանում է Հնդկաստանում վաճառականութիւն անող Ջուղայեցի Գրիգոր Զաքիկեանցին, որ տուեց բո-

լոր ծախսերը *)։ Զաքիկեանցն էր, որ երկու ֆրանսիայի հմուտ վարպետներ վարձեց և ուղարկեց Էջմիածին՝ թուղթ շինելու համար։ Գործարանի բոլոր ծախսերն էլ նա է տուել։

Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը Ռուսաստանում մեծ ձեռնարկութիւններ էր սկսել. Նա գործ ունէր պալատական պաշտօնեաների հետ, մեծամեծ ընծաներ էր տալիս, հիմնում էր քաղաքներ, դպրոցներ, տպարաններ։ Հարկաւոր էին ահագին միջոցներ։ Եւ Յովսէփին իրանց ոսկով օգնող հանդիսանում էին մեծ մասամբ հնդկահայերը։ Յայանի անուն ունէր Արղութեանը Հնդկաստանում, և նրա դիմումները անկատար չէին մնում։ Նոր-Նախիջևանում նա դպրոց է բաց անում, դըպրոցի շինութիւնը կառուցանում է Սուրաթում ապրող Ջուղայեցի Յօհանջան Գերաքեանը։ Նոյն Գերաքեանը տպարան է գնում և տալիս Արղութեանին, գրքեր է տպագրում իր ծախսով։ Նոր-Նախիջևանին է կտակում իր անշարժ կալուածքը համադանցի Մասեհ Բարաջանեանցը, Կալկաթայում. նոյն տեսակ նուէրներ անում են կեսարացի Եղիա Մահտեսի Յակոբեանը, Սարգիս Ծատուրեանը, տիկին Կատարինա Խօջամալը *)․ չէ մոռացվում այդ կտակների մէջ և հայոց նոր քա-

---

*) «Զբօսարան Հոգւոյ», Էջմիածին, 1772, յիշատակարան։

**) «Հիւսիսափայլ», 1859, № 5.

ղաք Գրիգորիօպօլը, Յովսէփ արքեպիսկոպոսի այս ձեռակերտը և նրա առանձին հոգացողութիւնների առարկան։ Արղութեանը տպարան է հիմնում և Աստրախանում. և ահա ինչ ենք կարդում այդտեղ տպուած մի գրքի մէջ **). «Յիշեցէք և այս տպարանի մեծ երախտաւորներին և սրան իրանց առատ նուէրներով պայծառ պահողներին, ամբողջ Հնդկաց երկրի Լուսաւորչածին իշխաններին և զուարթամիտ ժողովուրդը, որոնք իրանց լիուլի տուրքերով միշտ արեգակի պէս փայլեցնում են այս ազգօգուտ տպարանը»։

Մխիթարեան Միաբանութիւնն էլ վաղուց ճանաչել էր Հնդկաստանի ճանապարհը. Վենետիկից վարդապետները գնում էին Հնդկաստան, նուիրատուութիւններ հաւաքում։ Հնդկահայերի մէջ կային և կաթօլիկ հայեր. դրանցից երկուսը —Եդուարդ Ռափայէլ Ղարամեան, բայց մանաւանդ նրա փեսայ Սամուէլ Մուրադը հռչակուել են իրանց մեծ նուիրաբերութիւններով։ Եդուարդի մասին մի քիչ մանրամասն խօսելը շատ հարկաւոր է մեր գործի տեսակէտից. սա հնդկահայ վաճառականի խիստ բնորոշ տիպն է, որի պատկերը տեսնելով, մենք կարող ենք երեւակայել ուրիշ շատ այնպիսիններին, որոնք անյայտ են մնացել։

*) «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի», Աստրախան, 1797.

Նոր-Ջուղայեցի էր Եդուարդ Ռափայէլը. նրա հայրը Հնդկաստանում կարողութիւն էր շինել իր համար, բայց նրա մեռնելուց յետոյ այդ հարստութիւնը կորաւ անգլօ-ֆրանսիական պատերազմի ժամանակ, Պօնդիշերիում, ուր Եդուարդը ապրում էր իր մօր հետ և ուր նա սովորել էր ֆրանսիական դպրոցում։ Տեղափոխուելով Մադրաս, նա սկսում է նորից աշխատել. առեւտուր է սկսում Չինաստանի և Ֆիլիպպեան կղզիների հետ, հարստանում է, ամուսնանում, զաւակների տէր դառնում։ 1780-ական թուականներին մի դէպք ծանօթացնում է Եդուարդին Մխիթարեան երկու վարդապետների հետ։

Հետաքրքրական է, որ Մխիթարեան Միաբանութեան երկու մասի բաժանվելու մէջ գլխաւոր դերը կատարել են հնդկական ոսկիները *)։ Մխիթարի յաջորդ Մելգոմեան Ստեփաննոս աբբայի ժամանակ մի գումար է ստացվում Հնդկաստանից իբրև միաբանութեան համար հաւաքված նպաստ։ Այդ անակնկալ օգնութիւնը մեծ ուրախութիւն է պատճառում միաբանութեան. Մելգոմեան աբբան, ժլատ և կծծի մարդ լինելով, միաբանների մասին ոչինչ հոգ չէր տանում, չէր մտածում նրանց յարմարութիւնների և բարեկեցութեան մասին։ Միաբանութիւնը վճռում է հնդկահայերի այդ նուէրով հոգալ իր անյետաձգելի

*) Թէոդորեան, հատ. Դ., եր. 570.

կարիքները և ապա իրագործել իր մի մտադրութիւնը—բաց անել վանքում մի աշխարհական դպրոց հայ երեխաների համար, որոնք այդտեղ ուսումն աւարտելուց յետոյ պիտի վերադառնային հայրենիք՝ իրանց ազգը լուսաւորելու համար։

Սակայն Մելգոմեան աբբան այդ գումարը պահ է տալիս մի հայ վաճառականի՝ շահեցնելու համար և լսել անգամ չէ ուզում միաբանութեան բացատրութիւնները. դպրոց նա չի բաց անի, միաբանութիւնը պարտաւոր է հպատակվել և ոչ թէ գանգատվել իր կեցութեան անյարմարութիւնների վրա։ Եւ միաբանները, առանց երկար մտածելու, վանական յեղափոխութիւն են սկսում։ Աբբային հանում են իր սենեակից, փակում են մի այլ սենեակում և յայտարարում են թէ նա պաշտօնանկ է արված։ Բայց կաթօլիկ վանքում չէ կարելի յեղափոխութիւններ կատարել. այնտեղ խիստ հնազանդութիւն է պահանջվում։ Վրա է հասնում Վենետիկի պատրիարքը և անհնազանդ միաբաններին աքսորում է Տրիեստ։ Այդտեղ էլ հիմնվում է Մխիթարեան երկրորդ վանքը, կազմվում է միաբանութեան մի նոր, անկախ ճիւղ։ Աղքատ ու դժբախտ էին աքսորվածները. նրանք մուրացկանութեամբ պիտի ապրուստ հայթայթէին։ Բայց չէին մոռացել աշխարհական դպրոց բացելու միտքը։ Պէտք էր միջոցներ գտնել՝ այդ ձեռնարկութիւնը ապահովելու համար։ Տրիեստցիները Կ. Պօլսում գտնվող Մխիթարեաններից մի քանիսին

ՌԱՓԱՅԷԼ

իրանց կողմն են որսում և նրանց միջոցով տոկոսով փող են վերցնում դպրոցի համար։ Այդ որսածներից երկուսը, Հ. Բուղայեան և Հ. Մեհերեան, ճանապարհվում են Հնդկաստան որ այնտեղ ժողովարարութիւն անեն տրիեստցիների համար։ Շաբաթը մի անգամ Եդուարդը դրանց իր տունը ճաշի էր հրաւիրում։

Բայց նա բոլորովին մտադիր չէր ձրի կերակրել վարդապետներին։ Ոչ մի տեղից նպաստ չէին ստանում այդ ժողովարարները. Եդուարդը յայտնում է թէ ինքը պատրաստ է նպաստ տալ, եթէ վարդապետները ընդունեն իր պայմանը։ Իսկ պայմանը այն էր, որ Հ. Բուղայեանը տանէ նրա Ալէքսանդր և Յովհաննէս որդիներին Լօնդօն և խնամէ նրանց այնտեղ հինգ տարի, այսինքն մինչև այն ժամանակը, երբ պատանիները կաւարտեն իրանց ուսումը անգլիական դպրոցում. միւս վարդապետը պիտի մնար Մադրասում և հայերէնի դասեր տար նրա միւս երեխաներին։ Վարդապետները համաձայնութիւն են տալիս։

Հնդկահայ գաղթականութեան դրութիւնը բաւական ծանր էր այն կողմից, որ այդ հեռաւոր տեղում հայը, շրջապատուած լինելով օտար տարրերով, կամաց-կամաց պիտի մոռանար իր մայրենի լեզուն։ Տեսանք, որ անգլիերէնը շատ վաղուց մտաւ գաղթական հայ ընտանիքի մէջ։ Նրանք, որոնք Ջուղայից և այլ տեղերից էին գաղթել, դեռ

գիտէին իրանց լեզուն. իսկ ինչ պիտի լինէր այն սերունդը, որ ծնվում էր Հնդկաստանում: Չը կար մի տեղ, ուր նա կարող լինէր սովորել հայերէնը, ուստի և օտարացումը այնքան արագ էր սկսվել, որ չէր կարելի նրա վրա ուշադրութիւն չը դարձնել: Հնդկահայ գաղթականութեան մի գեղեցիկ յատկութիւնն էլ այս էր: Ուրիշ աշխարհներում ցրված հայ գաղթականութիւնների համար այսպիսի հարց չը կար. նրանք ուղղակի օտարանում էին, չը կարողանալով որ և է միջոց գտնել դրա դէմ: Հնդկահայերը այդպէս չէին: Նրանց մէջ կային հայրենասէրներ, որոնք շատ լաւ հասկանում էին թէ չէ կարող ազգ լինել առանց ազգային լեզուի: Շահամիրեանը, ինչպէս տեսանք, իր տպագրած գրքերում առանձին ուշադրութիւն էր դարձնում լեզուի վրա. հայերէն և զէնք—ահա այն սիւները, որոնց վրա պիտի հաստատվի հայութիւնը: Անձնապէս նա ինքը ցոյց տուեց թէ ինչպէս պէտք է վարվի ամեն մի հայր. իր երեխաների համար նա պահում էր տնային հայ ուսուցիչ: Բայց ամեն մէկը չէր կարող նրա նման լինել. ուստի իր նամակներից մէկում նա խնդրում էր Ղուկաս կաթողիկոսից որ նա մի տիրացու ուղարկէ Հնդկաստան՝ դպրոց բաց անելու համար: Այդ ձգտումը կար և ուրիշ շատ հնդկահայերի մէջ. մենք կը տեսնենք յետոյ, որ դպրոց էլ, գրականութիւն էլ ունեցան այդ մի բուռն հայերը և հէնց այդ պատ-

ճառով էլ երկար մնացին իբրև պարտաճանաչ հայեր:

Հայրենասիրութեան կողմից Եդուարդ Ռափայէլը Շահամիրեանից պակաս չէր: Ոչինչ ծախս ու ջանք չը խնայելով որ իր որդիները եւրոպական լաւ կրթութիւն ստանան, նա մի և նոյն ժամանակ չէր մոռանում և մի հայ հօր առաջին պարտականութիւնը: Առաջին հնդկահայն էր նա, որ որդիներին, ուսում ստանալու համար, ուղարկում էր Լօնդօն: Նա գրեց մի շարք խրատներ և տուեց այդ պատանիներին՝ ղեկավարվելու համար: Մի սիրող և մի և նոյն ժամանակ կրթված ու հասկացող հօր սիրտն էր խօսում այդ խրատների, այդ կտակի մէջ: «Հնազանդ եղէք,—ասում էր նա,—Հայր Նիկողայոս վարդապետին, որ կարգված է ձեզ ուսուցիչ և դաստիարակ. նա կը կրթէ ձեզ ձեր հաւատքի մէջ և բարի վարք կը սովորեցնէ, դրա հետ և մեր հայկազեան լեզուն, որ ձեր սեփական լեզուն է. որովհետև դուք ծնվել էք հայ և պարտաւոր էք իմանալ ձեր լեզուն: Երդումով ասում եմ ձեզ, որ եթէ, Տէրը մի արասցէ, չիմանաք ձեր լեզուն, ես ձեզ իմ որդի չեմ ճանաչի»: Մայրենի լեզուն այդ հօր համար այնքան կարևոր և մեծ նշանակութիւն ունի, որ իր խրատների մէջ նորից ու նորից նրան է վերադառնում. «Որդիք, կրկնում եմ և զգուշացնում եմ ձեզ. ազգով հայ էք, ոչ մի ժամանակ չը պիտի մոռանաք ձեր ազգը կամ լեզուն, որովհետև բնութեան և

քարի ուսմունքների օրէնքով ամէն մարդ պիտի սիրէ իր ազգը և օգնէ նրա պայծառութեան։ Ճշմարիտն ասած, ձեզ Եւրոպա ուղարկելու դիտաւորութիւններիցս մէկն էլ այն է, որ ջանաք խմաստուն լինել՝ ապագայում ձեր ազգին օգնելու համար. և աղաչում եմ Աստուծուն որ պիտանի լինէք նրա ազատութեան՝ խօսքով կամ գործով»։

Ահա անգլիական ազդեցութեան տակ գոյացած ինքնաճանաչութեան և առողջ ու գեղեցիկ հայրենասիրութեան մի ուրիշ նմուշ էլ։ Չը մոռանանք որ կաթօլիկ էր այդ հայը. բայց կար նմանութիւն նրա և այն բազմաթիւ հայ կաթօլիկների մէջ, որոնք իրանց Փրանկ էին անուանում և իրանց ազգութեան վնասելու մէջ մի առանձին ֆանատիկոսական հաճոյք էին զգում։ Նոյն, ազգային գաղափարների վրա էր հիմնուած այդ կաթօլիկ հայի աշխարհայեցողութիւնը։ Ընդհանուր հայ հայրենիքի որդի, նա, անկախ իր կրօնական համոզմունքներից, հաւատացած է որ այդ հայրենիքը իր անվերջ դժբախտութիւններից պիտի ազատվի գիտութեան միջոցով և պիտի ձգտէ ազատութեան։

Այդ դաւանանքը Եդուարդ Ռափայէլը պարզում է Տրիեստի Մխիթարեաններին 1785-ին գրած իր մի նամակի մէջ։ Նրանից օգնութիւն էին խնդրել և նա համաձայն էր օգնութիւն ուղարկել։ Բայց ինչ պայմանով։ Բերելով այն իրողութիւնը, որ Թիւրքիայում դեռ չարունակվում են կռիւները

լուսաւորչական և կաթօլիկ հայերի մէջ, նա խորին ցաւ է յայտնում։ Ազգը, ասում է նա, ամեն տեսակ տառապանքներ է կրում, ողբութեան թշուառութիւնը ծանրացած է նրա վրա. ոչինչ բան չը կայ, որ միաբանվելու նախանձ գրգռէ մեզանում, միայն կրօնական վիճաբանութիւններ կան եղբայրների մէջ։ Մեր վաստակած փողը զուր վատնում ենք և տալիս ենք թիւրքերին. իսկ ինչ ենք շահում, եթէ ոչ միայն ամօթ, նախատինք և աղքատութիւն։ Ո՛հ, անխելք ազգեր, բաւական համարեցէք ձեր անմտութիւնը. միաբանութիւն հաստատեցէք, նախանձաւոր եղէք մեր տառապանքների համար և թողէք որ մեր վաստակը տանք գիտութիւն գտնելու, որ արիութեան և ազատութեան դուռն է։

Այս գեղեցիկ դատողութիւնը հասցնում է Եդուարդին աւելի գեղեցիկ և արդար եզրակացութեան։ Նա ասում է այն, ինչ վաղուց պիտի ասվէր մեր հոգևորականութեան, որ ազգի գրող ու կարդացող միակ դասակարգն էր։ Աշխարհականները տեղ չունէին գրականութեան մէջ, իսկ հոգևորականները ինչ են տալիս։ Հոգևորականի պարապմունքն է, ի հարկէ, նախ Քրիստոսի հաւատը ուղիղ քարոզել և տպել սուրբ գրքեր, բայց այդպիսի գրքեր, ասում է Եդուարդը, հայերը բաւական ունեն։ Այժմ պէտք է հրատարակել այնպիսի գրքեր, որոնք զարթեցնում են ազգասիրութիւն, գիտութեան և արիութեան նախանձ։ «Գիտեմ,

աւելացնում է նա, ինձ պատասխան կը տան թէ ով տուեց մեզ ծախսերը և մենք չարինք այդ։ Բայց յայտնի գիտեմ, որ Հնդկաստանից շատ դրամ ուղարկվեց թէ մի և թէ միւս կողմի (այսինքն լուսաւորչական և կաթօլիկ) եկեղեցիներին՝ պատմական գրքեր տպագրելու համար, և վերջը տեսանք ոչինչ, բացի Սաղմոսից և Ժամագրքից»։

Այսպիսի միտք յայտնելը մեր օրերում էլ հայ կղերական բարեպաշտ անշարժութեան համար նշանակում է լինել լիւթերական, անհաւատ. ինչ պիտի լինէր այն ժամանակներում, երբ բարեպաշտական անշարժութիւնը համատարած էր։ Եւ Եդուարդ Ռափայէլը շտապում է ասել թէ ինքը լիւթերական չէ, այլ ուղղափառ, բայց մի ուղղափառ, որ ուզում է նմանվել հրէական մեծ հայրենասէրներ Մակաբէններին կամ, խօսելով ժամանակակից լեզուով, ամերիկացիներին։ Այս վերջին ակնարկութիւնը մի անգամ էլ ցոյց է տալիս թէ Ամերիկայի ազատութիւնը որքան մեծ կրթիչ ազդեցութիւն ունեցաւ հնդկաստանցի հայ հայրենասէրների վրա։

Մենք տեսանք թէ հայրենիքի ազատութեան մասին մտածողների համար որպիսի մեծ օրինակ էր հին Հռոմը։ Շահամիրեանցը իր հանրապետական գաղափարները և հայրենասիրական մտածողութիւնները հաստատելու համար Հռոմին էր դիմում և ցանկութիւն էր յայտնում որ Հռոմի պատմութիւնը հայերէնի թարգմանվի, որպէս զի հայերը կարդան, դաստիարակվեն այդ մեծ օրի-

նակի վրա։ Նոյն ցանկութիւնն ունի և Եդուարդ Ռափայէլը։ Փոքր հասակում, Պօնդիչերիի ֆրանսիական դպրոցը աւարտելուց յետոյ, նա կարդացել էր ֆրանսիացի Ռոլլէնի գրած «Հռոմի Պատմութիւնը» և այն ժամանակից ուխտել էր թարգմանել տալ այդ մեծ գործը, որ բաղկացած էր 16 հատորներից։ Տրիեստցիները նրանից օգնութիւն էին խնդրում, բայց նա մտադիր չէր փող տալ, հարկաւոր չը համարելով մտածել թէ ինչպէս և ինչի՞ վրա պիտի գործադրեն այդ փողը։ «Ես—ասում է նա մի այլ նամակում,—այն հայերից չեմ, որոնք շատ նուէրներ են տալիս էջմիածնին ու Երուսաղէմին և ուրիշ ոչինչ չեն ստանում, բացի «Աստուած քեզ օրհնէ» խօսքերից։ Ես գիտեմ որ իմ գործերը պիտի օրհնեն ինձ»։

Ահա հէնց այդպէս էլ մտածելով, նա առաջարկում է տրիեստցիներին թարգմանել Ռոլլէնը։ Տպագրութեան ծախսերը հոգալու համար նա այս գլխից տալիս էր ութ հազար ռուփի, որից հինգ հազարը իր սեփականութիւնից, իսկ մնացածը իր երկու ծանօթներից ստացած։ Առաջին հատորը տպագրելուց յետոյ խոստանում էր տալ դարձեալ հինգ հազար ռուփի։ Բոլոր գրքերը, ի հարկէ, տալիս էր Մխիթարեաններին. Նրանց ծախելուց պիտի գոյանար 75,000 ռուփի, մի գումար, որ մեծ օգնութիւն էր տրիեստցիների համար։ Իսկ հայ ընթերցողները այն շահը կունենան, որ հռոմէական կառավարութեան, միաբանութեան և ազգա-

սիրութեան մասին լիովի տեղեկութիւններ կը ստանան։

Այսպէս էր առաջանում մեր գրականութիւնը։ Վաճառականն էր ցոյց տալիս հոգեւորականին թէ պէտք է, վերջապէս, մի քիչ էլ ազգի իրական շահերի ու պահանջների մասին մտածել։ Նոյն այդ ժամանակները Տրիեստի Միաբանութիւնը տպագրել էր Ռօբէրտսօնի «Վիպասանութիւն Ամերիկոյ» գրուածքը, որ Ամերիկայի գիւտի պատմութիւնն էր, դարձեալ Ջուղայեցի մի հայ վաճառականի ծախսով։ Եւ պէտք է նկատենք, որ մեր վաճառականների համար այնքան էլ հեշտ չէր հոգեւորականներին հարկադրելը։ Գոնէ Եդուարդ Ռափայէլը մի առանձին բախտ չունեցաւ. իր առաջարկութիւնը նա նախ Վենետիկ էր ուղարկել, բայց պատասխան չէր ստացել։ Իսկ ինչ արին տրիեստցիները։ Նրանք ստացան փողը և լռեցին. չորս տարուց յետոյ Եդուարդը գրում էր. «Ծաղր դարձայ իմ ազգի մէջ, մինչ ասում են թէ վարդապետներն Հեզվարթին փողն լաւ կերան. սակայն իմ փողը ես ժամանակին կը պահանջեմ»։ Այս սպառնալիքն էլ չօգնեց։ Ճիշտ է, վարդապետները սկսեցին թարգմանութիւնը, մինչև իսկ մի թերթ էլ տպագրեցին, բայց գործը այդպէս էլ կիսատ մնաց և Եդուարդը հայերէն Ռօլլէն չը տեսաւ։

Կասենք, սակայն, որ տրիեստցիների այդ վարմունքը մի բարի գործ ծնեցրեց։ Տեսնելով որ

ոչինչ չէ լինում, Եդուարդը կտակում մի գումար նշանակեց (65,000 ֆրանկ), որ պիտի պահուէր բանկում. Նրա տոկոսներով էլ պիտի հրատարակվէր Ռօլլէնը։ Կտակում նա կարգադրեց որ միայն «Հռօմի Պատմութիւնը» չը տպագրվի, այլ և նոյն հեղինակի «Հնախօսութիւնը», որ պարունակում է Եգիպտոսի, Ասորեստանի, Յունաստանի, Բաբելոնի և Պարսկաստանի հին պատմութիւնը *)։ Այդ բոլորը կատարելուց յետոյ, դրամագլուխը ստանում էր այլ նշանակութիւն։ Նրա տոկոսներով պիտի բացուէր մի դպրոց աղքատ հայ երեխաների համար և այդ դպրոցի ղեկավարը պիտի լինէր Եդուարդի որդիների դաստիարակ Բուզայեան վարդապետը **)։

Կտակած 65,000 ֆրանկ գումարը ինքն ըստ ինքեան մի մեծ բան չէր, բայց նշանաւորը այստեղ այն է, որ նա նուիրված է աղքատներին—

---

*) Ռօլլէն XVIII դարում մեծ ժողովրդականութիւն վայելող մի հեղինակ էր։ Հռօմի պատմութեան թարգմանութիւնը տպագրվեց 1815-ին, իսկ «Հնախօսութիւնը» 1825-ին, երկուսն էլ Վենետիկում։ Երկու աշխատութիւնները կազմում են 12 մեծ հատոր, քարտէզներով զարդարված։

**) Հ. Բուզայեան, հեռանալով Տրիեստի միաբանութիւնից, նորից վերադարձաւ Վենետիկի միաբանութիւնը, և այդ դպրոցի վրա ունեցած իր իրաւունքները յանձնեց այդ միաբանութեան աբբային։ Այդ պատճառով էլ Վենետիկի Մխիթարեանները դարձան Ռափայէլեան կտակի տէրը։

հայոց խղճուկ գրականութեան և աղքատ դասակարգի կրթութեան։ Այդ կտակը մի տեսակ առաջաբան էր. նրան հետևեց մի այլ, աւելի խոշոր բարեգործութիւն, որի մասին շուտով կը խօսենք։

Առ այժմ դեռ լրացնենք Եդուարդ Ռափայէլի նկարագրութիւնը։ Գեղեցիկ մտքերով տոգորված այդ հայ մարդը, միևնոյն ժամանակ մի կծծի ու ժլատ վաճառական էր։ Հ. Մեհներեանը, որ տարիներով նրա տանը ուսուցչութիւն էր անում, ճանապարհ դրվեց առանց վարձատրութեան, ստանալով միայն ճանապարհածախս, այն էլ իբրև հոգու վարձք։ 1790 թուականին մեռնում է նրա կինը. աղջկան ամուսնացնելով Սամուէլ Մուրադի հետ, նա վերցնում է կրտսեր որդուն և նաւ է նստում՝ Լօնդօն, իր որդիների մօտ գնալու համար։ Եւ ահա ինչ է պատահում ճանապարհին։ Նաւի ներքնայարկ սենեակներից մէկում մի կին բռնվում է ծննդական ցաւերից. հարկաւոր էր նրան տեղափոխել վերին յարկի մի սենեակ, ուր օդ շատ կար։ Նաւապետը դիմում է Եդուարդին, խնդրելով իր սենեակը զիջել. բայց սա հրաժարվում է, ասելով թէ իր սենեակի համար աւել վարձ ունի տուած։ Նաւապետը առաջարկում է տանել այդ աւելորդը և Եդուարդը միայն այդ պայմանով համաձայնում է տալ իր սենեակը ծննդականին։ Բայց դրանից յետոյ նա նաւապետի սաստիկ արհամարհանքին է արժանանում, այնքան սաստիկ, որ չէ կարողանում տանել և մեռնում

է նաւի վրա, երբ մինչև Լօնդօն մի օրվայ ճանապարհ էր մնացել։ Սակայն նրա անշունչ դիակն էլ չէ կարողանում ջնջել նաւապետի արհամարհանքը. և աւելորդ համարելով այդ դիակը ափ հասցնել, նաւապետը նրան գցել է տալիս ծովը *)։

Այսքան չահամոլ ու ժլատ էր մեր ազգային բարերարներից մէկը։ Նա վաճառական էր, ասիացի, միայն քիչ տաշված կրթութեամբ, ինչպէս ասում է նրա փեսայ Սամուէլ Մուրադը։ Եւ կարող ենք ասել թէ միւս վաճառականները միանգամայն ազատ էին այդ վատ յատկութիւններից։ Ահա մեր այնքան ոգևորված հայրենասէր Շահամիրեանը. ունէր ահագին կարողութիւն, բայց բոլորը, Լօռու հետ միասին, կտակեց իր անպէտք ժառանգներին և միայն մի ինչ-որ սնդուկ հիմնեց Մադրասի հայոց եկեղեցում՝ աղքատների համար։ Վատը դատապարտելով և լաւը բարձրացնելով, մենք պիտի խոստովանենք, այնուամենայնիւ, որ այդպիսի ստոր յատկութիւնները չէին խանգարում հնդկահայ վաճառականներին լինել իրանց ազգի բարերարները։

Ահա մի երախտաւոր էլ—Եդուարդի փեսայ Սամուէլ Մուրադը, որի անունը այժմ էլ արտասանվում է խորին պատկառանքով. ծնվել է նա Թիւրքիայի Թօքաթ քաղաքում 1760-ին։ Բայց հօր կողմից նա դարձեալ այն երկրից էր, որտեղից

*) Թէոդորեան, հատ. Ա., եր. 45.

Շահ-Աբասը գաղթականութիւն տարաւ Սպահան
և Ջուղա։ Մուրադը, Սամուէլի նախահայրը, մէկն
էր պարսից կառավարութեան կողմից գաղթական-
ների վրա նշանակած կառավարիչներից կամ մէ-
լիքներից։

Երիտասարդութեան հասակում Սամուէլը
իր հօր հետ բաւական ժամանակ աստանդական
կեանք է վարում. լինում է Կ. Պօլսում, ապա
գնում է Ունգարիայի Պետրօվարդէն քաղաքը, ուր
մի քանի հայ ընտանիքներ կային. այդտեղ նա
աշակերտում է Մխիթարեան մի վարդապետի, սո-
վորում է հայերէն լեզուն։ Բայց առևտրական ա-
ջողութիւն չը գտնելով, նա գնաց Վենետիկ, մտեր-
մացաւ այդտեղ Մխիթարեանների հետ և ապա,
շարունակելով ճանապարհը, ուղևորվեց Հնդկաս-
տան։ Այդտեղ նա Գրիգոր Շէհրիմանի մօտ գոր-
ծակատար էր, մարգարիտ էր առնում Չինաստան։
Սևորի մէջ լաւ ընդունակութիւններ ցոյց տա-
լով, նա դրաւեց Եդուարդ Ռափայէլի ուշադրու-
թիւնը և նրա փեսան դարձաւ։ Աներոջ մահից յե-
տոյ, մնալով նրա գործերի կառավարիչ և կտակա-
կատարներից մէկը, Սամուէլը ամենայն բարե-
խղճութեամբ աշխատում էր կատարել տալ կտա-
կի մանաւանդ բարեգործական կէտը, որի հետ
վերևում ծանօթացանք։

Հետզհետէ մեծացնելով իր կարողութիւնը,
Սամուէլ Մուրադը չէ մոռանում իր ազգային պար-
տականութիւնները։ Նա էլ խնդրում է որ Մխի-

թարեան վարդապետներից մէկը գնայ Հնդկաս-
տան՝ երեխաներին ուսուցանելու համար, մտա-
ծում է Ռօլլէնի գրքերի տպագրութեան մասին,
ցանկութիւն է յայտնում մի քանի գրքեր էլ իր
հաշւով տպելու, մանաւանդ անգլիերէն-հայերէն
և հայերէն-անգլիերէն բառարաններ։ Սակայն նրա
գլխաւոր մտածութիւնը ուրիշ առարկայի վրա
էր։ Բիչ համարելով այն գումարը, որ իր աներ
Եդուարդը կտակել էր դպրոցի համար, նա աւե-
լացնում է այդ գումարի վրա իր կնոջ ստացած
ժառանգութեան մի տասներորդ մասն էլ։ Դրա-
նով դարձեալ չէ բաւականանում նրա բարեսիրու-
թիւնը։ Մտածում է ինքն էլ մի բան անել։ 1798
թուականին գրած իր նամակում նա այսպէս էր
նկարագրում հայ ազգի տխրութիւնը. «Մենք,
հայերս, ուսումից ու գիտութիւնից զուրկ լինե-
լով, թէև պանդխտութեան մէջ շրջելով և հեռու
աշխարհներ գնալով՝ այս ու այն կողմում շահվում
ենք և մի փոքր տաշվելով ուրիշ ազգերի մէջ, մեր
հարստութեան ոյժով գիտունների մէջ ենք գը-
տնվում, սակայն այդ տաշումը մատաղ հասակում
չէ կատարվում, այլ քարացած և կարծրացած հա-
սակում, ուստի և բաւականաչափ կատարեալ չենք
լինում»։ Նոյն նամակի մէջ էլ նա ցաւ է յայտ-
նում որ հայոց որբ ու աղքատ երեխաները ուս-
ման բարիքներից զուրկ են մնում։

Այս ամենը արդէն ցոյց է տալիս, որ Սա-
մուէլ Մուրադն էլ պիտի հետևէ իր աներոջ օրի-

նակլին և իր ազգի ազատութեան դէմ իրական ճար պիտի գտնէ։ Եւ իրաւ. անցնում են տարիներ, Սամուէլի հարստութիւնը դնալով մեծանում է։ Սամուէլը մեռնում է 1816 թւականին։ Բայց դրանից մի տարի առաջ գրած իր կտակում նա դրել էր հետևեալ կէտը.

«Ես իմ հաշուապրքումս մին որբոց, աղքատաց և տնանկաց հաշիւ ունեմ. իմ ստացուածքիցն մին հարիւր և յիսուն հազար հուն հանեն և տանեն նոյն հաշիւն. և յետ ասացեալ հարիւր յիսուն հազար հունն ասացեալ հաշւին տանելէն, զոր ինչ որ ասացեալ հաշուոյն տալիքս գումարի՝ ասացեալ գումարի բոլորն Թողման ամ Հայոց ազգի որբ և աղքատ մանկանց դպրատան շինութեան համար, որ ըստ խորհրդոյ և միջնորդութեան Վենետիկի Հայոց միաբանից՝ մ՚ի մի կողմն Եւրոպիոյ որ աջողակ համարեն, գետին գնեն, և ասացեալ գետնի եկամուտն քանի մանկանց տարեկան ծախուցն որ բաւական առի, այնքան Հայոց ազգէն ։որբ և աղքատ մանկունք ասացեալ դպրատանն ձրիապէս ուսումն և լեզուք ուսանեն և դառնան իւրեանց հայրենիքն։

«Եւ պարտականութիւն չլինի ասացեալ՝ դպրատանն ուսանողաց վրայ քահանայ լինելոյ. բայց եթէ ոմանք իւրեանց ազատ կամաւն յօժարեսցին քահանայութեան, լինիցին։

«Եւ եթէ ոմանք հարուստ անձինք ևս ազգէս Հայոց կամեսցին զմանկունս իւրեանց վերոյ ասացեալ դպրատանն ուսուցանել, կարող ան զծախսն հատուցանելով. քանզի դիտաւորութիւն իմ վասն այս դպրատան շինութեան է վասն աղքատ մանկանց ուսուցանելոյ. այսինքն վասն նոցա որոնց հարքն չքաւոր են. վասն չկարելոյ նոցա զծախսն դպրատան հատուցանել՝ զանց առնեն ուսմամբ մանկանց իւրեանց, և անմեղ մանկունքն այնո-

քիկ մնան զուրկ ի յամենայն ուսմանց և գիտութեանց, և որոյ վասն գրեթէ ըստ մեծի մասին անտէրունչ ազգս Հայոց տգէտք են։

«Եւ յուսամ յԱստուած, զի և այլք հարուստ անձինք յազգէս հայոց յետ ճաշակելոյ զքաղցրութիւն ուսման դպրատանն զորս իմով միջնորդութեամբ սկսանի, և նոքա իմոց շաւղացն հետևեսցին, և այնու կարելի լինիցի սփռել ի մէջ ազգիս, եթէ ոչ բոլորովին՝ գոնէ ըստ մասին, զլոյս գիտութեան և իմաստութեան. և անտէրունչ ազգս զարթնուցու ի քնոյ թմրութեան և անհոգութեանս։

Առատաձեռն նուիրատուն, բացի դրանից, կարգադրում է որ եթէ իր որդիներից մէկը անժառանգ մեռնէ, այն ժամանակ նրա բաժինն էլ պիտի աւելացվի այդ բարեգործական գումարի վրա։ Թողնելով իր որդիներին խաղաղ ու համերաշխ ապրելու կտակ, Սամուէլ Մուրադը յորդորում է նրանց վէճեր և դժուարութիւններ չը յարուցանել կտակի կատարման դէմ, այլ, ընդհակառակն, բարոյական պարտք է դնում նրանց վրա, որ իրանց բաժիններից էլ մասն հանեն իր ծրագրած դպրոցին։ Այսպիսով ահա Մուրադեան կտակը, մեր ազգային ամենախոշոր կտակներից մէկը, պատճառ է դառնում որ բացվի Եւրոպայում մի մեծ, բարեկարգ ու ապահով ուսումնարան։ Բացվում է այդ դպրոցը *), երկար ժամանակ մեծամեծ ծառայութիւններ է անում ազգին։

—

*) Մուրադեան դպրոցի պատմութիւնը վերաբերվում է XIX դարին։ Առայժմ կասենք այսքանը, որ Վենետիկի

Մենք այժմ բաւական նիւթ ունենք դատելու հնդկահայերի կատարած դերի մասին։ Ի՞նչ է ցոյց տալիս մեր մինչև այժմ պատմածը։

Կարևորը միայն դրամական օժանդակութիւնը չէր, որ այնպիսի առատութեամբ ստանում էին Հնդկաստանից մեր հիմնարկութիւնները XVIII *դարում. շատ նշանաւոր են և այն գաղափարները, այն ոգին, այն ուղղութիւնը, որոնց քարոզիչներ հանդիսացան այդ վաճառականները։ Իրանց դժբախտ հայրենիքի ցաւերին անկեղծ կարեկից, նրանք ձայն են բարձրացնում նրա ազատութեան մասին. դա միայն քաղաքական ազատութիւնը չէր, որ արևելեան հայութեան հոգսերի առարկան էր, այլ և ազատութիւն ասիական ծանր խաւարից, տգիտութիւնից,—մի ազատութիւն, որի մասին մտածում էին արևմտեան գրական շրջանները, բայց մտածում էին միակողմանի կերպով, կաշկանդված կղերական աւանդութիւնների մէջ։ Շահամիրեանները, Ռափայէլները, Մուրադները տալիս են առաջադէմ, կենսունակ մի ազգի իդէալները, քարոզում են եւրօպական լոյս և գիտութիւն, նրանք առաջին րէալիստ մտածողներն են մեզանում, աշխարհական ուղղութեան առաջին կարապետները։ Ազգային համերաշխութիւնը,*

Մխիթարեան Միաբանութիւնը ստացաւ ժառանգներից 1,815,000 *ֆրանկ, մի պատկառելի գումար, որի եկամուտներով միանգամայն ապահովված էր դպրոցը։*

ՄՈՒՐԱՏ

բոլոր հայերի եղբայրակցութեան գաղափարը այն ժամանակներում ամենից չատ անարգված, նախատակված հասկացողութիւններն էին։ Կրօնական անհաշտ թշնամութիւնների այն խաւար ժամանակներում հիացմունք են ազդում այն երկու կաթօլիկ հայերը, Եդուարդ Թափայէլ և Սամուէլ Մուրադ, որոնք վեր են կենում հասկացնելու կրօնական երկպառակութիւնների մէջ գլուխ կորցրած հայերին, թէ նրանք ունեն տառապող ազգ, թէ այդ ազգը խեղճ ու գերի է իր տգիտութեան պատճառով։ Նրանց կտակները մի-մի բարձր ու վեհ քարոզներ են համազգային համերաշխութեան, եղբայրակցութեան մասին։ Նրանք գումարներ են թողնում ոչ թէ իրանց կրօնական համայնքին, այլ ամբողջ հայ ազգին։ Մէկը, աները, փոքրիկ դըպրոց է բաց անում որբ ու աղքատ հայ երեխաների համար, իսկ միւսը, փեսան, աւելի առաջ է գնում, այդ որբերի ու աղքատների կրթութեան գործը մեծացնում է, հաստատում է Եւրոպայում։ Նկատեցէք երկու սիրուն հանգամանք. 1) դպրոցն աւարտող աղքատները չը պիտի մնան Եւրոպայում, այլ պիտի վերադառնան հայրենիք. և 2) նրանց չէ կարելի ստիպել որ հոգևորական դառնան։ Բացատրութիւնների կարօտ չեն այդ սկզբունքները, մանաւանդ այժմ, մեր ժամանակ։

Այստեղ ինքն ըստ ինքեան հարց է ծագում. ինչ կարող էր անել հնդկահայ գաղթականութիւ-

նը, եթէ նա աւելի բազմամարդ լինէր, եթէ ունենար իր մէջ աւելի շատ պատրաստված, գիտուն գրական մարդիկ։ Արդեօք նրա դերը աւելի ազդեցիկ, աւելի տեւողական չէր լինի։ Արդեօք նա չէր կարող միանգամայն յեղափոխել մեր գրական և հասարակական հասկացողութիւնները։ Նայելով բազմաթիւ նշաններին, նայելով այն եռանդուն ջանքերին, առողջ ու գեղեցիկ սկզբունքներին, որոնք հնդկահայերի միջից սկսեցին առաջին անգամ մտնել մեր իրականութեան մէջ, մեզ թւում է թէ անգլիական կրթութեան հզօր ազդեցութիւնը կրող այդ հայութիւնը կարող էր աւելի լաւ և առաջադէմ միջնորդ հանդիսանալ մեր և Եւրոպայի մէջ, քան այն գրական ընկերութիւնը, որ գործում էր Եւրոպայի հողի վրա, ս. Ղազարի վանքում և Տրիեստում։

Տեսնենք մի վերջին փաստ էլ։

VII

Շահամիրեանի տպարանը ունեցաւ իր շարունակութիւնը։ 1781 թուականից յետոյ այդ տպարանի գոյութեան մասին ոչինչ տեղեկութիւն չը կայ։ Բայց 1789-ին Մադրասում արդէն բացված է մի նոր տպարան։

Այս անգամ այդ հիմնարկութեան տէր է հանդիսանում տեղական հայոց եկեղեցու աւագ քահանայ Յարութիւն Շմաւոնեանը։ Այս համեստ

հայ տէրտէրին վիճակված էր պատուաւոր տեղ բռնել մեր գրականութեան պատմութեան մէջ և մենք կը կամենայինք նրա մասին կենսագրական մանրամասն տեղեկութիւններ հաղորդել։ Սակայն յայտնի է շատ քիչ բան։ Շմաւոնեանը Պարսկաստանի Շիրազ քաղաքից էր, ծնվել էր 1750 թուականին և 1784-ից Մադրասի եկեղեցու քահանան էր։ Այդտեղ նա իր աշխատանքով, իր սեփական ծախսով հայերէն տառեր է պատրաստում, որոնց նա անուանում է «որդի վշտաց», ակնարկելով, երևի, իր այն չարչարանքները, որոնք հասկանալի և անխուսափելի էին այդ դէպքում, երբ ամեն ինչ ինքը պիտի պատրաստէր։ Պէտք է խոստովանել որ թէև շատ էին չարչարանքները, բայց Շմաւոնեանը Շահամիրեանից անհամեմատ բախտաւոր էր. Նրա պատրաստած տառերը Շահամիրեանի տառերից աւելի գեղեցիկ, կանոնաւոր էին, ինչպէս նաև տպագրութիւնը անհամեմատ մաքուր էր և պարզ։

Տպարանատէրը այն ժամանակներում պիտի լինէր և գրական գործիչ։ Շմաւոնեանը սկսում է հրատարակութիւններ անել իր ընտրութեամբ և այդ բանի մէջ ցոյց է տալիս որ Շահամիրեանցի ընկերը չէ։ Մինչդեռ մադրասցի հարուստ վաճառականը իր տպարանը դարձրել էր քաղաքական պրօպագանդայի գործիք, տպագրում էր իր հեղինակութիւնները կամ հրատարակում էր այնպիսի պատմական գրուածքներ, որոնք համապատաս-

խանում էին նրա դիտաւորութիւններին, Շմաւոնեանը սկզբում լոկ հրատարակիչ է և տպագրում է գլխաւորապէս կրօնական գրքեր։ Նրա տպարանի առաջին պտուղն է «Պատմութիւն Մարիանէ կուսին» անունով վիպասանութիւնը, որ սկսեց տպագրվել 1789 թւականին և որ արտատպութիւն էր Կ. Պօլսում տպած մի օրինակից։

Երկրորդ գիրքը արդէն ուրիշ բան է—«Ողբ Հայաստանեայց», հեղինակութիւն ջուղայեցի Թադէոս քահանայ Սօգինեանցի, տպված 1791-ին։ Թէ ինչ էր պարունակում իր մէջ այդ «Ողբը», մենք չը գիտենք։ Նրան հետևում է արդէն շատ անգամ զանազան տեղերում տպագրված և հայերի մէջ մեծ ժողովրդականութիւն վայելող «Յիսուս Որդին», Ներսէս Շնորհալու հոգևոր բանաստեղծութիւնը։ Հետաքրքրական է որ Շմաւոնեանի մի քանի հրատարակութիւնների վրա էլ նշանակված է. «ի Թագաւորութեան օգոստափառ տեառն Երկրորդի Հերակլեայ Բագրատունւոյ որ ի Թիֆլիս։ Արդեօք սա չէ՞ ցոյց տալիս որ Շահամիրեանցի մտադրութիւնները յայտնի էին Հնդկաստանում շատերին և համակրութիւն էին վայելում շատերի կողմից։

1793-ին Շմաւոնեանը սրտի բերկրութեամբ, իբրև հնութիւնից մնացած մի թանկագին նշխար, տպագրում է յոյն փիլիսոփայ Պորփիւրի «Ներածութիւն ի գիրսն Արիստոտէլի» գործը, Դաւիթ Անյաղթ փիլիսոփային վերագրվող մի հին թարգ-

մանութիւն։ Բայց այսպիսի գործերով Մադրասի հայոց աւագերէցը շատ բան աւելացրած չէր լինի իրանից առաջ եղած տպագրութիւնների վրա։ Դաւիթ Անյաղթի խրթին թարգմանութիւնները չը պիտի կարդային Հնդկաստանի վաճառական հայերը։ Իսկ տպած գրքերի տարածելը անհրաժեշտ էր նախ և առաջ այն պատճառով, որ տըպարանը նոր գործեր էր պահանջում, նա չէր կարող պարապ մնալ, մանաւանդ առանց ծախսերի չէր գործի։ Այդ պահանջը բարեբախտութիւն էր մեզ համար։ Հետևեալ 1794 թւականին գործված էր նրան բաւարարութիւն տալու միջոցը, որ և մի անմոռանալի դարագլուխ է բաց անում մեր գրականութեան մէջ։

Օգոստոսի 7-ին երևան է գալիս մի տպագրած թերթ, ուղղած «Բարեպաշտ Պարոնաց և Մաքրակենցաղ Տիկնաց Մադրասու Հայոց»։ Այդտեղ Յարութիւն քահանան յայտնում էր թէ «դիտաւորութիւն ունի ամէն ամսի վերջում իր տպարանից լոյս հանել մի տետրակ, որի անունը կը լինի «Ազդ արարող» և որից ընթերցողը կիմանայ նոյն ամսվայ անցքերը, քաղված թէ զանազան «կազէթներից», թէ զանազան քարտէզներից և թէ զանազան գրքերից, նոյնպէս և հարկաւոր ու քաղցրալուր բաներ. տետրակի վերջում կը տըվի հետևեալ ամսի օրացոյցը, որի մէջ կը լինեն սըրբերի տօները, լուսնի ծննդեան և լրման օրերը»։ Յայտարարութիւնը վերջանում էր նրանով, որ

նթէ այդ տետրակին գրվողներ լինեն, հրատարակութիւնը շուտով կը սկսվի։ Երկու ամիս չանցած՝ 28 բաժանորդներ կան, և Յարութիւն քահանան հրատարակում է իր «Ազդարարը», առաջին հայերէն պարբերական հրատարակութիւնը։

1794 թւականի հոկտեմբերի 16-ը, երբ լոյս տեսաւ «Ազդարարի» առաջին համարը, այն օրն էր, երբ հայ ազգը, կարելի է ասել, մտնում էր քաղաքակիրթ ազգերի ընտանիքի մէջ։ Մտնում էր նա, ի հարկէ, իբրև աղքատ ու խեղճ մի արևելցի։ Լրագրութիւնը Եւրոպայում ծնունդ էր առել դեռ XVII դարի սկզբում—ահա թէ որքան էր յետ մնացել այդ արևելցին։ Բոլոր եւրոպական ազգերն ունէին մամուլ. իսկ այն ժամանակ, երբ Շմաւոնեան քահանան շարում էր Մադրասի տպարանում իր «Ազդարարը», արևմտեան մի քանի երկիրներում, մանաւանդ Անգլիայում և Ֆրանսիայում, լրագրութիւնը արդէն այնքան հսկայական առաջադիմութիւն էր արել, որ կային բազմաթիւ ամենօրեայ լրագիրներ. հրապարակախօսութիւնը հաստատ հիմքեր էր բռնել, հասարակական կարծիք էր ստեղծում և ղեկավարում, քաղաքական մեծ ույժ էր դարձել։ Այն ժամանակ, երբ Անգլիայում լրագիրները տարածվում էին միլիօնաւոր օրինակներով, մեր «Ազդարարը» Մադրասում ունէր 28 բաժանորդ։ Մենք, ի հարկէ, չենք ասում թէ կարող էր ուրիշ կերպ էլ լինել։

Պարբերական հրատարակութեան գաղափա-

րը, ինքն ըստ ինքեան հասկանալի է, փոխ առնված էր անգլիացիներից։ Բրիտանական Հնդկաստանը ունէր իր լրագրութիւնը. առաջին անգլերէն լրագիրը սկսեց հրատարակվել 1784 թւականին Կալկաթա քաղաքում («Calcutta Gazette»)։ Բայց Շմաւոնեանը այդ լրագրից օրինակ չը վերցրեց։ «Մեր քաղաքի բարեկարգ անգլիացիները,—ասում է նա,—սրանից մի ամսով առաջ սկսեցին տպագրել մի տետրակ, մերի նման՝ ամսի վերջում. և ինչպէս իմացայ, նրա մէջ մի ուրիշ բան չը կայ, բայց միայն իրանց ազգի համբաւաւոր մարդկանց վարքը, զանազան պատմութիւններ, գործերի որպիսութիւնը և մի քանիսների արժանաւոր գրուածքները... իսկ տետրակի վերջում, իրանց հասարակութեան գործերը քաղցրացնելու համար, տպագրում են այստեղ վաճառելի զանազան իրերի գները և նաւերի գնալու ու գալու ժամանակները։ Այս տետրակը ես ինձ օրինակ վերցրի»։

Գործը կազմակերպված է կանոնաւոր կերպով. կայ խմբագրութիւն, կան աշխատակիցներ։ Յարութիւն քահանան գտնում է Մադրասում մի քանի «ուրախակից երիտասարդներ», որոնք յանձն են առնում աջակցել առաջին հայ լրագրին։ Այդ աշխատակիցները կոչվում են վերակայուներ. Շմաւոնեանը միահեծան տէր չէ, իւրաքանչիւր գրուածք նախ և առաջ պիտի վերակայուների կամ, խօսելով այժմեան լեզուով, խմբագրական մարմնի հաւանութիւնն ստանայ և ապա միայն ուղարկվի

տպարան։ Եկեղեցու գանգակատան տակ մի արկղ է դրված, որի մէջ ամեն մէկը կարող է գցել իր այն գրութիւնը, որ նշանակված էր «Ազգարարի» համար։ Մէկը ուղարկել էր մի թարգմանութիւն, և ահա ինչ էր պատասխանում խմբագիրը իր լրագրի միջոցով. «Թարգմանութեանդ մի մասը տեսայ և հաւանեցի և ցոյց տուի քո երիտասարդ ընկերակիցներիդ, որոնք միաբան ուրախացան, որի մասին շտապում եմ յայտնել քեզ։... Որովհետև դեռ չէ աւարտված թարգմանութիւնդ, ուստի «Ազգարարի» վերակացուները կասկածում են, պատճառ որ սկզբից կարգադրել են չընդունել մի բան, մինչև որ չը տեսնեն նրա վերջը»։ Ընկերական-խորհրդակցական սկզբունքով առաջ տարվող մի գործ, ճիշտ այնպէս, ինչպէս հասկացվում է խըմբագրութիւն բառով։

Նշանակենք այստեղ մի շատ բնորոշ հանգամանք.—Շմաւոնեան քահանան հրապարակով յայտարարում էր որ թէ ինքը և թէ իր աշխատակիցները հմուտ չեն գրելու արհեստին և շատ կարդացած մարդիկ չեն։ Մեզ այդ բանը չէ էլ զարմացնում։ Հնդկաստանում այդպէս էր, և եթէ «Որոգայթ Փառաց»-ը մի անգրագէտ մարդու գրուածք էր, առաջին հայ լրագիրն էլ, որ նրա պէս նոր երևոյթ էր հայերի մէջ, նոյնպէս պիտի այդ տեսակ մարդկանց գործ լինէր։ Հարցը գիտնական լինելու մէջ չէր, այլ ժամանակի պահանջները ըմբնելու կարողութեան մէջ։ Այնքան լաւ



ՅԱՐ. Գ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

մաքեր յայտնողները, այնքան սիրուն ծրագիրներ յղացողները մեռել էին, եթէ ոչ կիսագրագէտ վաճառականներ։ Նոյն այդ վաճառականները իրանց անհմուտ, բայց գրասէր քահանայի հետ միացած, առաջին հայ խմբագրութիւնն են կազմում, հայ լրագրութեան սկիզբն են դնում...

«Ազդարարը» իսկական լրագիր էր։ Թող մեր ժամանակի ընթերցողին չը շփոթեցնէ այն, որ նա ամիսը մի անգամ էր լոյս տեսնում, տետրակի ձեւով, մինչդեռ մենք սովոր ենք՝ լրագիր ասելով հասկանալ պարբերական այնպիսի հրատարակութիւն, որ աւելի կարճ միջոցներում է լոյս տեսնում։ Եւրոպական լրագիրներն էլ սկզբում ուշ էին հրատարակվում, շաբաթը մի անգամ։ Մեզանում բնականը և հնարաւորը միայն ամսաթերթով սկսելն էր։ Չը մոռանանք պայմանները. հարկաւոր էին նիւթեր, տպարանական բարեկարգ գործ, հաղորդակցութեան յարմարութիւններ, ընթերցողների բազմութիւն։ Թէ «Ազդարարը» լրագիր էր, դրա ապացոյցն է նրա ծրագիրը։ Ամենագլխաւոր նպատակն է լուրեր տալը, և խմբագրութիւնը խոստանում է ջանք գործ դնել և լուրեր ստանալ Հայաստանից և Պարսկաստանից, տալ և թարգմանական լուրեր օտար լրագիրներից, շուկայի գները, նաւերի երթևեկութեան ժամանակները։ Այդպէս է եղել լրագրութեան ծնունդը ամէն տեղ։ «Ազդարարը» տպագրում էր և մասնաւոր մարդկանց յայտարարութիւններ։ Ինքն ըստ

ինքեան հասկանալի է, որ միաժամանակ տրվում է և այսպէս անուանված՝ ընթերցանութեան նիւթ, այսինքն գրուածքներ, որոնք օրվայ նորութիւնների հետ կապ չունեն։ Այդ նիւթը սովորաբար բաղկացած էր լինում թարգմանական պատմուածքներից, բարոյախօսական առակներից և ոտանաւորներից։

Հայ տպարանը Հայաստանի հողից հեռու տեղերում, հայկական գաղթավայրերում, գոյութիւն ստացաւ և շատ երկար ժամանակ օտար ու պանդուխտ էլ մնաց։ Այդ նոյն վիճակին պիտի ենթարկվէր և հայ պարբերական մամուլը, որ կապված է տպագրական գործի հետ։ Մինչև այժմ էլ, եթէ չը հաշվենք մի քանի աննշան բացառութիւնները, մամուլը հայ գաղթականութիւնների մէջ է պահվում։ Սա մի աւելորդ անգամ էլ ցոյց է տալիս թէ որքան կարևոր էին գաղթականութիւնները հայութեան համար։ Եթէ հայ գաղթականների շնորհիւ էր, որ մենք շատ ազգերից առաջ տպագրութիւնը մտցրինք մեր մէջ, նոյն այդ գաղթականներին ենք պարտական և մեր այն պատիւը, որ պարբերական մամուլ ունենալու մէջ էլ մենք շատ ազգերից առաջ ընկանք։ Մենք, ճիշտ է, եւրոպական ազգերի հետ համեմատած էինք աղքատ ու խեղճ, երբ մեր «Ազդարարը» մտցրինք մամուլի համաշխարհային պատմութեան մէջ։ Իսկ եթէ համեմատենք մեզ մեր դրացի, մեր բախտակից ազգերի հետ։ Սերբիացիները, բուլգարները,

վրացիները մեզանից շատ ուշ հասկացան մամուլի նշանակութիւնը և հիմնեցին պարբերական հրատարակութիւններ։ Թիւրքիան սակայն, թիւրքերէն լրագիր ունեցաւ միայն XIX դարի առաջին կէսում, Պարսկաստանը—դրանից էլ ուշ։ Մեզ վրա այն ժամանակ տիրողներից, մեզ շրջապատողներից ոչ ոք մեր առաջնորդը չը դարձաւ այս բանի մէջ։ Այստեղից պարզ է Ցարութիւն քահանայ Շմաւոնեանի սկսած գործի ամբողջ մեծ նշանակութիւնը հայութեան համար։

«Ազդարարը» 18 ամիս ապրեց, կանոնաւոր հրատարակվելով մինչև 1796-ի մարտը։ Ամբողջ այդ ժամանակամիջոցում հայ ընթերցողը ունէր մի թերթ, որ ընթացիկ կեանքի պատկերն էր ներկայացնում, որքան միջոց ու կարողութիւն ունէր։ Մի կողմից ֆրանսիական յեղափոխութեան լուրերն էին տեղ գտնում այդ լրագրի մէջ, միւս կողմից Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի նամակները Պետերբուրգից, որոնց մէջ պատմված են 1791-ի ռուս-թիւրքական պատերազմի անցքերը, հայերի գաղթականութիւնը։ Թէև «քերթողական արհեստին» հմուտ չէր Մադրասի անդրանիկ հայ խմբագրութիւնը, բայց և այնպէս, նրան յաջողվում էր մի կենդանի գործ կատարել։ Այդպէս է եղել մեր լրագրական պատմութեան մէջ համարեա միշտ. «քերթողական արհեստին» հմուտ հայերը չէին գործ կատարողները, այլ նրանք, որոնց լեզուագիտութեան վրա ծաղրում էին այդ

հմուտները։ Այսօր էլ «Ազդարարը» տալիս է մեզ շատ ապացոյցներ թէ իր ժամանակի հանգամանքներին ու հասկացողութիւններին նայած՝ նա շատ մեծ պատուով է տարել պարբերական մամուլի պարտաւորութիւնները։ Նա տպագրել է ոչ միայն ամեն տեսակ լուրեր (մինչև իսկ Մադրասի հայերի մէջ տեղի ունեցող ամուսնութիւնների, մահերի և ծնունդների մասին), այլ և տուել է լուրջ գործեր. այսպէս, տպագրել է Նոր-Ջուղայեցի Խաչատուր վարդապետի գրած «Պարսից Պատմութիւնը», որի մէջ շատ հետաքրքրական տեղեկութիւններ կան պարսկահայերի և հնդկահայերի մասին *), տպագրել է հայկական մատենագրութեան մի ամփոփ պատկերը։ Գրաբար լեզուով էր խմբագրվում ամսաթերթը. բայց աշխարհաբարն էլ միանգամայն դուրս վանդված չէր, նա էլ երևում էր «Ազդարարի» էջերում։ Եւ ինչպէս արհամարհվէր աշխարհաբարը, երբ ընթերցողներից մէկը գրում էր. «Հասարակութիւնն ...կների աշխարհաբար գրելէս, վասն որ իմ կենօք մե սաղմոսից էլ ոչինչ յաւել չեմ կարդացել, և էս էլ ողջ իմ մտքի հնարածն չի, թէ ոչ ևս էլ կը զարմանայի իմ գիտութեան վրայ»։ Այո, մեր պարբերական մամուլի հէնց առաջին օրից երևան է գալիս Սաղմոսից աւել ոչինչ չը կարդացած ընթերցողը. և նա պիտի

*) Այդ պատմութիւնից նմուշներ տե՛ս «Ազգասէր» շաբաթաթերթ, Կալկաթա, 1845։

հարկադրէր որ իր լեզուով խօսեն իր հետ լրագրի էջերից։ Այս անհրաժեշտութիւնը մի մեծ յեղափոխութիւն էր պատրաստում մեզանում։

Վերջացնելով մեր խօսքը «Ազդարարի» մասին *), մենք պիտի այն էլ աւելացնենք, որ Շմաւոնեան քահանան իր այդ գործով ոչ միայն մեր լրագրութեան սկիզբն էր դնում, այլ և ստեղծում էր լրագրի մի տիպ, որ համարեա կէս դար գոյութիւն պահպանեց մեզանում։ Հրապարակախօսութիւն չը կայ, պատահական են յօդուածները, զանազան գիտելիքների, առածների, հետաքրքրաշարժ տեղեկութիւնների մի ժողովածու—ահա այդ տիպը։ Դեռ երկար ժամանակ այս կերպարանքով և պատկերով հայերէն լրագիրներ պիտի հիմնվէին զանազան կողմերում, մինչև որ կը գար այն օրը, երբ կը ծնվէր հայ հրապարակախօսութիւնը։ Այնպէս որ Շմաւոնեանը նախահայր է հանդիսանում ամբողջ կէս դարի հայ պարբերական մամուլի ուղղութեան կամ, աւելի ճիշտ ասած, բովանդակութեան, որովհետև ուղղութեան մասին ոչինչ հասկացողութիւն չը կար այդ ժամանակամիջոցում։

1796 թուականից յետոյ Յարութիւն քահանային մենք այլ ևս չենք տեսնում գրական և հրատարակչական ասպարէզում։ Բայց նա երկար ապ-

*) «Ազդարարի» մասին մեր տեղեկութիւնները վերցնում ենք Հ. Գ. Գալէմքեարեանի «Պատմութիւն Հայ Լրագրութեան» գրքից (Վիեննա, 1893, եր. 200—213)։

րեց և, ինչպէս ասում են *), շատ դժբախտութիւններ տեսաւ իր ընտանեկան կեանքի մէջ։ Այդ դժբախտութիւնների պատճառը գլխաւորապէս այն էր, որ նրա աղջիկն ու փեսան Հնդկաստանի փչացած և անբարոյական վարքի տէր հայերից էին։ Այդ ընտանիքի պատճառով էլ մեր առաջին խմբագիրը վատնում է եկեղեցական և ազգային գումարներ, դատաստանի տակ է ընկնում և մեռնում է մի շատ ցաւալի մահով 1824 թւականին։

Բայց տպագրութիւնը Հնդկաստանում չէ անհետանում։ Նոյն 1796 թւին, երբ դադարեց «Ազդարարը», մի նոր տպարան բացվեց, այս անգամ Կալկաթայում։ Յովսէփ քահանայ Ստեփանոսեանն է այդտեղի տպարանի տէրը, որ բաց է անում այդ հիմնարկութիւնը հայոց ս. Նազարէթ եկեղեցու բակում։ Առաջ տպագրում է Կրետացի Աբրահամ կաթողիկոսի «Պատմագրութիւնը», որի հետ մենք արդէն ծանօթ ենք *)։ Իսկ 1797-ին հրատարակվեց Ջուղայեցի տիեզերալոյս անուանված Յովհաննէս Մրքուզ վարդապետի վիճաբանութիւնը Սուլէյման-Շահի հետ, որի մասին նոյնպէս խօսել ենք **)։ Չէ կարելի երևակայել Ստեփանո-

*) Գ. Ա. Երիցեանի մօտ գտնվում է Հնդկաստանցի յայտնի Խաչիկեան քահանայի մի գրութիւնը հնդկահայերի մասին, որ գրված է 1879-ին։ Այդտեղից էլ մենք հանում ենք այս տեղեկութիւնները։

**) Տե՛ս վերևում, եր. 410.

***) Հայկ. Տպ., I, եր. 261.

ան քահանայի տպարանից աւելի խեղճ ու աղ-
տ մի հիմնարկութիւն. արհեստի, ճաշակի կա-
րեւոր բացակայութիւն, երևում է որ քահանան
ն է չինել տառերը, ինքն է չարել ու տպագրել,
ենալով այդ բոլորի մասին երեխայական հաս-
ցողութիւն։

Եւ այսպէս ահա մենք տեսնում ենք որ հընդ-
այերը, հայ ազգին իրանց դրամով ու խելքով
ութիւն հասցնելով հանդերձ, մտածում են ի-
ց մասին էլ և աշխատում են կենդանացնել
կիսի ուժեղ գործօններ, որոնք մի ազգի պահ-
պանութեան գլխաւոր յենարաններն են։ Հնդկաս-
նի տպագրութիւնները մեծ մասամբ 200 օրի-
կից աւել չէին լինում. դա ցոյց է տալիս որ
պագրողները գլխաւորապէս տեղացի հայերին
ն ի նկատի ունենում, ինչպէս այդ մասին մի
նի ակնարկութիւնների էլ ենք հանդիպում։ Ա-
լորդ է ասել թէ ազգային դաստիարակութեան
եսակէտից որքան կարևոր և մեծագործ հիմնար-
ութիւն էր մանաւանդ պարբերական մամուլը.
—Հնդկահայերը այդ էլ գլուխ բերին, բայց նրանց
ապագայում վերապահված էր աւելի նշանաւոր
եր այդ ասպարէզում։

Սրանք մեծամեծ ջանքեր են, որոնք միայն
տեղական նշանակութիւն չունեն, այլ և ընդհա-
նուր ազգային։ Բայց դեռ պակասում էր մի գլ-
խաւոր բան—հայկական դպրոց, մայրենի լեզուի
այդ ամենաուժեղ պահապանը։ Այդ պակասու-

թիւնն էլ լրացնում է Յարութիւն Գալուցեան Պատմնկութեան հասակում այս հայը, որ ծնվ էր Բերիայի գաւառում, գնում է Հնդկաստ ուսում է ստանում Բէնգալեան նահանգի (եր կալկաթայի) անգլիական դպրոցում և ապա բ է անում կանոնաւոր դպրոց XVIII դարի վերջ քում։ Դպրոցը 25 տարի գոյութիւն է պահպ նում և այնքան յայտնի է դառնում, որ նոյն ի Պարսկաստանից այնտեղ երեխաներ էին ուղա կում. Գալուցեանը պատրաստում է բազմաթ աշակերտներ, որոնցից շատերը նշանաւոր հանդ սացան նոյն իսկ Հնդկաստանում *)։

Այստեղ փակենք հնդկահայ երախտաւ գաղթականութեան պատմութիւնը, մինչև որ ն րից կը հանդիպենք նրան XIX դարում։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

*) «Անգիտաց անպէտս»—Յ. Ամդալեանցի, Կալ թա, 1821։

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ

Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.
Тифлисъ, редакція „Мшакъ“.

Առաջին հատորի գինն է
1 ռուբլի 50 կոպէկ:

ՀՀ Ազգային գրադարան
NL0144944